digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

12004

digitised by A.R.A.R.@

4967

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

221
3ա – 25

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

digitised by A.R.A.R.@

864-ԱՂ

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.

## Երգ Երգոյ անուանեալ բանիցն Սողոմոնի.

Հաւաքեալ և մեկնեալ ՚ի Յակոբայ վարդապետէ կարնեցւոյ Սիմոնեան, ըստ մասին ՚ի սոյն Եղիշածին, և ըստ մասին ՚ի յարդարումն. խնդրանօք և յորդորմամբ Տեառն Աբրահամու լիաշնորհ վարդապետի, և մաքրակրօն գերահռչակ արք եպիսկոպոսի, և վերատեսչի վիճակին մայրաքաղաքի, որոյ զ՚նի հլաւելեալ եղև սրբելու երկրին պանեայ՝ գերահռչակ վանացն Սուրբ Թադէի Առաքելոյն, ուրանօր հանգուցեալ եղաւ ՚ի շիրմի ՚ի ներքոյ խաչակուռ սեան գաւթակամարի նորին. և իմ՝ յաջորդեալ ՚ի նմանէ ՚ի կենդանութեան իւրում ՚ի գերապայծառ հայրապետութեան Տն Ղուկասու սրբազան կաթուղիկոսի, և գերերջանիկ ծայրագոյն Պատրիարքի ամ՝ Հայոց. Եւ ՚ի Պատրիարքութեան սրբոյ Երուսաղէմի Տն Յովակիմայ քաղցրաբարոյ վարդապետի և արքի եպիսկոպոսի.

Իսկ և ՚ի Կոստանդնուպօլսոյ քաջաջան վերադիտողի Տն Զաքարիայ ազգասէր հռչակեցեալ մեծի Պատրիարքի և արխապանծ եպիսկոպոսի.

՚Ի Թուականութեան Արամեանս տոհմի ՚ի 1231. ՚ի Սեպտեմբերի ամսոյ.

Եւ ՚ի նորոգենիս տպագրութեան ՚ի լոյս ընծայեցաւ. ծախիւք ուսումնասէր և բարեպաշտ մեծագնեայ պատանեկայ.

Հարիւր Երեսուն և՝ Եօթներորդ ամի Հայրապետութեան Տեառն Եփրեմ Սրբազնակատար կաթուղիկոսի ամ՝ Հայոց.

Եւ յԱռաջնորդութեան սրբոյ Ամենափրկչի Աթոռոյն մերոյ Տն Կարապետի, Արք եպիսկոպոսի. որ ՚ի Նորն Ջուղայ.

Յամի Տեառն. 1820.
՚Ի Թուին Հայոց. 1269.

՚Ի Տպարանի երջանկայիշատակ հանգուցելոյ Շմաւոնի և Յովհաննիսի Ջուլայ Շմաւոնեանց.

՚Ի ԿՈԼԿՈԹԱՅ.

digitised by A.R.A.R.@

Աեհ տեսողայ
վաղ գուշակայ
բուրվառ կենայ
աղբիւր շնորհայ
մեզ ծարա Հեայ
Մեղօք աղտայելոյ մաքուր և սուրբ աւազան
ակկարայելոյ ձեռայ զօրեղ զաւա զան
գեր քան զ կուսն Ցանկեայ գու Նրաշա զան
պատճառ փրկութեան և փայտ սատուճածա զան
Դու սուրբ սեղան
գաուլին զին ման
փրկչին կայ ան
մեզ պահա պան
գեր Սրբա զան
Թագ անթառշամ եկեղեց ւոյ
քրիստոնէից մեզ պարզ գըլլոյ
արեգակէս Սուրբ ջահ լու սոյ
ուղղահայոց նշան բար ւոյ
Սանդուղք Հրաշակերտ Նիկիրկինս զըր ման
Հրեշտակաց իջման մարդկանց վերել ման
կենիք մեր զ կենաց և զոռշմ զարդայ ման
բուժիչ մեր վիրաց յօձից խայթեց ման.

4967-տհ
Гос. Библиотека
ZOUՈ-Арм.ССР
40642-68
digitised by A.R.A.R.@

## ԲԱՆ ԱՌ ԽՈՆԱՐՀԱՄԻՏ ԸՆԹԵՐՑՈՂՍ ԳՐՈՑՍ ԱՅՍՈՐԻԿ։

Եթէ ասէս լերին Սինայի պատմէ Մովսէս թէ՝ զարհուրեալ էր և դողայր, որչափ ևս առաւել զաստուածաշունչ սուրբ գիրն որ քաղցրագոյն քան զինքնայունի զխորհուրդս. մանաւանդ և որ ՚ի նմա գտեալ երգոյ երգոյն Սողոմոնի. արդար և սարսափի՝ որ ոք և կամիցի մերձենալ ՚ի նա առ ՚ի մեկնել և կամ ճառել ինչ ՚ի նմանէ. այս ևս՝ եթէ իցէ հոգւովն Սողոմոնի և ոչ նա որ անլուայ ձեռօք, երկրաւոր՝ շնչաւոր՝ և մեղճական հողմով իցէ վարանեալ և մտօք ուռուցեալ, այլ նա՝ որ աղօթիւք և ջերմեռանդ խնդրուածովք կոչեսցէ. որպէս և պատմէ շնորհազարդ արքայն Սողոմոն թէ խնդրեցի ՚ի տեառնէ աղօթիւք և տուաւ ինձ հանճար, կոչեցի՝ և եկն ինձ հոգի իմաստութեան, վասն զի ոչ ոք կարէ ասել տէր զՅիսուս եթէ ոչ հոգւովն սրբով. I Կր. 12. 3. յորմէ զեղանի շնորհ իւրաքանչիւր ումեք ըստ արժանեացն. որպէս ասէ Պօղոս՝ ումեմն տըւեալ է բան իմաստութեան՝ այլում բան գիտութեան՝ ՚ի նմին հոգւոյ. միւումն հաւատք՝ նովին հոգւով. այլում շնորհ բժշկութեան՝ նովին հոգւով այլում յաջողութիւն զօրութեանց. այլում մարգարէութիւն, այլում ընտրութիւն հոգւոց. այլում ազգ լեզուաց. այլում թարգմանութիւն լեզուաց. այլ զայս ամ[ենայն] յաջողէ մի և նոյն հոգի. և բաժանէ իւրաքանչիւր զշնորհս որպէս և կամի. I Կոր. 12. 8. և միայն Յիսուսի Քրիստոսի տուաւ ՚ի հօրէ աստուծոյ զլիութիւն հոգւոյն սրբոյ ըստ կանխագրութեան կայծակնամաքուր մարգարէին, թէ՝ հանգիցէ ՚ի վերայ նորա հոգի աստուծոյ, հոգի իմաստութեան և հանճարոյ. հոգի խորհրդոյ և զօրութեան. հոգի գիտութեան և աստուածպաշտութեան. և լցցէ զնա հոգի երկիւղի աստուծոյ. զի ՚ի նմա հաճեցաւ ամ[ենայն] լրումն աստուածութեան բնակել. Եսայ. 11. 2. Կղս. 1. 19. իսկ և այլոց ըստ քանքարայն առակի շնորհէ՝ միոյն տասն. միոյն հինգ. և միւսոյն մէն մի. Մատթ. 25. 5. բայց ոմանք ՚ի վարդապետաց ասեն թէ՝ միայն Պօղոսի տուան հինգ քանքար. այսինքն գիտութիւն լեզուաց. զօրութիւն սքանչելեաց. ընտրութիւն հոգւոց կարողութիւն առաքինութեանց. և ազդու բան քարոզութեան. Տիմոթէոսի տուան երկու պարգևս գիտութիւն աստուածաշունչ գրոց. և եպիսկոպոսութիւն եկեղեցւոյ. իսկ Ոնեսիմեայ տուան զմինն, այսինքն սպասաւորել

սրբոյն

digitised by A.R.A.R.@

արքային պղտորի ՚ի կապանսն. զոր մինչ անձնդրոյ հաճառապիմ ծա-
ռայութեանն, ընկալայ զվարձ և զերախտապարտութիւն կողմանց
նոյն, և զզօրաձեռնն քաղմնոյ, և զ՚ի կայական մարտիրոսութիւն մահ-
ուանն. վասն զի աստուած ոչ զոք վերապահեաց ՚ի բարձր աստի-
ճանս ինչ պատուոյ եթէ ոչ նախ տայր նմա զհամբերս ջերմե-
ինչ առ ՚ի տանել զլուծ այնորիկ ծանրութեան. որպէս աբէլ և ա-
զնորհ բարի հովուութեան, և կոման մարտիրոսութեան. ենով-
քայ զկոյս և զարդ. յովսեփայ զողջախոհութիւն. մովսէսի զը-
հեզութիւն առ ՚ի տանել զխռովութիւն ատամնակ ժողովրդեանն.
նմանապէս և այլոց. զի ոչ միոյ ուրուք էր զամենեսեան. այլ
ամենեցուն հաղորդեաց զշնորհս. նոյնպէս և զառաքինութիւնս
մարգարէից սակս փառաւորեալ մեսիային ոչ յայտնեաց ամենեցուն
զբովանդակ անօրէնութեանն խորհուրդ. այլ իւրաքանչիւրոյ
զի մի մասն. միոյ զ յղութիւնն միւսոյ զծնունդն. այլոց
և զայլոն իբրև զպաշտօն մեծի արքայի բաժանեալ ՚ի վերայ լու-
սաւորաց իւրաքանչիւրոյ ուրոյն ուրոյն զառաքելութիւն. որ-
պէս մովսէսի եղբօր զմորենին վառեալ օրինակ առեալ կուսին.
և զօձն պղնձի նշանակ բարձրանալ որդւոյն աստուծոյն ՚ի զի-
տակի խաչին. դաւթի զմանկանց զողբոյ՝ և զմանգեաց օրհ-
նութիւնն. ՚ի վերայ խաչին զէլի էլի առ հայր կարդալն. զբա-
ժանեալ հանդերձիցն. զվիճակ պատմուճանին. զըմպումն լեղ-
ւոյն. զդատից և զձեռաց ծակելն. զերկինս ելանել և ընդաջմէ
հօր նստելն. յեսայեայ զ յղութիւն կուսին. զծնունդն և զհար-
ուածս մանկանն. զթուք և զապտակ ընկալնուլն. իբրև զոչխար
՚ի սպանդ վարիլն. երեմիայ զողբ և զգութ մանկանցն բեթղա-
հեմի. եզեկիէլի զարեգակն խաւարումն. ովսէէ զեգիպտոս
տալի կոչիլն. զաքարիայի զերեսուն արծաթին. յովելեայ զգա-
լուստ հոգւոյն սրբոյ յաւուր պենտեկոստէին. դանիէլի զպղծ-
ծութիւն աւերածոյն երուսաղէմի. խնկ ՚ի գլուխ ելանել և ՚ի կա-
տարել այսց ամենից. դարձեալ հրամայեաց զբել զեղեալն ամե-
այն զանօրէնութ բանին մյ զուծատարանն ես սակս այսպիսի հա-
ճառակիդ. վյ ընտրեաց երկոտասան աշակերտս յառաջելոյն զա-
սույ զերկուս և յեօթանասնից աշակերտացն ևս զերկուս որք
եղեն ատենադպիրք երկնաւոր արքային. և որպէս որոց աւետարանը
գրել հոգւոյն սրբոյ. որով արժանացեալ ք գրեցին իւկաս. որպէս մատ-

թէի

digitised by A.R.A.R.@

Թովմասայ կռոնեմեթ Ներբողեան Աշխ․ Ն․ Ընթերցուածոց

Թէ և յաջողեցաւ ՚ի մարդկային ձեռնարկելն և յառաջադիմութենէ գրել կարգաւ, և ժամանել մինչև ցկատարելութիւնն և պատուէր աշակերտացն․ և մարկոսի ՚ի յանապատէ ՚ի յօհաննու քարոզութենէն պատմել կարգաւ մինչև ցերեքօրեայ յարութիւնն, և զջանել Տեառն շտակիւն․ և երևել կանանցն և զայն պատմել աշակերտացն․ ղուկաս սկսանել ՚ի քահանայութենէն զաքարիայի․ պատմել և զմարմնանալ փրկչին, ազգաթիւ առնելով, սկսանել յովսեփայ մինչև յդաւիթ, և անտի եկեալ մինչև յադամ․ պատմէ և զխոնարհութիւն աշակերտացն, և զօծմանանիցն և զայլ սքանչելիսն մինչև ցյարութիւնն և ՚ի համբարձումն․ իսկ և յօհաննու սկիզբն առնել ՚ի բարձրութենէ բանին աստուծոյ և մարմին եղանիլ նորին․ այլ և զնշանս և զարուեստս զոր արար մինչև ցմանիլն, և զաւաժանել հանդերձիւն և զվճռակ պատմութեան, և զդնելն ՚ի գերեզմանի, և զյարութիւնն և զկնի երևել աշակերտացն․ որպէս յաջողեաց և առաքելոյն սմանց գրել զկանոնական թուղթս որպէս յայտ իսկ է․ որոյ զկնի հրամայեցաւ վարդապետաց եկեղեցւոյ ձեռնել զսուրբ գիրս, նման խորեց լուսագայ ՚ի յանտառակ ծովէ․ հանել զլուսապայծառ մարգարիտս ունի․ ոմանք մերժեցին զալիւն և ոմանք զպայլութիւնս ոմանք քաղցրածուն․ և այլք զխաւսն․ բաղդադնք զյայտ․ և կէսք զսպանաւ․ զկիոչ ոք ՚ի նոցանէ զբովանդակ եղեալն անստամբոր զաւանել և մերբերել կարէ․ այլ ոք քան և ձեռնհաս լինել հնարէ․ այսպէս և մեկնիչք սուրբ գրոց, ոմանք նկարագրին տեղեկանան․ և ոմանք այլաբանականին․ կէսք յարմարականին․ և այլք խորհրդականին․ ոմանք միոյն, և ոմանք միւսոյն․ և ոչ ոք կարէ իսկապէս վերահասու լինել բովանդակ մասին սուրբ գրոց․ զի ով գիտաց զմիտս տեառն՝ կամ ով խորհրդակից եղև նմա․ Հռոմ․ II․ 34․ ապա թէ ոչ՝ բաւական լինէր մի միայն մեկնիչ աստուածաշունչ մատենին և ոչ բազմաւոր թուով․ մանաւանդ աստուածային գիրքն ոչ երբեք անկանի ընդ սահմանաւ մարդկային մեկնութե․ զի մարդկային մեկնութիւն է սահմանաւոր և սխալական․ իսկ իմացուած աստուածաշունչ գրոցն է անհուն, անսխալ և անվրէպ․ վասն որոյ նոյն չէ չափել և իմացմամբ պարզապէս մեկնել՝ որով գրեցան․ և ոչ թէ մարդկային հանճարով կամ գիտնական շնչով․ զի անհերքելի իմն է թէ անմիջոյն հին և նոր կտակարանաց գրեանքն աստուածային շնչով գրեցան․

ուրեմն

digitised by A.R.A.R.@

ուրեմն պարտ է՝ և նոյն տեղային շնչումն և իմացմանցն մեկնել զնոյն որք ՚ի վերոյ պատմեցաւ. բայց գիտելի է զի երկու են խնդիր մեկնութեան մէ գրոյ. միոյն նկարագրական. և միւսն խորհրդական. նկարագրական մեկնութիւն է այն. որ զշարագրութիւն բնին պարզէ և յստակ իմացնել և խորհրդականն է այն՝ որ զծածկեալ խորհուրդն որ ՚ի նմա յայտնել և ՚ի վեր յառաջնոյն հիմնել. բայց խորհրդական մեկնութիւն սուրբ գրոց հանապազ ընթերցմամբ բանի առեն վարդապետք. զորօրինակ զերես անձնանաց մարդոյ տեսանեմք, իսկ և զսիրտ նոցա ոչ գիտեմք. այլ եթէ ընտանեկական խօսակցութեամբ մերձիմք առ նա, ապա զխորհուրդս նոյ հետաքրքրութեամբ իմանամք. Այսպէս և զսուրբ գիրս մինչ ՚ի պատմութիւնն նկատեմք ոչ այլ ինչ կարեմք տեսանել եթէ ոչ միայն զերեսս նորին. իսկ եթէ առ այս հաղորդակցիմք հանապազորդական կիր առմամբ դիւրապէս ՚ի ներքս մտայ նորին թափանցիմք. Իսկ արդ. եթէ այսպէս, կամիմ զոմանս բանս ծանուցանել մերոց Ծնողաց սակս առաջակայ գործոյս մերոյ. որով հեռու յառաջաբանութիւն գրոց է պատկեր նորին. և նախադասեալ բանն յարկ է երիս եղանակս բացայայտել. նախ թէ յորում ժամանակի գրեցաւ. երկրորդ թէ յորմէ հարկաւորեցաւ գրել. և երրորդ թէ յինչ պէտս գրեցաւ: զի և եկեղեցւոյ սուրբ երիս բաժանէ զմանկունս իւր՝ խորհրդազգածս առնել խորոյն աստուծոյ. զոմանս սերմանօղս բանին կենաց. զոմանս հնձօղս. և զոմանս մատակարարս: Ա տէրունեան առակիս. սերմանօղ եղեն մարգարէք. հնձօղ առաքեալք. մատակարար վարդապետք. զորս յայտ ՚ի տեղւոյ իւրեանց. բայց վերոյ ասացաւ թէ նախապէս հարկ է գիտել թէ յորում ժամանակի գրեցաւ. վասնորոյ ծանուցանեմ թէ ՚ի ժամանակս սր մծօնի կաթուղիկոսին սկսայ գրել. մինչ առ դէպ եցաւ մեզ երթալ ՚ի խնդիրս ՚ի վանս ստաթէի առաքելոյն ընդ աբրահամ վարդապետին վանի այցելութեան նոյն սուրբ վանայն. երկրորդ թէ յորմէ հարկաւորեցաւ գրել ասեմ թէ վերոյ գրեալ լուսահոգի աբրահամ վարդապետին. որ ՚ի մանկութենէ իմմէ ՚ի զբօսնուլ զսուրբ գիրս. երահարեալ բանից անհամեմատ մեծ իմաստնոյն սողոմոնի. մանաւանդ սոյն երգ երգոյ անուանեալ գրոյն. չկարելով հասկանալ և իմանալ. վասնորոյ կարի տագնապելով դեգերեալ մնայի. զի ոչ գտանէի զոք առաջնորդ և ոչ մեկնիչ իմն. սակայն տարակուսութեամբ վարանէի մինչև գտանել զմեկ-

նու

digitised by A.R.A.R.@

## Բան առ ընթերցասէրս նոյնոյ Զրուցիս Բերողի

Նաեւ Թէոն առաջնոյ մեծին Աղեքսանդրեայ վարդապետին Մեզյ, և
առաք ղշանի Հիպպոլիտայ. և ամենայն Լատին արդինեան. որոյ
վարք իւր Հռոմէական ասխնց ամայեայ ծովակալայ ըստ ծննդեանն ա-
նել կաթողիկոսաց իւր և մերոյ պրոտեստ որ Հին պատմայն՝ ըստ պա-
տճառ քաղաքաց իւրոց հետաքրքիր եղեալ էտես զգրեալսն մեր. և
ոչ գտանէ եթէ առ ՚ի բարձրաբերել զմեզ. կամ խորախոյս առաջ. ըն
կաւ սիրով մեղադրել. ծոյլ և դանդաղ անուանել զմեզ. Թէ
զիարդ է՞ր ոչ դիւրեալ ընդե՞ր ոչ աշխատիս, և ոչ սկսանիս ծայ
րէ՝ ՚ի ծայր մեկնել զի փոքր բան մի է. Թէ և լաւ խորհրդոյ՝ մեծ.
և ՚ի պատասխանեալն իմ Թէ մեկնիչ չեմ տեսեալ որոյ զինի երթայ
ցեմ՝ և նա զարմացեալ ասաց Թէ որքան և կարդ բերէ, այսու կեր
պիւ հարկեաց զմեզ. և յորդորեաց զմեզ առնել զայս. և յայնմ
մեջոյն մինչ ձեռնարկել ՚ի գործել վախճանեցաւ երանելին. և զքաղ
մրունս վանացն ողջեցան ՚ի վերայ Թիկանց իմոց ընդ որոյ և այլ
այլապէս զբաղմանց անասելի և անպատմելի ձախորդութիւնք
(զորս ոչ է արժան յիշատակել) որովք անկեալ ՚ի մահճի մե-
ծաւ՝ այսպէս հիւանդութեան ՚ի սուրբ Եջմիածին. և անտանօր
մնացեալ զիմ ակարութիւն. նորեկեալս Թուղթ և Թանաք
մի բանալով ՚ի նեռ անկողնոյ և ՚ի ներքոյ ապաւինեալ տապա-
կաւն օգնոյ. նորոգեալ այսպ լսայ. և ամփոփեալ ՚ի մօտոյ ըն-
րոյ. այսպէս մեկնել գրել. զի մի զՀրաման վերոյ գրեալ երա-
նելոյն գործել. մանաւանդ գոնէ ընթերցողն եթէ շահես-
ցէ բան ինչ ՚ի սմանէ. զոր օրինակ հանգէ պատճառին և պատճա-
ռելոյն: Եւ երբեք Թէ յինչ պէտս գրեցաւ, ասեմ Թէ վասն
իմ, և վասն իմ նմանեաց տգիտացոյ ձեռնասուն, և յորդորմամբ օգ-
նականի երանելւոյն ՚ի յառաջնական խօսակցութեան և զբօսա-
րան հանգստեան: բայց որոց հետեւ ոչ կարասցի ձեռնհաս լինել
այլ_ իմն մեկնիչաց. Ձանայցի զի ընդ հոգւոյն զհոգեւորն համեմա-
տել. I կոր. 2. 13. այսու աղագաւ ոչ այլ ուրեք նկատեսցի.
այլ ըստ մեծի մասին ՚ի սուրբ գիրս զի մի արտաքսեսցեմ ՚ի կարգա-
ցէ նորին. և այնպէս կարգաւ ընԹացայ. և ոչ շեղեցայ յաջ կամ
յահեակ. այլ միջի արքունական ճանապարհաւ. համարեալ
նաև զմանս բանս ՚ի վարդապետական գրոց. զորս ՚ի ձեռս եկեալ
պատրաստ գտանէաք, անդուստ քաղելով յարմար վկայութի-
և խորհրդական մտօք. որքան և կարացի այնպէս ձեռնհասեցի

մի՛ է.

digitised by A.R.A.R.@

մինչ պատճառաւն. և եթէ զմեկնութիւն սրբոյն Գրիգորի Նարե-
կացւոյն տեսեալ լինէիր զոնէ նմա հետևէիր, բայց ոչ տեսեր, այլ և
ոչ զմեկնութի կարէին լուսաւորել լաւին մատուցապետի տեսանել կարա-
ցեր. զի յորժամ և խնդրեցի ՚ի բազ ասացին. որպէս յայտէ զբան-
աշխի մերոյ. վասն որոյ յամենեցունց հրաժարեալ. որոյ տետրա-
կի և յանդիմակ անստուգ հաւաքեցի մեծաւ տաժանմամբ. այլ և
ոչ կամեցայ զի զվիճաբանական բանս խառնել ՚ի սմա, զի մի լռա-
օրինի սրբազանայոյն՝ աւետարանի մեկնութեան և մերն զատեսա-
ցի. ( զի այլ է մեկնութիւն և այլ է վիճաբանութիւն ) իսկ նա մեկ-
նութիւն խոստանայ և վիճաբանութիւն շարադրէ. զի՞ւր Ճշմա-
կերութիւնն ջատագովէ. և հայոց ազգի թուրի և վասն քննու-
թիւն տանէ: և զմեկնութիւն սուրբ աւետարանին այնքան
մարմնացուցեալ մինչ զի ոչ ոք ՚ի չարագոյն հերձուածողաց այն-
պէս յանդգնեցան խօսել կամ գրել. արդարև զոր ինչ և գրեալ է
առաքելեայ առաքել. նոյնպէս և ամն յաշակերտաց Նորին զա-
քարոզ անուն հրաշից գրքոյն շարագրողն, թէ որպիսի սուտ գոյն
կնապատիր պատմութիւն յարմարէ նորբագոյն նկատողաց յայտ է. իսկ
մեք եթէ զոմանս տեղիս ՚ի պահանջման հարկին միով կամ երկո-
քումբք տողիւք բան գրեցաք. այնքան միայն զի ծանիցեն թէ և զեր
կալն գրել կարէաք. բայց ոչ կամեցաք. և բծախնդիրքն միայն
դպրատան, զոր ինչ և կամին ասասցեն, զի իմ լաւագոյն գիտէ զնա.
քանզի չէ այն շնորհ նստել ՚ի հանդարտ տեղւոջ ապահովի ՚ի
Ճախ դպրատան, գողանալով հաւաքել զանհամար գրեանս հայ-
ոց վարդապետաց. և ստանալ զմատենս ամենայն ազգաց, և այնա-
պէս ըճարեալ, մնալով անհոգ. ազատ ամենից զբաղմանց, տասն տա-
րին հազիւ կարումի բան շարադրել, մեծաւ փքացմամբ պարծեով
հանէն՝ ՚ի դուրս. և թէ այնու զի՞նչ շահին, յայտ է. և թէ որպիսի
կեղծաւորութ հայոց ախմարաց զուկիսն ծծեն գիտեմք. թող ինձ
նման աղքատ կենդանավարութեամբ ապրին և բեւրապատիկ ձա-
խորդութեամբ պատեալ պաշարեալ, միան զուրկ ի փարայի տե-
րակի կարօտ՝ յանժամ բան շարադրել կարասցեն: վերջապէս
թողլով զայսոսիկ, զոր ինչ և պիտոյն է մեզ զայն ծանուսցուք
մերայնոց. զի թէպէտ ես մեկնեցի զայս ոչ ընդդէմ հաւատոյ.
և ոչ ընդդէմ բարի վարուց. և առ ի թ յանդգնութեան հերձուա-
ծողաց. այլ մաքուր գիտանձնութեամբ. և ուղղափառ վարդա-
պետաց.

digitised by A.R.A.R.@

Թուղթ առ խոհեմագէտ Ներսէս-ըստ Պետրոսեան ընթերցողս

գիտութեամբ, հաստատութիւն սուրբ հաւատոյ, և խորտակ բա-
րեկրօնից. իսկ և սնոտիապաշտութիւն հեստելոյ. հաստ ընտիր վկայ-
ութեամբ. և միոջ կարծիցէ թէ կամիցիմ ասել զայս մեկնութ-
եան ոյժ ըստ մտաց իմաստնոյն. քա՛ւ լիցի. զի զայս 'ի սկզբանէ
արարածոց մինչև ցկատարած ոչ ոք մեկնիչ կարէ համարձակել
և ասել թէ՛ զոր ինչ մտօք գրեաց սաղոմոն զերգս այնու մտօք
մեկնեցի. զի զայն միայն նորին պարգևաց տուողինէ գիտելի. որ
շնորհեաց նմա ծովանման գիտութիւն, ուստի խօսեցաւ զփայ-
տից. զեղևնափայտէն որ 'ի լիբանան. մինչև ցզոպայն որ յորմն է
լանէ. 3 Թագ. 4. 33. և մանաւանդ զայն երգս որ է խորին և
ծածուկ և նուրբ մարգարէութիւն. և իբրու երկրորդ աւետա-
րան անապականոյս. այլ որպէս և վճռեցին նախնի սուրբ հարքն
և որպիսի ճանապարհաւ ընթացան նոքա, այնպէս ընթացաք և
մեք. և այնքան էր իմ ջանք զի յարմարական մեկնութիւն եղիցի.
և 'ի կանոնէ եկեղեցւոյ մի՛ արտելանիցէ. թէ և խորհրդական և
բարոյական մեկնութիւն առնել ևս յարմարի. բայց դու որպէս և
կամիս այնպէս ընկալ. և մի՛ դեգերիր 'ի դիւրունս օտար ազգաց.
և մի՛ ըմպեր զոսկեայ բաժակաւ նոցին զօշարակն թիւնալի. այլ
առաւել շատացիր. և զմեզ անմեղադիր պահեա. այլև որքան կա-
րացի պարզ ոճի ընթացայ զի դիւրահասկանալի եղիցի. ոչ իմաստ-
նոց և գիտնոց. այլ տղայոց և համբակաց որոճալի արարի. նաև
ոչ կամեցայ բաժանել այլև այլ մասունս որպէս զքրիստոսէ և
զեկեղեցւոյ. զքրիստոսէ և զհաւատացելոց հոգւոյ և զքրիստոսէ
և զամենօրհնեալ սուրբ կուսին Մարիամու, որպէս արարեալ
է կուռնելիոս ալափիտէն. զոր մէ պատմեն տեսողքն. զի
մի և նոյն եկեղեցին և հաւատացեալ հոգին և սրբուհի
կոյսն Մարիամ է պատուական մասն մարմնոյ եկեղեցւոյ հար-
սին քրիստոսի. ուրեմն աւելորդ աշխատութիւն է. զոր և ու-
նայն դեգերումն. մի ոք և կամի, և որպէս հաճի այնպէս առ-
նել կարէ. այլ իմ ըստ ոճի նախնեացն միակերպ ընթացայ. զի
իմ գոլով ծերացեալ և աչաց լուսոյ պակասեալ այնքան առնել
միայն կարացի. Դարձեալ և վասն երկարաբանութեան սորին և
գիտելի է. զի թէպէտ կամէր ինձ կարճ և համառօտ առնել.
բայց ոմանք 'ի բանասէր եղբարց հարկեցին մեզ երկարել առաւել
թէ՛ աճեա քանի մեկնութիւնք որ գտանին առ մեզ՝ ամենեքեան

կարճ

digitised by A.R.A.R.@

## Բան առ խոհեմագէտ նորագիւտ եղանակաւ ընթերցողս

կարճ և համառօտ են, որպէս նախնեացն, հնազանդեցեալ, վար-
դապետաց և ուսուցչաց և այլոց։ Աստանօր խնդրեմք և դար-
ձոցք ինչ երկարել․ բայց և մեք սակս խնդրոյ նոցին երկարեցաք․
այլ ոչ այնքան․ զի զառաջին գլուխս բնաբանի տողին մեկնութիւն
թէ որքան երկար ձգեցաք․ եթէ ութ գլուխն ևս այնպէս առ-
նել ի կարի յոյժ երկարէր, որոյ աւելորդ՝ ի բաց թողի․ նաև ըզ-
բազում բանս սուրբ գրոյ․ կամ 'ի վարդապետական մատենից և
թէ այլ տեղեաց առ բերեալ վկայութիւնքն մեր, որոց զամենս
պարզել հարկաւորէր․ բայց սակս երկարութեան զանց արարի․
Դարձեալ զայս ևս գիտել արժանէ յաղագս համբակաց, զի յայս
միկ մեկնութեան զոմանս բանս տեսանես կրկնեցեալ, որ՝ ի միում
տեղւոյ եդեալ վկայութիւնքն այլում տեղւոջ ևս առ բերեալ
գտանես վասն պահանջման հարկին․ և մեք զայս գիտելով ա-
րարաք ոչ բնաբանի բանք տողին քանի տեղիս երկիցս և չորիցս
կրկնեալ է․ ոչ յայտ յանդիման իրև․ թողում զայլսն, և միայն
զայն ցուցանեմ, թէ հայրն երդմնեցուցանել զհատերս երա-
ղեմ չորիցս կրկնէ, նոյնպէս տեսանես և զայլ տեղիս․ նոյնպէս
գտանես և բանք աւետարանչայն, և առաքելոյն, այլ և մարգա-
րէիցն, մանաւանդ սաղմոսային դաւթի և հինգ գրոյն Մովսիսի
ևս առաւել մատենագրաց սովորութիւն է, որոց տեղիսն ցու-
ցանել ձանձրութիւն պատճառէ․ թէ և կարէին թարց կրկնա-
բանութեան առնել այլ սակս հաստատութեամբ բանին կրկնեն
և վերականկնեն․ նոյնպէս և մեք յայսմիկ գրութեան արարաք ըն
տեղւոյն․ հանգոյն բնաբանին առնել հարկաւորեցաք, այլ
ոչ այնքան․ բայց սակաւ ինչ զի սակս ծերութեան հասակի ի-
մոյ․ միայն աւարտել փութայայ․ վասն ներել մաղթեմ 'ի ընթեր-
ցողէր եղբարց․ զի բանական համարեցայն զայսքան գրեալս մեր
'ի փառս աստուծոյ․ և 'ի պարծանս ուղղափառ մաքուր հաւա-
տոյս հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ․ որոյ յարգանաւք ծնեալ
մանկունքն 'ի դուռն և 'ի դաժան ամենակէս մնասցեն տերամբ ան-
փոփ և անսայթաք կենդանաւորութեամբ 'ի պատուաւ և 'ի փառա-
ւորութիւն ամենասուրբ երրորդութեան որ է օրհնեալ յաւիտ
և յաւիտեանս։ Ամէն․

## Առ ուսումնասէր ընթերցօղս։

Ճրագի նմանեցուցանէ մարգարէն Դաւիթ զբանս Աստուծոյ, զորս ընդ ժամանակս ժամանակս ատղածաբանեալքն Հոգւոյն սրբոյ. զմարգարէսն ասեմ և զառաքեալս, եւս և ըզ վարդապետս՝ զորս ըստ երանելոյն Պօղոսի եդ Ած յեկեղեցւոջն որք ազդմամբ շնորհաց Հոգւոյն ՚ի բանաւոր անդաստանս սըրտից մանկանց սփռեն սերմանեալ արդասաւորեցին, ՚ի լուսաւորութիւն մտացն նոցին առ իմանալի բարիս, որով զարքունական անքոյթ շաւիղ յորդեալ նոքա առ կեանս յաւիտենականս՝ ՚ի փառս Աստուծոյ։

Ըստ այնմ վերագոյն և հոգեկիրթ մատեանս այս մեկնութիւն երգ երգոց անուանեալ բանիցն Սողոմոնի, աշխատասիրեալ ՚ի բանիբուն և քաջաբան Տն Յակոբայ վարդապետի Սիմոնեան կարնեցւոյ, ՚ի միաբանութենէ մեծի և ընդհանրական Աթոռոյն Հայաստանեայց Սրբոյ Էջմիածնի, զոր և երեսուն և ութ ամօք յառաջ՝ ՚ի յօգուտ մանկանց եկեղեցւոյ արարեալ. իսկ ՚ի նորագոյնս ՚ի գալ ՚ի կողմանս Հնդկաց նոյնոյ սբյ Աթոռոյն Էջմիածնի միաբան Խաչատուր Թօվման վարդապետին ունէր ընդ իւր զայս գիրք ՚ի զբօսանս ուսումնասիրութեան իւրում, զոր տեսեալ մերազնեայ ընթերցասէր պատանեկաց, և առեալ ըղձաշատ սրտին քաղցրութեամբ, վառեալ բորբոքեցան ՚ի սէր սորին, և ոչ արժան վարկան այսպիսի գանձ հոգեշահ՝ ծնունդ մեծի առն Այ՝ Յակոբայ րաբունւոյ՝ թողուլ ընդ գրուանաւ և ՚ի խորշս մթութեան ծածկեալ, իբր յանարգութեան իմն յանդիպեալ վիճակի դատելոյ, յորմէ սակաւք ոմանք մարթացին շահել։ Այս խրախուսեալ յԱծային բանից՝ անտի, որ ՚ի ձեռն Երեմիայի թէ՝ որ հանէ զպատուականն ի յանարգէն՝ բերան իմ կոչեսցի, զմիմեանս յորդորել և հանգանակաւ իմն դոյզն ծախս տպեցման սորին ժողովել, ետուն զպատուականս այս գործ տպեցմամբ ՚ի լոյս ընծայել. իբր յանարգական հանել վիճակէ թագնութեան, և ՚ի վերոյ եդեալ աշտանակի բարձրութեան.

digitised by A.R.A.R.@

զի պատուականութիւն սորին ամենայն քաջայայտ երեւեսցի ամէն յանդիման, որպէս զի յորդ գործոյ՝ ըստ գործողին արդեամբ ՚ի համայնից զարժանին ընկալցի ներբողեան եւ ինքեանք ՚ի հոգենորոգ բանից սորին արդիւնաւորեալ, յաստիս զանանցն մարթասցին շնորհիւ Տեառն կթել զշաւիղ կենաց անվախճան. ուստի եւ մեք ըստ խնդրոյ նորին տպագրեալ՝ ահա ուրախութեամբ սրտի՝ արժանապատիւ ազգիդ իմոյ կացուցանեմ ՚ի յանդիման, մաղթելով ձերոյ պատուելութեան միշտ.

Պատրաստական խոնարհ ծառայ

## ԶՆԹԼՈՒՄ ՈՒԵՏԵՐՆ.

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՐԳ ԵՐԳՈՑ ԱՆՈՒԱՆԵԱԼ ԲԱՆԻՑ ՍԱՂՈՄՈՆԻ։

ԵՐԳ ԵՐԳՈՑ ՍԱՂՈՄՈՆԻ որ է՝ օրհնութիւն օրհնութեանց․ որ եբրայեցերէն ասի Սիրհասիրիմ։ (Մակագրութիւն հետեւել բանիս՝ անուանէ զսա երգերգոյ Սաղոմոնի․) և զկնի յարէ թէ՝ որ է օրհնութիւն օրհնութեանց։ Իբրու մեկնութիւն․ և կամ կրկնումն առաջնոյ երգերգոյ բառին։ Զի երգն՝ է՝ գործառութիւն գովաբանական, ասել զբան ինչ զուարճաքէ։ և օրհնութիւն ըստ մեծին Դիոնեսիոսի յայտնութիւն լսի։ Որ է պատմաբանել կամ գովաբանել զոք․ որպէս մարդիկ զմարդ գովեն․ կամ որպէս արարածք՝ զարարօղն երկնի և երկրի ներբողեն և գոհանան․ որոյ միայն վայելէ՝ օրհնութիւն։ Զի նա միայն է՝ օրհնութեան արժանի, որ արարիչն է՝ ամենայնի։ Վասնորոյ ասէ առաքեալն՝ օրհնեալ է Աստուած, և հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Վասն զի ոչ գոյ այլ բարձրագոյն պատարագ, և ծայրագոյն ընծայ մատուցանել Աստուծոյ՝ քան զօրհնութիւն։ Վասն այնորիկ՝ զամենեսեան հրաւիրէ Աստուածահայր կոչեցեալ մարգարէն ասելով՝ օրհնեցէք զԱստուած, և սաղմոս ասացէք անուան նորա։ Որոյ զհետ երթայ և հարազատ որդի նորին բերանաբերածին արքայն Սաղոմոն։ Վասնորոյ և բարձրագոյն զերգս զայս յօրինէ։ Թէպէտ բազումք գրեցին զբանս օրհնութեան և գովութեան, որպէս մովսէս․

digitised by A.R.A.R.@

## Մեկնութիւն մակագրութեան Երգերգոց անուանելոյ յանուն Սողոմոնի։

Մովսէս, Դաւիթ, Եսայի և այլ նախնիք մեր հարք հնոյ կտակարանին. բայց սորայն գերազանցեալ զամենեքումբք։ Ուստի յանուանէ նշանագրի երգերգոյ Սողոմոնի. և օրհնութիւն օրհնութեանց։ Քանզի յատուկ է սիրահարաց զերգս յօրինել և գովել զսիրելին։ Բայց զի՞նչ այլ գերագոյն սիրելի քան զԱստուած. և օրհնութիւն մեր առ Աստուած է գովութիւն մեր նմա նուիրեալ։ Յաղագս որոյ Սողոմոն 'ի նաւակատիս տաճարին յաճախս օրհնութիւս առաքեաց առ տէր. և զանազան կերպիւ աղօթեաց առ Աստուած վասն եկողաց և աղօթողաց 'ի նորաշէն տաճարին, վասն մեղաց թողութեան, և պատուհասից բարձման. և բարեաց և պարգևաց առման ( տես 3 Թագ. 8. 13։ ) Զկնի որոյ երևի թէ և գերառատ շնորհիւ մարգարէութեան զայս երգ գրեաց. և զգալոյն մեսիայ՝ նսեմաբար Սողոմոն անուամբ նշանակեաց։ Ըստ մովսիսի որ ասաց առ որդիսն իսրայէլի, մարգարէ յարուսցէ ձեզ տէր Աստուած ձեր յեղբարց ձերոց իբրև զիս, նմա լուիջիք։ ( Ուրեմն աստանօր արժան է մեզ գիտել թէ ով իցէ Սողոմոն. ) Ջերոնիմոս գրէ նախ քան 'ի սալամանարանեալն աստուածաշունչ գրոց թէ՝ Սողոմոն խաղաղարար և սիրելի տեառն. զբարս ուղղէ. զբնութիւն ուսուցանէ, զեկեղեցի շաղկապէ և զՔրիստոս. և հարսանից սրբուհեաց համեղաբար երգէ զերգս առագաստի. և ըստ վարդապետաց եկեղեցւոյ, բազմաւ կերպիւ Սողոմոն եղև պատկեր և օրինակ Քրիստոսի, որպէս և տիկինն Սաբայ եղև տիպ և օրինակ և պատկեր 'ի Քրիստոս հաւատացելոց եկեղեցւոյն։ Արդ Սողոմոն նախ կոչեցաւ խաղաղարար։ և վասն փրկչին մերոյ գրէ առաքեալն թէ՝ նա է խաղաղութիւն մեր ( Եփե. 2. 14։ ) Երկրորդ՝ Սողոմոն սիրելի տեառն։ և Քրիստոս փրկիչն մեր, իսկապէս որդի և սիրելի Աստուծոյ հօր ( Մրկ 9. 6։ ) Երրորդ նա զբարս ուղղէ. և զբնութիւն ուսուցանէ. իսկ և Աւետարանն մեր՝ մերոյն Սողոմոնի՝ գեր քան զնորայն առաւել կատարելագործէ։ Չորրորդ՝ նա զեկեղեցի շաղկապէ և զՔրիստոս, իսկ մերն Սողոմոն յայտնապէս ծանուցանէ, թէ՝ որպէս սիրեաց զիս հայր՝ և ես սիրեցի զձեզ. հաստատուն կացէք 'ի սէր իմ ( Յոհ. 15. 9։ ) Հինգերորդ՝ Սողոմոն համեղաբար երգէ զերգս առագաստի. մերն Սողոմոն՝ բացարձակ քարոզէ թէ նմանեցաւ արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց ելին ը՛ առաջ փեսային.

փեսայի և հարսին (Մատթ. 25. 1.) Վեցերորդ՝ վասն Սողոմոնի գրեալ է թէ՝ ներ տաղից, և առակաց, և համեմատութեանց զար-մացեալ են երկիրք (Սիր. 47. 18.) Վասնորոյ և Դշխոյն հարա-ւոյ եկն ՚ի ծագաց երկրի լսել զիմաստութիւն Սողոմոնի. Իսկ և սրբազան աւետարանիչքն մեր գրեն թէ՝ և բազմութիւն յոյժ ժողովրդեան յամենայն հրէաստանէ և յերուսաղէմէ, և յայնմ կողմանէ, և ՚ի ծովեզերէն տիւրոսի և սիդոնի գային լսել զիմաս-տութիւն մերոյ արքային Սողոմոնի և բժշկել ՚ի հիւանդութեանց իւրեանց (Ղուկ. 6. 17.) և Բազումք իբրև լսէին զարմանային ընդ վարդապետութիւն նորա, և ասէին ուստի՞ է սմա այս, կամ զինչ՞ է իմաստութիւս որ տուեալ է սմա (Մարկոս 6. 2.)
Եօթներորդ՝ զՍողոմոն երանեաց տիկին Սաբայ ասելով՝ երա-նելիք են պաշտօնեայք քո, որք հանապազ կան առաջի քո. և լսեն զիմաստութիւն քո. Իսկ և յուսուցանել փրկչին մերոյ ՚ի ժողովրդեանն, շնորհազարդ կին մի ձայն բարձեալ ասաց, երանի է որովայնին որ կրեաց զքեզ՝ և ստեանցն որք դիեցուցին զքեզ (Ղուկ. 11. 27.) Ութերորդ՝ Սողոմոնի տուաւ անբաւ իմաստութիւն. բայց ՚Քրիստոս այ զօրութիւն և այ իմաստութիւն (Ա Կոր. 1. 24) այսքան աստանօր.
Դարձեալ՝ ուսուցանեն մեզ հոգեկիր վարդապետք, և շնորհալի թարգմանիչք աստուածաշունչ գրոյս՝ թէ Սողոմոնի երեք անու-անք էին. այսինքն Սողոմոն, Յեդեդիա, և Ժողովօղ. և գ երից անուանցն՝ զերիս գիրս գրեաց որք են Առակքն, Ժողովօղն, և Երգերգոյն. Իսկ իմաստութեան գիրքն ո՛չ է Սողոմոնի. այլ յայլմէ գրեալ ասեն. Թէպէտ բոլոր բանքն Սողոմոնի յարմարին. և թէ ընդէ՞ր այս երկբայութիւն ո՛չ է յայտ. Այլ ինձ թուի թէ, կամ վն վերնագրոյն յորում վասն ոչ լինելոյ անուն Սողոմոնի երկբայեցան ոմանք. Զի կամ ինքն Սողոմոն պատճառանօք իւիք ո՛չ կամեցեալ գրել զանուն իւր. որպէս յեբրայեցւոց թղթոյն Սրբազանն Պօղոս. Կամ որպէս յառակաց գրքոյն 25 դլխոյ առակքն Սողոմոնի գրեցին բարեկամքն Եզեկիայի արքայի և կամ որպէս սրբազան աւետարանիչքն, որք գրեցին զաւետարան. մերոյ Ճշմարտին Սողոմոնի. Նոյնպէս և իմաստութեան գրոյ բանքն գուցէ թէ բարեկամքն Սողոմոնի, և ատենադպիրք նորին՝ լը-ւեալ զբանն ՚ի բերանոյ արքայի՝ ինքեանք գրեցին. և վերնա-գրել ոչ նշանակեցին անուամբ Սողոմոնի. Այլ միայն գիրք



digitised by A.R.A.R.@

Մեկնութիւն Ժողովողին Երգերգոց անուանեալ ճաշիկն Սողոմոնի իմաստութեան տալին:

Երեք անուամբ առաջինն է Սողոմոն՝ որ թարգմանի խաղաղարար. տիպ եւ ըստ ակեր մեկնչին մերոյ: Սա երրեւ թագաւոր, եւ ուղղիչ բարուց զիւրաքանչիւր տղայական հասակ խրատէ, կրթէ, եւ մեկնէ զայն 'ի թիւր ճանապարհաց, եւ 'ի վատթար բարուց, եւ զայս առնէ 'ի գիրս առակաց. ուստի յաճախ զունկնդիրս իւր կոչէ որդեակ:

Երկրորդ՝ անունն է Ժողովող կամ Ժողովնայ Եկլեսիաստէս, որ է քարոզատու. զի Ժողովող գիրս՝ ուսուցանէ զկատարեալ արս. զի մի՛ կարծիցեն թէ իցէ ինչ յաշխարհիս վերայ կայուն եւ մնայական, այլ համայնն հոսուն եւ փոփոխական. ուստի ոչ միայն սկիզբն արար քարոզութեան. ունայնութի ունայնութեանց՝ ասէ Ժողովողն. ունայնութի ունայնութեանց. ամենայն ինչ ընդունայն է. այլ եւ բազմիցս կրկնէ, եւ հա ամենայն ինչ ընդունայնութիւն է, եւ յօժարութի հոգւոյ: Մանաւանդ յաւարտ բանին՝ մինչ կամի եզրափակել զայն եւ միով սարսափելի բանիւ կնքէ: Թէ եւ վախճան բանիցս, զամենայն ինչ լուր, յաստուծոյ երկիր՝, եւ զպատուիրանս նորա պահեա՛ վասն զի այս է ամենայն մարդ. քանզի զամենայն արարած ածցէ Աստուած 'ի դատաստան, յամենայն անտես արարելոյ, եթէ բարի եւ եթէ չար:

Երրորդ անունն է Յեդեդի, այսինքն սիրելի Աստուծոյ, սա երրեւ սիրելի աստուծոյ՝ զընտիր եկեղեցին սիրով կապակցէ ընդ Քրիստոսի եւ զաստուածակրօն սիրեցեալն ընդ գերաշխարհիկ, եւ երկնաւոր փեսային 'ի գերաբարձր երգս երգոյն: Ուստի ոչ մակագրէ գիրքս այս՝ որպէս առաջին երկոքինն, առակք, կամ խրատելի եւ այլն: Այլ միայն երգ երգոց Սողոմոնի. քանզի սիրելիքն Աստուծոյ են հաւասարապետութք, եւ ոչ ունին զարքայ եթէ ոչ զանեղ արքայն երկնից: Որպէս Փիլոն եբրայեցին ասէ թէ միշտ բարեկամաց ամենայն ինչքն են հասարակ. վասն այնորիկ եւ Աստուած զիշխանութի եւ զինչս իւր՝ հաղորդէ սիրոյ իւրոյ՝ որպէս ասաց Տէր ցՄովսէս ահա ետու զքեզ Աստուած փարաւոնի (Ելք. 7. 1:) Նոյնպէս եւ ած սիրեաց զսողոմոն, եւ կոչեաց զանուն նորա սիրելի տեառն. եւ շնորհազարդեաց զնա, խոստանալով նմա, թէ տամ քեզ զիմաստութի եւ զհանճար: ուստի եւ նա խոստովան լինի զնմանէ, թէ խնդրեցի 'ի տեառնէ աղօթիւք. եւ տուաւ ինձ հանճար

digitised by A.R.A.R.@

Համար։ Կոչեցի եւ եկն յինձ հոգի իմաստութեան։ Զոր ինչ ծա-
ծուկ՝ եւ զոր ինչ յայտնի գիտացի. զի ամենեցուն ճարտարապետն
ուսոյց ինձ զիմաստութիւն։ Զի գոյ ՚ի նմա հոգի մտաւոր, սբ, միա-
ծին, բազմաբաշխ. (Իմաստ. 7 7։) Քանզի հոգին սբ թիկունս
հասանէ տկարութեան մերում. զի որք կամքն յաղօթս՝ որպէս արժանն
իցէ ոչ գիտեմք. այլ ինքն հոգին բարեխօս լինի ՚ի հեծութիւս ան-
մռունչս։ Բայց որ քննէն զսիրտս՝ գիտէ զինչ խորհուրդ է հո-
գւոյն. զի ըստ Այ բարեխօսէ վն սրբոց (Հռմ 8. 26։) Մանաւանդ
Տէրն մեր խոստացաւ նմանուցնէ, թէ՝ հոգին սբ ուսուսցէ ձեզ ՚ի նմին
ժամու զինչ պարտ իցէ, խօսիլ (Ղկ. 12. 11։) Ուրեմն հեղի-
նակ գրոյս այսորիկ եղեւ հոգին սբ, որ ուսոյց Սողոմոնի։ Եւ կլե-
գունորին արար որպէս գիտէ իւրոյ ինքեան. եւ զօրացուցեալ շնորհիւն,
յորոյ զնա ՚ի գրել զբարձրագոյն զերգս զայս. փեսայի եւ հարսի
համեմատութեամբ. որոյ սիրոյն հանդէտ որ ալիեարս ոչ գտանի
սէր ՚ի վերայ երկրի. որ եւ յայտ է բնաւից։ Որոյ աղագաւ ՚ի խորա-
գրի սորին, զանուն հարսին մակագրէ թէ՝ հարսն ասէ. եւ ՚ի
գիմայնորին սկսանի յօրինել զերգս, ներբողել զգրաւառս, մաղ-
թել զհայցուածս, եւ խոստովանել զյանցանս։ Բայց գիտել ար-
ժանէ հարսն անուն՝ թէ առ ինչ է. քանզի որ հարսնէ յայտէ թէ՝
ունի զփեսայ, եւ որ փեսայ ասի՝ երեւի թէ ունի զհարսն։ Բայց
հարսն եւ փեսայ ասեմք այնպէս, որք չեւեւս են եկեալք առ միմեանս,
զի զնի գալստեան՝ կոչին այր եւ կին. եւ ոչ հարսն կամ փեսայ։
Խոկ եւ առաջիկայ բանք սբյ մատենիս զոր հանդերձեալեմք ՚ի
մեկնել ՚ի սկզբանէ մինչեւ ցվախճան զհարսնէ եւ զփեսայէ լի-
ձեւ է։ եւ սկսանի այսպէս.

Հարսն ասէ։

Ուրեմն հարկաւորեմք գիտել նախապէս թէ՝ ով է հարսն. եւ
ով փեսայ։ Ապա՝ ընկալեալ ՚ի խորս սբ գրոց. ուստի ուսանիմք մար-
մնաւորի անօրէնութիւն բանին այս կոչեցեալ հարսանիս. զոր ծա-
նուցանէ մեզ՝ առակաւոր վարդապետութիւն նորին ՚ի սբ աւետա-
րանին. թէ նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ
արար հարսանիս որդւոյ իւրում (Մատթ. 22. 2.) եւ Արքայան
աւետարանիչն Յովհաննէս ՚ի տեսլեան լուաւ ձայն մեծ որ ասէր,
եկն հարսանիս գառին, եւ հարսն նորա պատրաստեաց զինքն (Յայտ.
19. 7. եւ ի ու. 9։) եւ թէ՝ նմանեցաւ արքայութիւն երկնից տասն
կուսանաց

digitised by A.R.A.R.@

կուսանաց, որք ելին ընդ առաջ փեսային և հարսին (Մատթ. 25. 7.) Ըստ որում երգէ եկեղեցիս հայաստանեայց ՚ի յաւուր տօնի՝ մեծի լուսաւորչին մերոյ ՚ի դէմս հօր մեր, որ կոչեցեր զհետեւեալսն ՚ի հարսանիս քո միածնի, ընկեալ զբաժակ իմաստութեան ՚ի ձեռն սրբոյն Գրիգորի. Ցորոց ուսանիմք՝ փեսայ՝ քն. և հարսն եկեղեցի սրբ, այսինքն երամք հաւատացելոց նորին. այլ քն ՚ի քրիստոս. ըստ առաքելոյն թէ՝ եկեղեցւոյ աստուծոյ, որ ՚ի Կորնթոս՝ նուիրելոցդ ՚ի քրիստոս. կոչեցելոց սրբոց (I Կոր. 1. 2.) Եւ՝ իբրև փեսայ ընդ հարսին բնակողի համեմատել կամ մեկնել կայծակնամաքուր մարգարէն ասէ թէ՝ զորօրինակ բնակի փեսայ՝ առ հարսին, այնպէս ուրախ լիցի տէր ՚ի քեզ (Եսայ. 62. 5.) և փեսային վաղեմական ունեցեալ զսէր իւր պատմէ. թէ սիրով յաւիտենականաւ սիրեցի զքեզ՝ վասն այնորիկ ձգեցի զքեզ ՚ի գթութիւն (Երեմ. 13. 3.) Եւ Պօղոս քաղաքական սիրոյ օրինակէ ասելով. այր է գլուխ կնոջ, նոյնպէս և քրիստոս գլուխ եկեղեցւոյ. վասն որոյ պարտին և արք սիրել զկանայս իւրեանց, իբրև զիւրեանց մարմինս. սնուցանել զնա և պարմանել. որպէս և քրիստոս զեկեղեցի. զի անդամք մարմնոյ նորա և յոսկերաց նորա. վասն այսորիկ թողցէ այր՝ զհայր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքին ՚ի մարմին մի. խորհուրդս այս՝ մեծ է. բայց ես ասեմ ՚ի քրիստոս և յեկեղեցի. կամի ասել թէ՝ խորհուրդս այս՝ է մեծ, և գաղտնի, և ծածուկ, զի է նշան և օրինակ՝ միաւորութեան քրիստոսի ընդ եկեղեցւոյ (Եփես. 5. 23.)

Բայց արդ՝ տեսցուք և զկերպ հարսանեացն. որ եղևն ՚ի մէջ Աստուծոյ և մարդոյ. որ սկիզբն էառ ՚ի մարդեղանագործութեան, մինչ արար Աստուած զմարդն ՚ի պատկեր իւր. Հաստատեցաւ՝ յորժամ եդ զնա ՚ի դրախտին փափկութեան գործել և պահել. Դաշնադրեցաւ՝ երբ պատուիրեաց նմա Աստուած չուտել ՚ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի. կատարեցաւ՝ յորժամ եդաւ իշխան և թագաւոր ՚ի վերայ ամենայն կենդանեաց.

Երկրորդ՝ եղև հարսանիք ՚ի մէջ դրախտին, ադամայ ընդ եւայի. Սկսաւ՝ մինչ ասաց աստուած, ոչ է պարտ մարդոյդ միայն լինել. Հաստատեցաւ՝ որ էառ մի ՚ի կողից ադամայ, և ելից ընդ այնր մարմին. Դաշնադրեցաւ՝ ՚ի յասելն ադամայ, այս այժմիկ ոսկր՝ յոսկերաց իմոց, և մարմին ՚ի մարմնոյ իմմէ. կատարեցաւ՝ մինչ

օրհնեաց

digitised by A.R.A.R.@

օրհնեաց զնոսա աստուած. եւ ասէ՝ աճեցէք եւ բազմացարուք: Երրորդ՝ եղեւ հարսանիք 'ի Նազարեթ՝ բանին աստուծոյ ընդ սրբ. կուսին. յի երկրորդին Ադամայ ընդ երկրորդին Եւայի. Սկսաւ յանմեանն վերջերորդի, յորժամ առաքեցաւ Գաբրիէլ առ կոյսն սուրբ: Հաստատեցաւ՝ մինչ խորհէր սուրբ կոյսն ի միտս իւր թէ որպիսի ինչ իցէ ողջոյնս այս: Դաշնադրեցաւ. յորժամ ասաց հրեշտակն ահա յղասջիր՝ եւ ծնցիս որդի. Կատարեցաւ՝ 'ի պատասխանելն. թէ ահաւասիկ եմ աղախին տեառն.

Չորրորդ՝ եղեւ հարսանիք 'ի յարգանդի սրբոյ կուսին Մարիամու. աստուածային եւ մարդկային բնութեց միաւորութիւն, ուր անճառապէս անշփոթաբար եւ անբաժանելապէս երկուքին բնութիւնք խառնեցան: Սկզբնաւորեցաւ մինչ զօրութիւն բարձրելոյն հովանի եղեւ 'ի վերայ նորա. եւ բանն աստուած էջ յարգանդ նորին, զորմէ պատմէ աւետարանիչն. թէ բանն մարմին եղեւ: Հաստատեցաւ՝ յորժամ գնաց Մարիամ առ Եղիսաբեթ. եւ ընդ ողջունին խաղաց մանուկն յորովայնի նորա: Կատարեցաւ. յորժամ ծնաւ զանդրանիկ որդին. եւ պատեաց 'ի խանձարուրս. եւ եդ 'ի մսուր:

Հինգերորդ՝ եղեւ հարսանիք եւ պսակ 'ի մէջ աշխարհի, փեսային Քրիստոսի ընդ եկեղեցւոյ. որ սկսաւ՝ ծննդեամբ փեսային: Դաշնադրեցաւ՝ քարոզութեամբ նորին, յորում ասաց զի յայս իսկ եկեալ եմ յաշխարհ (Մարկ. 1. 48.) Հաստատեցաւ սքանչելեաց ներգործութեամբ եւ կատարեցաւ չարչարանօք նորին, յարութեամբ եւ համբարձմամբն:

Դարձեալ՝ սկզբնաւորեցաւ՝ մինչ սկսաւ 'ի քարոզել (Մատթ. 4. 17.) դաշնադրեցաւ՝ կարգադրութեամբ սրբոյ հաղորդութեան (Մատթ. 26. 26.) հաստատեցաւ պարգեւօք հոգւոյն սրբոյ. Կատարեցաւ՝ տարածմամբ սրբոյ աւետարանին (Գործ. 2. 2. Սղ. 18. 5.)

Վեցերորդ՝ եղեւ հարսանիք 'ի մէջ աստուծոյ եւ հաւատացելոյ հոգւոյ. Սկզբնաւորեցաւ մինչ բանն աստուած մարմին եղեւ եւ բնակեցաւ 'ի մեզ. Հաստատեցաւ՝ վկայութեամբ Յովհաննու (Յովհ. 1. 32.) Դաշնադրեցաւ այնու որ ասաց. եթէ ոչ ծնցի 'ի ջրոյ եւ 'ի հոգւոյ: Եւ եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ. եւ արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս: Զի որ ուտէ զմարմին իմ. եւ ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցէ՝ եւ ես 'ի նմա (Յովհ. 6. 54.) Կատարեցաւ այնու որ ասաց, որ հաւատայ յիս ընդունի

զկեանս

զկեանս յաւիտենականս ( Յովհ. 6. 47։ )
Իսկ եւ Թարսեղ կեսարացին ասէ, այժմ պսակի որ մատանի իշխանութեան. եւ կօշիկ համարձակութեան կոխել զօձ եւ զկարիճս. եւ զարդարանք հարսանեաց փեսայն քրիստոս ինքն՝ զինքն զգեցոյց հարսին. (Գաղ. 3. 27։) Եւ նշան խաստման. զորմէ ասէ՝ խօսեցայ զքեզ ինձ հաւատով զի ծանիցես զտէր։ եւ զգեցուցի քեզ պճնապէս. եւ ապա ցուցի քեզ երկնաւորս. կերեր նաշիհ եւ իւղ եւ մեղր, եւ եղեր գեղեցիկ յոյժ յոյժ, եւ գրկեցար ի գրկանս թագաւորութե (Ովս. 2. 20. Եզկ. 16. 10։)

Ես արդ՝ բանքս այսոքիկ առնեն զբարին Քրիստոսի հասարակ, եւ հաղորդակից հարսն եկեղեցի բարութե եւ առաքինութե, եւ հաւատացեալ հոգին սրբութե եւ մաքրութե, որ քան փեսայէ Քրիստոս արքայն, զհաւատացեալ հոգին առնէ թագուհի. եթէ հրեայ իցէ, եթէ հեթանոս, եթէ ծառայ եւ եթէ ազատ. ոչ խտրէ։ ( Տես. Յովհ. 10. 16։ և Հռոմ. 10. 12. 1 Կոր. 12. 12. Եփ. 4. 5։ ) Այլ զամենեսեան հաղորդակիցէ ի սեղան թագաւորութե իւրոյ. եւ ի յառագաստ ամենայն բարութե. վասն այն ասէ
ի սեղան հօր իմոյ բազմեցուցից զձեզ։

Զայսոսիկ իմացեալ եւ տեսեալ հոգւոյ ականբ Աստուածահայր մարգարէին, խրախոյս տայ հարսին եկեղեցւոյ, եւ քաջալերելով ասէ՝ լուր դուստր եւ տես, խոնարհեցո զունկն քո. մոռա զժողովուրդ քո, եւ զտուն հօր քոյ. զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քոյ ( Սղմ. 44. 11։ ) Քան զի զնա սիրեցի ( Աստ ) եւ քննեցի ի մանկութե իմմէ, եւ խնդրեցի ածել ինձ հարսնութեան, եւ եղէ ցանկացող գեղոյ նորա ( Իմաստ. 8. 2։ ) Զորս լուեալ հարսին, զուարճացեալ, եւ իբրու կայթս առեալ պարելով ասէ՝ ցնծասցէ անձն իմ ի տէր զի զգեցոյց ինձ զհանդերձ փրկութե. եւ զպատմուճան ուրախութեան. իբրեւ փեսայի եդ ինձ զպսակ, եւ իբրեւ
զհարսն զարդու զարդարեաց զիս ( Եսայ. 61. 10։ )

Ահա այսոքիւք հաւաստի ծանեաք թէ փեսայն է Քրիստոս, եւ հարսն եկեղեցի սուրբ, ըստ Յովհաննու թէ՝ որ ունի հարսն նա է փեսայ. որ կամի ասել, որ ունի զգործ փեսայի. որէ զորդիս ծնանել. վն այն՝ զի գործ Քրիստոսի էր մկրտել. որով վերստին ծնաներ զորդիս ի հարսնէ եկեղեցւոյ. զոր Յովհաննէս իւր մկրտութբն ոչ կարէր։ Զի ոչ էր փեսայ հարսին եկեղեցւոյ. եւ ոչ կարէր ծնանիլ

digitised by A.R.A.R.@

Մեկնութիւն մաղթերգութեան Երգ Երգոց անուանելոյն Սողոմոնի։

ծնանիլ զորդիս յայլմէ հարսնէ, եթէ ոչ յեկեղեցւոյ. որ է օրինաւոր հարսն Քրիստոսի։ Սբն Յոհան ոսկիբերանն 'ի մեկնութեան Յովհաննու աւետարանին 17 ճառին ասէ վասն Յովհաննու մկրտչին թէ՝ 'իբրև փեսաւէր այնպէս գործէր։ Քանզի որպէս օրէնէ փեսայի՝ ուր և իցէ, առ ժամայն ոչ խօսիլ ընդ հարսն. այլ ինքն լռելեան կալով, այլք զնմանէ ծանուցանեն. և ապա տան զհարսն 'ի ձեռս նորա։ Այսպէս և Քրիստոս փրկիչն մեր՝ եկն խօսիլ ընքեան զեկեղեցին սուրբ. և ինքն ոչ խօսեցաւ. այլ միայն գալով եկն առ սիրելին իւր Յովհաննէս։ Իսկ նա զայս հարսնին ետ 'ի ձեռս նր. և աւանդութք բանից որ վն նորա, զորդիս մարդկան աւանդեաց նմա։ Եւ յորժամ նա ընկալաւ զնոսա՝ այնչափ բարձրացոյց զնոսա, զի այնուհետև այլ ոչ ևս դարձան առ աւանդիչն իւրեանց։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և զմեզ պարտ մեզ զգուշութք իմանալ։ Զոր օրինակ 'ի հարսանիս ոչ եթէ նախ հարսն երթայ առ փեսայն, այլ նա փութով գայ առ նա. թէպէտ և որդի թագաւորի իցէ և հարսն անշան և աղքատ ոք. կամ թէ և աղախին ոք իցէ զոր որդի թագաւորի առնուցու։ Այնպէս և աստ գործեցաւ. Ո՛չ եթէ բնութն մարդկան ել յերկինս, այլ ինքն էջ առ նուաստս և տկարս. և յետ լինելոյ հարսանեացն՝ ոչ եթող զնա աստ կալ՝ այլ և էառ զնա, և 'ի վեր համբարձ առ հայր իւր. վասն որոյ ոչ ծածկապէս խօսեցաւ Յովհաննէս ընդ աշակերտսն իւր՝ և ապա աւանդեաց զնոսա Քրիստոսի, այլ դէմ յանդիման ժողովրդեանն՝ յորժամ ամենայն ոք լսէր զբանս նորա, ասէ ընդ նոսա. ահա գառն Աստուծոյ. և թէ նմա պարտ է աճել՝ և ինձ մեղմանալ։ Ուստի երգէ եկեղեցիս թէ՝ երկնաւոր փեսայ անտառէր լոյս իմանալի որ 'ի յերկնից իջեր 'ի սէր հարսին քոյ եկեղեցւոյ, զոր խօսեցաւ քեզ բարեկամն և փեսաւէրն քո Յովհաննէս։ և Շնորհալին մեր սբն Ներսէս ասէ,

Որ մինչ 'ի բանսն էր առաքեր, և զգալոյն հարցա    նէր,
դ'ու 'ի ներքին բանսն գաղցես, եթէ կայլոք առաքեա    ցես.
Զի աւետիս տամ լսողաց, և կարապետ լինիմ յու    սով.
որպէս յերկրի ձայն բարբառով. և 'ի դժոխս որոտա    լով.
Զի դու փեսայ ես երկնային, ես հարսնածու մաքուր հար    սին.
դու արեգակն առաւօտին, և ես Ջրագ գիշերոյ    ին։
Բայց գիտելի է զի մարմնաւոր հարսնացեալքն, որք են կուսք, զնի
մա

digitised by A.R.A.R.@

միաւորութեան ոչ միայն կոյս և Քրիստոսի հարսնացեալքն՝ որք
ոչ են կոյս զկնի միաւորութեան եղիցին կոյս. զի են հաւատով
մաքուր, յուսով հաստատ, սիրով ամբողջ, վարուք անապական։
Վասն որոյ եկեղեցին և արդարացեալ հոգին ասի կոյս. զայս կամի
ծանուցանել Առաքեալն որ գրէր Կորնթացւոց վասն ամուսնացե-
լոց. թէ՝ խնամեցայ զձեզ՝ իբրև զկոյս մի սուրբ յանդիման կացուցանել
Քրիստոսի (I Կոր. II. 2.) Զի որովհետև ամենեքեան որք
աշխատին սակս փրկութեան հոգւոյ, փեսաւէր կոչին՝ փեսային
Քրիստոսի, և օրիորդ հարսին եկեղեցւոյ. յայն սակս այնպէս
գրէր Պօղոս. զի կամէր ասել թէ՝ ես ոչ եմ փեսայ, և ոչ կամիմ
զձեզ ինձ հարսնացուցանել, այլ՝ Քրիստոսի, և զձեզ նմա ցու-
ցանել յանկամ, և ընդ նմա պսակել մաքուր և ողջախոհ պսակաւ.
զի նա է փեսայ, և ես բարեկամ նորա. պահապան և առաջնորդ հար-
սին. վասն որոյ զհոգիս ձեր՝ ինձ յանձնեցեալ, զարդարեմ և ածեմ
'ի յառագաստ նորա, իբրև զկոյս հարսունս, ամբողջ
հաւատով, յուսով և սիրով.

Բեր առաւօտ տեսցուք նաև զերիս վասն եկեղեցւոյ, զի որով-
հետև հոմանունաբար ասի եկեղեցի, ուստի յերիս բաժանի եկե-
ղեցին. 'ի նիւթական, 'ի զինուորեալ և 'ի յաղթող։ Նիւթականն՝
է հարսնարան։ Զինուորեալն՝ է հարսն։ և Յաղթողն՝ է առա-
գաստ։ Նիւթականն է ի յանշունչ քարանց և 'ի փայտից շինեալն.
որոյ սակս գրէ սուրբն Գրիգոր Նարեկացին այս դշխոյ պաշտելեան
շնչական եկեղեցի տայ կեանս՝ և մահու խշխէ. անբանն 'ի բանա-
ւորէն կառուցեալ՝ նմին օժանդակէ. առանց բարբառոյ տիրա-
պէս հրամանաւ դատէ. իբր զառապանակն անխօս փայտեղէն մա-
ծեալ տախտակօք, առանց դդայութեան տեսողականաց մեզ առաջ-
նորդէ. ոչ լեզուաւ մարդոյ այլ բանիւ հրեշտակաց խօսի,
նոյն իսկ էութիւն Աստուծոյ մարմին եղելոյ, անձամբ այսր վիմի
նշանակեցաւ պատուամամբ կոչին զբնաւս արբուցեալ. Սմա ասի
տաճար Աստուծոյ. կամ տուն Աստուծոյ, կամ տեղի աղօթից
(Մատթ. 21. 13.) Որոյ յորայոյ 'ի սկզբանէ տնկեալ Աստուած
զդրախտն եդեմ ընդ արևելս. և եդ անդ զմարդն՝ զոր ստեղծ.
ուր ինքն հանապազ զգնայր. յորում և նախնիքն մեր ադամ ընծայք
բան Հնորհացն՝ զուարճացեալ անտխրական խնդութեամբ քանզի
զԱստուած տեսանէր մեջ խոնարհեալ 'ի դրախտին. որոյ
զկուսոյն

գլուխն ձառագայթ տպաւորէր՝ ի յինքեան։ Վասնորոյ ասէ
սուրբն Գրիգոր Նարեկացին, թէ՝ ունի զդիրս իւր ընդ յարևելս՝
՚ի տեղի խստման բնակութեան մերոյ յառաջնոյ։ Նաև որպէս
զտապանն Նոյի խորանն Մովսէսի, և տաճարն Սողոմոնի։ Ցա-
ղագս որոյ ասէ, ուր ժողովեալ են երկու և երեք յանուն իմ,
անդէն և ես ՚ի մէջ նոցա։ Եւ թէ՝ ամենայն իշխանքն կեդարու
ժողովեսցին, և մատուսցեն ընդունելի պատարագ ՚ի վերայ սեղանոյ
իմոյ և տուն աղօթից իմոց փառաւորեսցի (Եսայ. 60. 7։) Վասնորոյ
ասէ Նարեկացին, թէ՝ մահու անխնիւք հերքի այր ըստ օրինին.
որ արտաքոյ խորանի այսր վկայութեան զԱստուածային պատարագն
մատուցանէ։ Այլ ՚ի հնումն արգել Աստուած արտաքոյ խորանին
ստուերական պատարագս մատուցանելոյ (Ղև. 7. 3։) Բայց
արքայն Սողոմոն՝ տուն գինւոյ անուանէ զնա ՚ի գլխոյ հարսին
ասելով. մուծէք զիս ՚ի տուն գինւոյ. մի ՚ի ժողովարանս սէր. յո-
րում զենանի գառն երկնաւոր (ըստ Նարեկացւոյն) ուստի արիւն
հզօրին Աստուծոյ բաշխեալ մատուցանի բերելով մեզ ճաշակողացս
հոգևոր զմայլումն ըստ որում ասէ Դաւիթ, արբեսցին նոքա ՚ի
պարարտութենէ տան քոյ. և զուղխս փափկութեան քո տայցես ըմպել
նոցա։ Վասն զի, կաթն առեալ սորա արիւնն Քրիստոսի. փեսայ
հարսնութեան սորա որդւոյն Աստուծոյ կենդանւոյ. օրհնեալ ընձայից
սորին՝ հայրապետացն զումարք. ՚ի պար հարսանեաց սորա՝ զուարճ
առաքելոյն. արգանդ որովայնի սորին՝ աւազանն կենդանարար։
որպէս չէ առանց հօր Քրիստոսի. և ոչ առանց այսր մօր ար-
գանդի ոգի կատարեալ (Յով. 3. 5։) Զինւորական եկեղեցին,
որէ տաճար խորհրդականն, ոչ միայն ծնանի աւազանաւն զշնորհօք
որդիս, այլև զՔրիստոս ՚ի հաղորդութեան, երբ ՚ի յարգանդի իւրում կրէ
և զմեզ ՚ի փրկութիւն ծնանի, զի բանական ծնօղք մեր մարմնոյ բանական
որդիս ծնանին. իսկ սա անճառական մայր գոլով աւազանաւ ծնանի
զորդիս Աստուծոյ. և զանկատար ծնեալսն, և զանկզբնական մեզ
զապականեալսն՝ շնորհօք նորին կատարէ, զորոշմն նորոգ հաստա-
տանէ։ և այսպիսապէս վերստին նկարէ ՚ի մեզ՝ զկերպարան
լուսոյ փառաց։ Բնագէտք ասեմն թէ՝ է կենդանի մի, որան-
կերպ ծնանի զկորիւնս իւր, և մայրն լիզելով կերպաւորէ։ Սո-
րենմն զինչ՝ զարմանք թէ՝ զանկերպ և զանշնորհ ծնեալսն ՚ի բանա-
կանաց, կոյս մայր եկեղեցին խորհրդովն Քրիստոսի, երբ լիզելով

ձևա

ձեւակերպէ. ուստի երեւի թէ՝ ոչ է նա որդի Քրիստոսի, որ ոչ ճանաչիցէ զեկեղեցին փոխանակ մօր։ Զի ըստ վարդապետաց՝ ոչ կարէ ոք ունել զԱստուած փոխանակ Հօր, որ ոչ ունիցի զեկեղեցին փոխանակ մօր։ Ըստ որում ասէ սուրբն Գրիգոր Նարեկացին այս մայր հոգեւոր երկնաւոր լուսաւոր քան թէ երկրաւոր։ Վասն զի՝ մկրտութեամբ լուսանայ եւ մաքրէ։ Դրոշմիւն նշանէ։ Օծմամբ զգայարանայն՝ զկերպս հնազոյն օձին ապաքինէ։ Խոստովանութեամբ՝ զպարտնի չարութիւն բանսարկուին յայտնէ։ Ապաշխարութեամբ՝ ընդ Աստուծոյ հաշտեցուցանէ։ Աղօթիւք՝ ընդ երկնաւոր թագաւորին խօսակցէ։ Մարմնոյ եւ արեան հաղորդութեամբ՝ սնուցանէ եւ դարմանէ։ Միածնի որդւոյն Աստուծոյ տաճար եւ բնակարան կացուցանէ։ Պսակաւ աճէ եւ աւելու։ Եւ քահանայական աք կարգին կառավարէ, եւ՝ի սուրբ հաւատս հաստատէ։ Եւ Այսոքիւք յաղթօղ եկեղեցւոյ ժառանգորդս առնէ։ Եւ՝ի կարգս նորին անդրանկաց համաթուէ։

Զխոստովանեալ եկեղեցին է ժողով ընդհանուր հաւատացելոցն՝ի յԱծ. սկսեալ՝ի բնական օրինէն Ադամայ Աբելի մինչ՝ի գրաւորականն՝ի Մովսէս. եւ անտի մինչ՝ի շնորհապարգ յաւետարանական օրէնսն՝ի Քրիստոս. յորմէ սկսեալ դադար առնու՝ի կատարածի։ Որոյ հետեւի հանդերձեալն անեզր եւ անվախճան յայնժամ բնաւ հաւատացեալքն անապականաբար հարսնանան ընդ Քրիստոսի. որպէս ասէ Շնորհալին. յորժամ եկեղեցի հարսնացեալ միանայ ընդ փեսային ընդ իմաստուն կուսանացն. Որպէս աստ հաղորդինք հաւատով, եւ անդ կատարեալ գիտութեամբ նորին. զորմէ ասէ առաքեալն Պօղոս թէ՝ ՚ի նմա ամենայն գանձք իմաստութեան եւ գիտութեան ծածկեալ կան (Կղս. 2. 3։)

Զի որպէս փեսայ ընդ հարսին մի մարմին է. այսպէս եւ որ մերձենայ՚ի տէր մի հոգի է (I Կոր. 6. 17։) զորօրինակ՝ի հաւաքմանէ միաւորեալ անդամոց գոյանայ մի մարմին. Նմանապէս եւ ՚ի միաբանութենէ հաւատացելոց լինի մի խորհրդական մարմին Քրիստոսի. որ է եկեղեցի հարսնացեալ փեսային. վասն որոյ անդամք մարմնոյ նորա. եւ յոսկերաց նորա. եւ ոչ ոք ատէ զանձն իւր, այլ սնուցանէ եւ դարմանէ զնա. որպէս եւ Քրիստոս զեկեղեցի. զի սնուցանէ զմանկունս իւր կաթամբ կերակրոյ իւղով. եւ խնձորով. Վասն զի ոչ՚ի ձեռագործ տաճարս բնակի Աստուած (Գործ. 7. 48։)

այլ

այլ՝ ի կամարարս իւր ՔՍ ՚ի գլխաւորեալ յեկեղեցիս։ Ըստորում ասէ ես յո՞ բնակեցայց, եթէ ոչ ՚ի հեզս եւ ՚ի խոնարհս՝ եւ որք դողան ՚ի բանից իմոց (Եսա. 66. 2.) Ուստի Պօղոս զհաւատա-ցեալս տաճար անուանէ եւ խորան բանին Աստուծոյ ասելով ո՞չ գիտէք, եթէ տաճարէք Աստուծոյ. եւ Հոգի Աստուծոյ բնակեալ է ՚ի ձեզ (I Կոր. 3. 16. I Պետ. 2. 5.) եւ ՚ի յերգս գալստեան հոգւոյն սրբոյ ասէ, որ էլից Հոգի Տեառն զԲեսելիէլ ճարտարա-պետ խորանին. այսօր շինէ զմարդիկ խորան սուրբ երրորդութեան։ Բայց Պօղոս զհին եկեղեցին կոչէ ծառայ. եւ զնորս ազատ։ Եւ վասն յաղթօղ եկեղեցւոյն ասէ՝ եկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս։ Զի է ազատ, եւ մայր մեր ամենեցուն. (Գաղ. 4. 26. Եբր. 12. 23.)

Զի յաղթօղ եկեղեցին՝ է անմահ՝ յարակայ՝ լուսաւոր՝ եւ փառա-ւոր, անեզր եւ անվերջանալի, ամենաբարձր եւ անդրանկայ հրեշ-տակաց բնակարան. եւ ընտրելոց սրբոց կայարան, եւ արդարացեալ հոգւոց առագաստ հարսանեաց. որոյ խնդութիւն եւ բերկրութիւն եւ հրճուանքն յարմարապէս համեմատ հարսանեաց, յորում է լրութիւն հոգւոց որ ուտելեաց եւ ըմպելեաց. եւ անմահն ՚ի տրամակա-նաց. ըստ այնմ ո՞չէ պարտ մանկանց առագաստի սուգ առնուլ մինչ դեռ փեսայն ընդ նոսա իցէ. իսկ հոգիք հաւատացելոց անբաժանելի կերպիւ միաւորին ընդ փեսային Քրիստոսի ՚ի փառս՝ որք աստէն միաւորեալք էին շնորհիւ եւ հաւատով եւ սիրով ՚ի չարչարանս զի հարսանիքն է վայելչութ եւ զգեցութ ան-մահութեան. վն զի հոգին իբրեւ հարսն միաւորի ընդ Քրիստոսի. եւ առագաստի մնուն է անբաժանելի միաւորութիւն անդամոյն ընդ գլխոյն։ եւ անտանօր՝ ո՛չ եղանի գիշեր. եւ ո՛չ լինի պէտք ճրագի. եւ ո՛չ լուսոյ արեգական. քանզի՝ փառքն Աստուծոյ լուսաւորէ զնա յամենայն ժամ. եւ ճրագ ՚ի նմա է գառն. եւ այլքն յայտնի են ՚ի սուրբ գիրս. վասնորոյ եւ այսքանեօք բաւեսցի։ Որովք յայտ եղեւ թէ փեսայ հարսին եկեղեցւոյ՝ է Քս. դշխոյ՝ սբ Ածածինն. օրիորդք՝ սուրբ կուսանքն. առագաստ՝ վերինն Երուսաղէմ. եւ պարաւորք՝ հրեշտակքն. որք վասն ապաշխարող մեղաւորին առնեն ուրախութիւն. ըստ այնմ, ուրախութիւն լինի յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ։ Բայց ո՛չ ոք կարէ մտանել յա-ռագաստ յաղթօղ եկեղեցւոյն, եթէ ո՛չ նախ սրբեսցի ՚ի նիւթական

յեկե

digitised by A.R.A.R.@

յեկեղեցւոջ. և հարսնացի՝ ի զինուորեալ յեկեղեցւում. և այս
այն առ նոսա. մնհա փեսայ գայ, ա՛րիք ել առաջ նորա (Մատ. 25.
6.) և զկնի կայցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ.
Ալէ զայս՝ ի միտ առնուլ մեզ պարտ է, զի նուաճական եկեղեցին
անցուցիչ բարբառով աղօթէր՝ առ ՚ի լինել զենարան որդւոյն Աս-
տուծոյ, և բնակարան հօր միածնի. և հոգւոյն Ճշմարտի. յորում
Ճշմարիտ երկրպագուքն երկրպագանիցեն հօր՝ հոգւով և Ճշմար-
տութեամբ. (Ղկ. 2. 49. և Յով. 4. 23.) Եւ զինուորեալ եկե-
ղեցին պաղատէր ելանել Յեգիպտոսէ, և ազատիլ ՚ի Փարաւոնէ.
արժանաւորիլ մերձոյն փառացն, և ընդ երկնաւորացն դասակցիլ.
Իսկ և յաղթող եկեղեցին աղերսէր՝ վասն մերոյն Երուսաղէմի
Թափուր մնացեալ տեղւոյն լցուցման. և յինքեանց պակասեալ
Թուոյն լրման. Որքա ամենեքեան ըն ելեան բողոքէին. և մեծաւ
տագնապաւ պաղատէին վասն գալստեան մեսիային. Վասն որոյ
Աբել մատուցեալ պատարագ Աստուծոյ. և կատարեցաւ վկայա-
կան մահուամբ. Ենովս յուսացաւ կոչել զանունն Աստուծոյ.
Ենովք հաճոյ եղև նմա. Նոյ երևեցաւ արդար, և եգիտ շնորհս
առաջի տեառն. Աբրահամ հաւատայ յԱստուած, և համարե-
ցաւ նմա արդարութիւն. Եւ զկնի սոցին հետոյն յեկելոյ՝ զոմանս
յիշատակէ սբ. գիրն (Սի. 44. 17. Եբ. 11. 3. Ղկ. 3. 23.)
Թէ և Մատթէոս յԱբրահամու առնու սկիզբն, բայց շնորհա-
զարդ արքայն Սաղոմոն. նախնեաց հետևիլ կամելով. ՚ի սկզբանէ
զբնական եկեղեցին. և զբարոյականն զգրաւորականն, զշնորհա-
կանն և զաւետարանականն համանգամայն միապէս ՚ի կիր առնու.
հարսն անուամբ՝ մասնաւորաւ զընդհանուրն ծանուցանէ, թէ՝

հարսն ասէ.

Եւ եթէ ոք ՚ի խնդիր ելցէ թէ՝ վասն է՞ր այսքան երկար տարա-
ծեցաւ մեկնութիւն մակագրութեան սորին. զի կարճ և համառօտ
առնել կարելի էր. բայց տես դու թէ՝ որքան հարկաւոր բանք պա-
րունակի՞ն ՚ի սմա և որքան ծածուկք յայտնեցան՝ առ ՚ի լցուցանել
զմիտս համբակաց. զորս արժանի էր առնել. Մանաւանդ սուրբ
վարդապետն Օհան ոսկեբերանն ՚ի յանդրանեայ գրքոջ ՚ի տասն
գլուխն. պատուիրէ՝ ոչ զանց առնել զխորագրօք Աստուածային
գրոց. զի խորագիրն է կարճառօտ սահման՝ երկար ճառելեացն.
և բովանդակ դիտաւորութեան պարունակող ստորահետևեալ բանից.

Վասն

digitised by A.R.A.R.@

Մեկնութիւն Երգ Երգոց անուանելեալ Սողոմոնի։ Գլուխ I. Համար I.

Կանոնորոյ պարտ և արժան է յառաջագոյն ուսանել թէ՝ ո՞ գրեր զայս գրեալ. քանզի այս է առաջինն խնդրոյ կարգաւորութեան։ Նախ առաջին՝ զգիրողն գիտել, մարդ ոք էր՝ թէ Աստուած. և զկնի սոր պարտ քննել զգիրս թէ՝ ո՞վ գրեաց. և յաղագս որոյ. և թէ զկերպագրօքն վարկպարազի չէ պարտ զանց առնել. և վաղվաղակի 'ի նոյն ինքն մտանել 'ի գիրսն. որոյ խրատուն և մեք զհետ գնասցուք.

Որպէս և ա՛հա աստանօր տարակուսութի մի ևս երևի, թէ վ՞ն է՞ր նախ զհարսն յիշէ, և ոչ զփեսայն. ասելի է թէ՝ նախ հարսն Այգամայ Եւայ. մեղաւ և անկեաւ, և ո՛չ Ադամ. ( I Տիմ. 2. I4. ) Կանոնորոյ իմաստուն արքայն Սողոմոն 'ի դիմաց հարսին սկիզբն առնու երգել զերգս զայս, իբրու խրախալի սորա ապաշխարանաց. զի ամենայն ոք՝ որով և մեղանչէ, նովիմբ և տանջեսցի. ( Իմաստ. II. I7. )

Նոյնպէս և եթէ մեղաւ մայր մեր Եւայ, զկնի՝ դստերք նորին փոխանակ մօր իւրեանց զորշջայեալք ապաշխարեն. որպէս երգէ եկեղեցւոյս մեր 'ի տօնի սբց Յովակիմեանցն թէ՝ փոխանակ Եւայի դստերք նորա մարտիրոսք և կուսանք ընծայեալք Աստուծոյ. վա և զայս երգ հարսն եկեղեցւոյ որպէս թէ ողբախառն քաղցրաձայն աղօթք իմն յօրինեալ՝ պաղատի առ տէր ասելով. համբուրեսցէ. 'ի սոյն նախկին գլխոջ՝ հարսն զանխլաբար զաղերս ընծայէ հօր Աստուծոյ. զի առաքեսցէ զորդին միածին յաշխարհ 'ի համբոյր հարսին. այսինքն առ 'ի մարմնանալ. և խոստովանի զբարութիւն նորին ստեանց. և զազնուութիւն հօրոյ իւրոյն. Իւղ թափող անուանէ զհայրն Աստուած, և իւղ զմիածին որդին, և զամենասուրբ հոգին. և յայտնէ զսէր օրիորդայն. և պատմէ յինքեան շնորհեցեալ զպարգևսն. որով ցնծան օրիորդքն և կոչեն զանուն հարսին ուղղութի, և պատմէ նոցա զողջեղութէ իւրմէ, և զկերպ իւրոյ. և հարցանէ ցփեսայն զտեղի հանգստեան իւրոյ. մինչև ցվեց տունն. Երկրորդ՝ սկսանի փեսայն խօսիլ ընդ հարսին խրատելով զնա զի ծանիցէ զչափ անձին իւրոյ. և նմանեցուցանէ զհարսն ձիոյ՝ լծեալ 'ի կառս փարաւոնի. մինչև ցութ տունն. Երրորդ՝ սկսանին օրիորդք գովասանել զհարսն. մինչև ցտասն և մէկ տունն. Չորրորդ՝ հարսն վերստին խօսի զանձնէ իւրմէ և զփեսայէն; Հինգերորդ՝ և ծաղկեալ ողկուզոյ համեմատելով զինքն՝ և զէզօբ

որդին

digitised by A.R.A.R.@

որդին իւր մինչ կատարեն երեք տունքն։ Հինգերորդ՝ դարձեալ փեսայն գովէ զհարսն։ Վեցերորդ՝ հարսն փոխաբերաբար պատէս ներբողէ և գովաբանէ զփեսայն, և հրաւիրէ ՚ի պահոյս տան իւրոյ.

Համբուրեսցէ զիս ՚ի համբուրից բերանոյ իւրոյ, զի լաւ են ստինք քո քան զգինի։

Աստանօր հարսն լռելեան՝ և անյայտօրէն խորու վարագուրաւ խօսի ընդ ումեք. և թէ ընդ ո՞րոյ՝ ոչ բացայայտէ, բայց ոմանք ասեն թէ՝ հարսն ոչ համարձակի երեսախօս լինիլ և ասել, Համբուրեսցէ զիս, այլ աղերս ընծայէ օրիորդացն, և ՚ի նոցունց հայցէ և խնդրէ, միջնորդել՝ զի համբուրեսցի ՚ի փեսայէն։ Բայց բնաբանն ոչ այնպէս ցուցանէ։ Նախ՝ զի ոչ յիշէ զանուն օրիորդացն, որպէս ՚ի միւս գլխոյ և տանց, յորում եդեալ կայ զանուանսն՝ ընդ որոյ և խօսի, եթէ փեսային, և եթէ հարսին, և կամ օրիորդացն։ Երկրորդ՝ ընդ որում և խօսի նմա ասէ բարի են ստինք քո. ուստի երևի թէ՝ ընդ հօր փեսային խօսի. և նմա ասէ, բարի են ստինք քո. զի չէք ոք բարի բայց մի Աստուած (Ղկ. 18. 18.) Երրորդ՝ ցուցանէ թէ՝ որպէս Աննա մայրն Սամուէլի անմռունչ հեղոյր զանձն իւր առաջի Աստուծոյ և աղօթէր. (I Թագ. I. 13) և անխօս աղաչէին Մաքսաւորն և Մագդաղենացին. Բայց քննօղն սրտից գաղտնեաց, որ լսէ զհեծութիւս տնանկաց, և հայի յաղօթս խոնարհաց, ետես և լուաւ աղօթից նոցին։ Որոյ հետևելի աստանօրս. Հարսն աղօթէ ՚ի լռելեան. դիմէ առ տէր յերկնից արքայն. որպէս Աննա կին Եղկանայն. լուռ անմռունչ և ոչ ՚ի ձայն. կամ ըստ նախնեացն զանխլաբար. խնդրէ զփեսայն իւր բարերար. զի իջցէ յերկնից գթածաբար. համբուրեսցէ սիրապատար։ որպէս և սուրբ հայրն Սիլուանէ խրատ ետ եղբօր միոյ թէ յորժամ կայցես առաջի Աստուծոյ առնել աղօթս, բերան քո աղմնեսցէ անմռունչ. զի ամենայն հարք՝ որք զմեռեալս յարուցանէին, և զդևս հալածէին՝ ոչ քաղցրաձայն երգով և ոչ եղանակօք, և ոչ աղաղակաւ, այլ ջերմ և անձայն աղօթիւք, խիստ պահօք, և յորդ արտասուօք պաղատէին. վասն այն իբրև զլուսաւորս արփիանման փայլեցան յաշխարհի։ Նոյնպէս և հարսն խոնարհ, և համեստ և պարկեշտ բարբառով՝ կամի պաղատել, և ոչ, որպէս կարծեն ոմանք թէ անպատկառօրէն և յանդգնաբար իսկոյն համարձակի ասել, Համբուրեսցէ զիս, այլ ըստ Դաւթի

ողոքէ

digitised by A.R.A.R.@

ողջքն թէ տես զխոնարհութիւն իմ ( Սղ․ 24․ 18․ ) և թէ փութ-
փութեա՛յ՝ առ մեզ ողորմութիւն քո տէր՝ զի աղքատացաք յոյժ
( Սղ․ ։ ) Չորրորդ՝ համայն նախնի սուրբ հարքն, նահապետք
և մարգարէքն անմիջաբար աղօթէին առ Աստուած ։ Որպէս
աստանօր և հարսն․ ըստ խրատու Սաղմոսերգուն թէ՝ ժտեա՛ 'ի
տեառնէ, և նա տացէ քեզ զխնդրուածս սրտի քո ( Սղ․ 36․
4 ։ ) ուստի և հարսն աստ կոչէ զնա զտէր զհայր տեառն իմոյ զի
մի՝ 'ի բաց թողցէ զիս Սղ․ 51․ 14 ։ զոր յառաջ խոստացաւ 'ի
ձեռն մարգարէից, գրովք սրբովք վասն որդւոյ իւրոյ եղելոյ 'ի զաւակէ
Դաւթի ( Հռ․ 1․ 1 ։ ) Որոյ աղագաւ փափագանօք խնդրէին սուրբ
հարքն՝ զմեսիայն 'ի ներ խորհրդական թուոյ, որ եօթնեակ անուամբ
ձայնէին զնա ։ այսինքն․ իմաստութիւն ։ Ադոնայի ։ Արմատ Յես-
սեայ․ Բանալի Դաւթի ։ Ծագումն ։ Էմմանուէլ ։ Թագաւոր ։
որ եղևի 'ի սուրբ գիրս․ Նախ՝ Դաւիթ և Սողոմոն ասեն․ զամ-
ենայն իմաստութեամբ արարեր ։ ընդ քեզ է իմաստութիւն քո ( Սղ․ 103․
24 ։ Իմաստ․ 9․ 9 ․ ) Երկրորդ՝ այսպէս ասէ Ադոնայի Տէր
( Ելք․ 3․ 27 ։ )
Երրորդ՝ ելցէ յաւուր յայնմիկ արմատն Յեսսեայ ( Ես․ 11․ 1 ։ )
Չորրորդ՝ ահա այր, և ծագումն անուն նորա ( Զաք․ 6․ 12 ։ )
Հինգերորդ՝ տաց զփականս Դաւթի նմա ( Ես․ 22․ 22 ։ Վեցերորդ՝
կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ Ես․ 7․ 14․ Եօթներորդ՝
ահա թագաւոր քո ( Զաք․ 9․ 9 ։ ) որովք աղաղակէին, և հառա-
չանօք պաղատէին առ հայր Աստուած որ յատկապէս ունէր
իշխանութիւն առաքելոյ զորդին իւր միածին յաշխարհ առ 'ի
մարմնանալ ։

Նախ՝ դաւիթ կամելով զիղձ սրտի իւրոյ յայտնել․ խորհելով
թէ՝ եկն էհաս օր և պայման փրկութեան մերոյ ։ ուստի ոչ կամէր
երկարել զպայմանն, վասն այն գոչէր թէ՝ զարթի՛ր ընդէ՞ր
ննջես Տէր․ արի և մի՝ մերժեր զմեզ իսպառ ։ կամ թէ՝ դու յարու-
ցեալ գթասցիս 'ի վերայ Սիոնի՝ ժամանակ գթալոյ հասեալ է ։ և
ընկալաւ զպատասխանին թէ վասն տառապանաց աղքատին, և
հեծութեան տնանկին այժմ յարեայ ասէ Տէր․ Սղ․ 44․ 25 ։ 101․
14 ։ և 11․ 6 ։

Երկրորդ՝ Սողոմոն փափագէր՝ զերկրաւորս երկնաւոր առնել․
Աստուծոյ մարդանալ՝ և մարդոյ աստուածանալ․ վասնորոյ
ողո

406 42 · 68
... Библиотека ... ՀԱՍՌ-Арм ССР
digitised by A.R.A.R.@

Մէկնութիւն Երգ Երգոյ անուանեալ Երգոյն Սողոմոնի Գլուխ I. Համար I.

աղօթելով ասէր՝ Տէր Աստուած Իսրայէլի հաւատարիմ լիցի բան քո. զոր խօսեցար ծառայի քում Դաւթի, հօր իմոյ թէ՝ բնակեսցի Աստուած ընդ մարդկան ՚ի վերայ երկրի 3 Թագ. 8. 26.

Երրորդ՝ Եսայի բողոքեալ՝ և փութեալ հրով սիրոյ աղաղակէր զի միածին որդին Աստուծոյ, եկեալ ՚ի ծոցոյ հօր, և յարգանդէ մօր, իբրու Ջահագայթ ծագեալ լուսաւորեսցէ զաշխարհ. յաղագս որոյ ասէր՝ վասն Սիոնի ոչ լռեցից. և վասն Երուսաղեմի ոչ ներեցից՝ մինչև ծագեսցի իբրև զլոյս արդարութիւն նորա. և փրկութիւն նորա իբրև զլապտեր վառեսցի Ես. 62. I.

Չորրորդ՝ Ամովսածին պաղատէր, զի հոգին սբ եկեալ ծննդական արասցէ զարգանդ ամենամաքուր սբ կուսին, զի կուսական երկիրն պտղաբեր եղանիցի. որոյ աղագաւ ասէր՝ ուրախ լիցին երկինք ՚ի վերուստ, և ամպք ցօղեսցեն զարդարութիւն, բղխեսցէ երկիր զողորմութիւն, և զարդարութիւն առ հասարակ բղխեսցէ Ես. 45. 8.

Հինգերորդ՝ Ամբակում իբր յուսահատեալ բողոքէր. զի մի՞ լինիցի կորուստ ազգի մարդկան. վասն այն ասէր, մինչև յե՞րբ տէր աղաղակիցեմ և ոչ լուիցես, գոչիցեմ առ քեզ զրկեալ՝ և ոչ փրկիցես։ Ուստի ընկալաւ զպատասխանին թէ՝ որ գալոցն է եկեսցէ, և մի՛ անագանեսցի. և եթէ անագանեսցի համբեր նմա Ամբ. I. 2. և 2. 3.

Վեցերորդ՝ կայծականմաքուրն Եսայի՝ գիտելով թէ՝ նշանք Թագաւորաց լինին առիւծք, արծուիք, վիշապք, և այլ գազանաբարոյ կենդանիք ՚ի զարհուրանս հնազանդելոյ և օտարաց. իսկ և մերոյ Թագաւորի նշան տայ գառն, զի այնու յորդորեսցէ զմեզ ՚ի սէր նորա. և քաղցրութիւն, հեզութիւն, և խոնարհութեամբ զաշխարհս ենթարկեսցէ նմա. վասնորոյ պաղատի առ հայր թէ՝ առաքեա տէր զգառն՝ զտիրողն երկրի Ես. 15, 9.

Եօթներորդ՝ Անքայածինն կամելով զհաճոյսն Աստուծոյ ծանուցանել մարդկան. և զօգնութիւն խնդրել առնել՝, գոչէ առ հայր թէ՝ առաքեա զդա ՚ի բարձրութեանց երկնից, և յաթոռոյ փառաց քոց. արձակեա զդա, զի եկեալ դադարեսցէ առ իս, և գիտասցիս զինչ հաճոյ իցէ առաջի քո Իմաստ. 9. 9.

Վերջապէս հանգոյն սդ. տես և զծերունին Սիմէոն. թէ՝ որքան ջերմեռանդ հառաչանօք, և աղիողորմ արտասուօք պաղատէր

մինչև

digitised by A.R.A.R.@

մինչև ընկալաւ զհրաման 'ի հոգւոյն սրբոյ. թէ՝ մի՛ տեսցես զմահ՝ մինչև տեսցես զօծեալն Ղկս. 2. 26. ահա սոքա ամենեքեան 'ի խորոց կարդային, և հեծութք սրտի հառաչէին. որպէս և հոգին սբ ուսոյց նոցա. և իբրու վարագուրաւ 'ի ներ եօթնեակ թուոց զանազան ձևով ծածկեաց զխորհուրդ մարմնաւորի տնօրէնութեան Էակցին իւրոյ՝ միածնին հօր. զորս համառօտելով երգէ Շնորհալին մեր սբն Ներսէս 'ի յեբրայեցւոց թղթոյն Պօղոսի առեալ. թէ՝ բազում մասամբք, և բազում օրինակօք խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր մարգարէիւք։ Ուստի ասէ, որ զխորհուրդ քում գալստեանդ՝ յառաջագոյն գուշակեցեր մարգարէիւքն իսրայէլի զորս ընտրեցեր յետ Մովսէսի, որք խօսեցան հոգւով սբով բազմապատիկ օրինակօք. զորս և մեք յայսմ վայրի համառօտելով զոմանս նշանագրեսցուք.

Նախ՝ մորենին անկէզ, որ նշանակէր զսրբուհի կոյսն Մարիամ. և հուրն 'ի մորենւոջ զԱստուած բանն. որ եղև ոմանց հուր ծախիչ, որպէս Սոդոմայեցւոց, երկերիւր և յիսուն արանցն Կորխայ. և երկուց յիսնիցն Ոքոզիայ. բայց կուսին սրբոյ, և մեզ հաւատացելոցս եղև հուր լուսաւորիչ. և զմեզ 'ի սէր իւր ջերմացուցիչ Ել. 3. 2

Երկրորդ՝ գաւազանն Ահարոնի. որ 'ի միում գիշերի կանաչացաւ և ծաղկեալ պտղաբերեցաւ, գաւազանն նշանակ կուսին սրբոյ և ծաղիկն Յիսուսի Քրիստոսի Թուոց. 17. 8։

Երրորդ՝ գեղմն Գեդէոնի լցեալ ցօղով. գեղմն օրինակ սբ կուսին. և ցօղն բանին Աստուծոյ։ ըստ այնմ իջցէ որպէս ցօղ 'ի վր գեղման Դտ. 6. 37. Սղ. 71. 6։

Չորրորդ՝ դարձումն արեգական 'ի յետս առ Եզեկիայիւ, որ Եզեկիայն նշանակէր զ[illegible] բնութիւն մարդկային, և յետս դառնալն արեգական զմարմնանալ բանին Աստուծոյ։ և տասն աստիճանաց, իննն՝ դասս հրեշտակաց, և մինն՝ զսեռս մարդկան։ զի 'ի տասն երրորդ աստիճան էջ բանն Աստուած. և տասն աստիճանօք դարձաւ յետս. մինչ համբարձաւ և նստաւ ընդաջմէ հօր (3 Թգւ. 20. 10։)

Հինգերորդ՝ յարևելեան դուռն տաճարին փակեալ. դուռն նշանակէր զսբ կոյսն Մարիամ, փակեալ կուսութբ. առ որ եմուտ բանն Աստուած և ել. և զկուսութիւն մօրն ամբողջ պահեաց. իբրև փակեալ

digitised by A.R.A.R.@

փակեալ (Եզկ. 44. 2.)

Վեցերորդ՝ վէմն առանց ձեռին հատեալ մանրեաց զպատկերն Նաբուգոդոնոսորայ. վէմն էր բանն Աստուած հատեալ առանց ձեռին ՚ի հօրէ անմայր. և ՚ի կուսէն անհայր. խորտակեաց զբոլոր կռապաշտութիւն. և զնոյն պաշտօն եբարձ յաշխարհէ (Դան. 2. 44.)

Եօթներորդ՝ Դանիէլ արկեալ ՚ի գուբ առիւծուց որոյ Ամբակում եբեր կերակուր. Դանիէլ՝ օրինակ ադամեան բնութեան. գուբն՝ դժոխարհս, եօթն առիւծքն՝ զեօթն մահացու մեղքն. բանն կնքեալ՝ զսբ Աստուածածինն, Ամբակում՝ զՔրիստոս. պատրաստեալ ճաշն զտէրունական մարմին և արիւնն (Դան. 6. 16.)

Ահա այսոքիկ բովանդակ ստուերքէին նորոյս ճշմարտութեան. զի իմաստութիւնն հօր այսպէս ձևակերպել կամեցաւ. զի մի՛ ծանուցի յաշխարհի (I Կոր. 2. 7.) զի զոր կանուխ խոստացաւ ՚ի ձեռն տեսանողաց թէ՝ յանկարծակի եկեսցէ ՚ի տաճար իւր տէր զոր դուքն խնդրէք (Մաղ. 3. 1.) Այնպէս արար որպէս և խոստացաւ. և նոյն խոստմանց կատարմանն փափագէր երջանիկ արքայն. որ ՚ի դիմաց հարսին՝ քաղցր եղանակաւ խօսի ընդ հօր փեսային. զի մարմնաւորիւ տնօրէնութեամբ համբուրեսցէ փեսայն՝ զհարսն իւր զեկեղեցի։

Համբուրեսցէ զիս. ա̄ վարդապետաց՝ ձայնս այս՝ է ձայն մարդկային բնութեան, և յուցանէ զներկայութիւն Քրիստոսի մարմնով. որոյ վասն հառաչէին սբ հարքն հնոյ կտակարանին. սկսեալ յԱդամայ յԱբելէ, և յայլոց նահապետաց և մարգարէից. զորս արքայն Սողոմոն համանգամայն զամենեսեան միապէս հարսն կոչէ. և զաղերս բոլորին համառօտելով միակերպ հառաչանէ յունկն Աստուծոյ հօր. զի առաքեսցէ զորդի իւր միածին առ ՚ի մարմնանալ. և միաւորեսցէ զԱստուածային անստեղծ բնութիւն ընդ մարդկային ստեղծական բնութեան. զորս կամէր հարսն սբ եկեղեցի. և առայս հաճէր. և զայս համբոյր խնդրէր. վասնորոյ ասէր համբուրեսցէ՚՚։

Բայց որպէս ոսկւոյ և արծաթոյ անմիաբանութեան պատճառն հուրն, օդն, և ջուրն է. այսպէս և մեր՝ տարորոշման պատճառ եղև մեղքն մարդկային բնութեան. ըստորում ասաց առ բնական զեկեղեցին, մի՛ մնասցէ ոգի իմ ՚ի կոյս, վասն լինելոյ դոցա մարմին.

Ծնն

( Ծնդ. 6. 3. ) և առ գրաւորական եկեղեցին, ահա կորուստ քո՛ ՚ի քէնէ Իսրայէլ ( Ովս. 13. 9. ) և առ յամենեսեան ասէ մարգարէն՝ մեղք ձեր որոշեն ՚ի մէջ ձեր, և ՚ի մէջ Աստուծոյ. և վասն անօրէնութեանց ձերոց դարձոյց զերեսս ՚ի ձէնջ՝ զի մի՛ ողորմեսցի ձեզ. ( Եսա. 59. 2. ) Այս է պատճառ բաժանման մերոյ. որոյ վասն հեռացաւ փեսայն, և եթող զհարսն այրի. ասելով. տես թէ՝ որպիսի չար և դառն է թողուլ քեզ զտէր Աստուած քո ( Երմ. 2. 19. )

Բայց զկնի զղջացեալ հարսին, տարամերժէ յինքենէ՝ զհողն ապահութեան, զօձն ամպարտաւանութեան, զհուրն բարկութեան, և զջուրն ցանկական գիջութեան. ապա զաղերս լնծայէ հօր փեսային. զի խոնարհեցուցեալ զունկն իւր՝ լուիցէ ձայնի հարսին, և դարձցի առ նա ( Սղ. 30. 3. ) և առաքիցէ զորդի իւր միածին. զի եկեալ միաւորեսցի ընդ հարսին եկեղեցւոյ. որ և նա լուաւ երկնից ՚ի սրբութենէ իւրմէ ( Սղ. 19. 7. ) վասնայնորիկ և հարսն դարձուցեալ զերեսս իւր առ փեսայն՝ կերպովին պաղատի ասելով. տէր խոնարհեցո՛ զերկինս և էջ ( Սղ. 143. 5. ) զի համբոյրն լինի մերձեցմամբ մեծանց, և հպմամբ շրթանց առ իրեարս. որով խառնի շունչ ընդ շնչոյ. նոյնպէս և բանն Աստուած զթացեալ էջ՝ ՚ի բարձանց ՚ի յարգանդ ամենամաքուր սուրբ կուսին, և այնու եղանակաւ համբուրեաց զհարսն. և արար միաւորութիւն Աստուածային բնութեան իւրոյ. ընդ մարդկային բնութեան մերոյ.

Եւ այս միաւորութեան անուն՝ վարդապետք եկեղեցւոյ խառնումն ասեն. և որովայն սուրբ կուսին խառնարան անուանեն. որպէս սուրբն Գրիգոր Նարեկացին ասէ՝ անապական խառնութեամբ կերպացեալ զմեր ՚ի մարմնի. ըստ օրինակի հոգւոյ ընդ մարմնոյ. և ոսկւոյ ընդ հրոյ. և կամ յայտնապէս ասել՝ լուսոյ ընդ օդոյ. ոչ փոփոխեալ և ոչ անջատեալ. և սուրբն Բարսեղ կեսարացին ՚ի յաղօթս պայծառակերպութեան Քրիստոսի ասէ՝ խոնարհեցուցեալ զերկինս իջեր ՚ի յարգանդ ամենամաքուր սուրբ կուսին Մարիամու. առաքմամբ հօր, և հաճութեամբ սուրբ հոգւոյն. և զանխառնելի աստուածութիւնդ նոր խառնմամբ՝ խառնեցեր ՚ի մեր բնութիւն. և այլուր ասէ՝ նոյն ինքն անսերմնաբար ՚ի սուրբ կուսէն. և զանխառնելին խառնէ յորովայնին անճառաբար. և աստուածաբանն Գրիգոր ՚ի Քրիստոս ծնեալ ճառին ասէ՝ ո՛վ նոր

խառնը

digitised by A.R.A.R.@

խառնմանն՝ և սքանչելի խառնուածոյս։ Եւ զի՞նչ Գրիգոր Նիւսացին ասէ՝ նոր լինի եղանակ այս խառնմանս և միաւորութեան, և խառնի և միայ յամենայնի ամենայնիւ անխառն և անշփոթ. և անապական, և անփոխադրելի. և Ագաթանգեղոս հաւատարիմ ատենադպիրն արքային Տրդատայ, գրէ վասն սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին, թէ՝ ասէր զի զմեր հողեղէն բնութիւս զգեցաւ. և խառնեալ անխառն՝ յԱստուածութիւն, և զի տայէ մեզ զիւր անմահութիւն. և զանվշտութիւն, և զանչարչարութիւն. և զապականացու մարմինս մեր՝ խառնեալ յանապականութիւն Աստուածութեան, զի զբնութիւս մեր՝ անապական գործեսցէ։ Եւ զի՞նչ Ներսէս շնորհալին մեր ասէ՝ խառնի ընդ մեզ անշփոթաբար. և միանայ անձառաբար։ Եւ ՚ի յերգս շարականին ասէ առ սրբուհի կոյսն Մարիամ. նոր խառնարանդ հրաշալի, նոր խառնման բանին և մարմնոյ (Թէև աշակերտքն Նեստորի ՚ոչ հաճին այսց բանից, և վկայութեց սրբոց հարց. բայց ուղղափառ եկեղեցիս հաստատեալ՝ ընկալնու և ընդունի. և այնպէս դաւանի. զի Պղատոն և Արիստոտէլ որքան և ջանան շինել չկարեն. ուրեմն մի՛ աշխատ լիցին։) այսէր խնդրելի համբոյր հարսին. որում փափագէին սուրբ հարքն բողոքելին նահապետքն լային մարգարէքն. ողբային նահատակքն։ Մինչ զի գթացեալ փեսային կամօք հօր և հաճութեամբ սուրբ հոգւոյն՝ խոնարհեցուցեալ զերկինս, և իջեալ ՚ի ստորին վայրս, համբուրեաց զհարսն իւր զեկեղեցի։ Զի որքան և տղայն առաւել լայ վասն մօրն, այնքան առաւել փութայ մայրն կարկառել նմա զս-տինս՝ և համբուրել զնա։ Մանաւանդ հաւատարիմ է որ խոստացաւ նախապէս, թէ որպէս մայր որ զմանուկ իւր գգուիցէ այնպէս գգուեցից զձեզ (Ես. 66. 12։) վասնորոյ էջ և համբուրեաց։

Այս ՚ի գլուխ կատարման համբուրի փեսային, իսկոյն մերձ եկեալ հարսին փոխաբերաբար համբուրեաց զփեսայն, ձայնանչելով զնա տէր և Աստուած ամենայն ստեղծուածոց և յարուցեալ ընդ առաջ ելին նմա դաս դաս։ Նախ՝ յերկնային զօրաց՝ հրեշտակաց բազմութիւնք իջեալ ՚ի ստորին վայրս՝ օրհնելով զԱստուած երգեցին փառք ՚ի բարձունս Աստուծոյ։ Երկրորդ ՚ի ռամիկ ժողովրդոց հովիւքն որք եղեն առաջնորդք հրեից, և ասէին զմիմեանս եկայք երթիցուք մինչև ցԲեթղեհէմ և տեսցուք թէ՝ զինչ է բանս այս

զոր.

digitised by A.R.A.R.@

զոր տէր եցոյց մեզ։ Երրորդ՝ յիշխանաց և 'ի թագաւորաց մոգքն, փոխանակ հեթանոսաց եկին յարևելից՝ թագին և պաշտպանու իշխանութե անկեալ երկիրպագին նմա, առ 'ի լրութի գրոյն թէ՝ եկեսցեն հրեշտակք յեգիպտոսէ. հնդիկք յառաջացուցին ձեռն առ Լոյսն։ և երկիրպագցեն նմա ամենայն թագաւորք երկրի, և ամենայն ազգք ծառայեսցեն նմա ( Սղ. 67. 32. և 71. II. ) Չորրորդ՝ 'ի յարհեստաւորաց Յովսէփ հիւսն, որ մեծաւ հնազանդութե ծառայեաց մօրն, և մանկան նորին։ Հինգերրորդ՝ 'ի ծերոց Սիմէօն՝ որ մատոյց նմա զվերջին հասակ ծերութե իւրոյ։ Վեցերրորդ՝ 'ի կողմանէ այրեաց՝ Աննա դուստրն Փանուելի յարուցեալ գոհանայր զտեառնէ, և խօսէր զնմանէ ընդ ամենեսին որք ակն ունէին փրկութեանն Երուսաղէմի. Եօթներրորդ՝ 'ի կուսանաց՝ ամենամաքուր սրբուհի կոյսն Մարիամ, ընծայեաց նմա զպայծառ ծաղիկ կուսութե իւրոյ. և 'ի ստեանց իւրոց ջամբեաց զմաքուր կաթն կուսական։ Ութերրորդ՝ 'ի մանկանց Յօհաննէս 'ի յարգանդէ մօր իւրոյ երկրպագ նմա։ Իններրորդ՝ մանկունքն Բեթղահեմի՝ զարեանս իւրեանց իբրև զանուշահոտ պատարագ մատուցին նմա։ Տասներրորդ՝ մանկունք եբրայեցւոց 'ի տաճարին աղաղակէին Ովսաննա օրհնութիւն որդւոյ Դաւթի։ Մետասաներրորդ՝ 'ի մեղաւորաց պոռնիկն Մարիամ լուաց զոտս արտասուօք, և ջնջեաց հերով իւրով, և եօծ անուշահոտ իւղով։ Երկոտասաներրորդ՝ 'ի մաքսաւորաց զԱքէոս՝ որ առ ընկալաւ զՅս փեսայն ուրախութե 'ի տուն իւր։ և այսոքիւք ծանուցաւ թէ՝ զի կեցոյց տէր զօծեալ իւր ( Սղ. 19. 7. ) և զայս ամենայն եղև զի լցցի զասացեալն Սաղմոս երգոյն թէ՝ զերեսս նորա պաշտեսցեն մեծամեծք 'ի ժողովրդոց ( Սղ. 44. 13. ) վասնայնորիկ

խանդաղատելով ասէ հարսն։

Համբուրեսցէ զիս. Որպէս մայր զմանուկ իւր։ և որպէս արքայ Դաւիթ զԱբեսաղոմ զորդի իւր։ կամ որպէս հայր երէց և կրտսեր որդւոյն՝ զանառակ որդի իւր։ և կամ որպէս Արտաշէս զԷսթեր թագուհի իւր ( 2 Թագ. 14. 33. Ղկ. 15. 20. Եսթ. 15. 14. ) բայց աստանօր հարսն իբրու խանդաղի ցուցանէ զբանս իւր ( զիս ասելով ) որպէս թէ՝ ոչ կամիմ զի զայլս համբուրեսցէ. այլ զինքն. և այսու կամի նախանձաւոր՝ լինել շնորհացն որք լա՛ւքնեն ( I Կր. 12. 31. ) այլ ոչ այնպէս երևի. զի որով

հետև

digitised by A.R.A.R.@

հետև հոգին սուրբ ՚ի թիկունս հասանէ տկարութեան մերում. զի որ կամքն յաղօթս՝ որպէս արժանն իցէ ոչ գիտեմք, այլ ինքն հոգին սուրբ, բարեխօս լինի ՚ի հեծութիւս անմռունչս (Հռմ. 8. 26.) և ՚ի յայսմիկ անմռունչ հեծութեան աղօթից հարսին՝ այսպէս խօսիլ տայ: զի ըստ բազմաց վարդապետաց ձայնս այս՝ է ձայն Սինակօգային, և զբանաւորական եկեղեցւոյն. ըստ Պօղոսի զի ո՛չ երբեք զհրեշտակաց բուռն հարկանէ, այլ զզաւակէն Աբրահամու բուռն հարկանէ (Եբր. 5. 16.) Վասնայն ասէ Համբուրեսցէ զիս: կամի ասել լինելիս եղիցի, յինէն մարմին առցէ: զի թէպէտ ՚ի փրկութիւն տիեզերաց առաքեցաւ որդին միածին բանն Աստուած. բայց նախ առ որդիս Աբրահամու: որպէս և ինքն ասէ՝ թէ ո՛չ ուրեք առաքեցայ, եթէ ո՛չ՝ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի (Մատ. 15. 24.) Այսպէս և մինչ հեթանոս փիւնիկ ասորի կինն աղաչէր զի հանցէ զդեւն ՚ի դստերէ նորին, ասաց ցնա Յիսուս. թո՛յլ տուր զի նախ յագեսցին մանկունք. զի ո՛չ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց. (Մրկ. 7. 25.) Նոյնպէս և աշակերտացն պատուիրեաց թէ՝ ՚ի Ճանապարհս հեթանոսաց մի՛ երթայցէք. և ՚ի քաղաքս Սամարացւոց մի՛ մտանիցէք. այլ երթա՛յք առաւել առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի, (Մատ. 10. 6.) առ որս և Պետրոս. ասաց Ճշմարտիւ գիտասցէ ամենայն տունդ Իսրայէլի. զի ձեզէն աւետիքս՝ և որդւոց ձերոց; և ամենայն հեռաւորաց զորս կոչեսցէ տէր Աստուած ձեր, ձեզ նախ յարոյց Աստուած զորդի իւր, և առաքեաց զնա օրհնել զձեզ ՚ի դառնալ ձեզ իւրաքանչիւր ՚ի չարեացն ձերոց (Գործ. 2. 36: 3. 26:) և որք ոչ կամեցան և ընդդէմ դարձան, յայնժամ ասացին թէ՝ առ ձեզ նախ պարտէր խօսիլ զբանն Աստուծոյ. և քանզի դուք մերժէք զնա. և ո՛չ արժանիս համարիք զձեզ կենացն յաւիտենականաց. ահաւասիկ դառնամք ՚ի հեթանոսս (Գործ. 53. 46.) զայսոսիկ գիտելով հարսին, վասնայն պաղատի ասելով. Համբուրեսցէ զիս. և ո՛չ զայլս. զի զիս խնդրել եկն, և ոչ զհրեշտակս զի նոքա հոգիքեն հարկաւորք, որք առաքին ՚ի սպասաւորութիւն (Եբր. 1. 14.) և ո՛չ զարուսեակն՝ որ ընդ առաւօտն ծագէր. զի նա անկաւ յերկիր և խորտակեցաւ (Ես. 14. 12:) և ո՛չ զհեթանոսս որք կան ՚ի խոր խաւարի կռապաշտութեան (1 Թես. 4. 5.) և ո՛չ զայլ եկեղեցիս, որք

digitised by A.R.A.R.@

Մեկնութիւն երգ երգոց անուանեալ ճանիցն Սողոմոնի։ Գլուխ. I. Համար. I։

որք ո՛չ գիտեն զլոյս, և ո՛չ ճանաչեն զարեւն երկնից. այլ՝ որ լոյս ազգ մեծ, և որոյ իցէ Աստուած մօտ Բ Օր. 4. 7։ որպէս իս-րայէլացիք, որոց որդեգրութիւնն, և փառքն և կտակարանն, և օրէնսդրութիւն, և պաշտօնն և աւետիքն. որոց հարքն. յորոց և Քրիստոս ըստ մարմնոյն որ է ՚ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս. ( Հռմ. 9. 4։ ) զորս ծանեաւ Աստուած, և կոչեաց ժողովուրդ ս̄բ Աստուծոյ ( Ովս. II. 12. ) մանաւանդ-այնք՝ որք ՚ի մեղաց սրբեալք են, և զղջմամբ մաքրեալք, և հաւատով լուսաւորեալք ըստ Պօղոսի անբիծք, անարատք, որդիք Աստուծոյ, անմեղք, որք երևին իբրև լուսաւորք յաշխարհի ( Փլպ. 2. 15. ) զի լոյս է Աստուած և ՚ի լոյս բնակի։ և ըստ Նարեկացւոյն լուսաւորութեն համբուրէ։ որպէս և սրբուհի կոյսն Մարիամ լուսաւորեալ Թարգմանի. Նորին աղագաւ նախապէս զնա համբուրեաց ՚ի դիմաց հարսնացեալ եկեղեցւոյն։

Զի փեսայն երկնաւոր՝ լուաւ ձայնի հարսին, և եկեալ ՚ի նա բնակեցաւ. և զնա առաւ իւրեան բնակարան և հանգիստ. զորմէ յառաջ հարցանէր թէ ո՞վ է իմ հանգիստ. եւ յո՞ հանգեայց ( Սղ. 88. 48. Ես. 66. 2։ ) աղուէսուց որջք գոն, և թռչնոց երկնից դադարք, և որդւոյ մարդոյ ո՛չ գոյ ուր դիցէ զգլուխ իւր. ( Մտթ. 8. 20։ ) Ս̄ն Գրիգոր նիւսացին ասէ՝ նախկին իմաստութիւն՝ է գովելի կեանքն. և առաջի Աստուծոյ մաքուր միտքն. որով մաքուրն մաքրոյ մերձաւորի. և ս̄ն ս̄յ ընկերակցի։ այսպէս ասէ՝ և Մարգարէն՝ որ ՚ի բարձունս բնակեալ է յաւիտեան. ս̄ն ՚ի մէջ սրբոց. որոյ անուն բարձրեալ է. և ՚ի ս̄ս հանգուցեալ ( Ես. 57. 15. ) զի ս̄ք կոչին հաւատացեալք. վասնզի սրբեալք են հաւատով, և բարեգործութբ̄ և ամբծութբ̄ հոգւոյ ( Հռմ. I. 7։ ) այլև ՚ի սկզբանէ մինչև ցկատարած սերեալքն ՚ի յԱստո-ւածաստեղծ մարդոյն, որք զլապտերս հաւատոյն իւրեանց և գործոյն, ոչ շիջուցին, այլ պահեցին ՚ի վառ, այնք ամենեքեան, թէ և բաժանեալ կան ՚ի զանազան տեղիս, և ՚ի քառանկիւն տիե-զերս աշխարհի, սակայն մի եկեղեցի անուանի վս̄ յուսոյ. ըստ այնմ մի մարմին մի հոգի. որպէս և կոչեցայք ՚ի մի յոյս կոչման ձերոյ ( Եփս. 4. 4. ) որք սպասեն ՚ի մտանել ընդ փեսային ՚ի յառա-գաստ, ուր խոստացաւ թէ՝ ՚ի սեղան հօր իմոյ բազմեցուցից զձեզ.

Համեմատեցէք ընդ ՚ի համեմատից եհրաւոր իւրոյ։ տես զխոհեմութ հարսին.

զի

digitised by A.R.A.R.@

զի որ յառաջ զինքն յայտնեցոյց համբուրման. և զինի յայտնացու-
ցանէ զբերան փեսային։ որպէս Մարգարէն ասէր՝ ինքնին եկես-
ցէ տէր և փրկեսցէ զմեզ ( Եսա. 35. 4։ ) վասնայսորիկ և հարսն
խնդրէ համբոյր՝ 'ի համբուրից բերանոյ իւրոյ։ և թէ բերանով
զինչ՞ տայ իմանալ՝ յայտէ, զի եթէ համբուրիւ զմիաւորութիւն
իմանամք, զորմէ վերագոյն գրեալ. ուրեմն և բերանով՝ զբնու-
թիւնն իմանալ. զի և նոյն ինքն իսկ ծանուցանէ զայս մեզ թէ՝ ես
'ի բերանոյ բարձրելոյն յառաջ եկի, անդրանիկ քան զամենայն
արարածս ( Սիր. 24. 5։ ) այսինքն՝ 'ի բնութենէ Հօր. որպէս
ասի և 'ի Հանգանակս Առաքելոց թէ՝ նոյն ինքն 'ի բնութենէ Հօր։
վասնորոյ և հարսն աստանօր կամի ասել թէ՝ զիս ընդունեսցէ. և
վերընկալցէ զբնութիւն իմ, և միաւորեսցի ընդ իս Աստուածային
բնութեամբ իւրով։ Երկրորդ՝ բերանն է գործիք բանին. որով խօսի,
հրամայէ, քարոզէ, խրատէ, զարարս և զգործս յայտնէ. ըստորում
ասաց, արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան.
և թէ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, և եղև մարդն ոգի
կենդանի։ զորս և հրեշտակական վարդապետն մեր սրբն Գրիգոր
Նարեկացին 'ի յաղօթական բանս իւր, Ճառաբանելով զարմանալիս
արտադրէ. ասելով զիս ( Ան. ) 'ի պատկեր քո պանծալի, 'ի ձեռն
վեհիդ ապաւորութեան, զոկոյս օժանդակելով՝ զարդարեցեր
բանիւ, փայլեցուցեր փչմամբ, մտօք ճոխացուցեր, իմաստիւք
ածեցուցեր, հանճարով հաստատեցեր, 'ի շնչականացն որոշեցեր,
հոգւով իմանալեաւ խառնեցեր ( Նար. 5. Գլուխ. ) վասնորոյ խոր-
հրդական կերպիւ նշանակէ հարսն ( Եկեղեցւոյ իւրոյ ) ասելով.
յորմէ պէսպէս հրաշս ներգործեալ տեսանէ. զի և 'ի վերոյ
գրեալ սրբ Վարդապետն մեր, Թէպէս այսու մտօք դրուատէ
զբերան փեսային ասելով. զօրհնեալ քո շրթանցդ՝ զաշխարհա-
ստեղծ բերանոյդ, զԱստուածեղէն անձրևայդ. զկեցուցանօղն
կաթուածն՝ մտօք լուծեալս զբանից բացարան ( Նար. 35։ ) կամի
ասել թէ՝ նոյն բերանով, որով երկինք և երկիր ստեղծեր. զորմէ
ասացեալ 'Դաւիթ զի նա ասաց և եղեն, ինքն հրամայեաց և հաստա-
տեցան ( Սղ. 32. 9։ ) և այնու օրհնեալ բերանով խօսեցար ընդ
նախահարցն, և ընդ Մարգարէիցն, որոյ և զինի մարմնացեալ
ծանուցեր թէ՝ եսեմ նոյն՝ որ խօսէի՝ և արդ եկի՝ հասի ( Ես. 52.
6. ) արդ նոյն Աստուածային բերանոյդ թոյլեսցէ զկայրն, զխուճն

և

digitised by A.R.A.R.@

Մեկնութիւն երգ երգոյ արտաքսեալ ընդ Սողոմոնի. Գլուխ I. Համար I.

և զՀամրին բժշկեցեր ( Յոհ. 9. 6. Մարկ. 7. 33. ) առաջս յան-
կայր հարսն, վասն սորին տագնապեր. սակս որոյ պաղատեր. զի
պոռնիկն լուեցեր թողեալ լինին քեզ մեղք քո ( Ղուկ. 7. 48. )
և զԶաքէոս մաքսաւորն թէ՝ այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ
( Ղուկ. 19. 5. ) իսկ և հարսն եկեղեցի համբուրեսցի Ճա-
շակմամբ մարմնոյ և արեան փեսային Խրոյ. Երկրորդ՝ ասէ
համբ՝՝. այսինքն համեղ բանիւ, գեղեցիկ վարդապետութեամբ,
քաղցրաբարբառութեամբ, որով զմայլեալ հարսին զերիս աւուրս թարց խիք
Ճաշակելոյ լինել առ նա և ունկն եդեալ լսել զնմանէ. որոյ սիրով
յաղթեալ փեսային ասեր՝ զկարդ երեք աւուրք են զի կան առ իս
և արձակել պղտաւ նօթիս չկամիմ, գուցէ նքթիցին զճանապար-
հայն ( Մատթ. 15. 32. ) այլև ՚ի խօսելն ընդ ժողովրդեան, ձայն
բարձեալ կին մի աղաղակեաց, երանի որովայնին որ կրեաց
զքեզ. և ստեանցն որք դիեցուցին զքեզ ( Ղուկ. 11. 27. ) վասն-
այնորիկ ասէր սրբուհի կոյսն Մարիամ թէ յայսմ հետէ երանե-
սցեն ինձ ամենայն ազգք։

Ա.ան զէ. բարի են ստինք քո քան զգինի։ Իմանք ստեամբք իմանամ
զվարդապետութիւն և զքաղցրաբանութիւն փեսային. և զգինի զկրթութիւն
փիլիսոփայից. այլ և կաթն՝ տղայոյն ՚ի Քրիստոս, և գինի,
կատարելոյն զօրութիւն և ուրախութիւն. բարւոքէ մեկնութիւնն՝
սակայն ոչ զմիայն ցուցանէ զսուրբ ծարաւոյն համբակաց. բայց մեք
նկատեսցուք ՚ի միջարկեալ պատճառական շաղկապն ( Ա.ան զէ )
որ զառաջին և զվերջին բանն ՚ի միասին շաղկապէ, և զմիտս
բանին բարւոքես յայտնէ. զի հարսն նախ աղերս ընծայեաց Հօր
Աստուծոյ թէ՝ համբուրեսցէ զիս որդի քո միածին. և դարձեալ
առ նա վերաբերէ թէ՝ բարի են ստինք քո՝ քան զգինի. զի որպէս
ստինքն յառաջանան ՚ի գոյութէ մարմնոյ ՚ի բնութէ իւրմէ. նոյնպէս
և գինին ՚ի յորթոյ. զորս ուսանիմք ՚ի Դաւթեայ մինչ բողոքէ
առ նոյն Տէր Աստուած հայր թէ՝ յիշեա տէր զգթութիւնս քո՝
և զողորմութիւնս քո՝ որք են յաւիտենից ( Սղ. 24. 6. ) ուստի երևի
թէ՝ ստինք Հօր Աստուծոյ են ողորմութիւն և գթութիւն նորին, որք
են յոյժ բարիք. զի և Երեմիայ քարոզէ թէ՝ ողորմութիւնք նորա
անսպառ են, և ոչ նուաղին գթութիւնք նորա ( Ողբ. 3. 22. )
և Մովսէս ՚ի ձեռըպս վիմին կարդայ Տէր Տէր Աստուած գթած ողորմած
երկայնամիտ և բազումողորմ և ճշմարիտ ( Ել. 34. 6. ) իսկ և

Յովհան

digitised by A.R.A.R.@

Յոհան ասէր, զի գիտէի թէ՝ ողորմած ես դու և գթած, երկայնամիտ և բազումողորմ ( Յով. 4. 2. ) վասնզի ողորմիս ամենեցուն և սիրես զամենայն, և խնայես յամենեսեան. քանզի քո են տէ՛ր ողեսէր ( Իմաստ. II. 24. ) զի նկատելով Հարսին ստեանցն գեղեցկութիւն տեղւոյն դրութեան, որ կայ 'ի մէջ սրտին, ուստի բղխի կաթն, որով զարգանան մանկունք. և ստեամբք Հօր Աստուծոյ այսինքն ողորմութեամբ և գթութեամբ խնամին երկինք և երկիր. առ որս ապաւինեալ Հարսին՝ ստեանց համեմատ. ուստի հանգոյն մանկանց այնու խնամարկել և սնանել յուսայ. զի կաթն որ 'ի ստեանց բղխի սնուցման և կենդանութեան է պատճառ, և գինին միայն ուժոյ և զօրութեան է առիթ, և ուրախութեան դրդիչ. վասնորոյ ասէ. Բարիք են ստինք քո քան զգինի. այսինքն բարի են ողորմութիւնք և գթութիւնք քո քան զամ վայելչութիւնք և քաղցրութիւնք երկրայ կենաց, զոր գինեաւ ծանուցանէ. և այսէ նման այնմ որ ասէ. քաղցրեն 'ի քիմս իմ բանք քո՝ քան զմեղր բերանոյ իմոյ. և գինի՝ նորին զօրութիւն և յուժգնութիւն, զորս ասէն շնորհէ, ուրախութիւն և բերկրութիւն 'ի հանդերձելումն մեզ սեպհականէ. մանաւանդ իմանալի է գինին նորին արդարութեան վրէժխնդրութիւն, որ 'ի գործ արկանէ յաւուրն դատաստանի. զի յայնժամ զԵրուսաղէմ քննէ ճրագաւ ( Սոփ. I. 12. ) և ամենայն արբուցանէ 'ի բաժակէ ցասմանն Աստուծոյ. արկելոյ յանապակ բարկութեան բաժակին. և տանջեսցի հրով և ծծմբով առաջի Աստուծոյ և գառին ( Յայտ. 14. 10. ) վասնորոյ և ( ՔԱՆ ) շաղկապաւ՝ ողորմութեան և գթութեան առաւել հաճի Հարսն՝ քան վրէժխնդրութեան արդար դատաստանին. ըստ Ընծայողոյն որ 'ի յերգս թէ՝ արդարութեամբ մի՛ դատեսցես, այլ գթութեամբ քով քաւեսցես. զի արդարութիւն է կատարելութիւն, որ պատշաճի Աստուծոյ, մինչ կիր առնու դէպ 'ի մեղաւորս. զի առ պատժելով լուսաւորէ, և 'ի հանդերձելումն վճարէ. վասն այն հառաչէր Դաւիթ ասելով. ծանեայ տէր զի արդարութեամբ են դատաստանք քո. յիրաւի խոնարհեցուցեր զիս Սղ 118. 75. գրի 'ի տեսլեան թէ՝ գայ որդի մարդոյ 'ի մէջ ոսկեղէն ճրագարանաց. և 'ի բերանոյ նորա ելանէ սուր երկսայրի. և 'ի ձեռին իւրում ունի աստեղս եօթն. աստեղքն են վարձքն որ տայ արդարոց. և սուրն նշան վրէժխնդրութեան սակս մեղաւորաց, որ հատուցանէ յարդարութենէ իւրմէ. Զի Աստուած որ ստեղծ զաշ-

խարհս

խարհս գործ առնելով զարդարութիւն իւր, և զայս եցոյց նախ՝ի հրեշտակս զօրս յերկնից առաքեալ վն ապստամբութեանն։ զկնի յԱդամ և յԵւայ՝ սակս պատուիրանազանցութեանն։ ապա՝ի կայէն՝ սակս եղբայրասպանութեանն։ ջրհեղեղաւն կորոյս զբազումս՝ վասն ապականութե մարմնոյ, և՝ի սոդոմ իջոյց հուր՝ սակս զանազան չարութեանց նոցին։ զի որպէս զարդարն ոչ թողու թարց վարձու, նոյնպէս և ոչ զչարն առանց պատժոյ։ զի ասեն մեծամեծ հեղինակք թէ՝ անպատիժ թողուլ զչարն՝ է զաւակ ամբարհաւաճութեան, մայր անզգամութե, արմատ անպարկեշտութե, և սնուցանող անառակութե. զի արդարութբ հաստատի աթոռ թագաւորութե, պատժելով զչարագործն, և սանձահարելով զամպարիշտն։ որոյ աղագաւ Սողոմոն կայոյց յաթոռոջ իւրում զոսկեղէն առիւծունս օրինակ ահարկութե թագաւորական աթոռոյն։ Իսկ մերն Սողոմոն, գերապայծառ փեսայն հոգւոյ՝ յորժամ իջանէր՝ի լեառն Սինայ, ձայնք, փայլատակմունք, և ամպ միգախառն ՚ի վերայ լերին Սինայի. և ձայն փողոյն հնչէր մեծաձայն. և լեառն Սինայ ծխէր առ հասարակ, և զարհուրէր ժողովուրդն որք էին՝ի բանակի անդ, ( Ել. 19. 16։ ) նոյնպէս և՝ի յերկրորդի գալստեանն, երբև փայլակն փայլատակեալ՝ի ներքոյ երկնից ընդ երկնիւք ծագիցէ. զի զօրութիւնք երկնից շարժին. յայնժամ տեսցեն զՈրդի Մարդոյ եկեալ ամպօք զօրութբ, և փառօք բազմօք ( Ղկ. 17, 24. և 21. 27։ ) յայնժամ զարդարսն պսակէ ողորմութբ և գթութբ ( Սղ. 102. 4։ ) և զամպարիշտսն դատապարտէ իւրով արդարութբ։ յաղագս որոյ ոմն՝ի ջերմեռանդից՝ի Ճառս ծննդեանն Քրիստոսի, խրատէ զմեզ ասելով, թէ՝ ով և իցես, մինչ գիտես որ վրդովեցուցեալ ես զԱստուած, մատիր առ այն մսուր՝ ուր բազմեալ է մանկացեալն Յիսուս, զի դիւրաւ քաղցրանայ, զի ոչ գիտէ բարկանալ. զի ոչ եբեր զխայթ արդարութե, այլ զմեղր ողորմութե. զի մեղր և կաթն է՝ի ներքոյ լեզուի նորա, այսինքն քաղցրութե, գթութե և ողորմութե. բերեալ է քաղցր իւղ՝ նա որ կոչի Քրիստոս. ուրեմն մատիր առ նա որ եկեալ է՝ի փրկել. կոչի Յիսուս. այսինքն փրկիչ. մատիր մինչ դեռ ժամանակ է քանզի հանդերձելումն՝ արդարութի նորին զօրանայ. յորժամ գայ՝ի դատել, ոչ մեղրով՝ այլ լեղեաւ կերակրէ զքեզ. ոչ իւղով քաղցրութե, այլ գինեաւ յաւիտենականի խայթման և

ապա

digitised by A.R.A.R.@

Մէկնութիւն Երգ Երգոց տնտեսակեալ իմաստնոյն Սողոմոնի. Գլուխ. I. Համար. I.

պատժոյ.

Դարձեալ առեամբ. իմանամք նախկին զերկուսին պատուիրանս. այսինքն սիրել զԱստուած, և սիրել զընկերն. ուստի ամենայն օրէնք և Մարգարէք կախեալ կան (Մատ. 22. 37.) և գինի ժամանակաւոր սէր կենցաղոյս։

Այլև սոյնք համայն պատուէր և հրաման արարչին մերոյ։ և գինի աւանդութիւնք ծերոցն, և զպէսպէս արարողութիւնս նոյին. Նաև սոյնք Աստուծոյ Հօր զհին և զնոր կտակարանքն. և գինի զվարդապետական գրեալսն. և զճարտարաբանութիւնս փիլիսոփայից. և կամ ՚ի հնումն զնահապետս և զՄարգարէս, և ՚ի նորումն զԱռաքեալս և զվարդապետս. և գինի զմոլեգնեալ Մարգարէսն, որպիսիք էին մարգարէքն բահաղու և մարգարէքն անտառին. և մարգարէքն ամօթոյ. և սուտ Առաքեալքն։ Դարձեալ սոյնք զաւետարանն սուրբ. և զառաքելոյն թուղթս. և զմարգարէիցն պատգամս. որոց մինն ՚ի լեառն Սիոնի, և միւսն ՚ի լեառն Սինայ տուեալ. որք իբրև կաթնաբուղխ սոյնք, անուշիչ հոգւոյ կեցուցիչ մաքրոյ, և զարդարուցիչ բարեպաշտութեան։ և գինի աշխարհային անտի հեշտութիւն, և մարմնական վայելչութիւն, և ժամանակական հոգս. որով զբաղեալ թմրի միտք, և տկարանայ ձանձրանալ զաներևոյթն. զորմէ ասէ Դաւիթ առ Տէր, ցուցեր ժողովրդեան քում զխստութիւն, և ետուր ըմպել մեզ զգինի յիմարութեան (Սաղ. 59. 5.) զի գինին մեռուցանէ, իսկ կաթն անուցանէ. նա զաչս մտաց նսեմացուցանէ. սա լուսաւորէ։ նա կարկուցանէ. սա բանայ. նա յիմարեցուցանէ. սա յուշաբերէ։ նա տկարացուցանէ. սա զօրացուցանէ։ նա անցաւորական զբաղէ, և սա յաւիտենականն յիշեցուցանէ. վասնայն ասէ բարի են սոյնք քո քան զգինի. ուստի կամի ասել թէ ՚ի վերէ ողորմութիւն և գթութիւն քո քան զամենայն հեշտութիւն և բարութիւն աշխարհիս. և որ դիմէ առ այն սոյնսն, անմահ մաքուր կաթամբ կենայ. բայց եթէ պատարի գինեաւ հեշտութեան անցաւորիս, զրկի ամենից բարեաց. տես և զորբուհին Յուդիթ, որ իբրու արարչին երկու ստեանցն կախեալ, այսինքն ողորմութեան և գթութեան. և Հողեփեռնէս աշխարհային հեշտութեան գինեաւ զբաղեալ. որոյ տուեալ զառհաւատչեայն միոյն զբարի ապատութիւն. և միւսոյն զկորուստ չար.

Դարձեալ առեամբ իմանամք, զաւետարանական պատուէրսն, և

զա

digitised by A.R.A.R.@

զառաքելական քարոզման, և զհնեալ զմովսիսական զօրէնսն, և զնորին մատեանսն. թէպէտ նախապէս հինն ծերացաւ. բայց նա ոչինչ կատարումն գործեաց (Եբր. 7. 1.) վասնայն ասաց, ոչ եկի լուծանել զօրէնս, այլ լնուլ. զի անդ հրամայեցաւ, մի սպանաներ, և աստ՝ ամենևին մի բարկանար. անդ՝ մի շնար, աստ մի ցանկար ևայլն (Տես. Մատ. 5. 17.) վասնորոյ ասէ հարսն, բարի են ստինք քո աւետարանական. քան զգինի օրինացն մովսիսական, զի յատկութիւն գինւով հարբելոյ է վրէժխնդիր լինել թշնամեաց, և կամ սակաւ ինչ առ յինքեանս անցուցելոյ. որպէս էր հին օրէնքն. ուր ասի ակն ընդ ական. և ատամն ընդ ատաման.

Դարձեալ իսկապէս ստինք Աստուծոյ Հօր՝ հին և նոր կտակարանքն. որք տրեցան հարսին եկեղեցւոյ. վասնայն ասէ հարսն՝ նոր առ հնոյն զոր ետ ինձ Մայր իմ պահեցի. և զինի՝ բանք հերձուածողացն. որք բնաւքն են առասպելք ստաբանութիւնք, հեշտութիւնք, և մոլութիւնք սնոտի կենցաղոյս երկրաքարշ սիրոյ.

Դարձեալ չէ օտար, և ոչ անյարիր եթէ ասիցեմք, որպէս ստինքն ծնանին 'ի յէութենէ և 'ի գոյութենէ մարմնոյ, և կրին միշտ 'ի ծոցի. նմանապէս միածին որդին, և ամենասուրբ հոգին որ են յէութէ և 'ի գոյութենէ Հօր, և առ Հայր՝ յորմէ մինն ծնանի, և միւսն բղխի. որոյ միոյն ասի ծնեալ, և միւսոյն բղխեալ կամ ելեալ. բայց սուրբ գիրն երկոցունցն ևս ասէ ելեալ. և զերկոսեանն ևս կոչէ միածին. սակս 'ի միայնոյ Հօրէ ծնելութեանն, և 'ի նմանէ ելողութեանն (Յով. 15. 26. և 16. 27.) առ 'ի փակելոյ զբերանս հերձուածողաց. զի մի զորդին՝ 'ի Հօրէ և 'ի հոգւոյն ծնեալ իմասցի. այլ միայն 'ի Հօրէ, որպէս բանն 'ի մտաց. վասնայնորիկ կոչի միածին (Յով. 1. 18.) նոյնպէս և հոգին սուրբ. զի մի 'ի Հօրէ և յորդւոյ մտածեսցի. այլ իսկապէս՝ միայն 'ի Հօրէ բղխեալ ծանիցի. վասնորոյ 'ի Սողոմոնէ կոչի միածին (Իմաստ. 7. 22.) որպէս Դիոնէսիոս երկու լուսափայլութիւնք անուանէ զնոսա, ասելով յանճառ և յանորոշելի բարւոյն ծագեցան երկու լուսափայլութիւնք (թէ և մինչ ցարդ ոչ ոք 'ի վարդապետաց զմիածին բառն առադրեալ է 'ի վերայ հոգւոյն սրբոյ. և ոչ ելող բառն 'ի վերայ որդւոյ. այլ պարզապէս միոյն ծնեալ և միւսոյն ելեալ ասեն) յորոյ բղխի կաթն գթութեան և ողոր-

մու

digitised by A.R.A.R.@

մուտ։ որպէս սամարացի կոչեցեալն գթացաւ ողորմելի անկելոյն 'ի յուղւոջ Երիքովի (Օրինակ անկեալ և վիրաւորեալ մարդկայինս բնութեան) զոր Ահարոն քահանայն. և Մովսէս ղևտացին տեսեալ զանց արարին. իսկ սամարացին տեսեալ զնա գթացաւ. պատեաց զվէրս նորա. արկեալ 'ի վերայ ձէթ և գինի. եբարձ 'ի վերայ գրաստու իւրոյ. և եած 'ի պանդոկ. և դարմանեաց զնա. և 'ի յեղանելն նորա անտի. պատուիրեաց պանդոկապետին դարմանել մինչ 'ի միւսանգամ գալուստ իւր (Ղուկ. 10. 30։) որոյ աղաղակէ պաղատի համայն թէ՝ դարձ յերկնից, և տես 'ի տաճարէ սրբոյ քումմէ. զի դու ես մեր Հայր. զի Աբրահամ ո՛չ գիտաց զմեզ. և Իսրայէլ ո՛չ ծանեաւ զմեզ. այլ դու Հայր մեր՝ փրկեա՛ զմեզ (Ես. 63. 15։) վասնորոյ 'ի փրկութիւն մեր շնորհեաց մեզ զկենարար մարմին իւր առ 'ի ճաշակել. և զսուրբ զարիւն իւր առ 'ի յըմպել։ իսկ և էակից և փառակից նորին մխիթարիչ ամենազօր սբ. Հոգին, զաղքատս լցոյց բարութեամբ, և զմեծատունս արձակեաց ունայնս։ և Իսրայէլացւոյն սիւն հրոյ ձևանայր 'ի գիշերի, որ լուսաւորէր զամենայն բանակն. և սիւն ամպոյ 'ի ցերեկի որ զովացուցանէր զնոսա 'ի տապոյ, և առաջնորդէր նոցա յանկոխ անապատին. (Ել. 13. 21։) և յաւուր պենտեկոստէին ձև հրեղէն լեզուի երևեալ՝ շնորհազարդեաց զԱռաքեալսն. և քաջալերեալ զօրացոյց զամենեսեան. պարգևելով նոցա զգեղեցկախօսութի լեզուաց. զզօրութիւն սքանչելեաց. զաներկիւղութիւն 'ի տանջանաց. և զպահպանութիւն 'ի մոլութեաց։ այսու կերպիւ ողորմեցաւ աշխարհի. և բաշխեաց զշնորհս ողորմութ. իւրոյ ամենայն արարածոյ. որովք զուարճացան տիեզերք և երկրեայն հաւատացեալք։ և յայնժամ գտանիլով 'ի ջուր աւազանին յորմէ ծնեալքն սրբեալ մաքրին. և որդեգիրս Հօր անուանին. և փառակիցն իւրոյ համայն օրինադրէ. զորմէ շնորհալին մեր սբն Ներսէս 'ի յերգս շարականին ասէ. որ 'ի վերայ ջուրցն գոլով ստեղծանէիր զարարածս, իջեալ 'ի ջուրս աւազանին ծնանիս որդիս Աստուծոյ։ Ահա գեղեցիկ սաինք Հօրն երկնաւորի. ուստի բղխի կաթն ողորմութեան և գթութեան, որովք սնանին հաւատացեալքն Քրիստոսի. և զարդարին պէսպէս առաքինութեամբք. և որք մերժեն զայնոսիկ, ըմպեն զգինի յիմարութեան.



digitised by A.R.A.R.@

Եւ հոտ իւղոց քոց քան զամենայն խունկս։ Իւղ թափեալ է անուն քո վասն այնորիկ օրիորդք սիրեցին զքեզ։

Որպէս յանցելում տան՝ գովեաց զստինս Հօր Աստուծոյ. և աստանօր զգերազանցութիւն նորին իւղոյն հոտոյ՝ կամի հրապարակել. և խնկոց համեմատեալ՝ գերազանց երեւեցուցանել։ Ուստի իւղով իմանամք զ'ի նմանէ ծնեալ բանն. և հոտով՝ զամենակատար անբաւ բարութիւն նորին։ Եւ խնկով իմանամք զամենայն սրբս. և հոտով՝ զմաքուր վարս նոցին։ Բայց նորայն անճառելի է և անիմանալի։ Իսկ սոցին իմանալի. ուր ամենայն ստեղծուածք համեմատեալ առ ստեղծօղն՝ պակաս գտանին. զի ոչ է բաղդատութիւն 'ի մէջ հունաւորին և անհունին. որպէս հեռու ամենայն բարիք գերազանց գտանին առ ստեղծօղն՝ քան 'ի ստեղծուածս. վասնորոյ՝ ասէ սուրբն Գրիգոր Նիւսացին թէ՝ հոտ իւղոյն Աստուծոյ գեղեցիկ է քան զամենայն խնկոյն անուշահոտութիւն. զի սուրբք՝ իւրաքանչիւրոք միով առաքինութեամբ տէր եղեալ. որպէս Աբէլ՝ պատարագամատոյց։ Ենովս՝ յուսացօղ։ Ենոք՝ դրախտաբնակ։ Սէթ՝ որդի մխիթարութեան. Նոյ՝ տապանաշէն։ Աբրահամ՝ Հայր հաւատոյ։ Իսահակ՝ օրինակ Քրիստոսի։ Յակոբ՝ Յեսաւախաբ։ Յովսէփ՝ ողջախոհ։ Մովսէս՝ ազատարար։ Ահարոն՝ քահանայետ։ Յեսու՝ զօրաւոր։ Քաղէբ՝ բարեաց աւետիչ։ Գեդեոն՝ գեղմնատես։ Եփթայէ՝ փրկարար։ Սամփսոն՝ անպարտելի։ Սամուէլ՝ նազօրայլ։ Դաւիթ՝ Աստուածասէր։ Սողոմոն՝ տաճարաշէն։ Եսայի՝ Աստուածաբան. Երեմիա՝ յորովայնէ սրբեալ. Եզեկիէլ՝ քաղցրաբարբառ։ Դանիէլ՝ արդարադատ։ Զօրաբաբէլ՝ գերեդարձ։ Մաղաքիա՝ հրեշտակատիպ։ Եղիա՝ վառեալ սիրով։ Եղիսէոս՝ կրկնահոգի։ Եզեկիա՝ Աստուածայոյս։ և Յոսիա՝ կռապաշտութեան տապալիչ։ Սոքօք և այլոց իմն. բայց ամենեքեան ոչ գան 'ի համասարութիւն ամենակատար հրաշից նորին՝ որ զերկինս բովանդակեաց և օրհնութեամբ նորա լի եղև երկիր (Ամբկ. 3. 3.) այսինքն իմաստութիւնն, ողորմութիւնն, գթութիւնն, արդարութիւնն, Ճշմարտութիւնն և ըստ իւրաքանչիւր ումեք ամենայն։

Եւ որդ՝ քոյդ իւղոյ հոտ անհամասարելի ունի զշնորհ առ այս խունկս՝ որ 'ի մէնջ ճանաչի։ Վասնորոյ յոգնակի բառիւ իւղ անուամբ ծանուցանէ զմիածին որդին, և զամենասուրբ Հոգին. և խունկք

digitised by A.R.A.R.@

Յերգնոսն երգ երգոց անուանեալ Երգոյն Սողոմոնի. Գլուխ. I. Համար 2.

խունկք զտէս և զարդարս բովանդակ. որովք Քրիստոս սիրեաց զմեզ, և մատնեաց զանձն իւր վասն մեր պատարագ, և զենումն Աստուծոյ 'ի հոտ անուշից (Եփ. 5. 2.) և խունկք առաքինութե ամենայն սրբոց՝ համեմատելով շնորհաց հոգւոյն սրբոյ. և առաքինութե բանին Աստուծոյ նուաղ և ոչ ինչ են. ոպ կաթիլ մի առ համատարած ծովն. և մանաւանդ զի նուաղ, և 'ի նմին և 'ի նա նկատմամբ բարի ասին և առաքինութիւնք: Իսկ հոտ Աստուածութեանն Քրիստոսի՝ տարածեցաւ ընդ համօր տիեզերս. զոր զգայեալ բազումք՝ դիմեցին առ նա և հաւատացեալք հարսնացան նմա. ոպ 'ի վերանդր գրեցաւ: և յայտ իսկ է ոպ հեթանոսք օրինակաւ վայրենի աղաւնեաց՝ զգալով զհոտ օծեցեալ աղաւնւոյն, ընտելացեալք հետևեցան նմա, և մտին 'ի տուն նորին. որպէս մոգքն՝ որք յարևելից դիմեցին, և ոպ հովիւքն սամարացիքն. պոռնիկքն. և այլ անհամար բազմութիւք մաքսաւորաց և մեղաւորաց (Ղուկ. 15. 1.) նոյնպէս և 'ի կատարիլ յաւուրցն պենտեկոստէից, հոգին սբ յանկարծակի հնչմամբ մեծաւ եկեալ յերկնից իբրև սաստիկ հողմոյ ելից զամենայն տունն. յորում նստէին. և որք լուան զբարբառս զայս՝ դիմեցին անդր, և հաւատացին և մկրտեցան յաւուր յայնմիկ արք իբրև երեք հազարք (Գործ. 2. 2.) բայց հոտ՝ որ առ սէրն, ասէ շնորհն Աստուծոյ. զորմէ խօսի Պօղոս թէ՝ ամենայնի հաղթ հարկանէ զմեզ 'ի Քրիստոս Յիսուս, և զհոտ գիտութե իւրոյ յայտնի առնէ մեօք յամենայն տեղիս. Զի հոտ անուշեմք Քրիստոսի առ Աստուած 'ի մէջ փրկելոցն և 'ի մէջ կորուսելոցն. ոմանց հոտ 'ի մահուանէ 'ի մահ. և ոմանց հոտ 'ի կենդանութենէ 'ի կեանս (2 Կոր. 2. 14.) զի որպէս առ բժիշկս գտանին այնպիսի հիւթք ծաղկանց. որոց հոտն՝ զթմրեալս զարթուցանէ. նաև գտանի ներհակ նորին, որ 'ի հոտոտալն առնէ զմարդն անզգայ. և առաւել քան զայսոսիկ ներգործէ հոտ իւղոյ բանին Աստուծոյ, և հոգւոյն սրբոյ, որք զարթուցին զաշխարհ ամենայն 'ի թմրութե մեղաց, և այնպիսի սիրով բորբոքեցին զմարդիկ՝ մինչ զի եղեն ամենեքեան իբրև զանզգայս զոր խոստովանի սրբազան առաքեալն թէ, ո՞վ կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյն Քրիստոսի, նեղութիւն թէ՞ անձկութիւն (Հռոմ. 8. 35.) Եւ զանուշահոտ իւղն՝ ուրանոր և թափի բաղնայ անուն զգար-

չա

digitised by A.R.A.R.@

զանհոտութիւն ապականութեան. սոյն գունակ և հոտ անոյշ իւղոյն Փրկչին, և եւս կենարարին մեր հոգւոյն որ հեղաւ յաշխարհ, երարձ զզազրալի գարշահոտութիւն կռոցն ձեռագործաց. բայց առաւել զօրեղ և յոյժ հոտաւէտ իւղք կարգին ՝ի զանազան ծաղկանց որք պայծառութեանն միաւորեալ հոտովն զբաղմամբ և միով ներգործութեամբ ապաքինեն զվէրս, փարատեն զտկարութիւնս, և մեղմեն զցաւս. որպէս և իւղ սրբալոյս միւռոնին որ զանազանութ շնորհս հոգւոյն ՝ի մեզ տպաւորէ. զբոյսն զօրութեանն ՝ի յաղթոյ. ՝ի մեղաց սրբէ. շնորհիւ զուարթութեանն. և զխաւարմտային փարատէ. առաւել քան զիւղն մեղսիտական օրինաց. բարբառում պատմի թէ խօսեցաւ տէր ընդ Մովսէսի, և ասէ. առ դու քեզ ծաղիկ ընտիր զմռնենեաց. և կինամոմոն զանոյշ. և զխունկ եղեգն. և զհիրիկ. և զիւղ ՝ի ձիթենւոյ. և արասցես զայն իւղ օծման սրբութեան. և օծցես ՝ի նմանէ զխորանն վկայութեան. և զամենայն կահ նորա. զի ամենայն որ մերձենայցէ ՝ի նոսա, սրբեսցի (Ել. 30. 22.) ուրեմն զինչ ասելի է զիւղոյն մերմէ. որ կազմեցաւ ՝ի հոգւոյն սրբոյ. ՝ի յարգանդ ամենամաքուր մեր կուսին, ՝ի յԱստուածածին և ՝ի մարդկային բնութեանց միաւորեալ իւղ հանգերձանի, որով օծեալ սրբեցաք յամենայն մեռելոտի յաղտեղութեանց. զորմէ ասէ Դաւիթ. առաքեաց զբան իւր, և բժշկեաց զնոսա յապականութենէ իւրեանց. և յաղագս ամենասուրբ հոգւոյն ասէ. առաքեսցես զոգի քո և ստանասցես զնոսա. և նորոգեսցես զերեսս երկրի (Սղ. 106. 20. և 103. 30.)

Իւղ թափեալ է անուն քո. տես զզարմանս հարսին, թէ որպէս կարղաց ընթանալ երկրորդ դիմաւն առ Հայր. զի նախ սակս համբուրին աղերսեաց. զնա, սակս անուանց անուամբ՝ զգթութիւն և զողորմութիւն նորին յիշատակեաց. ապա զհոտ իւղոյն հրատարակեաց. Իսկ արդ՝ զերկրպագելի և զպաշտելի սուրբ զանուն նորին ձեռնարկեաց. ( իւղ թափեալ է անուն քո ) ասէ. թափող իւղոյն երկնաւորն Հայր, թափեալ իւղ՝ ծոցածին որդին. և ամենասուրբ հոգին. որք համագոյն իւղոյ թափեցան յերկիր թարց ձայնի. առ ՝ի նշանակել զթագուն միայն խորհրդոյ մարդեղութեան՝ յուշիկանաց աշխարհիս այսորիկ. զի առաքելոյն թէ՝ եթէ էր ծանուցեալ զնոյն փառաց, ոչ հանէին ՝ի խաչ. Վասնորոյ և Դաւիթ յորդոյ իբրեւ հանգունակէ (Ա Կոր. 2. 8. Սղ. 71. 6.) վասն զի իւղն շիթ



digitised by A.R.A.R.@

յերես ջրոյ, և ամենայն հեղուկ նիւթոյ, պատճառաւ օդային թեթևութեան. նշանակելով երկնային զօրն փեսային հոգւոյ. որ ասէր ես չեմ՝ յաշխարհէ (Յով. 16. 17.) մանաւանդ շրջելով ՚ի վերայ հոսանուտ անցաւոր կենցաղոյս, մնալով թեթև յամենայ կրից. գայ իշխան աշխարհիս այսորիկ՝ և յիս ինչ ոչ գտանէ (Յով. 14. 30) այլև իւղ թափեն յատակս ծովու, որ զալէկո-ծութիւն նորին դադարէ. և զխռովութիւն ալեացն խաղաղէ. Նոյնպէս լուսաւորէ զխորս անդնդոյ մինչ ամենայն ինչ որ յատակս խորոց իցեն յայտ յանդիման երևին, որպէս արեգակ ծագեալ ՚ի տան. Նոյնպէս և ՚ի թափիլ երկնային իւղոյն ՚ի ծով կենցաղոյս, դադարեցաւ զալէկոծութիւն խռովութեանց. զի մինչդեռ խաղաղութեանն պատեալ էր զամենայն, Եւ յն ինչ գիշերն իւրով արագութեամբն ընդմիջէր, ամենազօր բան քո երկնից հասա-նէր (Իմաստ. 18. 14.) որով աշխարհ ամենայն լուսաւորեցաւ. որպէս ասաց ես լոյս յաշխարհ եկի. և Մարգարէն ասէ՝ Ժո-ղովուրդ որ նստէր ՚ի խաւարի՝ ետես զլոյս մեծ. և որ բնա-կեալ էին յաշխարհի և ՚ի ստուերս մահու լոյս ծագեցաւ նոցա

(Ես. 9. 2.)

Դարձեալ՝ իւղ թափելն ՚ի Ճրագարանն՝ զի եղիցի լոյս ՚ի խորանին վկայութեան (Ել. 25. 20.) զոր ետես Զաքարիա աշտանակ ոսկե-ձոյլ. և գունդ ՚ի վերայ նորա. և եօթն Ճրագ ՚ի վերայ նորա. և եօթն բերանք Ճրագայն որք ՚ի վերայ նորա (Զաք. 4. 2.) և ՚ի գնդէ յայնմանէ բուսեալ ստեղանցն ընթանայր իւղն յամենայն Ճրագունսն. որ նոյն աշտանակն, և գունդն ոսկեղէն, նշանակէր զտէր մեր Յիսուս Քրիստոս ըստ մարմնոյն. և իւղն ՚ի գնդէ յայնմանէ յամենայն Ճրագունսն տարածեալ՝ նշանակէր զԱստուա-ծութիւն նորա՝ օծօղ մարդկութեան. յորմէ եօթն Ճրագունքն եկեղեցւոյ խորհրդոյ՝ առին զշնորհ ՚ի լնութենէ շնորհաց մարմնացելոյ բանին Աստուծոյ. բայց սրբն Գրիգոր Նարեկացին ջահ և աշտանակ կոչէ զՔրիստոս. յորոյ ջահաւորութենէ իբր ՚ի լրութէ՝ մեր փրկութին յառաջացաւ. և եօթն Ճրագօք՝ զեօթն պարգևս հոգւոյն սրբոյ ՚ի վերայ նորա. ըստ Եսայեայ. որոյ լրութեամբ. եօծ զմեզ շնորհօք. և ըստ մեկնութեան հրեշ-տակին առ Զաքարիայ. աշտանակն այն նշանակէր զհոգին սբ. և եօթն Ճրագունքն՝ զեօթն պարգևս նորա. որ միջնորդութեամբ

գնդոյն

digitised by A.R.A.R.@

գնդոյն ոսկեղինի՝ հեղանի առ եօթն դասս սրբոյն. այսինքն հրեշտակաց, առաքելոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, կուսանաց, խոստովանողաց. կամ ճգնաւորաց։ ըստ մեկնութեան Ներսիսի լամբրոնացւոյն. որք աշտանակն ոսկի օրինակէ խնամոց զօրութեանն Աստուծոյ; որ բարձեալ կայ ղաթու-
քահանայութեան և թագաւորութեան։

Իւղ թափեալ է անուն քո։ ասէ հարսն։ զի անկեանս և անժամանակն ի բուն զիւղ թափեցաւ ՚ի մեր բնութիւն, վասն իւրոյ ողորմութեան։ Նախ՝ զի որպէս իւղն է գերազանց՝ քան զայլ ամենայն հեղուկ նիւթս, նոյնպէս և անունս այս՝ գեր ՚ի վերոյ է, քան զամենայն անուն որ շնորհեցաւ նմա, զի յանուն Յիսուսի ծունր կրկնեսցի՝ երկնաւորաց և երկրաւորաց, և սանդարամետականաց և ամենայն լեզու խոստովան լիցի թէ՝ տէր Յիսուս Քրիստոս է ՚ի փառս Աստուծոյ Հօր (Փլպ. 2. 9.) Երկրորդ՝ անունս այս է անճառելի, որ ասէ Եսայեայ. զոր ոչ ումեք պատշաճէր արտաբերել. այլ միայն ծայրագոյն քահանայապետին. այն և ՚ի տեղւոջ
սրբութեան սրբութեանցն։

Երրորդ՝ զի որպէս իւղն փակեալ ՚ի յանօթում, կամ ոչ բուրէ զհոտն, և կամ սակաւ. բայց մինչ հեղուն և թափեն, յայնժամ տարածէ զհոտ իւր, և զքիմս ամենեցուն լնու։ որպէս Մարիամ մինչ եհեղ զիւղն ՚ի յոտս տէրունեան. լի եղև տունն անուշահոտութեամբ. նոյնպէս և իւղս այս՝ որ յառաջ ներփակեալ էր ՚ի ծոց Հօր, հոտն, առաքինութիւնն, զօրութիւնն, սքանչելիքն, և քաղցրութիւնն անյայտ էր ՚ի մեզ։ Յայնժամ երևեցաւ՝ մինչ թափեցաւ ՚ի յարգանդ ամենամաքուր սուրբ կուսին Մարիամու. Յորմէ բաղումք առին զհոտ անուշութեան նորա։ և առաւել ևս հեղաւ ՚ի քարոզութեան նորին։ և յայնժամ տարածեցաւ յոլորտս տիեզերաց. յարևելից մինչև ՚ի մուտս արևու օրհնեալ է անուն տեառն։ Զի աշխարհ ամենայն, բոլոր երկինք և երկիր զուարթացան հոտով իւղոյս այսորիկ։ Չորրորդ՝ և ինձ թուի թէ՝ յայտնութեան իմիք զքաղցրութիւն այսր հոտոյ նախազգացին նահապետք և մարգարէք. որպէս Իսահակ էառ զհոտ անուշութեան ՚ի յօրհնելն զՅակոբ. վասնայն ասաց՝ ահա հոտ որդւոյ իմոյ իբրև զհոտ անդոյ լիոյ (Ծնն. 27. 27.) որպէս և փեսայն պատմէ թէ՝ իբրև զմուռ ետու զանուշահոտութիւն

հոտոյ

digitised by A.R.A.R.@

հոտոյ (Մր. 24. 20.) Հինգ երրորդ՝ և 'ի ստեղծման աշխարհի՞ Հայրն երկնաւոր, զգութ և զողորմութիւն իւր էհեղ 'ի ստեղծուածս՝ և հանգոյն իւրոյ զուարթացոյց զամենեսեան, Որոյ զկնի 'ի փրկութիւն սորին՝ առաքեաց զմիածին զորդի իւր 'ի մարմին. և առաքումն այն էր իբրու հեղումն կամ թափումն։ Ըստ որում գրէ սքն Գրիգոր Նարեկացին 'ի գովս կուսին. և թէ չէր թափեալ իւղն անապական 'ի վեհագունէն՝ ոչ էր զմեզ օծեալ. և թէ չէր խառնեալ զմեզ ընդ իւրումն՝ ոչ էր մկրտեալ. և թէ չէր խրախուսեալ մարդն 'ի յերկնայնումն՝ ոչ և ես էր սրբեալ. և թէ չէր խոնարհեալ բարձրն 'ի յընտանի փառացն՝ ոչ էր վերացեալ 'ի յատորայնոյս առեցեալն։

Վեց երրորդ՝ ոմանք պատմիչք ասեն թէ 'ի գիշերի ծննդեանն Քրիստոսի, աղբիւր իւղոյ բղխեաց 'ի Հռոմ քաղաքի. յուցանել երկնային իւղոյն յերկիր հեղման. և Ալբերթ 'ի մարդեղութեան Ճառին 9 գլխոջ յառաջ բերէ զբանն Բեռնարդոսի թէ՝ մանանայն էջ յերկնից՝ խնդասցեն քաղցեալքն. յայգւոյն երկնից ընծայեցաւ ողկոյզն՝ խնդասցեն ծարաւիքն. իւղն հեղաւ՝ խնդասցեն խօթացեալքն. Վէմն առանց ձեռին հատաւ 'ի լերանէն՝ երկիցեն հեղգացեալքն։ Բայց հարսն զայսոսիկ զամենեսեան համառօտելով, հակիրճ բանիւ եզրափակէ ասելով. իւղ թափեալ է անուն քո։

Իսկ և զայս գիտել ես արժան է. զի ըստ Փիլիսոփայից անունն է յայտնիչ բնութեան. բայց Աստուածային անուանքն՝ ոչ են յայտնիչ բնութեան. զի ոչ ոք գիտել կարէ զբնութիւն և զէութիւնն Աստուծոյ, ո՛չ հրեշտակք, և ո՛չ մարդիկ. զի որպէս բնութիւնն և զէութիւնն Աստուծոյ անդրէ քան զըմբռնումն իմացականութեան մերոյ, նոյնպէս և անունն։ Զի ամենայն անուն 'ի չորից առնի. յիրէն, 'ի ձայնէն, 'ի յարայուցէն, և 'ի գործոյն։ և անուանսն Աստուծոյ բայսութիւնք լինին յերիցն. և ստորասութեամբ 'ի չորիցն։ Ասացաւ թէ՝ բայսութիւնք լինին 'ի յերիցն. այսինքն յիրէն 'ի ձայնէն և 'ի յարայուցէն։ Նաև՝ զի Աստուած ո՛չ ունի անուն յիրէն. ըստ աւետարանչին, զԱստուած ոչ ոք ետես երբէք (Յով. I. 18։) զի թէ Մովսէսի ասաց Ես եմ որ էն, այն ոչ էր յայտնիչ բնութեան. այլ մշտնջենաւորութեանն, և յաւիտենականութեանն. լատորում ասաց՝ Եսեմ

ալֆա

digitised by A.R.A.R.@

ալֆա և օ. սկիզբն և կատարած. առաջին և վերջին (Յայտ. 22. 18.) Երկրորդ՝ և ոչ ՚ի ձայնէն, զի ձայն տեառն շարժէ զանապատն և խռովեցուցանէ (Սղ. 28. 8.)

Երրորդ՝ և ոչ ՚ի յարայութեն, զի ասէ Մարգարէն. արդ՝ ո՞ւմ նմանեցուցէք զտէր. և որո՞ւմ նմանութեան նմանեցուցէք զնա (Ես. 40. 18.) Այլ ընկալաք զանուն ՚ի ներգործութենէ բարերարութեան կամացն. որ միշտ ներգործէ առ արարածս իւր. Վասնորոյ սակս հաստատելոյ զմեզ, և յաստիս ածելոյ, կոչեմք Ած. և վասն տիրելոյ երկնաւորաց և երկրաւորաց՝ ասեմք Տէր. և զարարածս ստեղծանելոյն՝ անուանեմք Ստեղծօղ. և զամենեսեան պնդեալ և կալեալ ունելոյն՝ կոչեմք Ամենակալ. և զամենեսեան դատելոյ աղագաւ՝ ասեմք Դատաւոր. և յաղագս սիրելոյն զմեզ՝ կոչեմք Մարդասէր. և այլ՝ այսպիսի անուանք ՚ի բարերար ներգործութենէ են կոչմունք. և ոչ անճառ բնութեն յայտնաբանիչք. Այսպէս և ամենասուրբ Հոգին Աստուած, զմեզ իմաստնացուցանելոյ աղագաւ՝ կոչի Հոգի իմաստութեան. և վասն հանճարազարդելոյն զմեզ՝ կոչի Հոգի հանճարոյ. և սակս խորհրդազգած առնելոյն՝ կոչի Հոգի խորհրդոյ. և վասն զօրացուցանելոյ զմեզ՝ ընդդէմ հնազոյն օձին՝ կոչի Հոգի զօրութեան. և յաղագս ուսուցանելոյն՝ կոչի Հոգի գիտութեան. և զամենեսեան ՚ի յԱստուածպաշտութիւն ածելոյն կոչի Հոգի Աստուածպաշտութեան. և զմեզ ՚ի յերկիւղն Աստուծոյ բերելոյ աղագաւ՝ կոչի Հոգի երկիւղի. սոյնպէս և առ ՚ի զարհուրեցուցանելոյ զապստամբսն՝ սաստիկ հնչմամբ էջ ՚ի վերնատունն ՚ի դասս առաքելոյ. և զսառուցեալսն ջեռուցանելոյ աղագաւ ՚ի ձև հրոյ երևեցաւ. և զբարբառս զանազան ազգաց ուսուցանելոյ վասն՝ ՚ի տեսակ լեզուի բաժանեցաւ.

Նոյնպէս և բանն Աստուած, մինչ եկեալ մարմնացաւ, ՚ի թլփատութեանն կոչեցին զանուն նորա Յիսուս, որ կոչեցեալն էր ՚ի հրեշտակէն, և թարգմանի փրկիչ. և այս անուն՝ Աստուծոյ միայն վայելէ. Զի որպէս ստեղծանել զաշխարհս գործ Աստուծոյ է. նոյնպէս և փրկելն. և Քրիստոս միաւորութեան է անուն, որ եղև յԱստուածութենէ և ՚ի մարդկութենէ. երկուց բնութեց միաւորեալ եղև մի բնութի. Վասնորոյ կոչեցաւ Քրիստոս, որ թարգմանի օծեալ. թէ և ՚ի կողմանէ Աստուածութեն ոչ է օծեալ.

digitised by A.R.A.R.@

ածեալ. այլ՝ օծող. զի բանն Աստուած էօծ զմարդկութիւնն ընդ նմա միաւորութեամբ. իսկ 'ի կողմանէ մարդկութեանն, օծաւ իւղով հոգւոյն սրբոյ. Ըստայնմ՝ հոգի սեաւն 'ի վերայ իմ, վասնորոյ և էօծ իսկ զիս. ուստի երկու անուանքս 'ի միասին կոչին. զի մարդկութիւնն՝ Աստուածութեամբն օծաւ. և բանն Աստուած մարդկութեամբն փրկեաց զմեզ. և յայսմիկ միաւորութենէ եղան անուանքս Յիսուս Քրիստոս. որք 'ի վերեն քան զամենայն անուն ըստ Պօղոսի. բայց զանազանութիւն 'ի մէջ անուանացս. զի որդի Աստուծոյ, և Աստուած անուն կոչի նմա 'ի յաւիտենից. Քանզի՝ 'ի սկզբանէ էր Աստուած, և որդի Աստուծոյ (Յօհ. I. I.) իսկ և Յիսուս Քրիստոս անուանքս կոչեցաւ նմա 'ի ժամանակի. զի միաւորութիւն Աստուածութեան ընդ մարդկութեան, և գործ փրկութեան մերոյ 'ի ժամանակի եղև. և այսու հաստատին անուանքս այսոքիկ. զի որպէս անըսկիզբնէ Աստուած, և որդի Աստուծոյ գոլն. նոյնպէս և անվախճանէ Յիսուս Քրիստոս գոլն. ըստ վկայելոյ սրբոյն Պօղոսի. թէ՝ Յիսուս Քրիստոս, երէկ և այսօր՝ նոյն և յաւիտեան (Եբր. 13. 8.) Բայց ոմն 'ի վարդապետաց ասէ թէ՝ այս գեղեցիկ անուանքըս՝ քրիստոնէից պահապան. ջերմեռանդից օգնական. սիրահարաց շտեմարան. քաղցրութեան մառան. և Պօղոսի զմայլարան. Վասնզի սրբազանն Պօղոս 'ի չորեքտասան թղթոջ իւրում, գերազանց անուանքս զայսոսիկ Յիսուս Քրիստոս, կրկնելով յիշատակէ յամ տեղիս կրկնէ և վերակրկնէ. եթէ կամիցիս բարեպ իմանալ, և մտախորհ լինիլ, համարեա թուեա՝ և տես զթիւն որ եղանէ 619. 400. անգամ զՔրիստոս յիշատակէ, և 219 անգամ զՅիսուս արտաբերէ. և առաւել զարմանալինէ այն, որ մինչ ցկէտ մարտիրոսութեանն՝ չկարելով զովանալ այսուանուամբ. Դարձեալ և 'ի հատանիլ գլխոյն, յանկեալ տեղւոջէն, երեք զկենդանի վերայցեալ, և անկանիլ՝ յայլ և այլ տեղիս. և երիցս անգամ արտաբերէր զերկրպագելի և զպաշտելի զանուն փեսայեն ասելով Յիսուս. Յիսուս. Յիսուս. Իսկ և մեք զոյս զսիրուեալս 'ի սոյն գիրս 'ի գասաւորութիւն տառից մերոց ասեմն հաւաքեսցուք զի լիցի ոսկեձաղիկ բանասիրաց. Վասնզի նախ՝ կոչեցաւ առիւծ. զի թագաւորէր և ծածկեաց յորսողէն զճանապարհ անօրէնութեան իւրոյ որով որսաց զթշնամին բնութիւն մերոյ

digitised by A.R.A.R.@

Միւռոնն երգ երգոց տնտեսնեալ եկեղեցւոյն Սողոմոնի. Գլուխ. I. Համար. 2.

մերոյ. ուստի ասէ՝ ես իբրեւ զառիւծ 'ի վերայ տանն Յուդայ
Ծն. 49. 9. Ովս. 5. 14.

Աստղ, ծագեալ աստղն Յակոբայ. նախ զի պայծառ էր եւ ապա 'ի խաւարի անգիտութեան լոյս ծագեաց մեզ Թւոց. 24. 17.

Բժիշկ, զի պատեաց զվէրս եւ եդ 'ի պանդոկի եկեղեցւոյ. այլեւ զհիւանդութիւնս մեր վերացոյց. եւ զցաւս մեր եբարձ Ղկ. 10. 13. եւ Մտթ. 8. 17.

Գառն. ահա գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի. նախ վասն անմեղութեան. եւ ապա զի եբարձ զմեղս աշխարհի. որ նկարեցաւ գառամբ հնոյն Իսրայէլի Յոհ. I. 29.

Դուռն, եսեմ դուռն ոչխարաց. զի զարժանիս տանի 'ի ներս, եւ ապա զանարժանս մերժէ. եւ փակէ զդուռն ասելով. ոչ գիտեմ զձեզ Յոհ. 10. 7. Մտթ. 25. 12.

Եզն, զենեցէք զմա զեզն պարարակ. նախ պատարագեցաւ 'ի վերայ խաչին. եւ ապա զբանն կենաց սերմանեաց 'ի սիրտս մեր Ղկ. 15. 23.

Զօրութիւն իմ եւ օգնութիւն իմ տէր, եւ եղեւ ինձ 'ի փրկութիւն. զի փրկեաց զմեզ հզօր ձեռամբ եւ բարձր բազկաւ 'ի յեգիպտոսէ դժոխոց եւ յանմարմին փարաւոնէ. եւ ապա ժառանգեցոյց զերկիր օտար եւ այլասեռ Թագաւորացն հեթանոսաց Սղ. 117. 13.

Է՝ որ էն առաքեաց զիս. նախ զի 'ի սկզբանէ էր. եւ ապա առե-ցելովնէ յաւիտեանս յաւիտենից Ել. 3. 14.

Ընտրեալ, եղբօր որդին իմ ընտրեալ 'ի բիւրոց. զի բայց 'ի յինքենէ ոչ ոքէ. այլ եւ ոչ այլոք լինիլ կարէ. վասնզի մի է ծնօղն եւ ծնեալն. ուստի կոչի միածին Երգ. 5. I.

Թագաւոր Թագաւորաց Յայտ. 19. 16. նախ զի 'ի ծննդեանն հարցին. ուր ծնաւ արքայն հրէից. եւ 'ի գալստեան յերուսաղէմ, գուշակեցաւ 'ի մարգարէից թէ՝ ահա Թագաւոր քո գայ Զաք. 9. 9. եւ ապա 'ի խաչին ընկալաւ մակագիր Յիսուս Նազովրեցի Թագաւոր. զի էր Թագաւոր խաղաղութեան, եւ արդարութեան. անհայր անմայր, չհամարեալ յազգս. անմայր 'ի հօրէ. անհայր 'ի մօրէ. եւ զազգատոհմ նորա ո՞ պատմեսցէ Եբր. 12. 17.

Ժառանգ, սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա. նախ զի որդի է բնութեամբ. եւ ապա արեամբ ստացաւ զժառանգութիւն հօր իւրոյ Մրկ. 12. 7.

Իշխա

digitised by A.R.A.R.@

Իսկակից Հօր։ Իրաւակշիռ արդար դատաւոր. զի կացուսանէ զօդիս յաջմէ, և զայծս ի ձախմէ. և ապա արդար դատմամբ զբարեգործսն հրաւիրէ 'ի յարութիւն կենաց. և զչարագործսն 'ի յարութիւն դատաստանաց Յօհ. 5. 29.

Լոյս, ես լոյս աշխարհ եկի. զի ամենայն որ հաւատայ յիս՝ 'ի խաւարի մի՛ մնասցէ. նախ զի եկն և լուսաւորեաց զմեզ. և ապա ազատեաց զմեզ 'ի խաւարէ խոր կռապաշտութեան Յօհ. 12. 46.

Խաղաղութիւն, զի նա է խաղաղութիւն մեր. զի եկն աւետարանեաց զխաղաղութիւն հեռաւորաց և մերձաւորաց. որոյ վասն ասացաւ խաղաղութիւն յերկինս, և փառք 'ի բարձունս Եփ. 2. 14. Ղկ. 19. 38.

Ծաղիկ. ես ծաղիկ դաշտաց. վասն անուշահոտութեանն. և գեղեցկութեանն. բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ, և ելցէ ծաղիկ յարմատոյ անտի Երգ. 2. 1. Ես. 11. 1.

Կեանք, տեսանիցէք զկեանս ձեր կախեալ զփայտէ։ Եւ այլ ուր թէ՝ ես եկի զի զկեանս ունիցին Օր. 28. 66. Յօհ. 10. 10.

Հաց, ես եմ հացն կենաց իջեալ յերկնից. զի զաւլեալ բնութիւն մեր յագեցոյց, և ապա մեզ զանմահութիւն պարգեւեաց Յօհ. 6. 48.

Ձի, որ զհոտ պատերազմի առեալ դաբր հարկանէ. նախ զի զօրաւորէր. և ապա կամաւ զինեաց 'ի չարչարանս խաչին, և հզօր յարձակմամբ յարեաւ 'ի վերայ թշնամւոյն. և էհար զպատերազմ 'ի ծագաց մինչև 'ի ծագս երկրի Յոբ. 39. 25. Սղ. 45. 10.

Ղամբար եօթնաջահեան լի լուսով. նախ զի լուսաւորեաց զմեզ. և ապա 'ի լրութենէ նորա մեք ամենեքեան առաք շնորհս փոխանակ շնորհաց Յօհ. 1. 16.

Ճանապարհ, ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք։ վասն զի ինքեամբ էած զմեզ առ Հայր, ապա որք ոչ գնան ընդ նմա, ոչ հասանեն յօթևանս նորա Յօհ. 14. 6.

Մայր, որպէս մայր որ զմանուկ իւր գգուեսցէ, այնպէս գգուեսցից զձեզ ասէ տէր. նախ զի մայրօրէն գթայ 'ի վերայ որդւոց մարդկան, ապա 'ի յարքայութեան ընկալնու որպէս 'ի գիրկս մօր Ես. 66. 13.

Յարութիւն, ես եմ յարութիւն և կեանք. զի նախ ինքն յարեաւ

digitised by A.R.A.R.@

րեաւ. ապա յարոյց զմեզ մեռեալ ոգիս մարդկան. և 'ի կատա-
րածի յարուցանէ զամենեսեան Յով. II. 25.

Նաւ շահաբեր. զի նախ զԱստուած առ մեզ եբեր. և ապա տա-
րաւ զմեզ առ Աստուած. այլև որպէս նաւ 'ի ծովու աշխարհիս
շրջեալ ոչ եթող զհետ գնացից Յոբ. 9. 26. Առակ. 30. 19.

Շուշան հովտաց. նախ իբրև զշուշան փայլեցաւ, սպիտակ մարդ-
կութեամբ, և պայծառ Աստուածութեամբ. ապա 'ի խաչին
կարմրացաւ արեամբ' մարմնով հանգոյն վարդի Երգ. 2. 1.

Ոչխար. զի իբրև զոչխար 'ի սպանդ վարեցաւ. որ նախ ծածկեց
զմերկութիւն մեր. և ապա զի հեզէր և լուռ եկաց առաջի
զրպարտչաց իւրոց Ես. 53. 7.

Զարին վանիչ. և մեքենայից նորին կործանիչ. նախ զի մերկեաց
զիշխանութիւնս և զպետութիւնս. և ապա յայտ յանդիման խայտա-
ռակեաց Կող. 2. 15.

Պահապան. զի ոչ ննջէ և ոչ 'ի քուն երթայ. զի նախ օրհնօք
պահպանեաց զմեզ. և զկնի շնորհօք զարդարեաց Սղ. 140. 4.

Ջուր եմ իբրև գետոյ վտակ, և որպէս ջրանցնաց ապատելի 'ի
դրախտէն. ասացի ոռոգեցից զպարտէզ իմ, և արբուցից բող-
բոջի իմոյ զպտուղ. վասնորոյ ասէ եթէ ով ծարաւի իցէ' ե-
կեսցէ առ իս և արբցէ. զի նախ ետ մեզ հաւատացելոց ըմպել
զքաղցր ուսումն վարդապետութեան իւրոյ. և ապա լուաց զաղտե-
ղութիւն հոգւոց մերոց. Սիր. 24. 41. Յով. 5. 37.

Ռետին, որ է յօղեմն 'ի ջինջ օդոյ 'ի ջերմ և 'ի պարզաբեւեռ իջեալն
'ի վերայ տերևոյ ծառոյ. որպէս բանն Աստուած էջ 'ի յար-
գանդ սրբ. կուսին. և եղև մեզ դեղ փրկութեան. վասնորոյ ասէ'
առ քեզ դեղ ռետին կուսի Երմ. 46. 11.

Սքանչելի, զի՞ հարցանես զանուանէ իմմէ, անուն իմ սքանչելի է.
և Դաւիթ ասէ, տէր տէր մեր' զի սքանչելի է անուն քո 'ի
վերայ ամենայն երկրի Դտ. 13. 18. Սղ 8. 1.

Վարդապետ բարի. նախ զի վարդապետաբար զամենեսեան ուսոյց.
և ապա իւրոյ բարութեամբ զմեզ հաղորդեաց Մտթ. 19. 16.

Տէր, և եղ՚յի յաւուր յայնմիկ 'ի վերայ ամ երկրի տէր մի, և անուն
նորա մի. Թովմաս աղաղակէ տէր իմ և Աստուած իմ. և աշա-
կերտքն ասային տէր փրկեա զմեզ Յով. 20. 28. Մտթ. 8. 24.

Րաբունի, մագդաղենացին խրատեալ 'ի նմանէ փոխեաց զխօ-
սս իւր.

իւր և կոչեաց զնա րաբունի Մրկ 10. 53.

Ցօղ՝ որպէս և ցօղեաց յերկիր։ և թէ՝ ցօղդ որ ՚ի քէնէ այս բժշկութիւն է նոցա. Սղ. 71. 7. Եսայ. 26. 19.

Խնծիղ մեղաց. եթէ իցեն մեղք ձեր իբրև զձանձրախարիթ. քան զձիւն սպիտակ արարից։ և Դաւիթ վասնայն ասէր թէ՝ զանօրէնութիւնս իմ քաւեսցես յինէն Եսայ. 1. 18. Սղ. 50. 12.

Փեսայ՝ զի միացաւ ընդ մարդկային բնութեան. և զկնի միանայ ընդ հաւատացեալ հոգւոյ ՚ի հարսանիս անզբաւ ուրախութեան Յովհ. 3. 29.

Քահանայ՝ ըստ կարգին Մելքիսեդեկի, ըստ Պօղոսի. զի քաւիչ եղև մեզ. և զԱստուած հայր հաշտեցոյց ընդ մարդկային բնութեան. տես Սղ. 109. 4. Եբր. 5. 6.

Վաղնջոյն երեքում ուրեքին պէտս։ Նախ օրինորդ և փեսաւէր կամ հարսանաց. և միաւորող փեսայի ընդ հարսին՝ ինքն հայր Աստ. որ եառ մի ՚ի կողիցն Ադամայ՝ և շինեաց կին. և եած առ Ադամ. և օրհնեաց զնոսա ասելով՝ աճեցէք և բազմացարուք, և լցէք զերկիր։ Զի պսակն Ադամայ նշանակէր կապակցութիւնն Քրիստոսի ընդ Եկեղեցւոյ. որ լինելոց էր ՚ի ձեռն մարմնաւորութեան և սիրոյ. որ բարեպէս նշանակէր զպսակ նոր օրինացս, զկատարեալ միաւորութիւնն այն. ոչ միայն մարդեղութեամբ, այլև խաչիւ իբրու առաւպատիւ սիրոյ. ուստի զպսակէ նոր օրինացս առաւել իմանի զասացեալն առաքելոյն. թէ՝ խորհուրդս այս մեծ է. զի պսակն մեծ խորհուրդ է ՚ի մէջ եկեղեցւոյ. որ է օրինակ կատարեալ միաւորութեան Քրիստոսի ընդ եկեղեցւոյ։ և այրն որպէս գլուխ սիրեսցէ զկին իւր՝ իբրև զմարմին իւր. որպէս և Քրիստոս զխորհրդաւոր մարմին իւր զեկեղեցի։ և կին սիրեսցէ զայր իւր. որպէս եկեղեցին զՔրիստոս. այսպէս համառօտ միտքն առաքելոյն. որպէս նախ գրեցաւ։

Երկրորդ՝ օրինորդք կոչին հրեշտակք որք պահպանիչք են ազգի մարդկան, վասն հնարից գաղտնի որսողին. զորմէ ասէ՝ հրեշտակաց իւրոց պատուիրեսցէ վասն քո ՚ի պահել զքեզ. և թէ բանակք հրեշտակաց տեառն շուրջ են զերկիւղածովք իւրովք և պահեն զնոսա Սղ. 90. 13. և 33. 8. զի օրինորդք նաև լինին պահպանիչք հարսին. վասնայնորիկ ՚ի մեղանչելն՝ տրտմին և ՚ի դարձն խնդան, և ուրախութիւն առնեն յերկինս յաղագս

Աստու

digitised by A.R.A.R.@

Առաքելոյ (Ղուկ. 15. 10.) Ուստի 'ի յանդրանդեայ գրքւոջ 12 գլուխն ասէ՝ Հրեշտակք տեսանելով զՊօղոս կապեալ՝ մեծապէս խայտային զի գիտէին թէ՝ որքան անձինք 'ի Հրէից և 'ի Հեթանոսաց ծնանելոց էր 'ի Քրիստոս: այլև Հրեշտակք սպասաւորքն հոգւոյ մարդկան, մանաւանդ երանելեաց զի տարեալ հանգուցանեն 'ի գաւառս երկնից. որպէս Ղազարոս 'ի գոգն Աբրահամու (Ղուկ. 16. 22.) և 'ի ժամանակի փորձութեան 'ի թիկունս հասանին. որպէս Հրեշտակն էջ 'ի հնոցն, և թօթափեաց զհուրն յերից մանկանցն. (Դան. 3. 49.) նաև առաջնորդեն ճանապարհորդաց, որպէս Ռափայէլ՝ մանկանն Տօբիայ: մանաւանդ զի են աւետաւորք. որպէս Գաբրիէլ՝ ամլոյն Եղիսաբեթի. և սրբոյ կուսին Մարիամու. և ունին զայլ բազում արարս որք են գործք օրհնողաց:

Երրորդ՝ օրհնողք կոչին առաքեալքն և մարգարէքն. որք նախ ինքեանք հարսնացան փեսային Քրիստոսի. և զկնի եղեն Հրէից և Հեթանոսաց փեսաւէրք և հարսնածուք. որև նոյնէ օրհնողասելն. որպէս Պետրոս Հրէից և Պօղոս Հեթանոսաց յԵմէ մինչև յԻլիւրիկէ՝ ասէ, լի արարի զաւետարանն (Հռոմ. 15. 19.) նմանապէս և մարգարէք. որոց պաշտօն յայտ է 'ի սուրբ գիրս (Տես. Ես. 6. 8. Եր. 1. 7.)

Չորրորդ՝ Հրեշտակական վարդապետն մեր սուրբն Գրիգոր Նարեկացին 'ի 75 գլուխ աղօթիցն ասէ 'ի ներբողեանս եկեղեցւոյ թէ՝ օրհնողք խնձոյից սրբոյն հարսնարանի հայրապետացն գումարք: Զի առաքեալքն յստորինի որսայօղ թռչնոյ. նախապէս ինքեանք որսացեալ եղեն, և ապա զայլս. որսային վասն տեառն: առ որս ասաց փեսայն. եկայք զկնի իմ զի արարից զձեզ որսորդս մարդկան (Մատ. 4. 19.) և ապա յաջորդք նոցին հայրապետքն սրբոց զբազում որսային. առ 'ի կատարումն Աստուածային խոստմանց. թէ՝ ահաւասիկ ես առաքեմ ձկնորսս բազումս ասէ տէր. և որսասցեն զնոսա. և յետ այնորիկ՝ առաքեցից որսորդս բազումս. և որսասցեն զնոսա 'ի վերայ ամենայն լերանց և 'ի վերայ ամենայն բլրոց. և 'ի ծակուց վիմաց (Եր. 16. 16.)

Բայց օրհնողք անուանի է իգական սեռի որ զհարսնածուս նշանակէ. այսինքն զհարսնախօսն, և զհրաւիրակս հարսին: Զի որ փեսայն երկնաւոր՝ չարչարանօք երկնելով ծնաւ զեկեղեցի.

կոչէ

digitised by A.R.A.R.@

կոչեցաւ կին անուամբ աւելածու, որ դրամ կորուսեալ պատ-
կերին իւրոյ խնդրեաց. և միշտ մայրաբար դթայ ՚ի վերայ որդւոց
իւրոց, օրինակաւ հաւու, և արծուոյ ՚ի վերայ ձագուց իւրեանց
( Մատթ. 23. 37. Բ Օր. 32. 11. ) Վասն որոյ և զաշակերտս իւր
զսուրբ զառաքեալսն մայր և քոյր անուամբ յիշատակեաց ( Մրկ.
3. 34. ) Զի որպէս Պօղոս զհեթանոսս ծնաւ ՚ի Քրիստոս կոչե-
ցաւ Հայր հեթանոսաց. Նոյնպէս և հայրապետքն մեր՝ յորդոր-
մամբ և բարի օրինակաւ. քարոզելով և խրատելով, զարդարեալ
զհոգիս հաւատացելոց իբրև զմաքուր հարսունս յանդիմանին կա-
ցուցանեն փեսային Քրիստոսի. Համգոյն սրբազանին Պօղոսի.
Որոյ աղագաւ կոչին օրիորդք. Յորոց ուսանիմք թէ՝ օրիորդք
հարսին եկեղեցւոյ. առաքեալք, մարգարէք, հայրապետք,
վարդապետք, և համայն ուղղափառ քարոզիչք, և մանաւանդ
երկիւղած և բարեպաշտօն ծնողք. որք զզաւակունս իւրեանց,
սրբութեամբ սնուցեալք իբրև զմաքուր հարսն ընծայեն Քրի
փեսային. Իսկ և զպատճառական շաղկապն որ դնէ.

ՎԱՍՆ ԱՅՆՈՐԻԿ ՕՐԻՈՐԴՔ ՍԻՐԵՑԻՆ ԶՔԵԶ. Այսինքն վասն լսելոյ ձայնի
աղօթից հարսին, և զիւղոյդ թափելոյն. և ՚ի մեզ մերձենալոյդ,
զի փեսայացուցեալ զմիածին որդի քո՝ առաքեցեր յաշխարհ. և
զմեղաւոր բնութիւնս մեր եդուր համբուրել որ ՚ի ձեռն հա-
ւատոյն յաւիտենականէ մահուց զանձն պատարագ Աստուծոյ ( Եբր.
9. 14. ) ուրեմն այսուհետև չեմք օտարք. և ոչ պանդուխտք,
այլ քաղաքակիցք սրբոց, և ընտանիք Աստուծոյ ( Եփ. 2. 19. )
Վասնայն ուսուցանէ մեզ սրբազան առաքեալն թէ՝ պարտիք
գոհանալ զԱստուծոյ Հօրէ, որ կոչեաց զձեզ ՚ի մասն վիճակի
սրբոցն ՚ի լոյս որ փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարի. և
փոխեաց զմեզ յարքայութիւն որդւոյ իւրոյ սիրելւոյ, որով ունիմք
զփրկութիւն նորա. և զթողութիւն մեղաց մարմնով նորա. ( Կղ.
I. 12 ) և արդ որովհետև եկեղեցինէ տաճար, և բնակարան
Աստուածութեան, կոչի և հարսնարան կամ հարսնատուն որդւոյ
երկնաւոր Թագաւորին Քրիստոսի փրկչին մերոյ ( զորմէ նախ
լիապէս գրեցաւ ) և Քրիստոս փեսայ, հաւատացեալք՝ հարսն.
և ՚ի մեղաց տղայացեալքն օրիորդք, սիրով փեսային հարեալք՝
զխնկելին ՚ի հոտ անուշութեան նորա. համայն խոստովանօղ վկայք.
և զամենաքաղցր անուն փեսային՝ յոյժ սիրեցին. և վասն նորա
համ

digitised by A.R.A.R.@

համբերելին տանջանաց, խաչի և մահու, և հեղլն զարիւնս իւրեանց։ Տես և զհինգ գլուխ աղօթիցն զինչ ասէ սէր վարդապետն մեր երանելին Գրիգոր. ո՛վ երանաւէտդ՝ ահաւոր՝ անճառ՝ անպատում՝ հզօր Աստուած բոլորից։ Ոչ գնայեր բարկութբ խոտորնակ խոտորնակի ընդ քեզ հետևողաց, իբրև ընդ վրիպեալ տուանն Իսրայելի։ Ոչ խայտառակեցեր ՚ի հարսնարանին՝ զանարժանս քումդ պարերգութեան։ Ոչ ՚ի գծուծ հանդերձին տեսիլ զանօրինեալս յանդիմանեցեր։ Ոչ կապանօք ձեռաց և ոտից յարտաքին խաւարն հալածեցեր։ և ՚ի 62 գլուխն ասէ. ամենևին անփորձես ՚ի չարեաց. որ ոչ կամիս զմահ մեղաւորի, որ փրկութիւն են ՚ի քոյ կամաց ընծայեցուցեալ. որ դարձուցանես զմրրիկ մեղաց ՚ի յօյս քաւութեան. որ զհուր բարկութեան յանձրև փոխարկես, խոկ և ՚ի 18 գլուխն ասէ՝ որ չէի երբեմն՝ և ստեղծեր զիս. չմնխթեցի և դու արարեր։ և բազում, տես անդ։ Վասն այնորիկ օրիորդք սիրեցին զքեզ ասէ։ և զինչ հետևեցուցանէ թէ.

Եւ՝ ձգեցին զհետ՝ զկնի քո. ՚ի հոտ իւղոց քոց ընթասցուք (օրիորդացն պատմէ հարսն զի գեղեցկին զոր ինչ շնորհեաց նմա) տարաւ զիս արքայ ՚ի սենեակ իւր (հարսին պատմեալ օրիորդացն, և նոքա ասեն) ցնծասցուք և ուրախ լիցուք ՚ի քեզ. Սիրեսցուք զստինս քո քան զգինի (օրիորդք գեղեցկին, երկրպագեալ զանուն հարսին) ուղղութիւն սիրեաց զքեզ։

Հարսն աստանօր կամի ասել թէ՝ օրիորդք ձգեցին զքեզ առ յինքեանս. թէպէտ բառս այս (յինքեանս) ոչ ունի եդեալ ներգործութեամբ. բայց երևի զօրութեամբ, մինչ տեղին պահանջէ. զի օրիորդք սիրելով զԱստուած Հայր, ծանեան զկամս նորա. և զփայուցին մարդկան ազգի, որպէս ասէ Պօղոս՝ այս են կամքն Աստուծոյ, բարին՝ և հաճոյն՝ և կատարեալն (Հռոմ 12 2։) և ինքեանք հետևեցան առ ՚ի կատարել զայն. որովք և զԱստուած Հայր ձգեցին առ յինքեանս։ Ըստ այնմ թէ՝ զհաճոյս քո ուսան մարդիկ, և իմաստութեամբ քով փրկեցան։ Վասն այն և դու հետևեցար առ ՚ի զկամս քոյոյն կատարելոյ (Իմաստ 9 18։ և 16 25։) Զի հաշտեցոյց զմեզ ընդ իւր, ՚ի ձեռն միածնի որդւոյ իւրոյ. և ետ մեզ զպաշտօն հաշտութեան (2 Կոր. 5 18։) այսէ որ ասէ և ձգեցին զքեզ առ յինքեանս։ Զի հնազոյն վարդապետաց առածէ թէ՝ յորժամ ստեղծ Աստուած զԱդամ, կարգեաց զնա գլուխ և իշխան աշխարհայնոց. տալով նմա շուք

քահա

digitised by A.R.A.R.@

քահանայութեան, գեղ պատկերի Խորոյ. և եդ զնա ՚ի լուսակայ-
բարձրագոյն տեղւոջ յարևելեան մասին, յարադուարձ բեր-
կրանօք դրախտին փափկութեան։ Բայց ՚ի սուտանգամանն՝ մինչ
զրկեցաւ ՚ի փառաւորենեաց վայրեաց անտի. յանդիման նորա նստէր
հուրաչէր և լայր ( Ծնդ. 3. 24։ ) զի ՚ի հեռաստանէ տեսութ
դրախտին՝ ցաւէր և կոծայր, մինչ ընկալաւ զաւետիս վերա-
դարձման. թէ՝ ոչ թողից զքեզ, և ոչ անտես արարից զքեզ
( Յեսու. Ա. 5. Եբր. 13. 5. ) Այլ աւեր Աստուած զօրութեց
եկեսցէ, և հարցէ զպատերազմ. յարուսցէ զնախանձ. և գոչեսցէ
՚ի վերայ թշնամեաց իւրոց զօրութբ ( Ես. 42. 13. ) Եւ զար-
ձեալ խօսեցաւ յունկս Մարգարէից, ասելով միոյն թէ՝ եր՚թ և
ընթերցի՛ր յականջս որդւոյն Երուսաղէմի. և ասասցես այսպէս
ասէ տէր՝ յիշեցի զքեզ՝ և զգութ մանկութե քոյ, և զսէր կա-
տարման քոյ ( Երմ. 2. 2. ) և միւսոյն թէ՝ ասացէք դստեր Սիոնի,
ահաւասիկ փրկիչ քո հասեալ գայ ( Ես. 62. 11. ) և այլում
թէ՝ ուրախ լեր դուստր Երուսաղէմի. ահա թագաւոր քո գայ
առ քեզ՝ արդար և փրկիչ ( Զաք. 9. 9. ) ապա յայնժամ հարսն
եկեղեցի ըստ Եզեկիայի ասաց, ահա ՚ի խաղաղութիւն դարձաւ
դառնութիւն իմ, փրկեցեր զանձն իմ զի մի կորեայց ( Ես. 38.
17. ) այսպէս և համայն սերեալքն ՚ի յԱստուածաստեղծ
մարդոյն, աղաչանօք բողոքէին առ տէր զի գայր Աստուած
ձգեցէին առ յինքեանս. որով զորդին միածին լինիցէր ընդ հարսին
մինչև ՚ի կատարած աշխարհի ( Մատ. 28. 20. ) զի աղաղակ
աղօթիցն իբրև մագնիս զԱստուած ՚ի մեզ ձգէ, և ՚ի կամս մեր
հակեցուցանէ։ Զի աղօթք խոնարհեցուցանողի զինքն, զամպս
խոցէ ( Սիր. 35. 21. ) և սբն Գրիգորէս Նիւսացի աղօթից օրինակ տայ,
զլուսեղէն լար մի, որ յերկնից յերկիր հասանի. և զմեզ ընդ ինք
և զԱստուած ընդ մեզ միաւորէ։ Սոյնպէս և համայն օրիորդք
աղօթիւք զԱստուած ձգեցին առ յինքեանս. և Աստուած հե-
տևէր նոցա, և շրջէր ընդ նոսա։ Զի ասէ մարգարէն առաջի
ձեր տէր ընթանին գնայցէ ( Ես. 52. 12. ) Որպէս ասէր առ
Դաւիթ թէ՝ ընդ քեզէ ամենայն ուրեք ուր և երթայիր. և
սատակեցի զամենայն թշնամիս քո յերեսաց քոց ( 2 Թգր. 7. 8. )
Նոյնպէս և Մովսէս խնդրեաց յԱստուծոյ թէ՝ ցոյց ինձ զերեսս
քո, և պատասխանեաց թէ՝ ես անցից առաջի քո փառօք իմովք.
և

digitised by A.R.A.R.@

և դու տեսցես զյետոյսն իմ ( Ել. 33. 13. ) և 'ի կարգես մինչ
բողոքեաց առ տէր վասն ջրոյ. և ասաց տէր ցՄովսէս, զգաւա-
զանն որով հարեր զգետն, առ 'ի ձեռին քում, և երթիցես. և
ես հասեալ կայցեմ անդ՝ յառաջագոյն քան զքեզ 'ի վերայ վիմին.
'ի Քորեբ, և հարցես զվէմն, և ելցէ 'ի նմանէ ջուր ( Ել. 17.
4. ) Սոյնպէս և յարաժամ հետևի մեզ Աստուած մեր, և զհայ-
ցուածս մեր կատարէ. այսէ զոր ասէ հարսն, և ձգեցին զքեզ
առ յինքեանս. Որպէս 'ի յորդանան առաքեցեր զմիածին որդի
քո 'ի մկրտիլ. և հոգի քո սբ աղաւնակերպ իջեալ 'ի վերայ նորա.
և դու հայր 'ի վերուստ վկայելով ձայնուցեր թէ՝ դա է որդի իմ
սիրելի զոր խնդրեիք, ահա առաքեցի առ ձեզ՝ դմա լուարուք.
Զհետ քո 'ի հոտ իւղոյ քոյ ընթասցուք. Վասնզի լուաք մեք և
տեսաք, զի ոչ արհամարհես զաղքատս, և ոչ գարշիս 'ի մեղա-
ւորաց, ոչ 'ի խոստովանօղ աւազակէն. և ոչ 'ի յարտասուօղ
մեղաւոր կնոջէն. ոչ 'ի յըմբռնեալ շնացօղէն. և ոչ 'ի յաղա-
չօղ քանանացւոյն. ոչ 'ի յուրացօղ աշակերտէն. և ոչ յաշակեր-
տայց հալածօղէն. և ոչ 'ի յանգութ խաչահանուացն: Վասն-
այնորիկ օրիորդք սիրեցին զքեզ. և մեք ընթանամք զկնի քո.
Բնազննինք պատմեն, թէ եղջերուքն 'ի յանցանելն ծովէ, տե-
սութեամբ ոչ կարեն նշմարել զերկիրն ուր գնալոցեն, այլ հոտով
նորին ելանեն 'ի ցամաք. և լաստեալ մանկունք 'ի կաթին
հոտոյ զբնական մարս իւրեանց ճանաչեն. և 'ի մէջ հազարաց
մաքեաց, գտանին 'ի ձայնէ մօր իւրեանց անտարակոյս զնա գտանեն.
Նոյնպէս և հաւատացեալք, հոտով հաւատոյն Քրիստոսի. և
ձայնիւ սրբոյ աւետարանի նորին՝ անցեալք 'ի ծովէ կենցաղոյս՝
ժամանեն 'ի նաւահանգիստն երկնից՝ առ հայրն փառաց. ուստի
ասէր սրբազան աւետարանիչն Յօհաննէս 'ի յաղօթելն թէ՝ հօտ
քո զարթոյց առ իս զյաւիտենական ցանկութիւն. Զի անուշահոտ
իւղէ միածին որդին Աստուծոյ. ըստ ծաղկեալ կուսական մարդ-
կութեան միաւորեալ. զի նաև ծաղիկ յարմատոյն Յեսսեայ. որոյ
սակս ասէ՝ սբն Դիոնէսիոս՝ Աստուածպետականագոյն Յիսուս
զանուշահոտութիւն բուրելով, զիմացական մեր լնու Աստուածային
անուշահոտութբ. Զի որպէս զկէտ ձկանէ պատմեն թէ՝ 'ի
քաղցնուլն՝ 'ի բերանոյ իւրմէ շնչէ զանոյշ հոտ ինչ, ընդ որ դի-
մեալ ամենայն ձկանց լնանին 'ի բերան նորա: Նոյնպէս և բանն
Աստու

digitised by A.R.A.R.@

Աստուած, քաղցեալ և ծարաւի էր սակս փրկութեան ազգի մարդ-
կան. որոյ աղագաւ խոնարհեցաւ ՚ի բարձանց, և բուրեաց զանու-
շահոտութիւն. զոր զգացեալ բազմաց երթային զհետ նորա ՚ի
Գալիլեայ և ՚ի Դեկապօլեայ, և յԵրուսաղեմէ, և ՚ի Հրէաստանէ,
և յայնկոյս յորդանանու ։ Զի ելհամբաւ զնմանէ ընդ ամենայն
տեղիս, և ՚ի քաղաքաց քաղաքս խուռն գային առ նա ( Մատ. 4.
25 ։ Ղուկ. 4. 37 ) Նոյնպէս և սամարացիքն մինչ լուան զհամ-
բաւ նորին. ելեալ ՚ի քաղաքէն և գային առ նա. և բազումք
հաւատացին ՚ի նա ( Յովհ. 4. 30 ։ 41. ) Վասնայն ասաց. ոչխարք
իմ ձայնի իմում լսեն. և զկնի իմ գան ( Յովհ. 10. 17. ) Զի եւղն
մինչ է անշարժ ոչ բուրէ ։ և Ծխանելի խունկն մինչ չէ
վառեալ՝ զհոտ իւր ոչ տարածէ. Վասնորոյ միածին որդին
շարժեցաւ ՚ի ծոցոյ հօր. խոնարհեցաւ յերկիր՝ և տարածեաց
զհոտ իւր ընդհանուր տիեզերս, ըստ ամենատարածին թէ՝ և
յորդեր առաւել բանն զնմանէ. ( Ղուկ. 5. 15. ) և Խորև զծխա-
նելի խունկ հրով չարչարանաց կիզաւ ՚ի խաչին. յորմէ հոտոտե-
ցաւ տէր Աստուած ՚ի հոտ անուշից ( Ծն. 8. 20. ) և հուր
էարկ յերկիր, որով վառեալ բորբոքեցան համայն հաւատացեալք.
և բուրեցին զհոտ սրբութեան և մաքրութեան. և այնպէս քա-
րոզեցին հաւատացելոցն թէ՝ Քրիստոսի չարչարելոյ մարմնով և
դուք ՚ի նոյն միտս վառեցարուք ( I Պետ. 4. I. և Պօղոս հոտ
անոյշ եմք ( ասէր ) Քրիստոսի առ Աստուած ( 2 Կոր. 2. 15 ։ ) կոչե-
ցաւ անօթ ընտրութեան. զի կրեսցէ զանունն Յիսուսի առաջի
հեթանոսաց, թագաւորաց. և որդւոցն Իսրայէլի. ( Գործ. 9. 15 ։ )
Որոյ վասն ասէր, Քրիստոս ինև ընդ ձեզ խօսի ( 2 Կոր. 13. 3. )
Եւ որ ասէ զհետ քո, հետեւք իմանամք զտէր մեր Յիսուս
Քրիստոս ։ Որ ասէր եսեմ Ճանապարհ և Ճշմարտութիւն և կեանք.
ոչ ոք գայ առ հայր, եթէ ոչ ինև ( Յովհ. 14. 6 ։ ) և Առաքեալն
ասէ՝ Քրիստոս վասն ձեր մեռաւ, և ձեզ եթող օրինակ զի
զհետ երթայցէք զհետոց նորա. ( I Պետ. 2. 2I ։ ) և միւսայն
առ ինքն հրաւիրէ ասելով. եկայք առ իս ամենայն վաստակեալ
և բեռնաւորք. և ուսարուք յինէն զի հեզեմ և խոնարհ. ( Մատ.
II ։ 28. ) և զձև խոնարհութեանն ուսոյց աշակերտացն լուա-
նալով զոտս նոցա. և Ասէր օրինակ մի ետու ձեզ. զի որպէս ես
արարի և դուք արարէք ։ Վասնզի առնէր և ուսուցանէր ( Յովհ.

13.

digitised by A.R.A.R.@

Մեկնութիւն երգ երգոց անուանեալ գրեանց Սողոմոնի։ Գլուխ. I. Համար 3։

I3. I3։ Գոր. I. I.) Զի առնէր Քրիստոս հանգոյն արծուոյ, որ առ ՚ի վարժել զերկչոտ ձագս իւր ՚ի թռչիլ. սկսանի նախա-պէս ինքն թռչոտիլ շուրջ զբունովն առաջի ձագուցն. որով վարժեալ այնպէս առնեն և նոքա։ Որպէս և Հայր Աստուած հրամայեաց զմեզ կերպարանակից լինիլ պատկերի որդւոյ իւրոյ (Հռ. 8. 29։) Զի փոխանակ պալատի ընտրեաց ինքեան քարայր իմն առ ՚ի ծնանիլ. փոխանակ օրօրոցի՝ զմսուր. փոխանակ անկողնոյ՝ զխոտ, և զանասուն ընկեր իւր. փոխանակ հրոյ զջերմ շունչ անասնոց. և ծնաւ ՚ի ձմերայնի, և յամսեանն յունվարի, որէ խստագոյն ամիս ցրտոյն. և ՚ի մէջ գիշերի. որում ցուրտն և հողմն էառաւել ըզգալի։ Այս էր օրինակն զոր զկնի քարոզելոյն, զի եկաց ՚ի մերկ աղքատ, ապա ասաց երանի աղքատաց։ Եղաց անդ. ասաց երանի որ լայք այժմ։ Կրեաց զվիշտս. ասաց երանի սգաւորաց. Վշտացեալ. ասաց երանի որք քաղցեալք իցեն։ Վասն որոյ Ամբրոսիոս ՚ի գիրս կուսանաց ասէ, ամենայն հոգի մերձեսցի առ Քրիստոս, զի նա է մեզ ամենայն. եթէ ցանկաս բժշկիլ ՚ի վիրաց. նա բժիշկ է։ Եթէ ջերմութ. տապանաս, նա աղբիւր է։ Եթէ ծանրանաս յանօրէնութեան, արդարութիւն է։ Եթէ կարօտիս օգնութեան, զօրութիւն է։ Եթէ ՚ի մահուանէ երկնչիս՝ կեանք է։ Եթէ երկնից ցանկաս, ճանապարհ է։ Եթէ ՚ի խաւարաց փարախիս՝ լոյս է։ Եթէ կերակրոյ ցանկաս, սնուցիչ է. այսոքիկ են հետք Աստուծոյ։

Օրինակութիւն տայ հարսն զառն Յեսուին զոր ինչ շնորհեաց նմա։

Պատմէ հարսն օրիորդաց՝ յինքեան շնորհեցեալ զպարգևսն փեսային. և թէ՝ վասն էր պատմէ։ Նախ՝ զի ոչ կամի հարսն ապախտ առնել զերախտիս՝ և զսէր փեսային իւրոյ։ Վասնզի Պօղոս պատուիրէ թէ՝ աղաչեմ զձեզ եղբարք ճանաչել զվաստակաւորս ձեր (I Թեսաղ 5. I2։) Բայց մարդիք աշխարհիս զօգուտն անձանց և եթ խնդրեն, և ոչ զՅիսուսի Քրիստոսի (Փիլ. 2. 2I։) Որպէս Յուդայ փոխանակ անթիւ բարերարութեանն իւրոյ, երեսուն արծաթոյ վաճառեաց զնա։ Նոյնպէս դպիրքն և փարիսեցիքն գուն գործէին միշտ հալածել զնա, որոց սակս ասաց թէ՝ հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ. ատելութիւն՝ փոխանակ սիրոյ իմոյ (Սղ. I08. 5։) և Հարսն ոչ կամի այնպէս լինիլ. զի անգէտ և ցուցանք իցէ, զբարերարն ոչ ճանաչել։

Երկ

digitised by A.R.A.R.@

Երկրորդ՝ առ 'ի նախանձ արկանել զայլս. որպէս սրբազանն Պօ-
ղոս 'ի սկզբան աւետարանին՝ մինչ ել 'ի Մակեդոնիոյ. փիլիպեցւոց
եկեղեցւոյն հաղորդութիւն առնելն, և քանիցս անգամ զպէտս իւր
ուղարկելն. մեծաւ շնորհակալութեամբ յիշատակէ (Փլպ. 4. 15.)
Նոյնպէս և այլուրեք գրէ. տացէ տէր Աստուած ողոր-
մութիւն տանն Ոնեսիփորայ. զի բազում անգամ հանգոյց զիս
(2 Տիմ. 1. 16.)

Երրորդ՝ առ 'ի շնորհակալութիւն. որպէս տէր Աստուած,
մինչ ետես զհաւատան Աբրահամու ընդ նմին և զգործն, հրա-
տարակելով ասաց. այժմ գիտացի թէ՝ երկիւղած ես դու յԱս-
տուծոյ (Ծնդ. 22. 12.) Տասն բորոտք սրբեցան 'ի Քրիս-
տոսէ, միոյն միայն շնորհակալ եղև, որ եկեալ անկաւ առ ոտս
տեառն և գոհացաւ զնմանէ (Ղկ. 17. 15.)

Չորրորդ՝ կամի երախտահատոյց լինել. ուստի լուեալ զոր ասէ
տես զաղեղն, և օրհնեա զպարգևիչն (Սիր. 43. 12) կամ թէ՝ զի
մի յանդիմանեսցի նման խուլայելի, և լուիցէ զայն բարբառ թէ՝
ծանեաւ եզն զստացիչ իւր, և էշ զմսուր տեառն իւրոյ. և իմ
զիս ոչ ծանեաւ, և ժողովուրդ իմ զիս 'ի միտ ոչ էառ (Ես. 1. 3.)

Հինգերրորդ՝ կամի զի զփառս իւր ցուցանել նոյա. որպէս
խնկագոյն հարսն հոգւոյն սրբոյն, պատմեաց օրհնութիւն Եղիսա-
բեթի թէ՝ արար ինձ մեծամեծս հզօրն (Ղկ. 1. 46.) և սա-
մարուհին եթող զսափոր իւր, չոգաւ 'ի քաղաքն, և պատմեաց
նոցա թէ՝ եկայք և տեսէք զայր մի, որ ասաց ինձ զամենայն. զոր
ինչ իմ գործեալ էր (Յոհ. 4. 28.) Նմանապէս եօթանասուն և
երկուքն պարծանօք խնդութեամբ և ասեն. տէր և դևք հնազանդին
մեզ յանուն քո (Ղկ. 10. 17.)

Վեցերրորդ՝ պատմեմ ասէ (որպէս ոմն 'ի վարդապետաց) զի
լսցի բերան իմ գովութեամբ, 'ի յաջողմունս՝ որով մխիթարիմ.
'ի յանաջողութիւնս՝ որով խրատիմ. յառաջ քան զլինելն իմ՝ զի
արար զիս. 'ի մեղանչելն իմ՝ զի խնայեաց յիս. ընդ դառնալն իմ՝
զի օգնեաց ինձ. ընդ յարատևելն իմ՝ զի խոստացաւ զպսակն.

Եօթներրորդ՝ զի հրատարակիցէ զառատութիւն բարութեան նորա.
վասնայն գրէ առաքեալն թէ՝ աղաչեմ զձեզ. զի մի ընդունայն
զշնորհսն Աստուծոյ ընդունիլ ձեզ (2 Կր. 6. 1.) Զի Քրիս-
տոս մեռաւ և թաղեցաւ և յարեաւ և երևեցաւ առաքելոյն

անե

digitised by A.R.A.R.@

ամենեցուն. Հուսկ յետոյ քան զամենեսին, իբրև անարգի միոջ երևեցաւ և ինձ. զի ես խակեմ տրուպն առաքելոյն. որ չեմ իսկ արժանի թէ կոչեցայց առաքեալ. զի հալածեցի զեկեղեցին Աստուծոյ I Կոր. 15. 3։ Իսկ և Բեռնարտոս ուսուցանէ թէ՛ ծանիր ով մարդ զի տիղմ ես, մի հպարտանար. և միաւորեալ ես ընդ Աստուծոյ. մի լինիր ապերախտ. զի ոչ գերազանց քան զԱստուած, և ոչ անարգ քան զտիղմն։ Վասնորոյ և հարսն սուրբ եկեղեցի՝ հանգոյն սոյա զեղեալ շնորհս յինքեան՝ պատմէ, և ոչ գաղէ, զի խորհուրդ Թագաւորի բարւոք է ծածկել.
այլ զգործս Աստուծոյ, յայտնել փառօք Տոբ. 12. 7։

Տարաւ զիս արքայ ՚ի տնէնեայ իւր. Թէպէտ երկնաւոր արքայն մեր յամենայն տեղիս է ուրեմն, կարողութեամբ և ներկայութեամբ. բայց յատուկ սենեակ իւր յերկինս է, և ՚ի ներքին կողմ վարագուրին. վասնորոյ ասեմք յերկինս բնակի։ Նախ՝ զի անդ յայտնէ զփառս իւր. և անդ ընտրեալք իւր՝ որպէս թագաւորք. ուստի՝ երկնայինն երուսաղէմ կոչի խորան. սենեակ. և տուն Աստուծոյ Երկրորդ՝ ասի թէ՝ Աստուած յատկապէս է յոմանս տեղիս յերկրի. որում ցուցանէ յատուկ նշանս գործոյ իւրոյ. բստորում Յակոբ նահապետն ՚ի տեսանել սանդուղքն, և տէր ՚ի գլուխ նորին հաստատեալ ասաց. Աստուած է ՚ի տեղւոջ յայսմիկ. աստ է տուն Աստուծոյ Ծնն. 28. 17։ Երրորդ՝ տեսականապէս է ՚ի տաճարս ՚ի բարեգործեալ աղօթատեղիս, որում աղօթեն. զորմէ խօսեցաւ ընդ Սողոմոնի թէ՝ սրբեցի զտունդ զոր շինեցեր՝ դնել զանունն իմ անդ զամենայն աւուրս 3 Թագ. 9. 3։ Չորրորդ՝ յատկապէս է ՚ի յարդարս շնորհօք. զի որ կայ ՚ի սէրն, բնակէ ՚ի յԱստուած. և Աստուած ՚ի նմա բնակի. վասնորոյ կոչի տաճար Աստուծոյ Յով. 4. 16։ 2 Կոր. 6. 16։ Հինգերորդ՝ Աստուած է յաշխարհի որպէս վերակացու և հեղինակ։

Վեցերորդ՝ և է ՚ի հրեշտակս՝ որպէս վայելչութիւն։ Եօթներորդ՝ ՚ի մէջ եկեղեցւոյ իւր տանուտէր ՚ի տան։ Ութերորդ՝ ՚ի հոգւոջ իբրև փեսայ յառագաստի. Իններորդ՝ ՚ի յարդարս որպէս օգնական և պաշտպան։ Տասներորդ՝ ՚ի մեղաւորս իբր արհաւիրք։

Բայց որ ասէ թէ՝ հարսն պատմէ օրիորդացն թէ՝ Տարաւ զիս արքայ ՚ի տնէնեայ իւր. այսինքն առաջի նախահարցն, արդարոցն մար-

գար

digitised by A.R.A.R.@

զարեկին, այլ և հրեշտակային պատմէ, թէ փոխանակ փափկութ
զրախտին, տարաւ զիս փեսայն իմ, 'ի սենեակ երկնից արքայութե.
անելով, ուր եմ ես՝ անդ և պաշտօնեայն իմ եղիցի Յով. 12. 26.
Քանզի ոչ եթէ 'ի ձեռագործ սրբութիւն եմուտ փեսայն հոգւոյս
այլ 'ի բուն իսկ յերկինս յանդիման երևել երեսացն Աստուծոյ
վասն մեր. Եբր. 9. 24. Ջի ջնջեսցէ զամենայն արտօսր յաչաց.
ուր ոչ գոյ մահ, ոչ սուգ, և ոչ աղաղակ, ոչ ցաւք, և ոչ աշխա-
տանք Յայտ. 21. 4. Ուստի յարևելից և յարևմտից, 'ի հիւսիսոյ
և 'ի հարաւոյ եկեսցեն և բազմեսցին 'ի յարքայութեան Աստուծոյ
Ղկ. 23. 29. Ուր իմաստուն կուսանքն ընդ փեսային մտին 'ի
հարսանիսն Մտթ. 25. 10. Վասն այսորիկ պանծայ հարսն թէ՝ ժա-
ռանգութիւն իմ 'ի վեր քան զմեղր և քան զխորիսխ Սիր. 24. 27.
Ջի նախապէս ուխտեալ թէ՝ զժողովուրդ իմ, զորդիսն Իսրայելի
տարայց յերկիր բարի և ընդարձակ. յերկիր՝ ուր բղխէ զկաթն
և զմեղր. Ել. 3. 8. Ջի ուր եմ ես (ասէ) և դուք ընդ իս
լիցիք Յով. 14. 3. և զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ,
և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զայն պատրաստեալ եմ սիրելեաց
իմոց 2 Կոր. 2. 9. և անդ տեսանիցեն զԻսահակ և զՅակոբ,
և զամենայն մարգարէս բազմեալ Ղկ. 23. 28. Վասնորոյ
ասէ հարսն. տարաւ զիս արքայ 'ի սենեակ իւր.

Որպէս տարաւ զՄովսէս 'ի սենեակ խորհրդեան իւրոյ, 'ի լեառն Սինայ, ուր պահեալ զքառասուն տիւ, և զքառասուն գիշեր Ել. 24. 12. Տարաւ և զԵնոք 'ի դրախտն Ծն. 5. 24. Նոյնպէս և զառաջինն եմոյծ անդ. և զՀեղիաս հրեղէն կառօք և երիվարօք վերացոյց յերկինս 4 Թագ. 2. 1. և զՅովսէփ եհան 'ի բանտէն. և կացոյց իշխան 'ի վերայ ամենայն երկրին եգիպտացւոց. Եւ փոքրիկ աղբիւրն եղև գետ մեծ Ծն. 41. 14. Եսթ. 10. 6. Տարաւ և զՂազարոս 'ի գոգ Աբրահամու. և զանկեալ վիրաւորն բարձեալ 'ի վերայ գրաստու իւրոյ. տարաւ 'ի գութ մարդասիրութեան իւրոյ Ղկ. 16. 22. և 10. 34. Տարաւ և զմոլորեալ ոչխարն 'ի վերայ ուսոց իւրոց Ղկ. 15. 5. Տարաւ զՊետրոս 'ի սենեակ պէսպէս շնորհաց 1 Պետ. 4. 10. և զՊօղոս 'ի հաղորդակցութիւն խորհրդոյն և 'ի յերրորդ յերկինս. ուր լուաւ զբանս անճառս 1 Կոր. 4. 1. 2 Կոր. 12. 2. Այլ և զՊետրոս զՅակոբոս, և զՅովհաննէս 'ի

լեառն

digitised by A.R.A.R.@

չեաւն Թաբօր։ և զԱստուածազգեաց մանուկն 'ի գիրկս իւր
Մրկ. 9. 35։ Սոյնպէս և զմանգաղաղենայն 'ի յոտս։ զՅօհան-
նէս 'ի լանջս։ զերկոտասանսն 'ի մերձաւորութիւն։ և զԹովմաս 'ի բա-
ցեալ կողն Աստուածային։ և Գերաղանց քան զամենեսեան
զորբուհի կոյսն Մարիամ, տարաւ 'ի մաքուր սենեակ մայրութե
իւրոյ։ և ինքն փեսայն երկնաւոր խոնարհեալ էջ 'ի սենեակ յար-
գանդի նորին. զոր ոմն Մարգարէ տաճար անուանէ Մղ. 3.
1։ Այսպէս և ամենայն հարսնայեալք, միշտ ցանկան ասելով.
'ի հովանի Թևոց քոց ցնծասցուք Սղ. 62. 9։ Թէ և ոչ կամե-
ցան յիմար մանկունքն Երուսաղէմի Ղկ. 23. 34։

Հարսին պատմեալ օրհնութիւն, և նոցա ասէին։ Ցնծասցուք և ուրախ լիցուք
'ի քեզ։

Այս մակագիր նմանէ առաջնոյն, երբեմն Թէ՝ ասա բանն կր-
կնէ, բայց նման նմա, 'ի լսել օրհնողացն զպատմութիւն հարսին,
Թէ տարաւ զիս արքայ 'ի սենեակ փառաւորութեան. և նոքա սիրահա-
րեալ ասեն։ ( Ցնծասցուք և ուրախ լիցուք 'ի քեզ ) որպէս պատ-
մեցին որդիքն Իսրայէլի հօր իւրեանց Յակոբայ Թէ՝ որդի քո
Յովսէփ կենդանի է. և նա է իշխան երկրին Եգիպտացւոց. զար-
մացաւ 'ի միտս իւր Յակոբ, և արծարծեցաւ ոգի իւր. և ասէ՝
մեծ է ինձ օրս. եթէ արդարև տակաւին կենդանի իցէ որդի իմ
Յովսէփ, երթայց և տեսից զնա մինչչև մեռեալ իցեմ. Ծնդ.
44. 27. Նոյնպէս և օրհնողքն՝ մինչ լուան զպատմութիւն
ուրախութեան հարսին, սկսան ասել՝ ցնծասցուք և ուրախ լիցուք
'ի քեզ։ Քանզի յորժամ փեսայն Քրիստոս, կեանքն մեր, յայտ-
նեսցի, յայնժամ հարսն և օրհնողքն ընդ նմա յայտնեսցին փառօք
Կղ. 3. 4։ Զի որպէս խոստացաւ այնպէս առնէ։ և Յայն-
ժամ ( ասէ ) ցնծասցեն կոյսք 'ի ժողովս երիտասարդաց. և ծերք
խնդասցեն. և դարձուցից զսուգ նոցա 'ի խնդութիւն. և ուրախ
արարից զնոսա 'ի տրտմութենէ իւրեանց Երմ. 31. 13։ Յայն-
ժամ բերանք Ճշմարտից լցցին ծաղու. և շրթունք նոցա գոհութե
Յօբ. 8. 21։ Վասնզի ասէ տէր, ագուցէք դմա պճղնաւոր,
և դիք խոյր մը 'ի գլուխ դորա. և 'ի նոյն քարբառ առ հասարակ
ցնծասցեն. զի դէմ յանդիման տեսցեն զժամանակն՝ յորում
ողորմեսցի տէր։ Վասնզի կեանքն մեր անդ Թագուցեալ է
Քրիստոսիւ 'ի Աստուած Կղ. 3. 4։ Ես. 52. 8։ Կղ.
3.

Մեկնութիւն երգ երգոց անուանեալ Ճանիկն Սողոմոնի. Գլուխ. 1. Համար 3.

3. 3: Ուստի երևի թէ՝ և անտանօր օրհնորդ, Նախահայրքն,
Մարգարէքն, և առաքեալքն. նաև հրեշտակք, և համայն սբք
և արդարք ասեն, ցնծասցուք և ուրախ եղիցուք ի փրկութեան
մերում Ես. 25. 9: Վասնորոյ և Պօղոս գոհանայ զԱստուծոյ
հօրէ. որ կոչեաց զձեզ ասէ, մասն վիճակի սրբոցն 'ի լոյս Կղ.
1. 12: և յայնժամ ամենայն արդարք ուրախակից լինին հե-
թանոսաց փրկութե. և միաբան ցնծան. և սիրակից լինին միմեանց
ստեանցն սիրոյ. այսինքն պատուիրանացն Աստուծոյ. որով աճանին
և զարգանան: և Որքան առաւել, խրախոյս տայ Մարգարէն ասե-
լով. ո՛ւրախ լեր դուստր սիօնի. զի տէր Աստուած 'ի քեզէ.
ածցէ 'ի վերայ քո ուրախութիւնս, և նորոգեսցէ զքեզ սիրով
իւրով. և ուրախ լիցի 'ի քեզ զուարճութե իբրև յաւուր տօնի
Սօփ. 3. 14. Զայսպիսի ուրախութիւնս լուեալ օրհնորդացն
ասեն. և մեք ցնծասցուք և ուրախ լիցուք 'ի քեզ. Զի ընդ քև
հանդերձ՝ յափշտակեսցուք ամպօք ընդ առաջ տեառն յօդս. և
այնպէս յամենայն ժամ ընդ տեառն լինիմք Թղ. 4. 16. և
անտանօր եղանին 'ի ձայն ցնծութեան, խոստովանութե, և 'ի ձայն
բարեկենդանութեան Սղ. 41. 5. Վասնզի յայնմ աւուր, ասէ
Մարգարէն, խորհուրդ իմ ինձ և իմոյն Ես. 25. 9. Զի ոչ
կարէ պատմել զգաղտնի և զթագուցեալ փառս նորա: Զոր
ակն ոչ ետես՝ և ունկն ոչ լուաւ. Յորում պատրաստեաց տէր
զզօհ իւր, և հրաւիրեաց զկոչնականս իւր Սօփ. 1. 7: Ուստի
հրճուէր Եսայի ասելով. ցնծասցէ անձն իմ 'ի տէր, զի զգեցոյց
ինձ զհանդերձ փրկութեան, և զպատմուճան ուրախութեան.
և Դաւիթ ասէ՝ սիրելի են յարկք քո տէր զօրութեց. ցանկայ
և փափագի անձն իմ 'ի գաւիթս քո Ես. 61. 10. Սղ. 83. 1.
Ուրանօր քսանևչորք երիցունքն, դնեն զպսակս իւրեանց առաջի
աթոռոյ գառինն. և չորք կենդանիքն ոչ դադարին տիւ և գիշեր
յասելոյ, սբ. սբ, սբ: և Անտանօր սբք ամենեքեան ուրախ եղիցին,
և ցնծասցեն, և զուարճասցին յուրախութեան իւրեանց Սղ. 67.
3: և Անտանօր առաքեալքն իբրև փեսաւէրք և խօսօղք,
առ ընթեր գառինն. զի մի՛ միայն զիւրեանց վաստակսն վայելի-
ցեն. այլ և որոց պատճառ եղեն փրկութե. և նոցին փրկութն
խնդասցեն. Եւ յայնմիկ ուրախութեան, ասէ Պետրոս, տէր
բարւոք է մեզ աստ լինել: Յայնժամ ցնծութե Թովմաս աղաղակէ

տէր

digitised by A.R.A.R.@

տէր իմ և Աստուած իմ Մատթ. 17. 4. Յով. 20. 28. Յայն-
միկ բերկրութեան Մովսէս կարդայ. տէր Աստուած գթած,
ողորմած, երկայնամիտ և բազումողորմ Ել. 34. 6. և Ամբա-
կում ասէ՝ ես 'ի տէր յուսացայ, ցնծացայց և ուրախ եղէց յԱս-
տուած փրկիչ իմ Ամբ. 3. 18. Վասն այսորիկ մայր որդւոյն
Զեբեդեայ խնդրէր 'ի տեառնէ, թէ երկու որդիք իմ նստցին, մի
ընդ աջմէ քումմէ. և մի ընդ ահեկէ արքայութեան քում Մատթ.
20. 20. Առաջս հրաւիրէ Աստուածահայր կոչեցեալ Մար-
գարէն ասելով. եկայք և տեսէք զգործս Աստուծոյ. Զայսոսիկ

լուեալ օրիորդացն ներքոյէն զհարսն և ասեն.

Ցնծասցուք և ուրախ լիցուք 'ի քեզ. Սիրեսցուք զստինս քո, քան զգինի.

Որպէս արք Բեթուղեայ քաղաքին տեսին զքաջութիւն և զարիութիւն
առաքինոյն Յուդիթայ. խայտալով ընդ նմա, և ցնծալով սկսան
ասել առ նա. դու բարձրութիւն Երուսաղէմի, դու ցնծութիւն
Իսրայէլի. դու պարծանք ազգի մերոյ Յուդ. 17. 10. Այս-
պէս և օրիորդք հարսին ասեն ( Սիրեսցուք զստինս քո եւայլն )
Բայց եթէ ոք աստանօր, ստեամբք իմանայ զստինս փեսային,
որպէս թէ՝ հարսն իցէ զայնոսիկ դրուատօղ՝ սխալի. զի խորա-
գիրն ոչ այնպէս ցուցանէ. որոյ և մեք զհետ երթամք. այլ
որպէս նախ հարսն գովեաց զստինս ողորմութեան և գթութեան
հօր, նոյնպէս և աստ օրիորդք ներքոյէն զստինս հարսին եկե-
ղեցւոյ. որովք իմանամք զհին և զնոր կտակարանսն, աւետա-
րանական և առաքելական մեր մատեանսն. յորոյ բղխեն զկաթն՝
քաղցր վարդապետութեան, և բարի խրատու, առակաւոր
և գեղեցիկ օրինակք նոցին. Որպէս ասէ առաքեալն թէ, եղաք
հեզք 'ի միջի ձերում. որպէս դայեակ մի, որ սնուցանիցէ զման-
կունս I Թես. 2. 7. և թէ՝ իբրև տղայոց զկաթն ջամբեցի
ձեզ 'ի Քրիստոս I Կոր. 3. 2. Իսկ և ստինք հարսին եկե-
ղեցւոյ, համբաւն երկիւղի Աստուածսիրութեան. և վարդա-
պետական խրատն բարեպաշտութեան. այլև ունի զստինս
աղօթից. և Աստուածահաճոյ առատ ողորմութեան. միովն սնու-
ցանէ զորդին, և միւսովն զաղքատս. զի ասէ թէ՝ այս ազգ ոչ ինչիք
ելանէ, եթէ ոչ պահօք և աղօթիւք Մրկ. 9. 28. և թէ՝ զմեղս
քո ողորմութեամբ քաւեսջիր, և զանօրէնութիւնս քո գթով
աղքատաց Դան. 4. 24. Դարձեալ ստինք հարսին, մաքուր և

ուղ

digitised by A.R.A.R.@

ուղղափառ մեծ հաւատոյ. ընդ նմին և բարի գործքն. ըստ այնմ թէ՝ երբ և լուեալ զհաւատոյն ձեր որ ՚ի տէր Յիսուս, և զսէրն որ ընդ ամենայն սուրբս. ոչ դադարեմ ՚ի գոհանալոյ վասն ձեր յիշել զձեզ յաղօթս իմ. Եփ. I. 15։ և տառապեալ այլոց գործովք եր-կուց ըստ նմայլոյն գոլեցաւ. Մտ. 12. 24։ իսկ և տէրն ասէ՝ եթէ ունիցիք հաւատ քան զհատն մանանխոյ, ասասջիք լերինս այսմիկ, փոխեաց աստի անդր՝ և փոխեսցի. Մտթ. 17. 19։ Ըստ որ ասէ Յակոբոս՝ հաւատք առանց գործոց մեռեալ են. Աբրահամ հայր մեր ոչ ապա՞ քէն ՚ի գործոց արդարացաւ. հանել ՚ի սեղան զորդին իւր զիսահակ պատարագ. տեսանե՞ս զի հա-ւատքն օգնեն գործակից գործոց նորա. և ՚ի գործոց անտի հա-ւատքն կատարեցան։ Տեսանե՞ք՝ զի ՚ի գործոց արդարանայ մարդ՝ և ոչ ՚ի հաւատոյ միայն. Յկ. 2. 20. զոր օրինակ ոտեանց անուամբ հռչակեն ասելով. սիրեսցուք զատենս քո՞ որովք զմեզ սնուցեր. զի արդարև են չափաւորեալք սիրոյ և բարութեան. և աղբիւր զովացուցիչ՝ առաւել քան զաղբիւրս անապատին ջրանկան լինելոյ, զոր Մովսէս պատառեաց. իսկ և հարսն զա-ճապանաց արդեանց իւրոց. և այնու ժամանեալ առ փեսայն իւր։ Իսկ՝ զինեաւ իմանամք զայլ ամենայն գործս առաքինութեան. զոր համեմատեալ աղօթից և ողորմութեանց, և կամ հաւատոյ և բարի գործոց և այլոց, որք ՚ի վերոյ գրեցան. որքեն հիմն և գլուխ ամենից առաքինութեանց. զի նոքա պակաս գտանին։ Վասն զի թարց ՚ի վերոյ գրելեացս ոչ ինչ առաքինութիւն գոյ ՚ի գլուխ՝ զի հա-ճոյասցի Աստուծոյ։ Մանաւանդ եթէ զամենայն օրէնս պահի-ցես, և միով իւիք գթիցես, եղեր ամենայն օրինացն պարտական։ Դարձեալ զինեաւ իմանամք զմարմնաւոր բարիսն. և զայն որք ասեն. արդ՝ եկայք և վայելեսցուք ՚ի բարութիւնս որք կան. և վարեսցուք արարածովք. զբաղեալք երբեմն ՚ի մանկութեան. ղեւ-ղես գինեօք՝ և անոյշ իւղովք լցցուք. մի՛ անցցէ առ մեզ ծաղիկ գարնանայնոյ Իմս. 2. 6։ Այլ և ասեն թէ՝ կերիցուք և արբցուք, քանզի ՚ի վաղիւն մեռանիմք. և զայլսն տես անդ Ես. 22. 13։ I Կոր. 15. 32։ և կամ ՚ի այնր մեծատան՝ որոյ ետուն անդք առհամբարանս, խորհէր ՚ի միտս քակել զշտեմարանս իւր, և մեծամեծս շինել. և անդ ժողովել զամենայն բարութիւնս, և ասել ցանձն իւր. անձն իմ ունիս բազում բարութիւնս, համբարեալ ամաց բազ.

digitised by A.R.A.R.@

բազմաց, Հանգիր կեր արբ և ուրախ լեր Ղկ. 12. 16

[illegible]

Օրհնեցէք իմանամք զհրեշտակս. զի որպէս Գաբրիէլ կոչեաց զԴանիէլ այր ցանկալի Դն. 9. 23։ Նոյնպէս և աստ բարբառին զանուն հօրային ուղղութ.։ Զի որպէս հարսնացեալքն Թագաւորաց. անուանին Թագաւորին ըստ գործոյն կոչին Թագուհիք, և ոչ ըստ բնութեան. նոյնպէս և փեսայն Քրիստոս կոչի արքայ և ուղղութիւն. նմանապէս և հարսն կոչեցաւ ուղղութիւն։ Զի որպէս Աստուած է դատաւոր տիեզերաց, նոյնպէս և իշխանք դատաւորք ժողովրդեան. վասնորոյ կոչեցան Աստուածք ժողովրդեան Ել. 22. 28։ Նաև որպէս Աստուած հարկանէ և բժշկէ, նոյնպէս և Մովսէս եհար զՓարաւոն, և դարձեալ բժշկեաց. ուստի կոչեցաւ Աստուած Փարաւոնի Ել. 7. 1։ Վասնայն ասէ Պօղոս, եղերուք նմանօղք Աստուծոյ իբրև որդիք սիրելիք. քանզի արդարն է տէր, և զարդարութիւն սիրէ. և զուղղութիւն տեսանեն երեսք նր. Եփ. 5. 1։ Սղ. 10. 8։ Յաղագս այնորիկ հարսն ասէ, զանձն իմ ուղղեցի առ նա. և ՚ի ծանօթութիւն գտի զնա Սր. 11. 27. և Փեսայն ասէ. անբիծք և ուղիղք՝ կացորդք եղեն ինձ. և թէ՝ երանի այնոցիկ որք ուղիղքն սրտիւք. զի նոքա զԱստուած տեսցեն Սղ. 64. 21. Մտ. 5. 8.

Զի արդարև մեծ է ուղղութի. և զօրաւոր է քան զամենեսեան, ամենայն երկիր աղաղակի ՚ի յուղղութի. և երկինք օրհնեն զուղղութիւն. և ամենայն գործք շարժին և դողան առաջի նորա. և ոչ է ՚ի յուղղութեան անիրաւութի և ոչ մի. Զի ուղղութիւն կայ և մնայ. և զօրաւոր է յաւիտեանս. և կենդանի է. և ունի զիշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. և ոչ գոյ ՚ի նմա ակնառութիւն. և ոչ երբէք փոփոխի. այլ իրաւունս առնէ. և մերժեալ է ՚ի նմանէ անիրաւութիւն և չարութիւն. և ամենայն գործք ուղղութեան հաճոյքն ամենեցուն Ա Եզր. 4. 35. Զայսոսիկ գիտելով Յովսիայ արքայն. պատմէ սբ գիրն թէ՝ արար ուղղութիւն. և գնաց յամ ճանապարհս Դաւթի հօր իւրոյ. և ոչ խոտորեցաւ յաջ կամ յահեակ. վասնորոյ սիրեցաւ ՚ի նմանէ։ Զի այր իմաստուն ուղղէ զգնացս իւր. 4 Թագ. 22. 2. Առ. 15. 21։ Ըստ Դանիէլ ասաց Դարեհի. Աստուած իմ առաքեաց

ըզ

digitised by A.R.A.R.@

զՀրեշտակ իւր, և խցից զբերան առիւծուցն, և ոչ ապականե-
ցին զիս. առաջի նորա ուղղութիւն գտաւ յիս. և առաջի քո
արքայ յանցանս ինչ ոչ արարի Դան. 6. 22. Որոյ և վկայէ լոյս
ծագեցաւ, արդարոյ սրտից եղև ուրախութիւն Սաղ. 96. 11.
և. Սբ վարդապետն Գրիգոր Նարեկացին 'ի 64 գլուխ աղօթիցն
ասէ՝ առ ամենայն բան յամենայնի ուղիղես Աստուած: Զի
գանձէ ուղղոց փրկութիւն, և վերակացու լինի գնացից նոցա
Առկ. 2. 7. Մինչ հիւանդացաւ Եզեկիա, եկաց յաղօթս առ
Տէր, և ասաց. յիշեա՛ Տէր, զի ուղղութեամբ գնացի առաջի
քո: որով ապաքինեցաւ 'ի ցաւոցն. և յաւելաւ 'ի կեանս ամս հն-
գետասան. ասելով թէ՝ առ աչեր քո արարի զկամս քո Ես. 38.
3. և 48. 14. Դարձեալ 'ի մէջ ամենայն կենդանեաց, մարդ
միայն է ուղիղ. և այլք կենդանիք ամենեքեան թիւրք, վայրահակք
և կորագնացք. և ամենեցուն աչք յերկիր հային. և մարդ
միայն ուղիղ յերկինս հայի: Զի ուղղութի մարդկային հասակին
( ըստ ոմանց ) վկայեալ է ուղղութե միտքն, որ բաղձայ դիմել
'ի վեր 'ի յերկնայինսն: Որովք պարտաւորի զհաճոյսն Աստուծոյ
առնել. և ուղիղ լուսով բանականութեան սիրել զԱստուած.
և յայնժամ օրհնել զնա: զի ուղղոց վայելէ օրհնութիւն Սղ.
32. 1: ուստի և հարսն ըստ ուղիղ գնացից իւրոյ՝ ընկալաւ
զանուն ուղղութեան, հանգոյն փեսային. զորմէ ձայնէ Մար-
գարէն թէ, ուղիղ է Տէր Աստուած մեր, և ոչ գոյ 'ի նմա անի-
րաւութիւն: զի ուղիղ էջ յերկնից՝ և զկամս հօր կատարեաց
Սղ. 91. 16: Յօհ. 6. 38. և 'ի վերայ խաչին ուղիղ գտաւ
զ յաջակողմեան և զձախակողմեան աւազակն, մինն յերկինս վե-
րացուցեալ և միւսն յանդունդս տարապարտեալ: Նոյնպէս և
յերկրորդի գալստեան իւրոյ, կացուցանէ զօդիս յաջմէ, և
զայծիս 'ի ձախմէ: միոյն ասէ՝ եկա՛յք օրհնեալք. և միւսոյն՝
երթա՛յք անիծեալք. Մատ. 25. 33. Նոյնպէս և ուղղութ անուա-
նեալ հարսն, միայն պահէ զառաջին և զվերջին պատուէրսն.
զԱստուած և զընկերն սիրելով՝ 'ի յաջողութեան և 'ի ձախող-
ութեան միակերպ կալով: Որպէս և պատուիրէ առաքեալն
Պօղոս թէ՝ ամենայն ուրախութ արժանի համարիջիք եղբարք՝
յորժամ 'ի պէսպէս փորձութեան 'ի մէջ անկանիցիք Յկ. 1. 2.
Այսպէս է ուղղութիւն հարսին. առ որս ասացին օրիորդք, ուղ-
ղու

digitised by A.R.A.R.@

ղութիւն սիրեաց զքեզ։ Վասնզի ուղիղ փեսայն՝ սիրեաց և զուղիղ հարսն զեկեղեցի. Եղկնի բանիցն օրիորդաց, դարձեալ խօսի և հարսն։

Համար ութ։ Սևացեալ եմ ես և գեղեցիկ դստերք երուսաղէմի իբրև վրանն Կեդարու, և իբրև վարագոյրն Սողոմոնի։

Մինչ հարսն ՝ի յօրիորդաց վերաձայնեցաւ ուղղութիւն. պատասխանեալ նոյա ասէ. սևա եմ ես, զի յաւելութիւն է ընտիր արանց, ՝ի տեսանելն զբարձրութիւն պատուոյ փառաց իւրեանց. իսկոյն խոնարհեցուցեալ զինքեանս՝ անարժան զոլ խոստովանի. որպէս Աբրահամ երբ լուաւ զաւետիս ծննդեանն իսահակայ. և բան տեառն առնա, յայնժամ խոնարհեալ ասաց ես հող եմ և մոխիր Ծնն. 18. 27. Նոյնպէս և Մովսէս մինչ կոչեցաւ երթալ առ փարաւոն, պատասխանեալ ասաց, աղաչեմ զքեզ տէր՝ չեմ բաւական, զի նրբաձայն և ծանրալեզու եմ ես Ել. 3. 10. և 4. 10. Այսպէս և Եսայի՝ յորժամ ետես զփառս Աստուծոյ, աղաղակեաց ասելով, վայ է ինձ, ես այր տառապեալ՝ զիարդ կամս հիացեալ, զի մարդ եմ, և պիղծ շրթունս ունիմ Ես. 6. 5. Սմին նման և Երեմիաս մինչ լուաւ ՝ի տեառնէ թէ՝ Մարգարէ ՝ի հեթանոսս եդի զքեզ. ասաց, տէր տէր աւասիկ խօսիլ իսկ ոչ գիտեմ, զի մանուկ եմ ես Եր. I. 6. և գեր քան զամենայն սրբուհի կոյսն Մարիամ. յորժամ հրաւիրեցաւ ՝ի մայրութիւն միածնի որդւոյն Աստուծոյ, խոստովանեցաւ զինքն աղախին տեառն Ղկ. I. 31. Ըստ Աբիգեայ որ խօսեցաւ վասն Դաւթի, և նա իսկոյն յարեաւ, և երկիրպագ ՝ի վերայ երեսաց իւրոց. և ասէ. ահաւասիկ կայ աղախին քո ՝ի ստրկութիւն լուանալոյ զոտս ծառայից տեառն իմոյ I Թագ. 25. 40. Զի խոնարհն մինչ զովի յերեսս՝ ձաղի ՝ի միտս։ Եւ ՝ի սկզբանէ այնպէս ուսաւ հարսն. որ ՝ի դէմս ընդհանուր եկեղեցւոյ, որպէս ՝ի յարմարոյ օրհնեցաւ ՝ի տեառնէ. Աբրահամ եղիցի ազգ մեծ և ՝ի բազում, քանզի գիտէի եթէ պատուիրեսցէ որդւոց իւրոց. և տան իւրոյ յետ իւր պահել զճանապարհս տն, և առնել զարդարութիւն և զիրաւունս Ծնն.՝ 8.18. իսկ և հարիւրապետն, մինչ լուաւ ՝ի տեառնէ թէ՝ ես եկից և բժշկեցից զմանուկդ, իսկոյն պատասխանէր, տէր չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտցես Մտթ. 8. 8. և Պետրոս՝ թէ՝ ՝ի բաց

գնա

digitised by A.R.A.R.@

գնա յինէն տէր՝ զի այր մեղաւորեմ ես Ղուկ. 5. 8. Նման նորին
խօսի և հարսն ընդ որդւոց հրեշտակայն, թէ՝ իբրու դուք կամիք
ընդ իս յնծալ. և սիրել զստոյնս իմ. և խոստովան լինիք թէ՝ ուղ-
ղութիւն սիրեաց զքեզ։ Բայց ծանիրուք, զի սեաւ եմ ես, թէ-
և գեղեցիկ, զի դուք բանիւ էք ստեղծեալք, և մեք ձեռօք
ներգործեալք։ Բայց դիւրահիւծի բնութեան եմք վրձակեալք։
Վասնորոյ սեաւ եմ, զի՝ի տգեղ հողոյ ստեղծայ. և գեղեցիկ՝ զի
ձեռամբն Աստուծոյ արարայ։ Գեղեցիկ՝ զբախտին վայելչութբ.
սեաւ՝ արտաքսմամբ. վասնզի ասէ, դու ատէիր զխրատ իմ,
մերժէիր և յետս ընկէիր զամենայն բանս բերանոյ իմոյ Սղ.
49. 17. Սեաւ եմ զի սկզբնական մեղօք աղտեղացայ. և գե-
ղեցիկ՝ զի աւազանին շնորհիւ մաքրեցայ։ Սեաւ՝ ներգործական
մեղօք. և գեղեցիկ ապաշխարութեան լծոյն. Դարձեալ սեաւ՝
Եւայիւ, և գեղեցիկ Մարիամաւ։ Սեաւ՝ Ադամաւ. գեղեցիկ
Քրիստոսիւ, և որդեգրութեամբ հօրն երկնաւորի։ Սեաւ՝ զի
Ադամաւ ամենեքեան մեռան, և գեղեցիկ՝ զի Քրիստոսիւ
ամենեքին կենդանանան։ Ուստի ասէ Բեռնարդոս՝ որդին Աս-
տուծոյ գայ՝ի հեռուստ առ՝ի հարսնացուցանել ինքեան զեկե-
ղեցի, որոյ Մովսէս եղև առաջնորդ. սակայն ոչ կարաց փոխել
զգոյն նորա։ Բայց Քրիստոս այնքան սիրով ազնուացոյց զնա,
մինչ զի եցոյց նմա զփառս իւր. և զսևութիւն նորա սպիտա-
կացոյց. Ուստի քեզ՝ ով մարդկային հոգի, եցոյց զանձառելի
զփառս, զի արժանասցիս լինել հարսն նորա. յաղագս որոյ
յանկան հրեշտակք հայիլ առ քեզ։ Վասնորոյ ասէ՝ սեաւ եմ
ես և գեղեցիկ. զի հարսն՝ սեաւ է հնութեամբ, և գեղեցիկ՝
նորոգութբ։ Սեաւ Յակոբ ձևօքն Յեսաւայ. գեղեցիկ օրհ-
նութեամբ հօրն։ Սեաւ՝ զի մտակ ցպով էանց յորդանանու և
գեղեցիկ. զի դարձաւ անդրէն երկու բանակաւ։ Սեաւ՝ Նէեման
բորոտութեամբ. գեղեցիկ՝ ապաքինմամբ. Նոյնպէս և մաքսա-
ւորն, սեաւ մինչ եմուտ՝ի տաճարն, գեղեցիկ՝ յելանելն անտի։
Դարձեալ սեաւ եմ ասէ և գեղեցիկ. և այս խրատաբար. զի
հարսն եկեղեցի զարդարեալ՝ի յարդարոց և՝ի մեղաւորաց. որոյ
մինն գեղեցիկ և միւսն սեաւ. Որպէս վերին դասակարգութիւնք
երկնային զօրացն. սեաւ արուսեկին որ ընդ առաւօտն ծագէր
Ես. 14. 12. և գեղեցիկ մարդկան ազգաւ որք ընուն զտեղի
ան

digitised by A.R.A.R.@

անկելոյն Ղկ. 20. 36։ Սեաւ մեղուցեալքն, գեղեցիկ ապաշխարօղքն. սեաւ մարմնով, և գեղեցիկ հոգւով. Սեաւ Կայէնն գեղեցիկ Աբէլ։ Որդիքն Աստուծոյ գեղեցիկ՝ սեայն դստերւոյ մարդկան։ Նոյ գեղեցիկ ընդ Սեմայ և ընդ Աբեթի. սեաւ Քամ։ Թարայ սեաւ, Աբրահամ գեղեցիկ։ Եսաւ սեաւ. Յակոբ գեղեցիկ. Որդիքն Իսրայէլի սեաւ, Յովսէփ գեղեցիկ։ Փարաւոն սեաւ, Իսրայէլ գեղեցիկ։ Կախարդքն Եգիպտոսի սեաւ, Մովսէս ընդ Ահարոնի գեղեցիկ. Սեաւ էմ ասէ, զի բարձաւ 'ի դստերէն Սիօնի ամենայն վայելչութիւնք նորա Ողբ. I. 6։ Որպէս եկեղեցին հեթանոսաց, առորս ասացաւ ոչ ապաքէն թողուլն զխո աւար քեզ զայն ասէ տէր Աստուած քո Եր. 2. 17։ Բայց գեղեցիկ, զի սրբեցան ուխտիւ. իբրև զձիւն սպիտակացան. և իբրև զկաթն զտեցան Ողբ. 4. 7։ Սեաւ կուսապաշտութեամբ և անաւակ վարուք. զի մեղայ և կռոց ծառայեցաք. գեղեցիկ զի 'ի Քրիստոս մկրտեցաք. և աւազանին ջրով մաքրեցաք։ Սեաւ զի անօրէնութեամբ յղացայ, և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ՝ գեղեցիկ՝ զի ցօղեսցես զիս մշտկաւ՝ և սբ եղէց, լուասցես զիս և քան զձիւն սպիտակ եղէց։ սեաւ պատուիրանազանցութեամբ որոց ասէ՝ ոչ՞ ապաքէն իբրև զորդիս եթովպացւոց էք դուք ինձ որդիք Իսրայէլի ասէ տէր Ամով. 9. 7։ Գեղեցիկ հրամանակատարութեամբ, որ ասէ դադարեցէք 'ի չարեաց, ուսարուք զբարիս գործել, և եթէ իցեն մեղք ձեր իբրև զձանձրախարիթ, իբրև զձիւն սպիտակ արարից. և եթէ իցեն իբրև զորդան կարմիր, իբրև զասր սբ արարից Ես. I. 16։ Այսպէս սեաւ հեթանոսական կռապաշտութեամբ. գեղեցիկ Քրիստոսական սբ հաւատով. Վերջապէս երեք մանկունքն 'ի մէջ բորբոքեալ հնոցին համանգամայն սեաւ, և գեղեցիկ։

Դոփէս եբրայեցին ասէ. դստերք կոչին էգ պաւակունք մարդ. որք լինին միշտ շուրջ պնդօքն, և ոչ բաժանին։ Նոյնպէս և հրեշտակք որք շուրջեն վերին Երուսաղէմաւ իբրև դստերք նորին. զի ոչ բաժանին 'ի նմանէ. և Մարգարէքն են դստերք Սինակօկային. և առաքեալքն դստերք Քրիստոսի։ Հայրապետք և վարդապետք. քահանայք և խոստովանահարք, որպէս դստերք և զաւակունք նորոյս սբ եկեղեցւոյս։ առորս զանգատի և հարցն զերկրոյ յանցանաց։ Որպէս 'ի հնումն բողոքք 'ի հեռաստանէ

աղա

digitised by A.R.A.R.@

աղաղակեսցեն Ղկ․ 17․ 12։ Նոյնպէս և Հարսն բողոքէ զոգե-
ղութենէ, և զսուրբ թէ խորհէ, օրինակաւ ծանուցմամբ, ասելով։
Իբրև զվրանն Կեդարու, և իբրև զմորթն Սողոմոնի։ Արդ՝ Կեդարն
որդի Իսմայելի և Հայր Արաբացւոց, որք սեաւ քրձեայ կամ
մաշկեայ վրանաւ շրջէին․ որպէս են այժմոյս ազգն կուրդեաց
և մարաց․ որոց բնակութիւնն միշտ է՝ ՝ի լերինս, և յանապատ
տեղիս․ որք յամառան և ՝ի ձմեռան անդադար ՝ի շրջելն են․ վասն-
որոյ տօթախարշ և ցրտակեղ լեալք, ինքեանք և վրանք իւրեանց
սևացեալ սևանան․ որոց և զինքն համեմատէ Հարսն, ասելով
սեաւ եմ իբրև զվրանն Կեդարու․ որպէս և Դաւիթ վկայաց
անձին իւրոյ․ թէ՝ բնակեցայ ես ՝ի վրանս Կեդարու Սղ․ 119․
5։ Նման աղուաւու կենդանւոյս․ զի Կեդար սեաւ և սրտմութիւն
թարգմանի․ և որքան առայս կամի ասել թէ՝ ՝ի վարկութեան
վայրէն արտաքսեցայ․ և ՝ի պանդխտութեան վայրս բնակեցայ։
Զի և այլուր ասէ, պանդուխտ եմ ես առաջի քո, նժդեհ
և անցաւոր, որպէս ամենայն հարք իմ Սղ․ 38․ 13․ և 118․
19։ Զի ՝ի բնական և ՝ի գրաւորական յօրէնում շրջէի․ և ՝ի ներքոյ
անտառախիտ ծառոց գոհէի, ոչ լուայ և ոչ ունկն եդի․ որ
ասացեր՝ ես տնկեցի զքեզ որթ պտղաբեր ամենևին Ճշմարիտ․
զիա՞րդ դարձար ինձ ՝ի դառնութիւն որթդ օտարացեալ։ Որոյ
աղագաւ ամբաստան եղեր յինէն․ թէ՝ տեսեր զի՞նչ գործեաց
բնակիչն Իսրայելի․ գնաց առանձինն ՝ի վերայ ամենայն լերանց
բարձանց, և ՝ի ներքոյ ամենայն անտառախիտ ծառոց․ և անդ
պոռնկեցաւ Երմ․ 2․ 21։ Իսկ յորժամ յետս չոգայ, և զղջա-
ցեալ ապաշաւեցի, յայնժամ գեղեցկացայ հանգոյն խորանին
Սողոմոնի։ Բայց աստանօր վրան և խորանն զանազանին յիրերաց․
որպէս թէ ՝ի վրանի՝ բնակին լեռնային գռեհիկք և շինականք․
և ՝ի խորանի՝ թագաւորք և իշխանք․ զի այնպէս երևեցուցանէ
հարսն զբան իւր։ Վասնորոյ և վայելէր Սողոմոնի ինքեան յար-
մար․ և արքայութեան իւրոյ արժան խորան կազմել, յորում
բնակէր հանգոյն Ճշմարտին Սողոմոնի տեառն մերոյ, փեսային
հոգւոյ, որոյ եղև հարսն խորան և բնակարան, զի խոստովանեցաւ
զնա՝ փրկիչ աշխարհի, և որդի Աստուծոյ I Յօհ․ 4․ 14։ Այլ
այսուհետև չեմք օտար, և ոչ պանդուխտ, այլ քաղաքակիցք սրբոց
ընտանիք Աստուծոյ Եփ․ 2․ 17։ Ուստի և հարսն ասէ՝ սեաւ

եմ

digitised by A.R.A.R.@

եմ ես և գեղեցիկ։ Սեաւ՝ զի սահական և բեկանուտ մարդ-
կային տկար բնութեամբ զգածեալ է. և գեղեցիկ՝ զի գերէ
յաղթել մարմնոյ՝ աշխարհի՝ և սատանայի. և ընդդէմ կացեալ
նմա ասէ՝ ո՞ւր է մահ յաղթութիւն քո ո՞ւր է դժոխք խայթոց
քո I Կոր. 15. 25։ Սեաւ եմ ես ասէ՝ որպէս Աբէլ նախանձու
եղբօրն. և գեղեցիկ՝ զի արեամբ կարմրեալ Ծնն. 4. 8.
Սեաւ Եղիայ զի հալածեալ յԵզաբելայ. և գեղեցիկ զի ետես
զփառս Աստուծոյ 3 Թագ. 19. 3։ Սեաւ սրբուհին Շուշան
մինչ 'ի մահ դատապարտեալ. գեղեցիկ՝ զի անպարտ գտաւ։
Սեաւ առաքեալքն մինչ գանեցան. և գեղեցիկ զի գնային խնդա-
լով յերեսաց ատենին Գոր 5. 4. Բայց համանգամայն ասէ թէ՝
սեաւ եմ ես՝ և գեղեցիկ։ Սեաւ իբրու յուսահատ տխրութե՛
սակս անագանելոյ փեսային. և գեղեցիկ՝ իսկոյն 'ի գալստեան
նորին յաշխարհ։ Վասնորոյ ասէ՝ Յեսսէածին մարգարէն թէ՝
'ի դարձուցանել տեառն զգերութիւն Սիոնի, եղաք մեք մխիթա-
րեալք. Յայնժամ լցան բերանք մեր խնդութեամբ, և լեզուք
մեր ցնծութեամբ. Սղ. 125. 1։ Զի 'ի ծառայութենէ ելանց
յազատութի. 'ի պանդխտութենէ 'ի քաղաքակցութիւն. 'ի յօտա-
րութենէ 'ի յընտանեկցութիւն. և 'ի յաղախնութենէ 'ի հարս-
նութիւն ստեղծողին իւրոյ։ Վասնորոյ ասէ. որդիք Սիոնի
ցնծասցեն 'ի թագաւորն իւրեանց Սղ. 149. 2. Այլև սեաւ
անցաւոր աշխարհս, և գեղեցիկ յորժամ նա յայտնեսցի նման
նմա լինելոց եմք I Յով. 2. 17։ և 3. 2։ Սեաւ մահուան
ազով մանկունքն Բեդղահեմի. և գեղեցիկ թաթաւեալ կարմիր
արեամբ։ Սեաւ Ստեփաննոս 'ի ժամ քարկոծման. և գեղեցիկ 'ի
նոյն վայրկեան. մինչ փայլէր երեսք նորա իբրև զերեսս հրեշ-
տակի։ Սեաւ Պօղոս տկարութեամբ. և գեղեցիկ զօրութե՛ն
Քրիստոսի 2 Կոր. 12. 9։ Սեաւ մինչ հալածէր զեկեղեցին
Քրիստոսի. և գեղեցիկ յորժամ քարոզէր զՔրիստոս Աստ-
ուած։ Իսկ և սեաւ 'ի գլխատմանն. և գեղեցիկ զի փոխան արեան
կաթն բղխեաց։ Իբրև վրանն Կեդարու, և իբրև զխորանն
Սողոմոնի. այսինքն թելադրութե՛ն սատանայի սևացայ. բայց
ողորմութե՛ն Աստուծոյ և գթութեամբ նորին խորան և տաճար
Սողոմոնի յարմարեցայ. որ է տուն Աստուծոյ, և բնակարան ամե-
նայն Երրորդութեան։ Այսպէս և զայլսն ևս իմաստասիրեա՛։

և

digitised by A.R.A.R.@

Մեկնութիւն Երգ Երգոց անուանեալ Երգոյն Սողոմոնի: Գլուխ. I. Համար. Ե:

և զինչ դարձեալ հարսնացեալք Քրիստոսի, վերաբերեալք ՚ի մի բերան ասեն:

Մի հայիք յիս, զի ես եմ սևացեալ, զանզի ետես հայեցաւ յիս արեգակն: Որդիք մօր իմոյ մարտեան ընդ իս՝ և եդին զիս պահապան այգեստանի, զի զայգին իմ ոչ պահեցի:

Այս երկուց տանց մեկնութիւնքն միապէս իմա: Զի յանցեալ տան՝ օրիորդք փեսային գովեցին զհարսն. և նա պատասխանեալ ասէ զնոսա. սև եմ ես և գեղեցիկ: և Աստանօր վերակրկնէ բանն թէ՝ մի հայիք յիս՝ զի ես եմ սևացեալ: ուստի երևի թէ՝ նախ զիւրական կրից իւրոց կամի պատմել. որպէս նոյն ինքն արքայն Սողոմոն ասէ՝ եմ և ես մարդ մահկանացու, հանգոյն ամենեցուն. ծնունդ հողածին նախաստեղծին. և յորովայնի մօր նկարեցայ մարմին. և զհասարակաց օդն առի ձգեցի. և ՚ի նոյն նմանալիցն յերկիր անկայ. զառաջին բարբառ զնման ամենեցուն նոյն գունակ լացեալ՝ ՚ի խանձարուրս սնայ և ՚ի հոգս Իմաս. 7. I. Նմանապէս և ջնջամաքուր աւետարանիչն գրէ, և ասէ եթէ՝ ասիցեմք մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք, և ճշմարտութիւն ՚ի մեզ ոչ գոյ I Յոհ. I. 8:

Երկրորդ՝ սևացայ ասէ, անձնիշխան կամօք, և ինքնայօժար սրտիւ, որպէս Դաւիթ, սպան զուրիայ. և էառ զԲերսաբէ: և Թուեաց զժողովուրդն 2 Թագ. II. 15: և 24. I: և որպէս անառակ որդին էառ բաժին ընչից հօրն. և գնաց յաշխարհ հեռի, և անդ վատնեաց զինչս իւր. զի կեայր անառակութե՛ ՚Ղկ. 25. 12: և որպէս Պօղոս նախ սևացեալ յանգիտութե՛ և յանհաւատութեան գործով I Տիմ. I. 13:

Երրորդ՝ սևացայ ասէ պատուիրանազանցութեամբ, որպէս նախահայրն մեր: Նոյնպէս և Սաւուղ արհամարհեաց զբան Տեառն. ուստի վերացաւ հոգի Տեառն ՚ի նմանէ, և խեղդէր զնա այս չար I Թագ. 15 23: և 16. 14. Վասնորոյ ասէ՝ Ճանապարհք քո և գնացք քո արարին քեզ զայդ ամենայն Երմ. 4. 18:

Չորրորդ՝ սևացայ ասէ կռապաշտութեամբ, որպէս որդիքն Իսրայելի որք պաշտեցին զձուլածոյ որթն իբրև զԱստուած Ել. 32. 8: Նոյնպէս և ընտիր Թագաւորք նոցունց. որպէս Սողոմոն գնաց զհետ աստարաստայ գարշելւոյ, և զհետ մեղքոմայ ախւքօնացւոյ որդւոյն Ամոնայ: և շինեաց զբարձրաւանդակն

Քա

digitised by A.R.A.R.@

զՔամալայ՝ կուսոյն Մօաբու ՚ի ձեռին Համբերեալ Երուսաղէմ Յեսու. II. 6. Նմանապէս և Մանասէ՝ շինեաց զբարձրաւանդակս զորս կործանեաց Եզեկիաս հայր նորա. և կանգնեաց արձանս Բահաղիմայ. և արար անտառս. և երկիրպագ ամ զօրութեանց երկնի, և ծառայեաց նոցա. և ինքն անցուցանէր զորդիս իւր ընդ հուր, և հմայէր, և հաւահարց լինէր, և դիւթէր, և արար վհուկս և թովիչս. բազմացոյց առնել չար առաջի տեառն. առ ՚ի բարկացուցանելոյ զնա. 2 Մնց. 33. 2. և դեր քան զամենեսին զկնի եկեալքն. որոց սակս ասէ. զոհեցին զուստերս և զդստերս իւրեանց դիւաց Սղ. 105. 37. Որպէս ՚ի վերոյ գրեցաւ. զի մատուցանէին մողոք կռոյն զմանկունս իւրեանց. Զորմէ պատմի թէ՝ կուռքն այն էր ձուլածոյ պղնձեայ, նստեալ յաթոռ պղնձի, և գլուխ նորա էր իբրև զգլուխ եզին. և ՚ի վերայ նորա թագ ոսկեղէն, ակամբ զարդարեալ, և բազուկք իւր տարածեալ առ ՚ի գրկել. իսկ ՚ի ժամ զոհին յորժամ բորբոքէին զհուր ՚ի ներքոյ նորա. և ջեռուցանէին զնա. տային զորդեակս մանկունս ՚ի գիրկս նորա. և զի մի լսելի լինիցի ձայն գուժի մանկանցն, առ ժամայն փող հարկանէր և թմբուկ և պարէին շուրջանակի. և լինէր դղրդումն երաժշտական երգոց. և գափին ամին: մինչև տղայն տոչորեալ ՚ի տապոյ անտի, դառնայր ՚ի ծուխ.

Հինգերորդ՝ սեպական երբեմն պոռնկութեամբ ընդ դստերացն Մօաբու. մանաւանդ որքան գարշելի սնոտի էր գործ Բենիամինայեցւոյն ընդ կնոջ ղևտայեցւոյն. յաղագս որոյ ասէ՝ շաղախեցաւ երկիր յարենէ նոցա. և պղծեցաւ ՚ի գործոց նոցա Դտր. 19. 22. Սղ. 105. 35. Կանխայորդիկ առաքեաց Աստուած զՄարգարէս առ ՚ի խրատել, և ոչ լուան նոցա և ոչ դարձան ՚ի մոլորութենէ իւրեանց. Զի ասէ Յովէլ. 2. գլ՝՝ 19 գլուխ թէ՝ զո՞ւրէ Խաւելն զօգտակար իւրայ յորժամ լսօղքն ամենեքեան համաձայն միաբանին ՚ի վատթարն կոյս. Ուստի բողոքեն և գանգատեն Մարգարէքն թէ՝ յոտից մինչև ցգլուխ չիք առողջութի. զի ՚ի մեծամեծաց մինչև ցփոքունս ապականեալեն մեղօք Եսա. I. 6. և ո՛չ գոյ ճշմարտութի. ո՛չ ողորմութիւն, և ո՛չ գիտութի Աստուծոյ ՚ի վերայ երկրի. այլ անէծք, և ստուիք, և սպանութիք և գողութիւնք, և արիւն ընդ արիւնս խառնեն Ովս. 4. 1. Այսու-

օրի

digitised by A.R.A.R.@

Մեկնութիւն երգ երգոց անուանեալ քանիցն Սողոմոնի։ Գլուխ. I. Համար 5.

օրինակաւ իմա զսեւութիւն հարսին. որ ասէ. մի՛ հայիք յիս, զի ես եմ սեւացեալ։ Ըստ այսմ թէ՝ մի՛ կոչէք զիս Նոյեմի, որ է գեղեցիկ. այլ կոչեցէք զիս մարա, որ է դառնացեալ. զի դառնացոյց զիս բաւականն յոյժ. Հռութ. I. 2. Նոյնպէս և նոքա գիրացան և պարարտացան, և անցին զբանիւք իմովք 'ի չարութե Երմ. 5. 28. և Օր. 32. 18. Թէ և զկնի զղջացեալք գեղեցկացան։ Որպէս ծանուցանեն առաքելքն թէ՝ երբեմն հեթանոսքն էիք, և յոյս ինչ ոչ ունէիք, և անաստուածքէիք յաշխարհի. իսկ այժմիկ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի մերձաւորք եղայք արեամբն Քրիստոսի. Զի էիք իբրև զոչխարս մոլորեալս. այլ այժմ դարձայք առ հովիւն և տեսուչն հոգւոց ձերոց Եփ. 2.
11. I Պետ. 2. 25.

Եւ որ ասէ՝ մի՛ հայիք յիս, կամի ասել թէ՝ մի՛ խորհիք, և մի՛ մտածէք, թէ վասն իմ սեւացայ. և ցուցանէ զպատճառն թէ՝ խեթիւ հայեցաւ յիս արեգակն։ Զի խեթիւ հայելն է կողմնակի հայեցումն, և ընդ ակամբ հայելն. որպէս արեգակն կողմնակի հայեցմամբ տապով իւրով կիզէ և սեւացուցանէ զգլխակսն իւր։ Եւ այսու հայեցմամբ թագաւորք, և մեծամեծ բռնաւորք և իշխանք խոյսեն վիրաւորեն՝ եպատժեն զստորադրեալս իւրեանց. Արդ՝ արեգակամբ իմանամք զԱստուած, և խեթիւ հայիլ նորին, նախ զանցաւորս պատժելն, յորժամ վրիպիմք 'ի սուրբ պատուիրանաց նորա. որպէս վարեաց զԱդամ 'ի դրախտէն. որոյ սակս ասէ. վասն մեղաց առաւել մի տրտմեցուցի զնա, հարի զնա, և դարձուցի զերեսս իմ 'ի նմանէ Եսա. 57. 17. Երկրորդ՝ խեթիւ հայի՝ վասն ցուցանելոյ զզօրութիւն իւր, որպէս առ փարաւոն ասէ՝ վասն այսորիկ գրգռեցի զքեզ. զի 'ի քեզ ցուցից զզօրութիւն իմ, և պատմեսցի անուն իմ ընդ ամենայն երկիր Ել. 9. 16. Հռմ. 9. 17. Զի յառաջնում նուագին, ներելով ոչ կամեցաւ պատժել. և զայս ներելն եղև պատճառ խստութե սրտին փարաւոնի։ Վասն այսորիկ և որքան եղև Աստուծոյ երկայնամտութիւն հրաշալի. նոյնպէս եղև և կորուստն փարաւոնի սքանչելի. Երրորդ՝ խեթիւ հայի զանցաւորութ վասն փառաց իւրոց, զի այնու փառաւորեսցի, որպէս հիւանդութիւն Ղազարու. մահն և յարութիւն նորին Յով. 11. 4. Չորրորդ՝ վասն յայտնելոյ զգործս Աստուծոյ, որպէս զ'ի ծնէ կոյրն լուսա-

ւոր

ճորեայ, Յով. 9. 3. Հինգերորդ՝ առ ՚ի հաստատել զերկ-
միտս, և սանձել զհպարտութիւն մտաց մարդկան. որպէս Պետ-
րոսի Մտ. 14. 30. Յով. 18. 25. Վեցերորդ՝ առ ՚ի յետս
քարշել զմարդ ՚ի մոլի գնացից իւրոց՝ համգոյն Պօղոսի Գոր.
9. 4. Եօթներորդ՝ խեթիւ հայի, առ ՚ի փորձել զհաւատար-
մութիւն ծառայի իւրոյ. որպէս Յոբայ Յոբ. I. 8.

Երկրորդ՝ արեգակամբ իմանամք զաւետարանն սէր, և խեթիւ հայիլ նորին, զի ոչ հարկելով կոչէ զմեզ, այլ յորդորելով. և ոչ բռնաբարելով, այլ ողոքելով. Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ. և եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն իւր, և բարձցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ Մտ. 8. 34. Նոյնպէս և առաքեալքն գրեցին առ եղբարս ոմանս յԱնտիոք, և ՚ի Սիւրիա, և ՚ի Կիլիկեայ ձեռն Բառնաբայ և ձեռն Պօղոսի թէ՝ հաճոյ թուեցաւ հոգւոյն սրբոյ և մեզ. մի ինչ աւելի բեռն դնել ձեզ. բայց միայն ՚ի կարևորացս յայսցանէ ՚ի բաց կալ ՚ի զոհելոց կռոց, և յարենէ, և ՚ի հեղձուցելոց, և ՚ի պոռնկութենէ Գոր. 15. 25. և Պօղոս գրէ՝ աղաչեմ զձեզ եղբարք գթութեամբն Աստուծոյ, պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի սուրբ, հաճոյ Աստուծոյ. Հռմ. 12. I. Իսկ և զկնի բազմաց բանից միով բանիւ վճարէ բերանով մարգարէին թէ, եթէ ախորժեսջիք և լուիջիք ինձ, զբարութիւնս երկրի կերիջիք. ապա թէ ոչ կամիցիք լսել ինձ, սուր կերիցէ զձեզ Եսա. I. 19. Արդ եթէ ոք զայս ՚ի դիմաց Եբրայեցւոց առեալ ասէ թէ՝ խեթիւ հայեցաւ յիս արեգակն, ուրեմն ասասցեն թէ՝ մեք ոչ կամեցաք տեղեկանալ և գիտել զժամանակ գալստեան Մեսիային. լաւնորոյ մնասցէ մինչև լրումն հեթանոսաց մտցէ, և ապա ամենայն Իսրայէլ կեցցէ.
Հռմ. II. 25.

Երրորդ՝ արեգակամբ իմանամք զսատանայ, թշնամին մերոյս բնութեան. որ իբրև զառիւծ գոչէ, շրջի և խնդրէ թէ՝ զո կլանիցէ I Պետ. 5. 8. Զի իբրև թշնամի պաշարելով զփակեալս ՚ի պարսպի լրտեսէ, և փորձէ թէ՝ արդեօք իցէ մասն ինչ պարսպաց տեղի մտից, որով սպրդի ՚ի ներքս մատուցանէ աչաց զգեղեցիկ պատկերս, և զդիւրասահ հեշտալիս. զի տեսութեամբ եղծանէ զողջախոհութիւնս. Զունկն փորձէ երաժշտական

եղա

digitised by A.R.A.R.@

եղանակաւ, զի լռելով զձայն քաղցր հնչման՝ լուծցէ և կակղացուսցէ զքրիստոնէական զօրութիւնն. Զլեզուն գրգռէ նախատանօք. զձեռս անիրաւ բաղախմամբ և լիրբ շարժմամբ, զի զըմպարտօղ առնիցէ: Հակադրէ զանիրաւ շահս զի զհոգիս ըմբռնիցէ դրամով: Թեւացուցէ զորոգայթաւոր Թռչակս: Խոստանայ զերկրաւոր պատիւս, զի բարձցէ զերկնաւորն. Ցուցանէ զսուտն զի եղծցէ զճշմարիտն: և մինչ գաղտաբար չկարէ պատրել, յայնժամ լուծլեօք սպառնայ: Վասն որոյ հարսն ասէ Թէ՝ խեԹիւն հայեցաւ յիս արեգակն: Որպէս Սամուէլը ընդակամբ հայէր Դաւիթի I Թագ. 18. 9: Նոյնպէս և նա սաստիկ տապով նախանձու հայէր առնախահարս մեր. և ըստ որակութեն խորոյ սևացոյց, և խորշակահար արար զբողբոջ և զծաղիկ նորին գեղեցկութեան Ծնդ. 3. 7: Ցաղագս որոյ և սաղմոսերգն աղօԹէ վասն հարսին եկեղեցւոյ ասելով. տէր պահեսցէ զքեզ. զի արեգակն ՚ի տուէ քեզ մի՛ մեղիցէ. և մի՛ լուսինն ՚ի գիշերի Սղ. 120. 5: և փեսայն հոգւոյ զբուսեալն յապառաժի ՚ի ծագել արեգական ցամաքել ասէ. Մտթ. 4. 6: Այնպէս վարի և ընդ հարսին եկեղեցւոյ, երբեմն անձրևօք փորձութեան. երբեմն գետովք ձախորդութեան. և երբեմն հողմով հալածանաց: Բայց նա ամենիցս անի՝ գեղեցիկ համբերուԹբ, հաստատ հաւատով աներկբայ յուսով և ջերմեռանդ սիրով. զի հիմն ՚ի վերայ վիմի հաստատեալ է Մտթ. 7. 25: Զորրորդ՝ արեգակամբ իմանամք զմարդիկ ներկայ կենիս. որք հանապազ խեԹիւն հային հարսին եկեղեցւոյ, որպէս եղբայր՝ եղբօր. և քոյր՝ քեռ. և որպէս Կայէն՝ Աբելի. և Եսաւ՝ Յակոբայ: Զի որպէս ասէ Ոսկ. եԹէ ոք վարի խոնարհուԹբ՝ ասեն կեղծաւորէ: ԵԹէ զբօսանօք հրճուի՝ ասեն որկրամոլէ: ԵԹէ համբերօղ լինի՝ ասեն երկչոտէ: ԵԹէ պարզամտուԹբ երևի՝ ասեն յիմարէ: ԵԹէ խոհեմուԹեամբ գործէ՝ ասեն նենգաւորէ. և այլ զայսպիսիս չարաբանեն մարդիկ աշխարհիս. և որքան առաւել՝ տես զինչ ասէ իմաստուԹիւնն Աստուծոյ հօր. եկն Յօհաննէս՝ ոչ ուտէր, և ոչ ըմպէր՝ ասէին դև գոյ ՚ի նմա. եկն որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ ասեն այր կերօղ և արբեցօղ եւայլն,

Որդիք մօր իմոյ մարտեան ընդ իս: Որդիք մօր անուանէ զհերձուածս

խաւարայինս որ 'ի միոյ արարչէ եմք ստեղծեալք. որպէս թէ 'ի միոյ մօրէ ծնեալք. միմեանց ապստամբ, և միւսն 'ի խնամս ծնողին. որպէս երէց՝ և անառակ կրտսեր որդին. և մարտնչին՝ նախանձիւ փառացն և պատուոյն, և հակառակ կալ նմա, որպէս խորամանկ և նենգաւոր, չարագոյն հակառակորդն մեր, որ եղ յերկինս՝ զպատերազմն. 'ի գլխաւորն՝ զդաւաճանութիւն. 'ի մէջ նախկին ծնողացն զատելութիւն. և յամենայն գործս մեր ամենեսեայ զորսն. Վասնզի 'ի կերակուրս եդ զորկրամոլութիւն. 'ի ծննդեանն զբղջախոհութիւն. 'ի ներ կրթութե զթուլութիւն. 'ի կենդաղաւարութեան՝ զնախանձ. 'ի կառավարութեան զագահութիւն. 'ի յանդիմանութեան և 'ի յուղղութեան՝ զբարկութիւն. 'ի յառաջնորդութեան՝ և 'ի յիշխողութեան՝ զհպարտութիւն. 'ի սրտի եդ զչար խորհուրդս: 'ի բերանոջ զստախօսութիւն. 'ի յանդամս զանիրաւ գործս. 'ի հոգևէն չարժ է առ թիւրս. 'ի նոցելն յերազի՝ յուշանէ զգարշելիս. 'ի կնճութեան՝ չարժէ անպատկառս. և 'ի տրամութեան ձգէ 'ի յուսահատութիւնս. Ուստի վշտահամբերն գանգատի, թէ՝ զճանապարհս իմ պատեցին դարանակալք Յոբ. 19. 12 և Դաւիթ ասէ՝ թագուցին ամբարտաւանք զորոգայթ Սղ. 139. 6. և մարտնչէր ընդ Միքայելի և ընդ հրեշտակս նորա. զի ասասէր հարսին արքայ, թէ՝ յորժամ ծնցի զորդին կլցէ զնա. Յայտ. 12. 4. և պատերազմէր ասկս Մովսեսեան մարմնոյն Յուդ. 1. 9. Այլև մարտեաւ ընդ փեսային հօգւոյ. և ընդ առաքելոյն սորոյ. Ապա ընդ սրբազանին Պօղոսի Ղկ. 4. 3. և 22. 31. 2 Կր. 12. 7. և զայս աղէտ առդիպեցաւ հարսին որոյ աղաղակէ ասէ որդիք մօր՝՝.

Երկրորդ՝ հոգի և մարմին, որքեն իբրու երկու որդիք մօր. բայց մարմին յանկայ հակառակ հոգւոյ, և հոգի հակառակ մարմնոյ Գաղ. 5. 17. Զի զգայութիւնք մարմնոյն յարաժամ մարտնչին ընդ հոգւոյն.

Երրորդ՝ որդիք մօր անուանին ախտք՝ որք ծնանին 'ի մտաց, 'ի յստացումն և ցանկութիւնք. զորմէ ամոլածին ասէ թէ՝ մեղք մեր հակառակ կային մեզ Եր. 19. 12: Ուստի բողոքէ և Պօղոս թէ՝ տեսանեմ յայլ օրէնս յանդամս իմ զինեալ հակառակ օրինաց մտաց իմոց. և գերեալ զիս օրինօքն մեղաց որքեն յանդամս իմ Հռմ. 7. 23.

Չոր

digitised by A.R.A.R.@

Չորրորդ՝ մարտեան ընդ խա ասէ, որպէս Յանէս և Յամբրէս ընդ
Մովսեսի 2 Տիմ. 3. 8։ Որդիք մօր իմոյ ասէ. որպէս տասն
ցեղքն խորշելի որք ՚ի Սամարիայ մարտեան ընդ Յուդայ տանն
Դաւթի. և ընդ Երուսաղեմի կռուոյ պաշտեցոլ. 3 Թագ. 12.
28։ և որդիքն խորշելի մարտեան ընդ Մովսեսի և ընդ Ահա-
րոնի. Թէ՝ ընդէ՞ր ածիք զժողովուրդս տեառն յանապատ կոտորել
զմեզ և զանասունս մեր Թուոց 20. 4։ Մարտեան ընդ Դաւթի
կամելով քարկոծել զնա։ և երբեմն կաղք և կոյրք ընդդէմ
կային առ ՚ի չթողուլ զնա մտանել ՚ի Սիոն I Թագ. 30. 6։
2 Թագ. 5. 6։ Մարտեան ընդ Զաքարիայ որդւոյ Բարաքեայ, և
յարեան ՚ի վերայ և քարկոծեցին զնա ՚ի սրահի տան տեառն
2 Մնաց. 24. 20։

Հինգերորդ՝ Աքայաբ և Յեզաբէլ մարտեան Եղիայի 3 Թագ.
19. I. և Մանասէ ընդ մարգարէիցն. և ելից Երուսաղէմ
արեամբ նոցին. սղոցեաց և զԵսայի։ 4 Թագ. 2. 19։ Վասն
այսորիկ ասէ՝ Երուսաղէմ Երուսաղէմ որ կոտորես զմարգարէս
և քարկոծ առնես զառաքեալս առ քեզ Մատ. 23. 37։

Վեցերորդ՝ դպիրքն և փարիսեցիքն մարտեան ընդ վէմսային
եկեղեցւոյ Յով. IO. 24։ Հիմենէս և Աղեքսանդրոս դարբին
ընդ Պօղոսի I Տիմ. I. 20։ և 2 Տիմ. 4. I4։ և Դիոտրեփէս
շատախօսութեամբ ընդ Յովհաննու I Յով. I. IO։ Քահանայք
և իշխանք տաճարին ընդ առաքելոյն։ Զի ուր և կամէին մտա-
նել առ ՚ի հարսնացուցանել զեկեղեցիս Քրիստոսի. անդ
դիմէին հրեայքն բաժանել զհարսն ՚ի փեսայէն Գործ. 4. I։ և
I3. 5։ I4. I8։ և I7. 5. I3։ Զորոյ և Պօղոս պատմէ,
Թէ արգելուին զմեզ խօսել ընդ հեթանոսաց. Թես. 2. I6։

Եօթներորդ՝ և ներկայ կենիս յարաժամ զայս առնեն բաղումք.
խեթիճնային և մարտնչին. որպէս հրեայք և նոյապիսի անզգամք
ընդ Քրիստոնէից. և յոյնք ընդ հայոց և ընդ լատինացւոց. և
լատինք ընդ յունաց. և ՚ի մէնջ հեստելոց կարգաճերգն ընդ
մեզ: որք ՚ի մէնջ ելին, այլ ոչ էին ՚ի մէնջ. զի եթէ ՚ի մէնջ
էին՝ ապա առ մեզ մնային. այլ զի յայտնի լինիցին. եթէ ոչ էին
ամենեքին ՚ի մէնջ I Յով. 2. I9։ Զի խակապէս անլրեալ և
անսխալ որդարև նոքա են, քան ասից առաքելոյն որք իբրու
ունին զկերպարանս Աստուածպաշտութեան, և ՚ի զօրութենէ
անտի

անտի նորա ուրացեալքն· քանզի 'ի նոյանէ են որք մտանեն տանէ 'ի տուն և գերեն զկանայս շեղջակուտեալս մեղօք· և վարեալս 'ի պէսպէս ցանկութիւնս, և հակառակին Ճշմարտութեան 2 Տիմ. 3. 5: և պատճառեն չերթալ յեկեղեցիս հայոց· և ոչ լսել անտանօր զքարոզ և զպատարագ· զի մի՛ յանկարծ հմտացեալք մերոյս Ճշմարտութեան, և տեղեկացեալք նոյին ստութեանն, ատեցուսցեն յուռականէ իւրեանց· և ինքեանք մնասցեն սովելով 'որպէս շունք, և շրջեսցին զքաղաքաւ Սղ. 58. 15: և զայլսն տեսս 'ի հայել Ճշմարտութե գրգռոց մերում:

Բայց որ ասէ· եդին զիս պահապան յայգեստանին, զի զայգին իմ ոչ պահեցի:

Այն է որ ասէ, և եդ զնա 'ի դրախտին գործել և պահել· այսինքն գործել զարդարութի և պահել զպատուիրանս տեառն· և ոչ պահելովն զրկեցաւ 'ի հայրենի փառացն· ըստ արքունական մարգարէին, մարդ 'ի պատուի էր և ոչ իմացաւ Սղ. 48. 12: Ուստի առաքեցաւ յագարակ արածել զխոզս Ղկ. 15. 15: Զորս հարսն այգի անուանէ· զի յիւր վայելչութ այգւոյն ոչ մնայ· այժմ զարտաքսեալս խողկուն այգի կոչէ· Թէպէտ սակս ոճի չարադրութեան՝ բանն յետ և յառաջ դնէ, որպէս սովորութի է սուրբ գրոց: Բայց յայտ անտի է· զի մինն յոգնակի առնու, այգեստան ասելով· և միւսն եզակի· որով ծանուցանել կամի, թէ՝ զայգին իմ ո՛չ պահեցի, որում եդ ինձ պահապան արարիչն իմ Աստուած: Վասնորոյ խռովեցաւ յինէն և արտաքսեաց զիս անտի: Ուստի տարագրեցայ յաշխարհ հեռի· և իշխան աշխարհին այնորիկ եդ զիս պահապան այգեստանեաց իւրոց· զի զայգի հոգւոյ իմոյ ո՛չ պահեցի սրբութեամբ, որպէս և որդիքն Իսրայէլի զայգի Աստուածպաշտութեան սնոտիական ո՛չ պահեցին· այլ զնոյին զհետ կռոցն հեթանոսաց· և ծառայեցին նոցա, և զմեհեանս նոցին պահեցին:

Յետոյն հարսն ասէ: Պատմեա՛ ինձ զոր սիրեաց անձն իմ. ո՞ւր հովուեսցես ո՞ւր հանգուցանիցես 'ի միջօրէի. մի՛ գուցէ լինիցիմ իբրև զշրջեալն 'ի հօտս ընկերաց քոց:

Խորհրդական հարսն եկեղեցին, կամելով խնամել զմխեայսն կապաւանի խոստացեալս յինքեան, որպէս և Պետրոս հարցանէր, տէ՛ր ահաւասիկ մեք թողաք զամենայն, և եկաք զկնի քո, արդ զի՞նչ լինիցի մեզ. Մատթ. 19. 17: Նոյնպէս և Դաւիթ հարցանէր ցարսն Սաւուղայ թէ՝ արքայ զի՞նչ առնիցէ առն՝ որ հարկանիցէ

զայլ

digitised by A.R.A.R.@

դայլայլելին զայն I Թագ. 17. 26։ Նման նոյա և հարսն աղաչէ
զփեսայն, թէ դու ասայեր՝ սիրեսցես զտէր Աստուած քո յա-
մենայն սրտէ քումմէ Երկ. Օր. 10. 12։ Եւ արդ ես զքեզ սիրեցի.
և 'ի քեզ հաւատացի։ Զի ասայեր՝ որ սիրէ զիս, սիրեսցի 'ի
Հօրէ իմմէ. և որ հաւատայ յիս՝ ընկալցի զկեանս յաւիտենա-
կանս։ Վասնորոյ աղաչեմ պատմեա ինձ. զի վասն քո մեռանիմ
զօրհանապազ. և միշտ կամ 'ի նեղութիւնս, 'ի վիշտս, 'ի չար-
չարանս, 'ի գանս, 'ի բանտս, 'ի խռովութիւնս, յաշխատութիւնս,
'ի հսկմունս՝ և 'ի պահս 2 Կոր. 6. 4։ Մանաւանդ ետուր ինձ
խայթ մարմնոյ հրեշտակ սատանայ կռփել զիս. Որովք սեպայց
2 Կոր. 12. 7։ Արդեմն պատմեա ինձ ո՞ւր հովուես զհարսն քո.
արդե՞օք 'ի վայրի դալարւոյ. թէ յայլ ուրեք անարդ տեղւոջ. 'ի
ջուրս հանգստեան, թէ 'ի յանկոխ յանապատի։ Քանզի խոստա-
ցար, եթէ ոք ծարաւի իցէ, եկեսցէ առ իս և արբցէ։ Նաև
ասայեր ես եմ հովիւ քաջ Յով. 7. 37։ և 10. 14։ Իսկ և
մարգարէն պատմէ թէ՝ նա իբրև հովիւ մի հովուեսցէ
զխաշինս, և բազկաւ իւրով ժողովեսցէ զգառինս. և 'ի ծոց
իւր կրեսցէ զնոսա. և մխիթար լիցի յղեաց. Ես. 40. 11։ և
կամ ո՞ւր հանգուցանես 'ի միջօրէի։ Որ հրամայեցեր թէ՝ եկա՛յք
առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից
զձեզ. Մատ. 11. 28։ և Այլ ումն խրախոյս տայ հարսին ասելով.
հովանաւորեսցի ընդ թևովք նորա 'ի սօթում. և 'ի ներ փառաց
նորա հանգիցի Սիր. 14. 27։ Իսկ միջօր ասէ՝ նկատմամբ նախ-
կին գալստեան փեսային յաշխարհ. Զի որպէս միջօրնէ պայծառ-
ծամ տունջեան. նոյնպէս և գալուստ փեսային հոգւոյ եղև
հաւատացելոց օր պայծառ. զի որ նստէաք 'ի խաւարի, տեսաք
զլոյս մեծ Ես. 9. 2։ Զի լոյս եկն յաշխարհ Յով. 8. 12։ և
9. 5։ Իսկ և առաքեալն ասէ՝ յորժամ հաւատացաքն գիշերն
մերձեցաւ, և տիւն մերձեցաւ. 'ի բաց արասցուք այսուհետև
զգործսն խաւարի. և զգեցցուք զզէնն լուսոյ, իբրև 'ի տունջեան
զգաստասցուք շրջեսցուք Հռոմ. 13. 11։ և Որպէս 'ի միջօրէի սաստ-
կանայ տապ արևոյն, և ջերմութիւն նորին նեղէ զմարդիկ,
նոյնպէս և 'ի գալստեան միւսին Յիսուսի՝ սաստկացաւ տապ
նախանձու հրէից և հեթանոսաց, որք յարուցին հալածումն
մեծ 'ի վերայ հարսին 'ի Քրիստոս հաւատացեալ եկեղեցւոյն

Գործ.

digitised by A.R.A.R.@

Գոր. 8. I. Որպ Ներոն. Աւրելիոս, Դիոկղետիանոս. Մաքսիմի-անոս, Յուլիանոս ուրացողն, և Վաղերիանոս ալխասական, և Մար-կիանոս քաղկեդոնական, նոյնպէս և այլք բազումք, որոց տապ նախանձուն իբրև զջերմ արևայրել և տապալել կամեցան զմա-քուր հարսն մեր զեկեղեցի. բայց յետնեալ մնային. զի խաղաւել ոչ կարացին մինչ յայժմ. և ո՛չ զկնի, մինչև ցերկրորդ գալուստ փեսայի նորին. Զի 'ի վերայ վիմի հաստատեալ է. ըստ խոստովա-նութեան իւրոյ թէ, հաստատեա 'ի վերայ վիմի զոտս իմ, և

ուղղեա զգնացս իմ Սղ. 39. 4.

Այլև միջօրէիւ իմանամք զկրկնակի գալուստ փեսային հոգւոյ. յորում աւուրէ լոյս անստուեր, և օր աներեկ. յորում եղանի երկինք նոր, և երկիր նոր. և ո՛չ երևի անդ գիշեր. և ո՛չ լինի պէտք ճրագի. և ոչ լուսոյ արեգական. զի տէր Աստուած լուսաւորէ զնոսա Յայտ. 21. I. և 22. 5. և Որպէս հովիւք զխաշինս յառաւօտու ապա հովլ ժամու մինչ ցկէս օրն արածեն. և յորժամ տապ արևուն սաստկանայ, ջուրք և խոտք ջերմանան, յայնժամ տարեալ 'ի հովանաւոր տեղիս հանգուցանեն առ 'ի որոճալ զխոշոր կերակուրն. Նոյնպէս առնէ և քաջ հովիւն մեր Քրիստոս երկնաւոր փեսայն. Քանզի այժմիկ 'ի վայրի դա-լարոյ արածէ զխաշինս իւր, այսինքն 'ի մէջ սիրոյ պատուիրանաց, և պաղպաջուն ջրոյ պարգևաց. և հոգւոյն շնորհաց. մինչ ցկատարել ծագումն ճշմարտի արեգական. ըստ օրինակի միջօրէի. և ապա յերեկոյեան պահու յաւուրն կատարածի ժողովէ 'ի փարախ իւր զընտրեալսն. զի անտէն ժողովեալ զառաքինութիւն (ըստ օրինակի խոտոյ) որոճայցեն անվախճան սկսմամբ, վայելելով զճաշակն անտէն հաւաքեալ բարեգործութեանց, Աստուածային տեսութեան զմայլմամբ. Վասն որոյ և հարսն փափագանօք տեղե-կանալ կամի. թէ՛ ո՛ւր արդեօք հովուեսցես զխաշն. և ո՛ւր արդեօք հանգուցանիցես 'ի միջօրէի հովիւդ քաջ. ո՛ւր բառնաս 'ի վերայ ուսոյդ զբովանդակ հօտ քո. զի ոչխար է բոլոր մարդ-կութիւնս զոր բարձեր 'ի յուս քո. ուրեմն ցոյց ինձ զտեղի դալարոյն, և զջուր հանգստեան. Ուսո՛ ինձ ո՛ւր հովուես. զի գտայց զփրկական արօտն. և զմայլեցայց երկնային կերակրովն. յորմէ եթէ ոք, ոչ ուտէ, ոչ կարէ մտանել 'ի կեանս. զփրկական մարմինդ քո. և զկենարար արիւն փեսայիդ հոգւոյ. Այլև պատմեա

ինձ

digitised by A.R.A.R.@

ինձ որ ասացեր, եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն՝ և
առցէ զխաչ իւր և եկեսցէ առ իս Մատթ. 16: 24: ո՛ւր հովուես
մինչ հաւատարմացուցանէ Աստուածային սէր կտակն թէ՝ աչք
տեառն՝ ի վերայ երկիւղածաց իւրոց. հովանի կարողութեան.
հաստատութիւն զօրութեան. զլխաւոր տապոյ. և հովանոցիկ
միջօրէի։ Պատմեա զայս՝ ամենայն հեթանոսաց. Սիր. 34. 19.
Եսայ. 25. 7. Զի ծարաւի է անձն իմ առ քեզ Աստուած. հզօր
և կենդանի, ե՞րբ եկից երևեցայց երեսացդ Աստուծոյ։ Հոգի
երեսաց մերոց տէր Քրիստոս. ընդ հովանեաւ քով նստեաք՝ ի
մէջ հեթանոսաց. Սղ. 21. 3. Ողբ. 4. 20.

Եւ դարձեալ պալատի հարսն ասելով Գ՝ Գուցէ լինիցիմ իբրև զշր-
ջեալն ՚ի հօտս ընկերաց քոց։ Տես զհարսն թէ՝ որպէս յայտնէ
զերկիւղ սրտի իւրոյ։ Զի ասին ՚ի վարդապետաց աստ թէ՝ չորեքն
տեսակ երկիւղի. որով խայթի սիրտն երկիւղած արանց. Նախ՝
մտածէ թէ՝ ո՞ւր եղև, այսինքն՝ ի մեղս։ Երկրորդ՝ մինչ նկատէ
թէ՝ ո՞ւր է, այսինքն՝ ի յաղցաւոր կեանս աշխարհի։ Երրորդ՝ երբ
դիտէ թէ՝ ո՞ւր լինելոց է, այսինքն՝ ի դատաստանի։ Չորրորդ՝
խորհի թէ՝ ո՞ւր ոչ է լինելոց, այսինքն՝ ի փառս երկնից։ Այս-
պէս և կրօնաւոր ոմն է հարց յերանելի սէր հայրն Արսէն թէ՝
վասն է՞ր միշտ հառաչես՝ և արտասուես. ասաց յորժամ զմտաւ
ածեմ թէ՝ Եսաւ եղև չար յարգանդ մօր. և Յուդայ անջատեցաւ
յաշակերտութենէ և յընկերակցութենէն Քրիստոսի, և յիշեմ
զբան փրկչին որ ասէ՝ անձուկ է դուռն, և նեղ ճանապարհն
որ տանի ՚ի կեանս Մատթ. 7. 14. Վասնորոյ ոչ գիտեմ, զինչ
հանդիպելոց է եղկելի հոգւոյ իմոյ։ Յոր կողմ անկանելոց է
ծառն՝ հարաւ թէ հիւսիս ժող. 11. 3. Յոր վախճան և
ելումն կենաց իմոց. վասնայսորիկ ոչ դադարեմ ՚ի լալոյ. Զի
՚ի մէջ նաւու թէպէտ հողմն և ծովն իցէ հանդարտ, սակայն
որովհետև չեն հասեալ տակաւին ՚ի նաւահանգիստն, երկնչին
զի մի՛ հնչեալ ներհակ հողմոյ շարժեսցի զալեկոծութիւն նորա
և ընկղմեսցէ զնաւն։ Այսպէս և Քրիստոնեայք թէպէտ վարին
յաջողակ հողմով հոգւոյն սրբոյ. սակայն տակաւին կասկածին
զի մի՛ յարուցեալ ներհակ հողմոյ շարժիցէ զխռովութիւն
ալեաց։ Քանզի նաւավարք եմ ՚ի հանդարտին ծովու, պահեն
միշտ՝ պատրաստի զգործիս՝ որով վարին ընդ դէմ ալեկոծման

երկն

digitised by A.R.A.R.@

երկնչելով 'ի փոփոխմանէ օդոյն։ Նոյնպէս և երկիւղածքն Աստուծոյ միշտ պատրաստեն զինքեանս ընթանալ ընդդէմ հակառակ ընթացման դիմաց. և իբրու անցանօղ ընդ նեղ կամուրջ՝ հանապազ նկատեն զոտս իւրեանց, զի մի գլորիցին. այլ և ստատանօր երկնչի հարսն և խնդրէ իմանալ, վասնայն հարցանէ. Ցո՞յց ինձ ուր հովուեսն 'ի հօտս ընկերաց քոց։ Ընկերք փեսային կոչին օծեալքն. որպէս և ինքն փեսայն օծեալ անուանեցաւ. Ղկ. 2. 11. Նոյնպէս և թագաւորք, քահանայք, մարգարէք, մանաւանդ համայն Քրիստոնեայք կոչեցան և կոչին օծեալ. Տե՛ս I Թագ. 24. 7. Սղ. 131. 10. Եսա. 45. I. Կոր. II. 26. և Յովհաննէս աւետարանիչն վասն հաստատելոյ ասէ, դուք զօծութիւն ունիք առ 'ի սրբոյն I Յոհ. 2. 20. Բայց փեսայն հոգւոյ՝ առաւել օծեալ, ըստ այնմ՝ Եօծ զքեզ Աստուած, Աստուած քո իւղով ուրախութեան առաւել քան զընկերս քո Սղ. 44. 8։ Նաև ընկերք կոչին փեսային՝ Յուդայ և Յուդայական Քրիստոնեայք. նաև ինք, և սուրբ մարգարէք. և սուրբ առաքեալք և յիմար կուսանքն. մանաւանդ հերձուածողք, և հերետիկոսք. այլև որդիք մարդկան կոչին ընկերք փեսային. վասնզի նաև կոչի որդի մարդոյ։ Բայց 'ի վերոյ գրեալքն ամենեքեան սահեցան՝ գլորեցան և պատուիրանազանց գտան. որպէս ասէ քնարերգ մարգարէն. ամենեքեան խոտորեցան 'ի միասին անպիտանացան. Սղ. 13. 8։ և բայց 'ի յինքեանց մոլորելոցն և զայլս մոլորեցուցին։ Ուստի երկնչի և հարսն թէ՝ միգուցէ ևես նման նոցին գլորեցայց։ Զի թէպէտ բազումքեն տեսակք երկիւղի. բայց աստ մեր զՃշմարիտ երկիւղն ծանուցանէ ասելով, երկերուք յայնմանէ, որ յետ սպանանելոյ և ունի զիշխանութիւն արկանել 'ի գեհեան Ղկ. 12. 5։

Զայս խրատ գրկելով սրբքն Աստուծոյ, յաղթեցին մեծամեծ բռնաւորաց. և զերկիւղն յինքեանց 'ի բաց վանեցին, և ըստ ամե յաղթօղ ցուցան. և 'ի վեր քան զկարողութե, մատնեցին զանձինս իւրեանց չարաչար տանջանաց. որպէս ասէ՝ առաքեալն, քարկոծեցան սղոցեցան՝ սպանմամբ սրոյ մեռան Եբր. II. 37։ Վասն և սրբն Օհան Ոսկ՝՝ասեր ահաւորիկ եղանեմ յերեսաց Եւդոկսեայ հալածիլով 'ի քաղաքէ աստի. և աւաքիմ յաքսոր. բայց չէք վասն իմ երկիւղ. զի այսէ ինձ մխիթարութե, վասնզի տեառնէ

երկիր լրիւ իւրով. եթէ կամի աղօթել զիս, ունիմ զօրինակ զնե-ասյի. եթէ կամի՝ ի ծով արկանել՝ յիշեմ զՅովնան. եթէ քարկոծել կամի՝ մտաբերեմ զՍտեփաննոս. եթէ գլխատել՝ զՄկրտիչն Յոհաննէս. եթէ խաչել՝ զփրկիչն իմ Յիսուս. եթէ զինչս իմ բառնալ կամիցի՝ մերկ ելի յորովայնէ. և մերկ ելանեմ յաշխարհէ. Այսպէս և հարսն ապաստան եղեալ փեսային տեղեկանալ կամի, թէ՝ պատմեա ինձ. առ որ ընկալնու զպատասխանին զառաջակայդ.

Փեսայն պատասխանի տայ. Եթէ ոչ ծանիցես զանձն քո Գե՛ղեցիկդ ՚ի կանայս՝ ե՛լ դու զհետ գարշապարացն հօտից և արածեա զուլս քո ՚ի վրանս հովուաց.

Մինչև ցայս հարսն և օրէնսդիրքն խօսէին. Եւ արդ սկսաւ փեսայն խօսել. զի որպէս ՚ի Սինայ Իսրայէլացիքն երկու օր առաջ պատրաստեցան մաքրութեամբ. և ապա յերրորդումն լուան զձայնն Աստուծոյ. խսկ և զկնի նահապետացն և մարգարէիցն ապա երևեցաւ բանն Աստուած, և անընդմիջաբար խօսեցաւ ընդ որդիս մարդկան. և ապա առաքելովք և հայրապետօք. և արդ՝ ամենատարածական և վարդապետական քարոզութեամբ. և յետ ատի կենացս զկնի մահու և յարութեան մերոյ խօսի և ընդ մեզ փեսայն, և որքան առայժմ՝ յապաղէ փեսայն խօսել, զի առաւել ՚ի սէր շարժեսցէ զհարսն. զի բանք հարսին և օրէնսդրացն, են նման առաւօտու խառն ՚ի լուսոյ և ՚ի խաւարէ. և բանք փեսային, որպէս միջօրէայ լոյս անստուեր. Վասնորոյ և զկնի նոցին խօսից՝ փեսայն պատասխանէ ըստ բանից հարսին. Եթէ ոչ ծանիցես զանձն քո. զի կամի ասել թէ՝ եթէ ծանիցես զանձն քո. որով բարեպէս խրատ ընծայէ. որպէս Թալէսի հարցին, զի՞նչ դժուարին ՚ի վերայ երկրի. ասաց ճանաչել զչափ անձին. Զի ծանօթութիւն անձին է ծանօթութիւն Աստուծոյ. Զի որ ոչ ճանաչէ զինքն, և ոչ կարէ ճանաչել զԱստուած. Եւ դու եթէ ծանիցես զանձն քո, մինչև ՚ի մահ ճգնեսցիս սակս արդարութեան, և Աստուած պատերազմի փոխանակ քո. ընդ թշնամիս քո. Սիր. 4. 33. Ասէ Բեռնարդոս որքան յառաջանամ ՚ի ճանաչումն իմ, այնքան յառաջանամ ՚ի ճանաչումն Աստուծոյ. և Աստուած ճանաչէ զայնոսիկ, որք իւրքն են 2 Տիմ. 2. 19. Բայց մարդ եթէ տեսանէր զինքն թէ՝ որպէս անարգէ մարմնով. և որ՝պէս մեղսամակարդ խորհրդով. ծանրաբեռնեալ մեղօք.

ըստ

digitised by A.R.A.R.@

չարախօսեալ մոլութեամբ. խլրտեալ ցանկութեամբ. զբաղեալ կռուք. պղծեալ գիջութեք երազոյ. պատրաստ յամենայն չարիս. գտանէր զինքն արժանի ամենայն ամօթոյ, եւ ոչ փառաց: Վանկ ասեն վարդապետք. խորհեաց եւ տես թէ՝ զի՞նչ էիր, զի՞նչ ես, եւ զի՞նչ լինելոց ես: Նախ հոտեալ տղուն. եւ արդ՝ քսակ աղբի. բայց զկնի սակաւուց, եղանիս կերակուր որդանց: Յաղագս որոյ ոմն՝ի սրբոց աղօթէր այսպէս. ո՛վ տէր ծանեայց զիս, եւս ծանեայց զքեզ: Այսինքն՝ Ճանաչել զպատճառն եւ զպատճառելին. զի ՚ի յառաջնոյն՝ պատճառի երկիւղ, եւ ՚ի յերկրորդէն խոնարհութի, յոյս, եւ սէր: Վասնորոյ նախ զգուշացուցանէ մարգարէին թէ՝ հայեաց յանձն քո, գուցէ մոռանայցես զտէր Աստուած քո՝ չպահել զպատուիրանս նորա. եւ զդատաստանս եւ զիրաւունս նորա, զոր ես քեզ պատուիրեմ այսօր. եւ երթայցես զհետ Աստուծոյ օտարաց. յայնժամ կորստեամբ կորնչիցիս Երկ Օր. 8. II. եւ Սուրբն Գրիգոր Նարեկացին ՚ի 46 գլուխ աղօթիցն ասէ՝ ոչ եւս ծանեայ երբէք զիս գիտել, թէ յո՞վ եւ ո՞յր պատկեր եւ վասն ո՞յր գոյացայ: Ապա եթէ ոչ ծանիցես զանձն քո. զի՞արդ հաւանեցուցից զքեզ ( ասէ Բարսեղ կեսարացին ) զի՞նչ խօսեցայց. արքայութեան ոչ ցանկաս. ՚ի գեհենէն ոչ երկնչիս. ուստի գտից բժշկութիւն անձին քում: քանզի եթէ սարսռելիքն ոչ զարհուրեցուցանեն. եւ հրճուելիքն ոչ յորդորեն. քարեղէն սրտի խօսիմք. եւ պահին քեզ այնք զորս պատմէ Գրիգոր, թէ ՚ի վերոյ կայցէ բարկացեալ դատաւորն ՚ի ներքոյ ահագին վիհն դժոխոցն՝ ՚ի յաջմէ մեղքն մատնիչ. ՚ի ձախմէ անթիւ դեւք, որք քարշեն ՚ի տանջանս. ՚ի ներքուստ տոչորումն խղճի մտաց. եւ յարտաքուստ բորբոքումն աշխարհի. Այլեւ. եթէ ոչ ծանիցես զանձն քո. անկեալ գնիցիս ՚ի սիրտ ծովու ( ըստ այլ թարգմանութեան ) եւ իբրեւ զթմրեալ նաւուղղիչ՝ ՚ի բաց թողեալ զղեկն Առ. 23. 34. Որպէս Յօնան, վասնորոյ կամեցաւ փախչիլ. եւ ըմբռնեցաւ. քանզի կալաւ զնա ալէկոծութիւն. կապեցաւ վիճակաւ. արկին ՚ի ծով. կլանեցաւ ՚ի կիտէն. բանտեցաւ զերիս աւուրս ՚ի փոր կիտին. եւ իբր պատժապարտ յակամայ ածաւ ՚ի վիճակեցեալ տեղին, ուր գնալոց էր: Դարձեալ եթէ ոչ ծանիցես զանձն քո. որպէս Նաբադ եւ Աբիուդ: կամ որպէս Կորխ եւ Դաթան եւ Աբիրոն եւ երկերիւր յիսուն արս ընդ նմա որք չարաչար կորեան. Ղեւ.



digitised by A.R.A.R.@

10. I: Թուոց 16. 32: և Որպէս բժիշկ որ ոչ ճանաչիցէ զսկիզբն և զպատճառն հիւանդութեան, ոչ կարէ բառնալ զտկարութիւն նորին, այսպէս և դու՝ եթէ ոչ ճանիցես՝ ոչ կարես տալ հազարաւոր եղանակ ընդդէմ այնմ որ գայ ՚ի վերայ քո քան հազարաւ Ղկ. 14. 31: Ապա եթէ ճանիցես զանձն քո ՚ի միտ ած, աշխարհս աղաղակէ թէ՝ ես պակասեցայ. սատանայ ասէ՝ ես խաբեցի. մարմինն ասէ՝ ես ապականեցի. և Քրիստոս ասէ ես նորոգեցի. ընտրեա թէ որում կամիս հետևիլ: Առաքեալն ասէ՝ հայեսցուք ՚ի զօրագլուխն հաւատոյ և ՚ի կատարիչն Յիսուս: Որ փոխանակ մխիթարութեան, որ նմա առաջի կայր, յանձն եառ զխաչ, արհամարհեաց զամօթ. նստաւ ընդ աջմէ աթոռոյն Աստուծոյ. Եբր. 12. 2. Որում ասէ՝ ՚ի միտ ած զի մինչ եւր թշնամի հօրն իմոյ՝ հաշտեցուցի զքեզ ինև. մինչ ՚ի մէջ լերանց և անտառաց մոլորեալ՝ խնդրեցի զքեզ ՚ի յուս իմ՝ բարձի զքեզ. առ հայր իմ՝ հասուցի զքեզ. վաստակեցայ՝ քրտնեցայ, ՚ի գլուխ իմ փշոք պսակեցայ. ՚ի ձեռս և յոտս իմ բևեռօք բևեռեցայ. ՚ի կողս իմ տիգաւ խոցեցայ. այնքան խստագոյն անօրէնութեամբ ծնծղացեցայ. զարիւն իմ հեղի, զանձն իմ եդի. զի զքեզ ընդիս միաւորեցից, և դու լինիցիս բաժանիս: և ես յայտնեցից զ՚ի ետուսս քոյ, և արկից զերեսօք քոլք. և ցուցից ազգաց զամօթ քո. և թագաւորութեանց զանարգանս քո. Նաւ. 3. 5: Եւ եթէ ճանիցես զանձն քո քանզի տեղիէ Աստուած յանկանել միոյն զայլս ՚ի տեղի նորա կացուցանել վարձու. որպէս ՚ի տեղի անկեալ հրեշտակաց զմարդիկ. ՚ի տեղի հրէից զհեթանոս Քրիստոնեայս. ՚ի տեղի Յուդայի զՄատաթիայ. և փոխանակ Սաւուղայ զԴաւիթ: Բայց տեսանեմք զի գինեմոլքն ՚ի գինւոյ, և բղջախոհքն ՚ի վաւաշոտութենէ ոչ հրաժարին: Իսկ և դու ըստ Պօղոսի ճնշեա զմարմինս քո և խոնարհեցո. առելով զի մի՛ գուցէ որ զայլոց քարոզեցի, ես ինքն անպիտան գտանիցիմ. I Կոր. 9. 27: Զի ոչ ունիմք քաղաք աստէն մնալոյ, այլ զհանդերձեալն խնդրեսցուք. Եբր. 13. 14. Գեղեցիկ ՚ի կանայս. ասէ, և այսէ ձև իմն փաղաքշական. կամ ողոքական. որպէս սովորութիւնէ մեսային մերոյ. զի կամի քաղցրութեամբ ածել զոչխարս ՚ի փարախ իւր. նոյնպէս և աստ ողոքական բանիւ խօսի ընդ հարսին. և ոչ բռնութեամբ. այլ

այս

այսպէս, եթէ ոչ ծանիցես զանձն քո գեղեցիկդ 'ի կանայս. Թէպէտ գեղեցկութիւնն կայանայ 'ի չափակցութիւն դրից անդամոցն, որպէս վասն Դաւթի ասի թէ՝ նա էր կարմիր երեսօք՝ և գեղեցիկ աչօք. և բարեձև տեսլեամբ. 1 Թգւ. 16. 12։ և թէ՝ իբրև զԱբեսաղոմ ոչ գոյր յամենայն Իսրայէլի՝ այր գեղեցիկ և գովելի յոյժ, 'ի թաթից ոտից իւրոց մինչև 'ի գլուխ իւր ոչ գոյր նմա արատ 2 Թգւ. 14. 25. Բայց աստանօր գեղեցիկ ասէ սակս պատկերակցութեանն, և պաշտօնին. և վասն քաջութեան և արիութեանն, վասն խոնարհութեանն, վասն արդեանցն և շնորհազարդութեանն։ Որպէս սակս խոնարհութեան գովեաց տէր ըզանտեսն ասելով՝ որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց Ղկ. 16. 8։ և վասն գթութեանն՝ որպէս Սարեփթայ սիդոնացւոյ այրի կնին Ղկ. 4. 25։ և սակս շնորհազարդութեանն որպէս դշխոյն հարաւոյ՝ որ եկն 'ի ծագաց երկրի լսել զիմաստութիւն Սողոմոնի. Մտթ. 12. 42։ Նոյնպէս և վասն արիութեան ասէ՝ կին ժրագլուխ պսակ է առն իւրում. Առկ. 12. 4. և վասն երկիւղածութեանն, որպէս Յուդիթ՝ երկիւղած էր նա յոյժ 'ի տեառնէ. Յուդ. 8. 8։ և վասն ողորմածութեանն, Տաբիթայ էր լի գործովք բարեօք և ողորմութեամբ, զոր առնէր Գործ. 9. 36. Վասնայսորիկ գովէ փեսայն ըզհարսն ասելով գեղեցիկդ 'ի կանայս և որքան առաւել գովելի է՝ զի սրբուհի կոյսն Մարիամ 'ի յամենասուրբ երրորդութենէ ընտրեցաւ լինել դուստր հօր Աստուծոյ, և մայր միածնի որդւոյն Աստուծոյ. և հարսն սրբոյ հոգւոյն Աստուծոյ. ապա բարձրելոյն հօր զօրութեան՝ հովանաւորութեամբ. և հոգւոյն սրբոյ եկաւորութեամբ՝ յղացեալ ծնաւ զանդրանիկ միածին որդին Աստուծոյ։ Զի որպէս անժամանակ ծնաւ 'ի հօրէ առանց մօր, նոյնպէս և ժամանակաւ ծնաւ 'ի մօրէ առանց հօր. և զկուսութիւն մօրն պահեաց անխախտ. ուստի անուանեցաւ սրբուհի կոյսն մարիամ. մայր և կոյս։ Բայց երբեմն և յորջորջին կին. Յոհ. 2. 4։ և 19. 26։ Գաղ. 4. 4։ յաղագս որդեծնութեան. որպէս Սառայ, Եղիսաբեթ, և այլ կանայք. Նոյնպէս և եկեղեցիք հրէից և հեթանոսաց՝ կոչին կին. զի ծնանին զորդիս աշխարհի. և եկեղեցին 'ի Քրիստոս հաւատացելոց՝ յարաժամ ծնանի շնորհօք զորդիս Աստուծոյ. ուստի կին անո-

ւանի

digitised by A.R.A.R.@

ամբ հռչակի. և որպէս սրբուհի կոյսն Մարիամ գերազանցեաց քան զամենայն կանայս, զորմէ ասի Առակ. 31. 29. Բազում դստերք ստացան զմեծութիւն. բազումք արարին զզօրութիւն. բայց դու առաւել եղեր՝ և անցուցեր զամենեքումբք. Նոյնպէս և եկեղեցին մեր գերազանցեաց քան զամենայն եկեղեցիս Հրէից և հեթանոսաց. որում փեսայացաւ միածին որդին Աստուծոյ. Վասնորոյ ասէ գեղեցիկդ ՚ի կանայս. զի եթէ ծառայ թագաւորի հաւասարի իշխանաց նորին, որչափ ևս առաւել հարսն՝ և թագուհին երկնաւոր թագաւորին. յաղագս որոյ ասէ՝ մի է մօր իւրոյ ընտրեալ ծնողին իւրոյ. Զի որպէս մի է տէր. մի հաւատ. մի մկրտութիւն. մի Աստուած և հայր ամենեցուն Եփես. 4. 5.

Նոյնպէս և մի է եկեղեցի մայր մեր ամենեցուն.

Մի է հաւատ՝ մի տէր գովել.
մկրտութիւն՝ մի հռչակեալ.
և մի Աստուած՝ խոստովանել.
սուրբ հաւատով՝ ծանուցեալ.
Եկեղեցի՝ մին համբաւեալ.
ան Յիսուսի հարսն ընծայեալ.
վայելչագեղ՝ զարդարեցեալ.
քան զբնաւս գեղեցկացեալ.

Ե՛լ դու ընդ գարշապարս հօտից. և՛ կամի ասել թէ՝ ե՛րթ յար-քունի պողոտային, ուստի անցին թագաւորք, և իշխանք, կառօք և երիվարօք. և յամենեցունց ՚ի նոցանէ ոչ գտանես սակաւ մի հետ. Ո՞ւր են իշխանք հեթանոսաց՝ և որք տիրէին գազանաց երկրի. որք ընդ թռչունս երկնից ծաղրէին. և գանձէին զարծաթ և զոսկի, յորս յուսացեալ էին մարդիկ, և ոչ գոյր բաւ ստա-ցուածոց նոցա. և որք գործէին զարծաթն՝ և հոգան. և ոչ գոն հանգամանք գործոց նոցա. ապականեցան ամենեքեան և ՚ի դժոխս իջին. և այլք փոխանակ նոցա կանգնեցան Բարուք. 3. 16. Եւ գարշապարաւ իմանամք զհետս՝ և զշաւիղս ընթացից կենդանեաց. և եթէ վասն է՞ր զհօտն նախատասէ՝ և ոչ զհովիւն. ասեմ թէ՝ զի հօտ բնական օրինին ոչ ունէր հովիւ. և ոչ հօտ քաղաքական օրինին. Վասնայն՝ զայնոսիկ յիշեցուցանէ. և զնո-թայս նոցին ծանուցանէ. և զկատարած նոցունց մտաբերել տայ հարսին իւրոյ. Զի նոքա ապականեցին զերկիր առաջի Աս-տուծոյ

տուծոյ, և լցին անիրաւութեամբ. առ որս ասաց տէր Աստուած մի մնասցէ ոգի իմ 'ի դոսա. վասն լինելոյ դոցա մարմին. որոյ աղագաւ կորոյս ջրհեղեղաւ զամենեսեան։ Նոյնպէս ասաց՝ թէ աղաղակ Սոդոմայեցւոց և Գոմորայեցւոց յաճախեաց. և մեղք նոցա մեծացան յոյժ. վասնորոյ հրով և ծծմբով ջնջեաց զնոսա. Զայսոսիկ ցուցանէ հարսին, զի զգուշացեալ մի՛ լիցի և նման նոցունց կորնչել. Ապա եթէ անզգոյշ եղեալ ոչ ճանիցես զանձն քո ասէ. և եթէ ոչ բերես 'ի միտ քո՝ զոր արարի քեզ 'ի յեգիպտոս, և 'ի քանան 'ի ձեռն Մովսէսի և Յեսուայ, ել դու յերեսաց իմոց, զի մտցեն այլք. ըստ Յուդայ և մտցէ Մատաթիայ. Զի ասացից թէ՝ հրաւիրեալքն չէին արժանի Մտթ. 22. 8. Բայց դու ե՛րթ և գնայ և տես զհետս և զշաւիղս անցուցելոցն՝ որք տապաստ անկան յանապատի անդ. որպէս կարգաւ թուէ Պօղոս. և ասէ՝ վասն մերոյ խրատու գրեցաւ։ Նոյնպէս և քնարերգն Դաւիթ պատմէ. Սղ. 105. 6. Զայսոսիկ լուեալ 'ի միտ առցէ, այսուհետև որ համարիցի հաստատուն կալ՝ զգոյշ լիցի. գուցէ անկանիցի I Կր. 10. 5.

Այլև տէրն մեր հօտ կոչէ զառաքեալս իւր. ըստ այնմ մի՛ երկնչիր հօտ փոքրիկ. զորոյ՝ փեսայն ցուցանէ հարսին իւրոյ՝ զարօտատեղին մակաղելոյ, ասելով ել դու զհետ գարշապարաց հօտից. այսինքն զհետ առաքելոյն ընտրելոց, մարգարէիցն սրբոց, և վարդապետացն կոչեցելոց. որք թողին զհետ իւրեանց զսէ գիրս 'ի խրատ և 'ի վարդապետութիւն մեզ 2 Տիմ. 3. 16. Իբրև յստակ և մաքուր հայելի. յորում երևի տգեղութիւն ամենից դիմաց. Որոյ զկնի բարեպէս խրատ ընծայելոյ աղագաւ դարձեալ վերակրկնէ. թէ, և արածեա՛ զուլս քո 'ի վրանս հովուաց. վրանս հովուաց ասէ, և ոչ յատկացուցանէ, թէ արդեօք 'ի վրանս բարի հովուա՞ց՝ եթէ չար հովուաց. ուստի երևի թէ զերկոքեան 'ի միասին ցուցանէ. որոց օրինակաւ հարսն ճանիցէ զանձն իւր. Ուլ կոչէ զմեղօք սևացեալ հոգիս. և զանմաքուր խորհուրդ. և զանհաստատ միտս. զի որ երկմիտն է նման է հողմակոծեալ և տատանեալ յալեաց ծովու Յկ. I. 6. և այլ ուր ասէ՝ սրբեցէք զձեռս ձեր մեղաւո՛րք. և ուղիղ արարէք զմիտս ձեր երկմիտք. Յկ. 4. 8. Վասնորոյ ասէ՝ և արածեա զուլս քո այսինքն զմիտս քո 'ի մատեանս սրբազանից առա-

քելոց

digitised by A.R.A.R.@

քերլոյ. և տես թէ՝ զի՞նչ ասէ Պօղոս. արմատ ամենայն չարեաց
արծաթասիրութիւն է։ Որոյ ցանկացեալ ոմանց վրիպեցան ՚ի հա-
ւատոյն. և զանձինս իւրեանց արկին ընդ բազում ցաւօք. այլ
դու ով հարսն, փախիր յայնցանէ, և երթ զհետ արդարութեան,
Աստուածպաշտութեան, հաւատոյ՝ սիրոյ, համբերութեան, հե-
զութեան. և մարտիր զբարւոք մարտն հաւատոյ, և բուռն հար
զկենացն յաւիտենականաց՝ յոր կոչեցար. 1 Տիմ. 6. 10.
Դարձեալ խորհեաց և տես զի սրբազանն Պօղոս, քաջութեամբ վա-
նեաց զպատերազմն, մաքրութեամբ կատարեաց զընթացսն. սրբութեամբ
պահեաց զհաւատսն, աներկբայ յուսով ակնկալեաց զանթառամ
պսակսն, զորոյ և ինքն պատմէ՝ թէ բարւոք պատերազմն պա-
տերազմեցայ, զընթացս կատարեցի. զհաւատս պահեցի. այսու-
հետև՝ կայ և մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուսցէ
ինձ տէր յաւուր յայնմիկ արդար դատաւորն. 2 Տիմ. 4, 7.
Բայց դու տես զաղէտ անառակ որդւոյն՝ ՚ի յագարակս խոզից.
Մտածեա զԱբեսաղոմ զդրկեալ յերեսաց հօր իւրոյ. և լուր և
զբան փեսային որ ասէ՝ եթէ ոչ ապաշխարիցէք, ամենեքին
նոյնպէս կորնչիցիք Ղուկ. 13. 5. և ուսիր թէ զի՞նչ ասէ գիր,
պնդեցաւ Աբրահամ ՚ի խորանն առ Սառրա, և ասէ ցնա՝ փութա՛
և թրեա՛ գրիւս երիս ալեր. և ինքն ընթացաւ և եառ որթ մի,
և ետ ցպատանին հասուցանել վաղվաղակի. Ուր ասէ Որոգինէս,
ծերն ընթանայ, Սառրա փութայ. պատանին վաղվաղէ. և ոչ ոք
դատարկ ծոյլ ՚ի տան իմաստնոյն։ Այլև տես զի՞նչ ասէ, ունկն
մատո. տունն Դաւթի երթայր և աճէր. և տունն Սաւուղայ եր-
թայր և նուաղէր 2 Թագ. 3. 1. Օրինակ առէք եղբարք չար-
չարանաց և երկայնմտութեան զմարգարէսն, որք խօսեցան յա-
նուն տեառն. Յակ. 5. 10. Վասնորոյ ասէ արածեա զուլս քո
՚ի վրանս հովուաց. այսինքն ՚ի հաւատս նահապետաց. ՚ի յոյս
մարգարէից. ՚ի ջերմեռանդութիւնս առաքելոց. ՚ի յարիութիւնս
մարտիրոսաց. ՚ի խոհեմութիւնս վարդապետաց. ՚ի բարեխառ-
նութիւնս կուսանաց. և ՚ի յարդարութիւնս խոստովանողաց.
Իսկ և եթէ արածես զուլս քո ՚ի վրանս սուտ հովուաց, որք եկին
յառաջ քան զՔրիստոս հովիւն մեր, գողք էին և աւազակք.
Յով. 10. 8. և Պատրեցին զհօտն. և զանձինս իւրեանց բուծին.
և զխաշինս ոչ արածեցին. Եզէ. 34. 8. Այսպէս և բազումք

Մէջբերումն երգ երգոց տեսանելով քահանայն Սողոմոնի ։ Գլուխ ․ 1 ․ Համար ․ 7 ։

Տե՛ս․ 3 Թագ․ 13․ 11։ և 22․ 6․ 4 Թագ․ 10․ 19։ Առակ․ 3․ 12։ Մատ․ 7․ 15։ Գործ․ 20․ 29․ Բայց ճշմարիտ հովիւքն բարձին զխաչ իւրեանց և ընթացան զհետ փեսային․ ոմանք կուսութեամբ, և այլք մարտիրոսութեամբ․ կէսք խոստովանութեամբ․ և այլք սրբութեամբ և մաքրութեամբ, և պէսպէս ձգնութեամբ հետևեցան ճշմարիտ և քաջ հովուին Քրիստոսի․ և թողին զկտակս վարուց և վարդապետութեան իւրեանց իբրև զմարգարտեային արտատեղի ոչխարաց հօտին Քրիստոսի։ Կամ որպէս վրան և տաղաւար պահպանիչ՝ ի ցրտոյ և ՝ի խորշակէ։ Վն որոյ և Պետրոս վկայաբանութեան տագնապէր Մատ․ 17․ 6․ Զի հովիւք՝ զորս եդ Աստուած յեկեղեցւոջ այսուն, նախ առաքեալք․ երկրորդ՝ մարգարէք․ երրորդ՝ վարդապետք։ Եւ առ նոսա ասաց ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ՝ի կատարած։ Զի նոքա ցուցանեն զշաւիղս ուղիղ ընթացից։ Որպէս ասէն, էաք երբեմն և մեք անմիտք՝ անհաւանք՝ մոլորեալք ծառայեաք ցանկութեանց, և պէսպէս անառակութեանց․ չարութեամբ և պէսպէս նախանձու շրջէաք՝ ատեցեալք, և զմիմեանս ատեաք․ Իսկ յորժամ քաղցրութիւն և մարդասիրութիւն փրկչին մերոյ յայտնեցաւ, ըստ իւրում ողորմութեանն ապրեցոյց զմեզ ՝ի ձեռն աւազանին միւսանգամ ծննդեանն և նորոգութեան հոգւոյն սրբոյ․ Տիտ․ 3․ 3։ Նմանապէս և ճշմարիտ մարգարէքն պատմեն․ ոմն մինն ասէ տեսի՝ զի աթոռք անկանէին և հին աւուրցն նստէր․ գետ հրոյ յորդեալ ելանէր առաջի նորա․ ատեան նստաւ, և գիրութիւնք բացան Դան․ 7․ 1։ Եւ այլ ոմն ասէ թէ՝ և եղիցի յաւուր յայնմիկ ասէ տէր՝ քննեցից զերուսաղէմ ճրագաւ, և խնդրեցից զվրէժ յարանցն որք արհամարհեցին զպահպանութիւնս իւրեանց․ Սոփ․ 1․ 12։ Մանաւանդ տես և զոչխարս հօտի նորին․ ոմն և երեք մանկունք ՝ի հնոցին․ Եւ զեղիազարոս իննսուն ամեայ ծերունին։ Նաև զշնորհազարդ մայր եօթնեակ եղբարց որ մինչ տեսց զեօթն որդիս յիւրմէ կորուսեալ ՝ի միում աւուր և ՝ի յառաջածել կրսերոյն․ մայրն ոքանչելի՝ զսիրտ և զմիտս իգունն առնապէս վառեալ՝ քաջալերէր զորդի իւր ասելով՝ աղաչեմ զքեզ որդեակ՝ հայեսցիս ՝ի ուռ յերկինս և յերկիր․ և որ ՝ի նոսա արարածք իցեն․ յուշ լիցի քեզ՝ զի յոչնչէ արար զնոսա Աստուած․ սոյնպէս և ազգ մարդկան արարան ՝ի նմանէ և այլն։



digitised by A.R.A.R.@

2 Մով. 6. 18: 7. I. Իսկ և վարդապետք եկեղեցւոյ, որպէս
սբն Օհան Ոսկ" 'ի մեկնութեան եփս" թղթոյն ասէ՝ մարմին են
Քրիստոսի՝ համբերէր խաչի. որպէս և նոյն տարաւ. ա՛ռ յիւրեա
թուք. ընկալաւ ապտակ. համբերէր բևեռացս. այսպիսի մարմինք՝
և այն մարմին և չարաչար մեռաւ. և ոչ գտաւ ամենևին նենգութիւն
'ի բերան նորա. նաև ձեռք նո՛ր համարձակ 'ի բարերարութիւն
ձգեալ օգուտ և եթ գործէին. և չեհան երբեք ինչ առ պիտան
ընդ բերան. և զի դիմահար կոչէին և չասէր ինչ. և Ս. Յուլ. ումն
'ի վարդապետաց խրատէր մնում վափկասիրին միշտ խոկալ և
խորհիլ և ասել այսպէս. Քրիստոս էր աղքատ. և ես հարուստ.
Քրիստոս պահէր՝ և ես բարւոք կերակրիմ. Քրիստոս մերկ էր՝
և ես չքեղաբար զգեստաւորիմ. Քրիստոս կայր 'ի չարչարանս՝
և ես 'ի բերկրալի հեշտութիւնս. Քրիստոս երկնաւոր թագա-
ւորն քաղցեաւ՝ ես որթնս երկրի յագեալ կամ. Քրիստոս
ամենըն և անարգան կայր 'ի չարչարանս՝ և ես լցեալ մեղօք կամ
'ի փափկութեան։ Ըհա՛ այսպէս են հոլի՛ կոչեցեալ առա-
քելոց՝ մարգարէից՝ և վարդապետաց՝ բանքն։ Յորում աղաչեմ
հրամայէ փեսայն. իբրև զուլ զմեղօք սևացուցեալ հոգի հարսին.

Ասելով՝ արածեա զուլս քո.

Դարձեալ յետ այն ասէ. Ձիոյն իմոյ 'ի կառս Փարաւոնի նմանեցուցի զքեզ,

Մերձաւոր իմ.

Ըստ այսմանէ երևի թէ՝ Սողոմոն ունէր ինքեան ազնիւ ձի. ընտ-
իր և գեղեցիկ յոյժ. ուստի և սաստիկ արագընթաց. ըստ ար-
քայութեան իւրոյ համեմատ. որպէս օրէնէ թագաւորաց զայս
պիտիս ունիլ առ 'ի յարմար ծեւոյ 'ի կառս։ Բայց որովհետև
Փարաւոն առաքեաց զդուստր իւր 'ի հարսնութիւն Սողոմոնի.
թուի թէ՝ ընդ նմին և յղեալ էր պաշտաւական զարդարեալ
կառք. և երիվարք չքնաղք և հազուագիւտ. որում բաղդեալ
Սողոմոնի՝ ըստ պիտանաւորութեան ժամանելանել 'ի զբօսանս.
կամ երթալ 'ի պատերազմունս. որպէս յատկութիւն է թագա-
ւորաց և կայսերաց. Զնոյն և արքայն Սողոմոն 'ի դիմաց
փ' այլին զհարսն սբ եկեղեցի զերիվարի իւրոյ համեմատէ սակս
զերազանց ազնուութեան։ Որպէս Յօհաննէս դգրոնս երկնային
քաղաքին երուսաղեմի 'ի միոյ միոյ մարգարտոյ ասէ Յայտ. II.
21. Նմանապէս և Սողոմոն զհարսն նմանեցուցանէ ձիոյն իւրոյ

ազն

digitised by A.R.A.R.@

որ լծեր ՚ի կառս ՚ի փարաւոնէ յղեցեալ։

Արդ փարաւոն թարգմանի ցրուօղ. և Սողոմոն ժողովօղ. զի որպէս նախապատերազմն ցրուեաց զեկեղեցի. և անդրանիկն երկնաւոր հօր՝ մերն Սողոմոն ժողովեաց։ Զի տունն Ադամայ ընծայեաց զեկեղեցին ՚ի հարսնութիւն փեսային Յիսուսի. և ընդ նմա իբրու կառք պաշտպանական. մարմին մարդկային բնութե. որ միացեալ ընդ նմա, որով մղեաց զպատերազմն։ Բայց գիտելի է՝ զի փարաւոն անուամբ ոչ է իմանալի զայն միայն որ ընկղմեաց ՚ի ծովն Կարմիր. այլ ամենայն թագաւորքն եգիպտացւոց կոչեցան փարաւոն ՚ի ժամանակէ անտի Աբրահամու մինչև ՚ի ժամանակս Սողոմոնի։

Զիոյն իմն ՚ի կառսն Փարաւոնի նմանեցոյց զեկեղեցին։

Նախ զի անուանի փեսային հոգւոյ հրեղէն կառք արքայութեան իւրոյ. և պատկարգութիւնք երկնային հրեշտակաց. ըստ մարգարէին. ահաւասիկ տէր իբրև զհուր եկեսցէ. և կառք նորա իբրև զմրրիկ հատուցանել սրտմտութեամբ զհատուցումն իւր Եսայ. 66. 14. կամ թէ՝ և տեսցեն զորդի մարդոյ եկեալ ՚ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառօք բազմօք Մատ. 24. 30. և 26. 64. Բայց աստանօր արքայն Սողոմոն ՚ի դիմաց փեսային զի անուանէ զհաւատացեալ հարսն եկեղեցի (՚ի կառս փարաւոնի ասելով) զի որպէս երիվարք լծեալ ՚ի կառս առ ՚ի բառնալ զծանրութիւն նորին. նոյնպէս և հաւատոյ որդիքն Աբրահամու՝ խաղայել ՚ի յեգիպտոս իբրև լծեալ ՚ի կառս փարաւոնի կրէր զծանրութիւն նորին Ել. 1. 11. և 3. 9. Զի որպէս Եղիայ կառք խաղայելի անուանեցաւ որ զծանրութիւն նորին բառնայր 4 Թագ. 2. 12. Նոյնպէս և խաղայել որ նախապէս կոչեցաւ անդրանիկ որդի փեսային Ել. 4. 22. և Աստանօր ձի անուանի, զի որպէս արի պատերազմօղ զօրագլխաց հարկաւոր պիտանի է ձին. նոյնպէս և զօրագլխոյն հաւատոյ հարսին. Վասնորոյ ասէ Յովհաննէս. տեսի զերկինս բացեալ. և ահա ձի սպիտակ. և որ հեծեալն էր ՚ի նմա՝ կոչէր հաւատարիմ. և ճշմարիտ և արդարութեամբ դատէ և պատերազմի Յայտ. 19. 11. Զի և հարսն սպիտակացեալ եղև ձի փեսային. յորում բազմեալ փեսայն իբր ՚ի վերայ ձիոյ. և զաստուածային զօրութիւն իւր ծակարգեաց ընդ դէմ Փարաւոնի. Վասնորոյ հարցանեն թէ

մի

մէ սա՝ որ ելանէ սպիտակացեալ յեցեալ յեղբօր որդի իւր՝ Երգ. 8. 5։ Թէպէտ Մովսէս ոչ գրէ թէ՝ բազմութիւնք զօրաց հրեշտակաց երևեցան ընդ դէմ Փարաւոնի, և ընկղմեցին զնոսա։ Այլ զոր յառաջ ասաց տէր ցփարաւոն վասն այնորիկ պահեցայ՝ զի՝ ի քեզ ցուցից զզօրութիւն իմ Ել. 9. 16։ և զկնի ասէ Մովսէս ցժողովուրդն. քաջալերեցարուք և պինդ կացէք. զի տէր տայ պատերազմ ընդ ձեր. և դուք լռեցէք։ Ապա նոյն հետոյն կապեաց տէր զանիւ կառաց նոցա. և վարէր զնոսա բռնութ̃բ։ վասն ասէին եգիպտացիքն փախիցուք յերեսաց իսրայէլի. զի տէր պատերազմի վասն նոցա ընդ եգիպտացիսն. և եգիպտացիքն փախեան յերեսաց ջրոյն ( զի տեսանէին իբրև զարհուրելի դազան վիշապ բացեալ զբերան. այսինքն զալիս իւր. կամէր կլանել զամենեսեան ) և տէր թօթափեաց զեգիպտացիսն՝ ի մէջ ծովուն Ել. 14. 13։ Նոյնպէս և դու հարսն յաղթող լեր թշնամւոյն մարդկային բնութեան. և լեր մերձաւոր իմձ. և ըստ Պօղոսի զօրացիր տէրամբ. և կարողութեամբ զօրութեան նորա. և զգեցիր զսպառազինութիւնն Աստուծոյ. զի կարող լինիցիս կալ ընդդէմ հնարից սատանայի Եփ. 6. 10։

Երկրորդ յատկութիւն է ձիոյ արագընթաց գոլ ես առաւել մատակն քան զորձն. որ ենթարկի լծոյ. և ծնանի զբազումս. և մինչ զհոտ պատերազմի առնու դաբ հարկանէ Յոբ. 39. 20։ Սոյնպէս և հարսն եկեղեցիս հայոց. արագեաց ՚ի հաւատս. նախ քան զամենայն եկեղեցիս ամենից ազգաց. և սիրով ընդգրկեաց. զի մինչ լուաւ զընթացս փեսային՝ ի պատերազմի ընդ դէմ անմարմին փարաւոնի. սկսաւ դաբ հարկանել. և իսկոյն պատրաստեցաւ ընդ փեսային՝ ի մարտ մտանել։ Որ նախ լծեալէր՝ ի կառս հեթանոսական պաշտաման. ՚ի բաց եթող. և եղև ձի՝ Ճշմարիտ փեսային Քրիստոսի. որպէս՝ ի սկզբանն Աստուածաբեալ արքայն մեր Աբգար. նախարընծայն ՚ի Քրիստոս. զորմէ պատմէ շնորհալի սբ՝ վարդապետն մեր Ներսէս ասելով։

Ըզ փրկչական լուրն լուեալ.
և ըղձական՝ նամակ գրեալ.
՚ի փոքրագոյն՝ քաղաք իւր գալ.
և բժշկել՝ զինքն աղաչեալ.
Ես սա հրձուէիմ՝ յոյժ կնձայէլ։

Թագա

Մեկնութիւնք երգոց անուանեալ Երգոյն Սողոմոնի։ Գլուխ. I. Համար. 8։

Թագաւորաց՝ իմ պանծայեալ.
Զի քան զԹօլիմաս՝ յառաջացեալ.
զերանութիւն՝ մարդկան բերեալ։

Եւ ենթարկաւ լծոյ աւետարանին. և եղև բազմածնունդ ՚ի հաւատս սբ. ըստ այնմ ուրախ լեր ամուլ որ ոչ ծնանէիր. գոչեա և աղաղակեա որ ոչդ երկնէիր. զի բազումք են որդիք ՚ի բաց թողելոյն Եսա. 55. 1։ Իսկ և յարաժամ պատերազմի ընդ Թշնամոյն բնութեան։ և ընդդիմանայ ձիական ախտից, և հպարտանէ անմարմին փարաւօնի. և չարութեանն եգիպտոսի. և այլ ամենայն մոլութեանց նորին։ Որով և ինքն իբրև զձի ձախորելով. և իբրև զդառնիս խայտալով. ցնծալից դիմօք և սըն-Թոյ արշաւմամբ ժամանեաց առ փեսայն Խո. 19. 9։

Երկրորդ՝ համայն բանական ստեղծեալքն Աստուծոյ. և հարս-նայր անձինք փեսային Քրիստոսի. որք ՚ի պատկերի Աստու-ծոյ ստեղծան իբրև զձի խստերախ, և ապստամբ լծեալ ՚ի կառս փարաւօնի անձնիշխան կամօք ըստ հաճոյից հակառա-կորդին գնալով. և ըստ կամաց աշխարհի շարժելով զի աշխար-հէ սատին. և ՚ի վերայ աշխարհի կալով և զծառայութիւն նորին տանի. այս ՚ի դառնալ զղջալն. և ՚ի մեղաց սրբիլ և մաքրիլն. և զբեռն մեղաց Թօթափելն. յայնժամ ընկլմէ զԹշնամին իբրև զփարաւօն ՚ի ծով կարմիր. այս և ինքն զերծեալ անտի լինի ընդ փեսային։

Չորրորդ՝ ձի Աստուծոյ էր մարդկային բնութի. որ պարծէր խրոխտալով. և ՚ի ձեռն մեղաց եղև կառավար սատանայի. զորում փրկիչն մեր մարտեաւ խաչիւն. ըստ գաւազանին Մովսիսի. որ էհերձ զծովն կարմիր. և ընկղմեաց զփարաւօն։ Այսպէս ասէ և սբ. վարդապետն մեր Գրիգոր տաթևացին Թէ մարդս ձի և հանդիստ էր Աստուծոյ. և եղև ձի սատանայի. խոնարհեցոյն մեր խաչիւ իւրով ընկղմեաց զնա. և արար Դարձեալ եկեղեցի սբ ձի և հանգիստ իւր։

Հինգերորդ՝ ձի կոչեցաւ և խաչափայտն Քրիստոսի. որ նախապէս էր գործի անիծից. յորում էր պատիժ. և վասն կախելոյն ՚ի նմին ասացաւ. անիծեալ յԱստուծոյ ամենայն որ կախիցի զփայտէ 2 Օր. 11. 23։ Զկնի որոյ եղև գործի օրհ-նութեան. զի օրհնեալ է փայտն որով լինի արդարութիւն Իմս.



digitised by A.R.A.R.@

14. 7. Զի այնու ձիաւորեալ յարեալ ընդդէմ կառաց ամբարտին Փարաւոնի, վանեաց զպատերազմ և ընկղմեաց զնա: Ուստի առ՛ի յերգս եկեղեցւոյն մերոյ, ձիաւորեալ ոչ միայն ՛ի վերայ բուսաքեր որմատոյն. այլ քրօբէական կառօքն առորիչեալ ՛ի դժոխս. կենդանարձեաց հզօրեղապէս զերամս արդարոց. Ա՛յ ոմն Մարգարէ ասէր. ելցես յերիվարս քո. և հեծելութիւն քո փրկութիւն է: Ամբ. 3. 8: Իսկ և ինքն պատմեաց աշակերտացն ասելով քաջալերեցարուք զի ես յաղթեցի աշխարհի: Այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս. Յով. 12. 31, և 16. 33:

Վեցերորդ՝ զի կոչեցան և սքզան առաքեալքն փեսային հոգւոյ. որք նախապէս լծեալքէին ՛ի կառս աշխարհի. եղեալ որսորդք անբան ձկանց. առ որս ասացաւ. եկայք զկնի իմ և արարից զձեզ որսորդս մարդկան Մատ. 4. 19: Որով բանիւ յարեցան առ փեսայն հոգւոյ, և չոգեցան ՛ի վերայ երկրի իբրև ՛ի ծովու և որսացին զմարդիկ ՛ի հաւատս սրբս, վասնայն ասէ առաքելոցն զերիվարս քո ՛ի վերայ ծովու Ամբ. 3. 15: Յաղագս որոյ պատուիրեաց ասելով երթայք աշխարհ ամենայն և քարոզեցէք. զի յաղթութիւնէ ձիոյն լայնընթաց լինիլ յոլովս և այլ. որպէս առաքեալքն ՛ի սփիւռս տիեզերաց սլըընթաց արշաւմամբ լցին զաշխարհ ամենայն աւետարանական քարոզութեամբ. որոյ սակս ասէ Դաւիթ, ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա: որպէս և Պօղոս ասէ՝ յերուսաղէմէ մինչև ցԻլիւրիկէ լցի զաւետարանն Քրիստոսի Հռմ. 15. 19:

Եօթներորդ՝ զի կոչին և հոգիք հաւատացելոց. լծեալ ՛ի կառս այսինքն ՛ի չորեքնութեան մարմնոյ աշխարհի: Բայց լուացեալ սրբեալ և մաքրեալ եղանին հանգստարան փեսային. որում բազմի և Քրիստոս փեսայն երկնաւոր. որ նստի յաթոռ քերոբէական 2 Թագ. 22. 11: Դան. 3. 55. Վասնորոյ ասէ՝ դուք յիս և ես ՛ի ձեզ: եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ և հայր իմ սիրեսցէ զնա. և առ նա եկեսցուք, և յօթևանս առ նմա արասցուք Յով. 14. 20. 33. և Որ քան առայս գրէ և շնորհալին մեր սրբոն Ներսէս ՛ի Յիսուս որդի կոչեցեալ գրքոյն:

Որոյ քրօբէք՝ յաթոռ փառաց.
Նստաւ ՛ի նաւաստ խաչ արարած.

Եւ

Եւ զոր օրհնեն զաւք հրեշտակաց
գովեն մանկունք սոն ղխայ·
Իշխ օրինակ հրեղէն ազ գայ·
և անանակն հեթանո սայ·
Ոմն օրինօք զգօնա յայ·
ոմն արմուղ զհետ կա մայ·
Յորս բազմի բանն Աստո ւած·
մաքուր յայխ երկուց ա ղանկ:

Եւ ՚ի վաղճանի ընկղմէ զմարմին իւր ՚ի ծով. այսինքն ՚ի հող տապանի. և ինքն վերացեալ փառօք հասանի աւագանկալի փեսային իւր: Այսէր ասելն թէ՝ ձիոյն իմոյ ՚ի կառս փարաւոնի նմանեցուցի զքեզ: և Այս անուանէ զհարսն մերձաւոր իւր. ասելով թէ՝ Եզեկ. 16 զի հարսն հեռացեալ ՚ի փարաւոնէ, զզգամեաւնու զքաղցր լուծ, և զթեթև բեռն Քնի. և ձի ՚ի կառս հաւատոյ նորին. զորմէ լսէ թէ՝ ես Աստուած մերձաւոր եմ և ոչ հեռաւոր ասէ. Տէր. Երմ. 23. 23: և սբն Գրիգոր Նարեկացի ՚ի 23 գլուխ աղօթիցն. անմատչելի հեռաւոր՝ և անընդմիջելի մերձաւոր ասէ Աստուծոյ. Ձի մերձաւոր. ընկեր, և բարեկամ, և սիրելի՝ միևնոյնէ. որպէս առ աշակերտսն ասէր՝ դուք բարեկամքեք իմ. Յոհ. 15. 14: Ձի յաղթելով թշնամեացն բարեկամ և մերձաւոր լինի Աստուծոյ:

Օրհնուտ՝ ցհարսն ասէ. Քանզի գեղեցկացան ծնօտք քո իբրև տատրակի. պարանոց քո իբրև մանեակ:

Ձի որովհետև յանցեալում տանի փեսայն ձիոյ նմանեցոյց զհարսն. ուստի երևի թէ՝ տրտմութի իմն պատճառեցաւ սրտին հարսին. որպէս և ՚ի գիշերի մատնութեանն մինչ խօսէր ընդ աշակերտացն և պատմէր զչարչարանացն կրից. տրտմութի լցան ամենեքեան. վասնորոյ և զկնի մխիթարական բանս յառաջ եբերկ առնոսա: և Դուք այժմ (ասէ) տրտմութի ունիք. այլ դարձեալ տեսից զձեզ. և ուրախ լիցին սիրտք ձեր. և զուրախութիւնն ձեր ոչ ոք հանիցէ ՚ի ձէնջ Յոհ. 16. 6. 22. Նոյնպէս և օրհնողք զկնի բանից փեսային. աստ ինքեանք քաջալերս տան հարսին. ձանուցանելով թէ՝ փեսայն հոգւոյ, որ զքեզ ձիոյ նմանեցոյց. և այն սակս արագընթացութեան. և բազմածնելութեան, ՚ի պատերազմի արիութեան. և քաջութեան. և ոչ վասն վաւաշոտութե.

սան

սանձարձակութեան. յանդգնութեան. և անամօթութեան։ Կամ
ըստ հարսանց իշխանին աշխարհի՝ պագշոտութեան. բղջա-
խոհութեան. և պղծութեան. և աղտեղութեան։ Այլ դու
ողջախոհ իբրև զտատրակ. սանձեալ 'ի ներ լծոյ օրինաց
և պատուիրանաց փեսային. կորապարանոց զիմօք. և խոնար-
հութիւնն մանեկապէս շրջապատեալ զքև. զայս ասելով օրի-
որդացն զձիոյ նախատանսն 'ի բաց տանին 'ի հարսէն։ Վասն
այն ասէ. Քանզի Գեղեցկացան ծնօտք քո իբրև տատրակի. զի տատրակն է
թռչուն ինչ հեզ և սիրուն. կերպարանօք գեղեցիկ. և բնու-
թեամբ ողջախոհ. և ունի պատեալ զպարանոցաւն նիշ իմն իբ-
րև զմանեակ։ որոյ նմանեցուցանէ զծնօտ՝ և զպարանոց հար-
սին. որ մանեկաձև բոլոր զետեղեալ է 'ի մէջ գլխոյն և մար-
մնոյն. զի մաքուր և սուրբ անձինք այնպէս լինին միջնորդ 'ի
մէջ Աստուծոյ. և մարդոյ։ իբրև զՄովսէս՝ որ եկաց 'ի մէջ
տեառն. և ժողովրդեան. Օր. 5. 5։ և Ամովսածինն ասէ թէ՝
եթէ ոչ տեառն զօրութեանց թողեալ էր մեզ զաւակ 'ի Սիոն.
իբրև զՍոդոմ լինէաք և Գոմորայ նմանէաք. Ես. I. 9։ բայց
պարանոց մարդոյս բաղադրի երկուց մասանց. յառաջնոյ կող-
մանէ. որ ասեն կոկորդ. և յետևուստ որ ասեն ուլ. զի ձայնն կո-
կորդին կերպարանի. և ուլն որքան մնալի և ջլոտ լինի այնքան
մարդն ուժեղ և հաստատուն լինի։ Վասնորոյ և հարսն կոկոր-
դին կերպարանէ զօրհնութիւն տեառն. որ ասէ. օրհնեցից զՏ-
տէր յամենայն ժամ։ և թէ օրհնեալ է Աստուած և հայր տե-
մերոյ Յիսուսի Քրիստոսի. Սաղ. 33. 1։ 2Կոր. I. 3. այլև
ունի 'ի նորոյ կտակարանաց միջնորդն Յիսուս. և 'ի հեղումն ա-
րեան նորա. որ առաւել խօսի քան զԱբէլին. Եբր. 12. 24.

վասն որոյ ասէ։

Քանզի Գեղեցկացան ծնօտք քո իբրև տատրակի ասէ։ Եթէ գլուխ
եկեղեցւոյ հարսին է փեսայն Քրիստոս. յայտնի երևի թէ՝
և պարանոց նորին եղև սրբուհի կոյսն Մարիամ՝ ողջախոհ իբ
տատրակի. բոլորակ պարանոցաւ հանգոյն մանեկի. որոյ ոչ գոյ
եզր. որպէս խոնարհութիւն սրբոյ կուսին որ ոչ ունի չափ.
զի եղև մայր Աստուծոյ. և անուանեաց զինքն աղախին տեառն.
որով գեղեցկացաւ յոյժ։ և այնու զարդարեցան հարսնացեալք
Քրիստոսի. և զայնս արկին 'ի պարանոց իւրեանց. և գոլեցան
հեղի

digitised by A.R.A.R.@

Հեղինակաւն. Ամենայն դնէ զպատճառական շաղկապն Քրիստ՛
այսպիսի գեղեցիկ պարանոց կազմեցաւ գլխոյն եկեղեցւոյ՝
Հարսին Քրիստոսի. որոյ համեմատ ոչ գտանի։ Այլեւ ծնօտ
Հարսին, որպէս առաքեալքն որք բարձին ՚ի վերայ ինքեանց
զգլուխն Քրիստոսի անարատ պահելով զերկրպագելի եւ զպաշտելի
անունն փեսային Յիսուսի. որոյ աղագաւ հեղին զարիւնս
իւրեանց վասն անուան նորա։ Նոյնպէս արարին եւ առա-
քելաշաւիղ անձինք, որպէս համայն խոստովանող վկայք.
Բայց աստանօր երեւի թէ՝ որքան Սողոմոն, Մարգարէական
հոգւով կամի զհեթանոսական եկեղեցին՝ բաղդատել հրէական
եկեղեցւոյն՝ ծնօտի օրինակաւ, յորժամ սրբեցաւ եւ
ելբրու յեգիպտոսէ՝ խորհրդով սրբոյ աւազանին, եւ զօրա-
ցեալ գաւազանաւ խաչին, ընկղմեաց զերեւելին փարաւոն ՚ի
ծով կարմիր. ՚ի մտաւորին իբրեւ Ճշմարտութիւն, որպէս փեսայն
ահաւոր ՚ի հեթանոսաց զիմանալին փարաւոն խողխողն ՚ի ծով,
օրինակ այնմ որ ընկղմեալ է ՚ի ծովն հրեղէն Մատթ. 8. 32.
Դարձեալ գեղեցկացաւ ծնօտ հարսին. զի ծամէ զգաւոն
անարատ. եւ խոստովանի զատեր Յիսուս փեսայ իւր. եւ վարի
մեղմագին եւ քաղցրաձայն երգով իբրեւ զտատրակ։ Այլեւ
ծնօտ կոչին սպասաւորք բանին, եւ զօրութեամբ խորհուրդ
նորին. որպէս սուրբ հայրն Եսայեաս երից գործոց երկնչիմ
ասէր վասնայսորիկ ողբամ, եւ անմխիթար ազդ վարանիմ. նախ՝
յորժամ հանիցեն զհոգի իմ ՚ի մարմնոյ իմոյ. երկրորդ՝ մինչ
կայուցանեն զիս առաջի Աստուծոյ. երրորդ՝ երբ հասցէ
զատաստանն իմ։ Պարոնայք տէր Լեւոն ղմնեալ զի զլուծ սրբոյ աւե-
տարանին՝ յօժարաբար առնի. եւ զխաչ տեառն Յիսուսի՝ ուրա-
խութեամբ բառնայ. եւ զհետ նորա՝ հնազանդութեամբ երթայ.
Ըստ խրատու այնց՝ որք պատուիրեն թէ՝ զպարանոց ձեր
ենթարկեք ընդ լծով. եւ ընկալցի անձն ձեր զխրատ. Զի լուծ
նորա քաղցր է. լուր որդեակ խրատու հօր քոյ. եւ մի մերժեր
զօրէնս մօր քոյ, զի պսակ շնորհաց ընկալցիս ՚ի գլուխ քո, եւ
մանեակ ոսկի ՚ի պարանոցի քում. Սեր. 51. 34. Առակ. I. 8.
Որպէս ՚ի խորհուրդ ձիս տեսանեմք. որք զպարանոցն կորովի
մանեկաձեւ արարեալ հայելով յոստ՝ անսայթաք եւ զգոյշ գը-
նան յուղին, վազելով ընդ փափուկ եւ առապարաւ. Նոյնպէս եւ
հարսն

Հարսն՝ զանազան ձախորդութեամբ ելանէ յաշխարհէ. Որդ՝ տեսցուք և զյատկութիւն տատրակին. Նախ զի որպէս տատրակնէ թռչուն ինչ սիրուն. Նոյնպէս և հարսն թռչուն երկնային. որ թռչի ամպօք ընդ առաջ տեառն. և այնպէս յամենայն ժամ ընդ տեառն լինի Թես. 4. 16. Եւ է՝ սիրուն՝ զի բնական բնութեամբ է զարդարեալ. Երկրորդ՝ զի տատրակնէ հեզ կենդանի՝ նոյնպէս և հարսն, զուարթ երեսօք, հաճելի դիմօք, համեստ գնացիւք, շնորհալի բանիւք, և ազատաբարոյ 'ի տուրս. և Որպէս վասն Մովսիսի ասի թէ՝ այրն Մովսէս հեզ էր քան զամենայն մարդիկ որք էին 'ի վերայ երկրի Թուոց. 12. 3. Երրորդ՝ տատրակնէ կերպարանօք գեղեցիկ. և հարսն ըստ պատկերի Աստուծոյ արարեալ. Չորրորդ՝ բնութեամբէ ողջախոհ, և 'ի մեռանիլ վարուժանին՝ ոչ ևս լծակցի ընդ այլոյ. նոյնպէս և հարսնէ ողջախոհ, որպէս Յովսէփ, և Յուդիթ, և Պօղոս որ ասէ՝ յերիտասարդական ցանկութեանց փախիր. և երթ զհետ արդարութեան. 2 Տիմ. 22. Հինգերորդ՝ տատրակն միտ սգալի կենօք շրջի, և յարաժամ ողբայ. այնպէս և հարսն ողբալով ասէ՝ այր մի տառապեալ եմ ես ո՜վ ապրեցուսցէ զիս 'ի մարմնոյ աստի մահու. Հռ. 7. 24. Վեցերորդ՝ յանքոյթ տեղիս շրջի 'ի յանապատ և 'ի մայրիս բնակի. իսկ և հարսն բողոքէ՝ ո՞ տայր ինձ զթևս որպէս աղաւնոյ, զի թռչէի վերանայի, հեռացեալ դադարէի յանապատի. և թէ եղէ ես որպէս բու աւերակի տքնեցայ Սղ. 54. 7. և. 101. 7. Եօթներորդ՝ տատրակնէ գուշակ գարնան. նոյնպէս և հարսն, ըստ Յօհաննու ասէ՝ ապաշխարեցէք զի մերձեալէ արքայութիւնն Աստուծոյ. և Պօղոս ասէ՝ Ա՛րի որ ննջեսդ, և լուսատու լիցի քեզ Քրիստոս (Եփես.

Նմանութիւն տոհմոյ աղաւնւոյ թէ՝ հանդերձ նկարագրութեամբ մեծութեան.

Օրինորդք զկնի գալութեան հարսին. Դարձեալ պարգև ինչ խոստանան նմա. և թէ՝ զի՞նչէ որ խոստանան, ոչ յայտնեն. այլ՝ նման ոսկւոյ ասեն, և ոչ ոսկի. Զի ծանուցանել կամին թէ՝ որպէս արեգակն 'ի մէջ եօթն մոլորակ աստեղաց է պայծառ, նոյնպէս և ոսկին 'ի մէջ եօթն հրահալելեաց է ազնիւ. Նմանապէս և պարգևն զոր ընծայեմք քեզ 'ի հարսնութեան է ազնուագոյն. բայց ունի զարծաթեայ կիտուածս. զի զկնի ոսկւոյ

digitised by A.R.A.R.@

ոսկւոյ՝ արծաթնե յօրգին սրբեալ և մաքրեալ 'ի հողոյ Սղ. II · 7 : Զի որպէս բարեկամքն Յօբայ եկին առնել և ետուն նմա իւրաքանչիւրոք մէն մի որոջ և գինս ոսկի · Նաև Եղիազար ծառայն Աբրահամու մինչ կամեցաւ զՌեբեկայ հարսնացուցանել իսահակայ գինս ոսկի եդ յականջս նորա և ապարանջան 'ի ձեռս նորա · Ծնն · 24 · 22 · և Մանկունքն Քրիստոնեից՝ երբ զԱստուածմնեհ մատուցին հարսնացուցին Քրիստոսի՝ ագուցին նմա զպսակ հանդերձ, և արկին զոսկի գինս յականջս նորա Յուդ · 13 · Նոյնպէս և վարդապետք զերիս պարգևս ընծայեն հարսին եկեղեցւոյ, զորս կոչեն տեսութիւն, բերկրութիւն, և զմայլումն : Զի և 'ի խտեղծմանն զարդարեաց Աստուած զհոգիս մեր երրակի կարողութեամբ · այսինքն իմացականութեամբ, կամօք, և յիշողութեամբ · 'ի պատկեր երրորդութեան իւրոյ · իբրու գրաւ հաւատոյ յուսոյ և սիրոյ · որովք և 'ի կատարածի պսակէ և տայ զերիս օժիտս և մուծանէ 'ի յառագաստ :

Բայց իսկական զարդ հարսին՝ լինի մանեակ պարանոցին ապարանջան բազկին · զարդ անձին, և գինս ականջացն · և զայլս զորս կարգաւ թուէ · Եսայ · 3 · 20 : և Զայսոքիկ եթէ ոսկւոյ իցէ, և կամ այլ նիւթոյ, օրինօրդք նման ոսկւոյ ասեն զի տեսանելեօք զմտանսն ծանուցանեն : Որպէս Յօհաննէս զհիմունս երկնային քաղաքին՝ 'ի պատուական յականց և Եսայի կպարիսպն 'ի շափիւղայ և յապակի քարանց ասէ Յայտ · 21 · 19 · Եսայ · 54 · 11 : և Պօղոս յափշտակեալ յերրորդ՝ երկինս զտեսեալն և զլուեալն անկարանայ 'ի պատմել · զբանն Եսայեայ յառաջ արկանէ ասելով զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զայն պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց : Այսպէս և օրինօրդք խոստանան հարսին ծայրագոյն պարգև իմն · բայց եթէ իցէ զարդ անձին, կամին զի զՔրիստոս զգեցցի · և եթէ մանեակ ոսկի՝ զի զլուծ սրբոյ աւետարանին տարցէ · ապա եթէ ապարանջան՝ զի զթշնամին հարցէ · և եթէ՝ գինս՝ զի զպատուէր փեսային լուիցէ : Զի 'ի գինս ոսկի՝ սարդիոն պատուական յուլեալ բան իմաստուն յունկնդիր լսելիս Առակ · 25 · 11 · Նաև զայսոքիւք զարդաթեայ կիտուածս կարեմք իմանալ : Այլ և զպայծառ միտս

յատուկ

digitised by A.R.A.R.@

յատակ և զմաքուր խղճմտանս. որովք հարկաւորիմք յարաժամ
խոկալ և միշտ խորհիլ և մտածել զփառս երկնայինս զոր
առաքեալն քարոզէ՝ զվերինն խորհեցարուք ուր Քրիստոս
նստի. Կող. 3. I: Դարձեալ նմանութիւն ոսկւոյ. ասէ
Որոգինէս նմանութիւն էր և չէր ոսկի. որպէս գրաւորական
օրէնքն՝ ի ձեռն Մովսիսի տուեալ, զի ստուերքէին և ոչ ճշմա-
րտութիւն. նոյնպէս կային և աղիւսն. հարուածքն փարաւոնի
և ընկղմումն նորին՝ ի ձեռն գաւազանին լորամարգն մանանայն
և ամպն Ամաղէկ հերքեալ. սիւն ամպոյն և հրոյն. պատառեալ
վէմն, և երկոտասան վտակքն. բարձրացեալ օձն, լեառն Սինայ.
այսոքիկ ամենեքեան նմանութեան օրինակ և ստուերք էին.
որպէս ասէ գիր՝ զստուեր հանդերձելոցն բարեացն ունելին
օրէնքն, և ոչ զնոյն կերպարան իրացն Եբր. 10. I: և ճշմար-
տութիւնն՝ ի Յիսուսէ Քրիստոսէ եղեն Յոհ. I. 17: Նմանա-
պէս ստուեր՝ Մարգարէքն, և ճշմարտութիւն Քրիստոս
փրկիչն, զի նոքա որպէս փեսաւէր, և սա ճշմարիտ փեսայ.
Եթէ այսպէս առնուցուք, նման ոսկւոյ՝ օրէնքն Մովսիսական. և
ոսկի՝ սէր հաւատոյ Քրիստոնէական: Իսկ և արծաթեայ կէտա-
ւածքն՝ բանք Մարգարէիցն և քարոզ առաքելոց. որք հա-
նապազ հնչէին՝ ի յունկս հարսին եկեղեցւոյ, և յարաժամ լինին
ձայնիչ մտաց, և խթան երեսաց նորին: Ուրեմն նման ոսկւոյ
Մարգարէքն՝ սինակօկային. և ճշմարիտ ոսկի տէր Մարգա-
րէիցն՝ շնորհազարդ հարսին եկեղեցւոյ: Արծաթեայ կէտա-
ւածքն, գուշակութիւնք տեսանողացն. և վկայութիւնք առա-
քելոցն: Որպէս Մովսէս ասաց՝ Մարգարէ յարուսցէ ձեզ
տէր Աստուած ձեր Օր. 18. 15: և Եսայի թէ՝ ահա կոյս
յղասցի Ես. 7. 14: և Յովհաննէս ասէ՝ տեսաք և վկայեմք և
պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն որ էր առ Հօր, և
երևեցաւ մեզ I Յոհ. I. 2: Իսկ և Պետրոս թէ՝ որ յառաջ
ծանօթէր՝ նախ քան զիսկզբանէ աշխարհի. և երևեցաւ ՚ի
վախճան ժամանակաց վասն ձեր. I Պետ. I. 20:
Բայց գիտելի է, զի յՈսկանի տպագրեալ յԱստուածաշնչին
զայս տեղի ունի զայս նախադիր մի. որ ընթեռնանի այսպէս. նմա-
նութիւն ոսկւոյ արասցուք զքեզ: Իսկ արդ և մեք եթէ այս-
պէս իմասցուք, զմիտ բանին փոխել պարտիմք. յայնժամ նման
ոսկւոյ

digitised by A.R.A.R.@

ոսկւոյ ոչ զպարգևսն իմանի, այլ զանձն Հարսին Ճանաչի. որով՝
քանիւ ծանուցանել կամի Հարսին թէ՝ որպէս ոսկին ազ-
նիւ և յարգելի երկրաւորաց, նոյնպէս և մեք զքեզ այնպիսի
առաքինութեան զարդու զարդարեսցուք, մինչ զի և դու լիցիս
ազնիւ և յարգելի Աստուծոյ, և ցանկալի երկնաւորաց. Նման
ոսկւոյ արդարութեամբ փայլիս, և Հանգոյն արծաթոյ սրբու-
Ճառագայթիս: Զի որդիք սիոնի պատուականք են առաւել
քան զականս պատուականս Ողբ. 4. 2: Քանզի վարդապե-
տութեամբ սբ̃ գրոց է լուսաւոր. փայլմամբ առաքինութեանց՝
պայծառ. համեստութեամբ բարւոյ ծանր. հնազանդութեամբ
Ճախարակեալ. քաղցրութեամբ՝ ձայնաւոր. յարատևութեամբ
տարածեալ. յուսով կանգնեալ. Հաւատով ՚ի յԱստուած
հիմնեալ. սիրով ընդ Աստուծոյ կապակցեալ: Մանաւանդ երբե
զոսկի հանապազ հրով և կռանաւ հալածանաց փորձի. և տեսա-
կանաւ տարածի: Բայց Փիլոնոս ասէ թէ՝ ինն են նկատելիք ՚ի
յոսկւոջ. այսինքն զարմանալի ծնելութիւն. պայծառութիւն.
ծանրութիւն. դիւրութիւն նիւթոյ. հաստատութիւն, մաքրութի-
դեղնութիւն. սքանչելութիւն. և արժողութիւն: Վասնորոյ
ասէ փեսայն Հոգւոյ՝ արդարքն իբրև զարեգակն ծագեսցին
արքայութեան երկնից և Պօղոս ասէ՝ երևիցիք որպէս լուսաւորք
աշխարհի. Մատ. 13. 43: Փլպ̃. 2. 15:

Հանդերձ նշանակօք արծաթոյ. զի անմեղութիւնն է արծաթեայ
կիտուածք, որպէս այնք որք մնան ազատ ՚ի յեօթն մահացու
մեղաց. նոյնպէս և այլոյն ամենեցուն. և փոխարէն սոցայն ընդ-
դէմ հպարտութեան՝ զխոնարհութիւն, ընդդէմ նախանձու՝
զբարեհաճութիւն. ընդդէմ բարկութեան՝ զհեզութիւն. ընդ-
դէմ զագահութեան՝ զառատասրտութիւն. ընդդէմ ծուլութ՝
զարթնութիւն. ընդդէմ որկրամոլութեան՝ զպահեցողութիւն.
ընդդէմ բղջախոհութեան զողջախոհութիւն: Ապա որք և
կամիցի ձեռնահարել զարծաթ, զձեռս իւր աղտեղէ, և զար-
ծաթն փայլեցուցանէ. ուստի ունիմք զփորձն. որպէս անգութ
բռնաւորքն ձեռնարկեալ առ քրիստոնեայս պէսպէս տանջանօք
հանեին յաշխարհէ, և ինքեանք աղտեղեալ սևացան, և իջին ՚ի
դժոխս: Իբրև զկապար ընկղմեցան ՚ի ջուրս սաստիկս. Ել̃. 15.
10: Բայց հոգիք սրբոյն պայծառացեալ են ՚ի կամարս երկնից
և անդ գտին զհանգիստ:

Մինչ

digitised by A.R.A.R.@

Մինչև արքայ 'ի գիրկս իւր ընկալցի զԷէլ։ Հարսն ցնծայր անձն և ցնծացեալ ասէ։ Նարդոս իմ ետ զհոտ իւր։

Որպէս յանցեալ համարն գրեցաւ, թէ՝ օրինօքն խոստացան Հարսին՝ նման ոսկւոյ գրաւորական օրէնքն. և ոսկի աւետարանականն. կամ նման ոսկւոյ կենդանւոյ. և ոսկի համբերձեալն։ Բայց աստէն որ ասէ Մինչև արքայ 'ի գիրկս իւր ընկալցի ղեէղ. կը խոստացաւ մարգարէին թէ՝ որպէս մայր որ զմանուկ իւր գգուեսցէ, այնպէս գգուեցից զձեզ ասէ Տէր. Ես. 66. 13։ Որ իսկապէս եկն և գգուեաց զմարդկային բնութիւնս միաւորմամբ ընդ Աստուածային բնութեան իւրոյ. նաև 'ի գիրկս Հարսին եկեղեցւոյ ընկալաւ զմանուկն 'ի գիրկս իւր (Մրկ. 9. 35։ Անկաւ զպարանոցաւն, գրկեաց և համբուրեաց որպէս զանառակ որդին։ և զփոքրիկ աշակերտն ընկալաւ 'ի լանջս։ Այսպէս և զամենայն խոստացեալսն կատարեաց ասելով. ես էի որ խօսէի ընդ քեզ. աւասիկ եկեալ հասի. Ես. 12. 6։ Նոյնպէս առնէ և 'ի համբերձեալսն համգոյն Ղազարու, և ծնանդր քան զնա Ղկ. 16. 23։ Զի որպէս գրաւորական օրէնքն նման ոսկւոյ տրեցաւ ձեռամբ Մովսիսի յիսրայէլեան տոհմին արծաթեայ կիտուածովք. այսինքն պէսպէս պատուիրանօք և որք ընկալեալ մտերմաբար պահեցին. փեսայ արքայն եկեալ աշխարհ, զայնոսիկ ընկալաւ 'ի գիրկս (որպէս 'ի վերայ) և զկենարար մարմին իւր ետ նոցա 'ի կերակուր և զարիւն իւր ըմպելի։ Նոյնպէս առնէ և 'ի շնորհահան յօրէնս, զորս տեւէ մինչև յերկրորդ գալուստ փեսային յորում աւուր կոչէ առ ինքն զկամարարս իւր. և զընտրեալսն ընկալնու 'ի գիրկս արքայութեան իւրոյ. ուր ոչ ևս հարկաւորի վարել. և ոչ վաստակել. ոչ սերմանել և ոչ հնձել. ոչ առնել և ոչ վաճառել. ոչ զմեռեալս թաղել և ոչ հիւանդաց այց առնել. ոչ զքաղցեալս կերակրել և ոչ զբանտարգեալս տեսանել. և ոչ կրել հոգս աշխարհի. ոչ ցաւք և ոչ տրտմութիւնք. մանաւանդ հնարագիտութիւնք և ամենայն թոյնք զարանակալ օձին ոչ կարէ զօրել. անդ եղանի ուրախութիւն հանուրց և մակաղատեղիք խաշանց. անդ մարգագետինք և խաղք. անդ եղիցի Ճանապարհ մաքրեալ. և Ճանապարհ սուրբ կոչեսցի. և մի՛ անցցէ ընդ նա պիղծ. և ոչ եղիցի անդ Ճանապարհ պղծոյ. այլ ցրուեալքն գնասցեն 'ի նմա և մի՛ մոլորեսցին. մի՛ եղիցի անդ

առիւծ

digitised by A.R.A.R.@

առ խնձ. և ՚ի գազանաց չարաց՝ ընդ այն մի՛ անցանիցէ. այլ ՚ի նա
գնասցեն փրկեալքն, և ժողովեալքն վասն տեառն. Ես. 35. 7.
անդ ծայրագոյն փեսայն հոգւոյ քաղցր բարբառով ասէ՝ եկայք
օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէ՛ք զպատրաստեալ ձեզ արքայ-
ութիւնն ՚ի սկզբանէ աշխարհի. Մատ. 25. 34. Իսկ ընդ այնր
ոսկեայ պարգևի շնորհէ նաև զերծաթեայ կիտուածս. Նախ՝
առողջութիւն առանց հիւանդութեան. զի նա զհիւանդութիւնս
մեր վերացոյց և զցաւս մեր եբարձ. Մատ. 8. 17. Երկրորդ՝
մանկութիւն անծերանալի. որպէս ասէ Դաւիթ, նորոգեսցի
որպէս արծուոյ մանկութիւն քո. Սղ. 102. 5. Երրորդ՝ յա-
գումն առանց տաղտկանալոյ. զի կայ ՚ի գիր թէ՝ յագեցայց
երևել փառաց քոց. Սղ. 16. 15. Չորրորդ՝ ազատութիւն
նրբութիւն, և թեթևութիւն. ըստայնմ իբրև զկայծակն ընդ
եղէգն ընթասցին. Իմ. 3. 7. Հինգերորդ՝ գեղեցկութիւն
առանց տգեղութեան, որպէս ասէ՝ իմաստունք ծագեսցին իբրև
զլուսաւորութիւն. և արդարքն իբրև զաստեղս ՚ի յաւիտեան
Դան. 12. 3. Վեցերորդ՝ անկրականութիւն, զի ասէ Մար-
գարէն, մի՛ անկցի ՚ի վերայ նոցա արև, և ոչ տօթ, և ՚ի բաց ըն-
կեսցեն զմահ ՚ի յաւիտեան. Եօթներորդ՝ եղիցին առանց իմիք
կարօտութեան. քանզի ասէ՝ տացէ ձեզ տէր տեղի որում ոչ
իցէ նուազութիւն յամենայն բանի որ ինչ իցէ յերկրի. Դատ.
18. 10. Ութերորդ՝ խաղաղութիւն առանց խռովութեան.
ըստ որում գրի, ո՛ եդ զսահմանս քո ՚ի խաղաղութեան Սղ 147. 4.
Իններորդ՝ անհոգութիւն առանց երկիւղի. ըստ Դաւթի՝
տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց, տէր ապաւէն
կենաց իմոց՝ ես յումմէ դողացայց. Սղ. 26. 1. Տասներորդ՝
ծանօթութիւն առանց գիտութեան. ըստ Պօղոսի այժմ խելա-
մուտ եմ փոքր ՚ի շատէ. այլ յայնժամ գիտացից որպէս և նոյն
ծանեաւ զիս I Կոր. 13. 12. Մետասաներորդ՝ փառք առանց
անարգանաց. յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն մեր. յայն-
ժամ և մեք յայտնեսցուք ընդ նմա փառօք. Կող. 3. 4. Երկո-
տասաներորդ՝ ուրախութիւն առանց տրտմութեան և դուք
այժմ տրտմութիւն ունիք. այլ դարձեալ տեսից զձեզ, և
ուրախ լիցին սիրտք ձեր. և զուրախութիւն ձեր ոչ ոք հանիցէ
՚ի ձէնջ Յով. 16. 22. Այդ որ ասէ մինչ և արքայ ՚ի գեհե-

լուր

digitised by A.R.A.R.@

խոր ընկալցի զքեզ։ Զի այսպէս ընկալնու արքայն երկնաւոր զհարսն՝ ի գիրկս խոր. որպէս զՂազարոս՝ ի գոգն Աբրահամու.

( Համարն չորս անձն և չքնաղայն աւէ ) Նարդոս իմ ետուր զհոտ իւր։

Աստանօր հարսն մինչ լուաւ օրհնորդայն զգեղեցկութիւն խոր. և զխոստացեալ պարգևսն. և զպատրաստեալ տեղին հանգստեան. յայնժամ արժան վարկաւ զինքն և զփեսայն Նարդոսի համեմատել. քանզի Նարդոսն է բոյս ինչ փոքրիկ. բնութեամբ ջերմ, և յոյժ հոտաբոյր, և՝ ի ներ բնաւից ծաղկանց սաէ պարարտ, իւղալի, և մշտադալար, գեղեցիկ, և փնջաւոր, և որ հոտոտէ զփունջն՝ զօրացուցանէ զուղեղն, զսիրտն, և զստամոքսն, և օգնէ ընդդէմ պակասութեան սրտի, մանաւանդ բժիշկք իւղով սորա օծանեն զհիւանդս. զի ունի մեծ զօրութիւն՝ ի դեղորայս. վասնորոյ զսա օրինակ առնու հարսն անձին իւրոյ և փեսային. զոր Պօղոս ուսուցանէ թէ՝ աղաչեմ զձեզ նմանողք ինձ եղիջիք որպէս և ես, Քրիստոսի I Կոր. 4. 16։ որոյ համգոյն և հարսն հոտով բերկրեցոյց զփեսայն. որպէս ասէ Մովսէս և հոտոտեցաւ տէր Աստուած ՝ի հոտ անուշից Ծնդ. 8. 21։ Իսկ և որպէս հարսն՝ զփեսայն եղբօր որդի անուանէ. նոյնպէս և փեսայն զհարսն՝ որդի անուամբ գովաբանէ ահա հոտ որդւոյ իմոյ իբրև զհոտ անդոյ լիոյ. Ծնդ. 25. 27. Այսպէս և համայն հարսնացեալք բուրեցին զհոտ Նարդոսի խոնարհութեան. գիտելով թէ՝ ուր խոնարհութիւն է, և անդ իմաստութիւն Առկ. II. 2։ ուստի և Դաւիթ ասէր, որդն եմ ես և ոչ եմ մարդ Սղ. 21. 7։ և Օստրայն ասէ՝ հող և մոխիր համարիմ զանձն իմ Յոբ. 42. 6. և Պօղոս թէ՝ ես իսկ եմ տրուպն առաքելոց. որ չեմ իսկ արժանի թէ կոչեցայց առաքեալ I Կոր. 15. 9։ Նարդոս իմ ետուր զհոտ իւր. տեսդու զխորհրդաւոր հարսն, թէ որպէս զինքն և զփեսայն համանգամայն միապէս Նարդոսի նմանեցոյց. որոյ զյատկութիւնսն հարկաւորիմ համառօտակի գրել. Նախ զի որպէս Նարդոսն է բոյս ինչ փոքրիկ, և փեսայն հոգւոյ՝ զանձն ունայնացոյց, զկերպարանս ծառայի էառ, ՝ի նմանութիւն մարդկան եղեալ և կերպարանօք գտեալ իբրև զմարդ, խոնարհեցոյց զանձն լեալ հնազանդ մահու չափ, և մահու խաչի Փլպ. 2. 7։ Նոյնպէս և հարսն՝ ըստ Գեդէոնի ասէ՝ հայր իմ աղքատ է՝ ի մէջ Մանասէի.

և

և ես կրտսեր 'ի տան հօր իմոյ Դատ. 6. 15: Երկրորդ՝ նար-
դոսն է բնութեամբ ջերմ. և Աստուած մեր հուր ծախիչ է: և
փեսայն ասէ, հուր եկի արկանել յերկիր. Եբր. 12. 29: և
Ղկ. 12. 19: և Հարսն ասէ՝ ջեռաւ սիրտ իմ 'ի փորի իմում,
և 'ի խորհուրդս իմ վառեսցի հուր Սղ. 38. 5. Երրորդ՝ նար-
դոսն է յոյժ հոտաբոյր. և զհոտ գիտութեան փեսայն յայտնի
առնէ մեօք յամենայն տեղիս: Զի նա սիրեաց զմեզ, և մատնեաց
զանձն իւր վասն մեր պատարագ, և զենումն 'ի հոտ անուշից.
2 Կր. 2. 14: Եփս. 5. 2: Նոյնպէս և Հարսն ասէ՝ ես իբրև
զորթ պտղաբերեցի զհամեղութի հոտոյ. և ծաղիկք իմ պտուղ
պատւոյ և համեստութեան, Սիր. 24. 23: Վասնորոյ 'ի յերգս
սրբոց Հռիփսիմեանց կուսանացն ասի. Քանզի հոտ անուշից
բուրեցայք 'ի Քրիստոս: և 'ի յերգս մարտիրոսաց ասէ եկեղեցիս
մեր. փոխանակ արեանն տեառն, ձեր արիւնդ հեղաւ յերկիր և
հոտ անոյշ բուրեաց յաշխարհ: Չորրորդ՝ նարդոսն է պարարտ
և իւղալի. և փեսայն հոգւոյ՝ զենաւ որպէս զեզն պարարակ: և
իբրև զորոջ առաջի կտրչի անմռունչ եկաց. Ղկ. 15. 27:
Ես. 53. 7: Որովք զեկեղեցիս հրէից և հեթանոսաց միացեալք
պարարտացան յոյժ: Ուստի և Հարսն ասէ՝ տեսիլ եղաք աշխար-
հի, և հրեշտակաց և մարդկան I Կր. 4. 9. Հինգերորդ՝
նարդոսն է գեղեցիկ յոյժ, և փեսայն գեղեցիկ տեսլեամբ քան
զամենայն որդիս մարդկան Սղ. 44. 3: Եւ ինքն ցհարսն ասէ՝
պատուական իւղ եղեր առաջի իմ. փառաւորեցար, և ես սիրեցի
զքեզ. և տաց զմարդիկ փոխանակ քո, և զիշխանս փոխանակ
գլխոյ քո. Ես. 43. 4: Վեցերորդ՝ նարդոսն է մշտադալար.
և փեսայն հոգւոյ Քրիստոս Յիսուս երէկ և այսօր նոյն և
յաւիտեան Եբր. 13. 8. Եւ առ Հարսն ասէ՝ որ ուտէ զմարմին
իմ, և ըմպէ զարիւն իմ, կեցցէ յաւիտեան Յոհ. 6. Եօթներորդ՝
նարդոսն է բոյս իմն փնջաւոր. զի փունջ ասի բազմութիւն հա-
ւաքեալ ծաղկանց, որ միապէս կապեալ 'ի մի առնեն իբրև
զմշտիկ, որպէս և ծաղիկն նարդոսի ունի զբազում փունջս
զետեղեալ 'ի ծայրս ծղի և եղեգան իւրում. Նոյնպէս և 'ի տնօրէ-
նութեան փեսային, զանճառելի զքանչելիսն, զհրաշսն, և զամե-
նայն նշանսն զետեղեալ 'ի չորից աւետարանչաց, արարեալ
իբրև զփունջս ծաղկանց, ընծայեալ հարսին եկեղեցւոյ որպէս
պսակ

digitised by A.R.A.R.@

պսակ. որով բուրէ և նա զհոտ նարդոսի, զողջութս և զողոր-
մութիւնս իւր վերընծայէ յերկինս։ Ութերորդ՝ փեսայն և
հարսն միապէս կոչեցան նարդոս. զի որպէս փեսայն կոչի Քս,
նոյնպէս և հարսն անուանի քրիստոնեայ։ Փեսայն ասէ հոգւ-
տեառն 'ի վերայ իմ. վասն որոյ և եօծ իսկ զիս. և հարսն ասէ՝
և որ եօծ զմեզ Աստուածէ. վասն այն հոտ անոյշեմք Քրիս-
տոսի առ Աստուած. Ի Կոր. 2. 14։ Բայց Նուրբոսն ասէ որով
կամի ծանուցանել թէ՝ առաքինութեամբ ես զառաքինին ճա-
նաչեմ, և սրբութեամբ զսուրբն գիտեմ, մաքրութեամբ զմաքուրն,
ողորմածութեամբ զողորմածն. անապականութեամբ զանապա-
կանն։ Զայսոսիկ զամենեսեան ձիր և պարգև փեսային իմոյ
Յիսուսի. որոյ աղաղակէ ասէ առանց իմ ոչ ինչ կարէք առնել։
Իսկ և ես այսոքիւք քարշեմ զհոտ նարդոսի եղբօր որդւոյն իմոյ
առ իս. որ զօրացուցանէ զուղեղս, և լնու զխելապատակս, և
բերկրեցուցանէ զսիրտ. և զկենարար մարմին և արիւն նորին
փարատէ զցաւս, և բժշկէ զվէրս, և շնորհէ զկեանս։

Նարդոս իմ բուրեաց զհոտ իւր ասէ յորժամ յեգիպտոսէ ել հարսն,
այսն պիղծ ել 'ի նմանէ. և հոտ փեսային բուրեաց յերկնաւորան
աղբիւրս յանապատին. 'ի միւսյն, 'ի մաննայն, 'ի ջուրն, որ 'ի
վիմէն. 'ի կախեալ օձն այսպէս և 'ի յայլոյ մինչև ինքն յայտնե-
ցաւ։ Զկնի որոյ՝ և արդ զհոտ հարսին գայ յամենայն մասանց
յանդամոց եկեղեցւոյն 'ի վարդապետաց, 'ի քահանայից, 'ի սարկա-
ւագաց, 'ի կուսանաց և 'ի յայլոց. խառնեալ ընդ հոտոյ փեսային
բուրէ 'ի քիմս ամենեցուն և զմայլեցուցանէ։

Ծրար ստաշխին եղբօրորդին իմ ինձ, 'ի մէջ ստեանց իմոց հանգիցէ։
'Ի յայլ թարգմանութիւնս գրեն թէ՝ ծրարս զմռսոյ սիրելին
իմ ինձ. իսկ եթէ զմուռս և եթէ ստաշխն՝ կամ ստաշխն՝ մի և
նոյն իրէ. զի ճխեծ իմն կաթեցեալ ինքնին 'ի զմռնենւոյ. որ-
ասի զմռսոյ. բայց մանաւանդ ստաշխն կոչի անուշահոտ իւղն
հանեալ 'ի նորահաս զմռսոյ. այսինքն 'ի զմռնենի կոչեցեալ
ծառոյ. իսկ ծրար կոչի վաթոյթ վարշամակի, որում մեծամեծք
զազնիւ ինչ փաթութեալ և ծրարեալ պահեն. որպէս ասի Ղկ.
19. 20. և որ յառաջ հարսն ինքն և զփեսայն միապէս նարդոսի
նմանեցոյց։ Դարձեալ և աստ հարսն զփեսայն յառակապէս 'ի
ծրարս ստաշխին և 'ի մէջ ստեանց իւրոց հանգուցանել ներբողէ։

Եւ

digitised by A.R.A.R.@

Եւ այս նմանէ սոյն գլխոյ երկու տան համարին. որ յոյժ խորհրդաւոր կերպիւ, գեղեցիկ գրուածովք, իւղ թափեալ անուանեալ· որովք կամի ծանուցանել թէ՝ որպէս ստաշխն իւղն ՚ի զմուռս մծրարեալ պահի. նոյնպէս եղբօրորդին իմ՝ կամ սիրելին իմ, է ինձ անուշահոտ ազնիւ իւղ. որ կենութիւնս մեր առեալ բուրեալ զհոտ իւր։ Քանզի նախ իբրու կայր ՚ի ծրարս ստաշխին, մինչեւ ՚ի ծոց յաւիտենականի հօր. և ՚ի ծրարս ստուերական օրինի, ՚ի ներ գունագոյն ձևոյ և նմանութեանց։ Այլ ՚ի միտս նախահարց, և մարգարէից ( տես և զայսոսիկ ՚ի սոյն գլխոյ նախկին համարին ) զորմէ պատմէ առաքեալն թէ՝ բազում մասամբք և բազում օրինակօք, խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր Եբր. I. I. Եւ ՚ի ժամանակի՝ ծրարեալ զԱստուածութիւնն մարդկութ ՚ի յարգանդ ամենամաքուր սբ. կուսին, ծրարեցաւ և ՚ի խանձարուրս. ՚ի յայրն և ՚ի մսուրս. և ՚ի գիրկս կուսին։ ՚ի տաճարն, և ՚ի գիրկս Սիմէոնի. ՚ի տան Զաքէի մաքսաւորին, և Սիմոնի բորոտին. և ՚ի վերնատան ՚ի սիրտս առաքելոյն։ ՚ի խաչին, և ՚ի գերեզմանին. ՚ի մօտս և ՚ի սիրտ երկրի. Այլ ՚ի յերկինս և ՚ի ներքին կողմ վարագուրին. և յարաժամ ծրարի ՚ի սիրտս հաւատացելոց։ և միշտ ծրարեալ լինի ՚ի հաղորդութեան ՚ի ներքոյ տեսակի հացի և գինւոյ։

Դարձեալ ծրարս զմռսոյ ասէ. նախ զի զմուռն է սաստիկ դառն, իսկ և փեսայն հոգւոյ ՚ի ժամէ ծննդեան մինչ ցկէտ յարութեան ծրարեցաւ ՚ի ներ դառն չարչարանաց, ըստ կանխագրութեան Մարգարէից, թէ՝ մանուկ ծնաւ մեզ. որոյ իշխանութիւն իւր ՚ի վերայ ուսոց իւրոյ. Եսայ. 9. 6. Որով համայն Աստուածաբանք իմանան զկիրս չարչարանաց նորին. զորս ՚ի մանկութեան ՚ի ծննդենէ սկսաւ։ Որպէս և ինքն ասէ՝ տնանկ և վաստակաւոր եմ ես ՚ի մանկութենէ իմմէ ՚ի բարձրութենէ խոնարհեցայ և ապշեցայ Սղ. 107. 17։ Զի զթիկունս իմ ետու ՚ի հարուածս, զծնօտս իմ ՚ի յապտակս. և զերեսս իմ ոչ դարձուցի յամօթոյ ընդ երեսս թքանելոյ Եսա. 50. 6։ Նմանապէս և հարսնացեալք նորին, սիրով և յօժարութեամբ տանին ամենայն դառնութեանց. որպէս և սրբազան առաքեալքն խնդալով գնային յերեսաց ատենին, զի արժանի եղեն անարգելոյ վասն անուան տեառն Գործ. 5. 41։ Երկրորդ՝ զմուռն անուշահոտ

digitised by A.R.A.R.@

հոտութեամբ գերազանց է քան զամենայն խունկս. և Քրիստոս փեսայն երկնաւոր սիրով գերազանց գտաւ քան զամենայն մարդիկ. Չի մեծ ես քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ ոք զանձն իւր դիցէ ՚ի վերայ բարեկամաց իւրոց Յոհ. 17. 13. և Հարսն ասէ ցփեսայն վասն քո մեռանիմք զօր հանապազ՝ համարեցաք սպանումն, Սղ. 43. 22. Եւ զաղօթս իւր մատուցանէ նմա իբրև զանուշահոտ խունկ. Յայտ. 5. 8. Երրորդ՝ զմուռն անապական պահէ զմարմինս մեռելոյ. նմանապէս չարչարանք և վիշտք փեսային անապական պահեն զմեզ մեռեալ հոգիս մեր. Վասն որոյ ասէ ես եկի զի զկեանս ունիցիք. և Սա հարսն ասէ՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո Ղկ. 7. 48. Չորրորդ՝ զմուռն հաստատէ զմիրտս, և դադարէ զդողս ոտից և ձեռաց. և խաչն փեսային Քրիստոսի՝ ուրախ առնէ զսիրտ հարսին. և հաստատէ զամենեսեան ՚ի հաւատս. և ամենեցուն շնորհէ զկենդանութիւն. քանզի նորա վիրօքն բժշկեցաք. և նա զցաւս մեր եբարձ Ես. 53. 5. Եղջեր ողկոյզ ասէ՝ Հարսն զփեսայն իւր եղբօրորդի անուանէ. նկատմամբ առ նախահարս, այսինքն ՚ի Դաւիթ, յԱբրահամ, յԻսահակ, և ՚ի Յակոբ, և ՚ի յայլ նահապետս, զորս եղբայր անուանմբ մակագրէ. յորոց սերեալ փեսայ հարսին՝ ըստ մարմնոյ. ուստի կոչի որդի Դաւթի. և առ նախկին ծնողսն նշմարելով լինի հարսն նոյին զաւակ, և եղբայր Դաւթի և փեսայն եղբօրորդի հարսին. վասն այն եղբօրորդի կոչէ. Թէ և ՚ի լատինս սիրելի և բարեկամ գրեն. Որպէս և փեսայն զհարսն բարեկամ անուանէ. Դուք բարեկամք էք իմ. Յոհ. 15. 14.

՚Ի մէջ այգեաց Էնգադեայ. զի արմատք ստեանցն ՚ի սրտէ բասանին. վասն որոյ և մեք ստեամբք իմանամք զսիրտն. քանզի ՚ի սիրտ յերկրի թաղեցաւ. Եւ որքան առ այս ասէ Մարգարէն, բոլորով սրտիւ իմով խնդրեցի զքեզ. Սղ. 118. 10. այսինքն ներքնով և արտաքնով. որպէս թէ՝ հոգւով և մարմնով. Զի որպէս երբեմն գանգատէր փեսայն թէ՝ աղուէսուց որջք գոն, և թռչնոց երկնից բոյն և որդւոյ մարդոյ ոչ գոյ զի ուր իջէ զգլուխ իւր. Մտթ. 8. 20. Եւ արդ՝ հարսն ՚ի մէջ ստեանց իւրոց ցուցանէ զտեղի հանգստեան փեսային. որպէս սրբուհի կոյսն Մարիամ ՚ի յարգանդի, իբրու ՚ի սրտի իւրում կրեաց զնա

ինն

digitised by A.R.A.R.@

լինի ամիս․ և զկնի ծննդեան ՚ի գիրկս՝ որպէս ՚ի մէջ սրտի խորոյ հանգչի։ Այս հարսնացեալք նորին յորժամ կրեն զնա ՚ի սրտի յիշողութեան․ և ճաշակմամբ մարմնոյ և արեան կրեն ՚ի սրտի։ Ուստի ասէ բեռնաւորս, Յիսուս մեղր ՚ի բերանս, քնար ՚ի լսելիս, զուարճութի ՚ի սիրտս։ Զի և Մովսէսի պատգամաւ յանձնեաց թէ՝ սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ․ Եւ եղիցին պատգամքս այսոքիկ ՚ի սրտի քում և յանձին քում․ Օր․ 6․ 5։ Վասնայն խրատէ Սողոմոն թէ՝ ամենայն պահպանութեամբ պահեա զսիրտ քո Առ․ 4․ 33։ Սոյնպէս և ամենայն սրբասունք արք, զպատուիրանս Աստուծոյ, և զբե-կեալ նորա յորժամ կրեն ՚ի սրտի, որպէս զփեսայն։ Այլ և սոքիք եկեղեցւոյ հարսին քահանայք որք յորժամ ջամբեն որդւոց Սիոնի զկաթն փրկարար, զմարմին և զարիւն որդւոյն Աստուծոյ, որով զարգանան հոգևոր անարատ կաթամբ, իբրև զարդի ծնեալ մանկունս անխարդախ կաթին փափագօղք I Պետ․ 2․ 2։ և այլոց և ուսուցանեն․ որք ըստ սրբազանին Պօղոսի, ոմանց լինին հոտ՚ի մահուանէ ՚ի մահ, (որպէս անհաւատից․ և անզղջ մեղաւորաց) և ոմանց ՚ի կենդանութենէ ՚ի կեանս (որպէս հաւատացելոց և զղջացելոց) զի և ինքն Պօղոս իբր պատուական մաքուր անօթ զփեսայն հոգւոյ միշտ ՚ի սրտի իւրում կրէր, որպէս հոգի իւր․ վասնայն ասէր․ Քրիստոս լինես ընդ ձեզ խօսի․ 2 Կոր․ 2․ 16։ և 13․ 3։ Նոյնպէս և Իգնատիոս Աստուածազգեստն, Քրիստոս ասէ ունիմ ասելն, լուեալ բռնաւորին՝ հրամայեաց պրել թէ և խաչեալն ընդ նմա պրեսցի։

Ողկոյզ ծաղկեալ եղբօրորդին իմ ինձ․ ՚ի մէջ այգեստանեացն Ենգադդեայ։

Որով հետև զերազնիւ փեսայն հոգւոյ նախապէս Նազովրայեցի կոչեցաւ Մատ․ 2 23։ Որ թարգմանի ծաղկեալ․ զի ծաղկեցաւ ՚ի կոյս մօրէ․ ըստ կանխագուշակութեան Մարգարէին․ թէ՝ բղխեսցէ գաւազան յարմատոյն յեսսեայ․ և ելցէ ծաղիկ յարմատոյ անտի Ես․ 11․ 1։ Թէպէտ ծաղիկ անուն է հասարակ, որ ասի բնաւից ծաղկանց, որպէս զշուշանէ․ զնարգոսէ, զմանուշակէ, զվարդոյ, և կամ զծաղկանց ծառոց։ Բայց հարսն ողկոյզ ծաղկեալ ասէ՝ ոչ և ինքն փեսայն զհօրէ զԱստուծոյ ասէ թէ՝ ծաղկեցայց զի իբրև զնախախայծ խաղող Սիր․ 51․ 19։ Որոյ համաձայնի և հարսն։ Զի մինչ օրհնող հրեշտակք հարցին

կնա

չնա· վասն է՞ր կարմիրեն ձորձք քո, պատասխանեսցէ թէ՝ հնձան հարի Ես․ 63․ 2․ Զի ողկոյզն արկանեն ՚ի հնձանս։ Իսկ և ՚ի գիշերի փեսայութեան խորոյ ասէ առ աշակերտսն, ես եմ որթն ճշմարիտ Յով․ 15․ 1։ Եւ յայտնէ երևի թէ՝ ողկուզոյ ծաղկին առաւել համեմատի, քան թէ այ ոյզ։ և ՚ի ծաղկի հասակին, իբրև եղեն նորա ամք երկոտասան․ երթեալ նստէր ՚ի տաճարին ընդ վարդապետսն, և բուրէր յինքենէ զհոտ գեղեցիկ ծաղկի Աստուածային գիտութեան և իմաստութեան, զի ՚ի նոցանէ լսէր․ և հարցանէր զնոսա։ և զարմանային ամենեքեն որք լսէին ՚ի նմանէ ընդ իմաստութիւնն և ընդ պատասխանիս նորա․ Ղկ․․ 2․ 36։ Եւ իբրև եղև ամաց երեսնից յայտնեաց զինքն աշխարհի․ ընդ մկրտելն և կալ յաղօթս․ բանալ երկնից, և իջանել հոգւոյն սրբոյ մարմնաւոր տեսլեամբ իբրև աղաւնի ՚ի վերայ նորա․ և գալ ձայն երկնից որ ասէր․ դու ես որդի իմ սիրելի ընդ քեզ հաճեցայ։ Յայնժամ որպէս ծաղկեալ ողկոյզ որ փախուցանէ զօձս, և սատակէ զեռունս․ նոյնպէս և Յիսուսի հոգւով սրբով դարձաւ ՚ի յորդանանէ և վարէր հոգւովն յանապատ ՚ի քառասնօր փորձել ՚ի սատանայէ․ վաղվաղակի փախոյց զհնագոյն օձն դիւօք իւրովք, Ղկ․․ 3․ 21։ Եւ սատակեաց զզեռունս նորին ընկղմելով ՚ի ծով անդր ընդ խոզսն Մտթ․ 8․ 28։ Եւ որպէս համայն ցաւոց բժշկական դեղորայս ծաղկամբք շաղագուգի, որովք այգեքինի․ նոյնպէս ցաւոց և վիրաց մարդկային բնութեան՝ երկնաւոր բժիշկն կազմեաց ՚ի ծաղկանց յԱստուածութենէ և ՚ի մարդկութենէ դեղ կենաց․ որով կոյրք բացան․ խուլք լուան․ համրք խօսեցան․ կաղք գնացին․ բորոտք սրբեցան․ մեռեալք յարեան․ և տկարք զօրացան։ Վասնորոյ ասէ Ալբերթ, վասն մերոյ հիւանդութեան Քրիստոս եառ զդեղն․ քանզի բժշկեաց զմեզ․ անուանողութեամբ՝ յորժամ պահեաց զքառասուն տիւ և զքառասուն գիշեր․ Քրտամբք յորժամ եղեն քրտունք նորա իբրև զկայլակ արեան յերկիր հեղեալ։ Երակ հատանելով՝ յորժամ բևեռօք և գեղարդեամբ խոցեցաւ։ Ըմպելեաւ՝ յորժամ ճաշակեաց զքացախն ընդ լեղւոյն․ Սպեղանեաւ՝ յորժամ երեսք նորա թքով մածեցան։ Յօշարակաւ՝ յորժամ զմարմին և զարիւն իւր ետ աշակերտաց յետ ընթրեաց։ Դարձեալ յողկուզաց բղխէ գինի որ զհամեստ ըմպօղն զօրացուցանէ, և զսիրտ

նորին

digitised by A.R.A.R.@

նորին ուրախ առնէ. զմարմին սնուցանէ, և զտկարութիւնն
փարատէ: Վասնորոյ և Քրիստոս փեսայն հոգւոյ իբրև զող-
կոյզ արկաւ՛ ՚ի հնձան խաչին, և ճմլեալ ետ մեզ զգինի ուրա-
խարար. որ և արբեալ զօրացաք, և ուրախութեամբ լցեալ բեր-
կրեցաք: Որպէս ասէ Դաւիթ ըստ բազում ցաւոց սրտի իմոյ
մխիթարութիւն քո ուրախ առնէր զանձն իմ. Սղ. 63. 19.
Զի որպէս առաւելան չարչարանքն Քրիստոսի ՚ի մեզ. նոյնպէս
և ՚ի ձեռն Քրիստոսի առաւել լինի և մխիթարութիւնն մեր,
2 Կոր. Ա. 5: Ուստի ասէ Օգոստինոս՝ ուսիր ով քրիստոնեայ՝
թէ որքան պարտիս սիրել զՔրիստոս, որ ետ մեզ զմարմին
իւր ՚ի կերակուր, և զարիւն իւր ըմպելի. զհոգին ՚ի գին, զջուր
կողին ՚ի լուացումն, զհանդերձն խաչողաց. և զմայրն Յովհաննու
աւետարանչին:

Իսկ որ ասէ՝ ՚ի Այգեստանեաց Ենգադդեայ այսու և զտեղին, որոշէ
՚ի յայլ այգեաց: Զի Ենգադդեայ է անուն քաղաքի, որ է արևելա-
կողմ՝ եզերն Յուդայ, առ եզերբ աղի ծովուն, երկիր պարարտ և
արգաւանդահող: Բայց ասեն թէ ՚ի հին ժամանակս պալսամին
ծնանիւր ՚ի յԵնգադդեայ, և իբր այգի տնկիւր. և Կղէօպատրայ
թագուհին, զայգիս զայսոսիկ փոխեաց ՚ի յԵգիպտոս, և տնկեաց
զնոսա ՚ի դաշտն իւր, առ ընթեր եօթն աղբերաց, և ՚ի փախչել
կուսին ՚ի յԵգիպտոս, ասեն լուացեալ գոլ անդ զմանուկն Յի-
սուս ՚ի միւն յաղբերաց. և արդ՝ այգիքն այնոքիկ ոչ բերեն ըղ-
պտուղ եթէ ոչ դարմանիցին ՚ի քրիստոնէից, և պալսամ այգեացն
այնոցիկ են բժշկութիւնք ամենայն ցաւոց: Վասն որոյ և հարսն
զայն բերէ օրինակ, հանդոյն քաղաքին Դաւիթի Նազարեթ-
գեղջն, ուստի բողբոջեցաւ ծաղկեալ ողկոյզ միածին որդին
Աստուծոյ փեսայն հոգւոյ: Որ եղև մեզ դեղ կենաց, զոր գո-
վաբանէ հարսն, զմուսով զմահն, և ողկուզիւ զյարութիւնն
ծանուցանէ: Բայց Որոգինէս ասէ թէ Ենգադդէս էր նահա-
պետ տանն խաքարայ. զորմէ ասէ ՚ի պարապութենէ եղիցի
վիճակ քո. զի արգաւանդահող և յուռթի է հաս վիճակ նմա ՚ի
բաժնի եղբարց իւրոց, և ունի տեղի նշանաւոր ՚ի տեսս. որպէս
Սեդովը ՚ի Սոդոմայ. անդէ աշտարակին որ է հան փ...ձին զտեղին
մեր. որ կայ մինչև ցայսօր ՚ի նշան: և փեսայ հարսին Աստուա-
ծային ծնեալ ՚ի հօրէ իբրև զողկոյզ քաջուղէ ՚ի մէջ բազմախիտ
տնկոց

digitised by A.R.A.R.@

տնկոյ Մարգարէիցն՝ յայգւոջն Ենգադդայ. այսինքն յազգէն Հրէից, ՚ի յեղէն Յուդայ, ՚ի տանէն Դաւթի. ՚ի ձեռն Մարեամու ծնեալ եղև յանկեան, ՚ի տեղւոջ պարարտութեան. որում և բազմութիւն հրեշտակաց ընդ հովուացն ՚ի ծննդեանն շուրջ կացեալ տային զօրհնութիւն, և ասէին փառքն ՚ի բարձունս Աստուծոյ։ Որոյ զկնի ՚ի խաչ բարձրացաւ ՚ի տեղւոջն կոչեցեալ Գողգոթայ. ապա խոցեցեալ եղև անուշակ գինի և տուաւ յարբումն հարսին. զի որպէս ՚ի պատառեալ վիմէն տուաւ ջուր՝ տրտնջօղ ազգին Հրէից, նոյնպէս և ՚ի պատառեալ կողէն, ուստի ել արիւն և ջուր տուաւ գոհացօղ ազգին հեթանոսաց։

Փեսայն ի հարսն ասէ։ Ահաւասիկ ես գեղեցիկ Մերձաւոր իմ. ահաւասիկ ես գեղեցիկ, աչք քո աղաւնոյ։

Զոր նախ հարսն դրուատեաց զփեսայն իւր, և արդ նա իսկոյն վաղվաղակի զփոխարէն հատուցանէ. Բայց կրկնելովն. այսինքն տեսականաւ և գործնականաւ գեղեցիկ ես ասէ։ Տեսականն հոգւով. և գործնականն մարմնով։ Տեսականն ՚ի ներքուստ. և գործնականն արտաքուստ։ Քանզի ամենայն փառք դստեր Թագաւորի ՚ի ներքուստ, ՚ի վերջաւորս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ. Սղ. 24. 13։ Ահաւասիկ. մակբայն խնդութեան է նշանակ. որպէս հրեշտակ տեառն առ հովիւսն ասաց՝ ահաւասիկ աւետարանեմ ձեզ զուրախութիւն մեծ. Ղկ. 2. 10։ Նոյնպէս և փեսայն խոր հրճուական, ուաւ զդրուատ հարսին. ուստի հաճեցաւ, և զայն ծանուցանել նմա. ըստ այնմ ահա արդարև իսրայելացի յորում նենգութիւն ոչ գոյ. Յօհ. I. 47։ Որով գեղեցկացար, և ծանեար զիս փեսայ քո. Վասնորոյ բարոզք ներբողեցեր, և յարմար օրինակաւ ծանուցեր, ըստ Դաւթի որ յամենայնէ սրտէ գովեաց զՏէր. Սիր. 47. Գեղեցիկ ես ասէ՝ թէպէտ անձինք ոմանք գովեցան՝ ըստ մասին գեղեցկութեան, որպէս Սաւուղ՝ քան զամենայն ժողովուրդն թիկամբ չափ բարձրութեամբն. Նոյնպէս և Ասայէլ թեթևութեամբն։ Աբեսաղոմ հերօքն. Եզեկիայ աչօքն. Սաղոմոն իմաստութեամբն. և Բազում արք խոհեմութեամբ. և կանայք դիմօք. Բայց հարսն ամենեքումբք։ Զի զհին մարդն մերկացաւ, և զնորն զգեցաւ. Կղս. 3. 9։ Վասնորոյ գեղեցիկ ես ասէ, և կրկնէ, զի զմին տեսակս սկզբնական մեղաց լուանիլոյն. և

զեկ

զերկրորդն՝ զշքմամբ 'ի յաղօթս մաքրելոյն Դաւրձել գեղեցիկ և ծե-
ծաւոր է Ն. ասէ, զի տաճար կազմեցաւ բանին Աստուծոյ. և 'ի նմա
բնակեցաւ Հոգին Աստուծոյ Կոր. 3. 16. և մերձաւոր իմ ասէ,
զի 'ի պատկերի Աստուծոյ արարաւ. և հեռաւորքեր մերձա-
ւոր եղև արեամբն Քրիստոսի. զի և հարսն այնպէս պատ-
ուիրեցաւ յօրինորդ կոչեցեալ առաքելոյ սրբոյ. թէ՝ մերձե-
ցարուք առ Աստուած, և նա մերձեսցի առ ձեզ Եփ. 2. 13.
Յկ. 4. 18. Աչք քո աղաւնոյ, աչօք իմանամք զգուշութիւնն, և
զշրջահայեցութիւնն հարսին, հանգոյն խոհեմարանց որք ըզ-
գուշանան յամենայն կողմանց. զի յետուստ զանցեալսն մոռանան.
և յառաջ կուսէ զապագայսն նկատեն. 'ի յաջմէ զյաջողութիւնս
արհամարհեն. և յահեկէ ձախողութեամբ կրթին. Վասնորոյ
փեսայն գովէ զաչս հարսին. և ասէ՝ երանի աչաց որք տեսանե-
յեն զոր տեսանէքդ. Ամէն ասեմ ձեզ զի բազում Մարգարէք և
թագաւորք կամեցան տեսանել զոր դուքդ տեսանէք՝ և ոչ
տեսին. և լսել՝ զոր լսէքդ և ոչ լուան. Ղկ. 10. 23. Նըման
ծերոյն Սիմէոնի, զի տեսանել յուսայր զփեսայն հոգւոյ. և մինչ
ետես, ասաց. տեսին աչք իմ զփրկութիւն քո. Վասնայնորիկ
ասէ. երանի որք սրբքեն սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն
Մտթ. 5. 8. Առ որս ասէ Մարգարէն զթագաւորն փառաց
տեսցեն աչք ձեր. Ես. 33. 17. Վասնորոյ ասէ. աչք քո
աղաւնոյ, զի որպէս խաշինք գոլին եղջերօք. ձիք սմբակօք.
առիւծք ահարկութեամբ. արծուիք սլացմամբ. և աղաւնիք
աչօք. մանաւանդ աղաւնին հանդարտ և միամիտ թռչունէ. և
հարսն այնպէս լինել պատուէր ընկալաւ 'ի փեսայէն Մտթ.
10. 16. Երկրորդ՝ երամոլին շրջի. Ես. 60. 6. Երրորդ՝
թշնամի աղաւնւոյն կրկինէ. զի է որ յերկրի որսայ. և է որ 'ի
յօդս. Բայց մինչ նա կամիցի յերկրի որսալ, յայնժամ սա թռչի
յօդս. և յորժամ նա 'ի յօդն որսնէ, սա խոյսն իջանէ յերկիր.
Նոյնպէս և հարսն, մինչ տեսանէ զթշնամին բնութե մարդկան
որ կամի 'ի յերկրի որսալ ագահութեամբ. սա արհամարհէ զեր-
կրաւորս ամենայն, ասելով յամենայնէ զրկեցայ և համարիմ
կղկղանս զի զՔրիստոս փեսայն իմ շահեցայց Փլպ. 3. 8. և
եթէ նա 'ի բարձանց հպարտութեամբ և ամբարտաւանութեամբ.
սա խոնարհեալ յերկիր՝ հեզաբար ասէ ես հողեմ և մոխիր.

Որպէս

digitised by A.R.A.R.@

Որպէս եղբայր ոմն անկեալ յերկիր զերիս աւուրս ջերմ արտա-
սուօք ողբայր զմեղս իւր. ապա զկնի սկսան խորհուրդք իւր
շփոթել զինքն, և ասել լաւս եղեր մեծ ոմն և առաքինի, և նա
առժամայն դնէր առաջի զբազմութիւն մեղաց իւրոց և խո-
նարհէր յոյժ այնու: Դարձեալ ասէին խորհուրդք նորա՝ մեծա-
պէս մեղաւոր ես դու, և ոչ գոյ քեզ յոյս փրկութեան. իսկ և
դարձեալ ասէր՝ թէպէտ և յոյժ մեղաւորեմ ես, այլ յուսամ
յողորմութիւնն Աստուծոյ, որ է անթիւ, զի թերևս ողորմեսցի
ինձ: Եւ իբրև յերկուց կողմանց յաղթեցաւ թշնամին. Նոյն
ժամ երևեցաւ նմա դև ոմն դէմ յանդիման և ասէ ցնա. ձանձրացայ
ընդ քեզ մեր դու, ասէ ցնա եղբայրն ընդէ՞ր, ասէ դևն, եթէ
բարձրացուցանեմ զքեզ՝ դու փախուցեալ իջանես ՚ի խոնարհութիւն
և եթէ խոնարհեցուցանեմ՝ դու փութաս և ելանես ՚ի բարձ-
րութիւն. և ասէ ցնա եղբայրն, Տէր է զօրութիւն և ես յու-
սամ ՚ի նա. և դևն հալածեալ՝ եղև աներևոյթ: Տե՛ս Հ՟ռ՟նց. 321.
երեսն: Դարձեալ աղաւնին ՚ի յընկալնուլն զհաց ինչ ՚ի յուտել
և զջուր ինչ ՚ի յըմպել. խկոյն ամբառնայ զաչս իւր յերկինս.
իսկ և հարսն ոչ միայն զաչս մարմնոյն՝ այլ և զաչս մտացն յաւա-
ժամ սևեռեալ ունի դէպ ՚ի յերկինս առ փեսայն երկնաւոր
ասելով՝ առ քեզ Տէր համբարձի զաչս իմ: Նաև աղաւնին
հանապազ թաթաւէ զինքն ՚ի ջուր. իսկ և հարսն ասէ՝ լուայ
զամենայն գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս
իմ թացի:

Հարսն ցփեսայն ասէ. Ահաւասիկ ես գեղեցիկ եղբօրորդի իմ. և վայելուչ
առագաստս մեր հովանաւորք.

Տե՛ս աստանօր զխոհեմութիւն հարսին. զի զոր ինչ ընկալաւ
՚ի փեսայէն զնոյն դարձոյց առ նա: Որպէս թէ՝ կամի ասել
զքոյդ քեզ ընծայեմ. Ըստ քնարերգուն Դաւթի՝ մի մեզ տէր
մի՛ մեզ, այլ անուան քում տուր զփառս. Զի թէ իմ գոլով
ստեղծուած, այդ քան գոլութեան զիս արժանի արարեր. այլ
դու որ ստեղծօղ իմ ես, որքան անբաւ բիւրից գոլութեանց ես
արժանի. Զի ասէ Դիոնէսիոս գեղեցկութիւն փեսային մերոյ
Յս՟ի, գերազանցէ քան զամ գեղեցկուն: Մանաւանդ ՚ի մեծու-
և ՚ի գեղեցկութ՟ արարածոց ընդ նմին համեմատութ՟ և արարչա-
գործն նոյա երևի. Իմ՟ց. 13. 5. և Օհան դամասկացին ասէ՝
երկինք

երկինք պատմեն զփառս Աստուծոյ. ոչ զգալի ականջաց լսելի ձայնս արձակելով, այլ յիւրեանց մեծութենէն զզօրութիւն արարչին յանդիման մեզ կացուցանելով. զորոյ զկայունութիւնն գիտելով, որպէս զարուեստագէտս. և Առաքեալն՝ 'ի գիրս աշխարհի ասէ՝ 'ի ձեռն աչաց և լսելեաց և ամենայն զգայութեանց նկատեմք յետս զԱստուածային զօրութեան նշանակ. սակայն ոչ զգոյացութիւն. Զի աներեւոյթ քն Աստուծոյ 'ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսանի. Հռմ. I. 20. Իսկ և Օսորայի քաջ նահապետն ասէ՝ հարց ցչորքոտանիս՝ և ասիցեն քեզ. և թռչնոց երկնից՝ և ցուցցեն քեզ. Խօսեաց երկրի՝ և խելամուտ արասցէ զքեզ. և կամ պատմեսցեն քեզ ձկունք ծովու Յոբ. 12. 7. և Պղատոնքս եւարփեան փորձագէտն, Թագաւորն, և փիլիսոփայն եգիպտացւոց ասէ թէ՝ ընդհանուրն է գիրք Աստուածութեան. յորում ընթեռնումք զԱստուծոյ կարողութիւնն, զիմաստութիւնն, զգեղեցկութիւնն, և զբարութիւնն.

Վասնորոյ և հարսն ասէ ահաւասիկ գեղեցիկես անհամեմատելի բառն յանգելուամ տան մեկնեցաւ, նոյնպէս իմն և զատ. Բայց գեղեցիկ ասէ՝ սակս եօթն պատճառի. Նախ՝ գեղեցկախօսէ, զի 'ի վախճանս աւուրցս խօսեցաւ ընդ մեզ որդւովն. Որպէս 'ի խաչին, այնպէս գեղեցիկ խօսեցաւ, որ զԱստուած հայր հաշտեցոյց ընդ մարդկան Եբր. I. 2. Մրկ. 15. 34. Երկրորդ՝ հարուստ է, զի ամենայն արարածք նմա հայրենիք են. Վասնորոյ ասացին թէ՝ ամէ ժառանգն եկայք սպանցուք զնա. Քանզի որդին բնութ. և սեպհական տէր. մանաւանդ արեամբ ստացաւ զժառանգութիւն իւր. և ասէ իմ է աշխարհ ամենայն լրիւ իւրով, գեղեցկութ վայրի ընդ իս է. Մրկ. 12. 7. Սղ. 49. 11. Երրորդ գիտունէ՝ զի Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւնն է. Որով եղ յաւիտեանս արար. I Կոր. I. 24. Եբր. I. 2. Չորրորդ՝ գեղեցիկ է քան զամենայն որդիս մարդկան. Զի է լոյս փառաց, և նկարագիր էութեան նորա. Սղ. 44. 3. Եբր. I. 3. Հինգերորդ՝ զօրաւորէ. որ զամենայն կրէ բանիւ զօրութե իւրոյ. Եբր. I. 3. Վեցերորդ՝ ազնուական է զի նստաւ ընդ աջմէ մեծութեն Աստուծոյ 'ի բարձունս Եբր. I. 3. Եօթներորդ՝ անմահ է.

digitised by A.R.A.R.@

անմահ է. որպէս Եսայեանն խոստացան լինել, բայց դու նոյն ես և ամք քո ոչ անցանեն Սղ. 101. 28: և վայելչապէս գրեաց Դիոնիս՝ թէ՝ զԱստուած ամենայն գեղեցկութեան և վայելչութեան գեղեցկապետ և վայելչապետ և կարգադրողէ կատարելագոյն: և սաղմոսանուագն ասէ, ոչ ոք է նման քեզ յԱստուածս տէր, և ոչ ոք է որպէս գործս քո Սղ. 85. 8.

Ահա գեղեցիկ ես եղբօրորդի. այս այնմ նման է՝ յորժամ Սողոմոն շինեաց զտունն տեառն, զինի եկաց յաղօթս այսպէս. և ասէ. Տէր եղիցին աչք քո բաց, և ականջք քո առ՛ի լսել զպաղատանս՛ի տեղւոջս յայսմ 2 Մնց. 6. 40: Նոյնպէս և աստ արքայն Սողոմոն՛ի դիմաց հարսին պաղատի հրաւիրելով զփեսայն՛ի տուն իւր, առ՛ի բազմել՛ի գահոյս հոգւոյ իւրոյ: Զի գահոյք անուանին մահիճն յորում մեծատունք ննջեն, և հոլանի ծածկոյթն զոր ածեն՛ի վերայ. Եղբօրորդին՝ Քրիստոս փեսայն, ըստ մարմնոյն. և գահոյք հարսին՝ հոգի և մարմին մեր. և հոլանի Աստուածութիւնն, որ եկեալ բնակեաց միաւորութբ. և խառնեաց Աստուածային բնութիւնն ընդ մարդկային բնութ:

Ըստ Շնորհալւոյն.

Անմահ բնութիւնն Աստուածային.
մեռաւ մարմնով մահկանացուին.
Եւ մահացուն խառնեալ՛ի նմին.
եղև անմահ ընդ անմահին:

Դարձեալ գահոյք անուանին արդարացեալ հոգիք. զորս Պօղոս տաճար անուանէ, ասելով դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք. որպէս և ասաց Աստուած թէ բնակեցայց՛ի նոսա, և գնացից՛ի նոսա. և եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին իմ ժողովուրդ. 2 Կր. 6. 16: Դարձեալ հոլանաւորէ Աստուածային զօրութիւնն (որպէս՛ի հնումն իսրայելեայց բանակին) և միշտ ընդ մեզ շրջի. պահելով զմեզ յամենայն չարէ, ըստ այնմ տէր պահեսցէ զքեզ յամենայն չարէ, պահեսցէ տէր զանձն քո. Սղ. 112. 7: և այլ ուրեք Մարգարէին ծանուցանէ փեսայն հոգւոյ ասելով. ոչ թողից զքեզ. այլ՛ի մէջ քո և՛ յանօրէնութիւնս քո, վերակացու եղէց քեզ Ես. 43. 24: և արքան առայս՝ Դաւիթ ասէ՝ որդիք մարդկան՛ի հովանի թևոց քոց յուսասցին Սղ. 35. 8.

Գահոյն

digitised by A.R.A.R.@

Մէկնութ. եւթ եւթանց անուանեալ Ճառից Սողոմոնի։ Գլուխ. I. Համար 16.

Գովերգ պանց Երրոյ մարդ. պաշտամանցն Եր Նոճեաց.

Եւ որպէս յանկելում համարենի զարդիսութիւն գանձոյեն եւ մաճ-
ձայն ծանոյց. եւ աստանօր զտանյն յորում լինի մահիճն առորս
համբ չի փեսայն։ Եւ այս բազմած կերպին իմանամք։ Նախ տուն
Աստուծոյ բոլոր գունդն աշխարհի. որպէս ասէ՝ ով իսրայէլ
որպէս զի մեծ է տունն Աստուծոյ Բարուք. 3. 24։ Երկրորդ
երկնային յարկն՝ որում ցանկայր Դաւիթ ասելով՝ ուրախ եղէ
ես՝ որք ասէին ցիս՝ ի տուն տեառն երթիցուք մեք Սղ. 141.
1. Երրորդ՝ սրբագործեալ տաճարս զորմէ ասայ տուն իմ տուն
աղօթից կոչեսցի Եսայ. 56. 7։ Չորրորդ՝ զինուորեալ եկեղեցին.
առորս ասէ՝ ի տան մեծի, ոչ են միայն անօթք ոսկեղէնք կամ
արծաթեղէնք, այլ եւ կաւեղէնք եւ փայտեղէնք 2 Տիմ. 2. 20.
Հինգերորդ՝ իւրաքանչիւր ոք արդար հոգիք. ըստ առաքելոյն
որոյ տունն մեք իսկ եմք. Եբր. 3. 6։ Վեցերորդ՝ որ կոյսն
Մարիամ. ըստ Դաւթի տան քում վայելէ սրբութիւն Տէր ընդ
երկայն աւուրս. Սղ. 92. 5։ Եօթներորդ մարմին բանին Աս-
տուծոյ, ըստ Սողոմոնի, իմաստութիւն շինեաց իւր տուն, եւ
կանգնեաց սիւնս եօթն. Առ. 9. 1. Որոյ վերայ ասէ Լամբրոնա-
ցին. տուն իմացեալ Աստուծոյ բանին, զիւր մարմինն զոր շինէ
յարենէ սրբոյ կուսին իւր բեղմնաւորութեամբն միացաւ ընդ
նոյն, ոչ ըստ հաճութեան, այլ ըստ բնութեան. Քանզի եւ ինքն
զիւր մարմինն տաճար կոչէր յասելն. քակեցէք զտաճարդ զայդ։
Եւ եօթն սիւնքն են եօթն զօրութիւնք հոգւոյն սրբոյ. որ
հանգեաւ ի վերայ մարմնոյ նորին անօրինաբար. Որոյ միջնոր-
դութեամբն հեղանի առ հաճոյեալ անձամբ իւր կամ
ըստ Ներսիսի Լամբրոնացւոյն առ եօթն դասս սրբոյ առաքելոյ
մարգարէից. վարդապետաց. մարտիրոսաց, եւ այլոյն.
Այլ եւ հարսանեաց տունն է զինուորեալ եկեղեցին, որում հարսն
Քրիստոսի յաղթէ թշնամեաց բնութեան մերոյ. մարմնոյ,
աշխարհի եւ սատանայի. Վասնորոյ կոչի եւ սիւն. քանզի ասայ՝
որ յաղթեսցէ արարից զնա սիւն տաճարի Աստուծոյն իմոյ Յայտ.
3. 12։ Որոյ սիւն կոչեցան առաքեալքն եւ մարգարէքն.
ըստ այնմ ահաւասիկ եդի զքեզ այսօր իբրեւ զսիւն երկաթի եւ իբրեւ
զպարիսպ պղնձի ամուր. Գաղ. 2. 2. 9։ Երեմ. 1. 18։ Դար-
ձեալ տուն՝ եկեղեցի հաւատացելոց՝ ի հրէից եւ ի հեթանոսաց
միացեալ

digitised by A.R.A.R.@

միացեալ. գերան և սիւն բանն Աստուած մարմին եղեալ զի զնա եդ գլուխ ՚ի վերայ ամենայն եկեղեցւոյ որ է մարմին նորա, լրումն որ զամենայն յամենայնի լնու. Եփ. I. 22. Զի նա եղև վէմ անկեան երկուց ժողովրդոց, Հրէից և Հեթանոսաց՝ Իբրու գերան և սիւն. Մատ. 21. 42։ I Պետ. 2. 6։ Վասնորոյ ասէ՝ գերանք տանց մերոց մայրք. զի մայրն փախուցանէ զօձս անուշահոտութեամբ իւրով. որպէս խաչն զդևս զօրութեամբ իւրով։ Նաև ասեն բնագէտք թէ՝ մայրի ծառն է թագուհի ամենայն ծառոց. գեղեցիկ տեսլեամբ, և անուշահոտ, մշտադալար. յոյժ բարձր. անփուտ. փախուցանող օձից. յորմէ կազմեցաւ տապանակ կտակարանացն և տաճարն Սողոմոնի։ որով իմանամք զԱւետարանն վեսային Հոգւոյ, զի որպէս դարաւանդնէ շարեցեալ գերանք ծածքի տան։ Եւ կամ տախտակամած յօրինուածն որ լինի զառաստաղօք տանն. որք են ամրութիւք նորին, և գեղեցկութիւն և պայծառութիւն տանն որով ապահով մնան բնակիչք նորին. Նոյնպէս և սբ Աւետարանն Քրիստոսի՝ է ծածկոյթ վարուց Քրիստոնէից, ամրութիւն հաւատոյ, հաստատութիւն յուսոյ, պայծառութիւն սիրոյ գեղեցկութ Հոգւոյ։ Այլ և որպէս բոլոր անձին կենդանութիւն գեղեցկութ և պատկերացուցիչ գլուխն է, նմանապէս և բոլոր սբ գրոց կենք և հոգի գեղեցկութիւն և գլխաւորիչ անդամոց սբ Աւետարանըն է. վասնորոյ և Պօղոս գիր կոչէ զօրէնսն, և հոգի զԱւետարանն. գիրն սպանանէ (ասէ) այլ հոգին կեցուցանէ. Զի Աստուածաշունչ գրոց գլուխ սբ Աւետարանն է. զի ոչ զօրտաքնոց եղելոցն պատմէ, այլ զԱստուածոյ զմարմին լինելն հրապարակէ։ Վասնորոյ փառք և պսակ տան Հոգւոյ Հարսին սուրբ Աւետարանն է, որով պարծի ասելով գերանք տանց մերոց մայրք՝ և դարաւանդք մեր նոճիք։ Զի նոճի փայտն է անուշահոտ և ամուր յոյժ. և սբ հաւատ Հարսին եկեղեցւոյ է յոյժ անուշահոտ և հաստատուն։ Զի ամենայն կաշառ և անիրաւութիւն կորնչի և հաւատն հաստատուն մնայ. Սիր. 40. 12. Դարձեալ տուն եկեղեցին, գերան և ծածկոյթ՝ հին և նոր կտակարանն սիւն սպասաւորք նորին. զորս եդ Ած՝ յեկեղեցւոջ. որք իբրև զսիւն հաստատ և անսասան պահեն զտունն միջնորդութեամբ և սրբութեամբ։ իսկ և մեծն վարդան մայրի և նոճի զսակերան ասէ.

զոր

digitised by A.R.A.R.@

զոր էառ Ճարտարապետն Յիսուս, և վասն պատճոյ մայրի և նոճի անուանէ. զի թէ հերք գլխոյ առաքելոյ ասաց թուելեալ, որքան ոսկերքն. որ և վկայիցն առաւել փայլեն, քան 'ի կենդանութեան։

'Ի սոյն երկրորդ՝ գլխոյ՝ նախ փեսայն ծանուցանէ հարսին զնորոգութիւն անձին իւրոյ օրինակաւ, ծաղկի և շուշանի, որ բուսանի 'ի դաշտս և 'ի հովիտս։ և զկեցութիւն քեւն որ կեայ 'ի մէջ փշոց մեղաւորաց, որք ջանան հեղձուցանել։ Երկրորդ՝ խօսի հարսն զկերից փեսային, համգոյն խնձորի որ լինի 'ի փայտս անտառի, երբ 'ի նեբ մարդկանց աշխարհի. և յայտնէ զփափագմանս իւրոյ և զքաղցրութիւն պտղոյն զգայ։ և դարձեալ առ օրիորդսն ողջէ կատարել զխղճ իւր. և երդմնեցուցանէ զնոսա զարթուցանել զսիրելին. մինչև կցօթներորդ տունն։

Երրորդ՝ հարսն լուեալ զձայն փեսային, պատմէ զեկաւորութիւն նորին, և զընթացումն նման որթուց եղանց 'ի վերայ լերանց. Եւ դարձեալ նշան տայ զփեսայէն, և զկայութենէ նորին, և զանեղութե՝ և զհայեցումն 'ի վանդակապատ մարմնոյն պատուհանէ. և յայտնէ զպատասխանիս եղբօրորդւոյն. և զկոչումն իւր. և ապա է անցանելն ձմեռան. դադարումն անձրևաց փոփոխութեամբ և զվայելչութիւն այգեաց եկեղեցւոյ. և զծաղկիլն հաւատացելոյ, մինչև յտասնչորս համարն։

Չորրորդ՝ գրի հրամանն փեսային առ 'ի բառնալ զապականիչ աղուէսունս այգեաց։ Հինգերորդ՝ հարսն խնդրէ զեղբօրորդի իւր առ ինքն. և զինքն յանձնէ նմա մինչ 'ի շարժիլ ստուեր կենացաղոյս։

Փեսայն ցհարսն յաղագս անձին իւրոյ ասէ։ Ես ծաղիկ դաշտաց և շուշան հովտաց։

Զի մինչ փեսայն եմուտ 'ի տուն աշխարհիս, և կամեցաւ ինքն զինքն բարեպէս ծանուցանել մարդկան ազգի։ Ասաց ես եմ հաց կենաց. որպ մարմնով և արեամբ իւրով կերակրեաց զմեզ։ Ասաց ես եմ լոյս աշխարհի. և զմեզ ծովք խաւարեալ հոգւ մեր լուսաւորեաց։ Ասաց ես եմ Ճանապարհ և Ճշմարտութիւն և կեանք. զի զՃանապարհս երկնից արքայութեան եցոյց և մեզ. հաստատելոյ իւրոյ շնորհեաց կեանս։ Յով. 6. 48. 8. 12. և 14. 6. Ըստ որ արքայն Սողոմոն ինքն զօրով սիւն և պատկեր Ճշմար

digitised by A.R.A.R.@

Ճշմարտին Սողոմոնի, զորմէ պատմէ հարսին եկեղեցւոյ ասէ՝ ով ես ծաղիկ դաշտաց և շուշան՝. զի որպէս հինգ յատկութիւն տեսանեմք ՚ի ծաղիկս. այսինքն նիւթ. որակ, ձեւ, հոտ, և պէսպէս ներգործութիւն: Նոյնպէս և ՚ի փեսայն Հոգւոյ. նիւթ՝ մարմին նորին կազմեալ յարենէ սբ կուսին: Որակ անժամանակ՝ ծնեալ ՚ի Հօրէ անմայր, և ՚ի ժամանակի ծնեալ ՚ի մօրէ անհայր: Ձեւ՝ քանզի մարմին եղեւ և բնակեցաւ ՚ի մեզ. Հոտ՝ զլիութիւն շնորհացն: Պէսպէս ներգործութիւն՝ զանազան հրաշք նորին և սքանչելիքն: Բայց որ ծաղիկ դաշտաց, ասէ՝ զի ինքնաբոյս է և առանց օժանդակութեան մարդոյ բողբոջեալ, ոչ հերկեալ յերկրէ, և ոչ աղբով պարարտացեալ ՚ի տեղւոջ ոչ սերմանեալ յումեքէ, և ոչ ձեռամբ ուրուք տնկեալ: Նաև ոչ սակաւ անձանց ցուցեալ զինքն, այլ՝ անբաւ արանց հռչակեալ, և զգեղեցկութիւն իւր՝ յայտ յանդիման բնաւից կացուցեալ, և զհոտ իւր ՚ի քիմս ամենեցունց ծաւալեալ: գեղեցիկ տիպ, և յարմար օրինակ փեսայն Հոգւոյ:

Եւ շուշան հովտաց ասէ՝ զի նախ քան զմարմնանալն՝ էր իբրև զծաղիկ դաշտայ ՚ի յերկինս ՚ի բնակարանս թռչնոց հրեշտակաց. որ էր անկոխ ՚ի մարդկանէ: և զկնի եղև շուշան հովտաց. յորժամ էջ յարգանդ կուսին իբր ՚ի հովիտս. բնակելով անդ ինն ամսեայ ժամանակաւ: Զի որպէս հովիտն առանց նախապատրաստութե ուրուք բուսուցանէ զշուշան ջերմութեամբ արեգական ՚ի խոնաւութենէ երկրի. նոյնպէս և զօրութեամբ Հոգւոյն սրբոյ Ճշմարիտ արեգակն. կազմեցաւ մարմին փեսայն Հոգւոյ ՚ի խոնաւ յարենէ սբ կուսին: Ուստի վասն մաքուր ծննդեանն, և սբ կենդանարարութեանն նմանեցուցի զինքն շուշանի: Որոյ գեղեցկութիւնն անթառամ է և փառքն մշտնջենաւոր: Բուսաւ յերկրի և երևեցաւ յաշխարհի, սակս հասարակաց փրկութեան ՚ի ժամանակս ձմերան մովսիսական օրինաց ՚ի նորոգութեան աշխարհի, յորում գործեցան բազմազան հրաշք և կերպակերպ սքանչելիք. Վասնորոյ կոչեցաւ ծաղիկ առ որ հայել ցանկան անաղօտ հրեշտակք. կոչեցաւ ծաղիկ ՚ի յարմատոյն Յեսսեայ. բողբոջեալ ՚ի կուսական յարգանդէ ընդ իւրոյ Աստուածութե բաղադրեալ և միացեալ: կոչեցաւ շուշան սակս անմեղութեան. զի ոչ արար մեղս, և ոչ գտաւ նենգութիւն ՚ի բերան նորա.

Ի

digitised by A.R.A.R.@

I Պետ. 2. 22։ Բուսաւ՛ ՛ի հովիտս՝ ստորոտալ երկնային լերին ՛ի պտղաբերութիւն եկեղեցւոյ. ըստ կանխագիտութեան Մարգարէին թէ՝ դաշտք քո լցցին պարարտութեամբ. պարարտացին գեղեցկութիւն անապատի. Սղ. 64. 15։ Կոչեցաւ շուշան որոյ հոտն անմահին իբր. և ոչ գետնոյթեան և ըստ չափոյ շուշանին զեռ՛ղեալ է հատ. Նոյնպէս և Աստուածութիւնն պարագրելի մարմնով երևեալ. և ինքն անպարագրելի ՛ի պարագրելի մարմնում. և ընդ նմա միաւորեալ որպէս հուր ընդ ոսկւոյ. Բայց սրբուհի կոյսն Մարիամ, պարագրեալ զնա յարգանդի իւրում անպարագրապէս և ըստ բնութե. որպէս ասի ՛ի յերգս. Աստուածածին զերագոյն երկնից յուսոյ խորան և առագաստ քանզի ծագեալ լոյսն ՛ի հօրէ, բնութեանց էից անստանելին պարագրեցաւ ՛ի քում որովայնի։

Դարձեալ բայց ՛ի յայլոց յատկութեանց շուշանին, նաև խօսին բժիշկք թէ՝ հիւթ նորին օգնէ ամուլ կնոջ. որ տայ յղանալ և ծնանիլ։ Իսկ և շուշան ծաղիկն մեր Քրիստոս, որ չէ ծաղիկ պարտիզի. այլ դաշտի, և հոտ իւրոյ ողորմութե՛ ոչէ փակեալ, այլ արձակեալ. որով զմեռեալս՝ յարոյց, զկաղս՝ գնացոյց, զկոյրս՝ լուսաւորեաց, զականջս խլից եբաց, և զհամրոյ՝ խօսիլ շնորհեաց. և զերեմնութամբ զանդամալոյծն բժշկեաց։ Զի ոչէ շուշան լերանց, այլ ձորոց, և ոչ անկի ՛ի լերինս, այսինքն ՛ի սիրտս հպարտաց, այլ խոնարհաց։ և հիւթն այսորիկ շուշանի, է արիւնն Քրիստոսի, որ յղանալ և ծնանիլ տայ հաւատացելոց զորդիս հաւատոյ։ Բայց արդ. իսկապէս գիտել արժանէ, զի շուշան ծաղիկն է գեղեցկատեսիլ, փայլուն, և յոյժ հոտաւէտ. յորոց ոմանք լինին սպիտակ. ոմանք ծիրանեգոյն. ոմանք դեղին, և ոմանք կապուտակք։ Նոյնպէս և փեսայացեալ բանն հօր, եղև փայլուն և գեղեցիկ ՛ի Թաբօր յաւուր պայծառակերպութեան իւրոյ Մրկ. 9. 2։ Հոտաւէտ՛ ՛ի վարդապետութեան Ղկ. 11. 38։ Իսկ և սպիտակ ՛ի ծննդեանն, և յարութեանն։ դեղին՝ և հրագոյն՝ ըստ Աստուածութեանն։ ծիրանեգոյն՝ ՛ի խաչին հրձանահարութեն։ և կապուտակ՝ ՛ի մահուան և ՛ի գերեզմանի։

Որպէս շուշան ՛ի մէջ փշոց այնպէս և քոյր իմ ՛ի մէջ դստերաց։

Գեղեցիկ օրինակ, բայց ողբալի դիպուած. զի որպէս փեսայն Յիսուս յորժամ մերձեցաւ յԵրուսաղէմ, և տեսեալ զքաղաքն

ելաց

digitised by A.R.A.R.@

ելոյ ՚ի վերայ նորա. Ղեւ. 19. 31. և որպէս Երեմիաս ողբայր զերուսաղէմ աւերումն. պակասեցան աչք իմ յարտասուաց. խռովեցան որովայն իմ. յերկիր լուծան փառք իմ, ՚ի վերայ բեկման դստեր ժողովրդեան իմոյ. Ողբ. 2. 11. Նմանապէս և գերերջանիկ վեհարքայն Սողոմոն, Մարգարէական հոգւովն ՚ի դիմաց փեսային ողբայ զհարսն իւր եկեղեցի. օրինակաւ շուշան ծաղկի որ գտանի ՚ի մէջ փշոց. Բայց որպէս նախ գրեցաւ թէ՝ շուշան ծաղիկն է յոյժ գեղեցկատեսիլ, փայլուն և այլն". Նոյնպէս և մաքուր հարսն սա եկեղեցի է գեղեցիկ ուղղափառ հաւատով. փայլուն՝ Քրիստոնեայ մակագրութեամբ. հոտաւէտ առաքինական գործով, սպիտակ՝ ողջախոհ վարուք. ծիրանեգոյն՝ Մարտիրոսական վկայութեամբ. դեղին՝ երկար համբերութբ. կապոյտ՝ յարատև ճգնութեամբ. Բայց ՚ի սկզբանէ գտաւ որպէս շուշան ՚ի մէջ փշոց ՚ի նեղ պէսպէս թշնամեաց. և անտանելի հալածմանց, երբեմն ՚ի հեթանոսաց ՚ի կռապաշտ թագաւորաց, որ ՚ի Ներոնէ, ՚ի Տրայիանոսէ, ՚ի Դիոկղետիանոսէ, ՚ի Մաքսիմիանոսէ, ՚ի Յուլիանոսէ. զկնի յարիանոսաց. ՚ի մակեդոնականաց՝ ՚ի նեստորականաց. ՚ի քաղկեդոնականաց, և արդ ՚ի հրէից և ՚ի հերետիկոսաց, որք են դստերք սատանայի և հարսնայեալք նորա, որք հանգոյն փշոյ գուն գործեն, առ ՚ի հեղձուցանել զշուշանափայլ հարսն Քրիստոսի, թէև նա կայ անխախտ ՚ի դրանց դժոխոց. որպէս վարդ որ ոչ վնասի ՚ի փշոյ. նմանապէս ճշմարիտ հաւատացեալքն ՚ի մէջ անհաւատից. և հաստատուն արդարքն ՚ի մէջ մեղաւորաց ոչ վնասին. որպէս Ղովտ ՚ի մէջ սոդոմայեցւոց; կամ որպէս Յովսէփ ՚ի տան Պետափրեայ ներքինւոյ ոչ վնասեցան և ոչ ապականեցան, այլ մնացին անվնաս և անապականք. և զանօրէնս իբրև զփուշ մերժեցին 2 Թագ. 23. 6. Բայց Պետրոս նաւեալ ընդ քահանայապետին սպասաւորաց՝ ուրացաւ զտէր իւր. Յաղագս այնորիկ ասաց տէր յԱբրահամ ե՛լ յերկրէ քումմէ, և յազգէ քումմէ, և ՚ի տանէ հօր քո. Ծն. 12.

Քանզի որպէս Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ հարսին, նոյնպէս և սատանայ գլուխ է անօրինաց, անհաւատից՝ և անդարձ մեղաւորաց. որք ըստ հրամանի նորա գնան, և ըստ կամաց նորին շարժին. և որպէս փուշք ՚ի վերայ երկրի խայթեն և վիրաւորեն

զար

digitised by A.R.A.R.@

զարդար հոգւոյ Մատ. 13. 7։ Որովհետեւ հոգիքն են՝ ի մարմինս եւ շրջին՝ ի մէջ փշոյ, ուստի կրեն զանհանգստութիւն փորձութեանց, զի փուշք յանցանքն, փուշք պատիժն, սուտ եղբայրն եւ մերձակայ չարն, զորս կարգաւ պատմէ առաքեալն 2 Կոր. 11. 24. մինչ ցվերջն։ Զի գլխաւոր թշնամի ունիմք զաշխարհ, զմարմին, եւ զսատանայ, որք են խստագոյն փուշք հեղձուցանօղք հոգւոյ եւ սպասօղք զարշապարի մերոյ։ Քանզի մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, եւ հոգի հակառակ մարմնոյ Գաղ. 5. 17։ Եւ սատանայ իբրեւ զառիւծ գոչէ՝ շրջի եւ խնդրէ թէ զո կլանիցէ. 1 Պետ. 5. 8։ Ըստ որ եւ շնորհալի վարդապետն մեր սբն Ներսէս

զայս աղէտ զգալով եւ ինք ողբայ։
Ճառագայթ առէ փառաց.
զգեցոյց մարդոյն զանմահ կենաց։
Զկինն՝ ի կողէն արար հատուած
զօրէնս եդիր պատուիրանաց։
Մոլորեալ առէ առ՝ ի չարէն.
զմեր պատիւն որ արարչէն։
Էհան խաբմամբ առ՝ ի դրախտէն.
էած երկիր այս փշեղէն։

Քանզի աշխարհս զիւրն սիրէ. լուր սիրեցեալ աշակերտի փեսայացեալ բանին. Թէ՝ մի սիրէք զաշխարհ, եւ մի որ ինչ աշխարհի է։ Զի զամենայն որ ինչ աշխարհի է, ցանկութիւն է մարմնոյ, ցանկութիւն է աչաց, եւ ամբարտաւանութիւն աստի կենաց 1 Յոհ. 2. 15։ Ըստ որ առէ Բեռնարդոս ով սպիտակափայլ շուշան, ով կակուղ եւ փափուկ ծաղիկ որ կաս՝ ի մէջ խոտոյ. ուրեմն նկատեա եւ տես թէ որպէս զգուշութեամբ շրջելի է՝ ի մէջ փշոյ. զի լի է աշխարհս փշօք որք են՝ ի մարմնի քում՝ ի մէջ երկրի՝ ի մէջ օդոյ, ոչ ոք կարէ շրջիլ՝ ի դուրս, եթէ ոչ Աստուածային օժանդակութեամբ, եւ ոչ կարողութեամբ իւրով։ Վասն այնորիկ հրաժարիլ ցանկայր Մարգարէն ասելով. ո տայր ինձ զթեւս որպէս զաղաւնոյ զի թռչէի վերանայի. հեռացեալ դադարէի յանապատի. Սղ. 54. 7։ Վասն զի աշխարհս ունի՝ քարեկամութիւն անկայուն, ատելութիւն անբուժելի, ժամանակ անցական, սիրելութիւն անհիմն։ Որպէս սուրբ հայրն Անտոն զաշխարհս լի որոգայթիւք, կարթիւք, ցանցիւք, եւ մեքենայիւք

մինչեւ

digitised by A.R.A.R.@

մինչև յերկինս, և արգելումն զինայ զհետև մարդկանց յերկինս թռուցելոյ, փառաւորս լալով աղաղակելոյ. ո տէր յայսցանէ ով կարէ ապրել՝ լուաւ թէ միայն խոնարհքն։ Դարձեալ որպէս շուշան ՚ի մէջ փշոյ. ասէ նոյնպէս և հարսնացեալ զեկեղեցի եկեղեւոր փեսայինս կայ ՚ի մէջ այլոց եկեղեցեաց, այսինքն հրեից և հեթանոսաց, մանաւանդ հերետիկոսաց և հերձուածողաց՝ որք հալածեն և խեթեն. բայց նա պայծառանայ հաւատով. երկայնամիտ յուսով, համբերէ և յանձն առնու սիրով։ Զի փուշք են անօրէնքն՝ որք ոչ ունին զօրէնս. և անհաւատքն՝ որք ոչ ունին ուղղափառ և զսուրբ հաւատս, և ամբարիշտ անիրաւքն՝ որք ոչ ունին զիրաւունս՝ և զԱստուածահաճոյ գործս։ Այս հալածեն զբարիս, հակառակեն և ջանան ՚ի կենաց բառնալ. որպէս չար բռնաւորքն. կամ զրաւեն ընչից՝ որպէս վաշխառուքն. և կամ ապականեն զբարի բնութիւնս չար օրինակաւ և կեղծաւոր շարժմամբ շողոքորթական բանիւք, որպէս մոլի և վատթար չար առաջնորդքն, և հերձուածողքն և հերետիկոսքն, որք վարին ՚ի գեհեան, և եղանին որպէս զհեթանոս խարշեալք իբրև զփուշ յակարակի՝ այրեցեալք և լնկեցեալք. Եբ. 33 12։ Իսկ և թէ՝ վասն էր փեսայն քոյր անուանէ զհարսն իւր, տես յայտնի մեկնութեան. մեկ գլխոյ բնաբանի 12 համարին։ Նաև քոյր կոչի՝ իւրք զիս մարդոյ մերձաւոր էգ ազգական իւր. որպէս և յայլ տեղիս մերձաւոր իմ ասէ, որ է նոյն։ Կամ թէ ոչ՝ որ ազգաւ զուստր կոչէ զեկեղեցիս այլոյ իգական անուամբ, քանզի և նոքա ծնանին զորդիս. որպէս եկեղեցիք հաւատացելոց՝ ծնանին զբարի և զհաւատացեալ որդիս Աստուծոյ նոյնպէս և եկեղեցիք անհաւատից՝ ծնանին զչար և զանհաւատ որդիս սատանայի։

Հարսն ցփեսայն ասէ։ Իբրև խնձոր ՚ի մէջ ծառոց անտառի, այնպէս եղբօր որդին իմ ՚ի մէջ ուստերաց, ընդ հովանեաւ նորա ցանկացայ և նստայ, և պտուղ նորա քաղցր ՚ի կոկորդի իմում։

Որպէս նախ և յառաջ փեսայն յայտնեաց զկիրս հալածանաց հարսին, թէ՝ և զձեզ իսկ մատնեսցեն յատեանս և ՚ի ժողովուրդս տանջեսցեն, և առաջի դատաւորաց և թագաւորաց կայցէք վասն իմ ՚ի վկայութիւն նոցա. Մրկ. 13. 9. Նոյնպէս հարսն աստանօր ծանուցանէ զողորմութիւն փեսային։ Ըստայնմ թէ՝ ՚ի մէջ երկուց

digitised by A.R.A.R.@

կուց կենդանեաց ծանիցիս Ամբ. 3. 2։ Զի հարսն և փեսայն միապէս կրեն զաղէտս։ Վասնորոյ ասէ տէր՝ որ զձեզ անարգէ զիս անարգէ։ և առաքեալն ասէ՝ այսուհետև որ զձեզ անարգէ, ոչ զմարդ անարգէ, այլ՝ զԱստուած որ ետ զհոգին սուրբ ՚ի ձեզ Ղուկ. 10. 16։ Թես. 4. 8։ Զի և Պօղոս մինչ հալածէր զհարսն զեկեղեցին, ասաց առ նա տէրն, զի՞մ հալածես զիս. սոյնպէս և փեսայն նախապէս զհարսն իւր շուշանի նմանեցոյց, որ բուսանի ՚ի մէջ փշոյ։ Եւ՛ արդ հարսն զփեսայն՝ խնձորի օրինակեաց, որ երևի ՚ի փայտս անտառի. այսինքն ՚ի յոստս ծառոյ անտառի։ Զի այնպէս իբրև զխնձոր՝ յանտառի բնութեան մերում բուսաւ՛, սակս հաղորդ առնելոյ զմեզ մարմնոյ և արեան իւրոյ։ Վասնորոյ երևեցաւ՛ որպէս խնձոր սպիտակ մարմնով և կարմիր՝ յորժամ արեան գունակ ներկեցաւ՛ ՚ի խաչին։ Զի որպէս խնձոր կախեցաւ՛ ՚ի փայտէ. ըստ կանխագուշակութեան նախամարգարէին թէ՝ տեսանիցէք զկեանս ձեր կախեալ զփայտէ. 2 Օր. 28. և 66։ Եւ՛ որպէս զխոյն ՚ի ծառոյն սաբեկայ. կամ որպէս զօձն պղնձի բարձրացաւ՛ ՚ի դիտակի խաչին Ծն. 22. 13։ Յօհ. 3. 14։ Բայց խնձորն ՚ի մէջ պտղոց է գեղեցկագոյն քան զամենայն պտուղս ծառոց. և է յոյժ զուարճութիւն տեսանելեաց. փափուկ շօշափելեաց, քաղցր ճաշակելեաց. հոտ անոյշ ռնգաց. օգտաւէտ հիւանդաց։ Նոյնպէս և փեսայն հոգւոց է գեղեցիկ տեսլեամբ քան զամենայն որդիս մարդկան. վասն այն ասաց Եղիսաբեթ առ մայր նորին թէ՝ օրհնեալ է պտուղ որովայնի քո։ Զուարճութիւն եղև հրեղինաց և հողեղինաց. ըստ այնմ ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ։ փափուկ շօշափելեաց, որպէս Թովմաս շօշափելով զկողս վիրաց նորին իսկոյն աղաղակեաց տէր իմ և Աստուած իմ. քաղցր ճաշակելեաց. զի և Դաւիթ պատմէ զնմանէ, թէ՛ ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է Տէր Սղ. 33. 9. Հոտ անոյշ. ոմանց հոտ ՚ի մահուանէ ՚ի մահ, և ոմանց հոտ ՚ի կենաց ՚ի կեանս։ Դեղ հիւանդաց՝ ահա սա կայ ՚ի գլորումն և ՚ի կանգնումն բազմաց։ Իսկ և որպէս խնձորն կարմիր և սպիտակ գունով խառնեալ երևի, նոյնպէս և փեսայն հոգւոց Աստուածային և մարդկային բնութեամբ խառնեալ պատմի ՚ի յԱստուածաբան վարդապետաց սրբոց, յորոց և մինն է սբն Ներսէս շնորհալին, զորս ոտանաւորով գրէ։

Բանն

digitised by A.R.A.R.@

Բա՛ն անմարմին ըստ էութեան.
Եղև մարմին ճշմարտութեամբ.
Զիւրն պահեալ անյեղապէս.
և զիմս առեալ ստուգապէս.
Զոր այս խառնումն սքանչելի.
Ա՛ծ ընդ մարդ բնութբ խառնի.
և ցուցանէ երևեալ առէ.
Այն որ յաւէտ ա՛ մարմնական.
և եղև այս արարչական.
Խառնի ընդ մեզ անշփոթաբար.
և միանայ անճառաբար.

Իսկ և անտառունք տեղի ուր բուրմունք ծառոց են խնկաւոր խնկաբուսեալք. նոյնպէս և ՚ի հնօրինումն էին բազմութիւնք նախահարցն. այսինքն նահապետաց և մարգարէից որք էին ուստերք բնական և գրաւորական օրինին. Յորոց և Քրիստոս երևեցաւ ըստ մարմնոյն իբրև զգեղեցիկ խնձոր. նմանապէս և ՚ի մէջ առաքելոյ. և մանաւանդ վասն անտառի. զպիղծն և փարիսեցիքն ուստերք սինակօկային հրէից. յորոց միջի փայլեցաւ եղբօրորդի հօրն եկեղեցւոյ. և ընդ նոսա եկաց երեսուն և երեք ամ՝ և վեց ամիս.

Ըստ հոգևորական նորա գործոցն և նշանացն. զուգէ գիտել արժանէ. զի հովանին ոչ է խնձորոյն այլ խնձորենւոյն. ուստի խնձորն պտղաբերի. և յորմէ խնձորն կախի. Որոյ են երկու տեսակ. մինն ընտանի. և միւսն անտառենի. ընտանի ծառն խնձորենւոյն է խոնարհ քան զկիպարիս քան զարմաւենին. և քան զայլ անտառային ծառս. իսկ և անտառային խնձորենին՝ է բարձր քան զամենայն ծառս անտառայ և հովանին զովացուցիչ. հաստ պտղոյն ա՛ ոյշ համն քաղցր. Սոյնպէս եղև որ Աստուածածինն ՚ի վե՛ր երկրի. խոնարհ քան զերկիր. և բարձրագոյն քան զերկինս. Զի թէպէտ ՚ի յերկրի տնկեցաւ. սակայն մինչև յերկինս բարձրացաւ. և զհայրական ծոցածին ծաղիկն, ինքն զնա վերստին ծնաւ. Ուստի ասէ սուրբն Գրիգոր Նարեկացին. վայր դալարաբեր հայրական ծոցածին ծաղկին. և ծառ երկնուղեջ անթարշամ խնձորին. և գործարան գոյութեան լուսատու մարգարտին. և ապաւինարան լուսակերպ անմահ թագաւորին. և մայր կաթնամատոյց

digitised by A.R.A.R.@

մատոյ՝ բնաւից սահմանողին. և հարսն սրբուհի՝ հօրն Քրիս-
տոսի. և թէ՝ բնակարան արժանաւոր՝ բանին խոնարհութեան.
անկասկածութ մարմնոյ՝ Աստուածութեանն խառնարան. խըղա-
րան օծելութեան Քրիստոսական անուանացութեէ. Վասնայն
ասէ՝ որպէս խնձոր՝ ի փայտս և այլն՝՝, ընդ հովանեաւ նր փափ՝՝,
Ասորի կրկին տայ իմացումն. Նախ զոր կուսէն Մարիամու.
Երկրորդ՝ զոր խաչէն Քրիստոսի. Նախապէս խնձորենի ծառ
եղև մեզ սրբուհի կոյսն Մարիամ. որ պտղաբերեցաւ և ետ մեզ
զպտղացին խնձորն Քրիստոս. Երկրորդ՝ եղև ծառ պարարտ
ձիթենիս որով փառաւորեցաւ Աստուած, և մարդիկ։ Երրորդ՝
եղև վայելուչ և բարեբեր թզենի. որ և անուշեաց զքիմս բազ-
մաց։ Չորրորդ եղև որթ Ճշմա. իտ ուրախութեան Աստուծոյ և
մարդկան։ Իսկ և սատանայ եղև իբրև զդժնիկ յորմէ ելեալ
հուր այրեաց զմայրափայտս լիբանանու և կերակրեաց զծածկե-
ցեալս ընդ հովանեաւ. իբրու. Դատ. 9. 8։ Բայց երանուհի սրբ
կոյսն Մարիամ եղև ծառ կենաց. որոյ տերևն եղև բժշկութիւն
հեթանոսաց. և ՚ի ներքոյ նորա բնակին գազանք. և յոստս նորա
թռչունք երկնից. և պտուղ նորա կերակուր ամենայնի. Յայտ.
22. 2. Դան. 4. 18. Երկրորդ՝ ծառոյ իմանամք զկենսատու սրբ
խաչն յորմէ կախեցաւ խնձորն մեր Քրիստոս. որ ՚ի Սողոմոնէ
կոչեցաւ փայտ կենաց ամենեցուն Առակ. 3. 18. Ասաց՝ի յերգս
եկեղեցւոյ մերոյ ասեմք. փայտ կենաց որ փոխանակ մահացու
պտղոյն զքեզ պտղաբերեցեր. Արդարև իսկապէս յանկալի պտղոյն
զքեզ որում ամ ստեղծուածք փափագին, քանզի՝ի վեր՝ի տարա-
ծեալ փեսայացեալ բանն զաշխարհաստեղծ բազուկս իւր սրբ. և
առնա ասէ բողբոջն յեսսեայ. Թէ՝ որդիք մարդկան ՚ի հովանի
թևոց քոց յուսասցին Սղ. 35. 9. Դարձեալ նոյն Մարգարէն ՚ի
զինմայ նորին ասէ՝ քանզի յիս յուսացաւ և փրկեցից զնա. հովանի
եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ Սղ. 6. 14. Վասնորոյ ասէ
հարսն. ընդ հովանեաւ նորա փա՝՝. քանզի նաև աթոռ տէրու-
թեանն. և ՚ի նմա է բազմեալ Քրիստոս որդին Աստուծոյ նաև
բանալի արքայութեան երկնից. Նա է գաւազան զօրութեան
հաւատացելոց. Նախ գործոյ զգայութեան. և կնիք ՚ի դէմս ամե-
նից Եզեկ. 9. 4. և սոյն ծառոյս մտածումն ներկայութեան յու-
ցանէ մեզ զպտուղն և զգործն. զի է սանձ որ յեսս ընկրկէ ՚ի
մեղաց

digitised by A.R.A.R.@

մեղաց. և մինչ մտածէ թէ՝ ներկայ է անձին խորոյ, ոչ կարէ
դիւրապէս մեղանչել։ Զի էլոյս որ փարատէ զխաւար մտաց. է
մորակ՝ որ առբերէ ամենայն կատարելութիւն, և մորակէ միշտ
'ի բարեգործութիւնս, և 'ի չարեաց հեռացուցանէ, և զմիտս
լուսաւորէ. քաջալերէ զսիրտ ընդդէմ սատանայական որոգայթից
աշխարհի՝ և մարմնոյ վտանգից. և առնէ զմարդիկ որպէս առիւծ
և քաջ զինուորս, որ պատերազմի յառաջի զօրապետի խորոյ. և
ոչ դիւրաւ սրտաբեկին։

Եւ պտուղ նորա քաղցր է 'ի կոկորդի իմում. այսինքն զպտուղ խնձորե-
նւոյն զորմէ ասէ եսամինն, քաղցր են 'ի քիմս իմ բանք քո, քան
զմեղր բերանոյ իմոյ Սղ. 118. 103։ Զի 'ի պտղոյ սորա Խաչա-
կօղքն ընկալան զանազան պարգևս, որպէս նահապետքն՝ գտին
զհաւատ և զողորմութիւն։ Մարգարէքն՝ զգօնութիւն և զիմաս-
տութի։ Առաքեալքն՝ զշնորհս սրբոյ հոգւոյն։ Մարտիրոսքն՝
աստուածային զարիութիւն։ Խոստովանողքն՝ զժուժկալութիւն.
Կուսանքն՝ զգերազանց մաքրութիւն։ Վարդապետք զսրբութի.
Մանաւանդ սրբազանն Պօղոս, կզօրութիւն պտղոյս այսորիկ
մեկ բարեպէս ծանուցանէ ասելովն թէ՝ մինչ թշնամիքն էաք՝
հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ որդւոյ նորա, որչափ
ևս առաւել 'ի հաշտիլս մերում ապրեսցուք կենօք նորա. Հռոմ.
5. 10։ Այլ և փեսայն ինքն ասէ թէ՝ այնպէս սիրեաց Աստուած
զաշխարհ՝ մինչև զորդին իւր միածին ետ. զի ամենայն որ հա-
ւատայ 'ի նա, մի կորիցէ՝ այլ ընկալցի զկեանս յաւիտենականս.
Յօհ. 3. 16։ սիրեաց զաշխարհ՝ զի մաքրեսցէ 'ի յաղտոյ, սի-
րեաց զտգեղն՝ զի սրբայուսցէ։ սիրեաց զգերեալն զի ազա-
տեսցէ։ սիրեաց զամբարիշտն՝ զի բարեբարեսցէ, սիրեաց զմե-
ղուցեալն՝ զի արդարասցուսցէ։ սիրեաց զհիւանդն՝ զի բժշկես-
ցէ. սիրեաց զկորուսեալն՝ զի կեցուսցէ։ սիրեաց զմեռեալն՝
զի յարուսցէ։ սիրեաց և զանկեալն՝ զի կանգնեսցէ։ Այսոքիկ
քաղցրագոյն պտուղք 'ի կոկորդ խոկման հարսին։ Մանաւանդ
պտուղ կենարար մարմնոյ և արեան նորին, որչափ քաղցր է որ
տայ զկեանս աշխարհի. զի նստին ընդ հովանեաւ նորա և
Խաչակեն զպտուղ նորուն. որով յաղթեն զթշնամին բնութե
մարդկան ազգի։ Որպէս մեծ ոմն այն Կոստանդիանոս նշանաւ
ծառոյն խաչի վանեաց՝ մերժեաց և ընկճեաց զթշնամիս թա-
գաւորութեան խորոյ։ Յօր

digitised by A.R.A.R.@

Մեկնութիւն երգ երգոց ասացեալ բանիցն Սողոմոնի. Գլուխ. 2. Համար. 4.

Յօրինուած հարսն ասէ. Մուծէք զիս 'ի տուն գինւոյ. կարգեցէք 'ի վերայ իմ սէր.

Որդ՝ տուն գինւոյ կոչի նախապէս Հնձանն, ուր հաւաքի ող-
կոյզ կոխի և ճմլի խաղողն, ուստի յառաջ բերի գինի. բայց
հանդերձ կոխողացն կարմրանայ. Վասնայն Հնձան կոչեցաւ
կենսունակ փայտախաչն յորմէ կախեցաւ ողկոյզն երկնային,
որ կոխեցաւ 'ի հրէից և ճմլեցաւ 'ի հեթանոսաց. և լուաց զի-
նեաւ զպատմուճան իւր, և արեամբ խաղողոյ զհանդերձ իւր
Ծնդ. 49. 11. և 'ի հարցանել օրհնաց հրեշտակացն թէ՝
վասն՞էր կարմիր են ձորձք քո, պատասխանեալ ասէ, Հնձան հարի
Եսա. 53. 2. և սրբն Յօհաննէս ասէ՝ տեսի զնա արկեալ զխ-
րեաւ զհանդերձ ներկեալ արեամբ և կոչի անուն նորա բան
Աստուծոյ Յայտ. 19. 13. Որում օրինակեցաւ Յովսէփ. որոյ
զպատմուճանն թաթաւեցին յարեան ուլոյ, և առաքեցին առ
հայր իւր, Ծնդ. 37. 31. Այսու խորհրդով՝ Ճշմարտապէս
ուղղափառ եկեղեցիս հայոց զկենսունակ մարմինն որդւոյն
Աստուծոյ՝ ներկեալ արեամբ բաշխէ հաւատացեալ ժողո-
վրդեան մերոյ. Որոյ յանկայ հարսն և ասէ մուծէք զիս 'ի տուն
գինւոյ. Զի ասէ փեսայն՝ կացէք յիս՝ և ես 'ի ձեզ. որպէս ուռն
ոչ կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ, եթէ ոչ իցէ հաստա-
տեալ յորթն. Նոյնպէս և դուք եթէ ոչ յիս հաստատեալ
իցէք. Յօհ. 15. 4. Երկրորդ՝ տուն գինւոյ Աստուածախառն
մարմին փեսայացեալ բանին. յորում բնական աղբիւրք հինգ
( առ որս օրինակեցան հինգ սրահ պրոպատիկէ աւազանին )
ուստի բղխեաց գինի բժշկարար հիւանդութեանց, և զօրացուցիչ
տկարութեան մերոյ, և տուող կենդանութեան. Զի ասէ փեսայն
որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ յիս բնակեսցի, և ես
'ի նմա Յօհ. 6. 57. Երրորդ՝ տուն գինւոյ ասի մատանն ուր
պահի օշարակ գինի. և այն լինի տեղի ուրախութեան. զի գինին
ուրախութեան է առիթ ըստ Դաւթի. Սղ. 103. 15. և այսպէս
տաճարն տերունեան, ժողովարանն ուղղափառ հաւատացեալ
քրիստոնէից. ուր զանօրինական խորհուրդն կատարի. յորում
հրաւիրէ փեսայն ասելով. մտէ'ք դուք, և որդիք քո և կին քո
և կանայք որդւոցքոյ Ծնդ. 6. 18. Որոյ փափագի հարսն, զի
ճաշակմամբ մարմնոյ և արեան կենարարին եղանի ժառանգորդ
վերին

digitised by A.R.A.R.@

վերին զմայլմանին. Չորրորդ՝ տուն գինւոյ վերին երուսաղէմ-
որ է մայր մեր ամենեցուն, որոյ ցանկայ Հարսն, ճանաչելով զա-
ռաւելութիւն գիտութեան սիրոյն Քրիստոսի. զի լցցի ամե-
նայն լրութեամբն Աստուծոյ Եփ. 3. 19. Վասն այնորիկ ասէ
ուտիցէք և ըմպիցէք ՚ի սեղան իմ յարքայութեան իմում. Ղկ.
22. 30. և այս յայնժամ եղանի՝ երբ լինի Հարսանիս գառինն. և
յորժամ կատարի զասացեալն բազմականին թէ՝ երանի որ կերիցէ
հաց յարքայութեանն Աստուծոյ. Յայտ. 19. 7. Ղկ. 14. 15.
Յայնժամ փեսայն ասէ՝ ծառայ բարի և հաւատարիմ մուտ ուրա-
խութիւն տեառն քոյ. Զի այնպէս ուխտեալ թէ՝ ոչ ևս արբից
յայսմ հետէ՝ ՚ի բերոյ որթոյ մինչև ցօրն յայն յորժամ արբից զդա
նոր յարքայութեան Հօր իմոյ. Մտթ. 26. 19. Վասնայն ասէ
Հարսն մուծէք զիս ՚ի տուն գինւոյ. զի երբեակ է փափագ Հարսին.
նախ՝ զի միաբանութեամբ բնակեսցի ՚ի տան փեսային, ըստ Դաւ-
թի թէ՝ զմի խնդրեցի ՚ի տեառնէ, և զայն աղաչեմ բնակել
ինձ ՚ի տան տեառն. Սղ. 16. 4. Երկրորդ՝ յաղթել աշխարհի
զի ասէ թէ՝ տեսանեմ այլ օրէնս յանդամս իմ զինեալ հակառակ
օրինաց մտաց իմոց. Ո՞վ ապրեցուսցէ զիս ՚ի մարմնոյ աստի մա-
հու Հռմ. 7. 23. Երրորդ՝ դէմ յանդիման զմայլել զԱստու-
ծով. վասնորոյ ասէ՝ զի՞նչ ընտրեցից ելանել և ընդ Քրիստոսի
լինել առաւել լաւ համարիմ. Փլպ. 1. 23. Մանաւանդ զի
և Բեռնարդոս թէ՝ երբեակ է կաւն սրբոյ. զի անկանի ՚ի դրախ
տէն. զի կայ ՚ի յաքսորս. զի յամէն ՚ի մարմնի աստ. և զրկեալ էն
յարքայութենէ, նստեալ և ՚ի վերայ գետոյ բաբելոնի լան որդիք
սիոնի. Այս է լաց Հարսին, զի ոչ հոգայ զինքն, այլ ՚ի պատ-
ճառս կայր ոչ զդադարակս. պատճառէ ոչ զլուծս եղանե-
մտածէ. և ոչ ասէ թէ՝ կին ամի. այլ՝ կամի հեռանել հրաժարեալ
օրինացս այս. զի խոկոյն ՚ի գալ փեսային ընդ առաջ ելեալ՝ և ընդ
նմա մտցէ ՚ի Հարսանիս անզրաւ ուրախութեան Ղկ. 14.
16. Մտթ. 25. 10. Զի այնպէս լուծա՞ւ ՚ի փեսայէն իւրմէ, որ
ասէր, եթէ ոք գայ առ իս և ոչ ատեայ զհայր իւր՝ և զմայր իւր
և զկին իւր՝ և զորդիս՝ և զեղբարս՝ և զքորս՝ նաև զանձն իւր
ևս ոչ կարէ իմ աշակերտ լինել. Ղկ. 14. 26. Այլ եթէ
արարից որպէս և պատուիրեցի, յայնժամ ուր եմ ես, անդ և
պաշտօնեայն իմ եղիցի Յհ. 12. 26. Որոյ և զկնի ասէ.

Կայ

digitised by A.R.A.R.@

կարգեցէ՛ք ՚ի վերայ իմ սէր․ այսինքն յետ մուծանելոյ զիս ՚ի տուն գինւոյ, և զինի մատուցանելոյ անմահական բաժակին, դիք և ՚ի վերայ իմ զնշան սիրոյ փեսային իմոյ․ որք են քարոզիչք Աստուածային պատգամացն․ զորս օրինօք անուանէ յիշատակէ։ Զի սէրն նախապէս կարգեալ է ՚ի շարս առաքինութեան, իբրև զառաջնորդ և նշան դրօշակի որ զայլ առաքինութիւնս ՚ի նա դասակարգեալ է։ Որպէս սատանայ զատելութիւնն կարգեաց ՚ի գլուխ այլոց մոլութեանց մեղաց․ որոյ նշանն է յատուկ սէր իւր որ է սկիզբն ամենայն մեղաց․ որով զկնի իւր քարշէ զամենայն մոլութիւնս, զի զոր ինչ գործէ մեղաւորն հաճոյապէս ախորժակի իւրոյ։ Նոյնպէս և Աստուած զմեր սէր իւր իբրև զառաջ սէր առաքինութեան կարգեաց ընդդէմ մոլութեանց, վասն որոյ սէրն Աստուծոյ կոչի դրօշակ․ զի որպէս դրօշակաւ որոշին կարգ զօրապետաց, նոյնպէս և միայնակ սիրովն Աստուծոյ և ընկերին, զանազանին ճշմարիտ զինուորքն Քրիստոսի Աստուծոյ։ Զի ասէ փեսայն հոգւոյ, յայսմ գիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտ էք, եթէ սիրեսջիք զմիմեանս Յով․ 13․ 34։ Զի ոչ հաւատն, և ոչ յոյսն, առանց սիրոյ կարեն որոշել զբարին յանիրաւաց, և զարդարն ՚ի մեղաւորաց․ և զորդիսն Աստուծոյ ՚ի յորդւոցն սատանայի։ և ս̄ Բեռնարդոս՝ զողջախոհութիւնն առանց սիրոյ է լապտեր առանց իւղոյ․ բարձ զիւղն՝ և լապտերն ոչ լուսաւորէ․ բարձ զսէրն՝ և ողջախոհութիւնն ոչ հաճոյանայ։ Սէրն կոչի աղբիւր և սկիզբն ամենայն արդեանց․ զի է կենդանարար ամենայն առաքինութեանց, Սէրն՝ զոսկին առնէ կաւ, և զջուրն դարձուցանէ հուր․ և զհալածանս փոխէ ՚ի սէր․ Զի սնուցանէ զնոսա․ զարգացուցանէ և հանգուցանէ ՚ի փառս երկնից արքայութեան։ Սէրն է կատարող բարեգործութեանց․ կեցութիւն վարուց․ վախճան երկնային պատուիրանաց։ մահ յանցանաց․ կեանք առաքինութեանց․ զօրութիւն պատերազմողաց․ բռաբիոն յաղթողաց․ պատճառ բարի արդեանց, և վարձ կատարեալ անձանց։ Սէրն՝ զմեղօք մեռեալն՝ յարուցանէ․ զհոգւով հիւանդն՝ բժշկէ․ զկորուսեալն՝ կեցուցանէ․ զյուսահատեալն՝ կանգնէ․ և ՚ի խաղաղ միտս բնակի․ Քանզի է զօրութիւն, թագ որոյ՝ ոչ ոք հաճոյացաւ Աստուծոյ․ որով ոչ ոք կարաց մեղանչել։ այլ զաւէտ յապաշխարօղս․ և գործնական յամենայն հաճոյա-

ցեալս

դնելոյ. վասնորոյ ասէ Հարսն, ստուցէք ինձ զճանապարհս
սիրոյ.

Հաստատեցէ՛ք զիս իւղովք. պատեցէ՛ք զիս խնձորովք, զի վիրաւորեալ
եմ սիրով.

Որպէս Շուշան դաշտոյն Քրիստոս եկեղեցւոյ հրամայեաց օրհնողաց ե-
րոյ երթալ բերել զիւղ և զօձառ։ Նոյնպ և Հարսն սպասաւոր օրհ-
ներգայնս ասելով Հաստատեցէք զիս իւղովք։ Նախ զի որպէս իւղն
Թարխանց նիւթ որով զանձն, արտաքուստ շփեալ կակղացու-
ցանէ զներքին կարծրութիւնս. և մեղմէ զցաւս ուռուցմանց որ
՚ի ներքոյ մորթոյն և ոսկերացն բունեալ լինի. Նոյնպէս և
բանն Աստուծոյ կենդանի է, և ազդու և հատու քան զամենայն
սուր երկսայրի. և անցանէ մինչև ցորոշումն շնչոյ և ոգւոյ, և
օդից և ուղղոյ, և քննիչ է մտաց և խորհրդոց սրտից. Եբր. 4. 12.
Երկրորդ՝ որպէս իւղն ոռոգանէ զօգտանս մարմնոյն. Նոյնպ
շնորհք հոգւոյն սրբոյ, ուստի Պօղոս ասէ՝ գոհանամ զԱստու-
ծոյ իմոյ յամենայն ժամ վասն ձեր ՚ի վերայ շնորհացն Աստուծոյ.
I Կր. 1. 4. Երրորդ՝ որպէս իւղն փափկացուցանէ զկարծրա-
ցեալ խոցուածս. Նոյնպէս առնէ և քաղցրահայեաց նկատումն
փեսային հոգւոյ։ Ըստայնմ՝ դարձաւ Յիսուս և հայեցաւ ՚ի
Պետրոս. և նա յիշեաց զբան տեառն. և ելեալ արտաքս ելաց
դառնապէս. Ղկ. 22. 61. Չորրորդ՝ զթուլացեալ անդամս
հաստատէ։ Որպէս Թովմաս թուլացեալ ՚ի հաւատոյն, զիւղն
շօշափելով խոցոյն հաստատեցաւ ՚ի հաւատն, տէր և Աստուած
դաւանելով զփեսայն Յիսուս. Յոհ. 20. 27. Հինգերորդ՝
զմահ երեսացն սրբէ։ Վասնայն ասէ Երեմիայ՝ հոգի երեսաց
մերոց տէր Քրիստոս Ողբ. 4. 20. Վեցերորդ՝ իւղն զկերա-
կուրս համեմէ. և Պօղոս գրէ թէ քանիցս անգամ եթէ ուտի-
ցէք զհացս զայս, և զբաժակս ըմպիցէք զմահ տեառն պատմե-
ցէք I Կր. 11. 26. Եօթներորդ՝ սիրտք և ստամոքսք իւղե-
ցեալք հաստատին և պնդանան։ և Պօղոս պատուիրէ թէ
ընտրեցէք ձեզ զլաւն, զի իցէք հաստատունք և առանց գայթակ-
ղութեան յաւուրն Քրիստոսի և գիտասցես թէ՝ որպէս պար-
տ է քեզ ՚ի տանն Աստուծոյ շրջել որ է եկեղեցի Աստուծոյ
կենդանւոյ. սիւն և հաստատութիւն ճշմարտութեան Փլպ. 1.
10. I Տիմ. 3. 15. Ութերորդ՝ խեցեղէն ամանք և կարասք

իւղն

digitised by A.R.A.R.@

իւղեցեալք ամրանան և ոչ դիւրաբեկին, և զգինիքն՝ անոյշ և լաւ-
պահեն, և ոչ ապականեն. Նոյնպէս և սակս հարսին եկեղեցւոյ
ասէ փեսայն թէ՝ մեռանիլ ևս ոչ կարեն, զի հաւասար հրեշտա-
կաց են. և որդիք Աստուծոյ Ղկ. 20. 26. Վասնորոյ եկից և
բնակեցայց 'ի միջի քում ասէ տէր Զքր. 2. 10. Զի որ պահէ
զպատուիրանս նորա. 'ի նմա է հաստատեալ, և նա 'ի նմա. և յայս-
մանէ գիտեմք եթէ բնակի 'ի մեզ I Յհ. 3. 24. Իններորդ՝
զմարմինս մեռելոց օծեցեալ իւղով պալասանի անապական և
անխոտելի մնան. Նոյնպէս և Տաբիթայ այծեմնիկն օծեցեալ
իւղով գործոց և ողորմութեամբ՝ յարեաւ յապականութենէ
մեռելութեան. Գործ. 9. 36. և մեք մինչդեռ մեռեալէաք
'ի մեղս մեր, կենդանիս արար զմեզ Քրիստոս Եփ. 2. 5.
Տասներորդ՝ ըմբիշք օծեցեալք իւղովք անըմբռնելի լինին 'ի
մարտկաց. Ըստ որում ասէ առաքեալն բարւոք պատերազմն պա-
տերազմեցայ. զընթացս կատարեցի. զհաւատսն պահեցի. այսու-
հետև կայ և մնայ ինձ արդարութեան պսակն 2 Տմ. 4. 7.
Մետասաներորդ՝ ամ 'ի գիրս նմանութեանց, եթէ ոք օծանիցի
իւղով աքաղաղի, անկասկած եղանի 'ի բորենեաց և յառիւծուց.
Նոյնպէս և Դաւիթ օծաւ իւղով սրբով, և եղև անկասկած 'ի
բորենապիտուն Գողիաթայ և յառիւծապիսի թշնամեաց. վասնորոյ
ասէր զառիւծ և զարջ սատակէր ծառայ քո. և զկնի ասէ՝
բազում անգամ մարտեան ընդ իս 'ի մանկութենէ իմմէ և ինձ ոչ
յաղթեցին Սղ. 128. 2.
Զայսուիկ խորհելով հարսն. վասնայն ասէ՝ հաստատեցէ. զի
Իւղն. արդ իւղ անուամբ իմանամք զմարմնացեալ բանն (որպէս
'ի սկզբան երգոյս իւղ թափեալ անուանեցաւ տես անդ) որով
հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, որք
երևելին և որք ոչն երևելին Կղս. 1. 16. և իւղով Աստուածութե
օծեալ փեսայն կոչեցաւ Յիսուս Քրիստոս, այսինքն փրկիչ
օծեալ. և Յակոբ նահապետն կանգնեաց արձան 'ի բեթէլ և եօծ
իւղով, և կոչեաց զանուն տեղւոյն՝ դուռն երկնից և տուն Աս-
տուծոյ Ծնդ. 21. 17. Իսկ փեսայն հոգւոյ ասէ՝ ես եմ
դուռն ընդ իս եթէ ոք մտանիցէ կեցցէ, մտցէ և ելցէ, ճարակ
գտցէ Յհ. 10. 9. Վասնորոյ թագաւորք և քահանայք 'ի
հնումն օծելոյն անուանակոչութեամբ պերճանային, և մարգարէք
նոյնպէս

digitised by A.R.A.R.@

նոյսուսից համայնք՝ ծնելոյն անուան ծառայէին. նոյնպէս և մեք հա-
ճառայելքս ամենեքեան ՚ի յանուն նորին մկրտեցաք, որով կոչեցաք
ծնեալ ՚ի Քրիստոսէ. յաղագս որոյ՝ ծնեալ փեսայն հոգւոյ՝ եկն ՚ի
փրկել զմեզ. ըստ որում ասէ՝ ելեր ՚ի փրկութիւն ժողովրդեան քոյ
՚ի փրկել զօծեալս քո Ամբ. 3. 13. Որ եկեալ վանեաց զթշնա-
միս մերկեաց զիշխանութիւնս և զպետութիւնս. յայտ յանդիման
խայտառակեաց Կղս. 2. 15. Դարձեալ հաստատեցէք զիս իւղով
ասէ. այսինքն շնորհիւ հոգւոյն. ուստի ասէ աւետարանիչն
Յովհաննէս, դուք զօծութիւն ունիք առ ՚ի սրբոյն. որով դուք
յորդի և ՚ի հայր բնակեսջիք. և դուք օծութիւն զոր ընկալայք
՚ի նմանէ բնակեսցէ ՚ի ձեզ I Յոհ. 2. 20. և մի ոք ՚ի ձէնջ չար-
չարեսցի իբրև զսպանօղ. կամ իբրև զգող, կամ իբրև զչարագործ,
կամ իբրև զօտարատեսուչ. Այլ իբրև Քրիստոնեայ մի ամա-
չեսցէ. այլ փառաւորեսցէ զԱստուած անուամբս այսուիկ
Պետ. 4. 15. Յաղագս որոյ ասէ հարսն Հաստատեցէք զիս. այս-
ինքն անուամբ թափեալ մի իւղոյն լուսաւոր դաւանութեամբ.
որպէս իւղն է պատճառ լուսոյ. որ ըստ պատրուգի միաւորեալ
լուսաւորէ զտունն. Նոյնպէս և իւղն երկնային ըստ պատ-
րուգի բնութեան մարդկան միաւորեալ՝ լուսաւորեաց զաշխարհս.
ըստ նմին և զտուն հոգւոյ հարսին եկեղեցւոյ. վասն որոյ ասէ
Հաստատեցէք զիս. որպէս Պետրոս և Յոհաննէս՝ մինչ եղա-
նէին ՚ի տաճարին տեսին զկաղ ՚ի յորովայնէ մօր իւրոյ. և ասէին
նմա առնա թէ՝ յանուն իւղոյն Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ
արի գնա, անդէն հաստատեցան բարձք նորա և սրունք. ՚ի վեր
վազեաց և սկսաւ գնալ. Գոր. 3. 2. Նոյնպէս պաղատի և
հարսն. զի կամի ասել եթէ իբրև կաղ ՚ի գնալս յԱստուածային
պատուիրանսս. և ծոյլ ՚ի յառաքինութիւնս. յամր և թոյլ ՚ի
յԱստուածահաճութեան գործս, հաստատեցէք զիս.

Հաստատեցէք զիս խնձորօք. բայց խնձոր անուամբ ոչ պարտիմք իմա-
նալ միայն զայն պտուղն զոր իսկական անուամբ կոչեմք խնձոր,
այլ ամ տեսակ գնտաձև պտուղք ծառոյ ասին խնձոր. Բայց
զիսկական խնձորոյ գրեցաւ ՚ի սոյն գլխոյ 3 համարին տես անդ.
և աստ գրեցաք զայլոյս. Զի որպէս մանրագոր խնձորաւ պտղա-
բերեաց զամուլն Ռաքէլ յղացաւ և ծնաւ զորդի Յակոբայ զՅով-
սէփ և զԲենիամին. նոյնպէս ըղձիւ ցանկայ և հարսն զի ամուլ
հոգի

digitised by A.R.A.R.@

Հոգի եւր պտղաբեր եղանիցի։ Որ և զպտուղ Հոգւոյն ցուցանէ Պօղոս, սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատ, հանդարտութիւն, հեզութ՝ ժուժկալութիւն, Ձնշումն Գաղ. 5. 22։ և մի տրտմեցուցանէք զՀոգին սբ Աստուծոյ որով կնքեցայք յաւուրն փրկութեան. Եփ. 4. 3։ և ծոլախնեայ նորա պատմեն բնագնինք թէ՝ յառաջ ածէ զերիս տեսակ խնծորս, յառաջինն լինի բնութեամբ յոյժ ջերմ. միջինն բարեխառն. վերջինն կարի ցուրտ։ Որոյ օրինակաւ կարեմք իմանալ զնորա ծնեալն կենդանական սբ խաչէն յորմէ կախեցաւ խնծորն երկնային, որ ըստ Աստուածութեանն էր յոյժ ջերմ. և՝ ի մարմնանալն բարեխառն. բայց կրկնակի գալստեանն լինի կարի յոյժ ցուրտ դէպ ՝ի մեղաւորսն։ Դարձեալ էր յոյժ ջերմ Աստուածութեամբն. միջակ մարդկութեամբն և ցուրտ չարչարանօք և մահուամբ, իսկ և յայսմիկ նորա բողբոջեցան երեք տեսակ խնծորք, յառաջինն Մարտիրոսաց, որք սիրով փեսային վառեալք հեղին զջերմ զարիւնս իւրեանց յերկիր։ Երկրորդն խոստովանող միանձանց, որք ընտրեցին զմիջակերպ բարեխառն կեցութիւնս, որովք ստացան զամենակերպ առաքինութիւնս. Երրորդն մաքուր կուսանաց, որք ցրտացեալք և սառուցեալք մնայցին աղտ ամենայն աշխարհահայեաց ցանկութեանց. որոց սակս ասէ առաքեալն թէ՝ զմարմինս իւրեանց ՝ի խաչ հանին կարեօք և ցանկութեամբ հանդերձ Գաղ. 5. 24։ Զայսպիսի հաւաքել ցանկայ հարսն. զորս խնծոր անուանէ յեղանակէ։ Զի որպէս ՝ի մէջ թռչնոց հաւեր ՝ի յատեղիս լորամարգին էր ՝ի յանասնոց գառն. ՝ի լուղակաց ձուկն։ Նոյնպէս և ՝ի ներ ծաղկանց՝ խնկաբեր մանուշակն, հաւատէտ նարգոսն. մաքուր և պայծառ սպիտակ շուշանն. և ընտիր թագուհի վարդն։ Իսկ և ՝ի մէջ մրգեղինաց, քաղցր թուզն, պարարտ ձիթենին. բախայտուցիչ որթն. և սիրելի խնծորենին։ Յորմէ ժողովել կամի հարսն զկարմրորակ մարտիրոսաց խումբն. զդեղնորակ խոստովանողաց դասքն, և զսպիտակափայլ կուսանաց ջոկսն, բարեխառ միջնորդ և օգնական իւրոյ կնքեան։

Վասնզի խանդաղատեալ էր սիրով կամի ասել թէ հիւանդացեալ եմ ես սիրով փեսային իմոյ. որոյ սէրն զինքն իմ հալէ մաշէ և կաթեցաւք բժշկեցէք զիս խաղողով նորին. Ա Ներքինութիւն որ նստեալ

՝ի

'ի կառս ընթեռնոյր զԵսայի մարգարէ, և խանդաղատեալ բանիւ նորին ասէ ցՓիլիպպոս, աղաչեմ զքեզ, վասն որոյ ասէ մարգարէն զայս, վասն իւր, եթէ վասն այլ ուրուք. բայց յորժամ եբաց Փիլիպպոս զբերան իւր, և մինչ աւետարանեաց զանուն իւղոյն, խնկոյն թախանձեալ զօրութիւն նորին 'ի միտս և յակերս ներքինւոյն. և նա առժամայն հաստատեալ 'ի հաւատս, վաղվաղակի մկրտեցաւ, և ընկալաւ զհոգին սուրբ, և երթայր 'ի ճանապարհ իւր խնդութեամբ Գործ. 8. 27։ Նոյնպէս և զուղեորն երեքովք վերաւորեալ յաւազակաց, տեսեալ սամարացւոյն գթացաւ, իւղով և գինով պատեալ զվէրսն եած 'ի պանդոկ։ Այն օրինակ ազատեաս բնութեան, Երուսաղէմ կեանքն անմեղութեան. Երիքով աշխարհս. քահանայն Ահարոն, ղեւտային Մովսէս, տեսեալ զմեծութիւն հիւանդութեանն, յուսահատեալ բժշկելոյ զանց արարին։ Սամարացին Քրիստոս, առաջակ դեղքն, վէրք ձողքն, պատեալ զարմանելն, և ձէթն շնորհ հոգւոյն սրբոյ, գինի փրկական արիւնն. գրաստ խաչն, պանդոկ եկեղեցի. պանդոկապան այցելու, երկու դահեկան հին և նոր կտակարանն. Ղուկ. 10. 30։ Ահա այսոքիկ են սէր փեսային, որով խանդակաթ առնէ զհարսն։

Ահեակ նորա 'ի ներքոյ գլխոյ իմոյ, և աջ նորա պատեսցէ զիս։

Որգ գլուխ՝ հարսին եկեղեցւոյ է Քրիստոս Եփ. 5. 23։ և ահեակ՝ նորին մարմնանալն, ծնանիլն, վաստակիլն, քրտնիլն, քաղցնուլն, և ծարաւելն, չարչարիլն, խաչիլն և թաղիլն. և աջ՝ յառնել 'ի մեռելոց, համբառնալ յերկինս, և նստիլ ընդ աջմէ հօր։ Որ եղկնի ահեակ ձախողութեան մահու և խաչի, Աստուած զնա առաւել բարձրացոյց. և զամենայն թշնամիս նորա եդ 'ի ներքոյ պատուանդանի ոտից նորուն Փիլ. 2. 8.։ Սղ. 118. 1։ Քանզի ահեակ է անարգութիւն, և աջ փառաւորութիւնն. որոյ մէջի հանգեաւ հարսն եկեղեցի. ըստ կանխագրութեան մարգարէին Դաւթի, թէ ննջեսջիք 'ի մէջ վիճակաց Սղ. 57. 13։ Որպէս թէ հարսն 'ի մէջ յայսոսիկ. 'ի ներ յանկողնոյ՝ խորհեսցի զաջ և զահեակ փեսային. այսինքն ձախողութիւնքն և յաջողութիւնքն. որ վս մեր յանձն էառ զխաչ՝ արհամարհեալ զամօթ, և նստաւ ընդ աջմէ աթոռոյն Աստուծոյ. Այլ ածէք զմտաւ, որ զայսպիսի համբերութիւն 'ի մեղաւորաց հակառակութենէ

անտի

digitised by A.R.A.R.@

անտի կրեալ. Եբր. 12. 2։ Ահա զայսոսիկ կերպս փեսային՝ հարսն ակներեւ համարեալ խորհի և մտածէ. ըստ առաքելոյն թէ՝ զայն խորհեսջիք խորհուրդս 'ի ձեզ. Որպէս և ինքն խորհի տեսլով՝ համառօտարկէ բանս և ամենայնի ընդունելութեան թէ արժանի, զի Յիսուս Քրիստոս եկն յաշխարհ փրկել զմեղաւորս, որոց գլուխն ես եմ. Փիլ. 2. 5։ 1 Տիմ. 1. 15. Զի մտածումն չարչարանաց կերպ փեսային վերայուսուցանէ զորին յերկրայնոյս. քանզի ներածէ զխօսումն 'ի միտս. մերժէ զամենայն թիւր խորհուրդս բոլորովիք և վառէ զսրտայնել սիրտս սէր նորա. և ասէ ահեակ նորա 'ի ներքոյ գլխոյ իմոյ, և աջ նորա պատեսցէ զինև. տես թէ որպէս վասն սիրոյ փեսային խոստէ զյաջողութիւնս, և զանյաջողութիւնս. և զի ահեկան՝ կամք զխորտս ձախողութեանս, և աջով՝ զինման սպահպանութեանս. Զի աջով իւրով հովանի լինի նմա և բազկաւ իւրով վերակացու եղեալ իմաստ. 5. 17։ Երկրորդ՝ ահեկաւ իմանամք զառաջին գալուստն մարմնով, իսկ աջով զերկրորդ գալուստն փառօք։ և որ անդ ասէր մտէք ընդ նեղ դուռն։ Յայնժամ ասէ՝ ժառանգեցէք պատրաստեալ ձեզ երկնից արքայութիւն. Որ հարսնացեալ հոգիքն հանգչին և զատանեն զմխիթարութիւն։ զԱրդ պարտիմք միշտ մտածել և խոկալով որոշել. և անտի ժողովել զբարութիւն պտուղս։ Երրորդ՝ ահեկաւ իմանամք զօրէնս բնական և գրաւորական զորս 'ի ներքոյ գլխոյ հարսին եդեալ կայր, և աջով զշնորհականն և զաւետարանական օրէնս սէր հաստատոյ. յորում բազուկ և աջ սէր փեսային պատէ զեկեղեցեաւ հարսին և գգուէ սիրով, և ընդ առաջակին հրաւիրէ ասելով՝ այսօր ընդ իս իցես 'ի դրախտին. Որ երկայն աւուրբ, և ամք կենաց 'ի յաջմէ, և յահեկէ փառք և մեծութի Առակ. 3. 16։ Չորրորդ՝ ահեակ Մարգարէքն որք 'ի սատանայական յօրինուած ոչ կարային զարթուցանել զննջեալսն 'ի վերայ բարձի հեշտութեան։ Այլ առաքեալքն, որք պատեցին զեկեղեցեաւ հարսին և իբրու բարձրաձայն գոչելով աղաղակեին, թէ՝ գիշերն մերժեցաւ, և տիւն մերձեցաւ, իբրև 'ի տունջեան զգաստացեալ շրջիցուք. Հռոմ. 13. 12։ Նման Պետրոսի՝ որ ննջէր 'ի բանտին, և հրեշտակ տեառն խթեաց զկողս նորա, և յարոյց զնա ասելով արի վաղվաղակի Գործ. 12. 6։ Հինգերորդ՝ ննջեցին 'ի հնումն զի



digitised by A.R.A.R.@

էին աչք իւրեանց ծանրացեալք. Թէպէտ 'ի նոյն ժամ յարեան 'ի ձայնէ հաւուն. Մատ. 26. 43. Ղուկ. 12. Որպէս Յակոբ նահապետն երթալն 'ի Խառան, նոյնէս 'ի ճանապարհին զի էր, երեկոյ. բայց մինչ ետես զսանդուղսն եւ տէր 'ի նմա, ի քնոյն զարթեաւ, եւ ասաց տէր է 'ի տեղւոջս յայսմիկ եւ ես ոչ գիտէի Ծնդ. 28. I: Այսպէս Մարգարէքն յայնժամ եւ առաքեալքն յայժմուս թէ եւ անդրանիկ խօսեցին. բայց ասէ տէր. երեցն կրտսերոյն ծառայեսցէ. եւ թէ զՅակոբ սիրեցի եւ զԵսաւ ատեցի Ծնդ. 25. 23. Մղ. 1. Որպէս Եփրեմ եւ Մանասէ որդիքն Յովսեփայ, զորս 'ի յօրհնելն Յակոբայ՝ զաջ ձեռն եդեալ զգլխովն Եփրեմայ կրտսերոյն եւ զձախն զգլխովն Մանասէի անդրանկան. եւ մինչ կամեցաւ փոփոխել Յովսէփ զձեռս հօրն, ոչ կամեցաւ նա, ասելով գիտեմ որդեակ գիտեմ զա եղիցի 'ի ժողովուրդ եւ դա բարձրասցի Ծնդ. 48. 13. Վեցերորդ՝ ահեկան իմանամք ձախորդութիւնք կենցաղոյս, եւ աջով զփառսն արքայութեան. Եօթներորդ ահեակ զանհաւատութիւնն Հրէից եւ հեթանոսաց. Զորս առաքեալքն փոխադրեցին 'ի յաջ հաւատոյն Քրիստոսի. Ութերորդ ահեակ մկրտութիւն Յոհաննու, եւ աջ մկրտութիւնն Քրիստոսի, զի այն ոչ տայր զհոգին սբ. եւ այս զերկոսին առաքելովք.

( տե՛ս. Գործ. 8. 29. 10. 44. եւ 19. 6. )

Համարն եօթներորդն ասէ. Երդմնեցուցանեմ զձեզ դստերք Երուսաղէմի զօրութեամբ եւ յուժգնութեամբ անդաստանի. եթէ յարուցանէք. զարթուցանէք զսէրն մինչեւ կամեսցի.

Դստերք, որպէս առաջի գլխոյ 3 համարին ասացաք զհրեշտակաց որք են դստերք երկնային Երուսաղէմի, եւ զՄարգարէից որք են դստերք սիոնականի. նաեւ զառաքելոց եւ նոցին շաւղաց հետեւող վարդապետաց որքեն դստերք զինուորեալ եկեղեցւոյ եւ ժառանգորդ վերնոյն Երուսաղէմի. Երուսաղէմ կոչի խաղաղութիւն, կամ տեղի խաղաղութեան, վասնորոյ եւ սիրողքն խաղաղութեան երանին 'ի տեառնէ, եւ կոչին շնորհիւ որդիք Աստուծոյ Մատ. 5. 9. Իսկ եւ անդաստան կոչի դաշտն այգեաց կամ տեղին արտորէից. զօրութիւն եւ յուժգնութիւն անդաստանի է բերք նորին, եթէ առատօրէն տայցէ զարդիւնս եւ զպտուղ իւր. որպէս յայտ է 'ի սբ. գիրս, զի մինչ անէծ Աստուած զերկիր ասաց՝ գործեսցես զերկիր, եւ ոչ եւս յաւելցի տալ քեզ զզօրութիւն

իւր

digitised by A.R.A.R.@

իւր Ծն. 4. 12. Բայց 'ի յանդաստանի յայգւոջ երկնից ծնեալ
՚ի հօրէ՝ բանն Աստուած, որ խոնարհեալ յերկիր, իբրեւ զողկոյզ
ճմլեցաւ 'ի խաչին զմարմին եւ զարիւն իւր ետ 'ի փրկութիւն
աշխարհի։ Եւ 'ի յագարակի նորին բուսաւ զմիակ հատ ցորեանն,
որ էջ 'ի ստորին վայրս, եւ անկեալ յերկիր մեռաւ մահուամբ,
եւ յարեաւ բազում արդեամբ, առաւ առնելով 'ի դժոխոց զհա-
ւատացեալ անդամս իւր եւ ընդ ինքեան տարաւ յերկինս յանդե-
մին առնել հօր իւրոյ։ Վասնորոյ եւ հարսն երդմնեցուցանէ
զօրիորդսն անստոր կերպ երդմամբ, այսինքն 'ի զօրութիւնս եւ յամ-
գնութիւնս անդաստանի առելոյ. որպէս եւ Աբրահամ առ այս զօրու-
երդմնեցոյց զերէցագոյն ծառայն իւր. զի 'ի յանդաստանէ իւրմէ
միակ հատին ցորենոյ բուսանիլն ծանուցանէր նմա Ծն. 24.
2. Զի Քրիստոս Աստուծոյ զօրութիւն. եւ Աստուծոյ
իմաստութիւն. I Կոր. 14. Ո՛չ զի հայր Աստուած նուազ
զօրանայր, այլ ըստ որում ծնեալ զորդի, առ որ վերաբերի զօրութիւն,
որպէս եւ իմաստութիւնն. զի ամենայնի զօրութիւն ասի Քրիս-
տոս, եւ հրեշտակք զօրութիւնք երկնից. Մատթ. 24. 29։ Այլ
յայնմանէ առաջնոյ զօրութենէ. ունին իբրեւ 'ի նախատպէ
ամենից զօրութեանց։ Զի թէպէտ ամենակարողութիւն Աս-
տուծոյ հօր. յարարչութենէ աշխարհի յայտնապէս երեւի. սակայն
ըստ բաւականին ցուցանէ զնմանն եւ զհաւասարն իւր լիապէս։
Վասնորոյ ամենայնի զօրութիւն ասի Քրիստոս, զի զհայրական
ամենակարողութիւն իւր յինքեան ցուցանէ։ Եւ արդ որպէս
երկինքն կոչի անդաստան ամենայն երրորդութեան եւ փառա-
բանչաց նորա. նմանապէս եւ երկիրս է անդաստան մարմնոյն
Քրիստոսի. որ զօրութիւն անդաստանի կոչի. զի զանէծս երկրի
յօրհնութիւն փոխարկեաց. Եւ. զեկեղեցի կոչի անդաստան
բանին Աստուծոյ, որ է բնակարան իւրոյ ինքեան, եւ հրեշտակաց
նորա։ Նոյնպէս եւ զինուորեալ եկեղեցին առ որս ասէ ուր իցեն
երկու եւ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ եւ ես 'ի մէջ նոցա
Մատթ. 18. 20։ Այսոքիւք երդմնեցուցանէ հարսն զօրիորդ-
հրեշտակսն ասելով. եթէ յառնիցէք, այսինքն երբ ելանիցէք
յերկինս՝ իբրեւ 'ի տեսանել զերեսս Աստուծոյ հօր Մատթ. 18.
10. Զարթուցէք զնա՝ իմէր եկեղեցւոյ, որպէս եւ ինքն կամի
ըստ իւրոյ կամաց, զի այնպիսի սէր ոչ ոք ունի, որ եդ զանձն իւր

'ի

digitised by A.R.A.R.@

՚ի վերայ իմ. զարթուցէք զնա, այսինքն աղօթելով. միջնորդել և բարեխօսել։ Որպէս Հրեշտակն վասն Երուսաղեմի և քաղաքացն յուդայ։ և Աբրահամ վասն Աբիմելեքեայ։ և Յօբ սակս բարեկամացն։ Եւրոյ։ և եկեղեցին վասն Պետրոսի առաքելոյն։ Տես. Զաք. 1. 12։ Ծն. 20. 17. Յօբ. 22. 8։ Գործ. 12. 5. Զի խնամեալ պահպանեսցէ. քանզի բարձումն խնամոց նորա զկէնս շարժէ. և նեղումն նորա զալիս ծովու փոփոխեցուցանէ, և զհողմունս յարուցանէ։ Զի ասէ՝ ես եմ Աստուած քո, որ խռովեմ՝ զծով, և գոչեցուցանեմ զալիս նորա. Եսա. 51. 15. Թէպէտ ոչ ննջէ և ոչ ՚ի քուն երթայ պահապանն Իսրայէլի Սղ. 112. 4. Բայց անտես առնելն, և յանձնիշխան կամս մեր թողուլն, և ոչ խնամելն, և թոյլ տալն նորա, քուն կոչի, և ննջեալ ասի։ Որպէս գրէ Դաւիթ թէ՝ զարթիր ընդէր ննջես տէր։ և թէ՝ զարթեաւ որպէս ՚ի քնոյ տէր։ Վասնորոյ զարթուցջիք զսէրն իմ՝ ասէ։ Զի Աստուած սէր է ասէ որդին Որոտման 1 Յով. 4. 16. Զարթուցջիք ասէ՝ զի երկայնամիտ է նա, և կամի զի ամենայն որ կեցցէ, և ՚ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցէ։

Լուեալ զձայն փեսայի ասէ։ Ձայն եղբօրորդւոյ իմոյ. ահաւասիկ սա եկն վաղվաղէր ՚ի վերայ լերանց, և խաղայր ՚ի վերայ բլրոց։

Որպէս Ադամ և Եւայ լուան զձայն զգնալոյ տեառն Աստուծոյ ՚ի դրախտի անդ ընդ երեկս։ Նոյնպէս և Հարսն լսէ զձայն փեսային գալստեան յաշխարհ՝ ՚ի նահապետս, և ՚ի Մարգարէից ընդ որոյ բազում մասամբք և բազում օրինակօք խօսեցաւ Աստուած, և ՚ի վախճանի աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովն։ ահաւասիկ. ցուցական մակբայիւս չեղեալն իբր և եղեալ պատմէ, և զանկատարն իբրու կատարեալ հրատարակէ. և զապառնին որպէս ներկայ մատամբ ցուցանէ. ըստ Յոհաննու Մկրտչին ահաւասիկ գառն Աստուծոյ։ Ըստ Եսայեայ, ահա կոյս Ահա մանուկ իմ զոր ընտրեցի։ ահա նոր առնեմ զամենայն։ Վասնորոյ և աւետարանիչն ասէ՝ ՚ի սկզբանէ զորմէ լուաք. որում ականատես լեալ եղաք. Բայց յետագայն Մարգարէն խօսի իբրու յանցեալ հարսին թէ՝ Ճանապարհ արարէք յայնմիկ որ նստի յերկինս յերկինից, ահա տայցէ զձայն իւր ՚ի ձայն զօրութեան. Սղ. 65. 35. Զայս ուրախութեան ձայնս լուեալ հարսին հրճուէր, և սկսանի ինքն պատմել զգալստենէ փեսային, որ եկն

վաղվաղէր

digitised by A.R.A.R.@

Վաղվաղ ասէ, զի վազելն փութալով քայլել և ընթանալով երթալ,
կամ արշաւել, իբրու թռչելով ընթանալ և ժամանել ՚ի գնալոյ
տեղին, վասն այնորիկ ՚ի յայլ թարգմանութիւնս թռչելով գրեն,
զի այնպէս փութայր կատարել զտնօրէնութիւն իւր, որպէս
և ինքն ասէր մկրտութիւն մի ունիմ մկրտել, փութամ զի կատա-
րեսցի: և Մարգարէին ձայնոյ թէ, յանկարծակի եկեսցէ ՚ի
տաճար իւր տէր զոր դուքն խնդրէք Մղք. 3. 1. Վասնզի
յիշեցի զքեզ ասէ, և զգութ մանկութեան քո, և զսէր կատար-
ման քո ՚ի գալ քեզ զհետ սրբոյն իսրայէլի. Երմ. 2. 2: Վասնորոյ
վազելով ասէ, զի առաւել քան զլոյս արեգական արագ էջ
յարգանդ կուսին իբրու թռեաւ յերկնից, և անտի ՚ի մսուրն ՚ի
տաճարն, և ՚ի նազարէթ, և աստ ՚ի յեգիպտոս, և անտի ՚ի գալի-
լեայ, ՚ի յորդանան ՚ի խաչ ՚ի գերեզման, և ՚ի դժոխս, և ապա
թռեաւ ՚ի յերկինս, և համբարձաւ առ հայր. նոյնպէս արագէ
և ՚ի յերկրորդի գալստեան իւրոյ Գործ. 1. 11: Մտ. 13. 26.
՚ի վերայ լերանց. ասէ, զոր Մարգարէքն ամէն նման գուշակեցին
յառաջագոյն թէ՝ ահաւասիկ ես ՚ի վերայ քո ասէ տէր զօրութեանց,
՚ի վերայ հպարտից, զի հասեալ է օր քո և ժամանակ վրէժխնդ-
րութեան քոյ. և տկարասցի հպարտութիւն քո և կործանեսցի.
և ոչ ոք իցէ որ յարուսցանիցէ զնա: Զի օր տեառն՝ զօրութեանց
՚ի վերայ ամենայն հպարտից և ամբարտաւանից, և ՚ի վերայ ամե-
նայն բարձրացելոց, և վերացելոց, և խոնարհեսցին, և ՚ի վերայ
ամենայն մայրից լիբանանու բարձրացելոց և վերացելոց, և ՚ի վե
ամենայն լերանց բարձանց. և ՚ի վերայ ամենայն բլրոց բարձրա-
ցելոց. և խոնարհեսցի ամենայն մարդ, և անկցի հպարտութիւն
մարդկան և բարձրասցի տէր միայն. Երմ. 50. 30: Ես. 2. 12.
Այսու երեւի թէ՝ լերինք կոչին ծերք, զի ՚ի լերինս բարձու-
ամբարտաւանութեան բնակին, և դիմեալ նոյնոց սատակել՝
ասէր ՚ի մտի իւրում, ելից ՚ի վերայ քան զաստեղս երկնից՝ արկից
զաթոռ իմ նստայց ՚ի լերինն բարձու ՚ի վերայ լերանցն բարձանց
հիւսիսոյ: Ելից ՚ի վեր քան զամպս՝ եղէց նմանօղ բարձրելոյն.
Ես. 14. 13: Զորս կոխելով ՚ի վերայ որոց վազելովն եկն ՚ի
մարմին և կատարեաց զտնօրէնութիւն, ասէ՝ կոխեցի զնոսա
արտմութեամբ, և ձմլեցի զնոսա բարկութեամբ, և իջուցի յեր-
կիր և զամենայն հանդերձս իմ թաթաւեցի Ես. 63. 3: Դար-
ձեալ

digitised by A.R.A.R.@

ձեալ լերինք կոչին եկեղեցիք հրէից և հեթանոսաց, որք իբրու
բարձրացեալք էին և հպարտացեալք. ըստ որում ասէ՝ և դու
Կափառնայում, մինչև երկինս բարձրացեալ ես, մինչև ՚ի դժոխս
իջցես Ղկ. 10. 15. Վասն որոյ հարցանէ, թէ՝ ընդէր խռո-
վեցան հեթանոսք, և ժողովուրդք խորհեցան ՚ի նանունս. և
իշխանք հրէից ժողովեցան ՚ի միասին վասն տեառն և վասն օծելոյ
նորա; և խռովեցան լերինք ՚ի զօրութենէ նորա Սղ. 2. 1. և
45. 4. Նա և լերինք կոչին հրեշտակաց դասակարգութիւնք.
ըստ այնմ՝ լերինք շուրջ են զնովաւ. և թէ՝ լուսաւոր ես դու
սքանչելապէս լերանցն յաւիտենից. Սղ. 124. 2. և 55. 5.
Քանզի առ նոքօք եանց վազելով և խոնարհեցաւ յերկիր. Այլև
լերինք կոչին եկեղեցիք հաւատացելոց. որպէս ասէ գիր, եղիցի
յաւուրս յայտնի լեառն տեառն և տուն Աստուծոյ Ես. 2. 1.
Խաչափայտն ՚ի վերայ Եկեղեցւոյ. իսկ և խայտալն է հրճուելն և ուրախա-
նալն և ցնծալն, որպէս թէ որ խնդութեամբ կատարէ զպաշտօն
իւր, վասն այն զմարմնաւորն տնօրէնութիւն բանին Աստուծոյ
հարսանիս անուանէ հռչակեցաւ Մտթ. 22. 2. Զի վազելով
և խայտալով եկն ՚ի փրկութիւն մեր. Թռչելով ՚ի վերայ լերանց
և բլրոց մշտնջենաւորաց հրեշտակաց, որք ոչ տեղեկացան անե-
նեքեան, այլ այնոքիկ միայն որք սպասաւորք եղեն տնօրէնութե-
նորին. Որպէս ՚ի վերայ հպարտացեալ լերանց խաւարային դասուց
որք ոչ կարացին ճանաչել, զի խաւար նմա ոչ եղև հասու. քան
զի եթէ էր ծանուցեալ, ոչ տային թոյլ զտէրն փառաց ՚ի խաչ
հանել. և ՚ի վերայ լերանց հրէից հեթանոսաց. որք ասացին
դարանակալ լիցուք արդարոյն, զի դժպհի եղև մեզ, Իմս. 2.
12. և թէ՝ սա է ժառանգն եկայք սպանցուք զսա Մտթ. 21.
28. և խայտալով ՚ի վերայ բլրոց՝ հաւատացեալ ազգաց. որոց
խոստացաւ թէ՝ զորօրինակ բնակիցէ երիտասարդ ընդ կուսի.
և փեսայ առ հարսին. այնպէս ուրախ լիցի տէր ՚ի քեզ Ես. 62.
5. Այլ է որ ասէ՝ ամենայն ձորք լցցին. և ամենայն լերինք և
բլուրք խոնարհեսցին. Զի ամենայն լեռնացեալ հպարտութիւնք
խոնարհեցան. և խոնարհ ձորք բարձրացան. և եղեն դժնդակքն
՚ի դիւրինս, և առապարքն ՚ի դաշտս, զի լցան ամենեքեան շնորհիւ.
քանզի խոնարհս բարձրացոյց, և զմեծատունս արձակեաց ու-
նայնս. Ես. 40. 4. Ղկ. 3. 4. և 1. 52.

Նմանէ

digitised by A.R.A.R.@

Նման է եղբօրորդին իմ այծեման, կամ որթոյ եղանց 'ի վերայ լերանց Բեթելայ: Հարսն նշան այս օրհնութեան զհետայէն և տայ: Ահաւասիկ սա էկայ յետ պատուարի որմոյն մերոյ. յաւէտ ընդ պատուհանս հայեցեալ ընդ վանդակապատս:

Զկնի պատմելոյ հարսին զարագութիւն փոյթընթացութեան փեսային իւրոյ: Դարձեալ 'ի կենդանեաց՝ համեմատ օրինակ առ բերէ նմա: Որպէս վասն Ասայելի ասէ մեր գիրն թէ՝ թեթեւ էր ոտիւք, իբրեւ զմի յայծեմանց 'ի դաշտի 2 Թագ. 2. 18: Նոյնպէս և հարսն ասէ վս եղբօրորդւոյ իւրոյ: բայց Իզիտորոս պատմէ թէ՝ այծեամնէ արագընթացս յոյժ. և շուրջ միշտ 'ի լերինս. սիրէ զանտառախիտ տեղիս. ուտէ զկանաչական խոտս. և զծայրս ոստոց հատանէ. և մինչ վիրաւորի յորսորդաց՝ բժշկական խոտով արտաքսէ զնետն 'ի մարմնոյ իւրմէ. և է սրատես. զի 'ի բարձրագոյն լերանց տեսանէ զհեռաւորս. և է համարեալ 'ի յուտելիս. զի տեսանելեօք, ճաշակելեօք և հոտոտելեօք ճանաչէ: և թէ կաթն այծեմանց է դեղ բազմաց հիւանդութեանց, զոր 'ի յըմպելն խակոյն բժշկին. այլև արագութեամբն փախչի և զերծանի 'ի խածատմանէ շանց. և այսոքիկ յատկութիւնք ամենեքեան գտանին առ խորհրդական փեսայն հոգւոյ: Քանզի նախապէս՝ է յոյժ արագընթաց, ոչ որպէս այծեամն, այլ եւս քան զշողս արեգական, որ արձակեցաւ 'ի յերկնից. և ծագեցաւ 'ի յարգանդ ամենամաքուր աւ կուսին. ըստ վկայութեան աւետարանչին, խօսեալ զՄարիամ, զմայր նորա Յովսեփու, մինչ չև եկեալ առ միմեանս գտաւ յղացեալ 'ի հոգւոյն սրբոյ Մատ. 1. 18. Զի որպէս առաքեաց զՄովսէս 'ի քարէ 'ի հանել զջուր, ասաց նմա, և ես հասեալ կայցեմ անդ յառաջագոյն քան զքեզ 'ի վերայ վիմին 'ի քորեբ Ել. 17. 6. Տէր, նախ առաքէ զՄովսէս. և ինքն որ զկնի գնալոցէր անդ, յառաջանայ քան զնա 'ի վերայ վիմին: Նոյնպէս խօսիլ տայ զՄարիամ Յովսեփու. և առաքէ զԳաբրիէլ ողջունել զկոյսն. բայց ինքն կանխէ քան զնա, առնելով զնա յղի հոգւովն սրբով 'ի Ունկն՝՝. 'ի բերանոյն Քրիստոսի ասէ առ Գաբրիէլ, էջ դու նախ առ դուստր իմ աւետելով նմա, պատրաստեա զնա ինձ լինել մայր, ահա ընդ իջանելն քո, և կատարել զճանապարհ ուղեւորութեն իմոյ, անդ գտանիցես զիս. ուր առաքեմ զքեզ այժմ, անդ յառաջեցից քան զքեզ: Երկրորդ՝ որպէս այծեամն միշտ շրջի 'ի լերինս, և փեսայն հոգւոյ յարաժամ բնակի յերկինս երկնից.

և.

և ՚ի հոգւս հաւատացելոց, և միշտ ՚ի լերինս աղօթէր. որպէս պատմէ աւետարանիչն, թէ ՚՚ելանէ ՚ի տաճարէն ուսուցանել. և զգիշերն ելեալ ագանէր ՚ի լերինն որ կոչիւր ձիթենեաց։ Իսկ և ՚ի լերին գողգոթայ խաչեցաւ Ղուկ. 21. 37. Երկրորդ այծեամն սիրէ զանապատական տեղիս, և փեսայն սիրէ զմիաբանութիւնս հաւատացելոց Մատ. 18. 20։ Չորրորդ նա ունէ զկատարեալ խոտս. և փեսայն հոգւոյ ասէ՝ իմ կերակուր այն է զի արարից զկամս այնորիկ, որ առաքեաց զիս. Յով. 4. 34։ Հինգերորդ՝ այծեամն զծայրս ոստոյ հատանէ, նոյնպէս և փեսայն առնէ զի առաւել և պտղաբեր լինիցի Յով. 15. 1։ Վեցերորդ՝ ՚ի վիրաւորելն յորսորդաց [illegible] բժշկի ազնիւ խոտովն և փեսայն հոգւոյ վիրաւորեալ ՚ի թշնամեաց հրէից, յորոց և սպանեալ կախեալ ՚ի փայտէ, բայց յարոյց զնա Աստուած յաւուր երրորդ՝ Գործ. 10. 39։ Եօթներորդ՝ այնծեամն է սրատես կենդանիս զի ՚ի բարձրագոյն լերանց տեսանէ զհեռաւորս, և փեսայն հոգւոյ նստի յերկինս երկնից և հայի յանդունդս Դան. 3. 54։ և Դաւիթ խոստովան լինի առնա ասելով՝ զանգործ իմ տեսին աչք քո և ՚ի գիրս քո ամենեքեան գրեսցին Սղ. 138. 16։ Ութերորդ՝ և է հանճարեղ ՚ի յուտելիս զի հնգիւ զհինգ հազարս յագեցոյց Մատ. 14. 15։ Իններորդ՝ այծեամն կաթնեցեալ հիւանդաց. և արիւնն Յիսուսի որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց Ա Յով. Ա. 7։ Տասներորդ՝ փոյթ զերծանի ՚ի խածատմանէ շանց. զի քանիցս անգամ շնաբարոյ հրէայքն կամեցան զնա ունել, և նա ել ՚ի ձեռաց նց։ և յորժամ գային յափշտակել զնա և կացուցանել թագաւոր, և նա գնաց ՚ի լեառն միայն Յով. 7. 3։ 10. 19։ և 12. 36։ Այլ և նմանեցուցանէ զնա որթոյ եղանց որպէս Յակոբ նահապետն ՚ի յօրհնութեանն յուդայի, անուանէ զնա կորիւն առիւծու Ծնն. 48. 9։ և Սողոմոն ՚ի գիրս հարսին օրինակէ զնա որթուց եղանց, որք են թշնամիք օձից սատակիչ և հալածիչ նոցա. փախուցիչ և վանիչ պիղծոցն, զի հայր Աստուած հրամայեաց նմա ՚ի վերայ իժից և քարբից գնալ, և ոտիւք զառիւծ և զվիշապ կոխել Սղ. 9. 13։ Ուստի և ՚ի տօնի Աստուածայայտնութեան երգեմք ՚ի յեկեղեցւոջ մերում ասելով՝ զգլուխ վիշապին փշրեցեր յանցանելոյ ՚ի յորդանան ՚ի գետն, և ինքեան իշխանութեամբ զամենեսեան ապրե-

ցոյց

digitised by A.R.A.R.@

դոյց. Վասնորոյ և աշակերտացն ծանոյց թէ՝ քաջալերեցարո՛ւք զի
ես յաղթեցի աշխարհի. Այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ
դատապարտեալ է. Իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս.
Յով. 12. 31. 16. 11. 'Ի վերոյ յիշեցաք Բեթելայ. բեթել Թարգմանի
տուն Աստուծոյ. Բայց Յերուսաղէմ արար տակի երկնից, և եր-
գրեցին 'ի Գրեան, և զմիւսն 'ի Բեթել. որոյ աղագաւ զկնի կոչեցաւ 'ի
մեկնչայ ոճիայ. այսինքն տուն անիրաւութեան, և ունայնութեան.
վասն կռապաշտութեան. Որոյ վերայ վեսայն Յիսուս հզօրա-
պէս վաճառելով և քայքելով կոխտեաց զհպարտութիւն, և զունայն
պաշտամունս նոցա. և յերկիր կործանեաց. Որոյ զկնի սկսան
մարդիկ երկրպագանել հօր հոգւով և ճշմարտութեամբ. Յով.
4. 23. Նախ որպէս բեթել կոչի տուն Աստուծոյ. նոյնպէս
և յարկն վերին. և լերինք 'ի նմա բնակիչք նորին. Երկրորդ՝
բեթել եկեղեցիք հրեից և հեթանոսաց, և լերինք՝ մարգարէք
և նահապետք նոցունց. Երրորդ բեթել՝ Երուսաղէմ որ է տուն
Աստուծոյ, և քաղաք մեծի արքայի. և լերինք անտանօր եղեն ա-
ռաքեալքն. Չորրորդ՝ բեթել երկիր՝ զի եղատուն անդան
տաճարն Աստուծոյ. և լերինք 'ի նմա՝ Աստուածահաճոյ առաքինի
անձինք. Հինգերորդ բեթել կոչի տուն Աստուծոյ, նոյն-
պէս ենութական եկեղեցիք. և լերինք 'ի նմա պաշտօնեայք
նորին, այսինքն քահանայք և վարդապետք և համայն սպաս-
ւորք. Վեցերորդ բեթել հոգիք համատարելոյն 'ի Քրիստոս,
որքեն տաճար Աստուծոյ և բնակարան հոգւոյն սրբոյ, և լերինք
մաքուր վարք և Աստուածահաճոյ գործք նոցին. որպէս ա-
ղօթքն և ողորմութիւնքն արարեալք. Եօթներորդ՝ բեթել
սրբուհի կոյսն Մարիամ որ իսկապէս կոչեցաւ տուն Աստուծոյ,
և բնակարան հոգւոյն սրբոյ. և լերինք 'ի նմա, նորին երկոտասան
գերազանցութիւնքն, զորս տեսցես 'ի յերրորդ գլխոյ 10 հա-
մարին. յորոյ վերայ խայտալով վազեաց եղբօրորդի հարսին,
զորմէ կանխաւ գուշակեաց յեսայեան ին մարգարէն թէ՝ բլուրք
զուարճութիւն զգեցցին Ես. 54. 16. Դարձեալ և 'ի լերանց բա-
րձպէս կարեն նկատել և տեսանել զհեռաւորս, և անտանօր
լինին խոտ պարարտ և ճարակ կենդանեաց, զի կանխապէս լի-
դունին զպօղս և զանձրևս՝ նաև զծագումն արևու. քանզի արե-
գակն ծագմամբ է բարձրագոյն, շարժմամբ արագագոյն, տես-
լեամբ

digitised by A.R.A.R.@

լեամբ գեղեցկագոյն, և ներգործութեամբ զօրեղագոյն, որպէս և փեսայն հոգւոյ փրկիչն մեր Յիսուս, Յաղագս որոյ և բնակիչք վերոյ նշանագրեցեալ լերանցն, մշտապէս նկատեն զապագայ հեռաւոր գալուստ փեսային. և զպատրաստեալ վայելչութիւնք և փառք արքայութեան նորին, ուրանօր յագենան տեսութեամբ փառացն Աստուծոյ. յորում կանխապէս Յոհանին առ՝ի վերուստ հեղեալ զշնորհս և զպարգևս. և նախկնաբար լուսաւորեալ լին Ճառագայթիւք Աստուածային մշտնջենաւոր լուսոյն.

Հարսն նշան տայ օրինութեան շնորհեայն. զի որպէս ՝ի վերոյ ծանոյց զպարծ, զձև, և զկերպ, զքայլս, և զընթացս փեսային օրինակաւ կենդանեաց. նոյնպէս և աստ ցուցանէ զտեղին և յուստի յառել և հայիլն։ Նա աւէ՝ ոնոճառիկ առ էկայ յետուստ որմոյն մերոյ. իսկ որմ ասէ այն շրջապատ կանգնեալն զկողմամբ սենեկայ. որովք որոշի մի շինուածն ՝ի միւսոյն։ Նախ այսու որմով իմանամք զմիջոցն երկնի և երկրի. և փեսայն բազմեալ ՝ի բարձունս՝ ՝ի ներքին կողմ վարագուրին, իբրու յետուստ որմոյն. ուստի յառեալ հայի ՝ի վանդակապատ պատուհանէ. յորմէ նախախնամէ և պահպանէ զտիեզերս, ուստի տեսանէ զգործս մեր, և ըստ արժանոյն փոխարէն հատուցանէ ՝ի մեզ։ Զի ոչ որպէս տեսանիցէ մարդ, տեսանէ Աստուած, զի մարդ հայի յերեսս, և Աստուած հայի ՝ի սիրտս I Թագ. 16. 7։ Երկրորդ՝ որմ է աներևոյթք Աստուծոյ, վանդակապատ պատուհան արարածքս, որովք իմացեալ տեսանեմք զմշտնջենաւորութի և զԱստուածութիւն նորա. Հռմ. I. 20. Երրորդ՝ որմ է տկարութիւն իմացողական զօրութեան մերոյ, և հաւատն մեր՝ է վանդակապատ պատուհան, ուստի երևի մեզ Աստուած Եբր. 10. I։ Չորրորդ՝ որմ էր բնական օրէնքն, և վանդակապատ պատուհան՝ բնական բնութիւն մարդոյ. յորմէ սակաւ ոմանք լուսաւորեցան Աստուածածանօթութբ՝, որպէս Սէթ, Ենովս, Ենոք, և այլք ընդ նահապետայն. Հինգերորդ՝ որմ՛՛ էր գրաւորական օրէնն, և ՝ի նորին վանդակապատ պատուհանէ լուսաւորեցան մարգարէք. որք ծանուցին զմիութիւն Աստուածութեանն։ Բայց անուն ամենասուրբ Երրորդութեան գիտել ոչ կարացին, զի տղայք էին, և չէին կատարեալք. վասն տեսանողք անուանեցան, զի տեսին զփեսայն յետուստ որմոյն, որպէս Մովսէս ետես ՝ի մորենւոջն հրով։ և Եղիայ ՝ի քարէն մեղմ

օդով

digitised by A.R.A.R.@

օղով. Աբրահամ Իսահակաւ եւ այլ. Վեցերորդ՝ ի շնորհական յօրինուածոյ որ եղեւ մեզ մարմին բանին Աստուծոյ, փեսային հոգւոյ, որ ՚ի մէնջ եառ, եւ այնու թագոյց զԱստուածութիւն իւր հանդոյն Մովսէսի քօղ էարկ զերեսօք Աստուածութեան, եւ նորոգեաց մեզ զճանապարհ նորոգ եւ կենդանի ՚ի ձեռն վարագուրի, այսինքն է մարմնոյ իւրոյ Եբր. 10. 20. Զի Աստուածութիւնն որ բնակեալ էր ՚ի նմա, իբր ՚ի լոյս անտեսանելի, ՚ի ձեռն մարմնոյն առաքեալ եղեւ յաշխարհ, որպէս զի՛ շող լինի ընդ ծակ որմոյ. այլ ըստ Աստուածութեանն անշարժ եկաց, որպէս հուր ՚ի մէջ տանն եւ յառեաց զձեռն. զի Քրիստոս փեսայն ըստ բնութեան մարդ կատարեալ. իբրեւ ծակոյկ եղեւ այսորիկ որմոյ, ընդ որով խոնարհեքն մտանեն ՚ի տեսութիւն Աստուածութեան նորա. որպէս եւ Սիմէոն ընդ փոքր տղայն իբրեւ ընդ ծակ հայելով, զճառագայթ Աստուածութեանն տեսանէր նովաւ, ըստ Մովսէսի որ ՚ի փապար վիմին ետես զյետոյսն Աստուծոյ Ել. 33. 21. Եօթներորդ՝ որմով իմանամք զկատորդոյն որ կայր ՚ի մէջ Հրէից եւ հեթանոսաց, եւ փեսայն Քրիստոս, որ է խաղաղութիւն մեր, եղեւ վէմ անկեան, որ արար զերկոսեան մի, եւ զմիջնորմն ցանկոյն քակեաց Եփ. 2. 14. Ութերորդ՝ որմ՝ է մարմին բանին Աստուծոյ. ուստի յառեալ փեսայն երկնաւոր իբրու ՚ի վանդակապատ պատուհանէ հայեցաւ առ մեզ, դիտելով զտկարութիւնս մեր, ներգործեաց զանազան հրաշս, եւ պէսպէս զսքանչելիս, եւ հարկաւորեաց ՚ի մեզ զքաղցր լոյս վարդապետութեան իւրոյ, եւ գեղեցիկ առակօք տպաւորեաց ՚ի միտս մեր. Իններորդ՝ որմ՝ է միջոցն ներկայիս եւ ապառնւոյն, զի այժմ տեսանեմք զփեսայն հոգւոյ իբրեւ ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման. այժմ խելամուտ եմք փոքր ՚ի շատէ, այլ յայնժամ գիտասցուք որպէս եւ նոյն ծանեաւ զմեզ Ա. Կոր. 13. 12. Զի վանդակապատ պատուհան է առ մեզ սուրբ գիրն, ուստի խօսի ընդ մեզ Աստուած, որով իբրու յետուստ որմոյն կայեալ խօսէ ընդ մեզ. Տասներորդ՝ իբրու ՚ի ներքոյ որմոյ, այսինքն ՚ի տեսակի հացի եւ գինւոյ, որպէս ՚ի վանդակապատ պատուհանէ երեւի մեզ՝ երկրպագելի եւ պաշտելի մարմին եւ արիւն որդւոյն Աստուծոյ. Սմին նման առ ՚ի գիրս նմանութեանց թէ՝ մարմինն Քրիստոսի նմանի այն գրքոյ զոր ետես Յովհաննէս Յայտ. 5. 1. Յորում առէ

digitised by A.R.A.R.@

տեսի յաջոյ ձեռին, որ նստէր յաթոռն, զի ունէր գիրք գրեալ ներքոյ և արտաքոյ, և կնքեալ եօթն կնքով: Արդ՝ մարմինն Քրիստոսի այն գիրքն գրեալ ներքոյ և արտաքոյ. վասն զի պարունակէ յինքեան զարմանալի մխիթարութիւնս, և գերագոյն քաղցրութիւնս: և այս կնքեալ եօթն կնքով, սակս եօթն զարմանալեաց որք գտանին անդ: Նախ զի թէպէտ եղանի հացին և գինւով, բայց ոչ փոփոխմամբ. այլ մնալով նոյն. որոյ սակս ասէն վարդապետք, Ճանաչումն իմ, միջնորդութեամբ ձայնիս՝ եղանի քո մնալով իմ: Երկրորդ. զի այնքան մեծութիւն մարմնոյն Քրիստոսի՝ բոլորապէս գտանի 'ի ներքոյ փոքր տեսակի նշխարին. և տան օրինակ փոքրագոյն բբի աչաց՝ որ տեսանէ ահագին լեառն բոլոր: Երրորդ՝ բոլոր մարմին որ մտանէ 'ի բերան մարդոյն ոչ նուազելով 'ի նոյն կարողութենէ, օրինակաւն՝ որ ել 'ի փակեալ յարգանդէ կուսին, և յարեաւ 'ի կնքեալ գերեզմանէ. և փակեալ դրօք եմուտ առ յաշակերտսն: Չորրորդ՝ զի ուտի աննուազաբար, և անբաժանելաբէն, օրինակաւ դալար խոտոյ, որէ կերակուր աչայն տեսողայ, բայց խոտն ոչ նուազի՝ ոչ պակասի՝ և ոչ բաժանի ըստ ինքեան: Հինգերրորդ՝ շօշափի 'ի յանմաքրից, և ոչ աղտեղանայ, որպէս արեգակն՝ ընդունի աղտեղի իրս, և ինքն ոչ աղտեղանայ 'ի նոյն պայծառութենէ: Վեցերրորդ՝ 'ի բազմաց ճաշակի, և 'ի միում կտոջ 'ի բազում տեղիս լինի, ոչ աճի, և ոչ նուազի, որպէս բազում ճրագ 'ի միոյ ճրագէ վառին: Եօթներրորդ՝ զի եանդ որքանութիւն թարց քանակութեան. որոյ օրինակն ոչ ոք յատ՛կապէս և բնականաբար տալ կարէ, և կամ ուրեք գտանել կարէ: Իսկ և Դարձեալ որ ասէ. յանեալ ընդ պատուհանն. հայեցեալ ընդ վանդակապատսն. վասն զի երբեմն ուշեց նախահարսն՝ հայեցեալ խօսեցաւ ընդ մարգարէսն. ուրեմն տնօրինաբանեցաւ ընդ առաքեալսն. քարոզեցաւ ընդ վարդապետսն.

Եւ արդ խօսի ընդ հարսին և կոչէ առ ինքն ասելով:

Պատասխանի տայ եղբօր որդին իմ ինձ և ասէ. Արի՝ եկ մերձաւոր իմ գեղեցիկ իմ աղաւնի իմ:

Որովհետև հարսն ծանեայ օրհնութեան՝ զանձնայն զորպիսութիւն միասյին. և նա յետսուստ որմոյն կայեալ նկատելով. ապա զկնի կոչէ առ ինքն զհարսն իւր քաղցր բարբառով, և ասէ արի՝ եկ մերձ իմ, զի ուր եմ ես անդ և պաշտօնեայն իմ եղիցի: Որպէս

Պետ

digitised by A.R.A.R.@

Պետրոսի և Անդրէի. ասաց՝ եկայք զկնի իմ, և արարից զձեզ
որսորդս մարդկան։ և Փիլիպպոսի թէ՝ եկ զկնի իմ։ և հաւանա-
ցեալ կուսանայն ի մէջ գիշերի եղև բարբառ թէ՝ ահա փեսայ
գայ. արիք ընդ առաջ նորա։ Նաև Եղիայ մինչ զմաշկեակն իւր
ընկեց՝ ի վերայ Եղիսեի, և նա խոկոյն եթող զեզինսն, և ընթացաւ
զհետ նորա. 3 Թագ. 19. 19։ Նոյնպէս և փեսայն հոգւոյ
ձայնէ առ ինքն զհարսն իւր, վասն որոյ և Պօղոս բարձրաձայն
գոչէ թէ՝ արի որ ննջես. և լուսատու լիցի քեզ Քրիստոս.
Եփես. 5. 14։ Երկրորդ ի Մ. ասէ՝ որ յառաջ հեռաւորէր. և
այժմ մերձաւոր եղև արեամբն Քրիստոսի։ և որ մերձենայ՝ ի
Տէր, մի հոգի է. Տես. Եփես. 2. 13։ 1 Կոր. 6. 17։ Զի և
Քրիստոս միանգամ մեռաւ վասն հարսին եկեղեցւոյ. արդարն
ի վերայ անօրինաց, զի զնա մերձեցուսցէ առ Աստուած
1 Պետր. 3. 18։ Վասն այն մերձաւոր կոչէ։ Գեղեցիկ ի Մ. ասէ՝
քանզի բազմաւ կերպիւ գեղեցկացաւ հարսն։ Նախ զի ձեռամբն
Աստուծոյ ստեղծաւ։ Երկրորդ՝ ի պատկերի Աստուծոյ արարաւ.
Երրորդ՝ ի մաքուր յարգանէ սրբոյ աւազանին ծնաւ։ Չորրորդ՝
մարմնով կենարարին, և արեամբ նորին սնուցաւ։ Հինգերորդ՝
զՔրիստոս զգեցաւ։ Վեցերորդ՝ շնորհիւ ս. Հոգւոյն զար-
դարեցաւ։ Եօթներորդ՝ ի գաւիթ ս. եկեղեցւոյ տնկեցաւ.
Ութերորդ՝ Հոգւոյն վառեալ արբուցաւ։ Իններորդ՝ Քրիս-
տոսի փեսային հարսնացաւ։ Տասներորդ՝ ուղղափառ ս. հա-
ւատով պսակեցաւ։ Մետասաներորդ՝ յուսով ամրացաւ։
Երկոտասաներորդ՝ սիրով բորբոքեցաւ. Երեքտասաներորդ՝
հրեշտակաց ընկերակցեցաւ։ Չորեքտասաներորդ՝ արքայութեան
երկնից ժառանգորդ եղև։ Հնգետասաներորդ՝ հօր Աստու-
ծոյ որդեգիր անուանեցաւ։ Աղաւնի ի Մ. ասէ, վասն զի աղաւնին
համեստատեսակ թռչուն է, և մարդընտել բարս ունի. նոյնպէս
և հարսն եկեղեցի. որոյ աղագաւ ասէ աշակերտացն եղերուք
խորագէտ իբրև զօձ, և միամիտ իբրև զաղաւնի։ և զայլ յատ-
կութիւնս աղաւնւոյն տես մեկ գլխոյ 14 համարին։ և ի նոյն

գլխոյ 14 տանն։

Վասնզի ձմեռն անց, անձրևք անցին և գնացեալ մեկնեցան։

Ձմեռամբ զսաստիկ ցրտութիւն նորին ծանուցանէ, և անձրևօք
զջերմութիւն ամառան յայտնէ։ Զի որպէս ձմերան հողմն հիւ-
սիսոյ

digitised by A.R.A.R.@

սխալ զձիւն արտաքսէ. և ամառան հողմն հարաւոյ՝ զանձրև առածէ։ Բայց գիտելի է զի ըստ Փիլիսոփայից երկու ծայրագոյն որակութիւնք անպտուղ առնեն զերկիր. որպէս սաստիկ ցրտութիւն կողմանն հիւսիսոյ. նոյնպէս և սաստիկ ջերմութիւն կողմանն հարաւոյ։ և հարաւատարաս բարեխառն որակութիւք ՚ի միջ երկրիս՝ առնեն գեղեցիկ պտղաբերութիւնք։ Զի որպէս ձմեռն թարգմանի ձիւնամեռ, որոյ ցրտութիւն զամենայն տըկակարս մեռուցանէ։ նոյնպէս և ամառն՝ որ ասի յամառ, որոյ սաստիկ ջերմութիւնն յամառելով զհամայն գոյս և զծաղիկս խամրացուցանէ. այլ եթէ մշտայեն անձրև յամառիցէ զամենայն սերմանիս երկրի ՚ի ներքոյ հողոյ փտեցուցանէ։ և այսպիսի երկոքին սաստիկ հողմունքս՝ շնչեցին ՚ի յեղեմ ՚ի դրախտն անախանեօք մերովք, և անպտուղ արարին զնոսա։ Զի սաստիկ ցրտութեամբ նախանձու բանսարկուին մեռան, ըստ որում ասաց յորում աւուր ուտիցէք ՚ի նմանէ մահու մեռանիցիք Ծն. 2. 17. և սաստիկ ջերմութեամբ ցանկութեան պտղոյն խամրացան. ըստ այնմ ոչ ապաքէն զա՝ աւադիկ իբրև զխանձող մի զերծեալ ՚ի հրոյ, Զքր. 3. 2. Նոյնպէս և շնչեցին ՚ի բնական յօրէնսն, որովք որդիքն Սեթայ սառուցեալք ցրտացան ՚ի սիրոյն Աստուծոյ, և ջեռուցեալք տապայան սիրով դստերացն կայենի, անպտուղք եղեն. և ապականեցին զերկիր առողս, ասաց Աստուած մի մնասցէ ոգի իմ ՚ի դոսա զի ապականեաց ամենայն մարմին զճանապարհ իւր Ծն. 6. 2. Վասնորոյ ջրովք և անձրևօք ողողեաց զամենայն երեսս երկրի։ Հրով և ծծմբով այրեաց և ցարձոյց աճիւն զսոդոմ և զգոմոր։ Այլև շնչեցին ՚ի գրաւորական յօրէնսն որք սուղեցան ՚ի զանազան մոլութիւնս կռապաշտութեան, որովք չորացան իբրև զխոտ, և խամրեցան որպէս զծաղիկ. և եղեն անպտուղ ՚ի վարդապետութենէն Քրիստոսի. վասնորոյ հրամայեցաւ Մարգարէին գոչել, և ՚ի հարցանել նորին թէ՝ զինչ գոչեցից, գոչել՝ ամենայն մարմին խոտ. և ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ. ցամաքեցաւ խոտն և թօթափեցաւ ծաղիկ նորա. արդարև խոտ ժողովուրդս այս. Ես. 40. 6։ Ընկատմամբ հեթանոսաց եկեղեցւոյն ասէ, ուրախ լեր անապատ ծարաւի. ցնծասցէ անապատ, և ծաղկեսցի իբրև շուշան Ես. 35. 1. Զի դառնալով առ Քրիստոս պտղաբեր

լինե

digitised by A.R.A.R.@

լինելոյ նորին. որոյ աղագաւ ասէ առ հրեայսն՝ բարձցի ՚ի ձէնջ արքայութիւնն Աստուծոյ և տացի ազգի որ առնիցէ զպտուղ նորա. Մատ. 21. 43. Քանզի որպէս ցրտութիւն ձմերան անզարդայութեան զերեսս երկրի. զի խուռն զերակունս երկրի հողոյն, և ոչ տայ թոյլ ջերմութեան ՚ի ներքուստ ՚ի վեր ելանել և ոչ ՚ի վերուստ ՚ի ներս մտանել. Նոյնպիսիք էին և հրեայքն, զի այնք որք ոչ հաւատային ՚ի փեսայն, և զայլս արգելուին ՚ի հաւատալոյ. զի փակէին զարքայութիւնն Աստուծոյ ինքեանք ոչ մտանէին, և որք մտանէին չտային թոյլ մտանել. Մատ. 23. 13. Զի ոչ ՚ի ներքուստ սիրովն Քրիստոսի ջերմային, և ոչ յարտաքուստ յԱստուծոյ եկեալ պատուհասիւքն զգաստային. Այլ մնացեալք չարաչար ուխտեցին, եթէ ոք խոստովանեսցի զնա Յիսուս Քրիստոս՝ ՚ի բաց կացցէ ՚ի ժողովրդենէն, Յով. 9. 22. Վասնորոյ և Սողոմոն խօսի ՚ի դիմաց փեսային, և կոչէ առ ինքն զհարսն իւր ասելով՝ արի եկ զոր զի ձմեռն էանց, անձրևք անցին, այսինքն մեռաւ կռապաշտութիւն, և անձրև չարութեան և փորձութեան անցին, և գնացեալ մեկնեցան։ Այլ ոչ ևս է Փարաւոն ըլկող իսրայէլացւոյ զի ընկղմեցաւ ՚ի ծովն։ և ոչ Եզաբէլ թշնամի Եղիայի, զի զմարմին նորա լափեցին շունք։ և ոչ Հերովդէս կոտորող մանկանցն բեթղեհէմի, զի որդնալից եղեալ էջ ՚ի դժոխս։ և ոչ Ներոն և Յուլիանոս՝ հալածող քրիստոնէից զի չարաչար սատակեցան։ և ոչ բանսարկուն՝ սատամարդկային բնութեանն, զի իբրև զփայլակն անկաւ յերկնից. Ղկ. 10. 18. Եւ արդ՝ եղև զօրութիւն, և փրկութիւն, և արքայութիւն Աստուծոյ մերոյ և իշխանութիւն օծելոյ նորա, զի անկաւ չարախօսն եղբարց. մերոց. որ չարախօսէրն զնոսա առաջի Աստուծոյ ՚ի տուէ և ՚ի գիշերի Յայտ. 12. 10. Նոյնպէս ամենայն ձախորդութիւնք կենցաղոյս, և փորձութիւնք մարդկանց գնացեալ մեկնեցան։ Այլև դեռքան զամենեսեան, և առաւել քան զայսոսիկ, բովանդակքն լինայէս անցանին երթան և մեկնին յաւուր կրկնակի գալստեան փեսային յաշխարհ, յորում աւուր կոչէ առ ինքն զկամարարս իւր, այսինքն իսկապէս հարսանացն. անդառնալի կոչմամբ ասելով եկայք օրհնեալք հօր իմոյ. ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ երկնից զարքայութիւն։

Ծաղիկք երևեցան յերկրի, ժամանակ յատանելոյ եհաս. ձայն տատրակի լուել

եղև

Ծղ՟ յերկրի մերում.

Եւ՟ այս յայտ է ամենից, որ զկնի անցանելոյ ձմերան, եւ հալելոյ ձեան երեւին ծաղիկք՝ի վերայ երկրի, նախ կապտորակ եւ կարմրագունոյ անուշահոտ մանուշակ։ Մանաւանդ գարնանային եղանակի մինչ դադարին անձրեւք, յայնժամ բողբոջին պէսպէս տեսակք գեղեցիկ ծաղկանց, որպէս շուշանաց, նարգիզաց, վարդից եւ այլոց նմանեաց, յայնժամ սոխակք, եւ տատրակք, եւ այլ կերպակերպ թռչունք արձակեն զձայնս իւրեանց։ Նոյնպէս եւ զկնի անցանելոյ ձմերան կռապաշտութեան երեւեցաւ՟՝ի վերայ երկրի ծոցածին ծաղիկն Հօր, նարդոս Աստուածութեան, եւ շուշան մարդկութեամբ, մանուշակ խոնարհութեամբ, վարդ հնազանդութեամբ. անուշահոտ վարդապետութեամբ։ Ազնիւ՟ դիմօք, խոնարհ կերպարանօք, գեղեցիկ տեսլեամբ, առ՝ի լրութիւն նախագուշակութեան մարգարէին թէ՝ բղխեսցէ գաւազան յարմատոյն յեսսեայ, եւ ելցէ ծաղիկ յարմատոյ անտի Եսայ. II. I։ Աւասիկ գաւազանաւ իմանամք զսբ կոյսն Մարիամ. եւ ծաղիկ նորին՝ զմիածին որդին փառաւորոյ եւ եկեղեցիս հայաստանեայց կոչէ զնա ծաղիկ վայելուչ կուսական որովայնի։ Արդ որպէս ծաղիկն անուշեալ բողբոջէ, եւ զհոտ իւր առ յամենեսեան տարածէ, հատեալ եւ լլեալ ոչ կորուսանէ զհոտ իւր. եւ տրորեալ առաւել բազմապատկէ. Նոյնպէս եւ փեսայն հոգւոց անուշեալ՝ի կոյս մօրէ բողբոջեցաւ՟ եւ բողբոջեցոյց՝ի յերկրի զբարումն հաւատոյ, եւ զհոտ վարդապետութեան իւրոյ տարածեաց յոլորս տիեզերաց, եւ՝ի կախաղանս խաչին ճզմեալ ոչ ունայնացաւ՟. տրորեալ ոչ թարշամեցաւ՟. տիգաւ՟ խոցեցեալ՝ հեղմամբ արեան եւ ջրոյ դարձեալ կանաչացաւ՟. մեռաւ՟, եւ մեռելոյ յարութենական պարգեւս կենաց շնորհեաց, աստուստ փոխանակ Քրիստոս թագաւոր գրելոյ գրեցաւ՟ Նազօրայի թագաւոր, զի մինչ՝ի խաչին զանուն թագաւորին մերոյ ծաղկի անուամբ, Նազօրայեն եւ ծաղիկ գրեցաւ, եւ զաշխարհս բովանդակ սբ. հաւատով ծաղկեցոյց. զմարտիրոսքն արեամբ. զնահատակսն քաջութեամբ. զխոստովանողսն վկայութեամբ, զկուսանս մաքրութեամբ. եւ զեկեղեցիս ուղղափառ եւ ջերմին դաւանութեամբ։ Այլ եւ ծաղիկ կոչին առաքեալքն. հայրապետքն. եւ վարդապետք. նաեւ համայն հաւատացեալ քրիստոնեայք. զի հինգ յատկութիւնս տեսանեմք՝ի ծաղիկս

այսինքն

digitised by A.R.A.R.@

այսինքն նիւթ, որակ, ձեւ, ներգործութիւն, եւ հոտ. (զորս գրեցաք 'ի սոյն գլխոյ մէկ համարին) բայց աստանօր նիւթ' 'ի չորից տարերաց բաղկացեալ անձինք նոցին, որք քաղաքական առաքինութեամբ ծաղկեցան. այսինքն արիութեամբ, խոհեմութեամբ. արդարութեամբ, եւ ողջախոհութեամբ. Երկրորդ' որակեալք Քրիստոսական սէր հաւատով. նաեւ զՔրիստոս զգեցեալք, եւ Քրիստոնէայ անուամբ մակադրեցան. Երրորդ' ձեւով ուղղեցան, այսինքն ուղիղ դաւանողութեամբ առ Աստուած միացան, եւ վերնոյն խոկմամբ զերկրաւոր փառս անարգեցին. Չորրորդ' ներգործութբ բարի վարուց եղեն ժառանգորդ արքայութե երկնից. Հինգերորդ' հոտով համբաւոյ զաշխարհ լցուցին. զի տեսիլ եղեն հրեշտակաց եւ մարդկան. Որպէս աշխարհս հայոց, նախ կռապաշտութեամբ իբրու խոպանացեալ անդաստան, եւ անպտուղ անապատ էր եղեալ. Զկնի' Աստուածային ներգործութեամբ, եւ Սրբոց բարեխօսութեամբ, Մարտիրոսաց արեամբ, Թագաւորաց ճգամբ, Հայրապետաց քրտամբ, կենաց բանիւք ոռոգեալ Աստուածատունկ դրախտ եղեւ. Քանզի զարդարեցաւ գեղեցիկ ծաղկօք. խոնարհ մանուշակօք, կարմիր վարդիւք, փայլուն շուշանօք, ջերմ նարգոսիւք, անոյշ խնկօք, զանազան տեսակաւ սրբոց. փայլեցաւ սէր հաւատով. որակեցաւ քրիստոնէութեամբ. ձեւացաւ ուղղափառութեամբ. ներգործեցաւ հրաշիւք, հռչակեցաւ համբաւօք. Զի իբրեւ զնիւթ ծաղկի եղեն առ մեզ առաքեալքն. կարմրորակ Մարտիրոսքն. ուղղաձեւ Ճգնաւորքն, ներգործօղ քարոզիչքն. հոտ անոյշ կուսանքն. փայլուն առաքինիքն. վանորայք եւ սուրբ Ներսէս շնորհալին 'ի դիմաց հռիփսիմեանց կուսանաց ասէ առ սուրբ Գրիգոր լուսաւորիչն մեր.

Զերկիրդ քո խոպանացեալ.
իմ կուսական ճգամբ հերկեալ.
Որդ անճաճանչ վայրենդ եղեալ.
զբանն լուսոյ ընդ քեզ առեալ.
'Ի յանդաստան քո սերմանեալ.
որ անապատ էր ծարաւեալ.
Որ շուշանաց վարդից բուսեալ.
յոլով արեամբ մեր ոռոգեալ.

Ցորում

digitised by A.R.A.R.@

Յորում զհօտ քո արածեալ։
անուշահոտ ծաղկօք բուսեալ։
՚Ի դալարոջ վայրի բնակեալ.
և առ կենաց ջուրն անեալ։

և զծայրն տես ՚ի Յն որդի կոչեցեալ գրքոյս նորին։ Առ որս նկատե-
լով սրբազան առաքեալն Պետրոս գրեաց առ կապադովկեցիս
թէ՝ այլ դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն քահանայութե-
ան, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական։ Որպէս զի զձեր առաքի-
նութիւնս նուիրեսջիք այնմ որ զձեզ ՚ի խաւարէն կոչեաց յիւր
սքանչելի լոյսն։ որք երբեմն չժողովուրդ, բայց արդ ժողովուրդ
Աստուծոյ. որք չողորմեալք, այժմ ողորմութիւն գտիք. (I Պետ.
2. 9։) Այսու կերպիւ ծաղկեցաւ երկիրս Հայոց որպէս և
այլոց ազգաց Քրիստոնէից։ Ժամանակ յատահելոյ էհաս. յատա-
նելն է զաւելորդ ճիւղն որթոյ ՚ի բաց քանալ. որպէս ՚ի թլը-
փատութեան զանպիտան մորթն հատանել և հրամայեցաւ ՚ի հնումն
որ ՚ի նորումն խափանեցաւ իբրև անօգուտ (Գոր. 15. 24։)
Զի այնուհետև զսրտի թլփատութիւն նախադրեցին։ որպէս
ասէ առաքեալն՝ թլփատութիւն մեք եմք որք հոգւով զԱստու-
ծած պաշտեմք (Փլպ. 4. 3։) և այլ ոմն ՚ի Մարգարէից ասէ՝
թլփատեցարուք Աստուծոյ ձերում, և թլփատեցէք զանթլը-
փատութիւն սրտից ձերոց (Երմ. 4. 4։ Այսինքն հատանել
զխորտ ՚ի խորոյ աշխարհիս, և ապա ընտիր մաքուր և սուրբ լինել
քանզի Աստուած հայի ՚ի սիրտս մեր. և կամի զի երկիւղածք իւր
և Աստուածապաշտք, մահացուցմամբ մարմնոյ թլփատեսցին ՚ի
մեղաց. Քանզի ոչ ևս եմք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք.
վասնորոյ ասէ՝ ժամանակ յատանելոյ էհաս։ Որպէս և առա-
քեալք կանոնեցին նոր եկելոյն ՚ի հաւատս, ՚ի բաց կալ ՚ի զոհելոյ
կռոց. և յարենէ, և ՚ի հեղձուցելոյ, և ՚ի պոռնկութենէ.
(Գոր. 15. 29։) Այսպիսիք են աւելորդ ճիւղք և ոստք՝ որ-
հատանել և ՚ի բաց արկանել հրամայեցաւ ՚ի ժամանակս գալը-
տեան փեսային հոգւոյ, յորժամ պայծառ ծաղիկ սուրբ հաւատոյս
մերոյ բողբոջեցաւ։ Այսպէս գուն գործեցին և նախնիքն մեր.
որպէս խոհեմութեամբ մեծն Աբգար. արիութեամբ արքայն
Տրդատ. երկար վաստակօք և անտանելի ճգամբք լուսաւորիչն
մեր սուրբն Գրիգոր. և կուսական արեան հեղմամբ, պայծառ-

ողջա

ողջախոհութեամբ որ Հաւխիմեանքն: Զի այնպէս ուսանի ՝ի գրոց, եթէ ամենքն քո փայթակղեցուցանէ զքեզ, ի լեռ զնա եւ ըն-կեա՛ ՝ի քէն: ՝ի մարմնոյ քոյ հատ զնա, զի մի մինչ զքեզ ՝ի վասս կրթեսցէ. (Մտ. 25. 36:) եւ Պօղոս ուսուցանէ թէ՝ այսու-հետեւ սպանէք զանդամս ձեր զերկրաւորս, ՝ի բաց ընկեցէք զպղծութիւն, զպոռնկութիւն, զանկութիւն չարեաց, եւ զագահութիւն որ է կռապաշտութիւն: ՝ի բաց թօթափեցէք եւ դուք զայն ամ. զբարկութիւն, զբարկութիւն, զչարութիւն, զհայհոյութիւն, զխեղկատակութիւն ՝ի բերանոյ ձերոյ, մի ստէք միմեանց, մեր-կացուցէք զհին մարդն գործովք իւրովք, եւ զգեցարուք զնորն. (Կող. 3. 5:) եւ մանաւանդ արմատ ամենայն չարեաց է արծաթ-սիրութիւնն ասէ: Այսուհետեւ ամենեքեան ՝ի մէնջ յատանելոյ ժա-մանակ եղեւ, եւ զմեզ մաքրելոյ ժամ եղեւ: Վասն զի ծառն ոչ յատեցեալ. եւ ոչ սրբեցեալ եւ հարթեցեալ, յայնժամ խոնարհու-թիւնն որ գտանայր ՝ի պտուղս՝ գտանայ ՝ի յանօգուտ ճիւղս եւ յանպէտ տերեւս. իսկ յատեալն եւ հարթեալն պտղաբեր լինի, զի խոնարհութիւնն առայն անցանելոյ անուցանէ եւ տածէ զպտուղն: Վասնայն ասէ փրկիչն յաղագս բանական ծառոյ. թէ՝ ամենայն որ բերէ զպտուղ (հայր իմ մշակէ) սրբէ զնա՝ զի առաւել պտղաբեր լինիցի (Յոհ. 15. 1:) Վասնայնորիկ եւ առաքեալն ասէ՝ մի անառակութեամբ եւ արբեցութեամբ, եւ մի խառն անկողնօք եւ պղծութեամբ. եւ մի նախանձու եւ հա-կառակութեամբ, այլ զգեցարուք զտէր Յիսուս Քրիստոս. եւ մարմնոյ խնամ մի տանիք ՝ի ցանկութիւնս (Հռմ. 13. 11. Վասնորոյ ամենեքեան որք հաճոյական Աստուծոյ, եւ հարսնա-ցան Քրիստոսի փեսային, զմարմինս իւրեանց ՝ի խաչ հանին կարեօք եւ ցանկութեամբք հանդերձ: Զի որք կամին Աստուա-ծպաշտութեամբ կեալ ՝ի Քրիստոս Յիսուս ՝ի հալածանս կայցեն. (Գաղ. 5. 2Տիմ. 3. 12:) Արդ եթէ ոչ եղանիցին այնպէս յայնժամ նախկին վկայն Քրիստոսի յանդիմանէ զայնո-սիկ որպէս զհրեայս, ասելով խստապարանոց եւ անթլփատ սրտիւք եւ ականջօք. (Գործ. 7. 51:) Զայն տասերորդի լուեալ եղե-յերկիր Երուսաղ: Ցանկութիւն տասերակին տես ՝ի մէկ գլխոյ 9 հա-մարին: Նոյնպէս զարնան զուշակ տասերակ երեւեցաւ մեզ հրեշ-տակապետն զաբրիէլ, որ ՝ի դէմս մարգարէին բնութեան. ՝ի հօրէ

հօրն Աստուծոյ ողջոյն եբեր առ կոյսն Մարիամ։ Իսկ և 'ի ծննդեան փեսային՝ երկնային տատրակքն իջեալ 'ի ստորինս վայր ( որ 'ի յերկրի մերում աստ, զի այլուր Երուսաղէմ կոչէ քաղաք մեծի արքայի ) 'ի Բեթլեհեմ քաղաքի աւետարանելով հովուացն, երգեցին զփառս 'ի բարձունս Աստուծոյ։ և մկրտիչն Յովհաննէս իբրու մատամբ ցուցանելով զփեսայն Հոգւոյ՝ հանգոյն տատրակի եղանակեր, ահաւասիկ գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի։ և բարձրաձայն քարոզէր թէ ապաշխարեցէք զի մերձեալ է արքայութիւնն Աստուծոյ։ և յանդիմանէր զՀերովդէս, թէ ոչ է պարտ առնուլ քեզ զկին եղբօր քոյ։ և կամելով յատանել 'ի զինուորաց նորին պաւելորդ զսաստ եզձիւղս նոցին, պատուիրեր թէ՝ մի զոք խռովեցէք, և մի զոք զրպարտիցէք։ Վասն որոյ կոչեցաւ գարնան գուշակ տատրակ։ և 'ի յեսայեայ ձայն բարբառոյ յանապատի։ Նմանապէս և առաքեալքն ամենեքեան, հանգոյն տատրակի արձակեցին զձայնս իւրեանց ընդհանուր տիեզերս, և եղեն քաղցրաձայն տատրակք ամենից ազգաց, որպէս Պետրոս Հրէից, և Պօղոս հեթանոսաց. Թադէոս և Բարդուղիմէոս հայոց. Յովհաննէս եթովպացւոց. Թովմաս հնդկաց. նոյնպէս և այլքն, այլոց ազգաց. Զի ընդ ամ երկիր ել բարբառ նոցա։ և ամենեցունց քարոզեցին, խրատեցին, ծանուցին, և պատուիրեցին գրեթէ այսպէս, այսուհետև արդարացեալք 'ի հաւատոյ անտի, զխաղաղութիւն կալցուք առ Աստուած 'ի ձեռն տեառն մերոյ Յի Քրիստոսի ( Հռմ. 5. 1։) Նոյնպ և առաքելաշաւիղ սբ վարդապետքն եկեղեցւոյ. տատրակապէս արձակեցին զգեղեցիկ ձայնս քարոզութե իւրեանց։

Թզենի ընձիւղեաց զծոց իւր։ այգիք ծաղկեցան. և ետուն զհոտ իւրեանց. արի՛ եկ գեղեցիկ իմ։

Թզենեաւ իմանամք զերիս սեռս մարդկան ազգի. նախ Հրէից. երկրորդ՝ հեթանոսաց. երրորդ՝ և ապա հաւատաց մարդկանցն։ Զի թզենին է ծառ իմն խոնարհ, բազմաճիւղ և պտուղ նորա քաղցր և կաթնալի, և ունի առինքն ունտս բազումս։ և մինչ տերն մեր քաղցեաւ ( 'ի դէմս փրկութեան մարդկան ազգի ) եկն առ եկեղեցիս Հրէից, որ 'ի Ճանապարհի օրինացն տնկեալ քեր ին, յորս եկն Քրիստոս խնդրել զպտուղ ըստ օրինացն գործս և ոչ եգիտ, այլ միայն զտերևս կեղծաւորութե-

վասնորոյ

digitised by A.R.A.R.@

վասնորոյ անէծ զնա ասելով. մի որ այսուհետև 'ի քէն պտուղ կերիցէ։ Առ որս ասէ Շնորհալին 'ի Յիսուս որդի գրքոյն.

Ցանկալութեան դէմս հրբէից.
կամ 'ի մեղաց պտղոյն բերից.
Առ թզենին զգեալ անիծից.
եղև ցամաք փոյթ 'ի հիւթից.

Որոյ աղագաւ ասաց 'ի դէմս նոյնոյ, Երուսաղէմ Երուսաղէմ որ կոտորէիր զմարգարէս, և քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ, քանիցս անգամ կամեցայ ժողովել զորդիս քո, որպէս հաւ զձագս իւր ընդ թևօք, և ոչ կամեցայք, ահա թողեալ լիցի ձեզ տուն ձեր (Ղկ. 13. 34. Վասնայնորիկ ասեմ ձեզ, զի բարձցի 'ի ձէնջ արքայութիւնն Այ, և տացի ազգի որ առնիցէ զպտուղ նորա Մտթ. II. 43. Բայց որ աստանօր ասէ թզենին ընձիւղեաց զբողբոջ իւր, զի յետ պէնտէկոստէին 'ի հրէից բազումք հաւատացին 'ի Քրիստոս, և նախանձաւորք եղեն պատուոյն Քրիստոսի. Գոր. II. 20. Սակայն շուտով թառամեցան, յորոց ազգէ և ոչ մնաց նշմարանք յեկեղեցիս հաւատացելոց. զի հանգոյն սիզոյ և տանեաց խոտոյ, որքան արագ բուսան, այնքան արագ և չորացան։ Երկրորդ՝ հանգոյն թզենւոյ բազմաճիւղ եկեղեցիս հեթանոսաց որք ծառայէին կռոց, հաւատացին 'ի Քրիստոս, և ընձիւղեցին զբողբոջ իւրեանց, և ետուն պտուղ լի գործովք բարեօք, և եղեն օրինակ բազմաց հաւատացելոց, բանիւք գնայիւք սիրով հաւատով յուսով և սրբութեամբ. որպէս և առաքեալն նոյնպէս ասէ, եղէ Վարդապետ հեթանոսաց հաւատովք և ճշմարտութեամբ I Տիմ. 2. 7. Երրորդ՝ մարդս է որպէս թզենի տնկեալ 'ի ճանապարհի կենցաղոյս, որպէս զի տացէ Աստուծոյ հաւատս ուղիղ, և գործս մաքուրս. իսկ եթէ ոչ տայ պտուղ գործոյ տնկողին իւրոյ. յորժամ գայցէ յերկնից, և ոչ ինչ յառաջելոյս գտանէ 'ի նմա, յայնժամ լցէ զահագին անէծս. թէ՝ երթա՛յք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենից, և պատճառն վերաբերէ թէ՝ քաղցեայ և 'ոչ ետուք ինձ ուտել. Մտթ. 25. 42. և որ ասէ ոչէր ժամանակ պտղոյ. կամի ծանուցանել թէ՝ բարին որ կարելիէ, թէ և յանդէպ ժամանակի ևս իցէ, 'ի զանցանելն անիծանի. Մանաւանդ զի ամենայն ժամանակ՝ է ժամանակ պտղաբերելոյ զբարիս. և ոչ ինչ ժամանակէ բերե-



digitised by A.R.A.R.@

լոյ զտերեւս ունայնութեան։ Որպէս առ մարմնաւոր կարգն ոչ ոք երբէք ասէ՝ չունել ժամանակ, նոյնպէս եւ ոչ հոգեւորին պատճառել զանդէպութիւն՝ ժամանակին։ Զի ամենայնի ժամէ եւ ժամանակ՝ ի վերայ երկրի։ Ժող. Գ. 1. Որ ծաղկեցան։ Նոյն՝։ Եկեղեցի սք խորհրդաւոր հարսն փեսային Յիսուսի, զանազան տեղեաց բաղդատեն։ Նախ՝ տապանին Նոյի՝ յորում էին սբ, եւ անսբ, կենդանիք։ Աստի բաժանեն զսբն ի յանսրբոյ։ Երկրորդ՝ կալոյ՝ յորում եղանի ցորեան եւ յարդ։ Ցորեան հաւաքեն՝ ի յշտեմարանս, եւ յարդն այրեն անշէջ հրով։ Երրորդ՝ ուռկանի առկելոյ՝ ի ծով՝ յորում ժողովին ամենայն ազգ ձկանց։ Եւ նստեալ ժողովեն զբարի, բարին յամանս՝ եւ զխոտանս՝ ի բաց ընկենուն։ Չորրորդ՝ հարսնարանի՝ յորում խրախճանութեան գտանին ամենք ոգեալ հանդերձիւք։ Որոյ զոտս եւ զձեռս կապեալ՝ հանեն ընդ՝ ի խաւարն արտաքին։ Հինգերորդ՝ ժողովեալ կուսանաց, ընդ որոյ գտանին եւ յիմարք չիջեալ լապտերօք։ Բայց իմաստունքն ընկալանին՝ ի հարսանիսն եւ ընդդէմ յիմարացն փակի դուռն։ Վեցերորդ՝ փարախի՝ յորում են ոչխարք ընդ նոսին եւ այծք։ Եւ առեալ կայուցանեն զօդիս ընդ աջմէ, եւ զայծիս՝ ի ձախմէ, յայնժամ միոյն ասէ՝ եկայք օրհնեալք. եւ միւսոյն՝ երթայք անիծեալք։ Եօթներորդ՝ տան՝ յորում գտանին անօթք, ոմն՝ ի պատուէ, եւ ոմն՝ ի յանարգանս։ Պատուէլին առնուն, եւ անարգելին թողուն։ Ութերորդ՝ այգւոյ յորում են որթ եւ ուռ, եւ անպտուղ ուռք։ Որթն եւ ուռն թողուն, եւ անպտուղ ուռքն հատանեն եւ՝ ի բաց ձգեն։ Իններորդ՝ դրախտի՝ յորում բուսանին ծաղիկք գեղեցիկ եւ սիրելիք նաեւ փուշք ատելիք։ Բայց ծաղիկք թողուն, եւ փուշն ժողովեալ այրեն։ Այսպէս եղանի՝ ի կատարածի աշխարհի, կրկնակի գալստեան փեսային հոգւոյ. յորում աւուր ասէ փեսայն ցհարսն, ծառայ բարի եւ հաւատարիմ մուտ յուրախութիւն տեառն քոյ. Մատ. 25. 11. եւ ասէ ցպասաւորսն, զծառայն անպիտան հանէք՝ ի խաւարն արտաքին անդ, եղիցի լալ եւ կրճել ատամանց։ Զի այսպէս պարտ է հատանել զչարն՝ ի բարւոյ Զորս յանցեալ տան դրեցաւ որպէս ասէ գիր՝ ի բաց հան զաղախինդ եւ զորդի դորա. զի մի ժառանգեսցէ որդի աղախնոյն ընդ որդւոյն ազատի. Քանզի զի՞նչ հաւասարութիւն է լուսոյ ընդ խաւարի. եւ

կամ

digitised by A.R.A.R.@

կամ զի՞նչ միաբանութիւն է Քրիստոսի ընդ Բելիարայ. կամ զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատի. կամ զի՞նչ նմանութիւն է տաճարի Աստուծոյ ընդ մեհենաց, ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք 2 Կոր. 6. 14. Եթէ ոք զտաճար Աստուծոյ ապականէ՝ ապականեսցէ զնա Աստուած, 1 Կոր. 3. 17. Նոյնպէս և Մարգարէն ասէ, այգի տեառն զօրութեանց տունն Իսրայէլի. Բայց դանդաղի Աստուած զնմանէ, թէ՝ ես անկեցի զքեզ որթ պտղաբեր, զիա՞րդ դարձար ինձ՛ի դառնութիւն որթդ օտարացեալ. Ես. 5. 7. Մատ. 11. 33. արի՛ եկ մերձաւոր իմ, գեղեցիկ իմ. Քանզի Քրիստոս փեսայն հոգւոյ զհաւատացեալ հարսն իւր կոչէ առ ինքն երբեմն մերձաւոր անուամբ. երբեմն գեղեցիկ, երբեմն դուստր. և քոյր. և հարսն, և բարեկամ, և անբիծ. Մերձաւոր ասէ զի հաւատով մերձեցաւ՛ի նա. Գեղեցիկ ասէ՝ զի վերստին ծննդեամբ գեղեցկացաւ. և դուստր՝ զի որդեգրեցաւ յաւիտենականի հօր. Հարսն ասէ՝ քանզի հոգւով սիրով միաւորեցաւ. Այլև անբիծ ասէ՝ վասն զի մարմնով և արեամբ փեսային վայելչապէս զարդարեցաւ.

Աղաւնի իմ, ե՛կ ընդ հովանեաւ վիմի, մերձ առ նախապարսպաւն, ցո՛յց զերեսս քո և լսելի արա՛ ինձ զբարբառ քո, զի ձայն քո քաղցր է, և երեսք քո գեղեցիկ.

Նախապէս աղաւնին անոխաբեր թռչունէ, զի նշան հաշտութեան և խաղաղութեան զշիւղ ձիթենւոյ եբեր՛ի տապանն Նոյի. Երկրորդ՝ զի միշտ հեծէ և ողբայ՛ի բոյն իւր. որոյ համեմատէ փեսայն զհարսն իւր. քանզի հանգոյն աղաւնւոյ, իբրև զշիւղ ձիթենւոյ միշտ զաղօթս՛ի բերանոյ իւրմէ մատուցանէ առ Աստուած. և զողորմութիւն իւր՝ ընծայէ կարօտելոյ որով հաշտեցուցանէ զԱստուած ընդ ինքեան. Իսկ վէմ է տէրն մեր. ըստ այնմ տէր վէմ իմ, ամրութիւն իմ, և փրկիչ իմ ինձ. 2 Թագ. 22. 2. Զի Աստուած հայր այնպէս խոստացաւ ժողովրդեան իւրոյ. Թէ՝ ահաւասիկ դնեմ՛ի Սիոն զքար գայթակղութեան և զվէմ գլորման, որ հաւատասցէ՛ի նա՝ մի ամաչեսցէ Հռմ. 9. 33. և որ գնայ արդարութեամբ, նա բնակեսցէ՛ի բարձու վիմին հաստատնոյ. Ես. 33. 16. Որպէս աղաւնիքն՛ի քարանձաւ տեղիս, և՛ի ծերպս վիմաց ձգեն զինքեանս, առ

՛ի

digitised by A.R.A.R.@

՚ի պահպանիլ և թագուցանիլ ՚ի յորսողաց. զի այնպիսի տեղիք են ապաստանք երկչոտաց. ըստ աղաւնեաց և տատրակաց. որք զգուշանան ՚ի յարծուոյ և ՚ի բազէէ, խոյս տուեալ փախչին և մտանեն ՚ի ծերպս վիմաց. Նմանապէս եղջերուք և նապաստակք Սղ. 103. 18։ Նոյնպէս և հարսն, եթէ կամիցի զգուշանալ ՚ի յանմարմին որսորդաց սատանայէ և ՚ի բազայէն բելիարայ, ձգէ զինքն ՚ի ծերպս վիմին Քրիստոսի, որքեն հնգեքին վէրք և խոցուածք նորին. յորոց բղխին ողորմութիւնք և գթութիւնք. զի նաև խորհրդաւոր վէմ I Կոր. 10. 4։ և այնու միայն ազատիլ կարէ յորսողէն սատանայի և ՚ի հրոյ գեհեննոյն։ Վասն այն միայն հրաւիրէ զհարսն իւր ասելով էկ ընդ հովանեաւ վիմի. որպէս և աւետարանն կոչէ թէ՝ եկայք ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և եթէ ոք ծարաւի իցէ եկեսցէ առ իս։ Ըստ որ և Մարգարէն յուցանէ զտեղին, և ծանուցանէ զօրութիւն նորին թէ՝ երթայք և մտէք ընդ վիմօք, և թաքերուք։ Քանզի ուրախ եղիցին բնակիչք վիմին. Եսա. 2. 10. և 42. 11։ Որ Ջնջղուկ գտանէ իւր տուն. և տատրակ զբոյն՝ ուր դիցէ զձագս իւր Սղ. 83. 3։ Այնպէս և հարսն զաղաւնակերպ զհոգի իւր թագուցանէ ՚ի հնգեակ վէրս փեսային. և ասասցէ ընդ հովանեաւ թևոց քոց ծածկեսցես զիս Սղ. 16. 8։ Անդ ողբայ, և անդ հեծէ, և անդ աշխարէ ասելով վաստակեցայ ես ՚ի հեծութեան իմում։ Բայց աստանօր գիտելի է. զի այս եղև երկրորդ կոչումն։ Քանզի նախ կոչեաց ՚ի սոյն գլխոյ 10 համարին։ Նշանակելով անդ զհրաւիրումն Յօհաննու Մկրտչին ՚ի խոստովանութիւն և ՚ի յապաշխարութիւն։ Եւ աստ երկրորդ կոչմամբ ծանուցանէ առաքելովք զաւետարանական քարոզութիւն, որովք լինի թողութիւն մեղաց, և շնորհազարդութիւն հոգւոյ.

Մեջ աա [illegible] նախապատրաստէ, առաջին պարիսպն զոր շինեն շուրջ կնեբքին պարսպաւն առ ՚ի յամրութիւն քաղաքին։ Որով իմանամք զհրեշտակաց պաշտպանութիւնն. զի որպէս Քրիստոսէ վէմ ամրութե հաստատեցելոց. նոյնպէս և հրեշտակք իբրև զպարիսպ շուրջէին զեկեղեցւովք իւրովք և պահեն զնա։ Երկրորդ՝ զգրաւորական օրէնքն. որք իբրև պատուար ամրագոյն պարսպի աւետարանական օրինաց, որ արգելուն զմարդիկ ՚ի կռապաշտութենէ, զի մերձեր շնորհական

օրինաց

digitised by A.R.A.R.@

օրինաց. յորում երեւեցաւ փառայն հոգւոյ, վեհն կենդանի
ընդ որոյ հովանեաւ հարսն նստիլ փափագէր. Որ եկն ոչ տա-
՝ի լուծանել զօրէնս, այլ զթերին եւ զպակասն նորին լցուցանել.
որպէս զի անդ ասաց մի՝ շնար, աստ ասէ. մի՝ հայիր՝ի կին. Անդ
ասաց մի՝ սպանաներ, աստ ասէ. մի՝ բարկանար. Քանզի անդ
Թլփատութիւն մարմնոյ, եւ աստ Թլփատութի սրտի. Անդ ոչխար
պատարագի. եւ աստ Քրիստոս գառն Աստուծոյ. Անդ մարմնոյ,
եւ աստ հոգի. Մատ. 5. 17. Երրորդ՝ նախապատիւ եւ ամրուն
հարսին եկեղեցւոյ հաւատացելոց՝ի Քրիստոս՝ եղեն Առաքեալք,
Մարգարէք, Վարդապետք, եւ այլ Մարտիրոսք, խոստովանողք,
Ճգնաւորք, եւ կուսանք. Ասաի ասէ Յովհաննէս ՚ի տեսլեան թէ՝
եւ էր շինուած պարսպաց քաղաքին յասպիս քարանց, եւ քաղաքն էր
ոսկի մաքուր. Յայտ. 21. 18. Քանզի յասպիսն վանէ զդեւս.
Նոյնպէս եւ հրեշտակք, որպէս Ռափայէլ զԱզմէկոս դեւն
Սառայի դստեր Ռագուէլայ. Նոյնպէս եւ Մարգարէքն, որպ
Դաւիթ զայն Սաւուղայ. Նա եւ առաքեալքն՝ յորոց անուանէ
դեւք սարսէին եւ դողային. Եւ զկնի ասէ. ցոյց զդէմս քո. կամի
միայն տեսանել զդէմս հարսին. զի ՚ի տեսութեան Ճանաչի այր,
եւ ՚ի հանդիպմանէ երեսաց Ճանաչի իմաստունն. Սիր. 19. 26.
Ասաի ասէ Ով՝ հայր Ճանաչէ զորդին՝ պատկերաւ իւրով.
Թագաւորն զզինուորս իւր՝ դրօշաւ իւրով. Հովիւն զոչխարս՝
նշանաւ իւրով. Վարդապետն զաշակերտս՝ ուսմամբ իւրով.
Բայց հաստատուն հիմն Աստուծոյ կայ, եւ ունի զկնիքս զայս,
եթէ ծանեաւ Տէր զայնոսիկ որք իւրքն են. եւ ՚ի բաց լիցի յա-
նիրաւութենէ. ամենայն որ անուանէ զանուն Տեառն. 2. Տիմ.
2. 19. Զի իմաստութիւն մարդոյ լուսաւոր առնէ զերեսս
իւր. Ժող. 8. 1. Որպէս Մովսէս կարդալով զանուն Տեառն,
փառաւորեցաւ տեսիլ դիմաց երեսաց նորա. եւ երեք ման-
կունքն պահելով երեսք նոցա երեւեցան բարիք Ել. 34. 29.
Դն. 1. 14. Որոյ եւ զկնի յարէ թէ՝ Ա՜ լսելի արա ինձ զբարբառ քո.
որպէս Աբրահամ՝ էս առնէր ցիւթեր. խօսեաց ընդիս, զի ոչ կամէր,
եւ զի ոչ չէն խնդրուածք քո եւ աղաչանքդ. Երե. 15. 15. Վասնզի
ձայն քո քաղցր է, եւ տեսիլ քո գեղեցիկ. զի ձայն աղօթից եւ պաղա-
տանաց ասէ, եւ դէմք խեղճմտանայն. քանզի ոչ կարէ լինել
աղօթից քաղցր, եթէ ոչ իցէ դէմք խղճմտանայն գեղեցիկ.

Զի

digitised by A.R.A.R.@

Զի՛ի մաքուր խղճմտանաց յառաջագայ ի պայծառութիւն դի-
մաց: Վասն այն՝ ձայն հարսին քաղցր է և համեղ. քանզի երգով
զԱստուած, զՀրեշտակս. և զմեզ քաղցրացուցանէ: Քանզի
իմաստունն բանիւք ինքն զինքն սիրելի առնէ Սիր. 20. 13.
Որպէս Դաւիթ յորժամ բանիւք զկարծրութիւն սրտին Սաւուղայ
մեղմացոյց, և ետ ասել նմա, այդ քո ձայն իցէ որդեակ իմ
Դաւիթ 1 Թագ. 24. 17: Զի այնպէս ուսեալ էր խօսիլ ՚ի
Հոգւոյն սրբոյ. ուստի ասէր՝ քաղցր եղիցի նմա օրհնութիւն իմ
և ես ուրախ եղէց ՚ի Տէր: և Սոկրատէս ուսեալն հարցանողի թէ՝
որպէս եղէց գեղեցկախօս և քաղցրաբան. պատասխանեաց թէ
զոչ ինչ խօսեսցիս, բայց միայն զոր ինչ քաջ ուսեալ իցես.
Նոյնպէս և Դաւիթ քաջ ուսեալ էր զաղօթս և զպաղատանս
իւր առ Տէր ուղերձել. ըստորում ասէր՝ ո՛վ եմ ես Տէր իմ
Տէր. և ո՛ տուն իմ, զի սիրեցեր զիս մինչև ցայժմ վայր, և ոչ
փոքրկացաւ առաջի քո Տէր իմ Տէր, և դու ինքնին գիտես
զծառայ քո Տէր իմ Տէր. 2 Թագ. 7. 18: Նմանապէս և
Սամուէլ ուսաւ ՚ի Հեղեայ ասել, խօսեաց Տէր՝ զի ծառայ քո
լուիցէ 1 Թագ. 3. 9: Վասնորոյ ասեն Վարդապետք թէ՝ քաղ-
ցրաբարբառ աղօթքն է ոսկեղէն բանալի մտից սենեկի առա-
գաստի Թագաւորին, որ տուեալ է հարսին. առ ՚ի յամենայն ժամ
համարձակ խօսիլ ընդ նմա: Քանզի ՚ի մէջ Աստուծոյ և հա-
ճոյացեալ հոգւոյ միջնորդութեամբ աղօթիցն. ծնանի զարմա-
նալի ընտանեկցութիւն, և գեղեցիկ կենցաղավարութիւն և տայ
համարձակ խօսիլ ընդ Աստուծոյ, և աղաչէ առ նա որպէս
զՀայր: Վասն այն ասէ թէ՝ զի ձայն քո քաղցր է և դէմք քո
գեղեցիկ: Որպէս յաւետարանելն Ստեփաննոսի զանուն փեսային
Յիսուսի, գեղեցկացան դէմք նորա. և տեսին զերեսս նորա.
իբրև զերեսս Հրեշտակի. Գործ. 6. 15: Որոյ աղագաւ փեսայն
երկնաւոր յատին կարդէ, տեսանել զգեղեցիկ դէմս նորա, և
լսել զքաղցր բարբառ աղօթից նորա: Նոյնպէս և մեր ամենե-
ցուն բացօք երեսօք տեսանեմք զփառս Տեառն, իբրև ընդ հայելի
տեսեալ ՚ի նոյն պատկեր նորոգիմք՝ ՚ի փառաց ՚ի փառս. որպէս
և ՚ի Տեառն Հոգւոյ 2 Կոր. 3. 18: Յայնժամ յորում աւուր
փեսայն հոգւոյ կոչուարեալ քննէ Հրապա. իսկապէս խօսի Ա
հարսին, և ասէ. եկ առ իս, ցոյց ինձ զդէմս քո զի տեսից. զի ՚ի
պատ

պատկերի իմոյ արարի զքեզ. զնոյն պահեսցես՝ թէ կորուսեալ նորոգեալ ես՝ թէ եղծեալ. արդեօ՞ք ունիս զդրոշմ իմոյ թագաւորութեան, և զնշան հարսնութեան. ունի՞ս զաւետարանական վարդապետութիւն իմ. մերձեցար առ իս. գեղեցկացար դիմօք. Արդեօ՞ք հեծեր որպէս զաղաւնի. Կայեր ընդ հովանեաւ վիմին. Արդեօ՞ք տեսեր անկատարս զկերպս փեսային հոգւոյ. հարցեր՝ թէ զինչ են վերքդ այդոքիկ ՚ի մէջ ձեռաց քոց և ոտից. Մերձեցար պարապաւ օրինաց նորին, արդեօ՞ք լուար զպատգամս աւետարանական. Զի գեղեցիկ են ոտք աւետարանչացն խաղաղութեան, և աւետարանչացն բարութեան. Հռով. 10. 15.
Եթէ զայսոսիկ ունիս կատարեալ, ապա ձայն քո քաղցր է.

Յօրինուածն հեղինակն ասէ. Կալարուք մեզ աղուեսս փոքունս ապականիչս այգեաց, զի այգիք մեր ծաղկեալ են.

Կալարուք է ըմբռնել և կապել այնպէս՝ որ այլ ևս ոչ կարասցէ շարժիլ. զի աղուէսն է գիշակեր կենդանի. բարուք խորամանկ. խաբեբայ, դարանակալ, երկպառակիչ և ակար. Որպէս Սատանայ, որ ծածուկ հնարիւք նիւթէ մարդկան զչարիս, և է գիշակեր, զի մեղօք մարդկան շատանայ. խաբեբայ զի գործ նորին է յարաժամ պատրել զմարդ. երկպառակող հաւատացելոց, քանզի՝ ոմանց բարիս յառաջ արկանէ, և ոմանց չարիս՝ գոնէ միտս որոգայթաւորեսցէ. դարանակալ՝ զի միշտ նստի ՚ի դարանի առ ՚ի որսալ զմեզ, կամ առ ՚ի կլանել ումեք. և է ակար զօրութեամբ. բայց ապականիչ հոգւոյ մարդկան, հանգոյն աղուէսուցն Սամսոնի որք ապականեցին զանդաստանս այլազգեացն Դատ. 15.
4. և ասի ՚ի գիրս Նմանութեանց, թէ՝ աղուէսն զօրաւ ակար ոչ կարէ մարտնչիլ ընդ թագաւոր կոչեցեալ կենդանւոյն, վասն ազնուութեան մարմնոյ նորին, ուստի փախչի. բայց մինչ թագաւորն հեռանայ յորջոյ իւրմէ, աղուէսն մտեալ ՚ի ներքս ապականէ զորջն թագաւորին աղտեղութեամբ և գարշահոտութեամբ. Նոյնպէս և Սատանայ ոչ կարէ մարտնչիլ ընդ զգոյշ և պատրաստ եղեալ արանց. վասնորոյ դարանակալի նոցա, մինչ գտանէ զնոսա անհոգ, անզգոյշ և անպատրաստ յայնժամ ապականէ զհոգի նոցին աղտեղութեամբ և գարշահոտութեամբ մեղաց. Այլև պատմեն թէ՝ աղուէսն յորժամ ուտէ նուշ իսկոյն մեռանի. վասնայն մինչ հանդիպի մտանել յայգիս, կամ ՚ի պարտէզս

ամենայն

digitised by A.R.A.R.@

ամենայն հոգևորականութեամբ զնոսայ ապականել. Նոյնպէս և սատանայ՝ Աստուածահաճոյ արանց բարի գործովք խոյի և վերածորի և խոկոյն մեռանի, վասն այն զուն գործէ ապականել զայգիս հոգւոյ նոցին. Որպէս նախ ապականեաց զայգի երկնային դասուցն որով քարշեաց ընդ իւր զերկոտասան մասն աստեղաց Յայտ. 12. 4. Երկրորդ՝ ապականեաց զայգի եդեմական դրախտին, որ զնախնիսն ծնողսն մեր, դէպ էս մեղուքշանօք և կերպակերպ շողոքորթանօք եարկ ՚ի ծուղակ որոգայթի. Երրորդ՝ ապականեաց զայգի բնական օրինաց զանազան շարախանութեամբ, որովք որդիքն Աստուծոյ զդստերս հեղձան. Ըստ որդւոյն կայենի. Նոյնպէս և զհինգ քաղաքս Սոդոմայւոց և Գոմորայւոց ծծմբախառն հրով կիզեալ աճիւն դարձան. Չորրորդ՝ ապականեաց զայգի գրաւորական օրինաց դէպ էս կռապաշտութեամբ, որոյ աղաղակէ ասաց Աստուած, լերկ աղուէսք յանէրտակս էին մարգարէք քո Իսրայէլ. և ոչ կային ՚ի հաստատութեան. որք տեսանէին զսուտ թիւն, և դատէին զդղձութիւն մտօքն, որք ասէին այսպէս ասէ տէր. և ես տէր՝ ոչ առաքեցի զնոսա Եզկ. 13. 4. Հինգերորդ՝ ապականեաց զայգի նոր օրինացս, այլևայլ հերձուածողաց յարուցմամբ առաջալեաց զեկեղեցիս ուղղափառ Քրիստոնէից. թէպէտ նա կայ անշարժ և հաստատուն.

Այլև սատանայ հանգոյն աղուէսու ապականէ զայգի խորհրդոց և մտաց մերոց. որպէս ապականեաց զմիտս Յուդայի զողութեամբ և ես վաճառել զտէրն երեսուն արծաթոյ. և երկիցելու ելից զսիրտ Պետրոսի, և ետ ուրանալ զՎարդապետ իւր. Զանանիայ և զՍափիրայ ագահութեամբ, որք խորեցին ՚ի գնոյ դեղջն. Ապականեաց և զխորհուրդս Հերովդէի որ նման աղուէսու կամէր որսալ զՅիսուս և սպանանել. Ղուկ. 13. 32. Նաև եղև ոգի սուտ ՚ի բերան չորեքհարիւր Մարգարէիցն, որովք պատրեաց զԱքաաբ, և ելեալ անկաւ յՌամովթ գաղաադու 3 Թագ. 22. 22. Եւ այլ բազումս տես ՚ի սբ գիրս. Զի այնպէս ջանայ յարաժամ պատրել զմարդիկ և ապականել զայգի հոգւոյ և մտաց մարդկան. Այլև աղուէսունք փոքունք են ՚ի միտս մեր մեղմեղ խորհուրդք, մաղձ դառնութեան և կրնջիւն անիրաւութեան. և այնպիսի մեղս առայ գործել որոց երբեք

Թուի

digitised by A.R.A.R.@

Թո՛ւր յաչս մեր 'ի տեղի մեղաց. որ ապականէ զպատկեր դիմաց մերոց, մինչ զի անծանօթ առնէ զմեզ յԱստուծոյ և հրեշտակաց նորա. Վասնորոյ ասէ թէ ոչ գիտեմ զձեզ: Սոյն սակս ասէ սբն Օհան ոսկեբերանն թէ՛ ուստի կարացից ճանաչել զքեզ՝ ով հաւատացեալ. զի ոչ ես մարդ եթէ յայտնապէս կարեմ տեսանել. զի գործք քո յայտ առնեն զքեզ, զի իբրև զէշ աքացես. որպէս զխոզ բղջախոհես. իբրև զուղտ ոխակալես. իբրև զձի զհետ կանանց խրխնջաս. որպէս զարջ զորովայն քո ուրախ առնես. որպէս զգայլ յափշտակես, որպէս զօձ բարկանաս, իբրև զկարիճ վիրաւորես. իբրև զաղուէս նենգաւորես. իբրև զիժ թունաւորես. և որպէս զսատանայ նախանձաւորես, խայթես զեղբարս քո, ուրեմն ոչ կարեմ համարել զքեզ 'ի թիւս մարդկան. Վասնայնորիկ ասեն Վարդապետք թէ մեղքն մինչ փոքր է սպան զնա զի մի արմատացեալ ապականիցէ զայգի հոգւոյ քոյ. Վասնայն հրամայէ փեսայն օրիորդ քարոզչաց և խրատիչ Վարդապետաց, և բոլոր հաւատացեալ Քրիստոնէից, զի այնպիսի ապականիչ աղուէսունս կալցեն, և քաղեսցեն որպէս զորոմն, և կապեսցեն խրձունս և այրեսցեն, և ապա ժողովեսցեն զցորեանն յշտեմարանս: Զի որպէս 'ի ծաղկեալ այգեաց փախչին օձք. նոյնպէս և 'ի առաքինութ. ծաղկեալ ոգւոց խոյս տայ սատանայ. Վասնորոյ ասէ առաքեալն և արդ հնազանդեցարուք այսուհետև Աստուծոյ և կացէք հակառակ չարախօսին, և լիցի փախստական առ 'ի ձէնջ Յկ. 4. 7: Որպէս 'ի լեառն փորձութեան, մինչ փորձիչն մատեաւ առ տէր, և յաղթեցեալ 'ի նմանէ, խոյս 'ի բաց եկաց անտի Ղկ. 4. 13. Ուստի Ոսկեբերանն նմանեցուցանէ զնա շան որ կայ մերձ առ սեղանն, և սպասէ փշրանաց նորին. բայց մինչ տեսանէ եթէ ոչ ինչ տան նմա ուտել. և նա ստիպեալ 'ի սովուչուէ անտի, և երթայ այլուր գտանել յաւուրդ. Ապա եթէ գտանէ զոք որ տայ նմա ուտել՝ կայ առնու և ոչ շարժի 'ի տեղւոջէն: Վասնորոյ դև մի ասէր միոյ Ճգնաւորի թէ՛ քաղցութ. ծարաւու սպանէր զիս ով չար ծեր, այնպէս աղաղակելով փախեաւ 'ի նմանէ: Բայց աղուէս փոքրիկ ասէ նկատմամբ կորեանց նորա. զի կորիւնք գազանաց առաւել վնասակարք են և ապականիչք քան զծնօղս իւրեանց, նմանապէս և փոքր համարեցեալ մեղքն առաւել ապականէ զհոգին. որպէս ասէ թէ՛ Ճանճք

մե

digitised by A.R.A.R.@

մեռեալք զպղծագործութեանն զիւղս անուշունս Ժող. 10. 1.
Վասնորոյ և Սողոմոն զդուստրն փարաւոնի է հան 'ի քաղաքէն
Դաւթի. վասն զի ասաց ոչ բնակեսցի կին իմ 'ի քաղաքին
Իսրայելի արքայի դաւթի. վասն զի սուրբ է որ եմուտ անդր
տապանակ տեառն. 2 Մն. 8. 11. Քանզի իբրև զձագ աղո-
ւէսու, կռապաշտ հեթանոսի զաւակ գոլով՝ մի գուցէ ապակա-
նեսցէ զսուրբ քաղաքն. թէ և զկնի ապականեաց այնպիսի չքնաղ
իմաստութիւն արքային. Այլև փոքրիկ ասէ, զի որ իբրև զաղուէս
գողէր, շրջէր և խնդրէր կլանել զամենեսեան, խոկոյն բանն
միայնեալ 'ի մարմնի, իբրև ընդ փոքրիկ աղուէսու խաղայ ընդ
նմա. զի որպէս մանուկ մատաղ 'ի ծակ իժից, և 'ի բոյն կորեանցի
եարկ զձեռս իւր. և ետ իշխանութիւն հաւատացելոյ իւրոց
կոխել զնա իբրև զօձս և զկարիճս Ես. 11. 8. և Ղկ. 10.
19. և նուաճել զնա, և առնել ծառայ յաւիտենական. և խա-
ղալ ընդ նմա իբրև ընդ հաւու, և կապել զնա իբրև զձագ կայալ
Յոբ. 40. 23. Զի եբարձ զօրութիւն նորա, և որսայցեն զնա
հրեշտակք, և փակեսցեն զնա 'ի բանտս դժոխոց Յայտ. 20. 1.

Վասնորոյ ասէ կալարուք.

Հարսն ասէ. Եղբօրորդին իմ ինձ, և ես նմա, որ հովուէն 'ի մէջ շուշանաց:

Ցնծեալ հարսին զսատանիկ սէր փեսային իւրոյ թէ՛ որչափ
հոգայ վասն իւր, և որպէս հրամայէ օրհնողացն զի կալցեն
զապականիչ աղուէսունս այգեաց խորհրդոց մտաց իւրոց զի
ծաղկեսցի առաքինութեամբ: Որոյ աղագաւ կամին հարսն, և
ինքն բոլորովին ընծայել սիրոյ սիրեցելոյն իւրոյ, որով հատուս-
ցէ զփոխարէնն. սիրելին իմ ինձ և ես նմա. և 'ի յայլ թարգմանութիւն
սիրելի գրեն. սիրելին իմ ինձ և ես նմա. ասէ, զի նա վասն իմ
խոնարհեցաւ յերկնից, զի զիս ընդ իւր միաւորեսցէ. և զայս
քարոզ ծանեաւ սրբազան առաքեալն Պօղոս, և բարեպէս
խոստովան եղև, թէ Քրիստոս եկն յաշխարհ, 'ի փրկել
զմեղաւորս որոց գլուխն եմ ես I Տիմ. 1. 15. Զայսնս պարտ
խոկալ ամենայն հարսնացելոց. զի եթէ կամիս սիրել 'ի նմանէ,
սիրեա զնա. ասէ ոմն 'ի գովելեաց, սիրեա՛ զսէր նորա, որ սիրով
քով էջ յարգանդ կուսին. և զսէր իւր՝ ընդ սիրոյ քոյ կապակ-
ցեաց, զանձն իւր խոնարհեցոյց, և զքեզ բարձրացոյց. և եթէ
յանդգնիս թէ՝ զինչ մատուցանիցես վասն քո, նա միայն զքեզ
խնդրէ

digitised by A.R.A.R.@

խնդրէ, և ոչ այլ ինչ. Զի յամենայն մարմնաւոր առեղծուածս ոչ ինչ այլ լաւագոյն քան զքեզ վասնորոյ զքեզ խնդրէ զի դու զքեզ կոչուսցեալես, և նա դատնել չանկայ. Զայս գիտելով Հարսին ասէ՝ նա ինձ և ես նմա. Ըստ դաւթի, որ ասէ բաժին իմ ես դու տէր. և զկնի յարէ թէ՝ քո եմ և ես կեցո զիս. Սղ. 118. 57. և բեռնարդոս ասէ՝ նաև իմ առեղծողը. Աստուածութեան, տէր, հովիւ, հայր, փեսայ, ճանապարհ, ճշմարտութիւն կեանք, փրկութիւն, կեցութիւն, ուրախութիւն, և լոյս. և ամբրոսիոս ասէ՝ ես եմ նորա միայն, և նա միայն բաժին իմ և ստացուած, և ես եմ բաւական նմա, զի բայց յինէն զայլ ինչ իր ոչ պահանջէ. և առաքեալն ասէ՝ դուք մարմին քրիստոսի էք, և անդամք անդամոց նորա. 1 Կր. 12. 27. Քանզի փեսայն ասէ՝ որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցի և ես ՚ի նմա. և ընչամնաքուր աւետարանիչն ասէ որ կայ ՚ի սէրն՝ բնակեալէ յԱստուած, և Աստուած ՚ի նմա բնակի 1 Յոհ. 3. 16. և ըստ դաւթի խօսեցաւ Աստուած վասն Սողոմոնի թէ ես եղէց նմա ՚ի հայր, և նա եղիցի ինձ յորդի 2 Թագ. 7. 14. և յաղագս ժողովրդեան իւրոյ ասաց, ես եկից և բնակեցայց ՚ի նոսա, և գնացից ՚ի նոսա. և եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին իմ ժողովուրդ. և առ ժողովուրդ իւր ասէ, ես ընկալայց զձեզ. և ես եղէց ձեզ ՚ի հայր, և դուք եղիջիք ինձ յուստերս և ՚ի դստերս ասէ տէր ամենակալ. 2 Կր. 6. 16. Ուստի և հարսն կամի ասել թէ՝ ես եղբօրորդւոյ իմոյ մարմին. և նա ինձ գլուխ. ես ՚ի նմա, և նա յիս. Ես ՚ի նա հաւատով. և նա յիս սիրով. Վասնզի փեսայն է կոյս, և հարսն լինի կոյս, որովք եղանին սիրելիք միմեանց. Զի ամբրոսիոս ասէ՝ սա եկեղեցին է անբիծ զուգաւորութեամբ, առատ ծնելութեամբ, կոյս ողջախոհութեամբ, մայր է զաւակի, նոյնպէս է զձեզ՝ ոչ կաթամբ մարմնոյ, այլ կաթամբ առաքելոյ, կոյս է խորհրդով և առաքինութեամբ, մայր է ժողովրդոց. զորոյ զպարզութեան սէր գիրն վկայէ, բազում են որդիք ՚ի բայ թողելոյն (ասէ) քան զայն որ զայր ունի և փեսայ, և սա ունի զփեսայ ողջամիտ վարդապետութեամբ. Վասն որոյ ասէ՝ որ հովուէն ՚ի մէջ շուշանաց. որով հետև կամի հարսն զփեսայն իւր բարեպէս ծանուցանել օրիորդ բարեկամաց. վասն այն ընդ ձայն [illegible] [illegible] զի մի [illegible]

իբրու

իբրու վարձկան հովիւ, այլ՝ քաջ հովիւ, որ՝ ի մէջ շուշանայ շրջի և անտանոր արածէ զհօտ իւր. Որպէս մեղու՝ ի մէջ ծաղկանց ինքն և զձագ իւր. և անդ մակաղեսցէ զզուարս հօտի իւրոյ. Քանզի՝ ի վայրի դալարոջ և՝ ի ջուրս հանգստեան սնուցանէ զնս Սղ. 22. 2. Մանաւանդ վասն հոգւոյ առաւել հովիւ է կուսանաց, քան այլոց առաքինեաց. և հովուէ զայնոսիկ որք իբրև զշուշան մաքուր են կուսութեամբ, և երթան զկնի գառին ուր և երթայցէ նա Յայտ. 14. 4. Քանզի նախապէս հովուէ զհարսն եկեղեցի՝ ի մէջ շուշանայ հրեշտակաց երկնից Մատ. 22. 30. Երկրորդ՝ խոստանայ բազմեցուցանել ընդ իւր. զի ասէ ուտիցէք և ըմպիցէք՝ ի սեղան իմ յարքայութեան իմում Ղուկ. 22. 30. Երրորդ՝ հովուէ զնա՝ ի յեկեղեցւոջ՝ ի մէջ ընտրելոց սրբոց իւրոց, այսինքն առաքելոց, Մարգարէից, Վարդապետաց, խոստովանողաց. և ընտրեալ նահատակաց. Չորրորդ՝ հովուէ՝ ի մէջ սբ գրոց բազմադիմի վարդապետութեամբ, առ որ ասէ իմաստուն արքայն թէ՝ ոչ արդիւնք արմտեաց կերակրեն զմարդ, այլ քո բանն զհաւատացեալսն՝ ի քեզ պահէ Իմս. 16. և տէրն մեր ասէ թէ՝ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ. այլ ամենայն բանիւ որ ելանէ՝ ի բերանոյ Աստուծոյ Մատ. 4. 4. Զի բանաւորաց կերակուրն բանն Աստուծոյ է, զի որպէս հացն զմարմին բուծանէ. նոյնպէս և բանն զհոգին կեցուցանէ. և որպէս գառինք՝ ի ներքուստ զդալարիս կերեալ՝ յարտաքուստ զգեղմն արտադրեն. նոյնպէս և որք՝ ի շուշանս արածին, շուշանափայլ մաքուր կենօք սնանին. Այնպէս հովուէ և սնուցանէ վասն հոգւոյ զհարսն իւր սբ եկեղեցի մինչև ցերկրորդ՝ գալուստ իւր. Որպէս և զկնի ասէ.

Մինչև տիւն շնչեսցէ. և շարժեսցին ստուերք. դարձիր նմանեաց եղբօրորդի իմ այծեման. կամ որթոյ եղանց. ՚ի վերայ լերանց խնկաբերաց.

Արդ տիւն լուսաւորէ նոր օրէնս Քրիստոսի, և լուսաւորող պայծառ արեգակն Քրիստոս փրկիչն մեր. Աւետարանական վարդապետութիւն նորին. իսկ մթին գիշեր, և անյայտ ստուերք հին օրէնն Մովսիսի, և ճրագ մարգարէական բանիցն. Քանզի զստուեր հանդերձելոց բարեացն ունէին օրէնքն, և ոչ զնոյն կերպարան իրացն Եբր. 10. 1. և ունիմք հաստատագոյն զբանն մարգարէական. որում եթէ անսայցէք բարւոք առնէք, իբրև ճրագի

digitised by A.R.A.R.@

երբ և Քրիստոսի որ ասացեալ գլուխ 'ի խոնարհութեան առաջնոյ. մինչև տիւն լուսաւորեսցի 2 Պետ. 1. 19. Մինչև տիւն շնչեսցէ. շնչելն է տալ և առնուլ շնչոյն. բայց աստանօր շնչել ասէ զալոյն, որպէս 'ի շնչել և 'ի գալ առաւօտեան լուսոյն. շարժելն և երթալ առաւօտուց մերձ գիշերոյն. վասնորոյ շնչել ասէ. և որքան առայս, 'ի շնչելն այսինքն 'ի վերջ ազդեալ նոր օրինացս. շարժեցան ստուերք հին օրինացն, Մարգարէքն կանխարանքն, զոհքն, պատարագքն, օրէնսդրութիւնքն ամենեքեան խափանեցան. զի կանխացեալ ծանոյց թէ անհնարին անուրջ զան ասէ տէր և կատարեցից 'ի վերայ տանն Իսրայէլի, և 'ի վերայ տանն Յուդայ ուխտ նոր. Արդ ասելովն նոր, հնացոյց զառաջինն. և որ հնանայն և ծերանայ՝ մերձ է յապականութիւն Երեմ. 31. 31. Եբր. 8. 13. Այլ և հոգին որ շնչեաց 'ի վերնատունն 'ի դասս առաքելոյն և նորոգեաց զամենեսեան և շարժեաց 'ի սրտից նոցա զհին ստուերս տգիտութեան և զմեղ երկմտութեան և զխաւար ագահութեան. Գալուստ տեառն է համբերձեալն և անցաւոր ստուեր ժամանակ կենցաղոյս. որք շարժին 'ի շնչել փայլատակման փեսային յաշխարհ, յաւուր դատաստանին, և 'ի ծագել պայծառ լուսոյ քառաթև նշ խաչին, և 'ի յարութեան ամենայն մարմնոյ, յորժամ եղանեմք և ընդ Քրիստոսի լինիմք Փիլ. 1. 23. և որ ասէ մինչև տիւն շնչեսցէ. ոչ պարտիմք իմանալ թէ այնու հետև, զի 'ի շնչել առաւօտեան, տիրեսցեալ քն մի միանգամայն յայնժամ բաժանին յերկրայ. որք ասացն ունին և ես նմայ. մինչև տիւն շնչեսցէ. ոչ. այլ միայն յանխափանականացեալս. զի քան այս մինչև՝ յանխափանականէ, և ոչ ժամանակականէ. Ըստ այնմ՝ նստ ընդ աջմէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց. Որ ոչէ իմանալի թէ՝ յորժամ զթշնամիսն եդից 'ի ներքոյ ոտից նորա, այնուհետև ընկեսցէ զորդին յաթոռոյն. ոչ, այլ յանխափան միայ. Կամ ըստ անհատապնդականին թէ՝ ոչ գիտաց զնա մինչև ծնաւ զորդին իւր. մի թէ զկնի ծննդեանն գիտաց. քաւ լիցի. Կամ ըստ փրկչականին, թէ՝ ոչ եկանից ես անտի մինչև հատուցանիցես. զի թէ աստանօր ոչ հատուցանիցէ, անդ ուրեմն ոչ ինչ գոյ զինչ հատուցանել. Այլ ըստ [illegible] զանցառեալ լինիմ արքունական պատմոյ անզերծօրէն պատակառանին, և յանխափանականապէս պատահական. Սոյին նման իմա աստանօր և բառս այս մինչև. և որ ասէ. [illegible] 15. պատկառանքն և 'ի հնութեան համայն [illegible]

և

և Մարգարէք վասն Գալստեան միւսոյին յայտնեցին. որպէս յառաջասացութիւնն Յովբ ասէր գիտեմ զի մեր Աստուած փրկիչ մեր ( և այս երկար գրեալ ՚ի նախկին գլխոյ մէկ համարին ) և որդ՝ այնպէս պաղատիմք և մեք այժմ երկրորդ՝ գալստեան նորին. և զայս քան համեմատ առաքելանն Յօհաննու. որ ասէ տեսի ՚ի ներքոյ սեղանոյն զհոգիս ամենայն մարդկանց ընկերոյ վասն բանին Աստուծոյ, որք ասէին ՚ի ձայն մեծ, մինչ և յերբ տէր սբ. և ճշմարիտ ոչ դատես, և ոչ խնդրես զվրէժ արեան մերոյ ՚ի բնակչաց երկրի. Յայտ. 6. 9. Այսպէս փութոյ և հարսն վասն գալստեան փեսային զի ժառանգեսցէ յաւիտենական ուրախութիւն արքայութեան փառաց. և մեղաւորքն անդրա- տրամութիւն դժոխոց տանջանաց. Նմանեաց այծեման կամ ուլոց եղանց ՚ի վերայ լերանց խնկաբերաց. Լերինք կոչին հրեշտակք որ ՚ի սոյն գլխոյ 9 համարին գրեալ տես անդ. զի անտանօր ՚ի վերայ լերանց բեթելայ ասաց. և աստ ՚ի վերայ լերանց խնկաբերաց ասէ, քանզի ՚ի նախկին գալստեան ՚ի վերայ լերանց բարձրացեալ կոչոյ կոխոտելով վազեաց. և այժմ որ նստի ՚ի քերոբէս յաթոռ բարձրութեան. Ես. 6. 1. Դան. 3. 55. և ՚ի յերկրորդում գալ ՚ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ, և փառօք բազմօք Մատ. 24. 30. Զորօրինակ վերացաւ յերկինս, եւ նստաւ ՚ի վերայ քերոբէից. Թռեաւ և երևեցաւ ՚ի վերայ թևոց հողմոց. 2 Թագ. 22. 11. և թէ՝ վասն էր հրեշտակք խնկաբեր լերինք անուա- նեալին, այսմ թէ՝ որպէս լերինք բարձր են յերկրէ, նմանապէս և հրեշտակք բարձր են ունելեաց. և որպէս ամենք կանայք իւղ և խունկ առնելով ՚ի գերեզմանն փրկչին իւղաբերեալք և խնկաբերք անուանեցան, նոյնպէս և հրեշտակք զաղօթս ամենայն սրբոց որպէս անուշահոտ խունկ ոսկի խնկամանով մատուցանեն ՚ի վերայ ոսկեղէն սեղանոյն առաջի աթոռոյն Աստուծոյ. Յայտ. 8. 3. և պաշտպան հրեշտակ Տօբիթայ՝ ասաց առ նա թէ՝ ես եմ Ռափայէլ յեօթանց անտի ՚ի սրբոյն հրեշտակաց, որք հանեն և մատուցանեն զաղօթս սրբոյն, և մտանեն առաջի փառաց սրբո- ւոյն. Տօբ. 12. 15. Վասն այնորիկ և կոչեցան ՚ի Սողոմոնէ

լերինք խնկաբերք.

Բայց երրորդ՝ գլխոյ, նախ հարսն պատմէ ՚ի խնդրելն զորին զփեսայն ՚ի գիշերի հետ օրինաց, և յանկողնի հեշտութեան. և յոյժ

դատ

digitised by A.R.A.R.@

գտանելըն՝ ելեալ շրջի ՚ի քաղաքս եկեղեցւոյ, ՚ի փողոցս, և ՚ի հրապարակս խորհրդոց և մտաց· և մինչ անկարանայ ՚ի գտանել զկամսն կոչել աղաղակաւ, և նա ոչ տայ պատասխանի· և առ դիպի պահապան հրեշտակաց՝ և ՚ի նոցանէ հարցանէ· Որոյ զկնի գտանել ոչ թողից զնա՝ մինչև տարայց զնա ՚ի տուն մօր իմոյ· Այս երդմնեցուցանէ զդստերս Երուսաղէմի առ ՚ի զարթուցանել զփեսայն միջնորդութեամբ· Այսոքիկ մինչև ցհինգ համարն· Երկրորդ՝ և ՚ի 6 համարին փեսայն խօսի վասն հարսին յելանել նորին յանապատէ իբրև զսաւեղն խնկեալ ծխոյ հաճելի գործով կամօք փեսային· Երրորդ՝ օրհներգէ համբաւէն զգահոյսն Սողոմոնի և զպատերազմականս զօրաւորս նորին, և զազդու սուսերս նոցին· և զպատերազմող նահատակսն, և զանեսակս զահաւորականս, և զպալանկին նորին· մինչև ցտասն և մի համարն· և զկնի հրաւիրէն զդստերս սիոնի ելանել և տեսանել զպսակ արքայի մերոյ Սողոմոնի մարմնաւորին տնօրէնութեան· և զուրախութիւն յաւուր նորին փեսայութեան։

*Յանկողնի իմում ՚ի գիշերի խնդրեցի զոր սիրեաց անձն իմ, խնդրեցի զնա և ոչ գտի, կոչեցի զնա և ոչ ետ ինձ պատասխանի։*

Ամենայն որք մինչ կամիցին ննջել խնդրեն այնպիսի տեղ՝ զի լիցէ մութն, ցուրտ, և գէջ՝ զի խորապէս ննջիցեն· այնպէս էին և որք ընդ հնացեալ օրինաւ, զի կային ՚ի մէջին գիշերի· որք ոչ ունէին զլոյս պատուիրանաց, և ոչ զՃրագ Մարգարէից· Վասնորոյ ցրտացեալք էին յԱստուածային սիրոյն, և գիջային ցանկութեամբ պատրեալք, ուտէին ըմպէին, կանայս առնէին, և արանց լինէին մինչև յօրն յորում եմուտ Նոյ ՚ի տապանն; և եկն ջրհեղեղն և կորոյս զամենեսեան Ղկ. 15. 27. Նոյնպէս և ՚ի գրաւորական յօրէնս· որք ունէին իբրու զսակաւ լոյս Ճրագի Մարգարէիցն; այլ այնու ևս ոչ կարէին տեսանել մինչ Ճրագն շիջանէր· Որպէս Սաւուղ զկնի ննջման Սամուէլի այլ սկսաւ խնդրել զնա ձեռամբ վհուկ կնոջ միոյ I Թգ. 28. 6. և մինչ յամեցաւ Մովսէս ՚ի լեառն, նստաւ ժողովուրդն ուտել և ըմպել և յարեան ՚ի խաղալ Ել. 32. 5. Ուստի ոչ կարացին գտանել զսիրելի փեսայն որում փափագէին, զի ՚ի գիշերի հին օրինաց, և յանկողնի հեշտութեան կային· Վասնորոյ ասաց տէր առ աշակերտսն իւր թէ՝ բազում Մարգարէք և արդարք ցանկացան տեսանել

digitised by A.R.A.R.@

նել՝ զոր տեսանէք և լսել զոր լսէյք և ոչ լուան. Մատթ.
13. 17. Երկրորդ՝ ՝ի դժոխսն մթին լուսոյ բանականութեան, և
յանկողնի խոր կուրացութեան ՝ի ներքոյ վարսամոր ծածկոյ
խնդրէյին և ոչ գտանին, կոչէյին և ոչ լուան. Իմ. 2. 20. 27.
և 3. 6. 3 Թգ. 14. 23. 4 Թգ. 11. 3. Երրորդ՝ որպէս
մեղաւորք՝ ՝ի դժոխսն խաւարային գործոյ, և ՝ի յանկողնի գարշելի
մեղաց խնդրեն. բայց ոչ կարեն գտանել. և ՝ի ժամու փորձու-
թեան աղաղակեն առ նա, և նա ոչ լսէ: Այլ ասէ՝ զաւ թողուցել ձեզ
տուիս, և ինձ ոչ լսել ձեզ: Զի լցեալ էք զանկողինս ձեր, և
տարածեալ զձեռս առ նոքօ. սիրեցիք զհնամանիս ձեր, և ես ասեմ
զձեզ և անտես արարի. ես այն եմ որ յանխանենիցն եմ, և դուք
յինէն ոչ զանգիտեցիք Եսա. 58. 4. և 57. 8. Չորրորդ՝ ՝ի
դժոխսն զբօսանաց խնդութեան, և յանկողնի չարեաց բարե-
կենդանութեան, ոչ կարեն գտանել. լուր դատ՝ Թի որ ասէ, Աս-
տուած իմ՝ ՝ի տունջեան կարդացի առ քեզ՝ և ինձ ոչ լուար, ՝ի դժոխսն
և ինձ ոչ անսայեր Սղ. 21. 3. Հինգերորդ՝ ՝ի դժոխսն ծու-
լութեան, և յանկողնի ցուրտ սիրոյ ոչ կարեն գտանել. և ան-
խոհեմ ջերմեռանդութեամբ կոչելով ոչ լսէ: Քանզի ասէ
առաքելոյն. Թէ ջամբեսցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, և մատ-
նիցեմ զմարմինս իմ յայրումն, և զսէր ոչ ունիցիմ՝ ոչ ինչ օգտիմ
Ա Կր. 13. 3. Վեցերորդ՝ ՝ի դժոխսն արբեցութեան, և ՝ի
յանկողնի Թմրութեան, ոչ կարեն գտանել. և ՝ի ներ գործոյ
անիրաւութեան ոչ լսէ. զի ոչ արբեցողք, ոչ բամբասողք, և ոչ
յափշտակողք, զարքայութիւնն Աստուծոյ ժառանգել կարեն.
Այլ և Դաւիթ խոստովանի լինել ասելով՝ զմեղս թէ տեսանէի ՝ի
սրտի իմում, մի թէ լուեր ինձ Տէր. Ա Կր. 6. 10. Սղ. 65.
18. Եօթներորդ՝ ՝ի դժոխսն պղծութեան, և ՝ի յանկողնի շնու-
թեան, ոչ կարեն գտանել, և ՝ի ներ աղտեղութեան եթէ ձայնեսցեն ոչ
լսէ: Ուրեմն մի խաբիք եղբարք, զի ոչ պոռնիկք, և ոչ կռա-
պաշտք, և ոչ շունք զարքայութիւնն Աստուծոյ ժառանգել
կարեն Ա Կր. 6. 9. Ուսանի ասէ Որոգինէս, ով մարդ եթէ
ընկալցիս յանկողնի հոգւոյ քոյ զշնաւոր տառապանս, և հաք-
պարկութեան, և նախանձու, և պղծութեան մնայ անդ, և ընդ-
դունիցիս զնա, և հեշտասցիս ընդ այնոցիկ որոց ասէ քեզ՝ շնա-
ցար ընդ նմա, և փախեայն հեռանալ ՝ի քէն. և այլ ոչ լսէ քեզ.
և

digitised by A.R.A.R.@

Մեկնութիւն Երգ Երգոց ասացելոյ բանիցն Սողոմոնի. Գլուխ Գ. Համար

Եւ դու Տէր ողորմեալ լսեա՛.
Ցի՛մ յանկողնի ես խնդրեցի
Ի տարաժամ մութ գիշերի.
Տէր փափագմամբ թէ՛ և կոչեցի.
Զնա՛ սիրելին, բայց ոչ գտի.
Հինգ կուսանոյն ըստ յիմարի.
Ընդ՝ պալատեայն խիղ ոչ բարձի
Զի դուրս մնացի ես ան հարի.
զառագաստին մուտն աղխեցի:

Սա որպէս համեմատի բանս Սաղմոսողին թէ՝ Նեղեալ էի ՝ի բազում խռովութեանց և ինչ ոչ գտի Սղ. 75. 6. Նման Հինգ յիմար կուսանացն. և զարմանալ ասէ. զոր ունէաց ինձ այսինքն բոլորովին սրտիւ սիրեցի զնա, և ՝ինա հաւատացի, և զնա ամենայն իմ գոլ ճշմարտապէս ծանեայ, և անհեշտ զի՝ ստացեալ իմ խոստովան եղէ. բայց ՝ի գիշերի կենցաղոյս, և ՝ի յանկողնի աշխարհի հեշտութեանց ՝ի նոյն պէսպէս զբաղմանց զօրէն խնդրեցի զնա և ոչ գտի. կոչեցի զնա

և ոչ ետ ինձ պատասխանի.

Եւ արդ՝ զայս ես ատամանօր յայտնապէս ասեմ. խնդրեցի ասէ՝ և թէ զինչ խնդրեցի գտանել զԱստուած. որպէս և էն. և ոչ գտի. կոչեցի զնա և ոչ ետ ինձ զձայն. Այլ և ոչ՝ի ձայնէ առնուք զուպխութիւն նորին ծանեայ. Ըստ սրբազան առաքելոյ ասելոյն. զի եթէ ոք կարծիցէ գիտել ինչ, չև ևս գիտաց որպէս և արժանն էր գիտել 1 Կր. 8. 2. և օգոստինոս ՝ի գիրս մենախօսութե՛ ՝ի 19 գլխոջ ասէ. մոլորեցայ ես որպէս ոչխար կորուսեալ խնդրելով զքեզ յարտաքս՝ որ ես՝ի ներքս. և տառապեցայ. խնդրելով զքեզ արտաքոյ իմ. և դու բնակիս ՝ի յիս. Շրջեցայ ՝ի Հաւաքս աշխարհի, և ՝ի հրապարակս քաղաքիս այսորիկ աշխարհի. և ոչ գտի. Զի չարապէս խնդրէի զայն յարտաքս՝ որ էր ՝ի ներքս. Ուսաքեալ ՝ի զգեստաւորութե զամենայն արտաքին զգայութիւնս իմ. առ ՝ի խնդրել զքեզ՝ և նոքօք ոչ կարացի գտանել զքեզ. զի արտաքին լուսով ունայն խնդրէի զքեզ յարտաքս. զի էիր ՝ի ներքս. և սակայն ու մտեր նոքա ոչ գիտեն, զի ամենայն զգայութիւնք իմ զքեզ ՝ի բաց առեն, թէ մի

Հարցանէր. և գայլին տես անդ.

Եղիցի և չէինչ յոյս ընդ տաղաւ ՝ի ճղոյս և ՝ի հրապարակս և խնդրեցից



digitised by A.R.A.R.@

ջրք ոռոգեալ անձրեւս. երկրային շնորհս տուեալ, երկնային շնորհս տուեալ մեզ շնորհն.
Այս երկուց ամպոց մեկնութիւնն միապէս իմանալի է. Ամպքն
անդ՝ 'ի գեղջերս եւ յանկողնի խոնարհութեան հարսն զփեսայն ոչ կարէր
գտանել, ուստի խոնարհեցաւ յառնել եւ շրջել 'ի քաղաքս 'ի փողոցս
եւ 'ի հրապարակս յորդեալ եւս ոչ կարաց գտանել. Զի ասէ, մի՛
փրկութեան խնդրեսցին եւ քննեսցին Մարգարէքն. որք վասն որոյ
'ի ձեզ լինելոյ էին շնորհք՝ մարգարէացան I Պետ. I. 10.
Ուստի նախ քաղաք իմանամք զեկեղեցի օրինակս. փողոց՝ զբա-
նաւորս առաքեալս. եւ հրապարակ՝ զխոստովանութիւնս մար-
գարէիցն. Յորմէ ոչ գտաւ սիրելի փեսայն. Զորոյ եւ ոչ
լուաւ զձայն՝ 'ի ժամանակի զալստեան նորին յաշխարհ. (Զորս
առեալ 'ի մէջ զլխոյ մերոյ հանապազ. Երկրորդ՝ քաղաք իմանամք
զմիտս մեր. փողոց զմիտս, հրապարակ զխոնարհութիւն եւ շրջիլն
զբաղել ամենայն օր հոգալ եւ մտածել զնմանէ. Զի մարմին եղծա-
նելի ծանրացուցանէ զոգի, եւ հանէ նորոգեալ յարկ զմիտս բազ-
մահոգս Իմ. 8. 15. Երրորդ՝ քաղաք երկինս. փողոց՝ զդա-
սակարգութիւնս հրեշտակաց, հրապարակ զաշխարհս, եւ ոչ առ-
նուլ զմի ասէ, եւ ոչ 'ի նոյնոյն լուաւ զձայն նորա, թէ որպէս
էութիւն նորա. եւ որքան ասայի թէ իմաստնագոյն եւս հեռա-
ցաւ յինէն, հեռագոյն քան որչափ էին, եւ խորք խորոց ոչ
գտանեն զնա Ժող. 7. 24. Քանզի անդունդք ասացին չէ
առ իս. եւ ծով ասաց թէ չէ ընդ իս Յոբ. 28. 14. Չորրորդ
եւ ոչ 'ի բարձրագոյն քաղաքի զարդ պատուհասութեան, եւ ոչ 'ի փողոցս
առաքելութեան, եւ ոչ 'ի հրապարակս ծուլութեան կարեն գտա-
նել, ուստի եւ ոչ զձայն նորին լսել զի փեսայն հոգւոյ ոչ
հանգչի 'ի սիրտ ագահին՝ վասն գոլոյն փշալից. եւ ոչ 'ի սիրտ
բղջախոհին՝ վասն գոլոյն աղմկալից. եւ ոչ 'ի սիրտ հպարտին՝
վասն գոլոյն հողմալից. Այլ 'ի սիրտ խոնարհին՝ վասն գոլոյն
ծաղկալից: Զի եւ Փիլիպպոս եգիտ զՆաթանայէլ եւ ծանոյց նմա
թէ՝ զորմէ գրեաց Մովսէս յօրէնսն, եւ Մարգարէքն, գտաք
զՅիսուս որդի Յովսեփայ 'ի Նազարեթէ Յովհ. I. 45. Քանզի
Նազարեթ թարգմանի ծաղկեալ. զի մեղուն մինչ զձագս իւր 'ի
աղմկալից տեղիս կորուսանէ, 'ի ծաղկաւէտ վայրս որոնէ. Նոյն-
պէս եւ հարսն զսիրելի փեսայն հոգւոյ, եթէ 'ի աղմկալից տեղիս
հեշտութեան կորուսանէ մեղօք, հարկաւոր է ապաշխարութե-
յա

digitised by A.R.A.R.@

ցաւօք՝ ի ծաղկաւէտ վայրս առաքինութեան որոնել՝ զի գտանել կարասցէ. վասնզի և սրբուհի կոյսն Մարիամ՝ ի Նազարեթ ըն- կալաւ զաւետիս հրեշտակապետին, և անդանօր շնորհա- ղորդեցաւ, և անդ եգիտ զմեծն անդրանիկն Հօր. Նոյնպէս և մոգքն՝ ի յերկրի իւրեանց ոչ կարացին գտանել զմանկացեալ փեսայն Յիսուս, և ոչ՝ ի յերկար Ճանապարհին, այլ՝ ի Նազարեթ ՝ի սատուրին գաւիթին, և անդ երկրպագեցին նմա. Արդ եթէ և դու՝ ի Ճանապարհս անառակութեան ոչ կարես գտանել զնա. Զի Ճանապարհք մեղաւորաց ուղղակեալեն քարիւք, և ՝ի վախ- Ճան նոցին անդունդք և խաւարք և պատուհասք. Սիր. 21. 11 Այլ ՝ի նեղ Ճանապարհս արդարութեան. զի գնասջիք մինչ դեռ զլոյսն ունիք. Նաև ոչ կարես գտանել ծուլութեամբ և զանգաղանօք, զի փոքր մի ննջիցես, փոքր մի նստիցես, փոքր մի ննջիցես, փոքր մի հանգուցանիցես զձեռն քո ՝ի վերայ լանջաց քոց. ապա այնուհետև հասանիցէ քեզ իբր զչար Ճանա- պարհորդ աղքատութիւն քո, և կարօտութիւն իբրև զձիգ սուրհանդակ. Առակ. 6. 9. Նաև ոչ ուրախութեամբ, եթէ ասես կերիցուք և արբցուք, զանզի ՝ի վաղիւն մեռանիմք. արդ եկայք վայելեսցուք զբարութիւնս, և վարեսցուք արարա- ծովքս զրաղեալք իբրև ՝ի մանկութեան. Եսա. 22. 13. Իմաս. 2. 6 Այլ և ոչ ՝ի խեղկատակութիւնս և ոչ ՝ի զբօսանս մոլորեալք խնդրեն զԱստուած և կամին գտանել զնա. Իմաս. 13. 6. Զի և Աստուածամայրն Մարիամ և Աստուածահայրն Յովսէփ զման- կացեալ փեսայն Յիսուս ՝ի մէջ բազմութեան ամբոխին կորուսին, զոր ետ ու և կականմամբ ՝ի տաճարին գտին ասելով զինչ գործե- ցեր որդեակ, զի հայր քո և ես աշխատեալք խնդրէաք զքեզ. աւուրս ասաց. ոչ գիտէք զի ՝ի տան Հօր իմոյ պարտ է ինձ լինել. Ղուկ. 2. 43. և զայսոսիկ համառօտելով հարան, գիտելոյ յանկարծին փաղց և հրապարակ անուամբ յիշատակէ. Զինչ որոյ և հետևեսցուք է.

Գլուխ [illegible] (հարցն [illegible]) [illegible] 15 [illegible].

Ով իմն սուրբ Թեան բերէ բանս, զի ամենայն որք մինչ կամիցին զինչ իւնչ որոնել՝ և յոչ կարելոյ փոյթ գտանել, ՝ի հարկէ վարանին մեծամեծ հոգօք և զբաղին աշխատանօք. Այս քեզ հոգւոյն և

մտաց

digitised by A.R.A.R.@

մտածմունքն որպէս պահապանք որք շրջին ՚ի քաղաքի արտաքին մարդոյ։ Նախապէս խղճմտանք մեր՝ որ յարաժամ տանջէ և նեղէ զմեզ յաղագս չար գործելոյ, կամ ՚ի բարիս յառաջանալոյ։ Երկրորդ՝ պահապանք են ՚ի մեզ երկիւղն Աստուծոյ. զի որ երկնչի ՚ի Տեառնէ ոչ լինի տագնապեալ, և ոչ պակասեալ զի նա է յոյս նորա Սղ. 34. 16. Քանզի երկիւղն պահպանէ զդրունս զգայութեանց, և ոչ թողու մտանել ՚ի ներքս զթշնամին բնութե. Վասնորոյ պատուիրէ Դաւիթ թէ՝ ծառայեցէք Տեառն երկիւղիւ, և ցնծացէք նմա՝ նորա դողութեամբ։ Որպէս ոմն փափկասէր լուաւ յեկեղեցւոջ ՚ի յաւետարանէն թէ՝ երթիցեն մեղաւորքն ՚ի տանջանս յաւիտենականս, զայս ՚ի միտ ածելով ասէր ոչ թէ միայն ՚ի դժոխս յաւիտենականս, այլ և ոչ ՚ի փափկութեան, անկարելիք կայեալ ժամկալել ամ մի, և խոկոյն եղեւ կրօնաւոր լուսաւորութեան աղաչախարեալ։ Երրորդ՝ պահապանք են իշխանք և դատաւորք քաղաքաց ՚ի յԱստուծոյ կարգեալ, առ ՚ի վրէժխնդրութիւն չարագործաց, և ՚ի գովութիւն բարեգործաց. զի Աստուծոյ պաշտօնեայք են քեզ ՚ի բարիս. Ապա եթէ զչար գործիցես, երկիր զի ոչ եթէ վայրապար ածեալ են զսուսեր ընդ մէջ. զի Աստուծոյ սպասաւորք են ՚ի վրէժխնդրութիւն այնմ որ զչարն գործիցէ։ Վասնորոյ հարկ է հնազանդ լինել ոչ միայն վասն բարկութեանն, այլ և վասն մտացն խղճի. I Պետ. 2. 13. Հռմ. 13. 1. Չորրորդ՝ պահապանքն առ մեզ նաև հովիւք վերակացուք. ըստ այնմ զոր եդ Աստուած յեկեղեցւոջ. այս են նախ զառաքեալս, երկրորդ՝ զմարգարէս, երրորդ՝ զվարդապետս, հովիւս, վերակացուս, առաջնորդս, խոստովանահայրս, քարոզիչս, խրատիչս որք միշտ ուսուցանեն զկամս փեսային՝ հարսին եկեղեցւոյ։ Զի որ կարդասցէ զանուն Տեառն կեցցէ Յվլ. 2. 32. Բայց Պօղոս զայս տեղիս մեկնելով ասէ թէ՝ Իսկ զիարդ կարդասցեն յոր ոչն հաւատացին, կամ զիարդ հաւատասցեն զորմէ ոչ լուան, կամ զիարդ լուիցեն առանց քարոզչի. Հռմ. 10. 14. Քանզի պահապանք առաւել ՚ի գիշերի շրջին քան ՚ի ցերեկի. զի որք ննջեն ՚ի գիշերի ննջեն. և որք արբենան ՚ի գիշերի արբենան. Վասնայնորիկ և դատաւորք առաւել ՚ի գիշերի վրէժխնդիր լինին. որպէս և խիղճ մտաց

զինչ

digitised by A.R.A.R.@

զինքն տանջէ, երկիւղն զգուշացուցանէ. իշխանք տեղեկացեալ քննեն. դատաւորք դատեն. խոստովանահարք խրատեն. եւ քարոզիչք վարդապետք յանդիմանեն. Որպէս եւ հարսն 'ի գիշերի եւ յանկողնի խնդրեաց զփեսայն. եւ 'ի գիշերի ակամայ շրջիլ 'ի քաղաքս, եւ 'ի փողոցս, եւ 'ի հրապարակս. յաղագս որոյ ըմբռնեցաւ 'ի պահապանացն. Իսկ արդ մեք ամենեքեան որդիք լուսոյ եմք, եւ որդիք տուընջեան, չեմք գիշերի, չեմք խաւարի, զի գիշերն մերժեցաւ. իբրեւ 'ի տուընջեան զգաստացեալ շրջեսցուք. Թես. 5. 5. Զորորդ՝ պահապանք են հրեշտակք որք միշտ շրջին ընդ մեզ, զչարեան պատժեն, եւ ընդ վիշապ օձին պատերազմին Տես. Ծն. 18. 1. Ել. 14. 19. Յայտ. 12. 7. եւ պահեն զճանապարհս երկնից, զի մի կարասցէ յափշտակել զհոգիս մարդկանց 'ի վերելողաց. Այլեւ պահեն զմեզ 'ի մեղաց. եւ 'ի ձախողակի պատահմանց, եւ 'ի յարուցեալ փորձութեանց. Զաղօթս եւ զպատարագս եւ զողորմութիւնս մեր մատուցանեն առ Աստուած. 'ի նեղելն մեր հասանեն, եւ 'ի յառնելն զինի ընթանան. 'ի մեռանելն մեր տանին 'ի դատաստան եւ յապաշխարելն մեր խնդան. Հինգերրորդ՝ պահապանք լինին մեզ դեւք մանաւանդ դիւապետն սատանայն որ կոչի աշխարհակալ խաւարիս եւ շրջի 'ի խաւարի Եփ. 6. 12. Մտ. 6. 6. Քանզի յորժամ զանփորձ ոք միայնակ գտանէ, իսկոյն պատրէ եւ թակարդէ. Այլեւ պահապանէ զդրունս զգայութեան մերոյ. զի մինչ տեսանէ զտանուտէրն նիրհել եւ 'ի քուն մտանել առաժամայն ականահատեալ մտանէ 'ի տուն. եւ գողանայ զգանձս հոգւոյն. Կամ ցանէ զորոմն 'ի մէջ ցորենոյն եւ երթայ. վասն որոյ տէրն մեր պատուիրէ թէ արթուն կացէք եւ հսկեցէք Ծն. 3. 1.
Մտ. 6. 19. եւ 13. 25.

Հարսն [illegible] զայս տեղիս 'ի յԱստուածաշունչն Սողոմոնի՝ փեսայ. գրեալ է. փոխանակ հարսն գրելոյ, զի կամ 'ի տպագրութենէն, կամ 'ի գրչաց սխալեցաւ. զի բանն ոչ է փեսային, այլ հարսին. Զի հարսն որոնէ զփեսայն. որպէս յայտ յանդիման ցուցանէ. Իսկ եւ Աստուծոյ պահապանն վասն հրեշտակաց ասէ, եւ զնոյնանէ հարցանէ, արդեւք ոք տեսիք զոր սիրեաց անձն իմ. Բայց աստ գիրն զերկուս ուսուցանէ մեզ 'ի սիրել նախ զԱստուած. Երկրորդ՝

ընկերն

զընկերն. բայց զԱստուած ոչ որ ետես երբէք. այլ միածին որդին որ է 'ի ծոց Հօր նա պատմեաց մեզ Յով. I. 18. Ել. 33. 20. I Յով. 4. 12. Նաեւ Հրեշտակք իմանան զանբա-տութիւն խոստովանին, որպէս վկայեաց վեցթեւեան սերովբէքն զերեսս եւ զոտս իւրեանց ծածկեն 'ի յանձէ փառացն Աստուծոյ. Զի բաց 'ի բոլորոյն Գիտակցական երկրպագումք թեւօք ծածկեն զերեսս զբարձ-րութիւնն Աստուծոյ պատմելով. եւ երկրպագումք զոտս իւրեանց զխորութիւն նորին անքնին խոստովանելով. եւ միջին թեւօք չափաւոր գիտութեան. եւ Աստուածածանօթութեան նորին ալանելով, աղաղակեն սբ. սբ. սբ. տէր զօրութեանց լի են երկինք եւ երկիր փառօք քո Ես. 6. 2. Ուստի եւ Պօղոս հիանալով ասէ, ով խորք մեծութեան եւ իմաստութեան գիտութեան Աստուծոյ, որպէս զի անքնին քննելոյ են դատաստանք նորա եւ անքնին զննելոյ ճանապարհք նորա. Հռ. II. 33. Իսկ եւ յանէն Փիլիպպոսի, տէր ցոյց մեզ զՀայր քո, որոյ պատասխա-նեաց թէ՝ որ ետես զիս՝ ետես զՀայր Յով. 14. 8. Զայն՝ վասն միութեան Աստուածութեանն ասաց. Որէ տեսանել Հայրն եկե-ղեցւոյ որոյ տեսութեան եւ տեսլութեան կարի յոյժ ցանկայ Հայրն. Եւ տեսիլ զընկերն՝ որպէս ամենայն շնչաւոր տեսէ զնմանիւ իւր. եւ ամենայն մարդ զմերձաւոր ընկերս իւր Սիր. 13. 19. Իսկ զնոյն Հոգւոյ մերձեցաւ առ մեզ, եւ նմանեցաւ մեզ. Զերբ պատմութեան ծառայի առեալ 'ի նմանութիւն մարդկան եղեալ. եւ կերպարանօք գտեալ իբրեւ զմարդ Փիլ. 2. 7. Այսմանայն տեսիլ կոչէ զնա Հայրն, նախ քան զմարմնանալ նորա. Ըստ մարգարէին թէ՝ խնդրեցէք զտէր, եւ յորժամ գտանիցէք կարդացէք առ նա, զի մերձեալ առ ձեզ է. Ես. 15. 6. եւ մնա-ճանք 'ի հաւատալ ուստի ասէ զոր ոչն տեսէք եւ սիրեցէք ընդ որ այժմ ոչ հայեցեալք հաւատայք, եւ ուրախ էք անճառ եւ փառաւորեալ խնդութեամբ I Պետ. I. 8. Վասն որոյ հայ-ցանէ՝ թէ զոր սիրեաց անձն իմ տեսից. Թէեւ մարմնացեալ իւր անորէնութիւն նորա 'ի բարձրաց Հրեշտակաց անդրանիկ ... վասնայն 'ի հանգստարանի հայրենին թէ՝ ով է սա որ դիմեալ գնայ յեդոմայ, Տեւ՝ Ես. 53. I. Սղ. 23. 8 Նոյնպէս եւ երկ-րորդ՝ զաւուրս նորին ոչ ոք գիտէ. բայց միայն Հայր. Մրկ. 13. 32. Եւ, ոչ եւ Հրեշտակք եւս ոչ գիտեն. այլս որոյ

Հայց

digitised by A.R.A.R.@

հարցանէ հարսն թէ զոր սիրեաց անձն իմ տեսիք։ Ասելն է թէ՝ այսպէս հրեշտակաց հարցանէ որք պատուաւորք եղեն առաջնորդութեան նորին, եւ ՚ի գիշերի ծննդեան աւետաւորք եղեն հովուացն տալով աւետաւորիկ աւետարանեմք ձեզ զուրախութիւն մեծ. որ եղիցի ամենայն ժողովրդեանն, զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ։ Առ որս հարցանէ արդեօք տեսիք, եւ նոքա պատասխանեալ ասեն. այս նշանակ ձեզ, զի գտանիցէք Մանուկ պատեալ ՚ի խանձարուրս՝ եւ եդեալ ՚ի մսուրս ասպանջի։ Զորմէ եղելով պատմէ հարսն։

Իբրեւ փոքր ինչ անցի ընդ նոսա գտի զոր սիրեաց անձն իմ (գտեալ ըստ [illegible] ասէ հարսն) կալայց զնա եւ ոչ թողից զնա մինչեւ տարայց զնա ՚ի տուն մօր իմոյ. եւ ՚ի շտեմարան յղացելոյն զիս։

Եւ այս այնմ նմանէ, որ ոմանք ՚ի հեթանոսաց մատեան առ Փիլիպպոս, եւ աղաչէին զնա զի զՅիսուս տեսցեն։ Նման մոգքն երուսաղէմացւոց հարցին՝ թէ ուր է որ ծնաւ արքայն հրէից. Յով. 12. 20. Մատ. 2. 2. Նոյնպէս եւ հարսն հարցանէ զպահապանսն թէ՝ տեսանիք զոր սիրեաց անձն իմ, եւ նոքա մինչ ցուցին նմա զտեղին. յայնժամ ասեն ցմիմեանս եկայք երթիցուք եւ տեսցուք, զինչ է բանս այս զոր ասէր. եցոյց մեզ։ Իբրեւ փոքր ինչ անցի ընդ նոսա գտի զոր սիրեաց անձն իմ. Այսինքն ընդ բազմութեան զօրացն երկնաւորաց երկնաւորացն, որք օրհնէին զԱստուած, եւ ասէին փառք ՚ի բարձունս Աստուծոյ եւ երկիրն խաղաղութիւն ՚ի մարդիկ հաճութիւն։ Զի քաղցր է Աստուած ՚ի վերայ համբերողաց իւրոց, եւ անձն որ խնդրէ զնա Ողբ. 3. 25. Ահա եգիտ զոր խնդրէր հարսն, եւ արդ հրճուէր եւ ասէ՝ զոր սիրեաց անձն իմ գտի, խոնարհեալ յերկնից, իջեալ ՚ի յարգանդ սրբ. կուսին, ծնեալ ՚ի բեթղահէմ ՚ի մէջ այրին. եւ պատեալ ՚ի խանձարուրս, եւ եդեալ ՚ի յասպանակ մսուր։ Դարձեալ գտի ՚ի տաճարին ՚ի գիրկս Սիմէօնի ծերոյ ասէր՝ զի տեսին աչք իմ զփրկութիւն քո։ Գտի ՚ի յորդանան, որոյ վերայ էջ Հոգին սրբ. աղաւնակերպ երեւմամբ։ Գտի ՚ի վերնատանն ուր զմարմին եւ զարիւն իւր ետ մեզ ուտել եւ ըմպել։ Գտի ՚ի խաչին ՚ի դէմս բոլոր մարդկային բնութեան, ասէր յաջակողմեան աւազակին այսօր ընդ իս լինիս ՚ի դրախտին։ Գտի եւ զբանն մարմին եղեալ։ Գտի զորմէ լուաք՝ որում ականատես լինել եղաք, եւ ձեռք

digitised by A.R.A.R.@

ձեռք մեր շօշափեցին ՚ի վերայ բանին կենաց. Գալ զընդունելն Աստուածոյ որ երեւեցաւ փրկել զամենայն մարդկան. Գալ զբանն իմ որով երկինք հաստատեցան. Գալ. զայն որ աստուածաւորեցաւ զի՝ ՚ի մեկերդն ձեռնասպարհեայ իւրոյ՝ ՚ի գործս իւր. Գալ զայն որով ունիմք զփրկութիւն արեամբ նորա, և զթողութիւն մեղաց մարմնով նորա. որ է պատկեր աներևութին Աստուածոյ. զի նովաւ հաստատեցաւ ամենայն որ ինչ յերկինս, որ ինչ յերկրի, որք երևին և որք ոչն երևին, եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, ամենայն ինչ նովաւ և ՚ի նոյն հաստատեցաւ. և ՚ի նմա հանգեաւ ամենայն լրումն Աստուածութեանն մարմնի. Կող. 1. 14. Աստուածորդ ասէ, կալայ զնա և ոչ թողից զնա. զի ոչ ապականացու արծաթեղինօք և ոսկեղինօք փրկեցայք, այլ պատուական արեամբն Քրիստոսի, իբրև անբիծ և անարատ գառին 1 Պետ. 1. 18. Աստուածային ՚ի նոյն իսկ վասն ապականելոց և Նախախնամութեան յանձն առնումք, զի յուսացեալ եմք յԱստուած կենդանի. որ է փրկիչ ամենայն մարդկան. մանաւանդ հաւատացելոց 1 Տիմ. 4. 10. և գիտեմք յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա լինելոց եմք. զի տեսանելոց եմք զնա, որպէս և էնն. 1 Յով. 3. 2. Աստուածորդ ասէ կալայ զնա և ոչ թողից զնա. Որպէս աղօթեաց Մովսէս վասն ժողովրդեան առ Տէր ասելով, Տէր եթէ թողուս զմեղս նոցա թող. ապա թէ ոչ, ջնջեա զիս ՚ի դպրութենէ քումմէ յոր գրեցեր Ել. 32. 10. Նոյնպէս գտանեմք և ՚ի վարս սրբոց. զի մինչ աշակերտ մի Հօրն Միսայէլի. Հայրն աբրահամ փորձեալ ՚ի գինւոյ անկաւ ՚ի մեղս, և խղճեցաւ ծերոյն. Համբարձ զձեռս իւր յերկինս և ասաց, Աստուած իմ եթէ կամիցիս դու, և եթէ ոչ կամիցիս ոչ թողից զքեզ մինչև բժշկեսցես զսա, և նա իսկոյն բժշկեցաւ. Քանզի ասէ, զճանապարհս նորին տեսի և բժշկեցի զնա և մխիթարեցի զնա Ես. 57. 18. Նոյնպէս և Հարցն ասէ ով մեկնեսցէ զմեզ ՚ի սիրոյն Քրիստոսի վշտալից հոգւոյ, նեղութիւն, թէ անձկութիւն թէ հալածանք թէ սով, թէ մերկութիւն, թէ վիշտ թէ սուր ( որպէս և գրեալ է վասն քո մեռանիմ զօր հանապազ. համարեցաք որպէս զոչխարս ի սպանումն ) քանզի հաստատեալ եմ եթէ ոչ մահ և ոչ կեանք, և ոչ հրեշտակք. Ոչ որ կանն և ոչ հանդերձեալքն, և ոչ կարողութի. և ոչ բարձրութիւն, և ոչ խորութիւն, և ոչ այլ ինչ արարած

կարէ

digitised by A.R.A.R.@

կարէ մեկնել զմեզ ՚ի սիրոյ անտի Աստուծոյ որ ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր Հռմ. 8. 35.

Մինչև տարայց զնա ՚ի տուն մօր իմոյ. և ՚ի սենեակ յղացելոյն զիս. Տուն կոչի հասարակօրէն ապարանք, և կամ բնակարանք մարդկանց, և կամ պալատք մեծամեծ իշխանաց, և երևելի արանց. Իսկ սենեակ կոչի այն որ ՚ի ներ տան շինեն առանձնակի տեղիք սակս ննջելոյ և կամ ընդ բարեկամաց խորհրդակցելոյ. Վասնորոյ որոշեն ՚ի միմեանց տուն և սենեակ բաժանաբար ասելով. մինչև տարայց զնա ՚ի տուն մօր իմոյ. քանզի մարդս ՚ի հողոյ ստեղծ Աստուած, և հողն է իբրու մայր մեր ամենեցուն. Որոյ աղագաւ և հողեղէն յարկ գերեզմանին կոչի տուն մօր մերոյ, այսինքն հողոյ. յորում բնակիմք ամենեքեան մինչև յերկրորդ գալուստ փեսային. Առորս և ինքն զնայ ՚ի տապանի տեղեկացաւ, և քաղցրութեան նմա խնձք հեղեղատի, և զհետ նորա ամենայն մարդ գնացէ, Յոբ. 21. 32. Ըստոր և հարսն աստ ոչ թողից զնա և այլն, որպէս Յովսէփ արիմաթացին մինչ հարսնացաւ Յիսուսի ՚ի ծածուկ վասն ահին հրէից, ոչ եթող զնա այլ եբարձ զմարմին նորա և պատեաց մաքուր կտաւօք և խնկօք, և եդ ՚ի բերում շիրմի իբրու ՚ի տուն մօր իւրոյ. և սենեակ զբանս հոգւոյն աստ ասէ ուր երթեալ քարոզեաց I Պետ. 3. 19. Յորում էին նախահարք հարսին. յորոյ յղացեալ ծնաւ հարսն. Երկրորդ՝ տուն իմանալի երկինքն վերին, և սենեակ օթեւանք նորին, զորմէ ասէ ՚ի տան հօր իմոյ օթեւանք բազումք են. Ջի ուր ես եմ և դուք ընդ իս էջէք Յոհ. 14. 2. Ըստոր իմանամք տուն վերնային յարկն, և սենեակ զայն տեղին, ուր ասէ ուտիջէք և ըմպիջէք ՚ի սեղան իմ յարքայութեան իմում Ղկ. 22. 30. Այլ թէ վասն էր տուն մօր կոչէ վերին յարկն և ոչ հօր, ասելին թէ՝ դուստ մօրն տնտեսէ է քան զհօր. Մանաւանդ ՚ի հօրէ Աստուծոյ եմք ստեղծեալ, որպէս ՚ի մօրէ ծնեալ. և սենեակ յղացելոյն ասէ, զի փրկիչն մեր երկամբ յղացաւ զմեզ և ծնաւ վերստին ծննդեամբ սբ. աւազանին. ըստ այնմ զորդիս ծնայ և բարձրացուցի. Ջի ծնեալքն ՚ի մարմնոյ մարմին է, և ծնեալն ՚ի հոգւոյ հոգի է. Այլև անուն ինքեան տուն զնեղքին կոչէ վարդապետն. և յաւիտենական սենեակ զերկնից ծնողին իւրոյ. Եսայ. 6. 19. Յոհ. 1. 18. Երրորդ՝ տուն կոչի սբ. եկեղեցին, որ է տուն Աստուծոյ և տաճար տե-

րունեան

digitised by A.R.A.R.@

րութեայն. և սմնեակ որք անազան նորին, ուստի յղացեալ ծնանին ամենայն հաւատացեալք ՚ի Քրիստոս, և հարսնացեալք նորին. Զստինսդ՝ տուն կոչի մարմին մեր բաղկացեալ ՚ի չորից տարերաց. և ստնեակ այսորիկ առն զմիտս և զխորհուրդս իմանալի, յորում բնակի փեսայն, և մեք տանիմք զնա հաւատով և սիրով, և հաղորդմամբ մարմնոյ և արեան նորա տանիմք առ մեզ և ոչ թողումք մինչև ցկետ մահուան մերոյ. Հինգերորդ՝ կալայ զնա ասէ, այսինքն հաւատով, և ոչ թողում ՚ի բաց մինչ ՚ի տուն մօր իմոյ, յորմէ արտաքսեցան նախկին ծնօղքն մեր, որոյ յաջորդեաց նախապէս անապականն ՚ի գիրկս մերոյ.

Զօրինակ երդմնեցուցանէ երկրորդ անգամ հարսն և ասէ. Երդմնեցուցանեմ զձեզ դստերք Երուսաղեմի ՚ի զօրութիւնս և յաւժգնութիւնս ագարակի. եթէ յարուցանիցէք զարթուցանիցէք զսէրն մինչև կամեսցի.

Թէպէտ զայս նախկին երդմնեցուցմանն. 2 գլխոյ 7 համարին մեկնեցաք. Իսկ արդ և վերստին երդմնեցուցանէ զօրինակ հարազատագոյն խորհրդոյ փեսային, և զհանգչել կամարարս, և անմիջոյ զբարեկամս, և զպաշտօնեայ սիրելիս նորին. Թէ որովհետև այսքան չարչարանօք գտի զնա, և հաւատային ՚ի նա յուսով և սիրով ընկալայ զնա, և ոչ թողի ՚ի բաց, մինչև տարայ զնա ՚ի տուն մօր իմոյ և ՚ի սենեակ յղացելոյն զիս. Վասնորոյ յուսամ փրկութեան նորին, և արդ զձեզ աղաչեմ, և մեծատագնապաւ պաղատիմ աթէ յարուցէք երթալ առ նա, զհանգիստ նորին ծանուցէք ինձ, և որպէս կամի պատմեցէք. զի զհրամանս նորին կատարեցից. և գիտացից թէ՝ որն է նորին հաճոյն և բարին և կատարեալն, Հռ. 12. 2. Որովք և ես անմեղ և շարժիլ կարացից. և այս զկամս տեառն իմոյ և փեսային հոգւոյ կատարել գիտացից.

Որդ մինչ ետես փեսայն զհարսն իւր հաստատուն հաւատով և աներկբայ յուսով՝ և ջերմեռանդ սիրով՝ կցեալ առ ինքն Վասնորոյ սքանչացմամբ հարցանէ օրհնութեամբ թէ՝ ով է սա որ ելանէ եայլն. Որպէս և ասէ տէր ցսատանայ, Նայեցար ընդ ծառայ իմ ընդ Յօբ, զի ոչ գոյ իբրև զնա ՚ի վերայ երկրի այր անարատ՝ Ճշմարիտ՝ Աստուածապաշտ՝ մեկնեալ յամենայն իրաց չարաց Յօբ. 1. 7. Նմանապէս վասն հարսին ասէ փեսայն. Ով է սա որ ելանէ յանապատէ. զի անապատն է տեղի որ ոչ է պատեցեալ

digitised by A.R.A.R.@

ցեալ որմով, և ոչ ունի արգելարան. որպէս և հարսն որ ոչ ունի
խութ և խոչ մեղաց. այլ է թափուր ամենից եկամուտ չարութեց
՚ի մարմնոյ և յաշխարհէ, և ՚ի սատանայէ. և անարգել երբեմն
ժամ թուեցեալ, և երբեմն աղաւնի ձագուխտաւն երամովին
վերանայ յերկինս Եսա. 60. 8. Որովք և փեսայն զարմացուցանէ
զօրինորդսն. Տեսէք ասէ, զի մարմին զուլալ որպէս կարաց ստա-
րանալ, յայնքան եկամուտ ախտից պղտորութեանց, և անմարմնոյն
երբեր օրինակ. ամէն ասեմ ձեզ՝ և ոչ խորայելի այսպիսի հաւատս
գտի երբէք Մատ. 8. 10 և ինչ զուգէ ծնոյ, սաեղն կոչէ
սեւն ծխոյ խնկոց լաւ որում երբե զբուն ծառոյ ուղիղ բարձրա-
նայ ըզծուխ հրոյ աւանձրին, որ ուղիղ բարձրանայր և ոչ յաղթիւր
՚ի հողմոյ. որոյ համեմատէ զհարսն իւր, որոչ յաղթի ՚ի յամե-
բարտաւանութեան հողմոյ, այլ բազմամբ սրտի. ուղիղ
դիտաւորութեամբ և յարաժամ խոկմամբ միշտ բարձրանայ ՚ի
վեր. Ըստ որի ասէ առաքեալն մեր կենցաղավարութիւն յերկինս է,
ուստի և փրկչին ակն ունիմք տեառն Յիսուսի Քրիստոսի.
Փլպ. 3. 2. Բայց երկնչեալ ասէ, այսինքն որպէս ծուխ խնկոյ որ է
յաստեղ վերացեալ. թեթև, ջերմ. և անուշահոտ, նմանապէս և
հարսն՝ յառաջ ամենայն ախտից հոգւոյ և մարմնոյ, վերացեալ
խոնարհութեամբ, թեթև ՚ի ծանրութեանց մեղաց. ջերմ՝ բոր-
բոքեալ սիրով. անուշահոտ՝ պէսպէս առաքինութեամբ. և որպէս
զծուխ վերացեալ ՚ի խնկոյ, և երբեք զծառս սատեղնաւորս կեր-
պարանեալ. և զանուանս խնկոյն կնդրուկ և զմուռ ասէ՝ որ
մոգքն բերին փեսայիս Յիսուսի. Յովսէփ և Նիկոդեմոս նուէրե-
ցին թաղման նորին. և հարսին ծանուցեալ զխորհուրդս զայս
նորումբք կերպարանեցաւ. զի մեռաւ յաշխարհի, և թաղեաց
զթանձրութիւն մարմնոյ իւրոյ. եղև անապատ ամենայն նիւթականս
աղտեղի կոյց և ամենայն փոշւոյ անուշահոտ խնկոյ ՚ի յեղեփե-
ցեալ գործեցելոց եղև ընդունարան. զի հարսն որ եկեղեցի
ամենայն առաքինեայն առաջնոց երբեր զօրինակ, որպէս հաբելին
զենովխայն, զենովքայն, և յայլոց ամենեցուն մանրամասնաբար
առ ինքն հաւաքեաց. նաև զմարգարէիցն. յաւել ՚ի վերայ և
զառաքելոցն, և զվկայիցն. զկուսանացն, և զանապատաւորացն, և
ապրածեալ համբաւօքն, և բուրեալ առաքինութեան հոտովն.
առ որ ասէ՝ ահա աղաւնի այր խորայելն որում նենգութիւն

ոչ

ոչ գոյ Յով. I. 47. Այսուքիւք զարդարեալ վերանայ ամպօք ընդ առաջ տեառն յօդս (Թես. 4. 16. Որպէս և սակս մանկանցն բեթղահէմի ասի՝ ի յերգս եկեղեցւոյ. և հոգիք ոչ մանկանցն որպէս զերամս աղաւնեաց թռուցեալք՝ ի յերկինս, դասեալք ընդ զուարթունս երկնից: Զի որպէս զմուսով չարչարանացն կցորդ դասան. նոյնպէս և կնդրկած փառացն հաղորդ եղեն, և փոշեած հնոյհայն՝ անուշահոտ վարուք ելին առ փեսայն հոգւոյ, և թողին զերկիրս՝ իբրու անապատ. Վասնորոյ ասէ ո՞վ է սա որ ելանէ յանապատէ:

Օրհնութիւն աստուծոյ [illegible]. Ահա գահոյք Սողոմոնի վաթսուն զօրաւորք շուրջ զնովաւ ի զօրաւորացն Իսրայէլի:

Որովհետև հարցումն է խնդիր պատասխանւոյ. զի որ հարցանէ, յայտ է թէ խնդրէ զպատասխանի. որպէս և խորհրդական փեսայն, մինչ ետես զհարսն իւր որ խանդակաթ սիրով և ջերմ ըղձիւ երեմնեցոյց զօրն որդւոց, զի ՝ի յառնել ինքեանց զարթուսցեն զսէրն որոյ վերայ. և փեսայն զարմացուցանէ և զօրհնորդսն հարցանելով թէ ո՛վ է սա, որ այսքան համարձակաբար բարբառէ, և թարց արգելման ընթանայ: Իսկ նոքա պատասխանեն իբրու մտաւոր նշանակելով (ահա բարբառին) թէ սա է հանգստարան և աթոռ արքայի մերոյ Սողոմոնի: Զի գահոյքն է փառաւոր և բարձրաշէն գահ. կամ աթոռ ուր նստին թագաւորք և իշխանք. կամ քահանայապետք: Որպէս Սողոմոն արար ինքեան աթոռ փղոսկրեայ, և պատեաց զայն ոսկով փորձով. և շինեաց՝ ի նմա աստիճան վեց, և երկոտասան առիւծք՝ ի վերայ վեցից աստիճանացն աստի և անտի, առ՝ ի յահաբեկութիւն տեսողացն 3 Թագ. I0. 20. Բայց յաթոռոյ մերոյ Սողոմոնի նախագրի Սղ. 38. 38. Որ է եկեղեցի, որ զգեցեալ է զարեգակն այսինքն զՔրիստոս: Որպէս սրբուհի կոյսն Մարիամ զգեցոյց նմա մարմին, և ինքն զգեցաւ զնա. զգեցոյց զարեգակն անմարմին, և ինքն զգեցաւ զարեգակն փառօք. և պսակեցաւ երկոտասան աստեղօք այսինքն առաքելովք. ինքն համբուրեաց զնա և համբուրեցաւ՝ ի նմանէ: Գգուեաց զնա յերկրի, և գգուեցաւ՝ ի նմանէ՝ ի յերկինս: Քանզի՝ ի սկզբանէ փեսայն հոգւոյ զիւրանն կրէ, և ինքն կրեալ լինի, զի՝ ի յաւէտ ստացեալ յեղբօրէն յաւերժահարսն պանդխտեցաւ, յաստանակ ընծայեցաւ, ՝ի յաւերժ ծառայ-

եաց

digitised by A.R.A.R.@

եայ՛ ի Յովսէփ վաճառեցաւ, ՛ի Մովսէս. տարագրեցաւ և փա-
խեաւ ՛ի մարգարէս՝ որք քարկոծեցան և սղոցեցան. ՛ի յառա-
քեալս որք ՛ի ծով և ՛ի ցամաք վտանգեցան. ՛ի մարտիրոսս որք
զանազան կերպիւ տանջեցան և մեռան։ Զի ինքն ՛ի քեզ կրէ
զնախատինս, և ինքն ՛ի քեզ առէ զայս աշխարհս։ Բայց յաղթէ
մինչ դատի և յաղթանակէ ՛ի մեզ. Ամէն ասեմ ձեզ որովհետև
արարիք միում յեղբարց իմոց այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարիք։ և ոչ
արարիք միում ՛ի փոքրկանցս յայսցանէ՝ և ոչ ինձ արարիք Մատթ.
25. 40. Այսպէս բազմի և Քրիստոս փեսայն ՛ի յաթոռի
իւրում, այսինքն ՛ի հոգիս համառայելոց իւրոց. զորս դահոյք
անուանէ ծուչակեն օրիորդք. և թէ վասն էր Սողոմոնի
անուանէ յիշատակեն զփեսայն հոգւոյ, քանզի Սողոմոն բազ-
մաւ կերպիւ եղև պատկեր և օրինակ Ճշմարտին Սողոմոնի։
Նախասպէս առաքեաց Աստուած զՆաթան մարգարէ առ Դա-
ւիթ ասելով. ահա ծնցի քեզ որդի. և նա եղիցի այր հանգս-
տեան. և հանգուցից զնա յամենայն թշնամեաց շուրջանակի.
քանզի Սողոմոն անուն է նորա. I Մն. 22. 9. Նոյնպէս և
առաքեաց Աստուած ՛ի հրեշտակապետն Գաբրիէլ առ սրբուհի
կոյսն Մարիամ ասելով, ահա յղասցիս՝ և ծնցիս որդի, և կո-
չեսցես զանուն նորա Յիսուս, նա եղիցի մեծ, և որդի բարձրե-
լոյ կոչեսցի, և տացէ տէր Աստուած զաթոռն Դաւթի հօր
նորա, և թագաւորեսցէ ՛ի վերայ տանն Յակոբայ ՛ի յաւիտեան, և
թագաւորութեան նորա վախճան մի՛ լիցի Ղկ. I. 3I. Երկ-
րորդ՝ Սողոմոնի ասաց Աստուած, խնդրեա՛ դու քեզ խնդիր
ինչ 3 Թագ. 3. 5. և մերոյ փրկչին ասացաւ խնդրեա՛ յինէն
և տաց քեզ զհեթանոսս ՛ի ժառանգութիւն, և իշխանութիւն
քեզ զամենայն ծագս երկրի. Սղ. 2. 8. Երրորդ՝ Սողոմոն եղև
շնորհօք որդի Աստուծոյ. և Քրիստոս փրկիչն մեր ճշմար-
տապէս է միածին որդի Աստուծոյ էութեամբ, գոյութեամբ,
բնութեամբ, անեղութեամբ, զօրութեամբ իմաստութեամբ. բա-
րութեամբ, արարչութեամբ, արդարութեամբ, և մշտնջենա-
ւորութեամբ հաւասար Յհ. I. I8. Գործ. I3. 33. և Հռմ.
8. 32. Չորրորդ՝ Սողոմոն երկոտասան ամաց նստաւ յաթոռ
թագաւորութեան։ և մերն Սողոմոն երկոտասան ամաց նստաւ
՛ի տաճարին ընդ վարդապետսն, լսէր ՛ի նոցանէ, և հարցանէր
զնոսա

digitised by A.R.A.R.@

զնոսա. 3 Թագ. 2. 42։ Չորրորդ՝ Սողոմոն եհան զդուստ-
րն փարաւոնի 'ի քաղաքէն Դաւթի. և Քրիստոս փրկիչ
հոգւոյ մերոյ եհան 'ի տաճարէն զգնօղս և զվաճառօղս։ Վեց-
երորդ երկիցս երևեցաւ Տէր Սողոմոնի. և մերոյ Ճշմարտին
Սողոմոնի՝ Հայր Աստուած և Հոգին սուրբ 'ի յորդանան և 'ի Թա-
բոր. Եօթներորդ՝ Սողոմոնի աւուրքն եղև խաղաղութեամբ.
և 'ի խաղաղութեան եղև տեղի փրկչին մերոյ Սղ. 55. 3.
Ութերորդ՝ վասն Սողոմոնի ասաց Աստուած թէ՝ նա շինեսցէ
տուն անուան իմոյ. Բայց Սողոմոն շինեաց զտաճարն հողե-
ղէն, նիւթեղէն, և ապականելին։ Իսկ և Աստուած զանապա-
կանն, և զկուսածին տաճարն, այսինքն զմարմին փրկչին մերոյ
Յով. 2. 19. 21։ Այլև փրկիչն մեր պատուական իւր ար-
եամբն շինեաց զեկեղեցի սուրբ, որէ հաւատացելոց ժողովն տա-
ճար, և բնակութիւն Աստուծոյ. 1 Պետ. 2. 5. 1 Կոր. 6. 19.
2 Կոր. 6. 16. Իններորդ՝ վասն Սողոմոնի ասաց Աստուած,
ես եղէց նմա 'ի հայր, և նա եղիցի ինձ որդի. Իսկ և Քրիստոս
իբրև որդի 'ի վերայ տան իւրոյ. որոյ տունն մեք իսկ եմք Եբր.
3. 6. Շինեալք 'ի վերայ հիման առաքելոց և մարգարէից.
Որոյ է գլուխ անկեանն Քրիստոս Յիսուս, յորում շինուածն
յօդեալ և պատշաճեալ աճէ 'ի տաճար սուրբ տէրամբ. յորում և
դուք ընդ նմին շինիք 'ի բնակութիւն Աստուծոյ հոգւով. Եփ.
2. 20. Վասնորոյ և սուրբն Ներսէս շնորհալին գրէ այսպէս.

Որ զօրինակ քեզ ընտրեցեր, զորդի մեծի Մարգարէին.
զսողոմոն խաղաղութիւն, 'ի քէն բերեալ երկնաւորին.
Նա 'ի հօրէն իւր սեպհական. զաթոռն առեալ պհայրենին.
որպէս և դու հօր միածին. ոչ արտաքուստ կամ օտարին.
Տաճար շինեաց նա երկնային. դու զբնութիւն մարդկային.
Նմա տուաւ իմաստ բանին. բայց դու տուօղ անճառ շնորհին.
Նա ժողովօղ յոգնիմաստից. անուանեցաւ իսրայէլին.
Իսկ դու ցրուեալ ազգ երկրածին. ժողովեցեր 'ի միասին.
Նմա դշխոյն հարաւային. եկ 'ի տեսիլ բաղձմամբ սրտին.
Քեզ քաւանկիւն կողմ աշխարհին, անտեսաբար երկրպագին։

Վասնայսորիկ՝ փեսայն հոգւոյ, Սողոմոն անուամբ յիշատակի 'ի
սուրբ գիրս։ Բայց բովանդակ հին կտակարանի անցքն և արարք
համառօտելով գրէ առաքեալն Եբր. 10. 1։ Զի էր առակ
օրինակ

digitised by A.R.A.R.@

օրինակի· Գաղ· 4· 24: Որք են ստուերք հանդերձելոյն, այլ մարմինն Քրիստոսի է: Որք ստուերաւ եւ օրինակաւ պաշտեն զերկնաւորսն Կող· 2· 17: Եբր· 8· 5: Ըստ այսմ ծանուցանի մեզ եւ տաճարն Սողոմոնի· օրինակ ամենասքանչ փրկչին մերոյ անձեռագործ տաճարին· յորում բնակի ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս Կող· 1· 19: եւ 2· 9: եւ ինքն փրկիչն մեր Յիսուս խօսելով վասն տաճարի մարմնոյ իւրոյ ասէր, քակեցէք զտաճարդ զայդ՝ եւ զերիս աւուրս շինեցից զդա Յով· 2· 19: Եւ էր օրինակ ընդհանուր ի Քրիստոս հաւատացեալ ժողովրդեանն: Առ որս ասացաւ եւ դուք իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար Ա Պետ· 2· 5: Ոչ գիտէք, եթէ տաճար էք Աստուծոյ: եւ հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ: եւ մարմինք ձեր տաճար են հոգւոյն սրբոյ· Ա Կոր· 3· 16: եւ 6· 19: եւ դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք Բ Կոր· 6· 16: Որոյ աղագաւ եղական բանիւ հարցանէ փեսայն Թէ, ով է սա որ ելանէ յանապատէ իբրեւ զստեղն ծխոյ խնկեալ: Եւ գիտացեալ օրիորդ այսն· անեղական բանիւ պատասխանեն ասելով ահա՝ սա՞ք են դահոյք Սողոմոնի: Այլ եւ գիտելի է զի տաճար հին կտակարանին էր պատկեր նորոյս: Իսկ եւ տաճար նորոյս կտակարանին՝ է պատկեր երկնային եւ մշտնջենաւոր տաճարին եղանելեաց, որք փառօքն Աստուծոյ լուսաւորին, որոյ մշտափայլ ճրագն է ինքն գառն Աստուծոյ Յայտ· 21· 23: **Վաթսուն զօրաւորք շուրջ զնովաւ ի զօրաւորացն Իսրայէլի·** Նախ սակս պատուականութեան Թուոյս· զի վաթսունն ի վեցից տասանց բաղկանայ: Զի վեցն կատարեալ թիւ է, քանզի վեցեակ աւուրբ արար Աստուած զաշխարհս: Վեցեակք են Թիւք սերովբէիցն զոր ետես Եսայի: եւ վեց են աստիճանք աթոռոյն Սողոմոնի· Վեցեկօք սահմանի իմաստասիրութիւնն· եւ ի վեցերորդ ժամու աւուրն նստաւ Յիսուս ծարաւեալ ի վերայ աղբերն եւ խնդրեաց ջուր ի սամարացւոյն· եւ ի նախկին արարչագործութեանն· ի ստեղծմանէ հնոյն ադամայ էանց դարս վեց մինչեւ յերկրորդ՝ արարչագործութիւն նորոյն ադամայ: եւ ի միջոցի յայնմիկ վեցեակ դարուն զօրաւորք զօրութեամբ անուան Ճշմարտին Սողոմոնի, վանեցին զերեւելի եւ զաներեւոյթ թշնամին· որպէս Մովսէս՝ ընկճեաց զզօրութիւն փարաւոնի· Սամսոն՝ ձնօտիւ իշոյ կոտորեաց զփղշտացիս: Դաւիթ

ձիթ՝ պատրաստաքարէն զգեստեայ զգօտիւթ, և զխաթաւալ կայոյց
զնա։ Գեդէոն՝ խորամանկութեամբ սափորյն հալածեայ զմադիանա-
ցիսն։ Նոյնպէս և յուդիթ՝ զհողեփեռնես։ Յայել՝ զսիսարայ
եւս՝ և ազգայել՝ զոտնն եղբերայ։ Սոքա ամենեքեան սոռու-
երք էին զօրաւորաց ճշմարտին Սողոմոնի. նշանակէ որ թէ ն-
մարտայս խաչին Քրիստոսի. և ձայնիւ առաքելոյն սրբոյ. և
արեամբ մարտիրոսացն ընտրելոյ նկան առնելոյ էին պաշտպանք.
զատամնայ և զմարմինս։ Զի նորատեսակ պատերազմ ընտրեալ
խաչեան տէր. Վասնորոյ և ՚ի յերկուց վէրից ընտրեալ զառա-
քեալսն։ Նոյնպէս և զուղղափառ մէ վարդապետս եկեղեցւոյ.
Զի որպէս զօրաւորք հնոյն խորայէլ՝ էին նահապետք և Մար-
գարէք, նմանապէս և նորոյս՝ առաքեալք, և վարդապետք. Այլև
երկոտասան ազգս բաժանեալ խորայէլ. և երկոտասան հինգն՝
վաթսուն է, նաև զգայութիւն ՚ի մարդս հինգ է, և արդ կամի
ասել թէ որպէս յօրէնս երկոտասան ազգ խորայէլացւոյն իւրա-
քանչիւրքն՝ հնգեքին զգայութեամբ մարտեալք հաճոյացան
Աստուծոյ. նոյնպէս և հարսն։ և լուա երևելեայս ինքն խորայէլ
Սողոմոնի թագաւորութե կամարարք և գահոյք եղեն, նոյնպէս
և այժմ մերոյն Սողոմոնի ամենայն տիեզերք գահոյք են ուր
հանգչի կամքն Աստուծոյ. և վաթսուն զօրաւորք շուրջ գա-
հոյիւքն՝ բանակք հրեշտակաց տեառն, որք շուրջ են զերկիւղա-
ծովք իւրովք և ապահեն զնոսա Սղ. 43. 8. Իսկ և մեծն վարդան
վարդապետն մեր ասէ թէ վաթսունն ՚ի վեց տասանց կատարի, զի
վեց են զգայարանք մեր ՚ի մեզ, այսինքն աչք, ականջք, և հոտո-
տելիք, որ քարշեն զմարմինս մեր ուր և կամին. Այս եթէ
վեց են՝ վասնէ՞ր վաթսուն ձևացոյց զնանս, քանզի միակն տասա-
նեակ աւարտի ասէ. և տասնեակն ՚ի հարիւր. և հարիւրն ՚ի
հազար և հազարն ՚ի բիւր. Վասնզի այսպէս բերէ զմասյն բաղ-
կացութիւն. որպէս զըմ աչայն մի, բայց տասնապատիկս
տեսանէ. Նոյնպէս տեսանէ զբարին և զխայելուչն։ Նոյնպէս
և այլ զգայարանքն, որք Աստուծոյ ճանաչեն տեղիք կոչին, այ-
սինքն գահոյք՝ որ է տեղիք բազմելոյ և հանգչելոյ թագաւորաց
և պատուաւոր արանց. Վասնզի գահոյքն երկոտասան զաւա-
կան է. յուժամ վաթսուննն բաժնես ՚ի զաւակացն հինգ ելանէ.
և երկոտասան ցեղքն խորայէլի, և երկոտասան վարդապետքն զա-
հաղանք

digitised by A.R.A.R.@

հաւատք նոցանց։ Որպէս և երկոտասան առաքեալքն պահա-պանք նորոյս խորանելի, որ տւան զպատուիրանն ՚ի հոգւոյն սրբոյ. որպէս և խոստացաւ փեսայն հոգւոյ թէ՝ նա եկեալ ուսուսցէ ձեզ զամենայն, և յիշեցուսցէ զամենայն զոր ինչ ասացի ձեզ.
Յով. 14. 26. Պատանայնոյն և կինն ասէ.

Ամենեքեան ունին զսուր ուսեալք պատերազմի, այր իւրաքանչիւր զսուր իւր ՚ի վերայ ազդեր իւրոյ, ՚ի զարհուրանաց գիշերոյ։

Զայս վասն զօրաւորացն ասէ որք շուրջ կան զգահոյիւքն Սողոմոնի։ Բայց գիտելի է զի որպէս եղանի զօրագլուխն, նոյն-պէս եղանի զօրականն, զօրք՝ և զինուորք նորին. և որպէս նա առնէ՝ նոյնպէս առնեն և նոքա։ Որպէս Աբիմելէք կոտորեալ բերան մի փայտի՝ և եդ զայն ՚ի վերայ ուսոյ իւրոյ. և ասէ ցզօրսն զինչ տեսանիցէքն զոր առնիցեմ, արարէք և դուք վաղվա-ղակի։ Կոտորեցին և նոքա իւրաքանչիւրոք ամենեքին զբերան մի փայտի, և բարձին և գնացին զհետ նորա և եդին ՚ի վերայ ամրոցին, և այրեցին զամրոցն հրով. Դատ. 9. 49։ Նմանապէս և զօրագլուխն հաւատոյ մերոյ Եբր. 12. 2. Ասէ օրինակ մի ետու ձեզ՝ զի որպէս արարի և դուք առնիցէք. Յով. 13. 5։ Քանզի սուր երկսայրի արտաքս ելանէր ՚ի բերանոյ նորա։ Որոտ-մամբ ՚ի պատերազմ Յայտ. 1. 16. և 2. 16. Երջանկապէս զինուորեալ, որ ՚ի տեղի սաղաւարտի՝ էառ զփուշ պսակն. ՚ի տեղի պղնձեայ զրահի՝ զգեցաւ զքղամիդն. ՚ի տեղի երկաթեայ ասպա-պանաց՝ ընկալաւ զերկաթեայ բեւեռս. ՚ի տեղի զինուորս կան պաշտպանութեան, ստացեալ զխոնարհութիւն. ՚ի տեղի հնչման փողոյ զլռութիւնն և զհամբերութիւնն. ՚ի տեղի ընծայելեաց զքացախ և զլեղի. ՚ի տեղի ձիոյ և երիվարի՝ զխաչն։ Որովք յաղթեաց զթշնամին ազգի մարդկան. ըստ կանխագրութեան Մարգարէին թէ՝ յաւուր յայնմիկ ածցէ Աստուած զսուրն սրբ, և զմեծ, և զհզօր ՚ի վերայ վիշապ օձին կամակորի, և սպանցէ զվիշապն ՚ի մէջ ծովուն. Եսա. 27. 1. Այսպէս և հար պատերազմ ՚ի ծագաց մինչև ՚ի ծագս երկրի, զաղեղունս փշրեսցէ, զզէնս խորտակեսցէ, և զվահանս այրեսցէ հրով Սղ. 45. 10. առ այս վախճան աղօթէր Աստուածահայր կոչեցեալ Մարգարէն, և պաղատէր առ փեսայն հոգւոյ ասելով՝ ած զսուր ընդ մէջ քո հզօր, Սղ. 44. 4. Նմանապէս զօրաւորք, և զօրք նորին պահպանեն, զգահոյս

փեսայի

digitised by A.R.A.R.@

փեսային հոգւոյ՝ մերոյն Սողոմոնի, և վաղնջագոյն յարաժամ պատերազմին. որպէս Միքայէլ հրեշտակապետն մղեաց ընդ բանսարկուին, վասն Մովսիսեան մարմնոյն: և որ կամէր հակառակիլ ընդ յիսուսեայ քահանային մեծի: և ընդ կնոջն որ հանգերձեալ էր ծննդեամբ: և յաղագս չարախօսելոյ վասն եղբարց մերոց: վասնորոյ և Միքայէլ և հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապ օձին, և յաղթեցին զնա արեամբ գառինն: և շղթայիւք կապեալ փակեցին զնա ՚ի խորս դժոխոց. Յուդ. 1. 9. Զաք. 3. 1. Յայտ. 12. 4. և. 20. 1. Նմանապէս առաքեալք և Մարգարէք ունէին զսուր, ուսեալք զպատերազմ. որպէս ասէր Թէ գրեալ է ՚ի Մարգարէս, և եղիցին ամենեքեան ուսեալք յԱստուծոյ. ամենայն որ լուէ ՚ի Հօրէ, և ուսանի գայ առ իս Յովհ. 6. 45. զի սուսեր հոգւոյն է բանն Աստուծոյ Եփես. 6. 16. Որով Պօղոս պապանձեցուցանէր զատենաւորս ճարտասանն: և զԼեւիաթանն խաղալիկ առնէր ինքեան Յոբ. 40. 21. և սրն սուր՝ երկսայրի մտում բազում անգամ սասանէր սատանայի, և երբեմն ընդ հաճու լինէր ընդ սատայելի ունելով զոտս իւր ՚ի վերայ պարանոցի նորին: Վասնորոյ ասէ Պօղոս, ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զլինել աշխարհի Եփես. 1. 4. Սոյնպէս և Մարգարէն ասէ՝ ՚ի յարգանդէ կոչեաց զիս, և ՚ի յորովայնէ մօր իմոյ կարդաց զանուն իմ, և եդ զբերան իմ իբրև զսուսեր սուր, և ընդ հովանեաւ ձեռին իւրոյ թաքոյց զիս Եսայ. 49. 1. և որքան առայս՝ տարակուսելի է, զի եթէ նախապէս ընտրեցան սոքա, զմարդ այնքան երկար միայն ՚ի նէր անհաւատութեան. ասելի է, թէ՝ որպէս ոմն երկրագործ ընտրէ ինքեան կոյս մի ՚ի հարսնութեան, և ածել առ ինքն թողու ՚ի դիմաց ժամու, նոյնպէս և առաքեալքն, այնպէս ընտրեցան ՚ի գաղափար մտացն Աստուծոյ, և ՚ի ժամանակի պիտանաւորութեան կոչեցան ՚ի նմանէ: որք եղեն զօրավար զօրու տեառն, և պատերազմեալք յաղթեցին զանմարմին թշնամին: Նմանապէս և Վարդապետք եկեղեցւոյ ունին զսուր որ է բանն Աստուծոյ ազդող և հատու քան զամենայն սուր երկսայրի. Եբր. 4. 12. Զոր քարոզեն որովք խրատեն խոցեն և վիրաւորեն զմիտս լսողաց, զորոյ պատմէ Պօղոս թէ՝ սուր երկսայրի է ՚ի ձեռս նոցա առնուլ զվրէժս ՚ի հեթանոսաց ՚ի յանդիմանութիւն ամենայն ժողո-

վրդոց

digitised by A.R.A.R.@

փորձոյ Սղ. 149. 7։ Զի քարոզիչքն են սուր Քրիստոսի փեսային հոգւոյ, որով Քրիստոս պատերազմի ընդ ամբարշտաց, զի առնէ այսու սրով հատանէ զմոլորութիւնս մոլորելոց. և յաւուրն դատաստանի պատժէ դատապարտելովն. զի հրամայէ ամենայն թռչնոց երկնից գալ 'ի յընթրիս մեծին Աստուծոյ և ուտել զմարմինս թագաւորաց և զմարմինս հզօրաց և զմարմինս երիվարաց և ամենայն հեծելոց՝ նոցա և զմարմինս ազատաց և ծառայից մեծի և փոքու. Յայտ. 19. 17։ Վասն որոյ ասէ, ամենեքեան ունին սուր ուսուցեալք պատերազմի. այսինքն համայն սէր և հարսնացեալք Քրիստոսի, որք գրեցան զինուորք Քրիստոսի զօրապետին, և մին 'ի նոցանէ զդրօշակ նորին 'ի տեղի սուսերի ունեցան զհաւատն սէր, որովք պարտեցին զթագաւորութիւնս Եբր. 11. 33. և զգեցան զզէն լուսոյ. և եդին 'ի գլուխ զսաղաւարտն յուսոյ փրկութեան, և շուրջ առին զինքեամբ կզրահն արդարութեան, կապեցին 'ի մէջ զկամարն ողջախոհութեան, առին զվահանն աղօթից, և այլն ամենայն որք զինուորութեան պատկանին և փրկութեան հոգւոյ որովք պատերազմեալ ընդ հնազոյն օձին, և յաղթեցին քաջապէս։ Քանզի 'ի դէմս Յեսուայ ասաց առ նոսա փեսայն հոգւոյ՝ ես զօրավար եմ զօրու տեառն, և արդ եկի օգնել քեզ. Յեսու. 5. 13. Որովք զինեցաւ ձեռագիր մերոյ հակառակութեան հրամանօք իւրովք, որ կայր մեզ հակառակ, եբարձ զայն 'ի միջոյ, և բևեռեաց ընդ խաչափայտին Կող. 2. 14։ Բայց Առաքեալ եկեղեցւոյ զպատերազմն կոչէն աղբիւր չարագործութեան, արմատ անիրաւութեան, և սկիզբն անօրէնութեան։ Բայց որովհետև ոչէ մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս, ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այսս չարութեան, որք են 'ի ներքոյ երկնից Եփ. 6. 12. Վասն այնորիկ պատերազմն զայս կոչեմք աղբիւր բարեգործութեան, արմատ արդարութեան, և սկիզբն ամենայն առաքինութեանց որ 'ի պատերազմէ առաւել յառաջ գայ։ Զորս ուսոյց զինուորաց իւրոց փեսայն երկնաւոր ասելով՝ արասջիք զամենայն ըստ օրինակին որպէս ցուցաւ քեզ Եբր. 8. 5. Ուստի շնորհակալ եղեալ հարսին ասէ ուսուցեր ինձ զպատերազմ, և արեր զբազուկ իմ որպէս զաղեղն հաստ 17. 35. Բայց նմանութեանց իւն

գրւոյ

դրօշ 4 գլխոյն ասէ, տասն են մարմնաւոր զէնք և հարկաւորք հոգևոր զինուորութեան զինուորացն Քրիստոսի։ Նախ զվահանն հաւատոյ որ պաշտպանէ զձախակողմն 'ի թշնամեաց առ որս ասէ Պօղոս, 'ի վերայ ամենայնի առէք զվահանն հաւատոյ, որով կարող լինիջիք զամենայն նետս մոլսս չարին շիջուցանել Եփ. 6. 16. Երկրորդ սաղաւարտն որ 'ի վերայ գլխոյն զգուելի, առէք զսաղաւարտն յուսոյ փրկութեան Եփ. 6. 17. Երրորդ՝ զրահն սիրոյ, զի որպէս զրահի օղքն շարահիւսին առ միմեանս, նոյնպէս և հաւատացեալքն պարտին սիրով միաբանիլ ընդ միմեանս, զգեցեալք զզրահն հաւատոյ և սիրոյ Թես. 5. 8. Չորրորդ՝ կամարակապ գօտին ողջախոհութեան, ըստայնմ զգեցցէ զրահս զարդարութիւն, և դնիցէ զսաղաւարտ զդատաստան անաչառ Իմ. 5. 19. Հինգերորդ՝ ոտնամանք որք ամրացուցանեն 'ի պատերին կողմանէ, օրինակ կրկին խոնարհութեան, ներքուստ 'ի սրտէ, և արտաքուստ բարուք կենցաղավարութեամբ, որպէս ասէ, յորժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ, ասասջիք եթէ ծառայք անպիտանք եմք զոր պարտէաք առնել, արարաք Ղուկ. 17. 10. Վեցերորդ գեղարդն կամ նետն խոհեմութեան որ 'ի հեռուստ հարկանէ զթշնամին, որպէս Յովաբ եառ զերիս նետս և էհար զնոսա 'ի սրտին Աբիսողոմայ 2 Թագ. 18. 14. Որք են օրինակ խոհեմութեան, նախ յիշումն անցելոց, Երկրորդ՝ իմացումն ներկայից, Երրորդ՝ նախատեսութիւն ապառնեաց որով սատակէ զթշնամին. Եօթներորդ սուրն ժուժկալութեան, որով մեջքն ամրացուցանէ 'ի ցանկութեանց. Զի ամենայն որ պատերազմի ամենայնի ժուժկալ լինի, նոքա զի զեղծանելի պսակն առնուցուն, և մեք զանեղծութեան 1 Կոր. 9. 25. Ութերորդ՝ սուսերն վրէժխնդրութեան, որ է ցասումն դղջման և ապաշխարութեան. քանզի վրէժխնդիր անօրէնութեան է սուրն. Յոբ. 19. 29. Իններորդ՝ հարկաւորէ աղեղն սբ գրոյ, հանդերձ նետիւք վարդապետութեան, յորում է փայտ խստագոյն հին օրինաց, և լար կակուղ նոր կտակարանաց. Տասներորդ ձի օրինակ մարմնոյ որ նուաճի ընդ հոգւոյ՝ սանձիւ բանականութեան քանզի ձիոյ սանձ 'ի բերան դնեմք առ 'ի անսալ նոցա մեզ. Յակ. 3. 3. Վասն որոյ ասէր Պօղոս Խնչեմ զմարմինս իմ և հնազանդեցուցանեմ, զի դուցէ որ այլոցն քարոզեցի

ես

digitised by A.R.A.R.@

եւ ինքնին անպիտան գտանիցիմ. 1 Կոր. 9. 27։ Զայսուիկ
անձնեղեան ուսանիմք ՚ի սէր գրոյն որովք ՚ի չարէն երկնեմք առ-
քաւբենանց, զի այսպիսի են սուր հարսին եկեղեցւոյ զինուորեալք. քրիս-
տոսի ընծայեալ ՚ի վերուստ լուսոյն; սա զօրաւորք. զայդ սէր
պարգեւ ՚ի հաւատոց, զի զայրան սատանայական զթշնամիս անձնայոյս.
2 Տիմ. 15. 16։ ուսեալք զպատերազմ ասէ, ոչ պատմի ՚ի վերա
Յոհանու գրեացուոյն, թէ մինչ սատանայ ՚ի կերպարանս նորին
ծնողի գնայեալ ՚ի բերան գրոյն աղաղակէր երկնել. անտի. Ձ.
նա լուաւ և եթ կալուլ անդադար աղօթեր. և անձրևայեալ
զինքն ՚ի կերպարանս վիշապի փախեալ անկաւ ՚ի գուբն, և ի
երանելին մանուկն Յոհաննէս զօրացեալ հոգւով սրբով. յայնժամ
և նա զտանէ եւ, ՚ի վերայ պարանոյն փողլոյ վիշապին կոխեաց
զնա. և նա երդուեալ յանունն Աստուծոյ զի մի այլ եւս յանդա-
գնան այն երթիցէ, այլ միայն եթէ թոյլ տայցէ և թողուցու-
փախիւսել անտի. Նոյնպէս և բազումք ՚ի յանապատականս սէ
Հարցն նստեալ ՚ի վերայ գիւին, որպէս իշոյ կամ երիվարի,
կամ արջոյ և այլոց նմանեաց վարէին բռնութեամբ. և նա երթայր
ածքալով. և զարմացմամբ բազումս առ ՚ի վարս հարանց։ Նմանա-
պէս և պատերազմելին ընդ հեթանոսաց, և ընդ բռնաւորաց
նոցին և թագաւորաց, և քաջապէս յաղթէին բռնութեանն նոցա.
Աստուծոյ գրեաց և Գիտակցեալսնորման արքայն հայոց Տրդա-
տէ զհաւատն լոյս եղբայրութեան քում վասն. Քրիստոնէից.
սուրբք մեր բթացան, և նոքա ՚ի մեռանելոյ ոչ վարհերեցան.
Նոյնպէս և Գեղամ արքայն որ կոչի յոյժ սատանի չարչարեաց
զբօղիատոս սէ վկայն, և զինքն մինչ երթայր երկնաւոր թագաւոր
՚ի հրեշտակէ Աստուծոյ, և ՚ի բազում ցասմանց սպառ սպառնա-
կեալ և անէ, ոչ պարտեաց իբրև զգերի որ վարի, այնպէս քարշէր
զնա. վանականորին և մանր եկեղեցւոյ որք դնեալս են ՚ի յերկիր
կուշին զինուորեալ եկեղեցւոյ. և յաղթօղքն յաշխարհն երկրորդ
յերկրէ խառնեալք ՚ի դասս զօրութեանց. յանձնեալ կոչի յաղթօղ
եկեղեցի. Ըստ այսմ ասէ Դաւիթ զեկեցուցէր ինձ զզօրութիւն
՚ի պատերազմի, զ յարուցեալսն ՚ի վերայ իմ ՚ի ներքոյ իմ արարեր
Սղ. 17. 40։ Այս է սուր չէր զօր ... ՚ի վէ ... ՚ի պատերազմ-
եաց ... Ըստ բեշխայ պատերազմեալ և կարծեալք են
՚ի ... ասկերաց. զի են հնազանդք ամենից ասկերաց ծառայու-


digitised by A.R.A.R.@

նաև ունին զմեծամեծ ջիլս և երակունս, որովք լինի կամա-
ւոր շարժումն սոցա. Կամ որոյ կրեն զսուրն՝ ի վերայ ազդերց
զի զինուորաց կարասեն շարժել և պատրաստ գտանիլն առ՝ ի
փութապէս քարշել զսուր ընդ դէմ աւազակաց, և գիշերային
գողոց, կամ միջօրեական թշնամեաց, կամ առ Աստուածային
անկուսելոյ. Որպէս առ մովսէսիւ յանապատին հրամայեաց տէր
Աստուած Իսրայէլի, դիք առ իւրաքանչիւր զսուր իւր յազդերս
իւրում. անցէք և այսրէն դարձարուք դրանէ՝ ի դուռն բանակիդ
և կոտորեցէք զյանցաւորս, Ել. 32. 27. Նոյնպէս պատմի
թէ՝ արար Աւովդ սուր երկսայրի և. եդ յաջոյ ազդեր իւրում ընդ
տուատակաւն, և գնաց առ Եգլոմ արքայ մովաբու. և ձգեաց
Աւովդ զձեռն իւր զձախ, և եհան զսուրն յաջոյ ազդերէ իւրմէ.
և եհար՝ ի կշտին Եգլոմայ, և ինքն ել և գնաց Դտ. 3. 16.
Ուստի ազդերօք իմանամք զարուք ընթացս Ճշմարտութեան
զինուորացն Քրիստոսի, առ որս ասէ տէրն թէ՝ մեծ ես ինչ
ուրախութիւն քան զայս ոչ ունիմ, զի լսիցեմ թէ որդեակքն իմ
Ճշմարտութեամբ գնան. 3 Յով. 1. 3. Զի այնպիսիքն են Աս-
տուածային զինու վառեալք և ունին սուր զբանն Աստուծոյ.
որով գիտեն աներկիւղ մտանել՝ ի պատերազմն այնոցիկ որք եկեալ
յանտառէ կենդանիս և շրջին՝ ի գիշերի առ՝ ի խռովել զսիրտ և
զմիտս ուրուք՝ ի յանկութիւն բղջախոհութեան, ընդդէմ որոց
քարշեն զսուրն ողջախոհութեան. և ընդդէմ հպարտութեան
որպէս և փառաց հոգւոյ որով խոնարհութեան կտրեալ զջիլս
հպարտութեան, աղքատութեամբ և մերկութեամբ՝ ցամաքեցոյց
զջիղս ագահութեան. Պահօք և ծոմօք զպատճառս որկրամո-
լութեան. Այսպէս հեզութեամբ և համբերութեամբ՝ զբար-
կութեան՝. արիութեամբ զծուլութեան. և գերազանց մարդասի-
րութեամբ՝ զնախանձու և ատելութեան. Նոյնպէս և զինուորեալ
սրբքն՝ սրտիւք զԱստուած տեսանեն, և ոչ երկնչին յայնպիսի
գազանական մարտից, և ոչ խաբին՝ ի սատանայպատիր բանից աղա-
ւաքարոյ թշնամեաց. Որպէս սբ. ծերունոյ միոյ երևեցաւ
սատանայ ասելով հաւատա՛ ինձ ծեր՝ զի ոչ կարես կեալ. ՃԵ
վշտագնիս, ասէ սա ծերն, և դու մի ինչ հոգայս ես զինէն
արշաւի և ոչ փրկիմ այնպէս՝ ի վերայ գլխոյ քո կայցեմ՝ ի դժոխս
և զքեզ՝ ինձ ընկերոյ ասելոյ իմոյ դատապարտեալ տեսանեմ. Այսպէս
աշ

digitised by A.R.A.R.@

ոչ երկնչին 'ի զարհուրանաց գիշերոյ զինուորք զօրագլխոյն Քրիստոսի, որպէս ասէ արքայահայր. Մարգարէն, ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի, եւ ոչ 'ի նետէ որ թռչի 'ի տուէ, Քանզի կրեն 'ի յինքեանս զնշան նորին զդրոշմ զգայութեան եւ կնիք 'ի դէմս ամենից. Որպէս պատմի 'ի վարս սրբոց հարցն եթէ հրեայ ոմն՝ միայն ագանէր ըստ դիպուածոյ Ճանապարհին յան մարդաբնակ տեղիս, եզարհուրեալ երկնչէր 'ի խաւարաշրջող դիւացն. եւ զմտաւ ածեալ եթէ քրիստոնեայքն կնքեն զինքեանս խաչիւն եւ պահպանեալ լինին, եւ տեառնագրեալ զինքն խաչիւ նիջէր, եւ ահա զարհուրեցուցիչ դեւքն անդր հասեալ լինէին արհաւիրս առնելով. եւ հուպ եկեալ զնշան խաչին տեսանէին եւ ձիչ բարձեալ՝ ասէին, եկայք 'ի զարմանալիսս, անօթ ունայն՝ կնքեալ արքունական մատանեաւ, քանզի հրեայն ոչ ունէր զմկրտութիւն սբ. աւազանին. եւ անդէն չիք լինէին դեւքն. Իսկ հրեայն տեսեալ զզօրութիւն սբ. խաչին ապշանայր. եւ յարուցեալ յառաւօտուն ընթացեալ պատմէր Եպիսկոպոսի քաղաքին եւ մկրտիւր. Իսկ եւ 'ի մարմնական թշնամեաց փրկէ նշանն տէրունական, յայտ 'ի մեծէն կոստանդիանոսէ եւ յայլոց բազմաց, որք զօրացան նովաւ եւ յաղթեցին, եւ երեւելի եւ հզօր եղեն 'ի վերայ թշնամեաց. Այլ եւ որպէս ազդեցքն են հիմն ամենից ասկերաց մարմնոյն. նոյնպէս եւ են չորս գլխաւոր առաքինութիւնք հիմն ամենից առաքինութեանց, որոյ 'ի վերայ կայանան եւ այլքն ամենայն. եւ որպէս մարմնաւոր սունն կայ 'ի վերայ ազդեր. նոյնպէս եւ հոգեւոր սուսն 'ի վերայ այնց չորից առաքինութեանց. այսինքն արդարութեան, խոհեմութեան, արիութեան, եւ ողջախոհութեան. վասնորոյ ասէ ոմն 'ի գովելեաց թէ.

Հաստատ է հիմն այսորիկ տան.
յորոյ նեցուկ սիւն ամրական.
Սէրն առաստաղ ծածկողական.
վայելքն է մէջն ուրախ կան.
Խոհեմութիւնն շրջապարիսպ.
արիութիւնն առնէ ըղ գլխաւ.
Արդարութիւնն հաստատող.
ողջախոհ կեանն աճել մաքրող.

Քանզի արդարութեամբ Սողոմոն լճուեալ դղեակ երկաթա-
պատ

digitised by A.R.A.R.@

փառաւորել կամիմ 3 Թագ. Յ. 24. խոնարհութեամբ բանիւք
աղերսեալ զառն իւր եղբօրորդին իւր. Յեսու 2. 6. Արիւք
Դաւթի կործանեալ զԳողիաթ. I Թագ. 17. 49. Աղաչաւո-
րութեամբ Յովսէփ մերժեաց զզեղխութիւնն: իսկ և սուր
ազդեր եղեւ մարմնոյ բանին Աստուծոյ. վասն յաղագս Թէոփաւոս.
հերձուլելու և այլոց որք մնասկէր էին զ. անհոյն կործանեցի.
Որպէս և սուրն հաստատելի ոչ զկնի քառասուն ամի խաչին.
տնտեսեալ զԹշնամիս եկեղեցւոյն Քրիստոսի. զի սուր զատանէր
քաջք. անոյ և ընդդէմ նոցին դէզք. զի սուր հալածանք. և անոց
նախատութիւնն Աստուծոյ պատրաստեալ զայլեւայլն. սուր սաստ
կանայ հերետիկոսութիւն և անդ յարուցանէ Աստուած զախոյեան
ընդդէմ փարդապետս: Որոյ սուր ուղղափառութեան հալածէ
զմենեսեան: Որպէս յամի տեառն 325. սուր երեք հարիւր
տասնութ հայրապետացն նիկիոյ ընդ ժողովոյն սատակեաց զԱրիոս
և հալածեաց զհամախոհս նորին: Նոյնպէս և յամի տեառն
396. սուր հարիւր յիսուն հայրապետացն կոստանդնուպօլսոյ
կործանեաց զՄակեդոն: և յամի տեառն 446 սուր երկու
հարիւր հայրապետացն եփեսոսի ժողովոյն իսպառ վանեաց ըզ-
Նեստոր և զայլ խումբս հերձուածողաց: Այլև յամի տեառն
451. սուրն կիւրղի և դէոսկորոսի սատակեաց զմարկիանոս: և
մերժեաց զլեւոն և ջնջեաց զպիղծ տոմար նորին և յրուեաց
զանասնուած ժողովն քաղկեդոնի: Որպէս սուր աղօթից որոց
բարեպաշտ ձեռամբ մուծեալ զուրացողն [illegible] յուրախանաս:
Գանձարանաց [illegible]

Բայց գիտելի է զի նոյնէ զահանօրակն և զահոյքն. որ ի սոյն
գլխոյ 7 համարին մեկնեցաւ. ընդ նմին և Սողոմոն անուն.
քորս տեսցես անտանօր: և ի փղոսկրեայ լիբանանու ասէ. Զի լիբա-
նան եղեան բարձր և պայծառ. և մեծ ձիւնապատ և ջրաւէտ
առաւտ ամենայն երից փայտից. և անուշահոտ ծաղկօք. այսպէս է
և անկապակած ամենայն թիւնաւոր գեռնոց. և զուարճանայ ա-
ռաւոտ ցօղով: Արդ լիբանան լերամբ խմանիմք զաշխարհս ամե-
նայն, որ երեւի առաւել բարձր պատուով և փառօք. և է պայ-
ծառ լի Աստուածատուր բարեօք. բայց ձիւնապատ զանազան
մարձութեամբ. ջրաւէտ կենդանական գիտութեամբ. առաւ
ամենայն փայտիւք այսինքն Թագաւորօք և իշխանօք. մեծա
տամբք

digitised by A.R.A.R.@

տամբք և աղքատօք. լի հոտաւէտ ծաղկօք՝ այսինքն չարեօք և բարեօք, ապաշխարող և անկարկամ՝ զի մարդիկ 'ի վերայ երկրի ոչ գիտելով որոգայթ սորին այնպէս կարծեն, և տուատանայ ցօղով Աստուածային ողորմութեան։ Յորոյ բանական փայտից արար մեր Սողոմոն խորոյ ինքեան գահաւորակ և գահոյք. աթոռ և հանգստարան. երամք վարդապետաց, և հօյլք հայրապետաց, գունդք մարտիրոսաց, և ջոկք ճգնաւորաց, դասք նահապետաց, և գումարք Մարգարէից, ժողովք նահատակաց, և խումբք սրբ. կուսանաց, զորս ուղղափառ հաւատով, հաստատ յուսով, ջերմ սիրով, և բարի գործով կազմեաց մի եկեղեցի գահաւորակ ճշմարտին Սողոմոնի։ Այլև որպէս գահաւորակ արար արքայ Սողոմոն 'ի փայտից լիբանանու, և արքայն մեր Սողոմոն, 'ի ժողովրդոց հրէից և հեթանոսաց, որք էին որպէս փայտք լիբանանու, ուստի վկայէ Դաւիթ ասելով թէ մանրեսցէ տէր զմայրսն լիբանանու, որպէս Մովսէս մանրեաց զորթն, և մերն Մովսէս մանրեաց զսատանայ, և փշրեաց զկոմարարս նորին, և 'ի հեթանոսական կռապաշտութենէ առեալ զժողովուրդ իւր, արար գահոյս խորոյ ինքեան. Զի ասէ Մարգարէն եկեսցէ փրկիչ և դարձուսցէ զամպարշտութիւնս Յակոբայ Ես. 59. 24. Զի որպէս Սողոմոն թագաւորեաց 'ի վերայ երկոտասան ցեղիցն Իսրայէլի. և մերն Սողոմոն թագաւորեաց 'ի վերայ երկոտասան ազգաց հաւատացելոց, յորոց կազմեաց եկեղեցի սրբ. վասն որոյ իմաստութիւն շինեաց իւր տուն ասէ, և կանգնեաց սիւնս եօթն։ Զի լիբանան է եկեղեցին Քրիստոսի, և փայտք լիբանանու. 'ի յարգանդէ նորին սրբ. աւազանէ ծնեալ որդիքն, որք եղեն սխտանիք 'ի շինուած մարմնոյն Քրիստոսի. Դուք յիս և ես 'ի ձեզ Յով. 14. 20. Որպէս է Պօղոս որ ընդ Քրիստոսի կեայր, և Քրիստոս նովաւ խօսէր։ Դարձեալ լիբանան սպիտակութիւն կամ սպիտակ խունկ թարգմանի, փայտ լիբանանու էր սրբուհի կոյսն Մարիամ, որոյ 'ի մաքուր և 'ի կուսական յարգանդէն մերն Սողոմոն արար ինքեան գահաւորակ զսրբ. մարմին իւր. զի որպէս 'ի տուերական օրինում Սողոմոնի տաճարին և գահաւորակ աթոռն 'ի փայտից լիբանանու 'ի մայրւոյ և 'ի նոճոյ շինեցաւ՝ զորս առաքեաց նմա Քիրամ արքայն նոյնպէս և ճշմարտին Սողոմոնի մերոյ

մարմինն

digitised by A.R.A.R.@

ճաշակմանն որպէս աթոռ և տաճար և գահաւորակ կազմեալ զօրութեամբ հոգւոյն սրբոյ՝ ի մաքուր կուսական սր. յարենէ. Այլ և գահաւորակ՝ է փոխաբերաբար ըմբռնմամբ. եղև սր. Աստուածածինն, որ սերեալ՝ 'ի քահանայական և 'ի թագաւորական զարմէ. գեր քան զլերանս ազնուականացեալ կուսութեամբ, և անուշահոտ առաքինութեամբ գահաւորակ աթոռ մեծին Սողոմոնի զի տաթոն է յերկրէ վերացեալ 'ի սորայ փակեալ և 'ի վերստաբացեալ. այսպէս և կայան սր. եղև յաշխարհս վերացեալ ընդդէմ մեղաց փակեալ և Աստուծոյ բացեալ. Վասնորոյ և սր. Գրիգոր Նարեկացին ասէ, դու միայն երանեալ և բարեբանեալ հօրն հաճութեամբ հովանաւորեալ որդւոյն ծնօղ. հոգւոյն վերընդունող երրորդութեան փառաւոր տաճար. և 'ի յութսուն գլուխն ասէ. 'ի բարձրեալն հօրէ զօրացեալ և հովանացեալ հանգստեամբ հոգւոյն հանդերձեալ և մաքրագործեալ բնութեամբ որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ. Բայց չինթար ներբանատեսակող զաչս ռամկաց ծարաւելն կամելով 'ի վերջն ալբերթ գրքոյն 'ի պատմութեան Նորին վարուց ասէ թէ. մինչ շարագրէր ալբերթ զհետեւակ նոյնոց կուսին զվերափոխմանն է, և եկեալ մինչև յայն տեղին ուր ասի՝ ողջերս մայր գթութեան, սակաւինչ արգել զինքն, և խորհրդածեր թէ. զինչ ստորակայցէ և իսկոյն գրեաց, և բոլորի երրորդութեան ազնուագոյն խրախճարան. սուրբ ահա յետ սակաւուց՝ երևեալ նմա կոյսն ասաց շնորհակալեմ զքեն ով բարի ալբերտոս զի ողջունեցեր զիս այնպիսի ողջունատուութեամբ, որ այնպիսեաւ գովութեամբ յառաջագոյն ոչ երբեք եղէ ողջունեցեալ յումեքէ. Աստուածուհին թէ՝ կամ սրբուհի կոյսն իցէ ասեալ ալբերթի (զոր քաջ լցի ասել) և կամ անձառունի ձայնաւորան շարադրողն պատմութեան Նորին ով անգր ճգամի. առ 'ի պատրեալ զպարզամիտ ռամիկս. զի ահա ներբողեանք երկոցունցն ունիմք առաջի աչաց մերոց. այսինքն սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն, և ալբերթի նոցին վարդապետի, կշռեա և տես թէ՝ որն 'ի նոցունց գերազանցեալ իցէ, մանաւանդ և աւելի քան զերեք հարիւր ամաւ յառաջեր Նարեկացին քան զալբերթ, ապա ուր գիտաց զայս թէ այնպիսեաւ գովութեամբ յառաջագոյն ոչ երբէք եղէ ողջունեցեալ յումեքէ. Այլ և ասէ՞ն ով բարի ալբերթոս. զի եթէ միածին

որդի

digitised by A.R.A.R.@

որդի Նորին ասէր՝ չէք ով բարի բայց մի Աստուած. Մրկ. Ժ. ԺԸ. Զի՞արդ մայր Նորին ասէր Նմա բարի ալբերոտ. Տես և 'ի բառագիրքն 'ի Նոյնունց արարեալ յորում գրեն թէ՝ զի այս բառ բարի յատկացեալ առ միայն զԱստուծոյ. զի Նա միայն է ըստ ինքեան բարի։ Այլ և ոչ գրեն թէ՝ զնոյն բարբառ սորայ կուսին որդւո՞յք ալբերոյթ ինքն լոյսն և պատմեալ, եթէ այլոք մերձ գ՚լեալ լուսն և պատմեցին. Մտածումն և զայլ անհամար սուրբ թեւ պատմութեան. Հրաշից գրքոյն, որոյ միւն է 17 գլխոյն թէ աուն ամենասուրբ կուսին Աստուածածին եւ բանին ձեռամբ Հրեշտակայ Հիմամբքն Հանդերձ, և եւ տանիլ 'ի Նազարեթ. 'ի պատմութեան, և գնեալ 'ի Լերայ բլրի միոյ, և զկնի երից ամաց և եօթն ամսոյ. վերստին բարձեալ 'ի դաշտմանսիոյ և անցուցեալ ընդ ծովն Ադրիատիկոն տարեալ հանգուցին 'ի մէջ անտառի. ապ և եկաց ամիսս ութն. և վերստին փոխեցան անտի և հանգեան 'ի բլուր միում նորնոյ քաղաքին ամիսս իբր չորս. և վերստին փոխեցան անտի. և զնոյն հանգեան Նեարլենկեթ մի անդր յարքունի Ճանապարհին Լավրետոնի, որ փոքր ինչ հեռի է 'ի ծովէն, ուր կայ մինչև ցայժմ անշարժ. Բա՛ն է անձառելի Ճարտարապետական սուրբ. Առայս վաղձան ասէ. տէրն 'ի գետն Հրեից. թէ՝ դուք 'ի Հօրէ սատանայէք եւ այլն. Յօհ. 8. 44. Ուրեմն լռեսցեն մի և զմեզ ան շըջանկարս իմասցեն. Այլ և զթագաւորակ արքայի մերոյն անուանահուա արեամբ կենարարին ներկեալ. որոյ վեր բազմեալ արդարացի դատեսցէ զերկրաւորն աշխարհին 'ի լրութիւն գրոյն թէ՝ Նորա յաթոռ դատաւոր արդարութեան, որպէս Սողոմոն զերկրաւորին պսակն կանայան. Սղ. 9. 5.

[illegible]

[illegible]

յԸնդունելում տան խօսեցաւ զգահաւորակէ արքային Սողոմոնի. և աստ զմասանց նոյն գահաւորակին պատմէ. Զի գահաւորակ է գահն որ չինեն իբր և զկայուն աթոռ, հանդերձ յենարանօք սեամբ և խարիսխօք, որ առ գահոյք յորում նստին թագաւորք և իշխանք. և գահանոյապետք. և սիւնն է նեցուկ նորին. և յարն է յենարանն գահոյից, տարածեալ զորմով յոր յենու բազմեալն թիկամբ. խարիսխն է պատուանդան սեանցն, որոյ վեր կայանան սիւնքն. Բայց աստանօր խարիսխ անուանէ ափուոյն կամ բարձն

որ

digitised by A.R.A.R.@

որ դնի ՚ի նստարանի աթոռոյն կամ գահին որ լինի ենթակայ նստողին, որպէս խարիսխն սեան։ Նախ գահաւորակ եղեւ խորանն որ կոչիւր սրբութիւն սրբութեանց. սիւն գաւազանն Ահարոնի որ ծաղկեցաւ։ Անոր ոսկեղէն՝ սափորն լի երկնաւորեալ մանանայիւ։ Խարիսխն ծիրանի՝ ոսկեայ բուրվառն։ Մէջն ականակապ՝ արկղն կտակարանաց ներքոյ եւ արտաքոյ պատեալ ոսկւով, եւ քերովբէքն փառաց որք հովանի ունէին ՚ի վը քաւութեանն։ Վասն սիրոյ դստերաց որդւոյն Իսրայէլի։ Երկրորդ գահաւորակ՝ գրաւորական օրէնքն. սիւն՝ Մարգարէքն Երմ. I. 18։ Անոր՝ խորանն եւ տաճարն. խարիսխ ծիրանի՝ զոհքն, եւ պատարագքն. Մէջն ականակապ աշտանակն, եւ սեղանն եւ հայն նուիրանաց, եւ ընտրեալ նահապետքն։ Երրորդ՝ գահաւորակ եկեղեցի որ է տաճար սբ. ասէ մեծ Վարդան վարդապետն մեր. սիւն Ճշմարտութիւնն. խարիսխ հաւատն. արծաթ ընտիր՝ բանն Ճշմարտութեան, եւ խոստովանութիւն հաւատոյն. ծիրանի Թագաւորական՝ խոհեմութիւնն։ ոսկի կողմանց յոյսն եւ մաքուր սէրն. մէջն՝ ջերմ յօժարութիւն սրտին։ ականակապ՝ չորք առաքինութիւնք կապեալ ընդ սիրոյն Աստուծոյ, եւ ընդ մօր վերին Երուսաղէմի, դստերք Հրէից եւ հեթանոսաց եկեղեցւոյն ծնեալք որք եղեն դստերք Երուսաղէմի դոյս ծնանելով յորդէգրութիւն հօրն երկնաւորի։ Չորրորդ՝ գահաւորակ՝ եկեղեցի, սիւն՝ առաքեալքն, որք իբր զարծաթ ՚ի բոլս փորձեցան Գաղ. 2. 9. Անոր ոսկեղէն՝ սրբազան աւետարանիչքն. խարիսխ ծիրանի՝ արիւնն Քրիստոսի, որոյ վերայ հաստատեցան սիւն կոչեցեալ առաքեալքն. մէջն ականակապ՝ առաքելաշաւիղ սբ. արքն. որք իբրեւ զականս պատուականս փայլեցան յեկեղեցւոջ։ Ըստ այնմ որդիք սիոնի պատուականք որք առաւել քան զականս պատուականս Ողբ. 4. 2։ Այլ եւ գահաւորակի եկեղեցւոյ սիւնք են եպիսկոպոսունք եւ վարդապետք։ Անոր ոսկեղէնն կուսանք։ Խարիսխ ծիրանի Մարտիրոսք։ Եւ մէջն ականակապ հաւատացեալ խոստովանողք որք արդարութիւն ածեալ են ընդ մէջ, եւ Ճշմարտութեամբ պատեալ զկողս իւրեանց Եսա. 11. 5։ Առորս ասէ տէր՝ հաշտեալ եմ ընդ քեզ տառապելոյ եւ խախտելոյ մինչեւ մխիթարեցայր, ահաւասիկ պատրաստեալ եմ կարկեհան զքարինս քո.

եւ

digitised by A.R.A.R.@

և զհիմունս քո շափիւղայ. և կանգնեցից զաշտարակս քո յասպիսէ, և զդրունս քո յականց վանակնյց, և ածից շուրջ զքև պարիսպ ընտիր ընտիր ականց պատուականաց. Ես. 54. 11. Քանզի մինչ թշնամիքն էաք, հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ որդւոյ նորա Հռմ. 5. 10. Զասնորոյ ասէ. հաշտեալեմ, այլև խոստացաւ թէ՝ յաւուր յայնմիկ կանգնեցից զխորանն դաւթի զանկեալն, զկործանեալս նորա, և զյատակեալս նորա վերստին կանգնեցից, և շինեցից զնա ըստ աւուրցն յաւիտենից։ և մխիթարեցից զամենայն աւերակս նորա. և արարից զամենայն աւերակս նորա իբրև զդրախտ Ամով. 9. 11. Ես. 51. 3. Արդ կարկեհան զքարինս քո ասէ, այսինքն նահատակքդ՝ ձգնաւորքդ, և խոստովանողք վկայքդ։ Ըստ երգոյն թէ՝ սոքա են քարինք սրբ հիմնեցեալք՝ի յերկրի, զոր կանխաւ տեսեալ գուշակեաց Մարգարէն։ ՝ի նոյն՝ ի նիւթոյ շինեցաւ կաթուղիկէ եկեղեցի բարձրացեալ վառօք՝ի պարծանս լասչին։ և զհիմունս քո շափիւղայ ասէ, ըստ վկայութեանն Յօհաննու, թէ շինուածք քաղաքին էր պարսպքն յասպիս, և քաղաքն էր ոսկի մաքուր նման սրբ և սպիտակ ապակւոյ. և պարիսպ քաղաքին ունէր հիմունս երկոտասան, և ՝ի նոյա երկոտասան անուանք երկոտասան առաքելոց գառին Յայտ. 11. 14. Հիմն առաջին յասպիս, սրբն Պետրոս։ Երկրորդն՝ շափիւղայ, սրբն Անդրէաս։ Երրորդն՝ զմրուխտ, սրբն Յօհաննէս։ Չորրորդն՝ պղնձագոյն, սրբն Յակոբոս։ Հինգերորդն եղեգնաքար, սրբն Փիլիպպոս։ Վեցերորդն՝ սարդիոն, սրբն Բարթուղիմէոս։ Եօթներորդն՝ ոսկեքար, սրբն Մատթէոս։ Ութերորդն՝ բիւրեղ, սրբն Թօվմաս։ Իններորդն՝ տպազիոն, սրբն Յակոբոս Ալփեան։ Տասներորդն՝ քրիսօփրայ, սրբ Թադէոս։ Մետասաներորդն յակինթ, սրբն Սիմոն կանանացի։ Երկոտասաներորդն՝ ամեթիստ, սրբն Մատաթիայ։ Դարձեալ ասէ՝ կանգնեցից զաշտարակս քո յասպիս. զի յասպիսն է պատուական ակն ինչ կարծրութեան, որ ունի զգոյն կանաչ, լինի և դեղնագոյն, կապտագոյն, կարմրագոյն, և սպիտակագոյն. սոքա ըստ բժշկաց արգելուն զհոսումն արեան, զօրացուցանեն զստամոքս, շիջուցանեն զանբարեխառն տապ տենդին. սրեն զառնութիւն, և ընդդէմ թիւնից լինին դեղթափ. Այլ և ասէ՝ թէ և զդրունս քո ականց վանակնյց, այս և է տեսակ ինն գոհարի, Թափանցիկ և լուսա

digitised by A.R.A.R.@

լուսապայծառ լոյս նմանութեան մաքուր սառին։ Նման սոյա եղեն մեզ երկնաժողովս մեր Հայրապետքն, որք Թադէոսին զԹոյնս չորրորդին Հերձուածողաց, և ինքեանք լուսապայծառ վարուք, և մաքուր կրօնիւք, ծանուցին մեզ զճշտուն մինչ ուղղափառ և մեր Հաւատոյ Քրիստոսի։ և այս՝ ամէն շուրջ զքերթողական յընտիր ընտիր ականց պատուականաց, այսպիսի իմաստք ընտ-րեալ մեր Թագաւորքն. որպէս մերն Աբգար, և քաջն Տրդատ. ակնի և մեծն կոստանդիանոս և Թէոդոս, որոց վասն առի՝ ի յերգս շարականին, որ զարդարեցեր զեղապանձ վայելչութե-մբ զեկեղեցի, պսակեցեր առաքելովք և մարգարէիւք, և հաստա-տեալ ամրացուցեր մեր Թագաւորօք։ Որք եղեն մեզ աշտարակ Հզօր երեսաց Թշնամեաց։ և պատուական ակունք ղեղթակք ը-դէմ Թիւնից։ և ամրագոյն պարիսպ եկեղեցւոյ քրիստոնէից. զի ահեղամբ կորուսին զՀպարտութիւնս անօրինաց, և զբարձ-րութիւնս ամբարտաւանից խոնարհեցուցին, և Միայնակքն եղեն պատուական ակունք քան զականս պատուականս Եփ. 13. 11. Վասնորոյ և երանելին Պօղոս պատուիրէ Տիմոթէի թէ՝ գի-տասցես թէ որպէս պարտիցէ քեզ՝ ի տանն Աստուծոյ շրջիլ. որ է եկեղեցի Աստուծոյ սիւն և հաստատութիւն ճշմարտութե I Տիմ. 3. 15։ Հինգերորդ՝ զահաւորակ մերոյ արքային Սո-ղոմոնի՝ մարմինն կազմեալ ի հոգւոյն սրբոյ՝ ի մաքուր յարենէ՝ սրբ կուսին, որպէս նախ գրեցաւ։ Սիւն նորին բանական հոգին, և մարդկային միտքն։ Յենար ոսկեղէն՝ աստուածութիւն նորին։ խարիսխ ծիրանի՝ Աստուածային և մարդկային՝ միացեալ բնութին։ Զորմէ գրէ շնորհալի վարդապետն մեր սբն Ներսէս, թէ՝

Մարգարտօրէն ծնունդ մի երկոքին։

Աստուած և մարդ մի երկոքին։

և մէջն ականակապ՝ տարածեալ՝ զպէսպէս Հրաշն և անբա-զքննելիսն։ Վասն սիրոյ դստերացն երուսաղէմի, այսինքն յադամեան տոհմիս. որք են դստերք և ժառանգորդք երկնից արքայութեան, Զի յայտ երևեցաւ սէրն Աստուծոյ ի մեզ. զի զորդին իւր միածին առաքեաց յաշխարհ զի եղիցուք նովա-կենդանիք. յայսմ սէրն, ոչ զի մեք սիրեցաք զԱստուած, այլ զի նա սիրեաց զմեզ. և առաքեաց զորդին իւր՝ ի քաւութիւն մեղաց մերոց I Յոհ. 4. 9. Վեցերորդ՝ Ախորժ զահաւորակ մերոյ

արքային

digitised by A.R.A.R.@

արքային Սողոմոնի, եղեւ սրբուհի կոյսն Մարիամ. սիւն նորին խոնարհութիւնն. ոսկեղէն սնար՝ մաքուր կուսութիւն. խարիսխ ծիրանի՝ խիստ աղքատութիւնն. մէջն ականակապ՝ նորին երկոտասան գերազանցութիւնքն։ Նախ արքայական սերունդն. Երկրորդ՝ հրեշտակական ողջոյնն։ Երրորդ՝ զարմանալի յղութիւն. Չորրորդ՝ ամբողջութիւն կուսութեանն առանց ապականութեան։ Հինգերորդ՝ յղութիւն առանց ցաւոց։ Վեցերորդ՝ դիւրութիւն ի ծնանել զորդին առանց ծանրութեան։ Եօթներորդ՝ ծնանիլն առանց ցաւոց և վշտաց։ Ութերորդ՝ զգաստ և ամօթխած ի խօսս։ Իններորդ՝ խոնարհութիւնն աստուածահաճոյ ի հոգւոջ։ Տասներորդ՝ անտանելի կսկիծ մարտիրոսութեան տանիլն։ Մետասաներորդ՝ ոչ յուսահատիլ զերկնաւորս։ Երկոտասաներորդ՝ լիութիւն շնորհաց առանց թերութեան։ Ըստ որ ասէ սրբազան աւետարանիչն Յովհաննէս թէ՝ Նշան մեծ երեւեցաւ յերկինս, կին մի արկեալ զիւրեաւ զարեգակն. և զլուսինն ի ներքոյ ոտից նորա. և ի վերայ գլխոյն նորա պսակ յաստեղաց երկոտասանից Յայտ. 12. 1։ Եօթներորդ՝ զանհաճոյակ եղեւ սէր խաչ կապմեալ ի հրեշտ, որոյ վերայ բազմեցաւ արքայն մեր Սողոմոն, որոյ սիւն բարունակն՝ որ ի բարձունս կանգնեալ էր կիպարի. Ոսկի բազուկն՝ որոյ վերայ տարածեալ զաստուածային ձեռսն էր չարչարեալն։ Խարիսխ կոխն՝ որ յերկիր սեղմեալ էր նովին։ և տախտակ գլխոյն գրեալ ի պիղատոսէ էր ծիրենի։ և մէջն ականակապ տարածեալ աստուածայնեալ մարմին բանին Աստուծոյ, վասն սիրոյ դստերաց վերնոյն Երուսաղէմի։ Քանզի արխատեալ ի մեթաֆիզիքային 12 գրգոջ 7 գլուխն ասէ թէ՝ յանկալին և իմանալին շարժէ զոչ շարժեալն. յանկալի պատկեր և արարչին իւրոյ է մարդն. վասնորոյ շարժէց զանշարժելի բանն Աստուծոյ ի յերկիր խոնարհեցուցեալ. զօրէն և ինքն պատմէ թէ՝ այնչափ սիրեաց Աստուած զաշխարհ մինչև զորդին իւր միածին ետ. Յով.
3. 16։

Ելէք և տեսէք դստերք սիոնի զթագաւորն Սողոմոն զպսակն որով պսակեաց զնա մայր իւր յաւուր փեսայութեան իւրոյ. և յաւուր ուրախութեան սրտի նորա.

Որդ զկնի հարսնման փեսային յօրխորդայն՝ զորովխութէ հարսին նոքա պատասխանեալ ծանուցին նմա լինիլ նորին աթոռ և հան

digitised by A.R.A.R.@

հանգստարան փեսային. իբրու Երկրորդ՝ դիմաւ ըստ քաղաքա-
կանի առօրութեան, և յուշին նմա թէ այնէ դանոյք, և դա-
հաւորակ արքայի մերոյն Սողոմոնի, զոր արար վասն իւր և այս
պարծուցեալ զբանս իւրեանց առ դստերս սիօնի, հրաւիրելով
զնոսա՝ ի հարսանիս որդւոյ Թագաւորին Մատ. 22. 2. Ելանել
՝ի տեսարանս և տեսանել զփեսայն, և զպսակ փեսայացեալ բանին
Ճշմարտին Սողոմոնի. որ գնեաց զմեզ յանիծից օրինացն եղեալ
վասն մեր անէծք Գաղ. 3. 13. Քանզի զգեցաւ իբրև զրահս
զարդարութիւն, և եդ ՝ի գլուխ իբրև զսաղաւարտ զփրկութիւն,
և արկաւ զիւրև զհանդերձ և զպատմուճան վրէժխնդրութեան,
հատուցանել զհատուցումն Ես. 59. 17. Այսպէս պսակեցաւ ի
հարսին եկեղեցւոյ, և փեսայացաւ հաւատացեալ հոգւոյ, և
ընկալաւ զպսակն յաղթութեան, ըստ կանխագրութեան Մար-
գարէին՝ ի դիմաց նորին, թէ իբրև փեսայի եդ ինձ զպսակ. Զի
մինչ ոչ կոյսն Մարիամ հաւանեցաւ բանից հրեշտակապետին
ասելով եղիցի ինձ ըստ բանի քում, ահաւասիկ կամ աղախին
տեառն. Իսկոյն վաղվաղակի բանն Աստուած մարմնով կերպա-
ւորեցաւ յարգանդի նորին, և եղև հրաշալի միութիւն աստուա-
ծային բնութեանն ընդ մարդկային բնութեան Աստուած ոչ հարքն
զպատասխանիս սրբոյ կուսին, պատասխանի ուրախութեան
անուանեն, որոյ սպասէին նահապետք. Մարգարէք, Թագաւորք
և ամենայն ընտրեալք հնոյ կտակարանին. զի ՝ի հնազանդիլ
կուսին, այնու բանիւք եղև գերազանց պսակ, և ազնիւ կա-
պակցութիւն ՝ի մէջ երկուց տարանջատ բնութեանց, և օրն այն
եղև օր տեառն Աստուծոյ մերոյ. օր վրէժխնդրութեան
առնուլ զվրէժ ՝ի թշնամեաց Երեմ. 46. 10. և վասն յաւուրն
այնորիկ ասէ Աստուած հայր, թէ՛ կոչեցից զծառայ իմ զեղիա-
կիմ քեղկեայ, և զգեցուցից նմա զպատմուճանդ քո, և տաց նմա
զպսակդ քո ճոխութեան. և տաց ՝ի ձեռս նորա զհազարապե-
տութիւնդ քո, և եղիցի իբրև զհայր բնակչացդ Երուսաղեմի, և
բնակչացդ յուդայ Ես. 22. 20. Առ այն օրիորդք հրաւիրեն
զդստերս սիօնի ելանել և տեսանել զօրն զայն. քանզի զօրն այն
եղև՝ օր ուրախութեան, օր փրկութեան, օր սրբազան հարսա-
նեաց. օր յորում բանն Աստուած զգեցաւ մարմին խոնարհու-
մերոյ և իբրև խաղաղարար Թագաւոր, պսակեցաւ Թագիւ
մահկա

digitised by A.R.A.R.@

ժառանգութեան, որոյ տեսութեան ցանկայր ամենայն հոգի. և ինքն փեսայն հոգւոյ ասէր, եհաս ժամ, զի փառաւորեսցի որդի մարդոյ Յով. 22. 23։ Ելէք և տեսէք դստերք սիոնի ահաւասիկ Աստուած ձեր, ահաւասիկ տէր՝ տէր գայ զօրութեամբ. և բազուկն տէրութեամբ իւրով, ահաւասիկ վարձք իւր ընդ իւր, և գործք առաջի նորա, և հետևեալ ասէ՝ ուրախ լերուք երկինք, զի ողորմեցաւ Աստուած Իսրայէլի, փողս հարէք հիմունք երկրի. գոչեցէք լերինք զուրախութիւն, բլուրք, և ամենայն ծառք որք ՚ի նմա, զի փրկեաց Աստուած զՅակոբ, և Իսրայէլ փառաւորեսցի Ես. 4. 10. և 44. 23։ Ելէք և տեսէք թէ որպիսի սէր շնորհեաց մեզ հայր, զի որդիք Աստուծոյ կոչեսցուք, և եմք. I Յոհ. 3. I։ Դստերք սիոնի ասէ, քանզի ՚ի սիոն շինեաց Սողոմոն զտաճարն. օրինակ և ստուեր զինուորեալ նոր եկեղեցւոյն Քրիստոսի, զի ՚ի սիոնէ սկսաւ հիմնաւորիլ եկեղեցին Քրիստոսի, ուրանօր շնորհս զգարդեցան առաքեալքն ՚ի հոգւոյն սրբոյ, ուստի սկսան խօսիլ յայլեայլ լեզուս ուրանօր զգեցան առաքեալքն և նախնիքն քրիստոնեայքն զզօրութ ՚ի բարձանց, և անդ առին զհրաման քարոզել զանունն Յիսուսի ընդ համօր աշխարհի։ Բայց խորհրդապէս նշանակէ զյաղթող եկեղեցին, ուստի երևեցաւ Յոհաննու գառն և ընդ նմա 144 հազարք որք ունէին զանուն նորա, և զանուն հօր նորա գրեալ ՚ի վերայ ճակատուց նոցա Յայտ. 14. I։ Ուստի ասէ Աստուածահայր կոչեցեալ Մարգարէն թէ երևեցաւ Աստուած հրեշտակաց ՚ի սիոն Սղ. 34. 8. Ուստի հայի Աստուած. զի սիոն երբայեցերէն դիտանոց թարգմանի, առ ՚ի նշանակել զբարձրութիւն նորին սրբութեան, և ընտրեալ տեղի հետևողաց գառինն, յորում ծնեալ հաւատացեալք կոչին դստերք նորին. զի զուստր անուանէ ամեն որդեծնութեան. զի ինքեանք և որդիք իւրեանց ցանկային զգառն Գալստեան մեսիային, և ամեն յամեցման նորին հեծեծէին։ Աստնորոյ և որդւոյն Սողոմոնի ՚ի դիմաց օրինողաց հրաւիրէ զնոսա, այսինքն զնախահարս, զմարգարէս, և զդպիրս օրինացն՝ ասելով ելէք և տեսէք զխնդրելի փեսայն ձեր, և զպսակ նորին այսինքն զկուսական առեալ մարմինն, զայրն, զխաչն, և զխանձարուրսն, և զօրէնն Թլփատութեանն, զմկրտութիւնն ՚ի յորդանանի, զփորձութիւնն ՚ի լեառն, և զայլ սքանչելիսն

digitised by A.R.A.R.@

չէլին, և զյարութիւն չորեքօրեայ մեռելոյն։ Ելէք և տեսէք
աւեն որպէս օրինօք հրեշտակք՝ հովուացն, աստղն՝ մոգուցն
և մոգքն՝ երուսաղեմացւոյն, և Հերովդէի. և քահանայապետացն
և ժողովրդոց նոյին. և հոգւոյն սբ՝ սիմէօնի, և աննայի դստեր
փանուէլի. և Յօհաննէս մկրտիչն ամենայն ժողովրդեան.
Փիլիպպոս՝ նաթանայելի. սամարուհին՝ իւրոյ քաղաքացւոց.
Իսկ ՚ի յորդանան և ՚ի թաբօր՝ հայր և հոգին սբ ՚ի վերուստ
աղաւնակերպ և ամպաձև՝ սրբազան առաքելոյն. Նաև շարժն
երկրի, խաւարումն արեգական և լուսնի և աստեղացն, յայտնա-
պէս քարոզեցին կարկեալ թէ՝ ելէք, և որք ՚ի խաւարի յայտնե-
ցարուք, որք խափանէս յարեան, և յետ յարութեան մտին ՚ի քա-
ղաքն սբ, և երևեցան բազմաց Մտթ. 27. 52. և ըստ մեծին
վարդանայ վարդապետին, որք աբրահամու տացաւ ել յերկրէ
քաղդէ. նմանապէս և դստերաց սիոնակայցին աւեն օրինօք.
ելէք մինչև յերբ կայք ՚ի յայս մոլորութեան խաւարի, զի գեհեն
մերժեցաւ և տեսն մերձեցաւ, ելէք ՚ի ծածկութեց հին մարդոյն,
և ՚ի յերկրաւոր ցնորից, և տեսէք զպսակին արքայի մերոյն Սողո-
մոնի, որդւոյն դաւթի, զի որպէս Դաւիթ եառ զպսակն մել-
քոմայ, որէր տաղանդ. մի ոսկւոյ, և ականց պատուականաց. և
եդ ՚ի գլուխ իւր. զամենայն աւուրս կենաց իւրոց 2 Թագ. 12.
30. Իսկ և փեսայն հոգւոյ տէրն մեր Քրիստոս երէկ և
այսօր նոյն և յաւիտեանս. Զի հայր Աստուածպսակեաց զնա
յաւիտենից անժամանակ անմայր ծննդեամբ և ՚ի ժամանակի
մայր նորա յղացաւ անհայր, ծնաւ մարմնով և սնոյց կաթամբ.
Զի փեսայութիւն նորին էր մարդանալն. և պսակ զգեցեալ
մարմինն. և կոյս մայրն, վարսաւոր աստղն, երկրպագութիւն
մոգուցն, և ընծայք նոցին. և աշակերտաց սբ հոգին, և յա-
նապատի յաղթել փորձողին, և քաղցր վարդապետութիւն նորին.
երկոտասան առաքեալքն և եօթանասուն աշակերտքն. և բազ-
մութիւն հաւատացելոյն զորս գնեաց արեամբ իւրով, որպէս
Պաւլոս զհաւատացեալսն զորս ծնաւ բանիւ վարդապետութեան
իւրոյ, ուրախութիւն իմ և պսակ անուանէր Փլպ. 4. 1. Նոյն-
պէս և տն մերոյ վկայ է՝ ելէք և տեսէք զփեսայն հոգւոյ,
զսան չարչարանաց մահուն փառօք և պատուով պսակեալ. զի
վայելէր իսկ նմա, որով բազում որդիս ՚ի փառս ածել և զառաջ-
նորդ

նոքա փրկութեան նոցա չարչարանօք կատարել. Եբր. 2. 9.
Զորս և խնդրէ փառօք անմահանել, Հայր հասեալ է ժամ փառա-
ւորեա զՈրդի քո Յով. 17. 1. Եւ մարգարէն ասէ յաւուր յայնմիկ
ծագեսցի Աստուած խորհրդովք և փառօք իւրով յերկիր Ես.
4. 2. Եւ Դաւիթ՝ ի դէմս Աստուծոյ հօր ասէ՝ եդեր՝ ի գլուխ
նորա պսակ՝ ի քարէ պատուականէ. և վասն որոյ ասէ՝ եղեցին
պսակ վայելչութեան՝ ի ձեռին տեառն, և թագ արքայութեան
՝ի ձեռին Աստուծոյ քոյ Ես. 52. 3. Այլ և մկրտութիւն անուա-
նէ, ըստայնմ մկրտութիւն մի ունիմ մկրտել, մինչ [illegible] զի կատա-
րեսցի. Նախ բաժակ ուրախութեան և բերկրութեան, որպէս
ասէ՝ բաժակ՝ ի ձեռին տեառն, գինի լի անապակ. արկեալ.

Այսոքիկ են որ ասէ՝ ելէք և տեսէք.

՝Ի սոյն համարս գլխոյն նոյն փեսայն գովէ զհարսն լինելն գեղեցիկ
անձամբ. այսինքն հոգւով և մարմնով, և ապա մինչ տեսանէ
զիւրաքանչիւր զանդամս նորին զարդարուն ամենակերպ առաքի-
նութեամբ, սկսանի կարգաւ գովանել զնոսա համեմատութ
այլ և այլ տեղեաց, և կամի այսու հաստատ մնալ. մինչև
յշարժիլ առաւելի զբաղձականն օրինին՝ և ՝ի ծաղել տարփ-
ջեան շնորհական օրինաց. կամ մինչ ՝ի փոփոխիլ ներքոյ կեն-
ցաղոյս, և զկնի կատարածի յարուցել յաւիտենականին, զայսուիկ
մինչև յեօթն համարսն. և անտի դարձեալ վերակրկնէ փեսայն
զգովեստ հարսին մինչև ցտասն և հինգ համարսն. Ապա ՝ի տասն
և վեց համարին խօսի հարսն, հրամայելով զի յարիցէ հիւսիս
և շնչեսցէ հարաւ ՝ի պարտէզ հոգւոյ իւրոյ, զի բուրեսցին
խունկք առաքինութեան նորին.

Փեսայն ընդ հարսն ասէ. Ահա ես գեղեցիկ մերձաւոր իմ, ահա ես գեղեցիկ.
աչք քո աղաւնոյ. Բայց ՝ի լռութենէդ քումմէ. Հեր քո իբրև հօտք
այծեաց որք երևեցան ի Գաղաադէ.

Որովհետև օրհնօքս պատմեցին հարսին՝ զգեղեցկութիւն
փեսային իւրոյ, և խօսեցան զգահոյից և զզօրաւորաց նորին.
և դարձեալ հրաւիրեցին զդստերս սիօնի ելանել և տեսանել
զպսակն սողոմոնի փեսայութեան իւրոյ. Եւ արդ՝ փեսայն գովէ զհարսն
կրկին գեղեցիկ անձամբ, այսինքն հոգւով և մարմնով գեղեցիկ.
ըստայնմ որ ասէ՝ զի պատուական իսկ եղեր առաջի իմ. փառա-
ւորեցար, և ես սիրեցի զքեզ Ես. 44. 4. և մերձաւոր ասէ՝
զի

digitised by A.R.A.R.@

զի մարմին փեսային Քրիստոսի է, և անդամք անդամոց նորա
Ա Կոր 12. 27. Ուստի գեղեցիկ և մերձաւոր կոչէ. Զորս
մեկնեցաք նախապէս. զի խորաքանչիւր զանդամսն գոլով բա-
րեաց զարդարուն տեսեալ գովաբանէ. և ապա երկոքին զաչսն,
այսինքն հոգւոյն և մարմնոյն, որք են ընդունակ լուսոյ և ընտրող
բարեաց և չարաց, գտակ և յօրինող ամենայն արուեստից. և
ուղղիչ ճանապարհին. որ եթէ ըստ հոգւոյն զայս ամենայն
ունիցի՝ աչք է եկեղեցւոյ հարսին. որպէս վարդապետք և վերա-
տեսուչք, յօրինելով զամենայն՝ զի ուշացուցանեն, և ուղիղ դի-
տաւորութեամբ առ Աստուած հայիլ տան. և զշնորհս հոգւոյն
սրբոյ առ յինքեանս բերել յորդորեն: Աղաւնւոյ գեղեցիկ են
աչք իբրու զփեսայն քո. որ գեղեցիկ է քան զամենայն որդիս մարդ-
կան. Նոյնպէս և գեղեցկութիւն հարսին՝ քան զզամենայն առա-
ւելէ, որպէս աստուածաբանն թէ՝ նա թէպէտ անծերա-
նալի էր հասակաւ, և անտրտում ուրախութեամբ. այլ եկեղեցի
եւս առաւել քան զնա. Զի Ադամ ձեռօքն Աստուծոյ արարաւ.
իսկ սա մարդեղութեամբն Քրիստոսի սրբեցաւ: Նա ՚ի մէջ
կենաց և մահու էր, և սա շնորհիւ աւազանին յանմահութիւն
գրեցաւ: Նա խոստմամբ ունէր զարքայութիւնն, և և մերձեալ՝
նմա խոստացեալ տեղին ընկալաւ: Նա ՚ի պատկեր Աստուծոյ
արարաւ, իսկ սա որդի Աստուծոյ և ժառանգակից Քրիստոսի
եղև: Աչք քո աղաւնոյ, ասէ. զի աղաւնին գեղեցիկ աչօք և
է շրջահայեաց կենդանի, և հեռաքրքիր թռչուն. զի նստեալ
՚ի վերայ ստորոյ ծառոյ, զպարանոց իւր շրջաբերէ յայս կոյս
այնկոյս թշնամեաց. առ ՚ի զգուշանալ աճապարաւոր թռչնոց յար-
ձակեաց և ՚ի բազէից. Աղաւնւոյ աղաւնոյ համեմատէ աչք
հարսին, զի ՚ի տեսութենէ ճանաչի այր, և ՚ի հանդիպմանց
երեսաց ճանաչի իմաստունն Սիր. 19. 26: Քանզի ուր սէրն
անդ է և աչքն. վասնորոյ ասէ Դաւիթ աչք իմ յամենայն ժամ
առ տէր են, և նա հանէ յորոգայթէ զոտս իմ: Ուստի ասէ ոմն ՚ի
սրբոյ վարդապետացն Աստուած որպէս հեռանելի լինի աչքն
որք զքեզ տեսանեն: Քանզի աչքն սրտիւք զԱստուած տեսա-
նեն: և այլ ոմն ասէ, հեշտալի է առ ՚ի տեսանել հանդէպ առ
՚ի յուներ և քաղցրէ առ ՚ի զմայլել: Բազմայանկութիւնք աղա-
ւնւոյն տես ՚ի զառաջնեկայն վէց գլխոյ. 8. համարին.



digitised by A.R.A.R.@

Բայց 'ի լուսաբերէ ծագէ: Տես զանգամանց շարժուածոյ և զաչաց հայեցուածոյն յայտնի գոլէ. Բայց զլռութիւն իմաստութեան որոշէ. զի զնա քան զնոսա կամի առաւել նախադասել. զի են բարի գործք զորս Աստուծոյ միայն է յայտնի, և 'ի մարդկանէ ծածուկ. և են որ Աստուծոյ և մարդոյ են յայտնի, որպէս Աննա առ-մռունչ հեղոյր զանձն իւր յառաջի Աստուծոյ, որոյ իղձն Աս-տուծոյ միայն էր յայտնի և 'ի մարդկանէ գաղտնի, վասնորոյ Հեղի արբեալ համարէր զնա: Նոյնպէս և Դաւիթ 'ի խորոց սրտին կարդայր առ տէր, և մաքսաւորն բաղխմամբ կրծոց բողոքէր. որոց Աստուած լսէր և տեսանէր, քանզի և հոգին սբ բա-րեխօս լինի 'ի հեծութիւնս անմռունչս Հռով. 8. 20: Հարցին յՍոկրատէս թէ՝ որով իւիք կարիցէ ոք հաճոյանալ Աստուծոյ. պատասխանեաց, եթէ արասցես բարի և խօսեսցիս սակաւ. Քանզի այր արդար է երկին, և լեզու նորա դուռն երկնից. վասնայնորիկ ոչ է պարտ բանալ առանց պատճառի. որպէս դրունք երկնից ոչ երբեք բացան թէպէտ դրամանալի սքանչե-լեաց: Որպէս ասէ Դաւիթ. զդրունս երկնից եբաց, և տե-ղեաց 'ի նոսա զմանանայ կերակուր Սղ: 57. 23. Ալ. 'ի մկր-տելն Յիսուսի, և 'ի քարկոծելն Ստեփաննոսի բացան երկինք. Ղկ. 3. 21. 7. 55: Ասէ պամփիլ թէ ոմն 'ի սրբոց այնքան լռութիւն պահէր յինքեան մինչ զի համի կոչ հաւատայիս. և եթէ խօսէր ընդ ումեք, որպէս թէ հրեշտակ խօսիլ վարկէին. որոյ պատահեցաւ միանգամ 'ի դատարկ բան ինչ անկանել եր-կարապէս բազում արտասուօք ապաշխարեաց: Քանզի և տէրն մեր այսպիսի լռութիւնն գովէ, և քան զամենայն առաքինութիւն նախադասէ. և ըստ փիլոնի եբրայեցւոյ, ձայնի մարդիք լսեն և խորհրդոց Աստուած: Բայց ներհակն առնէին փարիսեցիքն և կեղծաւորքն. որոյ մինն բարձրաձայն գոհանայր զԱստուծոյ, և միւսքն 'ի յանկիւնս հրապարակաց աղօթէին. և փող հարկա-նէին՝ բաշխելն զողորմութիւն յորոց գարշէր Աստուած: Վասնորոյ և փրկիչն հրամայէ պատուէր տայր. զի ... մտ-անէր 'ի գիտասցէ ձախ քո. և վասն աղօթից, թէ մուտ 'ի սե-նեակ սրտի քո. և փակեա զդրունս զգայարանաց քոց, և այնպէս կաց աղօթս. Այլ և լռութիւնն ամենայն ծածուկ և գաղտնի եղեալքն 'ի մարդկանէ. Որպէս Պօղոս դրուատէ և գովեսցէ



digitised by A.R.A.R.@

անճառելի ասէ, եթէ ոչէ պարտ մարդոյ խօսիլ. I Կոր. I2. 4: Նոյնպէս և յօհաննէս մինչ լուաւ զձայն եօթն որոտմանց, և կամէր գրել ասացաւ՝ մի գրել այլ ծածկել և կնքել: Նաև զերգս հարիւր քառասուն հազարացն որք երգէին առաջի աթոռոյն Աստուծոյ, ասէ ոչ ոք կարէ գիտել զերգս նոյա Յայտ. I0. 4: և I4. 3. Իսկ և եսայի մինչ ետես զտէր նստեալ յաթոռ բարձրութեան, խոկոյն աղաղակեաց նմա սերովբէ մի ունելեօք կայծիւ առ՚ի կնքել զբերան մարգարէին զի մի յանդգնագոյնս պատմիցէր որ ոչէր պատկան, և յայնմ ժամէ այլ ոչ ինչ խօսեցաւ զերկնային փառացն՝ վասն այնր ասէր խորհուրդ իմ ինձ և յիմոյն. Եսա. 25. 9. Նոյնպէս Պետրոս Յակոբոս և յօհաննէս զպայծառակերպութիւն փրկչին տեսեալ լռեցին և ոչ ումեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ Ղուկ. 9. 36: Իսկ և մարգարէութիւնք աստուածային ծածկեալ էին՝ ի դէմս հրէից. և ուշափ ընթերցման ոչ կարեն իմանալ մինչև դարձցին առ տէր 2 Կոր. 3. 14: Զի էլաւ որ գտանի խմատուն, և է ասելի որ լիրբ է առ՚ի խօսիլ. Սիր. 20. 5. Վասնայնորիկ և փիլիսոփայք եւ յարգի պահէին զլռութիւն. որպէս պիթագորաս՚ի լռութեան է սկիզբն առնէր յուսուցանել զաշակերտս. զի նոր եկելոյն յաշակերտութիւն հինգ ամ՚ի լռութե հրամայէր մնալ. և աթենացիքն սիրէին զկարճաբանութիւն, և զպատճառն հարցին արիստոտելի ասաց զի մերձէ լռութեան. Եղիայ և Յօհաննէս Մկրտիչն վասն լռութեան զլերինս և զ յանապատս ընտրեցին իւրեանց բնակարան, նմանապէս և ամենայն սուրբ հարք: Այլ իմաստուն զլռութիւն սիրէ, Առակ. I1. 12: Մաքսիմիոս զլռութիւնն կոչէ բարեգոյն. և առնելի իրաց անկասկած կայ: Զխորհրդակցաց պարսից թագաւորացն պատմեն թէ զգաղտնիս թագաւորին զարմանալի հաւատարմութեամբ պահէին, որ ոչ երկիւղիւ և ոչ յուսով զձայն ինչ ելուզանէն որով յայտնի գաղտնիքն: բայց մեք զայս փորձ տեսանեմք՚ի սարակինոսաց թագաւորութեան. որ զխորհրդականս իւրեանց եթէ՚ի մահ եւ մատնեն, քան ինչ յայտնել անհնարին լինի: Ցանկեա՛ զականջս քո փշովք. լեզուի չարայուզի մի լսեր. և բերանոյ քոյ արասցես դուռն և փականս. Սիր. 28. 28. Վասնորոյ փրկիչն ահեգեռակա՚ի փեսայութեան իւ-

րում

digitised by A.R.A.R.@

րում՝ առաջի քահանայապետին. եւ առաջի պիղատոսի դատա-
ւորին լուռ. եւ եթէ կայր լուռ կանխասացութեան Մարգարէին
թէ որպէս գառն առաջի կտրչի անմռունչ կայ Եսա. 64. 7.
Զի մի խափանեսցի զկամս Հօր. եւ մի լինիցի յամենայնում փրկութեան
մարդկան.

Վարսք քո իբրեւ զհօտս այծից՝ որք երեւեցան ՝ի Գաղաադէ.
Գաղաադ է անուն լերին միոյ. որ է յայնկոյս յորդանանու. ուր
Յակոբ եւ Լաբան կուտեցին քարինս եւ ուխտեցին միմեանց ուխտ.
եւ եդին զվկայութիւն, եւ կոչեաց զնա Յակոբ Գաղաադ, որ
թարգմանի կարկառ վկայ, եւ անտանօր լինի ուխտին առատ եւ
քարի. Ծնն. 31. 47. եւ առ այս նկատմամբ ասէ, իբրեւ
զհօտս այծից որք երեւեցան ՝ի Գաղաադէ. Զի Յակոբ նահա-
պետն անհամար բազմութիւն հօտից հօտից ոչխարաց եւ այծից եւ
անդէոց էանց գաղայադու, հանդերձ կտուկքն լաբանու. Նոյն-
պէս եւ վարսք հարսին եկեղեցւոյ իբրեւ զշօղս եղերանս սեա-
թոյր այծից. անհամար բազմութիւնք անհատակապ՝ ի յայլազգեաց
լեալ է իբրեւ գաղայադու յեկեղեցւոյ հրէից եւ հեթանոսաց.
ուխտեցեալ զյանձեան ՝ի վարս հարսին յեկեղեցւոյ. գլխոյն մե-
ծային Քրիստոսի. Որք էին յառաջ իբրու ձախակողման այծիք.
Որպէս ասէ՝ գաղայադ քաղաք որ առնէ ունայն, եւ խռովէ
զջուրս Ովս. 6. 8. եւ արդ եղեն յաջակողմեան ոչխարք. որք եր-
բեմն էին խաւար. եւ արդ լոյս են՝ ի տէր Եփ. 5. 8. Քարո-
զութեամբ առաքելոց, եւ մատակարարութեամբ հայրապետաց.
Քանզի սրբազանն Պօղոս զբանն ասացեալ ՝ի վերայ իւր առնու.
թէ այսպէս պատուիրեաց մեզ տէր. անհաւասիկ եդի զքեզ
յուխտ ազգի եւ ՝ի լոյս հեթանոսաց լինել փրկութիւն մինչեւ
՝ի ծագս երկրի Գործ. 13. 47. Եւ թէ վասնէ՞ր սեւութիւն դնէ
՝ի վարսան որակաւ այծից. ասեմ թէ՝ որպ՝ ի հայիլ յարեգակն,
դերազանց պայծառութիւն նորին՝ մայլ երեւի աչաց, կամ
որպէս յարեւու հայիլ ՝ի ձեռն, եւ կամ ՝ի սպիտակ իր ինչ: Զի
որպէս Առաքեալ ասէ, եւ ՝ի լոյս անմատոյց բնակի Ա Տիմ. 6. 18
Բայց Դաւիթ խաւար դնէ ՝ի նմա. ըստ այնմ եդ զխաւար ՝ի ծած-
կոյթ իւր. եւ թէ ամպ եւ մէգ շուրջ են զնովաւ Սղ. 17. 13.
եւ 96. 2. Քանզի մակեալ է արտաքուստ մերոյ իմաստից զի
որպէս զգալի աչք մեր՝ որքան մերձենայ ՝ի հուր այնքան նուա-
մանայ

digitised by A.R.A.R.@

մանայ տեսութիւն նորին, և լոյսն երբեք զխաւար երևի նմա։
Այսպէս և որքան յԱստուած մտածեսցի փոխանակ լուսաւո-
րելոյն մտացն նսեմանայ. և այն գերապայծառ լոյսն դառնայ՝ ի
խաւար և ՚ի մէգ անիմացութեան։ Ուստի աստուածաբանն ՚ի
գիրս աւուրցն ասէ՝ չառ. քեզ գիտելն թէ ծնաւ ծնօղն հայր,
ծնեալն որդի, և բղխեալն ՚ի նմանէ զհոգին սբ. և աւելին քան
զայս ամպոլ ծածկեսցաւ։ Համանմանորինակ և վասն հարսին գլխոյ՝
ոսկեն բազմութիւնք հաւատացելոցն Քրիստոսի, որք անձա-
ռելի փառօք զարդարին։ Զորս ակն ոչ ետես և ունկն ոչ
լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց, ըստ
առաքելոյն, և որպէս Սողոմոն ևս ասէ. ասէս անհաս պայծա-
ռութեան անճառելի զարդարանայն։ և թէ փայլէ՞ր մարդկա
փառս անուանք հաւանել. զի բազումք մի մարմին եմք ՚ի Քրիս-
տոս, այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք Հռմ. 12. 5։ և
թէ ընդ է՞ր հերաց համեմատէ զանձնայն սբս, զի և փոքրիկն մեր.
այնպէս անուանեալ ասելով այլ ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ
թուեալ է Մտթ. 10. 30։ Գլուխս առաքելոյնէ, ասէ ըն մեր.
և հեր գլխոյ նոյին առաքելաշաւիղ սբ. արքն, որք փառաւորեա
ճաճանչիւք ճառագայթին՝ իներկայութեան յաւուր փեսային։
Բայց յատկութիւնք վարուց այսինքն հերաց բազումք են, ոմ
թուէ սբ. վարդապետն մեր Գրիգոր տաթևացին. նախ զի աւե
փառք են կնոջ վարսքն։ Երկրորդ՝ ծածկոյթ է գլխոյն, Երրորդ՝
պատկառանմնէ գիմաց. Չորրորդ՝ պարկեշտութիւն երեսաց.
Հինգերորդ՝ որպէս մեռած է և անզգայ, Վեցերորդ՝ օծեալ
ոչ հեծանայ։ Եօթներորդ՝ անխնամ մնացեալ ոչ տրտմի.
Ութերորդ՝ այրեալ և կտրեալ ոչ ցաւի։ Իններորդ՝ ՚ի
խոնարհ իջանէ։ Տասներորդ՝ զի միշտ ՚ի յաճիլնէ. Այսքա
րաս իրին. և զայսոսիկ յատկութիւնքս են ՚ի կամարայս
փեսային, որք են փառք եկեղեցւոյ հարսին, և որք մե-
ռուցանեն զախտս մարմնոյ. և ՚ի գովելն ոչ հեշտանան,
և ՚ի պարսաւելն ոչ տրտմին. և վասն Քրիստոսի յարաժամ չար-
չարիլ՝ յանձն առնուն ոչ ցաւին և ոչ զգան. այնպէս միշտ ՚ի
խոնարհութեան մնան և հանապազ առաքինութեամբ աճին և
՚ի բարիս զարգանան, և են պարկեշտութիւնք սբ. եկեղեցւոյս.
[illegible]



digitised by A.R.A.R.@

Գեր՚ ներբողական ի յաւուր ուխտ ՚ի Նոյն

Որպէս յանգերում առն, զգեղեցկութիւն զեմաց Հարսին ծանոյց և զկերպս նորա, երբև զհօրանս այծից ներբողեաց. նոյնպէս և աստ՝ ի պարս նորին ատամանց ձեռնարկեաց. նմանեցուցանէ զատամունս Հարսին որպէս կտրոց հօտս մկրատի. որով ըղձ- բուրթ և զասր լուացեալ երամոց օդից կտրեն: Իսկ նմանութեամբ ուեալ ատամունք Հարսին եկեղեցւոյ առաքեալք, և վարդա- պետք, այգեւորք և վերատեսուչք, որք զերամս հաւատացելոց ՚ի յաղտոյ մեղաց լուացեալ մաքրեն շնորհիւ սբ̃ աւազանին, և զխեղս ակզբնական կտրեն յինքեանց և ՚ի բաց մերժեն: Նոյն- պէս և զինի լռանան խոստովանութեամբ, ապաշխարութեան ջրով արտասուաց, և մաքրեն ՚ի ներգործական մեղաց, որպէս զերամս օդից ուխտապահ և թեթեւացուցանեն ՚ի ծանրութեան բեռանց, և երկնաթռուիչս առնեն խրատիւք քարոզութեան, և զբանս սբ̃ գրոց ծամբելով ջամբեն նոցա. յաղագս վարդապետութ- եան որ ոչ զի ամենայն որ կամին կերել, որպէս ասէ բանին արդարութ- եանն՝ ողջոյն այլ կատարելոցն հաստատուն կերակուր Եբր. 5. 13. Քանզի խնայականութիւնն է բերան հոգւոյ, և ատա- մունքն են քննութիւն և խորհրդածութիւնք Ճշմարտութեան, որովք ըղ- ձշմարտութիւնն բացայայտի և Ճանաչի. այսպէս են ատամունք Հարսին:

Ա՚ Ն՚ Ե՚ Է՚ Ե՚ Ն՚ ներբողական ի յաւուր ուխտ ՚ի Նոյն

Երկրորդ ասէ, այդ ծնողաց որք զզոյգ զաւակս ծնանին նմա- նապէս և զհօտս հաւատացելոց որք յաստ և մաքուր են հոգւով և մարմնով, Հետևաբար և զօրծնականն. Զի առաքեալ կեանս քրիստոս որ զատեալ յամենայն զբաղմանց միայն բնութեան խնդրոյ Աստուծոյ. և զօրծնականն կեանն է, որ ՚ի զործ արդարութեան և ՚ի յօգուտ ընկերին միջոց պարապեցի. Այսպէս ատամունք առաքելոց, այլևս ոչքն յղանան զբանս բարիս և ծնանին ա- ռաքինութեանս, բնաւին յղացեալ երկնեցաք, և ծնաք զհոգի փրկութեան. Եսա. 26. 18. և Պօղոս ասէ՝ եղէ Աստուածոյ Հեթանոսաց հաւատովք և Ճշմարտութեամբ. ԱՏԻՄ 2. 7. և ապն Գաղատացւոց նամակին՝ ՚ի 2 գլխոյն պօղոսին, ասէ. մանկունք իմ զորս դարձեալ երկնեմ մինչև կերպարանեսցի Քրիստոս ՚ի ձեզ. և ոչ ոք ՚ի նոցանէ ամուլ է, և ամենեքին ազգակից. որոց մինն խորհեալ զբարիս

զբարիս իբրու յղացեալ ծնանի. և միւսն լինել որպէս կաթն, ուստի թորեցուցանէ զարտասուս. Վասնայսորիկ երկուորիկէն ասէ. Նախ զի ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ՝ ունին զկարս բարիս և զառաքինութիւնս Աստուածահաճոյս. Երկրորդ՝ ծնանին ՚ի հոգիս լուսաւորչին զշնորհս, և ապա այնու սնուցանեն զտկարացեալս. Երրորդ՝ ըստ ուղղափառ սբ. հաւատոյն ունին ևզգօնս և զհամբաւս գեղեցիկ վարուց. Չորրորդ՝ ունին զիմաստս հոգւոյն, և ըստ նմին զխոստովանութիւն փրկութեան հոգւոյ. Հինգերորդ՝ սրբեալք և մաքրեալք անաղարտ, կուսութեամբ և անմնական պարկեշտութեամբ ծնանին զորդիս Աստուծոյ զպաշտօնեայս սբ. եկեղեցւոյ, զքահանայս և զվարդապետս. Վեցերորդ՝ ծնանին ահիւ և երկիւղիւ զփրկութիւն հոգւոյ և մարմնոյ. Եօթներորդ՝ ծնանին զսէր առ Աստուած և զողորմութիւն առ մարդիկ. Վասնորոյ ասէ ամենեքեան երկուորիկ են, և անորդի ոչ գոյ ՚ի նոսա, որպէս սրբազան առաքեալն Պօղոս ասէ՝ ՚ի Յիսուս Քրիստոս աւետարանաւն ես ծնայ զձեզ.

I Կոր. 4. 15.

Իբրեւ լար կարմիր են շրթունք քո, և խօսք քո գեղեցիկ. իբրեւ կեղեւ նռան այտք քո, բաց ՚ի լռութենէդ քումմէ։

Որովհետեւ զմասունս անդամոց հարսին յառաջապէս գովել կամի, որպէս նախ զգեղեցկութիւն զիմացն, և ապա զվայելչութիւն վարսիցն, և զկնի զպարս ատամանց. և աստանօր զշրթունսն զխօսսն և զայտսն. Նախ զշրթունսն համեմատէ կարմիր լարի և լար անուամբ զզանազան թելս տայ իմանալ, յորմէ նիւթէ կամ որով գունով և իցէ. Զի է որ ՚ի պէսպէս թելից ոլորեալ շինեն լար՝ հաստ կամ բարակ ըստ հարկաւորութեան, և է որ շինեն ՚ի յաղեաց կամ ՚ի ջլաց կենդանեաց քարշեն ըստ պիտանացութեան. Իսկ արդ եթէ զշրթունս հարսին համեմատեմք այնպիսի լարի որ իցէ ՚ի բազմաց թելից զուգեալ, իմանամք այնու զշնորհն հանճարոյն, զխոհեմութիւնն, զիմաստութիւնն, և զգիտութիւնն որ հաւաքեալ ունի ՚ի միտս, և զառաքինութիւնն որ ժողովեալ է ՚ի հոգիս. և զբազմութիւնս հաւատացելոց որ սիրով հոգւոյն միաբանեալք անձն և սիրտ մի եղեալ, որպէս հարսն սբ. եկեղեցւոյ Գործ. 4. 32. Իսկ եթէ իմանամք զայն որ քարշեն ՚ի յաղեաց և շարեն ՚ի քնարս և ՚ի տաւիղս, զորս հարկանեն



digitised by A.R.A.R.@

մասամբ յորմէ ելանեն ձայն քաղցր, լսելեաց ախորժ. և ունկնդրողաց զմայլումն։ Որպէս էր քնարն Դաւթի, կոչեցեալն տասնաղի, որով հալածէր զչարոգին 'ի Սաւուղայ. և այսու օրհնէր զԱստուած, և գովաբանէր զնա ըստ այնմ տասնաղեան սաղմոսարանաւ 'ի ձայն օրհնութեան գովել. Սղ. 91. 2. Նմանապէս և շրթունք Հարսին կազմեալ 'ի մանիշոյ գործից լարից, երբ և լար բերանոյ՝ որով աղաղակէ առ տէր ասելով, տէր եթէ զշրթունս իմ բանաս բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո. Զի 'ի ներքուստ ի խորոց սրտի կազմէ զերգս օրհնութեան, և հալածէ զչարոգին 'ի մտաց. և սրտի մտօք յուսայ առ Աստուած և այնպէս աղօթէ, որով կապէ զանհերքելոյթ թշնամին։ Որպէս պատմի 'ի վարս սրբոց հարանց թէ մինչ ուրացողն Քրիստոսի Յուլիանոս գնայր 'ի պարսիկս, առաքեաց նա դև մի յարևմուտս բերել նմա փութով համբաւ ինչ անտի. և երթևեկեալ դևն 'ի տեղի ինչ յորում բնակեալ էր կրօնաւոր մի, որ էր սբ. Հայրն Պուպլիոս. որոյ աղօթիւքն կապեալ եղև դևն, և եկաց մնաց անդ անշարժ զաւուրս տասն և ոչ կարաց անցանել. և ոչ տայր թոյլ շարժիլ դիւաց, զի անդադար աղօթէր. ուստի դարձաւ դևն դատարկ, և նա եկեալ պատմեաց Յուլիանոսի, երբ և լուաւ զայս՝ բարկացաւ ուրացողն և ասաց եթէ դարձայց յետս խնդրեցից զվրէժ 'ի ծերոյն, և յետ երից աւուրց աղօթիւքն Բարսղի հարեալ 'ի Մերկուրէ զինաւորէ սատակեցաւ անիծեալն։ Ահա գեղեցիկ լար 'ի շրթանց աղօթից Հարսին։ Վասն որոյ ասէ առաքեալն կացից յաղօթս հոգւով. կացից յաղօթս և մտօք, Սաղմոս ասացից հոգւով, Սաղմոս ասացից և մտօք. I Կոր. I4. I5. և որպէս 'ի հարսանեաց տաճարին շարժիլն լարի թելիցն իբրու թէ ցնծան լարքն, նոյնպէս և 'ի յերգել բերանով զաղօթս՝ շարժին շրթունքն, ուստի ասէ Հարսն՝ ցնծասցեն շրթունք իմ յորժամ Սաղմոս ասիցեմ քեզ Սղ. 5. 32. Իսկ և 'ի շարժել լարին ամուսնին ձայնք նորին 'ի լսելիս բաղձմաց, և քաղցրուն եղանակին կաթեն 'ի միտս, և 'ի դէմս սիրելի Հարսին, ասէ. Մարգարէն ախորժեան շնորհք 'ի շրթանց քոց Սղ. 44. 3. Զի շրթունք արանց արդարոց կաթեն շնորհս, բերան ամբարշտաց կործանի Առ. I0. 32. և որպէս 'ի հարկանել տաճարին շարաբերի մի ձայն քաղցր և գեղեցիկ. նոյն և Հարսն կալով յաղօթս շարահիւսէ.

digitised by A.R.A.R.@

հիւսէ զձայն քաղցր օրհնաբանութեան, և խօսք գեղեցիկ սա-
ղօթից. քանզի սա է բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո.
և շրթունք իմ գովեսցեն զքեզ. Շրթամբ ցնծութեամբ օրհ-
նեսցէ զքեզ բերան իմ Սղ. 52. 4. 6. Վասնզի բոլոր Սողո-
մոնի խօսքն երգէ, և զպայծառ աղօթս սրբազանն Պօղոս սբ.
հաճոյ Աստուծոյ խօսքն պաշտօն անուանէ Հռմ. 12. 1.
Նոյնպէս և աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն որպէս մար-
գարտայիւ շարահիւսեալ է բոլոր բանքն. Նաև որպէս լարիւ
կապեն զտարրայրեալ և բաժանեալսն, նոյնպէս և հարսն լարիւ
աղօթից շրթանց իւրոց կապէ առ ինքն զփեսայն հոգւոյ. իսկ
և նա կապանօք սիրոյ իւրոյ զհարսն իւր ձգէ առ ինքն. Զի
հաստատուն շրթանց հարսին հաստատէ նմա. Ովս. 11. 4.
Առկ. 12. 14. Զի որպէս երկուց տարանջատ թելից մի-
աւորելով մի զօրութիւն ներգործել, և 'ի բազմաց լարից քնարաց
մի ձայն դաշնակաւորել, և որպէս 'ի յանձաւորին մարդ' և 'ի
միաւորութեան շրթանց մի աստուածահաճոյ օրհնութիւն կազմի,
այնպէս և 'ի տարանջատ աստուածային մարդկային բնութեանց,
և 'ի միաւորութեան մարդկային բնութեանց Որդւոյ հօրն Աստուած
կազմեալ միաւորեալ մի կատարեալ աստուածամարդկային
բնութիւն, որով փեսայն հոգւոյ կատարեաց զիւր սքանչելի
անօրէնութիւնս. Դարձեալ որպէս կարմիր լարիւ նշանի
այրեցեալ տան Ռախաբ սպասիսին, նոյնպէս և կարմիր արեամբ
փեսային հոգւոյ ապրեցաւ տուն հարսին եկեղեցւոյ. վասնորոյ
իւր և լար կարմիր արեան զի լար շրթանց հարսին կարմրացեալ է
արեամբ գառին, որպէս դրոշմեալս սեմից դրանց ուղղոյն
Իսրայէլի. Ել. 12. 7. Այլ և լարիւ կենդանի զմտածումն փա-
ռաց և չարչարանաց փեսային, որով կապին հաղորդեալքն ընդ
Աստուծոյ. և այն լինի մեզ չափ որով լուսաւորիմք և այսու
մտօք և բարբառ մեք մեր 'ի մեծ շնորհաւն զի կարմրութիւն
լարին ցուցանէ զբարբառումն սիրոյ նորին, որ է կին, արկանել
զգեստ 'ի յերկինս առաքեալ, հարսն ասէ շրթունք իմ ոչ ար-
գելցուն 'ի քեզ, Սղ. 39. 10. Այլ և զգուշացուցանէ սբ. հա-
ւատոյ մաքրութեան բանից և զխոստովանութիւն հեղմանց
արեան նորին նշանակէ. Իսկ որ 'ի ձայն քաղցր լարեաց և այն կա-
պեն յաղօթս, որով հրճուանս նորա զգեստաւորի. որպէս յա-
վաք

digitised by A.R.A.R.@

վար 3 նետիւ է հար զԱբեսողոմ զթշնամին դաւթի. Նոյնպէս
և տէրն մեր երեք նետիւք սր գրոյ էհար զխորհրդն իւր, և
հալածեաց զնա. Այնպէս և հարսն նետիւք աղօթից՝ ի լալ է
կամիր շրթանց իւրոց հարկանէ զբելիար. Որպէս արեամբ
ներկեալ խոստովանող վկայքն միշտ աղաղակեն և ասեն՝ մինչև
յե՞րբ տէր ոչ դատես՝ և ոչ խնդրես զվրէժ արեան մերոյ
Յայտ. 6. 9. Որպէս ասաց տէր ցկայէն. ձայն արեան եղ
բօր քո բողոքէ առ իս յերկրէ Ծնն. 4. 10. Բայց հեղումն
արեան փեսային հոգւոյ առաւել խօսի քան զԱբելին. Եբր.
12. 24. Վասնորոյ և ոսկ՚՚ ասէ ճաշակողաց մարմնոյ և արեան
տեառն ասէ թէ՝ որպէս առիւծ որ հուր շնչէ և բոյ մռնչայ
այնպէս ահարկու երևի դիւաց. Եւ եւս ասէ գեղեցիկ
խօսք հարսին նկեղեցւոյ է դաւանութիւն սր հաւատոյն. և
ճշմարիտ խոստովանութիւն բերանոյն. մանաւանդ վկայութիւն
մարտիրոսութեան. քանզի նա առաւել յառաջնորդէ յանմա-
թակ պտղատուին. և ամենայն ժամայ կատարելութիւն բարբա-
ռոյն. Վասնզի ասէ ... այտքն համեմատէ
կեղևոյ նռան որէ բոլորաձևամբ ամուր և պինդ. և համով դառն
և լի, և պտղաբերող պտղոյ և եղեալ բազմաճաշակ և բարե-
համ Հարսին իւրոյ. Նոյնպէս և այտքն. զի են նշանակ և
աւետաւոր ամօթոյ, և պահպանի բանից և խորհրդոյ. և ծածկոյթ
որպէս վարագոյր սրտամտաց. Զի որպէս կեղևն նռան ունի
զպտուղն թագնաւորաց, նոյնպէս և այտքն ունին զպարկեշտ բանս
և զհամեղ խօսս՝ ի ներ նոցանից. վասնայն ասէ՝ եդի պահապան
բերանոյ իմոյ, և դրունս ամուր շրթանց իմոց Սղ. 38. 2.
Տես և ՚ի վէց գլուխ 6 համարին. Բայց ՚ի ... զայս և
՚ի սոյն գլխոյ մեկ համարին մեկնեցաւ. Զի կամի ասել, թէ
լռութեամբ պահպանես և բարւոք կենցաղավարութեամբ վարիս.
քանզի ասէ հարսն ՚ի լռելն իմում անասցեն ինձ, և ՚ի բարբա-
ռելն ոչ եղեալ հայհոյեն զիս. և ՚ի խօսելն իմում առաւել
ամբաստանեն զինէ Սղ. 8. 12. Զի որ բերանոյ իւրոյ զգուշա-
և խօսելոյ իւրոյ զգուշութիւն ոչ դնէ, է որպէս քաղաք անպա-
րիսպ. որպէս գրէ և իմաստունն, թէ որպէս քաղաք կործա-
նեալ և անպարիսպ էսէ՝ նոյնպէս և այր որ ՚ի խօսիլն ոչ կարէ
արգելուլ զոգի իւր Առ. 25. 28. և վարդապետք ասեն՝
եթէ

digitised by A.R.A.R.@

եթէ ոչ զպարիսպն լռութեան ոչ ունի, քանզի զքաղաքն մտաց ընդդէմ ներքոյ թշնամւոյն. և մինչ արկանէ զբան արտաքոյ ինքեան բացեալ յայտնէ զինքն հակառակ որսողին.

Պարանոց քո իբրև աշտարակն Դաւթի. որ շինեալ է ՝ի Թալպիովթ. հազար վահանք կախեալ են ՝ի նմա և ամենայն նետք զօրաւորաց.

Թալպիովթ նշանակէ տեղւոյն, ուր շինեալ էր Դաւիթ զաշտարակ մի և յեցեալ զնա պատերազմական զինուք. և էր տեղին այս ՝ի վերայ լերին Սիոնի, որ էր ՝ի մէջ քաղաքին Երուսաղեմի ընդ հարաւակողմն, որոյ վերայ էր ամրոցն զոր էառ Դաւիթ ՝ի ձեռաց յեբուսացւոց, և շինեաց զնա և ելից զինուք առ ՝ի զար-հուրումն թշնամեաց. Արդ համեմատէ զպարանոց հարսին, զի պարանոցն է որպէս խարխախ գլխոյ, որոյ վերայ կայ հաստա-տուն գլուխ կենդանւոյ, յորում ամենայն երակունք շարեալ կան որպէս խողովակ արեան. և արդ եթէ առն ամենայնի գլուխ Քրիստոսէ I Կոր. II. 2. Ուրեմն և պարանոցն են առա-քեալքն ՝ի վերայ մարմնոյ եկեղեցւոյն, զի իբրև աշտարակ որդւոյն Դաւթի հզօրապէս կային ընդդէմ թշնամւոյն. և մարտեալք Քրիստոսիւ զինու յաղթեցին մարմնոյ, աշխարհի, սատանայի և մեղաց. և գերեցին զմիտս մարդկան, և կապուցին ծառայ ՝ի ներքոյ լծոյ աւետարանին Քրիստոսի. ըստ այնմ գերեմք ամե-նայն միտս ՝ի հնազանդութիւն Քրիստոսի, վասնզի հազարա-պետեմք խորհրդոց նորա 2 Կ. 10. 4. և որպէս պարանոցն է խարխախ գլխոյ, նմանապէս և առաքեալքն գլխոյն Քրիստոսի հարսին եկեղեցւոյ. զի և Յովհաննէս ՝ի գլխոյ ամենեցունց անկաւ զպարանոցաւ տեառն. Յով. 20. Զի որպէս պարանոցն յօդեալ է ՝ի գլուխ կենդանւոյն, նոյնպէս և առաքեալքն ՝ի Քրիս-տոս. ըստ այնմ ես ՝ի ձեզ և դուք յիս. և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ՝ի կատարած աշխարհի. Յով. 14. 20. Մատ. 28. 20. և որպէս երակունք պարանոցին են խո-ղովակք արեան, նոյնպէս և առաքեալքն խողովակք շնորհացն Քրիստոսի, զի ՝ի լրութենէ անտի նորա (ասէ) մեք ամենեքին առաք շնորհս Յով. I. 16. Այլև որպէս գլխաւոր օգուտ ՝ի մեզ երկնաստանիքեն, ըստ Թովմայ երկնաստան կենդանականերպից նոյնպէս և երկնաստան առաքեալքն ՝ի Քրիստոս, ըստ որում Գրիգորի Նարեկացւոյն որ ՝ի ճառս առաքելոյն ասէ, միայնում գլխոյն

digitised by A.R.A.R.@

գլխոյն Յիսուսի երկոտասան յօդուածք անդամոց. որպէս է՛ի սոյն գլուխ յուլն՝ պարանոց, երկաւորն՝ բազուկ և ուս. խեցգետինն՝ կուրծք, և ստամոքս. առիւծն սիրտ և փայծեղ, կոյսն՝ փոքրափոր. կշիռն՝ երիկամունք. կարիճն՝ ամորձիք. աղեղնաւորն՝ ազդրանք. այծեղջիւրն՝ ծունկք. ջրհոսն՝ սրունք. և ձուկն՝ ոտք. Այսպէս և մեք առաքեալքն՝ի Քրիստոս, զորս ամն ՝ի յամեքանից ոտանաւորելով շարադասէ.

Սբն Պետրոս է Յիսուսի պարանոց,
իսկ որոտմանն որդիք նմանեն ուսոյ.
Սբն անդրէաս այն առիւծուն գէտ կրծոյ,
Եւ փիլիպպոս սրտին որ քաջն անդամոց.
Բարդուղիմէ է փոքրափոր շափիւղայ,
գէտ երիկամ Թովմաս սիրոյն մերձակայ.
Սբն մատթէ զստին մաքրոյ նշան տայ,
յակոբ ալփեան բարձից բարձօղ կայանայ.
Մերն թաթէ է ծունկ կրկնօղ աղօթից.
սբն սիմոն գէտ անձնաբարձ սրունից,
Մատաթիաս հանրից բարձօղ ըստ ոտից.
որ զտեղի չար մատնողին նա ելից.

Դարձեալ և որպէս ամրոյն այն էառ Դաւիթ յեբուսայեցւոյ և շինեաց զայն և եղից պատերազմական զինուք առ՛ի զարհուրումն թշնամեաց. նոյնպէս և տէր մեր էառ յաշխարհէ զաշակերտս իւր, ընտրեաց՛ի նոցանէ զերկոտասանս, խրատելով զնոսա եղից զամենայն մարտական զինուք. տալով նոցա սուսեր զբանն Աստուծոյ, որով զնետս և զմուխս չարին շիջուսցեն. Եփես. 6. 16. Եբր. 4. 12. Այլ և որպէս Դաւիթ շինեաց աշտարակ ամրութիւն՝ի թշնամեաց. նոյնպէս և արքայն երկնաւոր զիւր զմարդս իբրև ամուր աշտարակ, զոր նախ խաբմամբ կորացաւ, բայց՛ի կանգնեաց խաչին Քրիստոսի դարձեալ վերստին կանգնեցաւ. Որով և հարսն սա եկեղեցի զօրացեալ մնայ մինչև յաւիտեան աներկիւղ՝ի թշնամեաց, և դրունք դժոխոց զնա ոչ կարեն յաղթահարել. այլ կայ և մնայ անպարտելի՛ի վերայ հիման առաքելոց և մարգարէից, որոյ գլուխ անկեան Յիսուս Քրիստոս. և որպէս գլուխ զրահաւորական օրինի եկեղեցւոյն երև Աստուծոյ, և պարանոց մարգարէքն. նոյնպէս և շնորհական

օրինաց

digitised by A.R.A.R.@

օրինակ եկեղեցւոյս պարանոց սրբազան առաքեալքն. և որպէս
կանխաւ մարգարէին ասաց թէ առ որս առաքեցի զքեզ երթի-
ցես. և ըստ ամենայնի զոր միանգամ պատուիրեցից քեզ խօսես-
ցիս. մի երկիցես յերեսաց նոցա զի ես ընդ քեզ եմ 'ի փրկել
զքեզ ասէ տէր։ Ահա կացուցի զքեզ այսօր 'ի վերայ ազգաց և
թագաւորութեանց, խլել և քակել, կործանել և յատակել, և
շինել և տնկել։ Ահաւասիկ ետու զքեզ այսօր իբրև զքաղաք
ամուր. և իբրև զսիւն երկաթի, և իբրև զպարիսպ պղնձի ամուր
ամենայն թագաւորաց հրէաստանի և իշխանաց նոցա և քա-
հանայից նոցա և ժողովրդեան երկրին, և մարտիցեն ընդ քեզ
և քեզ ինչ ոչ կարասցեն առնել. զի ես ընդ քեզ եմ 'ի փրկել զքեզ
ասէ տէր Ե. Ա. Ի. Դ. Այսպէս և առաքելոյն ասաց, զոր յայտ-
'ի սմա յաւխաւանէն. Բայց առաքեալքն առաւել յարգի եղեն
քան զմարգարէս. վասն որոյ սրբազանն Պօղոս զառաքեալսն նա-
խադասէ, և ապա զմարգարէսն, զի նոքա 'ի սուրբ երակն յօրի-
նում երևեցան. և սոքա 'ի Քրիստոսութեան փայլեցան. Զի մար-
գարէքն 'ի հրէաստան միայն առաքեցան. և առաքեալքն ընդ-
հանուր տիեզերս. Նոքա հրէից միայն քարոզեցին. և առաքեալքն
հրէից և հեթանոսաց. Նոքա զԱստուծոյ միութիւնն ծանուցին.
սոքա զանուն ամենասուրբ Երրորդութեան հրատարակեցին. Նոքա
'ի ստուերաստանէ նշմարէին զխորհուրդն. և սոքա ականատեսք ե-
ղեն. Նոքա հաւատարիմ գտան 'ի վերայ տանն Աստուծոյ. սոքա
հաղորդակիցք եղեն խորհրդոյն Աստուծոյ. Զի եթէ Մովսէս եղև
'ի սինայ ընդ Աստուծոյ ամիսօք. իսկ և Պետրոս, Յակոբոս և
Յովհաննէս 'ի թաբօր ընդ բանին Աստուծոյ պայծառ լուսով.
Մովսէս ետես զհետս ոտից Աստուծոյ 'ի վերայ ապառաժա-
քարի գայլի. և առաքեալքն տեսին զբանն 'ի մարմնի. Եղիայ կո-
տորեաց զմարգարէսն բահաղու. և Պետրոս ընդ առաքելոյն
պատժեաց զԱնանիայ և զՍափիրայ, և զՍիմոն կախարդն. Եղիա
և Եղիսէ ոս յարուցին զմեռեալ պատանիսն. և առաքեալքն զբա-
զումս, որպէս Պետրոս զտաբիթայ այծեմնիկն, և Պօղոս զերի-
տասարդն անկեալ 'ի դստիկոնէն. Եղիսէոս սրբեաց զՆէեման
ասորի 'ի բորոտութենէ ջրովն յորդանանու, և առաքեալքն հի-
ւանդաց և քրտամբ իւրեանց բժշկէին զամենայն ախտս ...
Եղիաս կոչեաց զհուր Աստուծոյ. Դանիէլ ... և
առաքեալքն

Մեկնութիւն երգ երգոց առաւօտեան ժամուն Սաղմոսին. Գլուխ 4. Համար 4.

Առաքեալքն կոչեցան մայր և եղբայր և քոյր բանին Աստուծոյ. Եղիա հրեղէն կառօք վերացաւ յերկինս. և Պօղոս հոգւով յափշտակեցաւ յերրորդ՝ յերկինս, և լուաւ զբանս անճառս. Եղիա փախեաւ յեզաբելայ. և Պօղոս զերծաւ ՚ի ձեռաց ազգապետին արետայ արքայի. եւս զոր նստեալ յաթոռ բարձրութեան. Նմա ասէ եւս և Յովհաննէս Երեմիայի առաջ Աստուծոյ, մինչչև ստեղծանէի զքեզ՝ գիտեմ զքեզ, և մինչչև ելեալ էիր յարգանդէ սրբեցի զքեզ. և Պօղոս ասէ նախ քան զլինելն աշխարհի ընտրեաց զմեզ լինել սուրբ և անարատ. Յովհաննէս Մարգարէի նաւավարքն թափեցին զկարաւին ՚ի ծով. և Պօղոս առաքեալն զերկու հարիւր եօթանասուն և վեց հոգիս զերծոյց ՚ի ծովէ. Դարձեալ զերծաւ ՚ի գբոյ առիւծուց. և առաքեալքն ՚ի բանտէն հերովդեսի. և զայլսն ոչ խմաստասիրեմ. ահա այսպէս սոքա եղեն մայր և աշտարակ մերոյն դաւթի՝ շինեալ ՚ի թալպիօթ յաշխարհի, լցեալ պատերազմական վահանօք, վասն աշխարհի մարմնոյ և հոգւոյ. Դարձեալ աշտարակ փեսային հոգւոյ կենարար սէր նախանձ, մածեալ եռով արեամբ կանգնեցաւ ՚ի մէջ եկեղեցւոյ պարհուրեցուցիչ դիւաց, առոր հոգւոյ աչօք նկատելով Մարգարէն Դաւիթ ասէր աշտարակ հզօր եղեր երեսաց թշնամւոյն Սղ. 55. 4. Այլ աշտարակ սմին, պարանոց հարսին եկեղեցւոյ եղեն առաքելաշաւիղ սէր հայրապետացն, որք հաստատեալք ՚ի վերայ մաքուր և ուղղափառ սէր հաւատոյն Քրիստոսի լերին սիօնի. և պատերազմեալք յաղթեցին զթշնամիս եկեղեցւոյ, և ՚ի սոր կանգնեցին զնոսա չար հերձուածողաց, և մաքրեցին զորոմն առաքելականին յորենոյ. Հազար վահան կախեալ ՚ի նմա և ամենայն նետք զօրաւորաց. Թէպէտ հազարն էական բազմաձայն թուոյ որով նշանակի տասն հարիւրն, այլ ՚ի սբ գիրս ՚ի բազում տեղիս դնի փոխանակ բազում հարիւրոյ և հազարաց կամ անորոշ բազմութեան և էյսէ, որպէս աստանօր հազար վահան կախեալ ասէ, այսինքն անհամար, բազում. որպէս եկեղեցին սբ ունի ամրոց և աշտարակ զսբ գիրս լծեալ ՚ի հոգւոյն սրբոյ, յորում պարունակին բազմութիւնք անհամար զինուց վահանաց, և նետք մնեալ կայծակամբ կազմեալ, որպէս վրկէջն հոգւոյ մերոյ ՚ի բեռան փորձութեան. խօսք ՚ի դիմաց հարսին եկեղեցւոյ երեք նետաւք սբ գրոյ էհար զթշնամին և ՚ի բաց վանեաց. Սատան

և

digitised by A.R.A.R.@

և մեք ուսանիմք այնպէս առնել: Քանզի և Դաւիթ հինգ
քարիւ եւ ընդդէմ այլազգւոյն ասելով, դու գաս 'ի վերայ իմ
սրով և գեղարդեամբ և ասպարաւ, և ես գամ 'ի վերայ քո
անուամբ տեառն զօրութեանց. I Թագ. I7. 45: Որով եհար
զայլազգին և սատակեաց զնա. և եբարձ զնախատինս իսրայելի:
Նոյնպէս և եկեղեցի մեր յարաժամ ունի պատրաստի զհինգ
քարինս որով կեայ և մնայ, և այնու հալածէ զթշնամին բնութե.
և հաշտի ընդ փեսային հոգւոյ, նախ զաղօթն յարաժամ, որոյ
վասն ասէ՝ արթուն կացէք և աղօթս արարէք զի մի անկանիցիք
'ի փորձութիւն: Երկրորդ՝ զբարեխօսութիւնս սրբոց, որպէս
բարեկամացն յոբայ ասաց, երթայք առ ծառայն իմ յոբ և նա
աղօթս արասցէ վասն ձեր, զի թէ ոչ ակն առեալ էր իմ նմա
կորուսեալ էր իմ զձեզ Յոբ. 42. 8: Մանաւանդ զի մեք
փորձ առին զամենակերպ ձախորդութեան աշխարհիս վասնորոյ
և փորձանաւորաց օգնել կարեն: Որպէս Մովսէս ասաց առ տէր
թող զմեղս ժողովրդեան քոյ ըստ մեծի ողորմութեան քում.
որպէս ներեցեր դոցա յեգիպտոսէ մինչև ցայժմ. և ասէ տէր
ներեցի դոցա ըստ բանի քում Թւոց. I4. I9: Երրորդ՝ զխոս-
տովանութիւն և զյաճախ հաղորդութիւն: Զի մինչ 'ի խոս-
տովանութեան բացայայտեմք զբոլոր սիրտս և զխղճմտանս մեր,
յայնժամ կատարելի զօրութիւն սատանայի. զի որպէս օձք, և
թունաւոր կարիճք, գորտունք, և երկրային ճճիկք, որք թա-
գուցանեն զինքեանս 'ի ներքոյ քարանց, և 'ի վերացուցանել
զքարինս իսկոյն փախչին, նոյնպէս և հնագոյն օձն սատանայ
փախչի և կորնչի 'ի յայտնել գործոյն առաջի խոստովանահօր:
և 'ի յաճախ հաղորդութենէ զարհուրի և դողայ. որպէս 'ի զրա-
հաւորեալ զինուորէ, զի ճաշակօղք մարմնոյ և արեանն Քրիս-
տոսի, աստուածանան շնորհիւ, և ընդ աստեղծողին միանան, զի
որ մերձենայ 'ի տէր մի հոգի է, զի ընդ լուսոյն կենայ լուսն
ճաշակօղն հաղորդութեան, այսինքն ընդ Քրիստոսի՝ որ է ճա-
ռագայթ փառաց. զի անձնաւոր փառք է հայր. որոյ անձնա-
ւոր ճառագայթ է որդի. և որ ուտէ 'ի մարմնոյ որդւոյն Աստու-
ծոյ, և ըմպէ յարենէ նորին, լինի անշփոթաբար շնորհական
խառնմամբ առ յոյսն Քրիստոս: Չորրորդ՝ փախչիլ յառիթէ
մեղաց հարկաւորէ, զի Դաւիթ եթէ ոչ փախէր 'ի կին ոչ շնայր
և

և Սողոմոն պատճառաւ այլասեռ կնոջ անկաւ ՚ի կռապաշտութիւն. Նմանապէս և Սամսոն անհոգ ննջեալ ՚ի ծոց դալիլայ պոռնկին, և մատնեցաւ փղշտացւոց։ Հինգերորդ, ընդ իմանալ խոկման մեղաց, խրատէ զմեզ իմաստունն թէ յիշեա զվախճան քո, և յաւիտեան ոչ մեղանչես, զի յիշատակ մահուան և դժոխոյ, և դատաստանին զարհուրեցուցանէ զմարդ և ոչ թողու մեղանչել մարդոյ բնաւ։

Երկու ստինք քո իբրև երկու ուլս երինջս որ արածին ՚ի շուշանս։

Ստինք մարդոյ ոչէն որպէս զայլ անդամս, այլ իբրև բոյսք և տունկք ՚ի յերկրէ բուսեալք ՚ի սրտին յորմանոյ ելեալք յառաջ գան. իսկ և ստինք հարսին՝ հոգի և մարմին նորին իմանամք. քանզի երկուս առէ և հաճասար, որք ՚ի միասին ստեղծան Աստուծոյ, իմանալի և տեսանելի։ Վասն զի որպէս այծեամնէ արագ ՚ի յընթանալն, և սուր ՚ի տեսանելն, նոյնպէս և միտք մարդոյ՝ փոյթ շարժի. և երագ հասանի, և իբրև զամենայն տեղիս տեսանէ։ Բայց զյատկութիւնս այծեման տես յերկու գլխոյ 9 համարին. Ուլ անուանէ որպէս թէ ինքն այծեամ, և ստինք ուր ուլք ուրեանց. քանզի սնեալ պատուիրանապահութեամբ, և կենի լուացեալ աւազանաւ՝ վերստին պայծառացաւ։ Դարձեալ սնանայ ՚ի չարն հակելոյն և պայծառանայ վաղվաղակի ուղղելոյն։ Որ արածին ՚ի շուշանս. այսինքն ՚ի յաստուածաշունչ սբ գիրս, և ՚ի սբ յաւետարանս՝ իմաստեանս առաքելոց և մարգարէից, և ՚ի լուսաւոր պատուիրանս փեսային հոգւոյ զորս յորապէս խորհելով շուշանապէս պայծառանայ. Այլ և երկու ստինք հարսին՝ բնական և գրաւորական օրէնքն, իսկ շուշանն՝ աւետարանականն. յորում այժմ արածին ՚ի հրէից և ՚ի հեթանոսաց հաւատացեալքն։ Նաև երկու ստինք, սէրն որ ՚ի սրտէ յառաջ գայ, որ է սիրել զԱստուած վասն ինքեան. և սիրել զընկերն վասն Աստուծոյ։ Դարձեալ երկու ստինք որք յառաջ գան ՚ի սիրոյ սրտին հաւատն և յոյսն, որք նախապէս էին սեաւ ուլ, զի ՚ի յանհաւատութեան կէային, և յոյս երբէք ոչ ունէին, զի ոչ հաւատային հեթանոսք. և ոչ յուսային հրեայք եթէ արածին ՚ի շուշանս արքայութեան երկնից. որպէս հաւատացեալք այժմ հաւատան և յուսան, զի արածին ՚ի շուշանս յաւետարանական վարդապետութեանն։ Դարձեալ երկու ստինք հարսին եկեղե-

ցւոյ

digitised by A.R.A.R.@

յոյ առաքեալք, և Մարգարէք որք ջամբեցին ուղղոյ սեղանն զկաթն առաքելական և Մարգարէական վարդապետութեան. որք եղեն իբրև զայծեամն սրատես մտօք՝ և հոգւոյ՝ աչօք. զի առաքեալքն մարմնաւոր աչօք տեսին զմարմնացեալ բանն Աստուած. ըստորում վկայէ սիրելի աշակերտն նորին, թէ՝ ի սկզբանէ զորմէ լուաք, որում ականատես իսկ եղաք, և ձեռք մեր շօշափեցին՝ ի վերայ բանին կենաց I Յօհ. I. I. Նոյնպէս և մարգարէքն՝ ի հեռաստանէ տեսեալ վկայեցին. ըստ այնմ. տեսաք մեք զնա և ոչ գոյր նորա տեսիլ և ոչ գեղեցկութիւն Եսայ. 53. 2. Դարձեալ երկու ստեանք իմանամք զօրէնս և զմարգարէս, որք իբրև զդաստիարակ հովիւս՝ ի մէջ շուշանոյ հովուէին զիսրայէլ. այսինքն՝ ինէր մարմնաւոր պարգևաց, առանց յուսոյ յարութեան. իսկ յորժամ լցան ողորմութեան ժամեայ յաշխարհի, յայնժամ ստուերք օրինացն շարժեցան առ ճշմարտութիւնն. ունելով զերս խորհրդոյն. որպէս ասէ. շարժեաց զերկիր. այսինքն զկուռսն. զորս օրինօքն Մովսեսի շարժեաց. Իսկ միւսանգամ շարժեցից ասէ. զայս բանիւ իմա զի զօրէնսն շարժելոցեր՝ ի յաւետարանն. զի հաստատուն կացցեն անշարժքն. ըստ Պօղոսի Եբր. 12. 26.

Մինչև տիւ ծագեսցէ և ստուերք շարժեսցին, գնացից ես առ ինքեան՝ ի լեառն զմռսոյ և ի բլուր կնդրկի.

Զի՝ ի հնումն իսրայելացիք արածէին՝ ի շուշանս մովսիսական օրինաց՝ ի մարգարէական գիրս, մինչև տիւ նոր օրինացս ծագեսցէ՝ և արեգակն Քրիստոս՝ ի յերկիր երևեսցէ. որ ասաց ես լոյս աշխարհի եկի. և թէ՝ ես եմ լոյս աշխարհի. Յայնժամ շարժեցան ստուերք հին օրինացն. Ըստ իմաստնոյն թէ՝ անցին այն ամէն իբրև զստուեր, և իբրև զհամբաւ առն ընթացեալ. Իմաս. 5. 9. Յայնժամ փեսայն հոգւոյ՝ ի տունէ՝ ի տաճարին ուսուցանէր և զգիշերն ելեալ ագանէր՝ ի լերինն որ կոչիւր Ձիթենեաց. և անդ աղօթէր. Ղուկ. 21. 37. Այլ և պատմեն սրբազան աւետարանիչքն, թէ՝ ել՝ ի լեառն և նստաւ, և բացեալ զբերան իւր ուսուցանէր և ասէր, երանի աղքատաց հոգւով. Մատ. 5. I. Իսկ ես ընդ Պետրոսի, ընդ յակոբայ և ընդ Յովհաննու գնաց՝ ի լեառն մի բարձր, յորում երևեցան Մովսէս և Եղիա փառօք որք խօսէին զելից նորա զոր կատարելոց էր յերուսաղէմ

Ղուկ. Թ.

digitised by A.R.A.R.@

Ղուկ. 9. 29. և զկնի որպէս նախ առանձին գնայ 'ի լեառն փորձութեան, ուր քաջապէս յաղթեաց փորձողին, և հոտով կնդրկի աստուածութեանն փախոյց զօձն դժոխական: Նոյնպէս և առանձին գնայ 'ի գողգոթայ 'ի լեառն զմռսոյ դառնագոյն չարչարանաց, և մեռելութեամբ 'ի գերեզման, որպէս 'ի բլուր կնդրկի: Զորմէ ասէ թէ՝ և ինքն 'ի գերեզմանս գնայ, և 'ի տապանի տքնեցաւ, և քաղցրացան նմա խիճք հեղեղատի, և զհետ նորա ամենայն մարդ գնասցէ Յոբ. 21. 32. և որ ասէ գնացից ես առանձին զի կամի բարեպէս ծանուցանել թէ՝ ես միայն յան-մարմնոյ զգեցայց զմարմին մահկանացու, որով զմուռն տայ նշա-նակ. և իբրև զկնդրուկ՝ անուշահոտ գործով. որ պահեցի զնա յորոգայթէ թշնամւոյն: Ըստ որում և 'ի յիմոյ մարմնոյս անապա-կանութեամբ ծանեայ զհարսն իմ զգեղեցիկ և առանց արատոյ: և 'ի վերայ նոցա ես սրբ առնեմ զանձն իմ Յոհ. 17. 19. և ես դնեմ զանձն իմ, զի միւսանգամ առից զնա. և իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա. զայս պատուէր առի 'ի հօրէ իմմէ. Յոհ. 10. 17. Մինչև տիւն ծագեսցի. տուընջեան և ստուերի մեկնութիւնն տես 'ի յերկրորդ՝ գլխոյ 17 համարէն: Բայց աստանօր վերստին տուընջեամբ իմանամք զերկրորդ՝ գալուստ փեսային հոգւոյ յաշխարհ. Որպէս և ինքն ասէ՝ յայնժամ երև-եսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս. Մատ. 24. 30. Զի յայն-ժամն ըկայ կենդանւոյ հանգոյն գիշերոյ, և նման ստուերի շարժի, յայնժամ փեսայն հոգւոյ նստեալ ընդ աջմէ զօրութեանն Աս-տուծոյ ընդ ամպս երկնից որպէս 'ի լերին զմռսոյ, և 'ի բլուր կնդրկի. գայ 'ի դատել զարարածս. զորս այժմ իբրև 'զերկուս ուլս այծեմանց, այսինքն հոգւով և մարմնով արածին 'ի շուշանս, այսինքն 'ի սրբ գիրս, և 'ի հովիտս սրբ եկեղեցւոյ: Յայնժամ ե-կեալ կայուցանէ զօդիս յաջմէ. և զայծիս 'ի ձախմէ, միոյն ասէ եկայք օրհնեալք: և միւսոյն թէ՝ երթայք անիծեալք: և այս ինքն ընդ հարսնացելոյ իւրոյ եղանէ 'ի փառս արքայութեան: Բայց եթէ հարցանէ ոք թէ ընդէ՞ր զորդիս սիոնի զարդարս և 'զ մեղաւորս միապէս ուլ անուանէ, ասելի թէ՝ զի որպէս ծնունդք այծեաց ուլ անուանին, որք են ձագք սեաւ այծեաց նոյնպէս և ծնունդք ադամեան տոհմին, սկզբնական աներգո-ծական մեղօք զառածելոյ, երկրածին զորդիս մարդկան ու-



digitised by A.R.A.R.@

օրինակի. վասնզի ոչ ոքէ 'ի յերկրածնաց սուրբ 'ի յաղտոյ մեղաց. թէ և 'ի միոյ աւուր իցէ կեանք նորա. և ոչ ոք կարէ պարծիլ թէ զսիրտ սուրբ ունիցի. և ոչ ոք կարէ համարձակիլ թէ սուրբ իցէ 'ի մեղաց. Յոբ. 13. 4. Առակ. 20. 9. Մանաւանդ չև ևս է յայտ փրկելոցն մինչև ցելս շնչոյ նոցին.

Ամենևին գեղեցիկ ես մերձաւոր իմ և արատ ինչ ոչ գոյ 'ի քեզ.

Զի փեսայն երկնաւոր գնալով 'ի լեառն զմռսոյ և 'ի բլուր կնդրկի, այնքան գեղեցկացոյց զհարսն իւր, մինչ զի ոչ մնաց 'ի նմա արատ ինչ. իսկ և հարսն հետևելով փեսային իւրոյ, ոչ կամի ստութեամբ հաճոյանալ նմա, և ոչ ունայն գեղով կամի սիրիլ 'ի նմանէ, զի ոչ որպէս Դեմաս որ եթող զՊօղոս՝ և սիրեաց զաշխարհ I Տիմ. 4. 9. և ոչ որպէս յիմար կուսանքն թարց իւղոյ և շիջեալ լապտերօք ցանկայ լինել ընդ փեսային. այլ հաստատ յուսով, զուարթ երեսօք, հաճելի դիմօք, համեստ գնացիւք, և շնորհալի բանիւք, մերձենայ առ նա, քանզի նոյն սրբեամբ մաքրեցաւ, վասնզի կցորդ եղև չարչարանացն, և հաղորդ գտաւ փառացն Հռմ. 8. 17. Ասաց 'ի լուաւ թէ սուտ հաճութիւն և ունայն գեղ կնոջ ոչ գոյ 'ի քեզ. Առակ. 31 30. Որով հարսնացեալ Քրիստոսի փեսային յորդորմամբ օրինօք առաքելոյն. որք խնդրեցին երկնաւոր արքային աղջկունք կուսք և գեղեցիկ տեսլեամբ, Եսթ. 2. 2. և որպէս հոգեփեսնէտ զարմացեալ գեղեցկութեանն յուդիթայ. և ասաց՝ ոչ կին գեղեցիկ համեմատ սմա 'ի ծագաց յերկրի, մինչև 'ի ծագս, իմաստուն բանիւք, և գեղեցկութեամբ երեսաց իւրոց, Յուդիթ. 11. 19.

Նոյնպէս և Սողոմոն 'ի դիմաց փեսային գովէ զհարսն ասելով. և արատ ինչ ոչ գոյ 'ի քեզ. զի և Կիպրիանոս ասէ թէ՝ քան զգեղեցկութիւն կուսութեան ոչ կարէ համարիլ այլ ծնծագոյն գեղեցկութիւն, որ սիրի 'ի թագաւորէ, ընտրի 'ի դատաւորէ, ընծայի 'ի տեառնէ, պահպանի յԱստուծոյ միշտ հարսն, և միշտ անգիտակ առն. և այլ ոմն ասէ 'ի մարմնի թարց մարմնոյ կեալ հրեշտակային է, և ոչ մարդկային. Օհան Դամասկացին ասէ. ժուժկալելն 'ի հարսանեաց և յամուսնութեանց հետևումն է հրեշտակաց. Կոյս ոմն հալածեցեալ 'ի դեկոս կայսերէ, զոր նախապէս նշանեցեալ էր առն հեթանոսի, և նա աղաչեաց զոմն բարեկամ զի համոզիցէ զկոյսն առ 'ի հարսնանալ նմա

զի

digitised by A.R.A.R.@

քանզի ոչ հաճէր կոյսն. որ երթեալ աւետարանեաց լուր ինձ ար-
բունքի կոյս, և ես քրիստոնեայեմ, և գիտեմ զի Աստուած
զհարսանիս ոչ դատապարտէ, զի Մարգարէք և նահապետք
ունէին զամուսինս, և յետնոյսք նոյնս օրհնեցան յԱստուծոյ,
այժմ լուր ինձ, և տուր զայն որ զքեզ ոչ մատնէ թէ քրիստո-
նեայես, այլ ամուսնական շաղկապաւ մուտ առնա զի և ինքն
քրիստոնէից հաւանիցի. պատասխանեաց կոյսն ասելով. լուր ինձ
յաղթեալ զաւտանայ, և լէր ճշմարիտ քրիստոնեայ, զի յորժամ
բոլոր երկիրն էր դատարկ և ունայն, յայնժամ ասաց Աստուած
մարդոյս, աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր. Այժմ լցեալ
երկիր. զինչ որոյ մինչ որդին Աստուծոյ էր յերկնից հանա-
պազ աղաղակէ, աճեցէք 'ի հաւատով, բազմացարուք սիրով և
լցէք զերկինս, զի մերձեալ է արքայութիւնն երկնից. Այսպէս
և հարսն սբ եկեղեցի զամենայն հեշտութիւն և նեղութիւն և
փորձութիւն մերժելով յինքենէ գեղեցկանայ, և փեսային իւրոյ
հաճոյանայ, ուստի լսէ թէ ամենևին գեղեցիկ ես, և արատ ինչ
ոչ գոյ 'ի քեզ: Զի որպ արքայածինք միշտ գեղեցիկ լինին սակս
փափկակեցութեան, և ազնիւ խորտկաց ճաշակմանն, նոյնպէս և
հարսն եկեղեցի փափկութեամբ սնաւ. զի 'ի մաքուր յարգանդէ
սրբոյ աւազանին ծնաւ. և շրջեալ կողին Քրիստոսի լուսայեալ
մաքրեցաւ. 'ի մարմնոյ և յարենէ կենարարին ճաշակմամբ զար-
դարեցաւ. Որով և հօրն երկնաւորի որդեգիր անուանեցաւ, որոյ
աղագաւ գեղեցկացաւ. Զի և ունի զթագուհին երկնից դաս-
տիարակ ինքեան, որոյ գեղեցկութեան համեմատ ոչ գտանի. զի
ասեն բնագէտք թէ 'ի կորս ծնեալ այնպէս ազնիւ Մարգարիտ
գտանի որ միայնակ լինի և եզական. նոյնպէս և եկեղեցի սբ
մաքուր և անարատ գեղեցիկ, լուսափայլ հաւատով պայծառ Մար-
գարիտ 'ի ծոցս աշխարհիս, բայց որ բուն հի կոյսն Մարիամ, որ է
ծայրագոյն մասն եկեղեցւոյն Քրիստոսի. զորմէ ասեն ջերմե-
ռանդք նորին, թէ 'ի մէջ արանց միմիայն Քրիստոս փեսայն
հոգւոյ. և 'ի մէջ կանանց միմիայն մայր նորին որ է ճշմարիտ
անհամեմատ Մարգարիտ, որ զգեղեցկութեամբ պայծառութ[եան]
նորա և 'ի վերայ տարափոյ նորա պակնոյցս սիրտ Սէ.
43. 2. Քանզի ամենայն առաքինութեանց հիմն է խոնար-
հութիւնն, որով աճեցեալ և զարգացեալ անձն ոչ կարէ ունել
զբին

digitised by A.R.A.R.@

զբոյծ ինչ որպէս և որբուհի կոյան այնքան խնամարհեցաւ մինչ զի աղախին զինքն անուանեաց զի ճարտարապետ եղև նմա հայր, որդի, և հոգի սուրբ։

Եկ ի Լիբանանէ հարսն, եկ ի Լիբանանէ, եկեսցես և անցցես. ի հաւատոյ, ի գլխոյ Սանիրայ և Հերմոնի. ի մորեաց առիւծուց և ի լերանց ընձուց.

Լիբանան է լեառն բարձր, և ջրաւէտ տեղի, և ունի ջրհոր կենդանի ջրոյ, և յարմատոյ նորին բղխին յուժգնութեամբ երկու գեղեցիկ աղբիւրք. որոյ միոյն կոչի Յոր, և միւսն դան, որք միաւորեալ եղանին գետ մեծ, որ ասի Յորդանան, յորում մկրտեցաւ փեսայն Հոգւոյ։ Նաև գտանին անդ ծառք խնկաբերք, և լինի բազում անուշահոտ ծաղիկ և խոտ, զի է պարարտ տեղի. օդն գեղեցիկ և առողջարար, է առատ ցօղով և անձրևով, և է գեղեցիկ և վայելուչ տեղի, և անդ գտանին կասիական ծաղիկք օգտաւէտ բժշկութեան։ Նոյնպէս և եկեղեցիս հաւատացելոյն Քրիստոսի, փառօք և պատուօք բարձր է քան զԼիբանան, և քան զամենայն եկեղեցիս որք են յերկրի, և է ջրաւէտ, զի ունի զկենդանի ջուր զշնորհս Հոգւոյն սրբոյ. և յարմատոյ սորին բղխին երկու գերազնիւ աղբիւրք հին և նոր կտակարանաց, յորում միշտ գտանի Քրիստոս փրկիչն Հոգւոյ, և են անդ բազմութիւնք խնկաբեր ծառոց աղօթանուէր անձանց և այլ պէսպէս անուշահոտ առաքինի արանց։ և յարաժամ պարարտանայ աստուածային առողջարար օդով ուղղափառ քարոզութեամբ, և առատանայ ցօղով աստուածային ողորմութեան. զարդարի կասիական բուսովք խոստովանութեան և ապաշխարութեան, մանաւանդ գեղեցկանայ ծաղկօք մարմնով և արեամբ բանին Աստուծոյ, որ է բժշկարար հոգւոյ և մարմնոյ։ Ուստի փեսայն կոչէ զհարսն իւր կուսին բանիւ, այսինքն առաքելովք և մարգարէիւք, և զկնի վարդապետօք։ Եկ ասէ ի Լիբանանէ, եկեսցես և անցցես։ զի ներկայ կենցաղս համեմատելով Լիբանանու, ունի զնէր հակն. զի է բարձր հպարտութեամբ, ջրաւէտ գիջութեամբ խոր կորստեան, գետ անցաւոր, ծառք հեշտութեան մահաբերք, խոտ և ծաղիկ ձաբակ անասնաբար մոլութեան, քանզի բոլորն է մարմնաւոր և սուտ կորստեան։ Վասն որոյ ասէ եկեսցես և անցցես այդոքիւք նրբագայթիւք, զի ուր եմ ես անդ և սպասաւորն իմ եղիցի

այս

digitised by A.R.A.R.@

Այսինքն յաւիտենական կենաց և անապական բարեաց. զի մի է տէր
մեր փեսայն Յիսուս Քրիստոս, և մի է հարսն մեր եկեղեցի.
Վասնորոյ յարաժամ կոչի և հրաւիրի՝ի յաշակերտութիւն մեր
աւետարանին, և՝ի հարսնութիւն փեսային Յիսուսի. քանզի
փեսայն հոգւոյ զեկեղեցին կոչէ հարսն իւր. ուստի երևի
ձայնք հարսին այսպէս, որպէս վայելէ երկնաւոր փեսային.
զորմէ ասէ, կայցէ թագուհի ընդ աջմէ քումմէ. Սղ. 44. 10.
՝ի ոսկեզօծ հանդերձս. Որք սկիզբն քրիստոնէութեան, առ՝ի լինել
հարսին կոյս, զի եղիցի ընդ կոյս փեսային. Բայց՝ի յայլ թարգմա-
նութիւնս փոխանակ հաւատոյ. պսակ գրի. զի մի և նոյն է ասել
՝ի սկզբանէ հաւատոյ. կամ ասել՝ի սկզբան պսակին հարսնութեան.
Զի՝ի սկզբան հաւատոյ զօրէնս և զմարգարէս ասէ, որք զկատա-
ւէր հանդերձելոյ բարեացն ունէին. և արդ՝ի սկզբանէ կոչէ
զնա՝ի կատարեալ հաւատ որբոյ աւետարանին, և՝ի պսակ հարս-
նութեան փեսային. զոր նախ իբրև զհատ մանանխոյ, և խմոր
երևեցաւ, զկնի բարձրացեալ ծառ, և հայ մեր եղև մեզ հա-
ւատացելոցս՝ի գլխոյ սանիրայ և հերմոնի. այսինքն՝ի հեթանոսա-
կան աշխարհէ, և՝ի հրէական կրօնէ,՝ի հին օրինաց. զի սանիր
և հերմոն միևնոյն է որև կոչի բլուր հերմոն, Դպ. 3. 3.
Վասն մեհենին բարձր որ անդ շինեցաւ. Զայս պաշտելին
և որդիքն իսրայելի զբաաղ և զանտառս, մոռանալով զտէր
Աստուած իւրեանց Դպ. 3. 7. Ուստի յետ կոչէ, եկ ասե-
լով զի կռապաշտութեամբ և հպարտութեամբ, և որք եւ այլս
մեղօք արմատացեալ էք՝ի բանսարկուն. ապաշաւեցէք մոլորեալքդ,
դարձարուք ուստի. Ունկնդիր լերուք լսելեօք ձերովք, զհետ
երթայք ճանապարհաց իմոց, լուարուք ինձ՝ և կեցցեն ի բարու-
թեան անձինք ձեր. և եդից ընդ ձեզ ուխտ յաւիտենական.
զողորմութիւնս դաւթի զհաւատարիմ. Եսա. 55. 3. ի մորեաց
առիւծուց՝ և՝ի լերանց ընձուց: Քանզի՝ի սկզբանէ՝ արար Աստուած՝
զերկինս զհրեշտակն՝ վասն անմարմին զօրաց հրեշտակաց: ստեղծ
զհաստատութիւնն՝ սակս լուսաւորաց: Պատրաստեաց զծովն՝
վասն թռչնոց. զեռեղեայ զջուրսն՝ վասն լուղակաց: Հաստա-
տեաց զերկիր՝ վասն անասնոց և գազանաց. և տնկեաց զդրախտն
՝ի յեդեմ ընդ յարևելս վասն մարդկան: Բայց սակս սատա-
նայնման պատուիրանին՝ արտաքսեցեալ անկաւ յաղէտսն աւելի

[illegible]

digitised by A.R.A.R.@

այսր կենդանոյս. զորմէ վկայէ Դաւիթ, թէ՝ մարդ՝ի պատուի էր և ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց անբանից և նմանեցաւ նոցա։ Զորս և Սողոմոն մորիք առիւծուց, և լերինք ընծուց անուանէ. է ուստի փեսայն կոչէ զհարսն իւր, զայսոսիկ թողուլ և առ ինքն դիմել հրամայէ. եկ ասէ 'ի մորեաց առիւծուց, և 'ի լերանց ընծուց, յորում բնակեալ էս, և ընդ գազանաց ընկերացեալ, զպատկերս և զազգս նոցա պաշտես, որով եղեալ էս դիւաց ազգակից. ուր և նոքա բունեալ էին, և դու ընդ նոսա էր բանսարկուն ապստամբեալ. զի որ հետևի կամաց նորին՝ի նմա ապստամբանաց, և զբնութիւն նորին ստանայ. զի և նա կոչի լեառն հպարտացեալ Եր. 57. 16. Ասանորոյ եղեալ էս մանչօղ և դիշախանձ որպէս զառիւծ, և խայտաբղէտ իբրև զընձ. Ըստ որում գրէ, և շրջէր՝ի մէջ առիւծուց, առիւծացաւ. և ուսաւ յափշտակել զյափշտակութիւն, և եղև մարդախանձ Եզ. 19. 6. Ասանորոյ ասէ եկ 'ի յանապատ աշխարհէ, 'ի հպարտութեան լեռնէ, 'ի յայլանդակ հաւատոյ. եկ ինձ 'ի ջուրս աւազանին. մկրտեալ լուսայիր 'ի յայլոյ մեղաց. զի եղիցիս ինձ հարսն մաքուր և սուրբ. Դարձեալ սանիր և հերմոն, մորիք առիւծուց, և լերինք ընձուց՝ զժողովարանս հրէից և հեթանոսաց իմանալի է. ուստի ժողովեալք՝ի մի եկեղեցի ամենեքեան եղեն որդիք հաւատոյն աբրահամու, և հարսն փեսային Քրիստոսի

վասն որոյ և՛ զկնի ասէ.

Սրտացուցեր զմեզ քոյր իմ հարսն. սրտացուցեր զմեզ միով աչամբ քով և միով տասանմանեկաւ պարանոցի քոյ.

Զայնս ասէ. ոչ երբեք թէ՝ փեսայն իւր, քանզի յոգնականաւ խօսի զմեզ ասելով. Այլ երևի թէ օրհնօղ հրեշտակայինք. յորոց նիւթոյ էն և հոգիք մարդկանց. վասնայն և քոյր կոչէ զհարսն. սրտացուցեր զմեզ ասեն այսինքն վառեցեր զմեզ 'ի սէր քո. կամ սրտեայ արարեր զմեզ. հոգւացուցեր զմեզ. և կամ հոգի և սիրտ եղեր մեզ, և զարմացուցեր զմեզ. և կամ սիրտ եդեր հոգևորացս՝ նախանձաւոր լինել մարմնաւորացդ՝ գեղեցիկ վարուց. զի թէպէտ ստեղծուած եմք հասարակաց արարչին քոյց դու հարսնացար նմա, որ զթափուր և զդատարկ միացեալ տեղի անկելոյն քո լցուցեր. Զի զպատուիրան տեառն անփոխ ևս անարատ պահես մինչև 'ի յայտնութիւն տեառն մերոյ

Յիսուսի

digitised by A.R.A.R.@

Յիսուսի Քրիստոսի, և իբրու միով ականբ հանգոյն արծուոյ անթարթ հայեցմամբ նկատես առ յարեգակն Քրիստոս. առ երանելին և միայն հզօրն, առ թագաւորն թագաւորաց և տէրն տերանց, որ միայն ունի զանմահութիւն բնակեալ ՚ի լոյս անմատոյց. I Տիմ. 6. 14. Զի այնպէս պատուիրէ օրինօք սրբազան առաքեալն Պօղոս. թէ զվերինն խորհեցարուք, ուր Քրիստոսն նստի, և մի որ յերկրի աստ է. Կող. 3. 2. Վասնորոյ ուշացուցեր զմեզ ասէ, այսինքն խանդակաթ արարեր զմեզ. զի միանգամ քարոզիլ հաւատոյ ՚ի սկզբանէ անտի Ճշմարտին հաւատայեր և ոչ երկմտեցար՝ այլ աշակերտեցար. և միով դիտաւորութեամբ ընդ ելս աստուածայնոյ սանդղոյն յակոբայ՝ հաւատով քանանացւոյն՝ և սամարացւոյն միով ականբ հայեցար առ միեայն հոգւոյ Մատթ. 15. Յով. 4. կամի ասել թէ՝ հոգւով և մարմնով միապէս անբաժանն, մտաց և մարմնոյ աչօք, անթերի հաւատով թարց երկբայութեան, նայիս առ աստուածութիւն ամենայնի երրորդութեան։ Զի աչք իմաստնոյ ՚ի գլխոյ իւր մէ. Նոյնպէս և աչք հարսին որ միով զՃշմարտութիւն տեսեալ, և միւսով ՚ի սնոտի մոլորութենէ հեռացեալ, միեն միայն ՚ի բարւոյն՝ բնութեան բացեալ. և միւսն իբրու անգործ թողեալ։ Այսր աղագաւ միոյ ականն ընծայեն օրինօք զհոլութիւնն. որով միայն տեսանէ զմիայնն. զի որ միայն առ աստուածութիւնն սրատես է, կոյր ՚ի յայլսն ամենեսին է, որք խորդեն յոլովիւք տեսանել զդէմսն։ յաղագս այնորիկ միով աչօք զբարեկամս առնէ հարսին զքանչելիսն. ուրեմն կոյր է բազմաչեայն, որ ՚ի սնոտիսն յոլով աչօք հայի։ Իսկ սրահայեաց և տեսանօղ այն է՝ որ միով հոգւոյ ականբ, առ միայն բարին հայի։ Դարձեալ միով ականբ քով ասէ, նախ ըստ իմացականին՝ որ լուսով հաւատոյն զՃշմարտութիւնն Աստուծոյ խոկայ։ Երկրորդ՝ ըստ յիշողականին՝ անմոռաց խոկմամբ զԱստուծոյ բարերարութիւնսն մտածէ։ Երրորդ՝ ըստ ցասմնականին՝ արիապէս և անյեղդարձօրէն առ Աստուած յենու։ Չորրորդ՝ ըստ ցանկականին՝ ջերմեռանդապէս զԱստուած սիրեսցէ, ընդ նմին ծնգնիկերն։ Իսկ և այն ունի զնկատումն ուղիղ և միակերպ որ ոչ բաժանէ զսիրտ իւր առ Աստուած, և առ յաշխարհս Որպէս ասէ Ոսկէ՝՝ զմարդ բոլորով սրտիւ կարիցես սիրել



digitised by A.R.A.R.@

զԱստուած, յորժամ զսիրտդ բաժանիցես առ Աստուած, և առ յաշխարհս. Իսկ հարսն եկեղեցի զբոլոր սիրտս և զբաղձանս իւր Աստուծոյ նուիրեալ. և առ նա ուղիղ նկատման աչաւ գաւ, իբր և միամտեայ սրտիւ զոլի յօրինորդայ, միով ակամբ կոչելով. որպէս թէ՝ երկու աչօք, իբրու միակ աչօք առ Աստուած նկատօղք որպէս առնէ աքաղաղն, երկնչելով ՚ի բազէին միով աչօք հայի յերկինս, և եթէ տեսանիցէ ինչ աղբ առնէ հաւուսն. Դարձեալ աչք եկեղեցւոյ հարսին՝ առաքեալք, և Մարգարէք, Հայրապետք, և Վարդապետք, սոքա ամենեքեան եղեն որպէս միակ միաչք հարսին, որք միապէս չօշափեցին զբանն կենաց, որպէս սրբազան առաքեալքն. Միապէս նկատեցին և տեսին զփեսայն հոգւոյ, որպէս տեսանօղ սբ մարգարէքն. Միապէս դաւանեցին զամենասուրբ երրորդութիւն զՀայր. զՈրդի, և զսբ Հոգի, և միապէս ծանուցին աշխարհի, որպէս սբ Հայրապետքն երից սբ ժողովոց. Միապէս քարոզեցին զուղղափառ զսբ հաւատն քրիստոնէական, որպէս վարդապետքն, որք անձն և սիրտ մի եղեալ միապէս ուսուցին զկամս Աստուծոյ Հօր. որոյ պաշտօնեայ եղեն օրինօք հրեշտակք. Ուստի ուսան բազմապատիկ իմաստութիւն, վասն որոյ առեն սքանչացուցեր զմեզ միով ակամբ քով. և Դող փառաւորեալ սոսկալի պատերազմի. Քառամանեակն է զարդ իմն քառակուսի որ կախեն ՚ի պարանոցէ հարսանց. Բայց է որ ՚ի քառեկնութոյ չինեն, այսինքն ՚ի յոսկւոյ ՚ի յարծաթոյ ՚ի մարգարտաց և ՚ի պատուական յականց, որով իմանամք զնշան քառաթև սբ խաչին, զոր կրեմք ՚ի գէմս մեր առ ՚ի զարդ հարսնութեան. Որպէս և Պօղոս ասէ այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ՚ի խաչ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Այլ և զլուծ չորից գլխոց աւետարանաց որ քաղցր է և թեթև, զոր ընդունիմք և պաշտեմք հոգւով և մարմնով յսրտի մտօք. կամ որպէս զխոնարհութիւն մաքսաւորին, մինչ կորացընոց բաղխէր զկուրծսն ասելով, Աստուած քաւեա զիս զմեղաւորս. և կամ որպէս զջերմեռանդ իղձ սրտին զաքէի, որ մեծաւ սիրով ել ՚ի ժանտոյ թզենին առ ՚ի տեսանել զփրկիչ իւր եկեալ յաշխարհ. և նա ըստ բաղձանաց սրտի նորին, եմուտ ագանիլ առ նա. և ըստ ասել նորա թէ՝ ահա կէս ընչից իմոց տացից աղքատաց և եթէ ոք զրկեցի հատուցից չորեքկին. յիսկից

լուան

digitised by A.R.A.R.@

լուծան թէ՝ այսօր եղեւ փրկութիւն տանս յայսմիկ Ղկ. Ι9. 9.
Քանզի կամէր ասել թէ՝ որովհետեւ պղծանայ աշխարհութիւն
է փոխարէն հատուցանելոյ եւ ամենայն՝ որք որով եւ մեղանչէ. Նո-
վիմք եւ պատժի։ Եւ ես չորեքնիւթեայ մարմնով մեղանչէի, եւ
դյնա աշխարհաւ։ Զի աշխարհեղն է պղծել սրտիւ, խոստո-
վանիլ բերանով, գործիլ մարմնով, եւ ողորմիլ ընչիւք, այս լինի
հարմանաւ Քրիստոսի փեսային, եւ եղանի ժառանգորդ ար-
քայութեան վերին։ Այսմ այն քարոզէր Յովհաննէս թէ՝ ապաշ-
խարեցէք զի մերձեալ է արքայութիւնն Աստուծոյ։ Դարձեալ
քառամանեակ պալատեալ հարսին երկոտասան են առաքեալքն,
որք՝ ի յերից քառից բաղկացան, որք յամենայն երրորդութեան
հաստատեալ պաշտօնեայ կարգեցան, որոց անուանքն գրեալ են՝ ի
հիման երկնային քաղաքին վերնոյն երուսաղէմի։ Զորս տեսցես
յերրորդ՝ գլխոյ 10 համարին։ Որոց զօրինակ եզտի՝ ի հնումն
արար Մովսէս քառակուսի տախտակ պատասխանի, զոր քա-
հանայապետն կրէր՝ ի վերայ լանջաց եւ կրծոյն Ել. 48. Ι6.
Յորում գրեալ կայր զյայտնութիւն եւ զճշմարտութիւն.
Կամ վարդապետութիւն եւ Ճշմարտութիւն։ Ըստ Եբրայեցւոց
ուրիմ եւ Թումիմ։ Եւ՝ ի վերայ այսորիկ տախտակի էին տեղա-
դրեալք երկոտասան ակունք. յորոց վերայ փորագրեալ էին եր-
կոտասան անուանք երկոտասան նահապետաց որդւոյն Իսրայէլի.
երեք երեք յաջմէ յահեկան, եւ դաս՝ ի վայր չորս կարգ. Առաջին
կարգի նախկին ակն էր զմրուխտ՝ յորում փորագրեալ էր անուն
Ռուբենի. Երկրորդ ակն էր յառաջնում կարգի սարդիոն՝ յո-
րում գրեալ էր Շմաւոն. Երրորդ՝ ակն էր առաջին կարգի
տպազիոն՝ յորում դրոշմեալ էր Ղեւի։ Չորրորդ՝ Երկրորդ՝
կարգի առաջին ակն էր կարկեհան՝ յորում գրեալ էր Յուդայ.
Հինգերրորդ՝ Երկրորդ՝ կարգի ակն էր շափիւղայ՝ յորում դրոշ-
մեալ էր Դան. Վեցերրորդ՝ Երկրորդ՝ կարգի ակն էր յասպիս՝
յորում գրեալ կայր Նեփթաղիմ։ Եօթներրորդ՝ Երրորդ՝ կարգի
առաջին ակն էր գոճակն՝ յորում գրեալ էր Գադ։ Ութերրորդ՝
Երրորդ՝ կարգի. Երկրորդ՝ ակն էր ակատ՝ յորում գրեալ էր
Ասեր։ Իններրորդ՝ Երրորդ՝ կարգի Երրորդ՝ ակն էր սուտակ՝
յորում գրեալ էր Իսաքար։ Տասներրորդ՝ Չորրորդ՝ կարգի
առաջին ակն էր յակինթ՝ յորում գրեալ էր Զաբուղոն։ Մետասա-

Երրորդ

digitised by A.R.A.R.@

երրորդ՝ Չորրորդ՝ կարգի Երկրորդ՝ ակն էր բիւրեղ՝ յորում գրեալ էր Յովսէփ։ Երկոտասաներորդ՝ Չորրորդ՝ կարգի և վերջին ակն էր եղեգնաքար՝ յորում գրեալ էր Բենիամին։ Այսէր-քառամանեակ պարանոցի Հարսին Հնոյ եկեղեցւոյն։ Դարձեալ [illegible] այսինքն քա-ջալերեցեր զմեզ զարմացման աղագաւ, և սոսկալութեան պատ-ճառաւ կրկնէ բանն։ Քոյր անուանէ զՀարսն վասն հօրեղ-նախ՝ ի միոյ արարչէ ստեղծաք։ Երկրորդ՝ ըստ նորին բանակա-նութեամբ զարդարեցաք։ Երրորդ՝ մաքրութեամբ ըստ նորա խառնեցաք։ Չորրորդ թէ մեք սորինքս, և թէ նոքա վերին-քըն, միապէս մի եկեղեցի անուանեցաք։ Թէպէտ մեք մար-մնաւորք, և նոքա անմարմինք, մեք՝ ի հողոյ ստեղծեալ, և նոքա՝ ի լուսոյ։ Բայց յաւուրս յետին՝ ի միասին մի եկեղեցի լինելոցեմք, և իբր և զեղբայր և զքոյր հաւասար կելոց։ Նաև Հարսն քոյր կոչի փեսային, վասն ազգամային սերնդոց ծնանելոյն։ Երկրորդ՝ զկամս Հօր կատարելոյն։ Երրորդ՝ վասն մաքուր և յստակ և անարատ սիրոյ նորին։ Չորրորդ՝ սակս ընդ մեզ հաւասարելոյն։ Հինգ-երրորդ՝ վասն ծննդականութեան։ Վեցերրորդ՝ զի նա բնութեա-որդի Աստուծոյ և մեք շնորհօք։ Միով աչամբ քով ասէ, ան-գրէ մարգարէն թէ՝ որ խնու գաչս իւր զի մի տեսցէ զան-իրաւութիւն, նա բնակեսցի՝ ի բարձրային վիմի հաստատնոյ։ Հաց տայի նմա և ջուր նորա հաւատարիմ։ զԹագաւորն փառաց տեսցեն աչք նորա տեսցեն զերկիրն՝ ի հեռուստ Եսայ. 33. 15. և յառաջ երթեալ ասէ ( ըստ այլ թարգմանութեան ) աչք իմ կողոպտեաց զհոգի իմ Եր. 33. 51։ Որպէս Սամսոն, Դաւիթ, Սողոմոն, և այլք բազումք հնոյ կտակարանին։ Վասն որոյ ասէ Եղի ուխտ յաչս իմ առ՝ ի չհայելոյ կոյս Յոբ. 31. 1։ քառամա-նեակ պարանոցի քոյ, զի՝ ի քառանկողմանէ աշխարհի անհամար բազմութիւնք՝ ի մի լայր եկեալ զարդարեցին զպարանոց Հարսին։ Ջի [illegible]

[illegible]

՝ի սոյն գլխոյ 5 համարին թէ զինչ են ակնք Հարսին, անտանօր մեկնեցաւ. որպէս թէ հոգի և մարմին, որքեն՝ ի մեզ երբու եր-կու ակնք։ Կամ թէ եկեղեցիք հրէից և հեթանոսաց։ Կամ զՀաւատ և զյոյս, որ՝ ի սիրոյ սրտին յառաջ գայ, սիրել զԱս-

տուած

digitised by A.R.A.R.@

տուած և զընկերին և զայլ առաքինութիւնս իբրև զկաթն ՝ի յայնց ստեանց բղխին։ Բայց անդէն ստինք հարսին ուլուց հա-մեմատեալ. իսկ և աստ գեղեցիկ զուգորդուեցան. վասն ի շու-շանս արածելոյ, զի արեամբ ուխտին մաքրեցաւ, և ՝ի գործս առաքինութեան վարեցաւ։ Վասնորոյ ասէ՝ զի գեղեցկացան ստինք քո ՝ի գինւոյ, զի որպէս գինին է ուրախացուցիչ. նոյնպէս և հոգին սբ Աստուած ուրախացուցիչ է հոգւոյ և մարմնոյ հաւատացելոց. ըստ այնմ յիշէի զԱստուած և ուրախ եղէ։ Բայց ծանիր զի անդ փեսայն խօսեցաւ, և աստ օրիորդք ծանուցանեն հարսին զգեղեցկութիւն ստեանց նորին առ ՝ի քաջալերել զնա. որպէս ռափայէլ հրեշտակն ծանոյց տօբիթայ զգեղեցկութիւն գործոց նորին Տօբ. 12. 6. Նոյնպէս և աստ օրիորդք ծանու-ցանեն հարսին, մաքրեցմամբ գեղեցկացեալ, և ճգնութեամբ մարմնոյն զպսակն անեղծութեան պատրաստեալ նմա։ Վասնորոյ երկիցս ասէ թէ՝ գեղեցկացան ստինք քո։ Նախ քոյր և հարսն անուանելոյն։ և Երկրորդ՝ ՝ի գինւոյ ասէ, այսինքն՝ի մարմնոյն և յարենէ կենարարին ճաշակելոյն։ Այլ և նախ զԱստուած սիրե-լոյն։ և Երկրորդ՝ զընկերն սիրելոյն. իսկ և նախ հաւատով պայծառացեալ։ և Երկրորդ՝ արեամբ միածին փայլեցեալ։ Քանզի սիրով փեսային գեղեցկացաւ և վասն անուան նորին արեան հեղմամբ նահատակեցաւ։ Այլ հարսն անուանի, զի ոսկր և մարմին է նորա. որոյ ստինքն ոչ միայն զկաթն բղխեն, այլ և զիմաստութիւն և զհանճար ընդ կատարեալս խօսի։ Դար-ձեալ երկու ստինք հարսին եկեղեցւոյ՝ են երկու կտակարանքն, որք գեղեցկացեալ են՝ի գինւոյ շնորհիւ հոգւոյն սրբոյ, Նաև երկու ստինք հարսին գեղեցկացեալ՝ի գինւոյ շնորհիւ հոգւոյն սրբոյ սրբազան առաքեալք, և առաքելաշաւիղ վարդապետք նորոյ հարսին եկեղեցւոյ. որպէս և հնոյ ժողովրդեանն ընտ-րեալ մարգարէքն, որոյ բանքն իբրև անարատ մաքուր կաթն սնուցանէ ՝ի յարգանդէ եկեղեցւոյ ծնեալ զմանկունս իւր. զի որպէս գինին յորդեցուցիչ է կաթին, նոյնպէս և շնորհ հո-գւոյն սրբոյ զարդարիչ է ստեանց կաթին մօր եկեղեցւոյ, որովք սնանին որդիք նորին ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ I Կր. 3. 2.

Զստինք հարսին՝ եկեղեցւոյ.

առաքեալք տեառն վեհին յարգոյ.



digitised by A.R.A.R.@

Որք զըստակ կաթն քամբեցին.
մեզ ուղղափառ սէր հաւատոյ.
և մարգարէքն խորոյի լին.
՚ի ժողովարան հին օրէ նին.
Զաստուածութեանն միութիւն.
դայեկապէս քարոզե յին։

Եւ հոտ հանդերձից քոց քան զամենայն խունկս։ Զի նախապէս համառ զհոտ խնկոյ աստուածութեան փեսային գերազանց գոլ առաջ քան զամենայն խունկս. վասն զի փեսայն երկնաւոր՝ ողորմութ թափօղէ յարաժամ առ ազգս մարդկան, ուստի անուանի իւղ թափօղ։ իսկ և աստ օրինողք ծանուցանեն հարսին զհոտ հանդերձից նորին՝ առաւել ես քան զամենայն խունկս։ Քանզի ասեն թէ՝ և ել անուն գեղեցկութեան քոյ ընդ ամենայն ազգս՝, զի առեր զհանդերձ գեղեցիկ Եզ. 16. 14. Որէ Քրիստոս Յիսուս, զի որք ՚ի Քրիստոս մկրտեցայք զՔրիստոս զգեցեալ էք. չիք խտիր. Գաղ. 3. 27. Որոյ անուշահոտութիւն ամենայն պարտեաց զամենայն ազգս հեթանոսաց, որք առանց բանութեն օրինաց ինքնայօժարութեամբ նմա հետեւեալ, ընդ նմա ՚ի խաչ ծագեցան, զի եթէ զբարիս գործեմք առաքինութբ զՔրիստոս զգենումք։ Որպէս գրէ Պօղոս թէ՝ զգեցարուք զտէր մեր Յիսուս Քրիստոս, Զի որպէս զգեցաք զպատկեր հողեղ՚նին զգեցցուք և զպատկեր երկնաւորին. Հռմ. 13. 1 Կր. 15. 49. Զի յորժամ Ճշմարիտ սրտիւ և անկեղծ հաւատով ճանաչէ մարդ զԱստուած, յայնժամ բուրեն՝ ՚ի նմանէ հոտ անոյշ առաւել քան զխունկս։ Քանզի նախ հանդերձ հոգւոյն է մարմին նորին, երբ ողջախոհութեամբ և անարատութեամբ պահէ, և ոչ ապականէ մեղօք։ Որպէս սրբն բարսեղ Կեսարացին առ ՚ի մեղս անկեալ, և զհամեստութիւն իւր եղծեալ ոմն գրէ առաջելոյ թէ՝ ո՞ւր է քո այն պարկեշտ ձեւն, ո՞ւր է քո այն գեղեցիկ ամօթութիւնն, և հանդերձքն աղխատիկ փայլլջանք կուսանաց. և գեղեցիկ պատկառանայն կարմրութիւն, և ՚ի փայլլուչ ժուժկալութենէ ՚ի պահքութենէ ծաղկեալ դեղնութիւնն, որ քան զամենայն գոյնս շնորհալից լուսաւորեալ էիր։ Երկրորդ՝ որք զանձեղութիւն և զմաքրութիւն, իբրև զազնուական հանդերձ ընկալան.

ընկալան 'ի մկրտութեան անախտ պահեսցին, և ոչ աղտեղեսցին։ Վասնորոյ ասէ՝ յամենայն ժամանակի հանդերձք քո եղիցին սպիտակ և իւղ 'ի գլխոյ քումմէ մի պակասեսցի Ժող. 9. 8։ Որոյ օրինակ և մեք 'ի մկրտութեան զգեցուցանեմք տղային զսպիտակ հանդերձ որպէս առ լուսաւորչական մերով ազգս Հայոց մկրտեալքն 'ի գետն եփրատ ամենեքեան զգեցան զսգեստս սպիտակս. Ըստ պատմութեան Ագաթանգեղոսի. ատենադպրի, մեծի արքային տրդատայ։

Մեղր խորիսխ կաթեցուցանեն շրթունք քո հարսն. մեղր և կաթն ի ներքոյ լեզուի քո, և հոտ հանդերձից քոց իբրև զհոտ կնդրկի։

Որք մեղրն չինի 'ի մեղուաց ներ անօթում, զոր կոչեմք մեթակ, յորմէ կաթի և մեղրն։ Իսկ շրթունք մարդոյ կալմիչ և կարգաւորիչ են՝ կանոնաւոր ձայնից, և կերպաւորիչ խօսից։ Ուստի և օրխորդք զշրթունս հարսին նմանեցուցանեն անօթոյ մեղուն, յորմէ արձակեալ բանքն հանգոյն մեղու կաթեն 'ի յամանոյ, զի քաղցրացուցանեն զլսելիս։ Քանզի հոգին սբ իբր գործեօք շրթամբ հարսին խօսի ընդ Աստուծոյ. և տէրունական աղօթիւք յարաժամ կարդայ առ հայր և օրհնէ զորդի և զսբ հոգին։ Որպէս երեք մանկունքն 'ի հնոցին. և Ստեփաննոս 'ի քարկոծմանն քաղցրաձայն երգով աղօթէին առ տէր։ և յաւուր պէնտէկոստէին սրբազանից առաքելոցն Թէ՝ որպէս հոգին տայր բարբառել նոցա։ Որոց բանիւք մկրտեցան. և յաւելան յաւուր յայնմիկ հոգիք իբրև երեք հազարք։ Զի ճաշակեցին երկնաւոր պարգևացն և հզօրք եղեն հոգւոյն սբ Եբր. 6. 4. Նոյնպէս և I Թովմայի ներքինին միով բանիւն Փիլիպպոսի ձգեցաւ յաշակերտութիւն նորա։ և 'ի յուսումն սբ գրոց. Վասնորոյ ասէ քնարերգն սփռեցան շնորհք 'ի շրթանց քոց. վասնայսորիկ օրհնեաց զքեզ Աստուած յաւիտեան Սղ. 44. 3։ Վասնայսորիկ և սրբազան առաքեալն Պօղոս պատուիրէ ասելով Թէ՝ և բանն ձեր յամենայն ժամ լի շնորհօք տեառն՝ իբրև աղիւ համեմեալ լիցի. գիտել որպէս արժանն իցէ ձեզ իւրաքանչիւր ումեք տալ պատասխանի Կղս. 4. 6. Որպէս բանք բերանոյն Աբիգեայ շիջոյց զբարկութիւնն Դաւթի I Թագ. 25. 23։ Նոյնպէս եսթեր՝ և յուդիթ՝ աղօթիւք շրթանց, և իմաստութեան բանիւք ապրեցուցին զազգ

և

digitised by A.R.A.R.@

և զերկիր լուսաւորեալս: Քոյր իմ հարսն. ասէ, քոյր կոչէ որ զկնի եղբօրն երթայ. և հարսն անուանէ, զի անքակտելի սիրով նորա կայր: և զայսմ տես յանգեալ տան. Մեղր և կաթն ՚ի ներքոյ լեզուի քոյ. Թէպէտ երկուքեանն ևս են քաղցր. բայց կաթնն մաքուր և յստակ և տղայոց սնուցիչ. որպէս Պօղոս առ եբրայեցիս գրէ, թէ եղայք կարօտ կաթին, և ոչ հաստատնոյ կերակրոյ. զի ամենայն որ կաթնկեր է, անփորձ է բանին արդարութեան, քանզի տղայ է Եբր. 5. 12: Զի որպէս մանկունք սնանին կաթամբ նոյնպէս և հաւատացեալ մանկունք հարսին եկեղեցւոյ զար-գանան բանիւն Աստուծոյ, որ իբրև զմեղր և զկաթն՝ ի ներքոյ լեզուի հարսին. այսինքն՝ ի սբ. գիրս ամբարեալ կայ. վասնորոյ ասէ թէ ոչ հացիւ միայն կեայ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ՝ ի բերանոյ Աստուծոյ՝ կեցցէ մարդ Օր. 8. 3: Որոյ պատճառն է. զի յայտնանէ սնանիմք յորոց և եմք. որպէս ձագք հաւուց՝ ծնանին՝ ի ձուոյ, և սնանին ձուով. նոյնպէս և մեք՝ հոգևորապէս ծնեալեմք՝ բանիւն Աստուծոյ. ըստ այնմ կամե-ցեալ ծնաւ զմեզ բանիւ ճշմարտութեան Յկ. 1. 18. և բանիւ ճշմարտութեան սնանիմք: Զի կերակուր հոգւոյ է բանն Աստուծոյ, Այլև կաթն ընդդիմանայ թունոյ և խափանէ զչա-րութիւն նորա, զի մի վնասեսցէ. Նոյնպէս և բանք ողք չիջուցանեն զչարութիւն Առ. 15. 1: Եթէ մահացու դեղ արբցեն ոչ վնասեսցէ. Մր. 16. 18: Իսկ և մեղրն էքաղցրա-գոյն, զոր կազմեն մեղուք՝ ի բծխնիւ՝ ինիւթոյ անուշահոտ ծաղ-կանց՝ ի պէտս բժշկոյ, որք՝ ի գործ ածեն ընդ դեղորայս վասն խօթացելոց. Նոյնպէս ՚և. բանք հարսին կազմեալ՝ ի ներքոյ լեզուի իւրոյ իբրև՝ ի բծխնիւ՝ ինիւթոյ անուշահոտ ծաղկանց աստուածաշունչ սբ. գրոց՝ ի պէտս հոգևոր բժշկոյ. որք՝ ի գործ ածեն վասն հոգւոյ ախտացեալ հիւանդաց. Մեղր և կաթնէին բանք սրբոյն Պօղոսի. վասնորոյ ասէր իբրև տղայոց ՚ի Քրիստոս զկաթն ջամբեցի ձեզ, և ոչ զկերակուր Ա Կր. 3. 2: Նոյնպէս էին և բանք սրբազանից առաքելոյն և հա-մայն առաքելաշաւիղ սբ. սրբանցն: Ուստի ասէր, քանզի որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս որ՝ ի ձեզ մեօք քարոզեցաւ. 2 Կր. 1. 19: Բայց վնասից մեղուաց և մեղու հինգեն. Ի հալմին, յուրտին, զարշ հոտն, ծուխն, և հիւթն զառն խոտոյ այսոքիկ

digitised by A.R.A.R.@

այսոքիկ Յիսուսեն մեղուաց և ոչ թողուն չինել զքաղցր և ղանոյշ մեղր. զի փախուցանեն զմեղուն և ամլացուցանեն, և զմեղրն ապականեն և ղառնացուցանեն. որպէս հալածն հպարտութեան փախուցանէ զշնորհս հոգւոյն սրբոյ. որպէս ասէ առաքեալն, շնչաւոր մարդ ոչ ընդունի հոգւոյն Աստուծոյ Ա Կր. 2. 14. Երկրորդ՝ ցուրտն. որպէս գրի թէ՝ և արքայ Դաւիթ ծերացեալ և անցեալ զաւուրբք, և ծածկէին զնա հանդերձիւք հանդերձիւք և ոչ ջեռնոյր. Նոյնպէս և որք ծերանան մեղօք, ցրտանան յաստուածային սիրոյն, այլ ոչ ես կարեն չինել զմեղր բարեգործութեան, ըստ այնմ վասն բազմանալոյ անօրէնութեան ցամաքեսցի սէր բազմաց. և իմաստութի բարի տայ զշնորհս Առակ. 13. 15. Երրորդ՝ գարշ հոտն ըղձախոհութեան. զի յանձն չարարուեստ իմաստութիւն ոչ մտանէ, և ոչ բնակի՝ ի մարմնի վաճառելոյ մեղօք Իմաստ. 1. 4. Չորրորդ ծուխն ագահութեան. աշխարհս անցանէ և ցանկութի Ա Յովհ. 2. 17. Վասնորոյ ասաց տէր մեր թէ՝ մարթա դու հոգաս՝ և զբաղում իւիք զբաղեալ ես, բայց աստ սակաւ ինչ պիտոյ է Ղուկ. 10. 41. Հինգերորդ՝ հիւթն դառն խոտոյ. քանզի հոգք աշխարհիս և պատրանք մեծութեան հեղձուցանեն զբանն և լինի անպտուղ. Մատթ. 13. 22. Քանզի խորխս մեղու են բանն բարիք. և քաղցրութիւն նոցա բժշկութիւն է հոգւոյ Առակ. 16. 24. Բայց այսոքիւք հնգօք եղծանի ապականի և դառնանայ, և լինի անօգուտ. Զի լեզու հարսին եկեղեցւոյ է աստուածաշունչ սբ գիրն. որոյ բանքն բոլորովին մեղր է և կաթն՝ ի ներքոյ զետեղեալ. որք սնուցիչ հոգւոյ և մարմնոյ. բայց որք ամպարիշտք անգամնեն զնա. Տես զանոյշ մեղրն սբ գրոյ. որ ասէ՝ երանի աղքատաց ևայլն. Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ. մի երկնչիր հօտ փոքրիկ զի հաճեցաւ հայր ձեր, տալ ձեզ զարքայութիւն. Նախ տես զկաթն սնուցիչ մանկանց, լուր որդեակ խրատու հօր քո, և մի մերժեր զօրէնս մօր քո. զի պսակ շնորհաց ընկալցիս՝ ի գլուխ քո, և մանեակ ոսկի՝ ի պարանոցի քում. Աղաչեմ զձեզ իբր մարդիկ և պաշխեմ որդւոց մարդկան զբարբառ իմ. Դարձեալ լեզուաւ իմանամք զվարդապետս և զքարոզիչս եկեղեցւոյ, որք ասեն

բանս

digitised by A.R.A.R.@

բանս աստուածայինս որ զօրոյ առաւել քաղցր քան զմեղր և զկաթն, որք յորժամ բաշխեն մանկանց եկեղեցւոյ։ Եւ հոտ հանդերձից քոց իբրև զհոտ կնդրկի. Համբերձ հարսին եկեղեցւոյ է Քրիստոս, որպէս ասացեալ տան գրեցաւ. և անդ զհոտ նորին խնկոց համեմատեցոյ. և ասա կնդրկի, կէ անուշահոտ ծխանելի իբրև զխունկ. բայց բնութեամբ է յոյժ ջերմ, և հոտն սաստիկ սուր. զոր յաճախ հոտոտողն արբեցուցանէ. վասն այսորիկ ի հնումն յորժամ զփիղն յարէին ի պատերազմ ընդ անապակ գինւոյ կնդրուկ խառնեալ մատուցանէին ի ըմպել. այլև ծխէին ի հոտոտելիս նոցա որով սաստիկ պատերազմէին. 3 Մակ. 5. 1։ Այսպէս և հարսն Քրիստոս ազդեցոյ հոտով փեսային յանէ ի պատերազմ, և ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ ընդ այսս չարութե որք են ի ներքոյ երկնից Եփ. 6. 16։ և Պօղոս այսու հոտով զմայլեալ ասէ՝ հաճեալ եմ ընդ տկարութիւնս, ընդ թշնամանս ընդ վիշտս. ընդ հալածանս, և ընդ նեղութիւնս վասն Քրիստոսի 2 Կոր. 12. 10։ Դարձեալ համբերձիւք խնամեմք զմարմինս և զատակ խղճմտանս յորմէ բուրէ հոտ կնդրկի. Ուստի ասէ Քրիստոսի չարչարելոյ մարմնով և դուք ի նոյն միտս վառեցարուք 1 Պետ. 4. 1։

Պարտէզ փակեալ քոյր իմ հարսն. պարտէզ փակեալ և աղբիւր կնքեալ.

Զկնի բազմաց գովութեանց և պէսպէս նմանութեանց զգեղեցկութիւն և զդիրս անդամոց հարսին. և արդ՝ վերստին փակեալ պարտիզի համեմատէ, սակս զանազան բարի պտղոյ բերմանն, և աղբիւր կնքեալ ասէ վասն յորդառատ շնորհաց բղխմանն։ Զի որպէս պարտէզն կանաչութեամբ հեշտալուցիչ է տեսանելեաց, անոյշ հոտով զմայլեցուցիչ ռնգաց՝ համեղ պտղով քաղցրացուցիչ ճաշակաց և գունագոյն ծաղկօք զուարճացուցիչ դիմաց. նոյնպէս և հարսն եկեղեցի է կանաչ՝ յարահետ կուսութեամբ։ Անուշահոտ՝ Քրիստոսական օծ հաւատով. Համեղ՝ գործով. քաղցր՝ աստուածային բանիւ. Ծաղկեալ՝ զանազան առաքինութեամբ. Այսպէս եղեալ եկեղեցին պարտէզ մերոյն Սողոմոնի. ուստի ասէ՝ արարի ինձ պարտէզս և դրախտս, և տնկեցի ի նոսա փայտս ամենապտղաբերս



digitised by A.R.A.R.@

Ժող. 2. 5. Պարտէզ անուանէ զհարսն, որ ունի առ ինքն
զփեսայն իւր իբրև աղնիւ ծաղիկ բուսեալ յարմատոյն յես-
սեայ 'ի կուսական յարգանտէ. և փակեալ ասէ՝ զի բանակք
հրեշտակաց տեառն շուրջ են զնովաւ և պահեն. Որպէս ծառն
կենաց քերոբէքն բոցեղէն սրով շուրջանակի պահէին. Զի
որպէս արքունական գանձարանն միշտ փակեալ պահի, նոյն-
պէս պարտէզն և բուրաստանն, զի անկոխ և անձեռնհա-
մնասցէ յօտարաց. զի որոմնացան Թշնամին մի կարասցէ մտա-
նել 'ի նա. այլ արքայն ինքն միայն. որպէս փակեալ պարտէզ
կոյսն սբ՝ ըստ յարևելեան դրան տաճարին, փեսայ արքայն ինքն
միայն եմուտ և ել. այն դուռն փակեալ կացցէ, ոչ ոք մտցէ
և ելցէ. բայց Տէր Աստուած մտցէ ընդ դա և եղիցի փակեալ.
Եզե. 44. 2. Նոյնպէս 'ի փակեալ և կնքեալ գերեզմանէն
յարեաւ. և փակեալ դրամբ եմուտ առ աշակերտսն. այնպէս
պարտ է կեալ հարսին եկեղեցւոյ, եթէ կամիցի ունել փե-
սայն 'ի հոգի իւր, առ որս ասաց, ես եկից և բնակեցայց 'ի միջի
քում. Ասանայն հարկաւոր է փակել զզայարանս ամենից ներ-
սամուտ հակառակ հողմոց, ապա թէ 'ի ներքուստ 'ի սրտէ
իւրմէ բուսուցանէ ծաղիկս զանազան առաքինութեանց, զի
փակմամբ դրան կարասցէ պահել զայնոսիկ անապականս. որոյ
աղաղակէ պատուիրեալ թէ՝ յորժամ կայցես յաղօթս՝ մուտ 'ի
սենեակ քո և փակեա՛ զդուրս քո Մատ. 6. 6. Բայց փակ դրան
բանականի բնութեան, երկիւղն է և խոնարհութիւնն. զի եր-
կիւղիւ խորշի ամենայն ոք 'ի չարէ. Ասանորոյ ասէ Դաւիթ
բևեռեա երկիւղ քո 'ի մարմին իմ. և թէ՝ զսիրտ սբ և զհոգի
խոնարհ Աստուած ոչ արհամարհէ. զի խոնարհութիւնն ոչ
թողու մտանել 'ի ներս Թշնամին բնութեան. վասն այնորիկ
ամենայն հարսնայեալք խոնարհութեամբ և երկիւղիւ փակեսցին
զդրունս զգայութեանց իւրեանց, և այնու հաճոյական փե-
սային երկնաւորին. և բազումք հեռացան յաշխարհէ. և եղեն
լեռնականք և անապատաբնակք, և խստաճարակք, որովք հա-
զիւ կարացին լինել փակեալ պարտէզ երկնաւոր Թագաւորին
Պարտէզ փակեալ և աղբիւր կնքեալ. Որպէս գանձ Թագաւորական
պահեալ լինի կնքով նորին նգօք և փակովք, նոյնպէս
և զշնորհն հոգւոյն սրբոյ պահպանութեամբ զգայարանաց.

Եզեկ.

digitised by A.R.A.R.@

Եզ. 9. 6: Զի որպէս հովիւն դրոշմէ ոչխարս իւր, որով
զանազանի յայլոց. այսպէս և տէրն զընտրեալս իւր, որով զա-
նազանին յերկրաւորաց. և զնկերոյ յայտնանէ ասէ Պօղոս՝ մի
տրտմեցուցանէք զՀոգին սբ Աստուծոյ, որով կնքեցայք յա-
ւուրն փրկութեան Եփ. 4. 30: 2 Կոր. 1. 12: Ահա
սրբազան առաքեալն յայտնի եցոյց աղբիւր զհաւատ, և կնիք
նորին Հոգին սբ: Որով նախ անէծանեցաւ թէ՝ յաւուր
յայնմիկ աղբիւր ելցէ ՚ի տանէ Տեառն և արբուսցէ զերկիր
Յովէ. 3. 18: Որպէս սրբազան առաքեալքն որք կենաց ջրով
առոգեցին զաշխարհս. վասնորոյ ասէ պարտէզ փակեալ և
աղբիւր կնքեալ. քանզի ամենայն առաքելաշաւիղ սբ անձինք
զսիրտս իւրեանց արարին իբրև զփակեալ պարտէզ, ծաղկե-
ցուցեալ բարի խորհրդով. և զաշս իւրեանց որպէս կնքեալ
աղբիւր՝ յորդառատ և մշտաբուղխ արտասուօք լցեալ և այն-
պէս հաճոյացան տեառն Աստուծոյ: Վասնորոյ ասէ՝ զերեք
ամ ոչ դադարեցայ զմի մի ՚ի ձենջ արտասուօք խրատել:
Մանաւանդ ըստ ոսկեբերանին արտասուք մեղաւորաց է գինի
Հրեշտակաց: Այլ և սուրբ քարոզչաց և ջոկք վերատեսուչ
խրատչաց որք ըմպեցին ՚ի յաղբիւրն կենաց, և հաւատային
զՅիսուս Քրիստոս, և ընկալան զՀոգին սուրբ, և եղեն
աղբիւր կենդանի ջրոյն. որպէս ասէ փեսայն հոգւոյ, եթէ ոք
ծարաւի իցէ եկեսցէ առ իս և արբցէ. որ հաւատայ յիս. որպ
ասեն գիրք, գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոյ կենդա-
նութեան. այս ասէր վասն հոգւոյն զոր ընդունելոցէին,
որք հաւատային ՚ի նա Յով. 7. 37: Բայց կնքեալ ասէ, զի
հրամայեցաւ առն որ զգեցեալ էր զպճղնաւորսն, թէ անց ընդ
մէջ քաղաքիդ Երուսաղեմի, և դիր զնշան ՚ի ճակատս արանցդ
որք հեծեն և հառաչեն ՚ի վերայ անօրէնութեանցն գործե-
ցելոյ ՚ի մէջ նորա. Եզ. 8. 3: Ըստ դաւթի՝ թէ՝ հայէի առ
նադրութեան և մաշէի, ՚ի յօրէնս քո խօսք իմ էին Սղ. 118. 158:
Սոյնպէս և Պօղոս մինչ տեսանէր ՚ի կռապաշտութեան զքաղաքն
աթենացւոց զայրանայր ՚ի հոգի իւր Գործ. 17. 16. Նմանա-
պէս և Ղովտ օր ըստ օրէ զիւր զսբ հոգին՝ առաջնոցն անօրէն
գնացիւքն տանջէր, 2 Պետ. 2. 8: Զայսպիսի ծառայք
Աստուծոյ կոչին փակեալ պարտէզ և կնքեալ աղբիւր: Վասն-
որոյ

digitised by A.R.A.R.@

որոյ կատարող Հրեշտակին հրամայեցաւ թէ՝ մի՛ վնասէք յերկիր՝ այլ դադարեցէք մինչև կնքեսցուք զծառայս Աստուծոյ իմոյ. Յայտ. 7. 3. Սոյնպէս և հարսն կնքեալ է պարկեշտութեամբ. և երկիւղածութեամբ, վասնորոյ և ոչ բնաւ զմտաւ ածէ յարել առ օտարս կամ մերձենալ առ այլ ումն ըստ սրբազանին Պօղոսի թէ՝ յուսումնս պէսպէս և օտարոտիս մի դանդաչիք: Ջրի աղբիւր կենաց Աստուծոյ բերան արդարոյ Եռ. 13. 9. Առակ. 10. 11. Այլև փակեալ պարտէզ և կնքեալ աղբիւր կոչեցաւ հարսն եկեղեցի որ ունէր զխորհուրդն ծածկեալ՝ ի յաւիտենից և յազգաց մինչև ց՚Յովհաննէս. քանզի ամենայն օրէնք և մարգարէք մինչև ց՚Յովհաննէս մարգարէացան: որ այժմ յայտնեցաւ սրբոց իւրեանց Մատթ. 11. 18. Կող. 1. 26. և գետն Աստուծոյ՝ ի մէջոյ աթոռոյն իւրոյ հոսէ զնոսա. և առաջնորդէ նոցա՝ ի կենաց աղբիւրս ջրոյ կենդանւոյ Յայտ. 7. 17.

Առաքումն քո դրախտ նռնենեաց հանդերձ պտղովք ծառոց ծաղկի հանդերձ Նարդոսիւ:

Եւ՛ որպէս ինձ թուի, այս բան օրհնու Հրեշտակայնէ առհարսնայեալ յառաքեալսն, որք առաքեցան՝ ի բանէն Աստուծոյ Էբրև պատգամաւոր, դրախտ նռնենեաց՝ յեկեղեցիս հրէից և հեթանոսաց: Համբերձ պտղոց ծառոց. զի պտուղ բանական ծառոյն է պատուէր փեսային, և պատգամն աստուածայինն, որովք որպէս գառինս՝ ի մէջ գայլոց երևեցան առանց քսակի և մախաղի և՝ կօշկաց, ուստի դարձան խնդութեամբ (զի՝ դրախտն է տեղի ուրախութեան և բերկրութեան) և ասէին տէ՜ր և դևք հնազանդին մեզ յանուն քո Ղկ. 10. 3. Բայց ծաղիկ հանդերձ նարդոսիւ ասէ, որ բազմիցս կրկնեցաւ թէ՝ ծաղիկ է փեսայն հոգւոյս: Քանզի նախապէս փեսայն ծաղիկ անուանեցաւ ՝ի մարգարէից սրբոց, որպէս յայտէ ՝ի տեղիս իւրեանց: Նախ զի ծաղիկն ունի յերկինս հայր՝ զարեգակն և յերկրի մայր՝ զտունկն, նոյնպէս և բանն Աստուած, ունի յերկինս հայր զԱստուած, և ՝ի յերկրի մայր զկոյսն Մարիամ. ՝ի յերկինս Թարց մօր՝ ըստ յաւիտենականի ծննդեան; և ՝ի յերկրի Թարց հօր՝ ըստ ժամանակաւոր ծննդեան: Երկրորդ՝ ծաղիկն հեշտացուցանէ զտեսութիւնս գեղեցկութեիւրով

digitised by A.R.A.R.@

բուրոյ՝ Նոյնպէս և փեսայն հոգւոյ, զոր ցանկային տեսանել
զնմա ընդ այլոց հրեշտակք I Պետ. I. 12։ Երրորդ՝ յա-
ղագս անոյշ հոտոյ նորին, նմանապէս ծաղիկն մեր Քրիստոս
զորմէ հոտոտեցաւ հայր Աստուած, ասելով, ահա հոտ որդւոյ
իմոյ իբրև զհոտ անդոյ լիոյ, Ծնն. 27. 27. Չորրորդ՝
անպակասելի ունի զհոտ իւր, քանզի եթէ հատանիցի չորայու-
ցանի, և մանրի ոչ կորուսանէ զհոտն. նոյնպէս և տէրն մեր՝ ի
կախաղանի խաչին չորացեալ ոչ բեկաւ, հատեալ ոչ թառա-
մեցաւ, խաչեալ և մեռեալ ոչ ունայնացաւ, և՝ ի ձեռն խոցման
տիգին՝ ի հեղմանէ պատուական արեան գեղեցկացոյց կարմրա-
ցաւ։ Հինգերորդ՝ վասն զանազանութեան, զի չորհալիքեն
տեսակք պէսպէս ծաղկանց. իսկ և փեսայն հոգւոյ՝ եղև
խոնարհութեամբ իբրև զմանուշակ. մաքրութեամբ որպէս
զշուշան. սիրով իբրև զվարդ, զորմէ ասի իբրև զծաղիկ վարդից
յաւուրս գարնանայնոյ Սիր. 50. 8։ և յանկութիւնք Նարդոսին
տեա՝ ի մէկ գլխոյ II համարին. որով տէրն մեր զինուորեալ
զառաքեալսն և առաքեաց յաշխարհ ամենայն, ծանուցանել զա-
նուն իւր սբ. Զի որպէս հայր Աստուած՝ առաքեաց զորդի
իւր միածին առ՝ ի մարմնանալ, որ եկեալ պատեաց զծաղիկ
աստուածութեանն՝ Նարդոսիւ մարմնոյ իւրոյ. որոյ ծառոյն
պտուղ զհաւատն սբ բողբոջեցոյց՝ ի սիրտս մեր. և զանուն
ամենասբ երրորդութեանն ծանոյց մեզ. և զճանապարհս երկնից
արքայութեանն ուսոյց. և զերկիրս երկին արար. և զաշխարհս
զդրախտ կազմեաց. յորում եցոյց հանգոյն նունենւոյ զծաղիկս
մարտիրոսաց. զշուշան կուսանաց. զմանուշակ խոնարհաց.
զնարդոս խոստովանողաց. և պահօք ժուժկալողաց. և այլոց
բազմաց վկայից։ Վասնորոյ և ասաց աշակերտացն թէ որպէս
առաքեաց զիս հայր, և ես առաքեմ զձեզ. գնացէք այսուհետև
աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն
հօրն և որդւոյ և հոգւոյն սրբոյ, և ուսուցէք նոցա պահել
զամենայն զոր ինչ պատուիրեցի ձեզ Մատթ. 28. 18։ Որք եր-
թեալ՝ ի սփիւռս քարոզեցին, և մկրտեցին, և ուսուցին զը
հաւատս քրիստոնէութեան. և լցին զտիեզերս ծաղկօք, որովք
զարդարեցին զեկեղեցի սբ, և արարին իբրև զդրախտ ամենայն
պտղօք, և հաստատեցին հանգոյն նունոյն պինդ և ամուր կեղևով
մինչ

digitised by A.R.A.R.@

մինչ զի եղբարք զժողովս հաղթահարելոյ կարեն. յորում բազմութիւնք հաւատացելոց իբրև զհօտ նաւուն պարունակեալ 'ի ներս զեկեղեցին կարգաւ, որոց սէրն և անձն մի ոգւոյն. Պատուիրոյ կարմրորակ քաղաքային զունդով արեամբ ներկեցան, որովք զնահատակեալք ուրախ եղեն։ Որպէս երանելին Պօղոս ասէ ուրախեմ 'ի չարչարանս իմ վասն ձեր. և լնում զչարչարանաց Քրիստոսի զպակասութիւն 'ի մարմնի իմում. վասն մարմնոյ նորա որ է եկեղեցի. և արդ ուրախեմ զի յամենայնի համարձակ եմ առ ձեզ Կղ. 1. 24. 2 Կր. 7. 16. Պատուիրոյ առաջին զլուխն է անուն ուրախութեան. ուստի ասէ՝ առաքեալն յաւէտ և եղբարք իմ ուրախ լերուք 'ի տէր. Իբրև հաղորդեալք Քրիստոսի չարչարանացն ուրախ լինիջիք. զի և 'ի յայտնութեան փառաց նորա ցնծայցէք. ուրախ եղիջիք Փլպ. 3. 1. 2 Պետ. 4. 13. և որքան առաջս Յովհաննէս գրեաց առ ընտրեալն կիւրիայ թէ՝ ուրախ եղէ յոյժ. զի գտի որդեկացդ քոց, որք գնան ճշմարտութեամբ ըստ պատուիրանին զոր առաք 'ի հօրէ։ Ուրախեք անձամբ և փառաւորեալ խնդութեամբ ընկալեալ զկատարումն հաւատոյն ձերոյ զհոգւոյն փրկութիւն 2 Յհ. 1. 4. 1 Պետ. 1. 8. Քանզի զուարթ եկեղեցին սէր. և ծառք 'ի նմա անհատ ոստիք հաւատացելոցն զորս յուռարէն ապ անդրօրէ. Այգիքն ծառ անդրաշրջեալ. և առայս ասէ ամենայն ծառ որ ոչ առնէ պտուղ բարի հատանի և 'ի հուր արկանի Մտ. 3. 10. և առաքեալն ասէ, ես տնկեցի և Ապողոս ջուր ետ. այլ Աստուած էր որ աճեցուցանէ 1 Կր. 3. 6. և պտուղ այսոցիկ ծառոց սէր, խնդութիւն, խաղաղութիւն, համբերութիւն, քաղցրութիւն, երկայնմտութիւն, հեզութիւն, հաւատ, պարկեշտութիւն, ժուժկալութիւն ճնշումն և այլն. Գաղ. 5. 22. Յայտ. 22. 2. [illegible] քանզի մարդիկ աշխարհի նմանին ծաղկանց. զի որպէս ծաղկունք բուսանին արևմտեան հողմով. և սակաւ ինչ խոնաւութեամբ անանին. Բայց վաղվաղին հիւսիսային հողմով. և ջերմութեամբ արեգականն և կամ հարաւային հողմով տապանան և չորանան, և կամ դրասութեամբ խամրանան. որովք գեղեցկութիւնք նոցին կորնչի և ոչնչանայ. նոյնպէս և պատահի մարդկանց աշխարհի. Զի որպէս ծաղկունք պճնազարդ լինին 'ի հիւսիսային հողմոյ

նմա

digitised by A.R.A.R.@

նմանապէս եւ մարդիկ՝ ի մահ հնձանին. զորմէ գեղեցիկ գրէ սրբազան առաքեալն Յակոբոս թօթափեցաւ ծաղիկ նորա եւ կորեաւ վայելչութիւն երեսաց նորա Յկբ. 1. 11: Որոյ հետեւի գեղեցիկ ոտանաւորս.

Մարդոյ անուրջն որպէս խոտոյ.
եւ փառք նորին նման ծաղկոյ.
Յամաքի խոտն ՝ի խիստ տապոյ.
Թափի ծաղիկն՝ի սուր պատառոյ.
Մարդն է դէտ. ծառ՝ կեանքն է արմատ.
մահն առ արմատն եդեալ հաստատ.
Օր մի առնէ՝ զնա կէ նատ.
տանի տանեան մեհին ՝ի դատ:

Բայց այս ծաղիկ բանական, եթէ իցէ հանդերձ նորոգ ոալ առաքինութեան, անուշահոտ ճգնութեամբ, այլ քան հոգւոյն Հեզ, սգաւոր, քաղցեալ եւ ծարաւի արդարութեան, ողորմած, սրտիւ սբ, խաղաղարար, համբերօղ հալածանաց. եւ առնիլ նախատանաց Մտթ. 5. 3: Այսպիսին առաքի՝ ի դրախտն երկնից արքայութեան՝ ի տեսութիւն սուրբ դիմոյն արարածոյ, ուր հրեշտակաց բազմութիւնք հանգոյն նման հարսից շքեղանալեալ լեն կարգաւ: Ընդ որ եւ ասէ:

Նարդոս և քրքում. եղեգն և կինամոն. հանդերձ ամենայն փայտիւք Լիբանանու. զմուռս և հալուէ. հանդերձ ամենայն առաջնովք խնկովք:

Զասն նարդոսի, նախապէս գրեցաւ՝ ի յանցեալ տանս. և ՝ի մեջ գլխոյ 11 համարին. եւ աստ չունի պէտս վերստին գրելոյ. Իսկ և քրքումն ծաղիկ մի կապուտակ, որ բուսուցանէ՝ ի մէջ իւր զփոշիս մի խարտեաշ գունոյն եւ հոտաւէտ. զորս ՝ի գործ ածեն ՝ի ներկս եւ ՝ի դեղորայս, եւ ՝ի հանդերձանս կերակրոց քանզի զուարթացուցանէ զսիրտ մարդոյ եւ ուրախ առնէ. Հանգոյն այսմ եւ հարսն ճգնութեամբ կապուտակեալ, յանապատի մենաւորեալ՝ ի լերինս եւ ՝ի այրս, եւ ՝ի խաւարս, եւ հանապազ եւ խոստովան լինի թէ արքայութիւնն Աստուծոյ ոչ է կերակուր եւ ըմպելի, այլ արդարութիւն եւ խնդութիւն եւ խաղաղութիւն ՝ի Հոգի սբ Հռմ. 14. 17: Իսկ եղեգն է անուշահոտ բոյս ինչ, որ մինչ ձգի՝ ի հուր՝ իբրեւ զխունկ բուրէ զանուշահոտութիւն, նոյնպէս եւ հարսն նեղ եւ տանջանօք ճանապարհաւ ժառանգէ՝ ի

յա

յամբիծանական կեանս. որպէս երեք մանկունքն 'ի հնոցին բա-
բիլոնի երգեալ զխունկ բուրեցին զանուշահոտութիւն օրհնութեան
և փառաբանութեան։

Կինամոմն է ներքին կեղևն դարիճենւոյն ( զոր ոմանք կինամոն
գրեն ) որ է անուշահոտ և քաղցրահամ, զոր 'ի գործ ածեն 'ի
կերակուրս և 'ի դեղորայս. և զայսյանէ առեն զեռացեալ կաթ-
սայս ցրտացուցանէ, և ըստ քուն խօսիլ տայ մարդոյ։ Զորմէ
պատմէ Ցօհան եղիկային առելով այսպէս, թէ՝ է և 'ի խունկս
ինչ կինամոն զարմացական. որ զնմանէ են ասանելի բանք ճառ-
տակսն։ Եթէ 'ի ջուր ինչ կաթայից եռանդական. արկեալ
փոխէ զնա ցրտութեամբն սառնական այլ և 'ի քուն զօրով մար-
դոյ և թմրական. մերձ առ շրթունս եդեալ բղխէ բարբառ-
ոյ բանս։ Այլ և կարծիքն ինչ կասութեան ոք լուծական. զնա ծխե-
լով խոկ ճշմարիտ առեղծականն։ Որպէս ողջախոհ մոլիքն 'ի
ներքուստ եռացեալ զհուր յանձնականին և յանկականին շի-
ջուցանեն, և զհրկիզումս մոռացեալ՝ զերկնից խօսին և զնմա-
նէ պատմեն յարածամ։

Համբերէ վեհոյն կրակոյ լեռնանա. փայտքն լիբանանու են անու-
շահոտ և գեղեցիկ. և 'ի պէտս շինուածոյ յարմար, որովք խմա-
նամք զհրեշտակս և զհեթանոսս, որք անուշահոտ համառօտ
քրիստոնէութեան յաւելան յեկեղեցի սբ. առ որս գրեաց սրբազան
առաքեալն թէ՝ եղուք իբրև զվէմս կենդանիս շինիք տաճար
հոգևոր, յանարատ քահանայութիւն, մատուցանել զհոգևորն
պատարագ հաճոյս Աստուծոյ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի
I Պետ. 2. 5։

Զմուռս. եղերասսուք սառաչնական ծառոյ դառն համով. բայց
անոյշ հոտով. որոյ հոտն փախուցանէ զօրդունս և սատակէ.
որպէս հոտն եղևնափայտից զօձն տարամերժէ. Սորին յատկու-
թիւնքն առեա 'ի յերեք գլխոյ 6 համարին։ Այսպէս և հարքն
եկեղեցւոյ առատաձօք դառն ապաշխարութեան զպէսպէս
խորհուրդս թշնամւոյն տարամերժէ յինքենէ, և զօձն սատանայ
'ի բաց հալածէ, և փախուցանէ. Հալուէ է անուշահոտ բայց իմն,
յորմէ բղխի, հիւթ ինչ առատիկ դառն, զոր 'ի գործ ածեն 'ի
դեղորայս և 'ի ծխանելիս և կամ 'ի դիպաստութիւնս. վասնորոյ
աննիպանդկայ զօրութիւն առնու. մինչ զի զմեռեալ նոցա զմարմինս
մեռելոյ

digitised by A.R.A.R.@

մուելոյ, պահէ զնա 'ի փառաւորութենէ, որպիսի է և զմուռն. Նոյն-
պէս և հոգին որով անդամք և որով զգայութեամբք, արդարք
զբարութիւն և զողորմութիւն զառաքինութիւն, այսու ընկալնու
զփոխարէն, և նովաւ ունելոյ զյաւուր բերկրութիւն և զյաւ-
տենական փառս և պատիւ. Որպէս աչք մեր եղեւ կատարեալ որք ոչ
երբեք հայեցան յերես կնոջ. Մարմին 'ի պերճութեան ամենայնական
և այնքան փոյթ ունի մինչ զի թուեցին երկու անդամանց ակամբք.
Նոյնպէս և ձեռք մեր բարեպաշտ թագաւորի, որ բաժանէր
զպատառ ողորմութիւն աղքատաց, պահպանեցաւ մինչև ամբողջ
և քաղցրահոտ. Լեզուն մեր կրօնաւորի որ բազում զօրութիւ-
օրհնէր զԱստուած, և քարոզէր զաւետարանն 'ի եղև ենէ ...
առաքինութեան, այլ զլեզուն մեայ կենդանականեր, և կարմրագոյն
'ի մէջ մոխրոյ. Գլուխն մեր սրբուհոյ կուսին, զոր 'ի կենդա-
նութեան իւրում պսակէր փշօք, զկնի մահուան երևեցան
փայլեալ այնքան ճառագայթիւք որքան վէրք եղեալ էին 'ի փշոյ
անտի. և զայսոսիկ մի ումեք անկար թուեսցի և ասասցէ թէ
ոչ կարեմ, այլ ասեմ թէ՝ որքան և կարող էր. Որպէս ասաց
Թարսեղ 'ի հարցողաց 186 քանիյն ասէ թէ՝ ոչ հրամայէ քեզ
բաժակերորն և արդարոցն, եթէ ոչ զհնարաւորն. զի Աստուած ըստ
իւրում բարերարութեանն ըմբռնի զանկարողն իւրն. ըստ ...
բեալ զլուսոյն այրւոյն՝ իբրև գթացում ինչ. զթութով ...
Մովսէսի՝ քան զճշմարտաբանութիւնն յանէսի և յակոբոսի.
Զօրացեալ օրհնութիւնն՝ քան զարդարոյն 'ի տաճարին և քահա-
նայիցն 'ի եկեղեցին. Հոգևորական ... Խաղաղէն. զայս յառա-
ժամ ունսայնէ մեզ փեսայն հոգւոյ. ասելով՝ լուարուք զի
ասացաւ յառաջնոյն՝ մի սպանաներ. այլ ես ասեմ մի բարկանար.
Ասացաւ մի շնար, բայց ես ասեմ մի հայեր 'ի կին. Ասացաւ մի
երդնուր սուտ, և ես ասեմ ամենևին մի երդնուր. Ասացա-
ւն է ակն ընդ ական, և ես ասեմ մի կալ հակառակ չարին. Լուարուք
զի ասացաւ սիրեսցես զընկեր քո և ատեսցես զթշնամին քո. և
ես ասեմ, սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց.
և զաղօթս որ 'ի կարգին. Մատ. 5. 21. Այսոքիկ կամք փեսայի՝
առաքինութիւնք և բարի գործք, բայց յորդորականք և ոչ հրա-
մանք. քանզի արդարութիւնն ոչ բարկանալ և կատարումն այն
ոչ զայլոց բարկութիւնն՝ քաղցրութեամբ իւրով շիջուցանէ.
Արդ

Արդարութիւնն զայլոյն ոչ յափշտակէր, և անկատար է եթէ
զիւրն ոչ բաշխեսցէ։ Արդարութիւնն ոչ թշնամանել զայլս,
բայց անկատար է եթէ զթշնամիս իւր ոչ օգնեսցէ. այսորիկ
Ազնիւ խունկ հոտաւորոյ զոր թուէ Պօղոս որ ողորմի խնդ-
ութեամբ. սէր առանց կեղծաւորութեան ատել զչար,
զհետ երթալ բարւոյ և զոյն Հռոմ. 12. 8.
Դարձեալ նարդոսն՝ յայն, քրքումն՝ հաճոյ, խունկ եղէգ՝
խոնարհութիւն, կինամոն՝ աղքատութիւն, զմուռն և հալուէն
արիութիւն։ Որք բժշկեն և փարատեն զքաղցումն հիւանդութեա-
ամենայն փոյթիւքն ընդանեաւ, որով խմորեալ զամենայն առա-
քինութիւնս որք զեղեցիկ պայծառութեամբ զարդարեն զհո-
գին և հաստատութեամբ միացեալ Քրիստոսի. և խունկք խնա-
ամք զխոնարհութիւն այսպէս առաքինութեան որք գեղեցկա-
պայծառեն զպարտէզ Հոգւոյ վերայ զանազան և պէսպէս անու-
շահոտ ծաղկօք բարեկարգութեան։

Աղբիւր պարտիզաց ջրհոր ջրոյ կենդանւոյ հոսեցելոյ ի Լիբանանէ.

Աղբիւր պարտիզաց չմնալով միայն (որպէս յառաջ կնքեալ ասաց) զի յայտնի մնասցէ. և մաքուր և նուրբ, համեղ և անուշ, և զպարտէզն ոռոգանեսցէ. խոկ աղբիւրք լերանց և ջրաշատ եղանին խառնակք և պղտորք աղտեղանեալք, և հոսեալք զի երեք փոյթ ընդ հէն և խոտք շաղախեն և ի կճղեակս զազանաց և անասնոց խառնին։ Աղբիւր պարտիզաց անուանէ զՀարսն. Որով առաւելու զգեղեցկութիւն Հարսին զի աղբիւրն պարտիզաց ոռոգանէ զպարտէզս տրոխաւին։ Վասնզի նախ աղբիւր կոչեցաւ Աստուած բանայն Թողին զիս զաղբիւրս ջրոյ կենաց Երեմ. 2. 13. Զի որպէս որ մերձենայ՝ ի մեզ առ ի Հոգին. Նոյնպէս և որ նմա հարսնանայ լինի աղբիւր կենդանի ջրոյ. այսինքն շնորհաց Հոգւոյն ընդունարան։ Վասնորոյ ասէ երեք Թէ՝ աղբիւր՝ պարտէզ՝ և ջրհոր՝ Հարսն եկեղեցի. և ջուր կենդանի շնորհք Հոգւոյն սրբոյ, որ զարդարէ զպարտէզ իւր զՀարսն եկեղեցի. Երկրորդ՝ պարտէզ Հարսն. աղբիւր սրբուհի կոյսն Մարիամ, որ եղև ընդունարան կենդանի ջրոյ շնորհաց ամենայն Հոգւոյն Աստուծոյ. Նմանապէս եղև ջրհոր կենդանի ջրոյ միածնի որդւոյն Աստուծոյ, որ հոսեցաւ ի Լիբանանէ յերկնից, որով ոռոգեալ զպարտէզ եկեղեցւոյ. ... լցան ամենայն երկիր

գի

digitised by A.R.A.R.@

գիտութեամբ տեառն, իբրև զջուրս բազումս որք ծածկեն զծովս Եսայ. 11. 9։ Երրորդ՝ աղբիւր և ջրհոր, առաքեալք. մարգարէք, և վարդապետք, և ջուր կենդանի հոգին սուրբ, որ լնոյ զամենեսին ջրհորիւ, որովք եղեն աղբիւր կենաց, և արբուցին ամենեցուն. Ըստայնմ ամենայն աղբիւրք յուդայ բղխեսցեն զջուրս. և աղբիւր ելցէ ՚ի տանէ տեառն և արբուսցէ զձորն վիճակաց Յովէլ. 3. 18. Որովք սպիտակացուցին զպատմուճանս իւրեանց արեամբ գառինն և կան առաջի աթոռոյ գառին, և գառն ՚ի միջոյ աթոռոյն հովուէ զնոսա, և առաջնորդէ նոցա ՚ի կենաց աղբիւրս կենդանի ջրոյն Յայտ. 7. 14. Որ է հոգևոր վարդապետութիւն կենարարին բղխեալ ՚ի հոգւոյն սրբոյ։ Ըստ որում արբին առաքեալքն, և արբուցին համօրէն եկեղեցւոյ. զի փեսայն հոգւոյ աղաղակելով ասէ՝ եթէ ոք ծարաւի իցէ եկեսցէ առ իս. և որոք կամիցին առնուլ զջուրն կենաց ձրի Յայտ. 12. 17. և որք առին եղեն հաղորդակիցք խորհրդոյն Աստուծոյ. և անուանեցան ջրհոր կենդանի ջրոյ. զի ջրհոր խորէ խորհուրդ սրտի առն, և այր իմաստուն քամեսցէ զնա Առակ. 20. 5. Բայց համեալ ՚ի վերանանէ ասէ, այսինքն ՚ի յերկնից, և անտի ՚ի ձկնորսաց ՚ի մեղաւորաց ՚ի մաքսաւորաց. և ՚ի այնպիսեաց. զի արդարք որպէս զմայրս լիբանանու բազումք եղիցին։ Գործեալ աղբիւր պարտիզաց անուանեցաւ հարսն, և ջրհոր կենդանի ջրոյ. զի հանգոյն յորդառնացող աղբեր, և մշտաբուղխ ջրհորոյ յարաժամ ոռոգէ՝ զպարտէզ ուղղափառն եկեղեցւոյ, զքաղցեալս լցուցանէ, զծարաւիս արբուցանէ, զկարօտեալս մխիթարէ, զորբս և զայրիս պատսպարէ, անյուսելոյ միջնորդէ, հնազանդելոյ քաջալերէ. Որպէս պատմի ՚ի վարս սրբոյ թէ՝ սրբուհի կոյս ոմն և մարտիրոս՝ պատմեաց ՚ի մէջ բազմաց ասելով թէ՝ ես յաւուր միում յորում ջամբեցի զգին զարդուց իմոց աղքատաց Քրիստոսի տեսի ՚ի տեսլեան զմանուկ մի ոսկեղէն թագիւ, ծիրանեաց պայծառ հանդերձիւք ակնածելի տեսլեամբ յօրինեալ, որ քաղցր ձայնիւ և ցնծալի դիմօք ՚ի յիս հայելով ասաց, ով կուսութեան որոշ՝ ՚ի դորձս խաւարայ, այլ մի՝ ՚ի ճաճանճաւոր լուսով ջրջիս զայս լսելով իմ զարթեայ, և սկսայ լալ և արկանելով զիս յերկիր, աղաչեցի զտէր, զի այն որ ինձ ասէր զքաղցրագոյն բանս, վերստին հեռեեսցէ խօսիլ, որպէս և խօսեցաւ ընդ նմա



digitised by A.R.A.R.@

առաջնոյն, թէ կուսութիւնն արքայական ծիրանիէ, որ ոչ և զգենու քան զայն գերազանցէ, կուսութիւնն կենաց աղբիւր է զամենեսեան արբուցանէ. կուսութիւնն պատուական ակնէ, կուսութիւնն անշառ թագաւորական գանձէ, նմա զայլ.ք և աւա- զակ.ք զարդանակալին. զայս դու հակելով զգուշասցես պահեա և առաւել հոգածակալեսցես, զի մի կորուսանիցես. Զայսոսիկ լուեալ կուսին, զգլխա ամենայն զարդուց ելոյց բաշխեաց աղքատաց։ և յաղագս պահելոյ զկուսութիւնն, և արիաբար մարտիրոսացաւ վասն ՛ի Քրիստոս հաւատոյն.

Համար ԺԵ. որ՝ կենաց՝ և էն հորոյ ընթեր՝ ՛ի պարտէզ ԺԵ. և ջրոյ հոսելոյն Լիբանանէ ԺԵ.

Հիւսիս եմուտ ՛ի չորից կողմանց աշխարհի, որք յաջակողմն յարևե- լից, և հանդէպ հարաւոյ. Բայց աստանօր հիւսիս անուանէ հիւսիսային հողմոյն, առ՝ որ՝ ընդդիմահարանէ զմարմինս և ամենայնանէ, (որպէս առ՝ ՛ի գիրս նմանութեանց) և զժամանակամանական օդն թժչէ, և զմարդողութեան օդնէ, և զպահողական զօրացուցանէ, և զծնողական զօրութիւն ամենայնանէ։ Ասէ արիստոտէլ թէ՝ ՛ի ներքոյ այսորիկ հողմոյ ծնանին արուքն. զի ոչխարքն եթէ յղանան դէպ հիւսիսային հողմոյն զարու ծնանին, իսկ եթէ դէպ հարաւային հողմոյն զէգս ծնանին. Այլ և ասեն թէ Յակոբ նահապետն՝ ՛ի ներքոյ այսորիկ հողմոյ եդեալ խայտա- խարիւ գաւազանն առաջի աչաց հօտին առ ՛ի ծնանիլ։ Նաև սառուցանել և պաղեցուցանել հիւսիսային հողմոյնէ. հալել և լուծանել հարաւային հողմոյն։ Ուստի ասէ թէ՝ վասն փարա- ւոնի, սրտմտութիւնն. Աստուծոյ յորդոյ զհողմն հիւսիսոյ որով բաժա եղան ջուրք կարմիր ծովուն, և պաղեցան երկուց կողմանց, և կային իբրև պարիսպ ջուրք ծովուն. ուստի անցին որդիքն իսրայէլի։ և հողմով հարաւոյ լուծեալ հալեցաւ, և ընկղմեալ ծածկեաց զփարաւոն։ և զամենայն եգիպտացիսն, որպէս ասէ Մովսէս թէ հողմով սրտմտութեան քոյ բաժա- նեցան ջուրք. պաղեցան իբրև պարիսպ ջուրք, պաղեցան ալիք ՛ի մէջ ծովու. Առաքեցեր զհողմ քո, և ծածկեաց զնոսա ծով Ել. 15 8։ Զի քո արարածքս զարարիչդ արքանեկեն, և սաստ- կանան ՛ի տանջանս անիրաւաց։ և օրհնի բարերարութիւն, փա- ռաւորն՝ ՛ի քեզ յուսացելոց իմ. 16. 24։ և հարաւային հողմէ

բևեռ

բուսուցիչ և աճեցուցիչ սերմանց. զի ջերմութիւն պատճառէ՝ զանձրեւս և զցօղս մատակարարէ. զերակունս երկրի բանայ՝ զգետս ծնանի. և տայ զառատութիւն անձրեւս և բղխեցուցանէ զծաղիկս. և բուրեցուցանէ զհոտս. Այսորոյ և հարան հիւ- սիսային և հարաւային հողմոյն հրամայէ առ՚ի շարժիլ միայն ելանել և կանգնիլ և մտանել գալ և շնչել ՚ի պարտէզ հարսնոյ և մատոյ եղոյ ( որպէս գերերջանիկ փեսայ հարսին՝ հրամայեաց հողմոյն և խաղաղութեան ջուրցն. Ղուկ. 8. 21. Ըստ հետոյ ասէ զի ելեալ զարիական զօրութիւնս պահպանեսցէ. և զդժոխ- մնական զախտսն սանձահարեսցէ. և զառաջին բարկութեան և որոմնութեան ՚ի բաց մերժեսցէ. և զժամանակեան պատե- րազմն վաճաշատութեան տարահերքեսցէ. զհոգևոր բարութիւն ծնուսցէ. և զառաքինութիւնս աճեցուսցէ. և հարաւային հողմոյն ասէ. եկ հոգւոյ շնչեա՛ ՚ի պարտէզ իմ. զի եկեալ զգետս այսպէս աղբերս յորդեսցուսցէ. զանձրեւս և զցօղս առատապէս մատակարա- րեսցէ. զհոգևոր ջերմութիւնս սիրոյ պատճառեսցէ. և զերա- կունս զգայութեանց բանասցէ. զխնդակութիւնն զօրացուսցէ. զբարութեան սերմանիս բուսուսցէ. և զխունկս աղօթից անձ- կացուսցէ և բուրեցուսցէ. որպէս գրէ Ղուկաս վարդապետն.

Արի հիւսիս իմ գրաստեալ.
Եկ իմ հարաւ միշտ ջերմացեալ.
՚Ի պարտէզ իմ քաղցրիկ հնչեալ.
Որով խունկ իմ լինի բուրեալ.

Այսորոյ ասէ՝ արի հիւսիս, ուր կամի առնել եղ գնայ հիւսիս՝ որ է սառամնոյ և գործք նորին՝ քանզի խիստ հողմ հիւսիսոյ ասէ Սողոմոն: Զի հեռի է արեգական ջերմութենէն. և եկ հարաւ- այինքն շնորհք հոգւոյն Սրբոյ: ՚Ի խարձեալ հիւսիսային հողմով խմանամբ զձախորդութիւնք կենցաղոյս. և հարաւային հողմով զյաջողութիւնք ներկայ կենիս: Զի և ձախորդութեան հետևէ յաջողութիւն, և անդրադարձօրէն զկնի յաջողութեան հետևէ ձախորդութիւն. զի ըստ փիլիսոփայից կարգակցեալ են միմեանց. Որպէս զենոն կայսրն ասէր յորժամ յաջողութեամբ նաւէր, յետոյ նաւաբեկութիւն կրեցի. Զի որպէս ձմեռան լինի սառ- նիկ սրտութիւն և յաջախ ձիւն մեջնորդութեամբ հիւսիսային հողմոյն. որով թէպէտ կենդանիք սրտանան, սակայն երկիրն

պա

պարտաւորութեան յղանալ և պատրաստ ծնանիլ և տալ զպտուղ ՚ի ժամանակի. նոյնպէս և նեղութիւնն և ձախորդութիւնն յղանայ երկնէ և ծնանի, զ յար-խառնական պտուղն. վասնորոյ ասէ՝ երանի որք հալածեալք իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւնն երկնից. Մատթ. 5. 10. Վասնզի յաջողութիւնքն յափշտակեն զմիտս, և ձախորդութիւնքն մտաբերեն. որպէս նաբուգոդոնոսոր արքայն ասաց՝ յետ կատարածի աւուրց զաչս իմ յերկինս համբարձի, և միտքիմ առ իս դարձան Դան. 4. 31. և յայտնմանէ այն որ ասէ՝ տեսի և ահա հողմ վերացեալ գայր ՚ի հիւսիսոյ, և հուր թագուցեալ ՚ի նմա, և լոյս շուրջ զնովաւ, և հուր փայլատակիւր ՚ի նմանէ. և ՚ի մէջ նորա իբրև զտեսիլ քաղմարդունի ակնոյ, և ձայն պայծառ ՚ի նմա. Եզկ. 1. 4. Որով իմանամք զձախորդութիւնքն խաւար և ցուրտ. և յաջողութիւնքն լոյս և ջերմ. Թէպէտ այսու մօք հարսն սատանոր ասէ՝ ել հիւսիս զի ժամէ խլելոյ. և եկ հարաւ զի ժամէ տնկելոյ. Զի ոգնիքն ևս չինեն իւքեանց կրկին ոգիս, մինն ընդդէմ հիւսիսային հողմոյ՝ առկս փախչելոյ ՚ի ջերմութենէ. և միւսն ընդդէմ հարաւային հողմոյ վասն խոյս տալոյ ՚ի ցրտութենէ. Դարձեալ հիւսիսային հողմնէ դառնաշունչ որ խստացուցանէ զձմեռն որպէս մեղքն զմարդիկ Մատթ. 19. 8. և հարաւային հողմն ջեռուցանէ, որպէս հոգին սբ. զմեզ ՚ի բաց հալածէ. զի շնչեաց որպէս և կամեցաւ արտաքոյ մեր զխտութն, և փախոյց զխաւար տգիտութեան, և եբոյծ զասանամանիս մեղաց և կապաշտութ. և ջեռոյց զմեզ ՚ի ջուրս աւազանին մկրտութեան, և ՚ի հաւատս յաստուածպաշտութեան, զի ըստ մարգարէին ՚ի ջուրս հանգստեան սնոյց զմեզ. և գիտային մարդիկ ՚ի չարէն արտաքս փախչել, և արդարութեամբ ընդ առաջ ելանել. ըստ հարկաւորպետին, թէ ասեմ չարին երթ և երթայ, և բարւոյն թէ եկ և գայ. որոյ հաճեալ առաւել եղոյց տէր մեր, քան զխորայնլացւոյն Մատթ. 8. 9. և մարգարէն ասէ, շնչեսցեն հողմք և գնասցեն ջուրք. այսինքն զշնորհս հոգւոյն սրբոյ որովք բուրեսցին անուշահոտ բուրմունք խնկոյ արդարութեան ընդ տիեզերս ամենայն. Այլ և սմանք հիւսիսիւ իմանան զպղծութի և զհամբաւն վարդապետութիւնքն, և հարաւու զառաքելոյ ... քարոզութիւնքն որ զերազանցեաց քան զամենայն վարդապե-

տու

digitised by A.R.A.R.@

տութիւն քան զամենայն խորհուրդ եւ քան զամենայն բան.

Բայց Հինգերրորդ՝ գլուխ նախ հարսն աղաչէ զփեսայն ըստ նախկին տեսանողացն. զի իջցէ ՚ի պարտէզ յարգասիս կուսին եւ առնել զբնութիւն մարդկան սեւ, եւ ճաշակել զպտուղ հաւատացելոց իւրոց. Երկրորդ՝ փեսայն պատասխանէ (զլինե-ղեալն իբրեւ եղեալ եւ կատարեալ) թէ՝ մտի ՚ի պարտէզ իմ, եւ կերայ զանօրէնութիւնս իմ. ըստ եղիայի յաւուրս զմեռանել մանուկնս. եւ ինչեւ ՚ի տապանի, մնալով արթուն աստուածութիւն. Երրորդ՝ հարսն զգայ ձայնի փեսային, եւ զբաղխումն դրան. Չորրորդ՝ փեսայն ձայնէ հարսին զի բացցէ. Հինգերրորդ՝ հարսն պատճառէ զմերկութիւն, եւ զլուացումն ոտից եւ զխու-ժիլ որովայնին. եւ դարձեալ յառնել եւ բանալ, եւ խնդրել ըզ փեսայն, նորա անցեալ, եւ հարսն զինի շրջելով առ դիւրի պա-հապանաց, մերկացուցանել եւ վիրաւորել. Եւսա դարձեալ երդմնեցուցանէ զդստերս երուսաղէմի, եթէ գտանիցեն ըզ փեսայն պատմեսցեն նմա. Վեցերորդ՝ եւ նոքա հարցանեն ըզնշանաց փեսային. Եօթներորդ՝ սկսանի հարսն յամենայն յան-դամոց փեսային կարգաւ պատմել. պարզիկ մինչեւ ց16 համարն. Ութերորդ դստերքն երուսաղէմի վերստին հարցանեն թէ՝ ո՞ւր գնաց եղբօրորդին քո, զի խնդրեսցուք զնա ընդ քեզ. Հարսն աղաչէ զփեսայն եւ ասէ. Իջցէ եղբօրորդին իմ ՚ի պար-տէզ իւր. եւ կերիցէ զպտուղ ծառոց իւրոց. Փեսայն ՚ի հարսն ասէ. Մտի ՚ի պարտէզ իմ հարսն. կթեցի զմուռս հանդերձ խնկօք իմովք. կերի զհաց իմ մեղու իմով. արբի զգինի իմ կաթամբ իմով. կերայք մերձաւորք իմ եւ արբէք. արբեցարուք եղբօրորդեակք իմ.

Այս է ձեւ իմն աղօթից, որպէս ՚ի սկզբանն թէ՝ համբուրեսցէ զիս. նոյնպէս եւ աստ պաղատի. իջցէ եղբօրորդին իմ ասէ. ՚ի պարտէզ իւր. Ըստ մարգարէին թէ՝ եկեսցէ ի սիոնէ փրկիչ՝ եւ դարձուսցէ զամպարշտութիւնս յակոբայ Եսա. 59 20 կամ որպէս Դաւիթ ասէր թէ՝ խոնարհեսցո՛ զերկինս եւ էջ. Նոյն-պէս եւ այլք պաղատէին. Իսկ եւ աստանօր հարսն մաղթէ զգալուստ փեսային, առ ՚ի խոնարհիլ ՚ի մեր նուաստութիւն եւ առնել զբնութիւնս մեր, զոր պարտէզ անուանէ. զի պարտէզ իւր ասէ. զի ձեռաց իւրոց ձեւացաւ, եւ պատկերաւն իւրով

[illegible]

զարդարեալ, և շնորհիւ պերճացեալ. Իջցէ եղբօրորդին իմ ՚ի պար-
տէզ իւր. ասէ, պարտէզ յորում ամենամաքուր են կուսոյն և
պտուղ նորին՝ անբիծ կուսութիւնն. և զաստուածահաճոյ խոնար-
հութիւնն որ ՚ի նմա. Երկրորդ՝ պարտէզ զաշխարհս, և պտուղ
զպաշտօնս հաւատացելոց. Երրորդ՝ պարտէզ զաստուածընկալ
մէջ գերեզմանն նորին, և պտուղ զփրկութիւն հոգւոյս. Չոր-
րորդ՝ պարտէզ եկեղեցիք հաւատացելոց, յորում միշտ բնակի
փեսայն հոգւոյ. Քանզի ես եկից և բնակեցայց ՚ի մէջ քում
ասէ տէր. Եւ հինգերորդ՝ անուանէ ըստ մարմնոյն քերթողականաց
երեւելւոյն, որոյ երեք եղբայրն է՝ր յապաւակս յերկնից. Կամ
զաս աստուածահայրն Յովսէփ և աստուածածինն Մարիամ նկա-
տելով. ուր ՚ի մէջ նորէ նախնոյն Ադամայ սերեալք եղեն. յորոց
փեսայ և անուանեալ որդի. Եւ կերիցէ զպտուղ ծառոց իւրոց. Թէ-
պէտ անկարօտ էր. բայց սակայն քաղցեալ և կարօտ մերոյ
փրկութեան. վասնորոյ ասէ իմ կերակուր այն է՝ զի արարից
զկամս այնորիկ՝ որ առաքեաց զիս, և կատարեցից զգործն նորա.
Յովհ. 4. 34. Ուստի ուտեմք զծառ կենդանի մարմինն անկեալ
՚ի պարտիզի յեկեղեցւոջ. որոյ սակս աղօթէ մարգարէն ասելք
ասելով՝ այց արա այգւոյս այսմիկ. զայն տուր սմա զոր տըն-
կեաց աջ քո. Սղ. 59. 16. Եւ զպտուղ իւր ՚ի ժամու տայ.
Զի պտուղ նոցին՝ հաւատն են, ընդ նմին և զբարի գործսն.
Իսկ և այնք ուք զկնի փեսային ճգնեալք, և հեղին զարիւնս
իւրեանց, պտուղ նոցին քաղցրէ ՚ի պարտիզի յեկեղեցւոջ յա-
ռաջի փեսային Յիսուսի. Վասնորոյ պաղատի հարսն զի իջցէ
և կերիցէ զպտուղ ծառոց իւրոց, խորհելով զայն թէ՝ ո՞ որ
տնկիցէ զայգի, և ՚ի պտղոյ նորա ոչ ուտիցէ. 1 Կոր. 9. 7.
Այլ և պտուղ պարտիզի եկեղեցւոյն է այն զոր ասէ փեսայն.
եթէ որ խոստովանեսցի զիս առաջի մարդկան, խոստովանեցայց
և ես զնմանէ առաջի Հօր իմոյ որ յերկինս է. Մատ. 10. 32.
Փեսայն հարսին ասէ. Մտի ՚ի պարտէզ իմ հարսն զկնի մաղթանաց
հարսին. պատասխանէ փեսայն թէ՝ ըստ աղաչանաց քոց. մտի
՚ի պարտէզ իմ, ՚ի յարգանդ մօր իմոյ. Զի զհեղեալսն իբրև եղէն
և կատարեալ ծանուցանէ. Այլ և պարտէզ կոչէ զաշխարհս, և
իմ ասէ, զի և մարգարէին ծանոյց թէ՝ իմ է աշխարհ լրիւ իւրով
Սղ. 49. 12. Մտի ՚ի պարտէզ իմ ասէ. զի Աստուած ՚ի յեր-

կին

կրի երևեցաւ, և ընդ մարդկան շրջեցաւ. ըստ կանխագրութեան Եսայեայ: Մտի ՚ի պարտէզ իմ. այսինքն առանդրանիկ ժողովուրդ իմ Իսրայէլ: և այս օրինակաւն Եղիսէի. զի մինչ աղաչեաց Սոմնացի մայր՝ մեռեալ մանկանն, զի յարուսցէ զորդի իւր, և նա առաքեաց զծառայն ցպով իւրով, զի եդեալ դիցէ զայն ՚ի վերայ մեռեալ մանկանն, և նա գնացեալ արար այնպէս, բայց ոչ շարժեցաւ մանուկն վասն որոյ հարկ եղև Եղիսէի, զի ինքնին մատիցէ առ մեռեալն. և տես դու թէ՝ զինչ արար, անկաւ ՚ի վերայ մանկանն, և եդ զբերանն ՚ի վերայ բերանոյ նորա. և զաչսն ՚ի վերայ աչաց նորա և ձեռսն ՚ի վերայ ձեռաց նորա և կծկեցաւ ՚ի վերայ նորա, և ջեռաւ զմարմին մանկանն և կենդանացաւ մանուկն 4 Թագ. 4. 29. Նոյնպէս և Աստուած առաքեաց զծառայս իւր զՄովսէս և զայլ մարգարէս ցպով օրինաց. բայց ոչ նոքա և ոչ օրէնքն կարացին յարուցանել զմեղօք մեռեալ մարդկային բնութիւնս. վասն այսորիկ հարկ եղև որդւոյն Աստուծոյ ինքնին անձամբ մատչել ՚ի մարդն և յարուցանել զնա առեցեալ մարմնովն. և լինիլ իբրև զմանուկ մարդեղութեամբ, ոչ միայն կծկելով ՚ի վերայ մանկանն մեռելոյ. այլ և առեալ զբնութիւն նորա. զձեռս, զբազուկս, զաչս, և զբերանս, և զամենայն որ ինչ է ՚ի մարդ բայց ՚ի մեղաց, նաև զհոգի նորա: Սոյնպէս ետ մեզ զհոգի կենդանութեան. և որպէս Եղիսէ առ ՚ի ջեռուցանել զմեռեալ մանուկն եօթնիցս փչեաց զշունչ իւր: Նմանապէս և տէրն մեր առ ՚ի ջեռուցանել զմեզ ՚ի սէր իւր, եօթն բանս խօսեցաւ ՚ի վերայ խաչին, որով ետ մեզ զշունչ կենդանութեան. Նախ թէ՝ Հայր թող սոցա զմեղս: Երկրորդ՝ ՚ի դէմս հաւատին եկեղեցւոյ ասաց աւազակին այսօր ընդ իս իցես ՚ի դրախտին: Երրորդ՝ առ մայրն ասաց կին դու ահա որդի քո. Չորրորդ ծարաւի եմ: Հինգերորդ՝ էլի էլի լամասաբաքթանի: Վեցերորդ՝ ահա ամենայն ինչ կատարեալ է: Եօթներորդ՝ Հայր ՚ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ: Որով շնորհեաց մեզ զեօթն պարգևս հոգւոյն սրբոյ. Մերեմն ոչէ դատարկ պարագայն թէ եդ զբերանն ՚ի վերա բերանոյ մանկանն, և այլն: Վերջապէս կծկեցաւ ՚ի վերայ նորա. Որպէս և փրկիչն ՚ի վերայ խաչին. Բայց փակեաց զդուռն՝ զի մի ոք տեսանիցէ: և որպէս անդ ոչ ոք ետես թէ որպէս արար Եղիսէ մանկանն, նոյնպէս և ոչ ոք

կարէ

digitised by A.R.A.R.@

կարէ ըստ բաւականին իմանալ թէ՝ զի՞արդ որդին Աստուծոյ գոլով ամենաբարձր և գերազանց բնութիւն, որպէս միաւորեցաւ ընդ մարդկային բնութեան կամ որպէս խոնարհեցաւ. Գոլով անմահ որ՞պէս մահացաւ. անչարչարելին որ՞պէս չարչարեցաւ. որպէս թաղեցաւ, Աստուածն յաւիտենից որ՞պէս մանկացաւ. մեծ է խորհուրդն, փակեալ է դուռն, ուրեմն ոչ է պարտ քեզ տեսանել՝ այլ միայն հաւատալ. զի քննելն յանդգնութիւն է, և հաւատալն արդարութիւն: Կթեցի զմուռս հանդերձ խնկօք իմովք. զի աստուածութիւնն մարդկութեամբ մեռաւ մարմնով, և եբարձ զբնութիւն մահու: Քանզի զմուռսով իմանամք զկիրս չարչարանաց փեսային հոգւոյ, և խնկօք զփրկագործ յարութիւնն, և զաստուածապէս համբարձումն նորին, որ գեր քան զանուշահոտ խունկ բուրեաց յաշխարհի, յաղագս որոյ խնկօք իմովք ասէ. Դարձեալ զմուռսով իմանամք զդեղութիւն և զանձկութիւն կրից առաջին արդարոյն, և զհեղումն արեան սրբոյն: և խնկօքն զաղօթս նորին, և զլրութիւն հրամանին Աստուծոյ: զի որ խնդրիցէ զանձն իւր ապրեցուցանել՝ կորուսցէ զնա. և որ կորուսցէ՝ ապրեցուսցէ զնա Ղկ. 17. 33. Որով եղեն մարդիկ անդամք փեսային, ըստ իւրաքանչիւր գործոյ: Վասնայն կոչեցան ազգ արդարութեան նորա: Կերի զհաց մեղու իմով. Հաց աւետարանական վարդապետութիւնն ասէ, և զմեղր հին օրինացն, որ փեսայն հոգւոյ եկեալ յաշխարհ. զերկոսեանն խառնեաց՝ ի միասին: Քանզի գինի ուրախ առնէ (ըստ մարգարէին,) և հաց հաստատէ զսիրտ մարդոյ: Դարձեալ հաց՝ մարմինն Քրիստոսի, և մեղր քաղցր գինի արեան նորին. զորս առեալ բաշխեաց հաւատացելոց իւրոց. Այլև հաց և մեղր ասելով զայն ցուցանէ, որ յետ յարութեան նորա, ետուն նմա ասէ, ձկան խորովելոյ մասն, և խորիսխ մեղու Ղկ. 24. 42. Արբի զգինի իմ կաթամբ իմով. զայս ևս ունիմք գրեալ՝ իսկ աւետարանիչս, որ՝ ի վերնատանն առեալ զբաժակ գինւոյն հանդերձ գոհութեամբ և ետ ըմպել աշակերտաց իւրոց: ընդ նմին և ետ ամենեցուն, զշնորհս բժշկութեան, զբան քարոզութեան, և զհրաման առաքելութեան, իբրև տղայոց կաթն ջամբեաց նոցա, և ինքն էարբ՝ ի հաւատոց նոցա ըզգինի ուրախութեան, և կամ՝ ի խաչին փոխանակ գինւոյ էարբ զքացախ, և՝ ի տեղի կաթին՝ էառ զլեղի. բայց գինի և

կաթն:

digitised by A.R.A.R.@

կամքն անուանէ. զի վասն փրկութեան մարդկան այգի ընկալաւ
զայն. Կերայ զհաց իմ և արբի ընկերօքն իմովք. իմ
կամս աստուածութեան կերայք զխորհուրդ մարմնոյ իմոյ. և արբէք
զշնորհս հոգւոյն արեան իմոյ. արբեցարուք յայսմանէ, որ արբէ
զձեզ ամենայն մեղաց ձերոց. Աստուածոյ կոչէ զեկեղեցւոյ
ժողովրդեանս ոյք հաւատով մերձեցան առ Քրիստոս. և եղբարս
որդի անուանէ զժողովուրդն հրեից յորոց և Քրիստոս ըստ
մարմնոյն Հռ. 9. 5. Ասասնոյ ասէ կերայք մերձաւորք իմ
որք ոչ օտարացայք գործով. կերայք և արբէք ըզիմ աստուածա
նական սեղանոյս զքաղցրութիւն վարդապետութեան իմոյ. և
զդիւցազանց աքանչելիս և զնշանս իմ. և արբեցարուք յիմ պատու
զականաց շնորհացս, և ուրախ լերուք. Ընդ որ այժմ ոչ հայեցեալ
հաւատայցէք, և ուրախ էք անճառ և փառաւորեալ խնդութեամբ
I Պետ. I. 9. և Պօղոս ասէ ՝ի գիշերին յորում մատնիւր, էառ
զհաց գոհացաւ, եբեկ, և ասէ, առէք և կերայք այս է մարմին
իմ. Նոյնպէս և զբաժակն էառ. և ասէ, այս նոր ուխտ իմով
արեամբ, զայս արարէք. քանիցս անգամ եթէ ուտիցէք զհացդ
զայս, և զբաժակս ըմպիցէք զմահ տեառն պատմեսջիք, մինչև
եկեսցէ նա I Կոր. II. 23. Զի որպէս գինին ըմպեալ ըստ
կերակրոյ զմնացանոյ զօրութիւն ուտելեացն տանի յամենայն
մասունս մարմնոյ ջեռուցանէ զոգին և զօրացուցանէ զբնական
ջերմութիւնն. Նոյնպէս և զհոգևոր կերակուրն, և զըմպելին
որ է մարմին և արիւն կենարարին մերոյ առաւել հրաշ իւր իմաստ
տունն. եկայք կերայք ՝ի հացէ իմմէ. և արբէք զգինի իմ զոր
խառնեցի ձեզ Առակ. 9. 5. Ուստի և մարգարէն ասէ՝ զուղխս
փափկութեան քոյ տայցես ըմպել նոցա Սղ. 35. 9. և այսէ որ
ասէ, երանի որ կերիցէ հաց արքայութեանն այ Ղուկ. 14. 15.
Ես ննջեմ և սիրտ իմ արթուն կայ. Ձայն եղբօրորդւոյ բախէր
զդրանն. ձայն եղբօրորդւոյ իմոյ բախէ զդուռն. Փեսային յայնժամ
Բաց ինձ քոյր իմ. մերձաւոր իմ. աղաւնի իմ. կատարեալ իմ. զի գլուխ
իմ լցաւ ցօղով և վարսք իմ. շաղով գիշերոյ.
Զայս բան փեսայինէ և ոչ հարսին. զի կամի ծանուցանել հար-
սին զառաւօտն մարգարէին, թէ ոչ ննջէ և ոչ ՝ի քուն երթայ պահա-
պանն Իսրայէլի Սղ. 12. 4. Զի թէպէտ բանն մարմին եղև
այլ ոչ եթող զմարմին հայրը եղև մեղաց. Զի ոչ արար մեղս
և

digitised by A.R.A.R.@

և ոչ գտաւ նենգութիւն՝ ի բերան նորա. այլև խածար՝ նմա ոչ եղև հատուց. I Պետ. 2. 22. Յօհ. I. 5. Քանզի խաչեցաւ իբրև զմարդ, և ոչ նինջեաց իբրև զմարդ. Այլ նինջեաց մարմնով, և արթուն միայ աստուածութեամբ. և ըմբռնեաց զայն՝ որ իշխանութիւն մահուն ունէր. որ իբրև՝ ի յորս ինչ՝ ի կեր մերձե- ցաւ առ՝ ի մարմինն. բայց իբրև զկարթ ըմբռնեցաւ՝ ի բանէն. Որպէս ասէ շնորհալին մեր սուրբն Ներսէս. Թէ՝

Նինջէ առիւծն՝ ի խոր գբին.
Մռունչելով չար գազանին.
Այն որ զծնունդն ադամային
Կլեալ պահեր որովայնին.
Մինչև ժայթքեաց զամենեսին.
Զինքն կորոյս դիւօք նորին.
Ջամարն եառ զգերողին.
Դարձոյց անդրէն առ հայրենին.

Առայն նկատմամբ Յակոբ նահապետն առիւծ անուանեաց զյուդայ ասելով՝ ի շառաւիղէ ելեր որդեակ, ելեր բազմեցար իբրև զառիւծ, և իբրև զկորիւն առիւծու. Ծնն. 49. 9. Քանզի բնագէտք պատմեն թէ՝ կորիւն առիւծուն ծնանի իբրև զմեռեալ. բայց յաւուր երրորդի գոչմամբ ծնողին յառնէ. Այլև ասեն զմանէ թէ միշտ բաց աչօք նինջէ. Նոյնպէս և փրկչին հոգւոյ յաւուր երրորդի ձայնիւ հօր, զօրութեամբ աստուածութեանն, զարթեաւ՝ ի մեռելութենէ, և յարեաւ՝ ի գերեզմանէ. Նինջեաց բաց աչօք աստուածութեամբն, բայց սակաւ, քանզի թափեալ՝ ի քնոյ ըստ կանխագրութեան Սաղմոսերգուին թէ՝ զարթեաւ որպէս՝ ի քնոյ տէր, որպէս հզօր զի թափէ զգինի. և գոչմամբ ձայնի իւրոյ շարժեաց զերկիր, խորտակեաց զվէմս գերեզմանին, և զպահապանս զարհուրեցոյց. Զի յառաջագոյն ծանոյց թէ իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ, և իշխանութիւն ունիմ առնուլ զնա Յօհ. 10. 18. և մարգարէին ասէ՝ ես նինջեցի և՝ ի քուն եղէ. զարթեայ զի տէր ընդունող իմ է Ս. 3. 6. և յաւագ ուրբաթու օրհնութեան երգն ասէ արթուն քնութեամբ արարիչն ամենեցուն, այսօր նինջէ՝ ի մէջ մահացելոց, որ պահէր զԻսրայէլ անքուն, պահպանի՝ ի զինուորաց. Քանզի մեծին որդին Աստուծոյ թէպէտ ըստ մարմնոյն ճշմարտապէս

ես

եր մեռեալ բաժանմամբ բանական հոգւոյն. սակայն ըստ աստուածութեանն կայր արթուն. բայց իբր թէ ննջեալ էր. և թէ վասն էր աստանօր զննջելն և արթուն մնալն յիշատակէ. ասեմ թէ զայս խորհուրդ ընծայէ. թէ որպէս ես պաղատանօք հարսին մտի ՚ի պարտէզ իմ, կթեցի զպատուղ նորին կերի և արբի. առ որս և զձեզ հրաւիրեմ ուտել և ըմպել. հանգոյն ինձ դուք ես (որք անդամք իմէք) եթէ ննջէք մարմնով, մնայք արթուն հոգւով. ըստ նմա արթուն կայէք. և ամենայն ժամ աղօթս արարէք զի մի անկանիցիք ՚ի փորձութիւնս. և առ մերձաւորս իւր ասէ. ես ննջեմ և սիրտ իմ արթուն կայ. որով կամի ծանուցանել թէ՝ ես թէպէտ մարմնով բարձրանամ յերկրէ. սակայն շնորհս աստուածութեան իմոյ թողում առ ձեզ. կամ առ քեզ. Որպէս և այլուր ասէ՝ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ՚ի կատարած աշխարհիս. կամ թէ՝ ես բարձրանամ յերկրէ. և յիշատակ մահուան իմոյ թողում առ ձեզ. այսինքն զանարիւն պատարագն. որով կենդանի լինիք հոգւով. Դարձեալ ես ննջեմ ասէ՝ զի երկայնամիտ եմ. և սիրտ իմ արթուն կայ զի տամ ժամանակ ապաշխարութեան. Այլ թէ վասն էր զսիրտն տայ օրինակ աստուածութեանն. քանզի սիրտն է առաջին գործարան կենաց. և աղբիւր ամենայն շնչերակաց և բնածին ջերմութեան. նաև սկիզբն ամենայն կենդանական ոգեաց և շարժմանց. նոյնպէս և Աստուած բոլոր արարածոց. Հարսն զգայ փեսայէն. Ձայն եղբօրորդւոյ իմոյ բաղխէ զդրունս. Զբանիցն խօսի ընդ մեզ Աստուած. երբեմն իւրով բնութեամբ. որպէս յայտ է ասելով՝ Մովսէս. և առ յազգս մարդկան ասելով՝ դա է որդի իմ սիրելի դմա լուարուք. և երբեմն հոգւով սրբով. ըստ այնմ թէ՝ նա եկեսցէ և ուսուսցէ ձեզ զամենայն. և թէ հոգին սբ ուսուսցէ ձեզ ՚ի նմին ժամու զինչ պարտ իցէ խօսել. Ղկ. 12. 12. Նաև ՚ի յաղօթս մեր բարեխօս լինի. և ուսուցանէ զկերպ և զձև հայցուածոց. և երբեմն որդւով իւրով որպէս ՚ի մարմնանալն իւր անօրէնութեանն ասաց՝ եթէ իմ չէր եկեալ և խօսեցեալ ընդ ձեզ մեղ ինչ ոչ գոյր ձեզ. և երբեմն միջնորդօք. որպէս մարգարէիւք ըստ այնմ երթ և ասա յժողովուրդն յայն Ես. 6. 9. Երբեմն առաքելովք. առ որս ասաց. որպէս առաքեաց զիս հայր և ես առաքեմ զձեզ. գնացէք աշակերտեցէք զամենայն հեթա-

նոսս.

digitised by A.R.A.R.@

Ձայն եղբօրն և երբեմն հրեշտակօք որպէս առաքեաց զգաբրիէլ առ սրբուհի կոյսն Մարիամ խօսիլ ընդ նմա 'ի դէմս մեր ասելով մի երկնչիր Մարիամ. զի աստուածութիւնն որ է գլուխ իմ լցաւ ցօղով, այսինքն աղօթիւք մարգարէիցն. և վարսք իմ տարաժամ գիշերոյ, այսինքն 'ի հնացեալ խաւարեալ հեթանոսաց բնական առաքինութեամբն. Իսկ և աստանօր հարսն յառակապէս վասն փեսային խօսի. Քանզի որպէս ասէ տէր չեսայեայ ետու զքեզ ուխտ ազգի, և 'ի լոյս հեթանոսաց լինել փրկութիւն մինչև 'ի ծագս երկրի. Բայց Պօղոս և բառնաբաս զայս 'ի վերայ իւրեանց մեկնեն, թէ այսպէս պատուիրեաց մեզ տէր՝ եդի զքեզ 'ի լոյս հեթանոսաց եայլն. Ես. 49. 6. Գո. 13. 47. Նոյնպէս և սբն Յովաննէս մկրտիչն Քրիստոսի զբանն յեսայեայ 'ի վերայ իւր առնու. մինչ հարցին ցնա թէ ասա մեզ դու ով ես պատասխանեաց. ես ձայն բարբառոյ յանապատի պատրաստ արարէք զճանապարհս տեառն և ուղիղ արարէք զշաւիղս նորա որպէս ասաց եսայի մարգարէ Ես. 40. 3. Յօհ. 1. 21. և աստանօր Սողոմոն զնոյն բան առնու 'ի դիմաց հարսին մինչ զգայ 'ի մարգարէից զգալուստ փեսային, և լուաւ զձայն բանին Աստուծոյ որէր սբն Յօհաննէս. որոյ աղաղակէ կոչեցեալ ձայն բարբառոյ. Ուստի ասէ հարսն՝ ձայն եղբօր որդւոյ իմոյ բաղխէ զդուռն. որպէս Պօղոսի սաւուղ սաւուղ զի՞ հալածես զիս. Նոյնպէս բաղխէ զդուռն սրտի հարսին ասելով. մինչև երբ անկեալ կաս ով վատ, կամ երբ 'ի քնոյ զարթիցես. Արի որ ննջես և լուսաւորեսցէ զքեզ Քրիստոս. Առ. 6. 9. Եփե. 5. 14. Առայս վաղճանի խրատ ընծայէ մեզ շնորհալին Ներսէս ասելով.

Զինն կենաց զանցաւոր է.
Կրկին դրամբ քաղաք ասէ.
Ընդ մին մտեր մերկ յարգանդէ.
ընդ միւսն ելցես մերկ յաշխարհէ.
Արդ զինչ օգուտ դու 'ի շահէ.
'Ի քաղաքիս այս վաղճա    նու է.
Մինչ զդրունսն կողպեմ    տէ,
Մահն որ կենաց թշնամին է.

Բայց ընդ խղճտօրսն ձայնին պարտի դուռ կատարեալ բարձր զարդ և քայլք, որպէս ձայն կոչեցելոյն Յովաննէս էր կատարեալ ընեալ.

digitised by A.R.A.R.@

ըեալ. զի տայց ոչ եմ ես վճռատուն. բարձրէք խոնարհութե-
զի ասէ չեմ արժանի բառնալ զխորայս կօշկաց նորա. զոր-
թէ ահա գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի.
Քաղցր՝ որ չհերովդէս ասէր ոչ է քեզ օրէն ունել զկին եղբօր
քոյ. Այլև եր կատարեալ՝ որ ասէր ապաշխարեցէք զի մեր-
ձեցաւ արքայութիւնն Աստուծոյ, և մինչ լայն վայր ոչ ոք
էր լուեալ արքայութեանն Աստուծոյ, անուն. բարձր զի ասէր
տապար առ արմին ծառոց եդեալ կայ. և թէ ծնունդք իժից ո
ցուց ձեզ փախչել 'ի բարկութենէն Աստուծոյ. Գիտէ՝ մի զոք
խռովեցէք, և մի զոք զրպարտեսջիք. Քաղցր՝ որ ասէր ես մկր-
տեմ զձեզ ջրով. բայց գայ զօրագոյն քան զիս նա մկրտեսցէ
զձեզ հոգւով սրբով և հրով Ղկ. 3. 16. Այնպէս քաղցրէ
և ձայն փեսային Յիսուսի. Որ թէպէտ կարէ խորտակել
զդրունս, և փակեալ դրամբ մտանել 'ի ներքս. բայց ոչ կամի
բռնել ամեք զազատականութիւն, և ոչ ակամայ մտանել առ մե-
ոք. Այլ որ կամաւ իւրով փակեաց զդուռն սրտի իւրոյ, բայցէ
անձն իշխանութեամբ իւրով. և ընկալնու զփեսայն հոգւոյ
իւրոյ. Վասն որոյ բաղխելով հրաւիրէ բանալ, այսինքն սատարել
ձայնելով, և ոչ բռնադատելով. քանզի յուցանէ զպարթուցման
շնորհս իւր, զի բարձցէ զթմրութիւն 'ի մարմնոյ. Զի սկիզբն
արքեցման և ապաշխարութեան ոչ է 'ի մէնջ՝ այլ՝ Աստուծոյ, զի
աստուածային բաղխումն միշտ նախընթաց լինի. որպէս ասէ ան-
կիրն. և լուան զձայն զգնալոյ տեառն Աստուծոյ 'ի դրախտի
անդ՝ ընդ երեկս, և թագեան ադամ և կին իւր յերեսաց տեառն
Աստուծոյ Ծնն. 3. 8. Այսէ զգալ հարցին բաղխիլ դրան 'ի
փեսայէն, զոր առնէ նախ քան զհաւանութիւն մեր. Առնէ
Աստուած մարդոյ զբարիս՝ զորս ոչ առնէ մարդ, կարի յոյժ
բաղխէ, և դղրդելով ձայնէ առ 'ի զարթուցանել զննջեցեալն
մարդն. և զարտաքին դրունս մեր առաքէ զհաւատալեաց, զոր-
հուրեցուցանէ բերանով քարոզչաց, պատժէ զմարմինս հիւան-
դութեամբ. Ներքսապէս շնչէ, և զօրեղապէս բաղխէ, վասն
թափանցիկոյ 'ի խորս մեր զերկիւղն աստուածային դատաստանին
և մահուան, և յաւիտենական տանջանացն, և դժոխային տանջա-
նացն. զի արտաքին դրունքն՝ սակաւ օգնեն, եթէ ոչ զօրծանիցի
զինքն ներքսապէս լաց նորա Աստուած. Վասն որոյ ասէ զար-
ձայրոց

digitised by A.R.A.R.@

ձաղտանք առիս և ես պարծեցայց առ ձեզ: Այսպէս համբերէ
յորդորանօք, խրատէ օրինակօք զպարտաւորեցուցանէ որոգայթ
մերձ պարտացանէ հրաշիւք, առայ զխոնարհականութիւնն աղէ
զխորհուրդ, քաղցրաբար փաղաքշանօք լուսաւորէ հաւատով:
Չայս ամենայն առնէ զի կամք մարդոյս առաւել իմաստ. Աստուծոյ
ասէ՝ տես կամ ես առ դուռն քո, և բաղխեմ, եթէ ոք լուիցէ
ձայնի իմում և բանայցէ, մտից առ նա և ընթրեմ ընդ նմա ընդ
նմա: Եթէ՝ ես և Հայր իմ առ նա եկեսցուք և օթեւանս առնեմք
առաջեցուք Յայտ. 3. 20: Յով. 14. 23. Օրինակաւ զաքեոս
որ մինչ լուաւ ձայնի տեառն թէ այսօր պարտ է ինձ ի տան
քում ագանիլ, խաղցն փութացաւ, և վաղվաղակի ընկալաւ զնա
ի տուն իւր, և բազմեցաւ ընդ նմա, և ընկալաւ զփրկութիւն տան
իւրոյ, Իսկ և դու խորհեաց թէ՝ ի՞նչ օգուտ եղիցի, և եղիցի
որքան բարութիւնս ընկալաւ ի նոցունց 3 Թագ. 17. 14. 4
Թագ. 4. 1. և տապանակն Աստուծոյ ի տան աբեդդարայ
գեթացւոյ նստաւ ամիսս երիս, տես թէ որպէս օրհնեաց զնա
տէր, և զտուն նորա 2 Թագ. 6. 11.

Փեսայն յայտ է հարսինն. Բայց ինչ տայ ինձ. որով հեռաւորն զգայ
ձայնի փեսային. և նա համբուրէ և քաղցր եղանակաւ ձայնէ ասե-
լով, բաց ինձ քոյր իմ զմիրտ քո յաւակցութեամբ զի անդ հանգ-
չեայց. մ որ խնդրես յամենեսեան վասնզի քո են տէր ոգեսէր
իմաս. 11. 27. և քոյր անուանէ զհարսն իւր. որոյ օրինակն
երևի ի Յովսէփ, որ ի խրախճանութեան զոր արար եղբարց իւ-
րոց, Հերկպատիկ մասն շնորհեաց բենիամինի փոքր եղբօր իւրոյ
զի էր ի կողմանէ երկաքանչիւր ծնողի հօր և մօր, բայց միւս
եղբարքն էին ի կողմանէ հօր. զայս ասեմ վասն հոգեշնորհաց զի
են որդիք Աստուծոյ ստեղծմամբ և որդեգրութեամբ. որքան ի
յաւիտենականութիւն փառաց եղբարք Քրիստոսի են ի միոյ
կողմանէ, այսինքն հօր. Իսկ մեք, ոչ միայն ի կողմանէ յաւի-
տենականի հօր. այլ և ի կողմանէ մարիամու մօր մերոյ եղբա-
րքեմք նորա. Զի որպէս հի կոյսն մայր Քրիստոսի, նաև մեր.
որ Քրիստոսին կերպիւ իւիք հոգևորապէս ծնաւ զմեզ՝ ի ցաւս
զանդամս նորա. և ի ներքոյ խաչին յանձնայէս որդեգրեաց
մինչ տուեալ եղաք նմա ի Քրիստոսէ անձամբն Յովհաննու.
Ահա որդի քո. ահա մայր քո. Այլ վասն այսորիկ կոչէ եղբայր

Ը

digitised by A.R.A.R.@

պհրեշտակս· ասելով զմեզ թէ պատմեցից զանուն քո 'ի մէջ եղբարց իմոց· Սղ· 21· 23· Այլ որ առնէ զկամս Հօր իմոյ նա է իմ եղբայր և քոյր և մայր Մտթ· 12· 50· Որպէս 'ի յաւիտենական խորախճանութեան տայցէ մեզ իբրև բերկրանսն զերկնապատիկ մասն· Որոյ աղագաւ հրեշտակք նախ քան զմարմնանալ բանին Աստուծոյ զերկրպագութիւն և զպատիւ առնուին 'ի մարդկանէ· որպէս աբրահամ, և ղովտ, յեսու և մանուէ· երկիրպագին հրեշտակաց, նոյնպէս և այլք· Բայց 'ի ժամանակի նոր կտակարանիս՝ արգելաւ այս վասն պատուոյն զոր ընկալաւ մարդկայինս բնութիւն 'ի մարդեղութեան որդւոյն Աստուծոյ· քանզի Յովհաննէս 'ի տեսլեան մինչ կամեցաւ երկիրպագանել հրեշտակին արգելաւ 'ի նմանէ· և ոչ եթող ասելով տես մի անկանիր առաջի իմ, քանզի և ես ծառայակից քո եմ և եղբարց քոց որք ունին զվկայութիւն Յիսուսի Քրիստոսի· տեառն Աստուծոյ միայն երկրպագեա Յայտ· 19· 10· Զի և մարդն որ փոքր է քան զհրեշտակս ստեղծմամբ· նախայն վերացաւ 'ի բարձրագոյն պատիւ ըստ շնորհաց միութեան· Վասնորոյ ասէ բեռնարդոս՝ ծանիր ով մարդ զի տիղմն մի հպարտանար, և միաւորեալ ես ընդ Աստուծոյ, մի լինիր ապերախտ, զի ոչ գերազանցդ քան զԱստուած· և ոչ անարգ քան զտիղմն· բայց այնքան պատուով էջ Աստուած 'ի տիղմն, և այնքան պատուով ել տիղմն առ Աստուած, զի զոր ինչ արար Աստուած համառօտեալ լինի թէ արար տիղմն· և զոր ինչ արար տիղմն՝ ասի թէ արար Աստուած· Ուստի ասէ ալբերթ թէ՝ այն քան միաւորութիւն եղանք, զի զոր ինչ ասի զորդւոյն Աստուծոյ ասի և զորդւոյ մարդոյ, և անդրադարձապէս· Որպէս ասա իմաստութեան քոյր քեզ լինել, և զհանճար կոչեա քեզ ծանօթ Առ· 7· 4· Մեկնութիւն ԻՏ չափաբերականի ԻՏ· զայնոսիկ 'ի տեղւոջ իւրում մեկնեցաւ· զի որովհետև մանկունք հաղորդեցին մարմնոյ և արեան, և ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ եղև նոյնոց Եբր· 2· 14· Այլ և համայնելոյն պատուիրեաց թէ՝ եղերուք կատարեալ որպէս և հայրն ձեր երկնաւոր կատարեալ է Մտթ· 5· 48· Զի հարսն փեսային Քրիստոսի կատարեալ հաւատով յուսով և սիրով։

Զ· Գր· Ե ԻՏ Լծ· ցուցի և զարդ ԻՏ փառակոլ գիշերոյ·

Կամ

digitised by A.R.A.R.@

կամի ասելով թէ՝ գլուխ իմ, և վարսք գլխոյ իմոյ՝ ի ցօղ արտաս թաթաւեալ ներկեցան. զոր պատճառեցին գիշերային կաթիլք մեղաց քոց: Ըստայսմ և ասէր մտաւորաց զնա առ ձեզ մեր: և թէ յանօրէնութեանց ժողովրդեան իմոյ՝ ի մահ վարեցաւ. Եսա. 53. 6. Այս ուրեմն քոյ ինձ. մարդ՝ մինչ էիր թշնամի հօրն իմոյ՝ հաշտեցուցի զքեզ ընդ նմա. մինչ՝ ի մէջ լերանց և անտառաց մոլորէիր՝ խնդրեցի զքեզ. ՝ի յուս իմ բարձի զքեզ, առ հայր իմ հասուցի զքեզ. վասնորոյ քրտնեցայ, ՝ի գլուխ իմ փշոց պսակեցայ. ինձուս և յոտս իմ բևեռօք բևեռեցայ. ՝ի կողս իմ տիգաւ խոցեցայ յայնքան խստագոյն անօրէնութեամբ ծառեցայ, զարիւն իմ հեղի. զանձն իմ եղի զի զքեզ ընդ իս միաւորեցէի. և ամենայնիւ զոր թէ կամեցայ ես բոլորովին լրեմ ցուցի շնորհաց և ողորմութեան, զորս յանկամ հեղուլ ՝ի քեզ: և մարգարէն ասէ՝ ցօղն որ ՝ի քէնէ բժշկութիւն է նոցա Եսա. 26. 19. Զի ցօղն այն բաղձայ զգիշերային և զաշխարհական գիջութիւնն, և փոխանակ այնր գիջութեան՝ կաթեցուցանէ զխոնաւութիւն յաւիտենական կենաց:

Դարձեալ ցօղով խմանամք զաղօթս նախահարցն, որք բողոքէին առ հայր՝ սակս գալստեան Մեսիային. զի գլուխ մեսային Քրիստոսի Աստուածն է. և վարսք գլխոյ՝ զառաքեալս և զմարգարէս որք անհանգիստ տագնապէին վասն նոցա. որպէս Պօղոս զայրանայր հոգւով մինչ տեսանէր ՝ի կռապաշտութեան քաղաքն: և Դաւիթ ասէր հայէի անմտութս և մաշէի, Գոր. 17. 16. Սղ: 118. 158: և տարախումբ գիշերոյ խմանամք զմոլար կռապաշտութիւն հեթանոսաց:

Դարձեալ զայս Երկրորդ՝ ձայնէ, զոր լսէ ՝հարսն եկեղեցի զփեսայէն Քրիստոսէ. որ ոչ փակելով ՝ի վերայ լերանց անհաւատութեան իբրև զայծեամն, այլ առ մերձեցեալս ՝ի յինքն, և ընդ մկրտութեամբ սրբեալսն, և ընդ ապաշխարհօ, և ընդ կատարեալսն խօսի իբրև՝ ընդ եղբօր և ընդ քեռ, քաղցր բարբառով ասէ՝ բաց ինձ կատարեալ առաքինութեամբ զհոգիդ, զի եկեալ հարբ օթևանս առ քեզ արասցուք. քանզի ՝ի ցօղոյ համաստոյ քոյ լցաւ գլուխ իմ, զոր ՝ի միամիտ աղօթս քո՝ արտասուօք եհեղ. լցաւ գիտութիւն աստուածութեան՝ որ է գլուխ մարմնոյս. և ՝ի ձգելն քո առ իմ անհաւատութիւն իբրև ընդ խաւար

գիշերոյ

digitised by A.R.A.R.@

գիշերոյ հանգեցայ. որպէս պատմելին նաւաւոր պատմութեանք Թա-
նայր զոտս և հերով խեռով ջնջէր. Կանայսարիկ ասեմ բայց
ինձ այսուհետեւ անմիտ աշանիւ իմ միամիտ և կատարեալ.
զի որպէս զուլիս կայեր կատարեալ հանապազ. և ես բնակեցայց
'ի քեզ սիրով. Ուստի Նեղուես(?) լամբրօնացին 'ի դիմաց փեսային
ասէ, Թէ զայդ ծաղկունքդ ոչ վայելապէս ստացայ այլ խաչիւ
և արեամբ, զկայլակս արեան իմոյ նուիրեցի հօր իմում փրկանս
և առի, վանայսորիկ աշխատութեամբ ստացեալդ սիրելի է ինձ,
և սեպհական ժառանգութիւն իմ միայն. զի հնձան հարի ես
միայն, և կոխեալ զթշնամին զգեհեն(?) զարձուցի.

Համարն ասէ. Մերկացայ զպատմուճան իմ. զիարդ զգեցայց զնա. լուացի զոտս իմ. զիարդ աղտեղեցից զնոսա.

Երգ մինչ եւս հարսն զի փեսայն բաղխէ զդուռն, զի բացցէ
և նա յուլացեալ ոչ կամի յառնել և բանալ, այլ պատճառէ
զմերկանալ պատմուճանին, և զլուանալն ոտից. որպէս ասէ
մինչ լուաւ զձայն տեառն Թէ, ուրեմ. ասայ տէր լուայ զձայն
քո և երկեայ. մերկ էի և Թաքեայ: և արարածոց ասայ Թէ
դարձեալ եկից առ քեզ 'ի ժամանակի յայսմիկ խոյն առուրս և
ունիցի որդի սարրա կին քո ծիծաղեցաւ սարրա 'ի միտս և ասէ,
որ մինչ ցայժմ ոչ եղև ինձ, զիարդ լինիցի, և տէր իմ ծերա-
ցեալ է: Նմանապէս և Զաքարիայ ասաց, իւ գիտացից զայդ. զի
ես ծերեմ, և կին իմ անցեալ զաւուրբք իւրով. և 'ի յուսա-
ցանել տեառն մերոյ 'ի ժողովրդեան բազումք ասէին, խիստ է
բանդ այդ ով կարէ լսել զդա. Յով. 6. 61. Նոյնպէս և
հարսն լուեալ զձայն փեսային, հիացեալ ասէ մերկացայ զպատ-
մուճան փառացն զոր ունէի, արդ որպէս եղանի ինձ վերստին
զգենուլ, և զոտս իմ լուացի 'ի շնորհաց և մաքրեցայ 'ի յաղբ
աղտոյ, մինչ զի 'ի մերձենալ առ Աստուած անկար երևի
որպէս ազգ հեթանոսաց կայթակղեալք 'ի կուռս. Բայց այսպիսի
են ձեզ և պատճառք յուսահատութեան. քանզի ասէ Աստուած.
դարձարուք առ իս որդիք հեռացեալք, զի ես տիրեցից ձեզ
Երմ. 3. 13. և այլ ուր ասէ, դադարեցէք 'ի չարեաց ձերոց.
եթէ իցեն մեղք ձեր իբրև զձանձախարիթ(?), իբրև զձիւն սպի-
տակ արարից ես. 1. 18. Մի Թէ տխրանայցէ առ յԱստուածոյ
ժամանոյն բանս. Տես որպէս ասէ Պօղոս. ես իսկ եմ որում
առա-

առաքելոյ. որ չեմ իսկ արժանի թէ կոչեցայց առաքեալ. զի հալածեցի զեկեղեցին Աստուծոյ. բայց շնորհքն Աստուծոյ որ յիս ընդունայն ոչ եղեն I Կոր. 15. 9։ Զի շնորհն Աստուծոյ զօրացուցիչ լինի ծառայից իւրոց. քանզի մինչ կամեցաւ Աստուած առաքել զՄովսէս առ փարաւոն արքայ. և զնայն առ ժողովուրդ իւր, և յօնան ՚ի նինուէ, մինն պատճառեաց թէ՝ ծանրալեզու եմ ես։ և միւսն թէ՝ պիղծ շրթունս ունիմ։ և այլ միւսն թէ՝ գիտեմ զի ողորմած ես դու և գթած։ Թէ և զկնի ամենեքեան կատարեցին զպաշտօնս իւրեանց, զի զօրութիւն Աստուծոյ ՚ի տկարութեան կատարի։ Սրբազանն Պետրոս մինչ ետես անօթն կաւոյ. եղեւ ձայն առ նա թէ՝ արի պետրոս զեն և կեր. պատասխանեաց թէ քաւ լիցի տէր, զի խառնակ երբեք ոչ կերի. և լուաւ թէ՝ զոր Աստուած սրբեաց դու մի պիղծ համարիր. Զի ոչ ոք արկանէ զձեռն ընդ. մաճով և հայիցի յետս. Գոր. 10. 11. Ղուկ. 9. 62։ Բայց սատանայ բան հարկին նմանէ այնմ զոր ասաց սբ կոյսն, թէ՝ զիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ. և այս վասն երկիւղի զի մի որպէս Եւայ խաբէութեամբ բանսարկուին զբանն ընկալեալ իցեմ, և գտանիմ պատրեալ։ Վասնորոյ ասաց սբ հայրն Անտոն սակս կրօնաւորաց թէ՝ զերծեալքն երից պատերազմաց. ՚ի տեսողութենէ. ՚ի լսելութենէ. և ՚ի խօսակցութենէ, որոյ յառաջ գան ամենայն գայթակղութիւնք. Վասնայսորիկ ասէ, զի եդ մատն ընդ պատուհանս ձեր, և եմուտ յերկիր ձեր Երմ 9. 21. Զի աչքն պատրին տեսանելով. վասնորոյ խրատէ իմաստունն թէ՝ մի հայեսցիս՚ի գեղ կնոջ, և մի՝ ցանկասցիս կնոջ գեղեցկութեան Սիր. 25. 28. և ունկն խաբի լսելով. զորմէ խօսի նոյն իմաստունն թէ՝ ցանկեա՛ զականջս քո փշօք, լեզուի չարայողի մի լսեր, և բերանոյ քոյ արասցես դուռն Սիր. 28. 28. Նոյնպէս և միտքն մոլորի և թիւրի խօսելով. զի որպէս չար օձն ապականէ զմարմինն, նոյնպէս և թիւր բանքն զհոգի, զի հեշտանայ յամենայն դէպս՝ ընկերին. և մաշի ՚ի լսելն զբարին. Վասնորոյ ասէ՝ սրբազան առաքելական Յովհաննէս. մի՝ սիրէք զաշխարհ, և մի՝ որ ինչ աշխարհի է. զի ամենայն որ ինչ աշխարհի է, ցանկութիւն է մարմնոյ, ցանկութիւն է աչաց. և ամբարտաւանութիւն [illegible] կենաց։ Աշխարհս անցանէ և ցանկութիւն նորա I Յով. 2.

digitised by A.R.A.R.@

2. 15. 1 Կոր. 15. 33. և Պօղոս պատուիրէ՝ ի բաց մերկանալ ՚ի մէնջ ըստ առաջնոյ գնացիցն զմարդն հին, զապականեալն ցանկութեամբ խաբէութեանն. անձնորոգիլ հոգւով, և զգենուլ զնոր մարդն. և թէ՝ մերկացարուք զհին մարդն գործովք իւրովք և զգեցարուք զնորն. Եփ. 4. 22. Կող. 3. 9. և որովհետև միտք մարդկան հաստատեալ են ՚ի խնամս չարին ՚ի մանկութենէ իւրմէ. Զի մարմին եղծանելի ծանրացուցանէ զոգի. և հակէ հողեղէն յարկ զմիտս բազմահոգս Ծն. 8. 21. Իմ. 9. 15. Ամենայն հրաժարի հարսն թէ՝ մերկայի զլայն ճանապարհն, և ոչ կարեմ զգնալ յանձուկն. զգեցայ զփափուկն, և մերկացայ զխստորն, մերկայի զհեշտութիւնն, ոչ կարեմ յանձն առնուլ զխստութիւնն, և ոչ կարեմ վարել զգեանախշութեամբ. և ոչ կարեմ զիս տալ ՚ի խիստ յապաշխարութեան. լուացի զոտս փափկութեամբ զիարդ վերստին շաղախեցից տղմով և աղտեղութեամբ գետնոյ. Ահա այսոքիկ են պատճառք ծուլութեան. և նշանք յուսահատութեան, և պատրանք դիւական խաբէութեան. Քանզի ծուլութիւնն է թուլութիւն ոգւոյ և լքումն մտաց, երկչոտութիւն կրթութեան, ատելութիւն զգաստութեան, երանայութիւն աշխարհասիրաց, բամբասօղ Աստուծոյ, կայուն առանց բարերարութեան, շրջեցեալ ՚ի սազմնաբղութեան, ակար ՚ի յաղօթս, ՚ի հնազանդութեան պակասեալ. քար ՚ի պաշտամոնութեան անշարժ վէմ և ՚ի գործս երկաթաձեւն հեղգ. և պղատոն զծուլութիւնն կոչէ ժանտաժանդ մահկանացուաց. և փիլիսոփայք ասեն՝ թէ՝ ծուլութիւնն ընդարմացուցանէ զմարմինն, և վեհերոտութիւնն զհոգին. Եթէ զքեզ ՚ի յուլութեան և ՚ի ծուլութեան տայցես ոչ երբէք զԱստուած աղաչել կարես. վասնզի իմաստունք զծուլութիւնն կոչեն գերեզման կենդանի մարդոյ.

[illegible]

Մինչ արեգակն մտանէ ՚ի խոր կենդանակերպն յայնժամ լինի գարուն, և սկսանի նորոգիլ դէմ երեսս յերկրի ՚ի խանդարմանէ ձմերան. և ծաղկունք երկրի բանին, և ծածկեալ զօրութիւնն բուսոց և տնկոց որ ՚ի յարմատս գաղեալ կայր ՚ի գործ ելանէ, և զայն որ իբր և մեռեալ տեսանիւր՝ կենդանանայ. և որ հնացեալ երևիւր թըզնեալ և ապականեալ՝ վերանորոգի, զի զինչ քարշողական զօ-

րու

digitised by A.R.A.R.@

բութեամբ քնին, քարշէ ՝ի նոյանէ զհիւթն, եւ զարձուցանէ ՝ի սնու-
ցումն բուսոց եւ տնկոց. Այդ ծակոյկեան ՝ի մեզ զգայութիւնք
մեր. որպէս տեսանելիք, լսելիք, խօսելիք, հոտոտելիք, եւ այլն՝.
Այսոքիկ խափանեալ եղծեալ եւ խանգարեալք էին, եւ ոչ ՝ի գործ
գային, զի ներմտեալ էր աննման հողմ հպարտութեան.
Հուր՝ ցանկութեան. գիշութիւն բղջախոհութեան. ագահութ
կռապաշտութեան. եւ այլ պէսպէս մոլորութեանց: Վասնայն
ասէ՝ եմուտ մահ ընդ պատուհանս. իսկ երկնային արեգակն
Քրիստոս, յորժամ եմուտ ՝ի խոյ կենդանակերպ նոր օրինացն,
յայնժամ փախոյց զխաւար՝ հեթանոսական կռապաշտութեան,
եւ զՃմլեալ՝ հին օրինաց հրէականութեանն, եւ զպղծութիւն մերոյ
աստուածպաշտութեան. յայնժամ Մանուկ մատաղ ՝ի ծակ իժից,
եւ ՝ի բոյն կորեանց եդ զձեռս իւր. Ես. 11. 8. եւ առ ՝ի
խրատ սակաւ մի խռովեցան, զի նշանակ փրկութեան ունիցին.
առ ՝ի յիշելոյ զպատուիրանս օրինաց քոց ասէ, Իմաստ. 16. 6.
Զի անձուկ է ճանապարհն փրկութեան. վասնայնորիկ գանգատէ
հարսն թէ՝ որովայն իմ խռովեցաւ. Զայս ասէ ՝ի դիմաց Ժո-
ղովրդեանն հրէից. բազմայն տէր երեւելով ինձ խռովեցաւ
փոր իմ յիս, եւ ոչ գոյ յիս զօրութիւն Դան. 10. 16. Քանզի
ասէ՝ ոչ եկի արկանել զխաղաղութիւն յերկիր, այլ զսուր, քան-
զի եկի քակել զայր ՝ի հօրէ իւրմէ, եւ զդուստր ՝ի մօրէ իւրմէ.
եւ զհարսն ՝ի սկեսրէ իւրմէ. եւ Թշնամիք առն ընտանիք իւր.
Մատ. 10. 34. Իսկ եւ հրեշտակ առեալ խօսեցաւ. յունկն
մարիամու ասելով ուրախ լեր բերկրեալ տէր ընդ քեզ, նա
ընդ բանն խռովեցաւ: Լուաւ արքայ հերովդէս՝ խռովեցաւ,
եւ ամենայն Երուսաղէմ, եւ իշխանք ընդ նմա Ղկս. 1. 28. Մատ.
2. 3. Յառաջոյ ցուցեալ էր ընդ ծակոյն. զի որպէս խօսեցաւ տէր
ընդ աքազու թէ՝ խնդրեա՛ դու քեզ նշան ՝ի տեառնէ, նոյնպէս
եւ մեսիայն բաղխէ զդուռն սրտի հարսին, թէ բաց ինձ քոյր
իմ, եւ որպէս աքազ պատասխանեաց թէ՝ ոչ խնդրեցից եւ ոչ
փորձեցից զտէր նոյնպէս եւ հարսն պատասխանեաց թէ՝ մերկացայ
զպատմուճան իմ, եւ լուացի զոտս իմ. եւ որպէս տէր ինքնին նշան
ետ աքազու թէ՝ ահա կոյս յղասցի. նոյնպէս եւ եղբօրորդի հար-
սին ինքնին եկեալ եւ փրկեալ զմեզ. Զայնժամ աչք կուրաց
բացցին, եւ ականջք խլից լուիցեն. յայնժամ վազեսցէ կաղն
իբրեւ

digitised by A.R.A.R.@

երբեք զեղջերու, և պարզ լեալ լեզու ծանրախօսաց. Որպէս պատմեն սրբազան աւետարանիչք թէ՝ բերին առաջի նորա խուլ մի և համր. եդեալ զմատունս իւր ՚ի յականջս նորա, և եթուք անդր, և կալեալ զլեզուն նորա, և լուծան կապանք լեզուին նորա և խօսէր ուղիղ Մրկ. 7. 32. Այլ և ասէ զայր մի կոյր ՚ի ծնէ, եթուք ՚ի գետին, և արար կաւ ՚ի թքոյն, և ծեփեաց զկաւն ՚ի վերայ աչաց կուրին, և ասաց ցնա երթ լուա յաւազանին Սիլովամայ. չոգաւ լուացաւ, եկն և տեսանէր. Վասնորոյ ասաց այլն յաւիտենից ոք ոչ լուաւ, եթէ եբաց ոք զաչս կուրի ՚ի ծնէ կոյր ծնելոյ. Որոյ աղագաւ փեսայն հոգւոյ ասաց ՚ի դատաստան եկի յաշխարհս այս. զի որք ոչն տեսանեն տեսցեն, և որք տեսանեն կուրասցին Յով. 9. 1. և զկնի յարէ թէ՝ Ն [illegible] ՚ի Ն. և որքան առաւել գրեալ է, անհնարանի տէր նստեալ ՚ի վերայ թեթև ամպոյ եկեսցէ յեգիպտոս. և խռովեսցին կուռք եգիպտացւոց Ես. 15. 4. և 19. 1. և միով բանիւ ՚ի բժշկել զերեանութանեայ անդամալուծն. բազումք խռովեցան. Որոյ աղագաւ ասէ Դաւիթ, զմէ՞ խռովեցան հեթանոսք և խորհեցան սնոտիս Գոր. 4. 25. և առ պատանի ոմն ասաց երթ վաճառեա զինչս քո և տուր աղքատաց. Նա գնաց խռովեալ Մտ. 19. 21. Նոյնպէս և պողոս մինչ քարոզէր յարութեան, թէ ոչ են Աստուծոյ ձեռագործք, լուաւ քաղաքն խռովեցաւ Գործ. 19. 26. Ահա այսոքիկ են ծակոյք մարմնոյ որ ՚ի յարկանել տէրունեան բանին իւրոյն խռովեին, և վրդովեին անդ տեղւոյն. և խեղկատակ նոյին ցնորի. Ով եղիցես բուզայլն չկարելով տանիլ բանիցն Յոբայ ասէ դարձեալ խօսեցայց զի լի եմ բանիւք. քանզի սատանայ զխոզի ուռուցանէ. և որովայն իմ իբրև զտիկ քաղցուոյ կապեալ եռայ. կամ իբրև զփուքս դարբնաց ուռուցեալ. խօսեցայց զի հանգեայց Յոբ. 32. 17. Զորս խոստովան լինի հարան. և առաքեալն ասէ՝ եթէ չէիցէ առաջնեալ յօրինաց թէ՝ մի՛ մեղանչէր, յաւիտեան ոչ մեղանչէր. Ցուցեալ է [illegible]

[illegible]

Զուր պրոպատիկէ աւազանին ունէր զներգործութիւն առ ՚ի բժշկել զամենայն տեսակ ախտակրութեանս ... յայտե Յով. 5. 3. Բայց ոչ բաւականանայք առ այն նկատել ...
մի

միայն՝ ի մակերևոյթ նորին. և կամ մերձենալ՝ ի նա թեթևապէս
ժամամբ և ելծ. այլ կարօտանայր իջանել յ՝ի խորս. և ընկղմել յ
՝ի ներքս. այսպէս ոչ միայն լսելով զբանս տեառն՝ ծառայն լինի
արբեալ. այլ ՝ի լսելն փութայ առնել. և զհրամայեալսն վաղվա-
ղակի կատարել, յայնժամ եղանի պարգևաց արժանի. զոր օրինակ
հրամայեաց Աստուած աբրահամու թէ՝ առ զորդի քո իսահակ
և մատո ինձ պատարագ, նա իսկոյն լուեալ սկսաւ առնել թողը
իմեք պատճառի. ուստի ընկալաւ փոխանակ նորա զխոյն՝ ի սաբե-
կայ, և լուաւ ՝ի տեառնէ թէ ահաւասիկ ծանեայ զի երկիւղա-
ծես Աստուծոյ. և ՝ի զաւակի քում օրհնեսցին ամենայն ազգք.
Նոյնպէս և նինուէացիք փութով լուան զքարոզութեանն յովնա-
նու, իսկոյն ապաշխարեցին, և զերծան՝ ի պատուհասէն. և Պետրոս
զբոլոր գիշերն աշխատեալ ոչ ինչ կալաւ, բայց մինչ հրամանաւ
տեառն եարկ զուռկանն իսկոյն փակեցին՝ ի նմա զբազմութիւն
ձկանց. Ղուկ. 5. 5. Վասն որոյ առաքեալ յորդորէ, լուարուք
զբանս իմ և արարէք զի երկայնօրեայք լինիջիք, և բազմանայցէք
յոյժ. 2 Օր. 6. 2. Բայց հարսն լուեալ զձայն փեսային, նախ
ծուլացաւ՝ ի բանալ. զկնի որոյ յորդորմամբ կոչեաց թէ՝ բաց ինձ
քոյր իմ. Որպէս Բարսեղ կեսարացին 30 Ճառին յաղագս մկր-
տութեան գրէ թէ՝ ով մարդ զի փախչիս ՝ի կոչմանէ՝ ի բարեացն
ընդունելութիւն. ընդէ՞ր ծուլանաս, ընդէ՞ր թագչիս, զի
երկնչիս իբրև զերծ ինչ որ անփորձ լծոյ, քաղցր է, թեթև է, ոչ
մաշէ զլիզ, այլ փառաւորէ, զի ոչ կապին սամեք զպարանո-
ցաւն, ինքնիշխան խնդրէ զձգողն. Նոյնպէս և փեսայն ասէ,
որոյ առաւել թախանձանացն յարեաւ հարսն՝ ի բանալ, ոչ վասն
բարեկամութեան, այլ վասն ժտութեան. Ղուկ. 11. 8. Օրի-
նակաւ կղէօպասիս որք երթային յէմմաուս, և մերձեցաւ Յիսուս
և երթայր ընդ նոսա, և բաղխելով զդրունս սրտից նոցա եմուտ
ագանել ընդ նոսա, և ՝ի բեկանել հացին եբաց ծանօթս նոցա, և
եղև ՝ի նոցանէ աներևոյթ. և նոքա սկսան ասել ցմիմեանս, ոչ
իսկ և սիրտ մեր ջերմեռին ՝ի մեզ մինչ խօսէր և որպէս բանայր
մեզ զգիրս Ղուկ. 24. 13. Զի ասէ երանի իցէ ծառայիցն այնո-
ցիկ, զորս եկեալ տէրն գտցէ արթունս, ամէն ասեմ ձեզ՝ զի
գօտի ընդ մէջ ածցէ և բազմեցուսցէ զնոսա. և անցեալ պաշ-
տեսցէ զնոսա և եթէ՝ յերկրորդ կամ յերրորդ՝ պահու եկեսցէ
և

digitised by A.R.A.R.@

և զայն այնպէս երանելիքն ծառայքն այնոքիկ Ղկ. 12. 37. Այսոքիկ պարգևք փեսային հարսն զմտաւ ածեալ յիշատակէ. նշանակ մահու. Որպէս սր̅բ քառասունքն որք արկան 'ի լիճն զորոց պատմէ սր̅բն Բարսեղ. թէ մինչ մերկացուցանէին 'ի հանդերձիցն նոքա ասէին թէ՛ ոչ զհանդերձս մերկանամք, այլ զհին մարդն 'ի բաց ընկենումք զապականեալն յանկութեամբ պատրանացն. գոհանամք զքէն տէր ասէին, զի ընդ հանդերձիս ընդ այսմիկ զմեղս 'ի բաց մերկանամ, զի վս̅ օձին զգեցաք, վս̅ Քրիստոսի մերկացուք. մերկացաւ և տէրն. զի ոչ է մեծ ծառայ զտեառն չարչարանս կրել, մանաւանդ զի և մեք զնոյն տն̅ մերկացուցաք. զգրեալ զմեղս ամբաստանութիւն անձամբ ընչեայուք, կակծոտէ ձմեռնս, այլ քաղցր է դրախտն. յաւագինէ սառնամանիքս, այլ ջերմալի է հանգիստն. վայր մի համբերեսցուք, և գոգ նահապետին գգուեսցէ զմեզ. ընդ միոյ գիշերի զբովանդակ յաւիտեանն փոխանակեսցուք. մնեսցի ոտն զի ընդ հրեշտակս պարեսցէ, տոչորեսցի ձեռն զի համարձակութիւն կալցի առ տեարանն բառնալ. և մինչ դեռ նոքա ճգնէին և աղօթս առ տէր ուղղէին, մինն 'ի նոցունց չկարելով ժուժել տատեալ 'ի լճէն եմուտ 'ի բաղանիսն, և անդ 'ի պահապանաց միոզնէր ելից, եւտես զնոր տեսիլս, զօրութիւն իմն յերկնից իջեալ և իբր 'ի թագաւորէ պարգևս մեծամեծս բաշխէր զօրականացն բայց միոյ փախուցելոյն պակասեցաւ, իսկ իբրև զայն տեսեալ պահապանն, իսկոյն ընկեց զարկանելիս, և ընդ մերկս զինքն խառնեալ ընդ սուրբսն աղաղակելով զնոյն բարբառ թէ և ես քրիստոնեայ եմ. զի ետես զերկնային սքանչելիսն, ծանեաւ զճշմարտութիւնն, ապաւինեցաւ 'ի տէրն, ընկալաւ զբրաբիոնն, թուեցաւ ընդ վկայսն, լցաւ զթիւն. ո̅ր շնորհիւ հոգւոյն սրբոյ. նոյնպէս և եկեղեցիք հրէից և հեթանոսաց մինչ հաւանեցան ք̅ի քարոզութեան առաքելոյն, բացին զխիլս իւրեանց առ 'ի ընդունիլ զՔրիստոս, և մկրտեցան և թաղեցան ընդ նմին մկրտութեամբն 'ի մահ. Հռով. 6. 3. Վասնորոյ ասէ ձեռք կաթեցուցին զմուռս ուստի ասէ Դաւիթ ձեռք իմ արարին զասղմոսարան, և մատունք իմ կազմեցին զգործի օրհնութե̅. զի ձեռքն է ջաշխատական գործիք մարմնոյն. և մատունքն են օգնական նորին. բայց աստանօր ձեռօք իմանամք զկարողութիւն և զզօրութիւն

digitised by A.R.A.R.@

՚ի մարդս. և մատամբ զգայութիւնս զորս մեռուցանէ հարսն
ամենայն երևելեաց ՚ի զուտն մարմնոյ. որպէս ասէ Պօղոս, որով
աշխարհ ինձ ՚ի խաչ ելեալ է, և ես աշխարհի, Գաղ. 6. 14.
Որով հոգին լինի տաճար փեսային, և բնակարան հոգւոյն սրբոյ.
Զի զմուռն երբեմն զզանազան շնորհս նշանակէ տուեալ ՚ի
հոգւոյն սրբոյ, և երբեմն զմեռելութիւն տխտոյ, որոյ հետեւի
զփառաւոր յարութիւն. ըստ տեառն եթէ ոչ հատն ցորենոյ
անկեալ յերկիր մեռանիցի՝ ինքն միայն կեայ, ապա եթէ մեռա-
նիցի՝ բազում արդիւնս առնէ. Յոհ. 12. 24. Զի որպէս
զմուռն զառնէ համով, և անոյշ հոտով (որոյ յատկութիւնն
նախապէս գրեցաւ) նոյնպէս և զհրաման փեսային Յիսուսի
խիստ և դառն երևի մարդոյ ՚ի կատարել բայց յորժ քաղցր և
թեթև լինի ՚ի կատարման. Որպէս երանելի առաքեալն ասէր,
հաճեալ եմ ընդ տկարութիւնս, ընդ մշակս, ընդ չարչարանս,
և ընդ հալածանս վասն Քրիստոսի, զի յորժամ տկարանամ
յայնժամ զօրանամ.

Ձեռք իմ կաթեցուցին զմուռս, և մատունք իմ լի զմռսով.
Քանզի մինչ եբաց հարսն զդուռն սրտի իւրոյ. ետես զինքն
շրջապատեալ մեծաւ թշուառութեամբ կենցաղոյս, որպէս
անառակ որդին, կամ որպէս Դաւիթ ծանուցմամբ Նաթան մար-
գարէին 2 Թագ. 12. յայնժամ սկսաւ կոծել զանձն իւր. և
ողբալ հանգոյն զմուռս զղջման կաթեցուցանել և արտա-
սուօք լնանել. և ըստ Դաւթի ասել լուայ զամենայն գիշեր
զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի. և հա-
մայն սրբք արտասուօք ապաշխարեն ասէին, տէր եթէ այսքան
քաղցրէ արտասուելն առ վասն քո, ապա որքան քաղցրագոյնէ
լինելոց ծիծաղելն անդ ընդ քեզ. և ոսկեբերանն ՚ի վերայ արտա-
սուաց Պօղոսի 51 ճառին ասէ՝ չիք ինչ քաղցր քան զայնպիսի
արտասուս, զի քան զամենայն ծաղր հեշտականեն և գիտեն որ
զայնպիսի սուգ սգացեալքն թէ որպիսի ինչ մխիթարութիւն
կայցէ յինմն. Զի արտասուք մեղաւորաց է գինի հրեշտակաց.
Վասն որոյ և հարսն ՚ի յանձն ունկամբ զձայն փեսային, սկսաւ
զչափիւր բանալ ՚ի քնոյ, և իբրու ՚ի թմրութենէ զարթնուլ, յառաջ
ընթանալ, և զդրունս զգայութեանցն բանալ, և շնորհիւ լցեալ
ասէ՝ ձեռք իմ կաթեցուցին զմուռս. քանզի ամենայն առաքի-
նուս

digitised by A.R.A.R.@

նութիւնք՝ ՚ի շնորհաց յաւաջագային. վասն որոյ և զկնի յարէ՝ թէ՝ մատունք լցան զմուռսով. որպէս ՚ի ձեռաց պարպատութենէ լցեալ անձն իմ. Սղ. 62. 6. Վասնզի զկնի մերկաց առնէ զհանդերձ-տուեն և զկնի արտասուաց և լալոյ ՚ի ուրախութիւն զցնծութիւն և զուարճութիւն. ՚Ի վերայ կղպանաց փականին. Բացի ես եղբօրորդւոյ իմոյ. եղբօրորդին իմ անց և հոգի իմ ել ընդ բանս նորա. խնդրեցի զնա և ոչ գտի. կոչեցի զնա և ոչ լուաւ ինձ.

Փակաղաղ ղրանն են նոքա, կամ՝ աղխսն փականքն որով անկայ-ուցեալ փակեն զդուռն, և այնու իմանամք ամենայն արգելմունք և պատճառք հարկին եկեղեցւոյ, որպէս հին ժողովրդեանն հրէից որք փակէին զարքայութիւնն երկնից, ինքեանք ոչ մտանէին, և որք կամէին մտանել՝ արգելուին. Զի մինչ դիւահար կոյր և համրն բժշկեաց, ՚ի զարմանալ ժողովրդեանն, ասացին թէ՝ ոչ իւիք հանէ դա զդևս, եթէ ոչ բէեղզեբուղաւ իշխա-նաւն դիւաց Մատ. 12. 22. և ասել յանդգնեցան, ուղղեալ թողեալ լիցին քեզ մեղք քո, ասացին զինչ է այս՝ որ խօսի սա զհայհոյութիւն, ով կարէ թողուլ զմեղս՝ եթէ ոչ մի Աստուած. Մրկ. 2. 3. և մինչ՚ի ծնէ կոյրն լուսաւորեաց, ասացին ոչ է այրն այն յԱստուծոյ զի զշաբաթս ոչ պահէ. կէսքն ասէին զիարդ կարէ մարդ մեղաւոր այսպիսի նշանս առնել, և ուխտ եդեալ էին եթէ ոք խոստովանեսցի զնա Քրիստոս՝ ՚ի բաց կացցէ՝ ՚ի ժողո-վրդենէն Յով. 9. 24. որ զղազարոս չորեքօրեայ մեռեալն յա-րոյց, ասացին զինչ արասցուք զի այրն այն բազում նշանս առնէ, եթէ թողումք զնա այնպէս, ամենեքին հաւատան ՚ի նա Յով. 11. 47. իսկ և ՚ի կատարել աւուրց վերանալոյ նորա և ինքն հաստատեաց զերեսս իւր երթալ յԵրուսաղէմ, և առաքեաց հրեշտակս առաջի երեսաց ՚ի գիւղ մի Սամարացւոց պատրաստել ինչ նմա, և նոքա ոչ ընկալան զնա Ղուկ. 9. 51. Քանզի ամպա-րիշտն հասեալ, ՚ի խորս չարեաց արհամարհէ զբարիս Առակ. 18. 3. Ուստի գանգատի վեսայն թէ՝ կոչէի զնոսա՝ և ոչ լուա-ան ինձ, խօսէի՝ և ոչ անսային, և արարին զչար առաջի իմ. և զոր ոչն կամէի ընտրեցին. Եսայ. 66. 4. Որոյ աղագաւ խնդրեն զմեսիան մինչև ցայսօր և ոչ կարեն գտանել, զի անցեալ նստաւ ընդ աջմէ մեծութեանն Աստուծոյ ՚ի բարձունս Եբր. 1. 3. Զի ժամանակն էանց, և նա հեռացաւ, այլևս գտանել ոչ կարեն.

քանզի

digitised by A.R.A.R.@

քանզի վաղճանեալ և շարժմամբք ճանապարհ նորա, հողմք եւս
վարքեն նորա և ամպք փոշի ոտից նորա Նաւ. 1. 3. Քանզի
արքայութիւնն Աստուծոյ բռնադատի՝ և բռնաւորք յափշտակեն
զնա Մատ. 11. 12. և եթէ մարտիկ ոք իցէ՝ ոչ պսակի եթէ
ոչ լաստօրինի մարտիցի 2 Տիմ. 2. 5. Նոյնպէս և դու հարսն,
եթէ ոչ փութասցես, և ոչ վաղվաղակի յառնիցես բանալ. և նա
խաղացն անցեալ գնայ, և դու զնա խնդրելով գտանել ոչ կարես,
և ձայնի քո ոչ լսէ նա. զի ծանրացոյց զունկն իւր զի մի
լուիցէ քեզ 59. 1. Հապա և դու գանգատիս թէ՝ Եսայի եւ-
եօթներորդոյ իմոյ և նա եանց և գնացեալ հեռացաւ. և այս իրա-
ւամբ, ըստ անդամալուծին թէ՝ մինչ ես գանդաղիմ, այլոք քան
զիս յառաջագոյն իջանեն ՚ի ջուրն և բժշկին. Նոյնպէս և դու մինչ
գանդաղիս և տարտամ շարժմամբ յառնես ՚ի բանալ, և նա հե-
ռանայ և մեկնի ՚ի քէն. և ըստ առաքելոյն ոչ կարես տեսանել
զերեսս արքային, 2 Թագ. 14. 28. և հոգի իմ ել ընդ բանի նորա.
որպէս ամն՝ խորհրդոյ հարսն ասէ թէ՝ մնացի իբրև զմեռեալս, և
ոչ գիտացի զիս ամենեւին. Նոյնպէս և հարսն կամի ասել թէ
իբրու մեռայ, կամ եղէ որպէս մեռեալ, և եղէ իբրև զանօթ
կորուսեալ. Խնդրեցի զնա և ոչ գտի. զի բազումք են անօրէնութիւնք
մեր, և մեղք մեր հակառակ կային մեզ. զի անօրէնութիւնք
մեր՝ ՚ի մեզէն, և պանիրառնութիւնս մեր՝ մեք մեզէն գիտեմք. Ես.
59. 12. Քանզի փեսայն ասէ՝ եթէ ոք կամի զկնի իմ գալ,
ուրասցի զանձն իւր, և բարձցէ զխաչ իւր, և եկեսցէ զկնի իմ.
Մրկ. 8. 34. Իսկ և դու գուցէ թողեր զուսումն մանկութեան.
և մոռացար զուխտն աստուածեղէն Առակ. 2. 17. Կոչեցի զնա՝
և ոչ լուաւ ինձ. արդար դատաստանեաւ ոչ լսէ, առ ՚ի պատիժ
ծուլութեան քոյ. Որ կանխաւ ծանոյց թէ՝ գալ բողոքել ձեզ
առ իս, և ինձ ոչ լսել ձեզ. Ես. 58. 4. Զի նա թարց կոչելոյ
եկն՝ և դու աղատօրէն ոչ ընկալար զնա. և ես զդուռն սրտի քոյ
բացեր ընդդէմ թշնամոյն սատանայի՝ որ փախագեր կորստեան
քոյ, և ոչ բացեր ստեղծողին և փրկչին քո, և պաշտպանողի
զքեզ. որ խոնարհեցոյց զերկինս և էջ վասն փրկութեան քոյ.
և դու ոչ փութացար յառնել և բանալ, որ ծարաւի էր փրկու-
թեան քում, և նաթարեաւ սպասէր ՚ի թեւս հողմոյ. Սղ. 17. 10. և
բացեր շնացող բռնաւորին, վասն էր ոչ բացեր օրինաւոր
տեառն.

digitised by A.R.A.R.@

թեւածն քոյ, և մեսայիծ հոգւոյ. մինչ ձայնեաց քեզ առաքեա-լովքն խօսեցաւ մարգարէիւքն, և յալածման քարոզէ վարդա-պետօքն այլ կայեր և մնայեր դու իբրև զաղաւնի դարբնոյ անշարժ Յոբ. 41. 15.

Գտին զիս պահապանքն որք շրջէին ՚ի քաղաքին. հարին և վիրա-
ւորեցին զիս, առին զքօղն իմ յինէն
պահապանք պարսպաց։

Պահապանք հարսին Քրիստոսի՝ ՚ի վերուստ Աստուծոյ՝ ՚ի յերկնից հրեշտակք. ՚ի յԱստուծոյ մարգարէք. ՚ի Քրիստոսէ առաքեալք. ՚ի յեկեղեցւոյ առաջնորդք. ՚ի տանէ ծնողք. ՚ի վար-ժարանէ վարդապետք. ՚ի յերկրէ թագաւորք. ՚ի քաղաքէ իշխանք։ Նախ պահապանէ Աստուած, որ ոչ ննջէ. և ոչ ՚ի քուն երթայ, այլ շրջի՝ ՚ի քաղաքի բնութեան մարդկան. ըստ այսմ ասէ սաղմոսերգն եթէ ոչ Տէր պահէ զքաղաքն, ընդունայն տքնին պահապանք նորա. Բայց հարկանէ մինչ անպատրաստ գտանէ զքաղաքն և վիրաւորէ զի առ յինքն հաստատեսցէ, ըստ այնմ նետք քո հարան յիս, և յիս հաստատեցաւ ձեռն քո Սղ. 37. 3. Զի որպէս մեծամեծ կենդանիք մինչ ոչ նեղին և ոչ խոցին և ոչ վարին [?] ոչ ըմբռնին, և ոչ կալանին. նոյնպէս և մեղաւորն մինչ ոչ վարի ձախորդութեամբք, և ոչ նեղի հիւանդութեամբ, և ոչ խոցի պատժօք և անյաջողութեամբ ոչ ըմտանենայ։ Վասնորոյ և նա ցաւեցուցանէ, և դարձեալ անդրէն հաստատէ, զի ասէ եհար՝ և ձեռք նորա բժշկեցին Յոբ. 5. 18. Որպէս եհար զՊօղոս և զորկոյս ՚ի գետնի, և վիրաւորեաց, և դարձեալ բժշ-կեաց, և հաստատեաց՝ ՚ի նա զհետս իւր. Ոսկեբերանն ՚ի յանդրա-նիկեայ գրոցն 12 գլխ. ՚ի վերայ դարձմանն Պօղոսի ասէ թէ որպէս որսորդք ՚ի բարձր տեղիս նստին ՚ի վերայ ձիոյ, և զեղէգն ՚ի վեր ամբառնալով՝ ՚ի բարձրաճախրականէ զկաքաւն ընկենուն ՚ի խորս. այնպէս և Քրիստոս տէր մեր եկեալ զհոգևոր ձկ-նորսութիւն իբրև ՚ի բարձրաճախրական ձիոյ. նստեալ յերկինս ջրրէն կարթի ՚ի վերուստ արձակեաց զձայն իւր առ Պօղոս ասե-լով Սաւուղ Սաւուղ, զի՞ հալածես զիս. այսպէս որսաց զձուկն զայն մեծ որ զամենայն ծովն ամբոխէր և թիւր աշխարհ ընդդէմ եկեղեցւոյ յարուցանէր. բայց աստանօր ոչ խորտակումն և ոչ ընդդէմ դարձաւ, այլ վարդապետական պատասխանեաց տէր զի
զինչ

զինչ կամիս առնել․ Երկրորդ՝ պահպանքեն հրեշտակք լուսային հրեշտակաց երկնից պատուիրեալք վասն քո 'ի պահել զքեզ․ ( Տես․ 3 Կլ-ր․ 3․ համարն ) քանզի ամենեքեան հոգիքեն հար-կաւորք որք առաքին 'ի սպասաւորութիւն Եբր․ 1․ 14․ Կոյ հարին զքաղաքն ստորոտացս եւ զամրոցս․ Այլ եւ հրեշտակ տեառն, եւ սատակեաց 'ի բանակէն ասորեստանեայց հարիւր եւ ութսուն եւ հինգ հազար․ Ես․ 37․ 36․ Երրորդ՝ պահապանք հնոյ ժողովրդեանն մարգարէք, որպէս Մովսէս էհար զեգի-պտոս․ եւ ամփոփել բանիւն Աստուծոյ էհար զամուրս, որոց լուեալ ձայնի տեառն․ վիրաւորեաց զնա մեղադրանօք, առնին զնիկոլայն առաքելական որ համարձակելով առ 'ի չլինել թագաւոր իսրայէլի, եւ հոգի տեառն վերացաւ 'ի սաւուղայ եւ հանգեաւ 'ի վերայ դաւթի․ I Թագ․ 15․ 19․ Չորրորդ՝ պահապանք նորոյ իսրայէլի առաքեալք, որք հարին զանանիայ եւ զսափիրայ․ որք խորեցին 'ի գնոյ գեղջն․ եւ զսիմոն մոգն որ համարեցաւ զպար-գեւն Աստուծոյ ընչիւք ստանալ։ Հինգերորդ՝ պահապանք հարսին եկեղեցւոյ առաջնորդք եւ վարդապետք որք մինչ պահ-պանեն զեկեղեցին Քրիստոսի ոչ հաւատով եւ ուղղափառ-դաւանութեամբ, եւ յորժամ կան ընդդէմ հերձուածողաց զօրս հարկանեն բանիւն Աստուծոյ, եւ հալածական առնեն զնոսա․ Վեցերորդ՝ պահապանք տանց ընտանեաց եւ որդւոց եւ ծառայից ծնողք նոցա, որք բարեպաշտ խրատուք պահպանեն զնոսա, եւ աստուածային երկիւղիւ սնուցանեն։ Եօթներորդ՝ պահապանք աշխարհի եւ քաղաքաց՝ եւ երեւելապէս թագաւորք եւ իշխանք, որք պահպանեն զերկիրս եւ զքաղաքս իւրեանց 'ի թշնա-մեաց, եւ պահել պահեն զստորադրեալս իւրեանց․ զչարս պատժեն, եւ զբարիսն յարգեն, որոյ աղագաւ գրէ Պօղոս, եւ արդ աղաչեմ նախ քան զամենայն առնել աղօթս՝ խնդրուածս՝ պաղատանս․ գոհութիւնս վասն ամենայն մարդկան։ Մանաւանդ վասն թագաւորաց եւ ամենայն իշխանաց․ զի խաղաղութեամբ եւ հանդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր․ ամենայն Աստուա-ծապաշտութեամբ եւ սրբութեամբ․ I Տիմ․ 2․ 1․ Ութերորդ՝ նաեւ պահապանք երկրաւոր քաղաքիս սատանայ, որ կոչի իշխան աշխարհիս Յով․ 12․ 31․ եւ առաքեալն իշխան օդոյս անուանէ․ Զի անդադար ջանայ իշխել 'ի վերայ մարդկան ազգի․ որ 'ի

գտանել

digitised by A.R.A.R.@

գտանել զհարսն ի ծայրագոյն մաքրութեան. պէսպիսի փորձութ-
հոլովմանէ եւ վիրաւորել, առ ի յաստահաստել. որպէս առ Յոբայ
շրջեալ ընդ երկիր, եւ անցեալ ի ներքոյ երկնից՝ խնդրէ պահա-
պանս, եւ եկեալ հարին զՅոբ։ Վասնզի սովոր է զպայազատս առնել
Կանոնքոյ ասէ հարան գտին զիս պահապանք որք շրջէին ի
քաղաքին հարին եւ վիրաւորեցին զիս։ Որոյ սակս ասէ փեսայն
հալածեն ենեղեն զձեզ. եւ թէ մատնեսցեն զձեզ յատեանս եւ
ի բանտս։ Աւետիս զկնի լայն իմ լինէին, այսինքն ի ձեռն չար դատա-
ւորաց եւ ի չարաց մերկացուցանեն յինէն, եւ բաժանեն զհոգին
ի մարմնոյն. ըստ առաքելոյն Պետրոսի, որ ասաց գիտեմ թէ
վաղվաղակի լինելոց մերկանալ յինէն մարմնոյս 2 Պետ. 1.
14։ Որպէս մերկացոյց զնա Ներոն գործին զխաչ· Նոյնպէս եւ
զայլ սուրբս ի յայլոց բռնաւորաց, զորս մերկացուցին սրով. եւ
հանին ի նոցանէ զզգեստ մարմնոյն քերանօք եւ ձանկօք· պէս-
պիսի տանջանօք·

Այս լուայ զմահ՝ հոգեւորատեառն·
սիմեօնի լաբունեայ առն·
Հազար երկերիւր քսան եւ ինն·
յուլիս ամսոյ քսանմէկ թուին։

Երդմնեցուցանեմ զձեզ դստերք Երուսաղէմի ի զօրութիւնս եւ ի յօրութիւնս անդաստանի, եթէ գտանիցէք զեղբօրորդին իմ, պատմեցէք նմա, եթէ խոցեալ եմ ի սէր նորա։

Զայս Երրորդ անգամ, երիւք զօրութեամբ կատարելոյն երդ-
մնեցուցանէ զդստերս Երուսաղէմի· որք են հրեշտակք եւ հրեշ-
տակացեալ անձինք· որոց մայրն է վերին Երուսաղէմ, առ որս
ասէ եթէ գտանիցէք զեղբօրորդին պատմեսջիք նմա։ Քանզի
հրեշտակք հանապազ տեսանեն զերեսս Աստուծոյ հօր, եւ միշտ
շրջին ընդ մեզ. Մատ. 18. 10։ Եւ հրեշտակացեալ անձինք որք
ամենեքեան, որքեն իբրու մեզ հարք եւ մեզ բարեկամք, եւ զաղօթս
հարսին եկեղեցւոյ ունին բուրվառաւ, որպէս զանուշահոտ
խունկ մատուցանեն Աստուծոյ· Յայտ. 5. 8։ Որպէս Ռափայէլ
հրեշտակն ասաց Տոբիթայ, ես մատուցի զյիշատակ աղօթից
ձերոց առաջի սրբոյն Տօբ. 12. 12. Նոյնպէս եւ Պօղոս ասէ
յամենայն ժամ յամենայն աղօթս խնդրեմ ձեր ամենեցուն առնեմ
աղօթս խնդութեամբ։ եւ գոհանամ զԱստուծոյ յամենայն ժամ
վասն

digitised by A.R.A.R.@

վասն ձեր ամենեցուն յիշատակ առնելով յաղօթս մեր անդադար։ Փիլպ. 1. 4։ Թես. 1. 2։ Իսկ և Յովհաննէս առաքեալ գրէ առ Գայոս, սիրելի վասն ամենայնի կամիմ քոյ յաջողութեան և առողջութեան աղօթս առնեմ. 3 Յով. 1. 2։ և արդ եթէ այսպէս ուրեմն պատմեցէք նմա թէ՝ հոգւի իմ բոլորովին սիրով փեսայ եղբօրորդւոյն իմոյ. և այսու աղաչեմ միշտ հարկանիմ փորձանօք ՚ի թշնամւոյն բնութեան. որ հանապազ երբեմն զամէն շրջի և խնդրէ կլանել զիս. Աստուծոյ երդմնեցուցանեմ զձեզ. և աղաչեմ (զի այսպիսի երդումն կերպ աղաչանաց) զի ձեր յանդիման եղանիցիք նմա՝ բարեխօսեցէք վասն իմ, զայս է միջնորդութեամբ ձերով փրկանիմ ՚ի նոցանէ. և լնանի զկամօքն սէր իմ (Տե՛ս և զայս ՚ի 2. Գլուխ. 7 համար. Վերադասութեան) զի հոգևոր սէրն է ուղ՚ղ կամք. և յետ չոգեալ յամենայն երկրային. միացեալ ընդ Աստուծոյ անմահին եւ զօրէն վառեալ հրով հոգւոյն սրբոյ. և միշտ խնկայօղ զաստուածայնոյ. Գրաւեալ սէրն է կատարող բարեգործութեանց կեցութիւն վարուց փախչամ երկնային պատուիրանաց, մահ յանցանաց, կեանք առաքինեաց, զօրութիւն պատերազմողաց. բարեխօս յաղթողաց. պատճառ բարի արդեանց և վարձք կատարեալ արանց։ Քանզի սէրն յարուցանէ զայն որ մեռեալ է՝ ՚ի մեղս խոր թմբիր զհանգուցեալս մեղօք. կեցուցանէ զկորուսեալս. կանգնէ զյուսահատեալս բնակի ՚ի խաղաղ միտս. և տայ դժ և զօրութիւն մտաց. մինչ զի Թարց սորա ոչ ոք հաճոյանայ Աստուծոյ։

[illegible]

Գասերք Երուսաղէմի, և պահապանք պարսպացն. թէ ոյք են՝ նոյն գլխոյ 7 համարին ասացաւ, զհրեշտակս, զմարգարէս և զառաքեալս. զի և հրեշտակք յեկեղեցւոյ ուսան զբազմապատիկ իմաստութիւն Եփ. 3. 10։ Այսինքն ՚ի գլխոյն եկեղեցւոյ ՚ի Քրիստոսէ. որք սպասաւորք եղեն անօրէնութեան նորին. որպէս ՚ի համբարձմանն, ասէին համբարձէք իշխանք զդրունս ձեր ՚ի վեր, և մտցէ Թագաւոր փառաց. և հարցանէին թէ ո՞վ է սա Թագաւոր փառաց։ Կամ թէ՝ ով է սա որ դիմեալ գայ յԵդովմայ։ Եթէ՝ վասնէ՞ր կարմիրեն ձորձք քո. ասէ հնձան հարկ

Նայ

digitised by A.R.A.R.@

Նոյնպէս և մարգարէքն. որպէս Զաքարիա, և ասացից ցնա զի՞նչ են վէրքդ այդոքիկ ՚ի մէջ ձեռաց քոց. և ասասցէ վիրաւորեցայ ՚ի տան սիրելւոյ իմոյ. Զաք. 13. 6. Նոյնպէս և առաքեալքն. որպէս Պետրոս և Թովմաս ասէին առ Տէր յուր երթաս. և զի՞արդ զճանապարհն կարասցուք Յով. 13. 36. և 14. 5. Նոյնպէս և աստանօր հարցանեն հարսին զի հաւաստասցէ և խոստովանեսցի. թէ՝ որպիսութիւն նորին անհասէ ՚ի հրեշտակաց և ՚ի մարդկանէ. զի ոչ ոք գիտել կարէ. և դու գեղեցկութեամբ հարմանայեալք. ասեա՛ եթէ գտանիցէք զնա, զոր ցանկային տեսանել զնմեայ ընդաղօտ հրեշտակք 1 Պետ. 1. 12. և մեք զի՞արդ կարեմք գտանել զնա, ըստ քում երգմանս. Զի հրեշտակաց վեհագոյն միջնորդութեամբ երևի. և ընդ մարդկանս հրեշտակօք խօսի. և յանձնեցուցանէ անհասն մանյ. Որոյ և զկնի հարսն տայ նշան զփեսայէն ոչ որքանութեան ըստ աստուածային բնութենէն. այլ ըստ մարմնոյ երևմանն որում հաղորդեցաք. Որպէս մարգարէքն ՚ի լուսեալն ՚ի ներքոյ երևելեաց ՚ի մարմնաւոր իրաց զոր ինչ գրեցին և նկարեցին մեզ վասն Աստուծոյ Զի դժուարին իմացուածք մեր նմանութեամբ մարմնականաց կարիցէ հասանիլ ՚ի հոգևորս և յաստուածայինս. Քանզի խօսի զբազկաց, զձեռաց, զաչաց, և զոտից որք են ՚ի յԱստուած. ՚ի ներքոյ նմանութեան մասանց կամ յանդամոց որք են ՚ի մարդս. Այսպէս կարեմք ասել և մեք. Նախ ոսկեղէն գլուխ փեսային. է աստուածութիւն նորա. Երկրորդ՝ դէմք նորա է յաւիտենական սէրն. Երրորդ՝ երկոքին աչք նորին, իմաստականութիւն և նախատեսութիւնն. Չորրորդ՝ բերան նորա յաւիտենական իմաստութիւնն. Հինգերրորդ՝ վարսք նորին. են երանելաւքն. Վեցերրորդ՝ երկոքին շրթունքն, հին և նոր կտակարանն. Եօթներրորդ՝ լեզու նորին, են աստուածաբանքն. Ութերրորդ՝ երկոքին բազուկքն, զօրութիւնն և կարողութիւնն. Իններրորդ երկու ոտիցքն, բարութիւնն և գթութիւնն. Տասներրորդ՝ սիրտ նորա, բորբոքել սէրն. Մետասաներրորդ՝ մեծութիւն նորա անչափութիւնն. Երկոտասաներրորդ՝ ոտք և սրունք նորին. ուղղութիւնն և արդարութիւնն. Երեքտասան Երրորդ՝ կեանք նորա է անմահութիւնն. Չորեքտասաներրորդ՝ հասակ նորա է յաւիտենականութիւնն. Ահա նկարագրեալ առ մեզ ՚ի ներքոյ նմանու-

մաց

digitised by A.R.A.R.@

մարմնաւոր անդամոց ստորոգութիւնքն Աստուծոյ. Այլ և որ 'ի մէջ Գրիգորի Թագաւոր, արդարև է Թագաւոր Թագաւորաց և տէր տերանց. որ 'ի տեղի արքայական հանդիսաւեհութեան, ունի զվայելչապետական պայծառութիւնն. Ունի գեղեցկութիւն այնքան, որ ոչ բնաւ ակն մարդոյ կարէ մատչել 'ի նա. և վասն Թագաւորական ծիրանւոյ և արքունական վերարկուին, ունի զանմահութիւն և բնակէ 'ի լոյս անմատոյց. և վասն աթոռոյ, զանփոփոխութիւն. Վասն Թագի և պսակի զփառս. և փոխանակ արքայական սանձանայ, զանչափութիւն. Փոխանակ Թագաւորական հաստատութեան, զվայելչապետականութիւն. 'ի տեղի զանձուց, զերջանկութիւնն. 'ի տեղի պաշտօնէից. զդասս հրեշտակաց. 'ի տեղի ստորադրելոց. զամենայն երանեալ հոգիս. Փոխանակ պատուանդանաց ոտից. զերկինս և զերկիր. Բայց դստերքն Երուսաղեմի հարցանեն վասն անօրէնութեան նորին. և որովհետև հարսն երդմնեցոյց զնոսա. իսկ նոքա պատասխանեն, Թէ՝ և առաքեալ եղեն անօրինական հրաշքն, և դու՝ տուր մեզ զնշան Թէ՝ եղբօրորդին քո ո՞րպէս զանազանի 'ի յեղբօրորդեաց այսինքն 'ի մարգարէից և 'ի նախնեաց յարդարոց. զի 'ի յաբրահամու և դաւթայ ծնաւ. և դու որքան կարես՝ տուր մեզ՝ նշան. Ասորս պատասխանէ հարսն.

Հարսն նշան տայ եղբօրորդւոյն՝ զի՞նչ ունէր. և նա ասէ. Եղբօրորդին իմ կարմիր է և սպիտակ, ընտրեալ 'ի բիւրուց.

Արդարև սպիտակ է և կարմիր. և գեղեցիկ տեսլեամբ քան զամենայն որդիս մարդկան. Զի աստուածութեամբ և մարդկութեամբ է միաւորեալ. Ըստ ասից՝ Պրոկղոսի Կիզիկոյ եպիսկոպոսին առաջի Նեստորի. Թէ բանն մարմին եղև, և բնութիւնքն միաւորեցան, և միութիւն բնութեանցն անշփոթ մնաց. և որպէս Յովհաննէս Ծործորեցին՝ 'ի տաղաչափութեան իւրում ասէ.

Մի բաժաներ զբնութիւն բանին որոշական.
ըստ Նեստորի չարաբանի վատթարն ուսման.

Ուստի ասեմք սպիտակ՝ ըստ աստուածային պարզ բնութեան, և կարմիր՝ ըստ առեալ մարմնոյն բնութեան. և վասն միաւորութեանն՝ ասէ հարսն. սպիտակ է և կարմիր. այսինքն համագամայն սպիտակ է և կարմիր. Նախ սպիտակ է՝ մաքրութեամբ և անմեղութեամբ. և կարմիր սիրով վառեալ որով էհեղ զարիւն

իւր

digitised by A.R.A.R.@

խոր. Երկրորդ՝ սպիտակ՝ ի ծննդեան զգեցեալ մարմնոյ. Կարմիր՝ ի Թլփատութե արեան դուռնոյ. Երրորդ՝ սպիտակ՝ ՚ի լեառն Թաբօր ՚ի պայծառակերպութեան ձիւնափայլ հանդերձիւ. Կարմիր՝ ՚ի լեառն Ձիթենեաց և ՚ի ձորն գեթսեմանի արեան քրտամբ. Չորրորդ՝ սպիտակ՝ ՚ի տան հերովդէի պայծառ հանդերձիւ. Կարմիր՝ ՚ի յապարանս պիղատոսի ծիրանեաւ պատմուճանաւ.

Զորմէ ասէ.

Որոյ զգեստն է լոյս փառաց.
արկին հանդերձ նախատանաց.
Նախ սպիտակ հասարա կայ.
ապա քղամիդ կարմիր նոր կան.
Զի զգեցեալն որպէս կըր կին.
Աստուած և մարդ մի երկոքին.
սպիտակն ՚ի լոյս աստուածային.
Կարմիրն ՚ի գոյն արեամբ մարմին.

Հինգերորդ՝ սպիտակ՝ հոսեալ կողին ջրով. Կարմիր՝ Թաթաւեալ իւրով արեամբ. Վեցերորդ՝ սպիտակ՝ ՚ի սրբագնութեան տեսակաւ հացին. և կարմիր՝ տեսակաւ գինւոյն, որով հաղորդս արար զմեզ յինքեան. Եօթներորդ՝ սպիտակ՝ ողորմութեամբ. և կարմիր արդարութեամբ. Ութերորդ՝ սպիտակ խորհրդական անդամօք կուսանաց. Կարմիր ծիրան երանգ գունով մարտիրոսաց. Ընտրեալ ՚ի բիւրուց. Նախ ըստ վկայութեան Աստուծոյ հօր, թէ դա է որդի իմ ընտրեալ դմա լուարուք. Ղուկ. 9. 35. Երկրորդ՝ վասն որդեանց՝ չարչարանացն, և հեղման արեանն. Երրորդ՝ բարձրագոյն քան զամենայն ստեղծուածս, և քան ամենայն փառս ընտրելոյ. զի եմուտ ՚ի ներքին կողմ վարագուրին, և նըստաւ ընդ աջմէ Աստուծոյ հօր. Չորրորդ՝ ընտրեալ իբրև զամենայն ժողովրդեան խոցելի. որ զնշաւակն խաչին անդ զծածկ կարմիր, և սեամբ հրոյ լուսաւորեաց ՚ի գիշերի, և հրով սիրոյ էած յերկիրն աճեռեաց. Հինգերորդ՝ ընտրեալ ՚ի ձեռն վիճակ խորոյ ՚լինել միջնորդ Աստուծոյ և մարդկան. Վեցերորդ՝ ընտրեալ իբրև զծայրագոյն քահանայապետ. որ իւրով արեամբ եմուտ ՚ի սրբութիւն սրբոյն. Եօթներորդ՝ ընտրեալ իբրև հովիւ երկուց հօտից, հրէից և հեթանոսաց. զի հովուական գաւազանաւ խաչին արար մի հօտ և մի հովիւ.

Ութեր

digitised by A.R.A.R.@

Ութերրորդ՝ ընտրեալ որպէս գլուխ զինուորեալ և յաղթող եկեղեցւոյ. Իններրորդ՝ ընտրեալ որպէս գլուխ և թագաւոր հրեշտակաց և մարդկան. Տասներրորդ՝ ընտրեալ՝ զի՝ ի կուսական յարգանդէ ծնաւ, և զկուսութիւն ծնողին անխախտ պահեաց. Մետասաներրորդ՝ ընտրեալ իբրև դատաւոր կենդանեաց և մեռելոց մարդկան ազգի.

Գլուխ նորա յոսկւոյ կեփազեայ. վարսք նորա կոճղոյք սեաւ իբրև զագռաւ.

Ըստ առաքելոյն՝ գլուխ փեսային հոգւոյ Աստուած է. որ ասէ, կամիմ զի գիտիցէք դուք, եթէ առն ամենայնի գլուխ Քրիստոս է, և գլուխ Քրիստոսի Աստուած է I Կոր. II. 3. Բայց յոսկւոյ կեփազեայ ասէ, զի ծանուսցէ թէ՝ որպէս կեփազեայ ոսկին Ազնիւ և ինքնաբոյս է. Նոյնպէս և Աստուած հայր՝ քան զամենայն Ազնիւ ազնուագոյն է, և ինքնագոյ. բայց առ Աստուած գոյութիւն ոչ գիտի, զի անգոյն է, և միշտն է, և է սկիզբն առանց սկզբան. Իսկ կեփազեայ ոսկւով իմանամք զանապական աստուածութիւն նորա. և սեաւ վարսիւք, զհողանիւթեայ մարմին միածնի որդւոյ իւրոյ. Սեաւ ասէ յուցանելով զխոր հրդոյն անճառութիւն և անհասութիւն, յորում զանձք իմաստութեան և գիտութեան ծածկեալ կան, զոր մեծ պատմէ Դաւիթ թէ՝ եդ զխաւար՝ ի ծածկոյթ իւր Սղ. 17. 12. Այլև վարսք գլխոյ փեսային Յիսուսի՝ հրեշտակք և հեթանոսք, որք եկեալ յարեցան առ փեսայն հոգւոյ և եղեն փառք գլխոյ նորա, Նմանապէս և համայն ստեղծուածք են փառք ստեղծողին, և կուածու ասէ, զի ոչ կուանան անձն չինել և զուգեալ է զօրն կուանահար արուեստաւորի, Նոյնպէս բոլոր ստեղծուածք, ամենարուեստ արուեստաւորէն ստեղծեալքեն. և սեաւ ասէ՝ զի նա ստեղծօղ և մեք ստեղծուածք. Նա լոյս՝ և մեք խաւար. զի համեմատելով յանծային ամենապայծառ և գերազանց լուսոյն սեաւ և աղօտ ասիմք. Այլև վարսիւք իմանամք զճառագայթ աստուածային փառացն և սեաւ՝ որպէս աչք մարդոյ յառեալ յարեգական մթին և խաւար տեսանէ, և զլոյս աչաց նկատողին աղօտանայ. Ը Պօղոսի՝ յանկարծ նայելով շուրջ զիւրև փայլատակեալ լուսոյն՝ կուրացաւ. Զի զքնութիւնն Աստուծոյ և զորպիսութիւն նորին թագաւորական մեայ յամենայն ստեղծուածոց. զի նա միայն ունի զանմահութիւն բնակեալ՝ ի լոյս անմատոյց I Տիմ. 6. 16. Որպէս

եւ

և փեսայն Հոգւոյ վասն Հարսին եկեղեցւոյ ամենայն ուրեք Թագուցեալ, այսինքն 'ի յարգանդ կուսին 'ի յանբանից մսուր 'ի յեգիպտոս 'ի լերինս. 'ի յանապատին. 'ի տանջանարանս խաչին. վերջապէս 'ի գերեզմանի. և որպէս գրեն վարդապետք թէ Աստուած Թագուցեալ 'ի ներքոյ մարմնոյ. զօրութիւն 'ի ներքոյ տկարութեան, փառքն 'ի ներքոյ անարգանաց. կեանքն 'ի ներքոյ մահուան. զի երբեմն զՅակոբ թագուցեալ 'ի ներքոյ ուլենի մորթոյ և հանդերձին յեսաւայ, զի ընկալցի վասն մեր զօրհնութ. 'ի Հօրէ Աստուծոյ.

Աչք նորա իբրեւ աղաւնիս լուացեալ կաթամբ՝ նստեալ 'ի վերայ լրութեան ջրոց.

Զաչս փեսային Հոգւոյ նմանեցուցանէ աղաւնոյ. քանզի է գեղեցիկ յոյժ. որպէս վասն դստեր ասի թէ՝ կարմիր երեսօք, գեղեցիկ աչօք, և բարւոք տեսլեամբ. Աստի մտածելի է գեղեցկութի ոգւոյ նորին քն մարմնոյ. վասնորոյ աչօք իմանամք զիմաստականութիւն և զնախատեսութիւն նորուն, որ նայի 'ի քրօբէսնէ հայի յանդունդս. և ամենայն գործք խոնարհի յայտնի են յառաջի նորա Առակ. 16. 2. Վասնորոյ ասէ աչք նորա իբրեւ աղաւնիք. և որքան առ այս՝ վասն գեղեցկութեան և խոհեմ հայեցուածոյն. որպէս ջայլամքն և կրիայքն քաղցրապէս հայելով 'ի ձուսն զնոսա ածեն. զի աչօք զզօրութի սիրոյն հեղուն 'ի նոսա. Նոյնպէս և փեսայն Հոգւոյ քաղցր աչօք հայելով առ ընտրեալս իւր ոգանչելապէս սփոփէ զնոսա. Բայց 'ի տեսլեան ասէ աչք նորա որպէս դէտ հրոյ, այսինքն որպէս զբոց բորբոքեալ. քանզի մեծ զօրութիւն գոյ 'ի յաչս, որպէս իժ և քարբ օձն խստագոյն աչօք առ որս և հայի սպանանէ զնա, և հայելով 'ի ջուրս, կամ 'ի հայելիս սպանանէ զինքն. Նմանապէս և փրկիչն մեր խստապէս հայելով առ յամբարիշտս իսկոյն սպառէ և դատապարտէ 'ի յաւիտենական տանջանս, և աղաւնւոյ անուամբ իմանամք զնախախնամութեանն զթութիւն, և զարդարաձիւիրաւանցն ուղղութիւն. զի միապէս տեսնէ ամենեցուն զփրկութիւն և ոչ դառնայ յետս անարժանիցն. այլ ծագէ զարգակն ողորմութեան իւրոյ 'ի վերայ չարաց և բարեաց, և ածէ զանձրեւ գթութեան 'ի վերայ արդարոց և մեղաւորաց. Զի իբրև զաղաւնի գիտէ զձագս այլոց սնուցանել և դարմանել, որպէս զեկեղեցիս հեթանոսաց. Զի լուացեալ կաթամբ. ասէ, քանզի կաթն

մերժէ

digitised by A.R.A.R.@

Թորմէ զԹոյնս. և առը փոխէ զմիասակար հիւթս աչացն։ Ոչ կաթն աղչկանց մօր, երժշկութիւն աչաց, և առաքինիչ կանոնց նորին, լուանալով կաթնացուցանելով մաքրէ և պայծառացուցանէ, և զխաւարութիւն կանոյն բառնայ, և փեսայ անուանեալ փրկիչն հոգւոյ իբրև զաղաւնի սպիտակացեալ հոգւով. պայծառացեալ առաքինութեամբ, և մերկացեալ արեան գետով. և իբրև կաթնեղէն ցողով լուացեալ. օրինակ եղև անուանակերպ իւրոց. այսինքն քրիստոնեայ կոչեցելոց, առնլով օրինակ մի եւս ձեզ. որպէս ես արարի, նոյնպէս և դուք արարէք։ Զի զկաթնական արիւն փեսային Յիսուսի լուաց զաչս հոգւոյ մերոյ, փարատեաց՝ իկանոյ և բժշկեաց՝ ի յաղտոյ։ Վասնորոյ ասէ՝ աչք իմ ՚ի հաւատացեալս երկրի զի նստցին նոքա ընդ իս Սղ. Ճ. 6. Դարձեալ աչք նորա իբրև զաղաւնիս ասէ, որով ծանուցանէ նորին մաքուր տեսութեան և պայծառ զառաջնորդութիւնն. նստեալ ՚ի վերայ լրութեան ջուրց այսէ նորուն անչափ շնորհն, և անհասանելի իմաստութիւնն. զորմէ պատմէ որբազան առաքելաւորն թէ մանուկն աճէր և զօրանայր լի իմաստութեամբ. և շնորհք Աստուծոյ էին ՚ի վերայ նորա Ղկ. 2. 40։ Այլև աղաւնակերպ աչօք իմանամք զամենասուրբ Հոգին Աստուծոյ որ ՚ի սկզբանէ շրջէր ՚ի վերայ ջրոց. և զկնի աղաւնակերպ երևեցաւ ՚ի յորդանան, և յորժամ դատանի ՚ի ջուրս աւազանին. յորմէ վերստին ծնեալքն՝ եղանին յինքեան սեպհական ժառանգորդս. որպէս ասի ՚ի յերգս երգեղեցկոյն մերոյ թէ որ ՚ի վերայ ջուրցն զոլով աղծանէիր զարարածս. իջեալ ՚ի ջուրս աւազանին ծնանիս զորդիս Աստուծոյ։ Իսկ թէ՝ որպէս ասի ՚ի սահմանեալ աչխարհին շրջէիր ՚ի վերայ ջրոց (իբրև զաղաւնի թևոցն առուծմամբ) և ածանէիր զարարածս, Այսպէս և ՚ի նորս զԹասինեալ ՚ի նորածնեալսն. զգուշես՝ և ածես՝ և ծնանիս որդիս նմա.

Ծնօտք նորա ԺԳ և զծնօտս իւրոց բուրեն անոյշ հոտս. շրթունք նորա շուշանք կաթեցուցանեն զմուռս լի.

Եթէ գեղեցկին և յորմէր դրուատ, զի և յետ աչացն զոմէ զծնօտն, որէ վերին և ստորին մասունք ծամ եւս. յորս շարեալ ատամունքն պարզ սատամանս, զայն ասաշտ համեմատէ որքս օկահանծ և անօծ իմն, յորում արկանեն խունկ ՚ի ժողովելն ծառոց զոյս կոզմնն, և այնու եփեն զանոյշ խածիկս և զանուշահոտս.

իւղն

Էուայ, արտախսիէր մեծագին զազնիւ իւղն նարդեան, որով եօծ Մա-
րիամ զոտսն Յիսուսի Յով. 12. 3. Այնպիսի իւղոյ դաշտի հա-
մեմատէ զծնօտ փեսային. Բայց առ լաւագոյնս ի տեղի դաշտի դաշտա-
գրեն, որ ոչ յարմարի բնութեանն. զի դաշտն է տեղի բուսոյ,
եւ ոչ ծնօտ խնկոց. եւ թէ ասեն դաշտն է տեղի խնկենի ծառոց եւ
բուսոց. Բայց վերնագիրն ոչ ասէ տեղի ուր խունկ բու-
սանին, այլ թէ՝ դաշտ խնկոց իւղեփեցաց. Որպէս՝ ի հնումն
հրամայեաց Աստուած առնուլ զխունկս անուշահոտս մաքուրս,
եւ եղունգն, եւ զքաղբանն անոյշ, եւ զկնդրուկ զլուսաւորն, եւ առնել
զայն խունկ եփեալ գործ իւղագործաց հանգերձանի գործ մա-
քուր ի սրբութիւն Ել. 3. 34. Իսկ եւ զինչ առաւել անուշա-
հոտ դաշտ խնկոց կազմեալ ի յիւղագործէ Հոգւոյն սրբոյ,
աստուածային ծնօտ սոյն փեսային. յորմէ բուրէր զանուշհոտ բանն
կենաց եւ զամենայն լսողս զինի անուշահոտութեան իւրոյ ձգէր.
եւ ամենեցուն զկետնս յաւիտենականս շնորհէր, վասնորոյ ասէր.
եթէ ոք զբանն իմ պահեսցէ, զմահ մի տեսցէ յաւիտեան Յով.
8. 51. Իսկ եւ սպասաւորք քահանայապետացն եւ փարիսեցւոցն
վկայեցին թէ՝ ոչ երբէք այնպէս խօսեցաւ մարդ որպէս այրն
այն Յով. 7. 46. Քանզի ասէր զբանսն զոր ես խօսեցայ ընդ
ձեզ հոգի է եւ կեանք. Որոյ աղագաւ ասէր Պետրոս. տէր
առ ո՞վ երթիցուք, բանս կենաց յաւիտենականից ունիս.

Շրթունք նորա շուշանք, կաթէին զմուռս լիաբերանս. Որով հետեւ ծնօտք
փեսային, անուշահոտ դաշտի խնկոց իւղեփեցաց նմանեցան, որ
բնական գոյնս ցօղուտս եւ գեղեցիկս բաշխէ առատապէս, եւ
զշնորհս մատուցանէ լիապէս. որով սնանին աղբիւրք, եւ շնորհա-
զարդին գիտունք ի հանճար՝ հոգեբուղխ խրատուք նորին. Իսկ
եւ շուշանափայլ շրթամբք ծանուցանէ զպարզ եւ զսուրբ խրա-
վարդապետութեան հին եւ նոր կտակարանաց. եւ աւետարանական
աց գրոց, եւ առաքելական մատենից. որքեն իսկապէս այսպէս եւ
գեղեցիկ շուշանափայլ շրթունք փեսային Յիսուսի, ուսուց-
քաղեն զմուռս լիութեան, որով ծանուցանէ զխաչն զնեղ եւ
զանձուկ ճանապարհն կենաց եւ փրկութեան. Նախապէս ասա-
ցաւ թէ՝ զմուռսն է արտասուք սաստկական ծառոյ դառն հա-
մով, եւ անոյշ հոտով. եւ զմարմինս մեռելոց անապական պահէ.
Որպէս բանք փեսային Հոգւոյ դառն եւ դժուարին երեւին, որոց
զկնի

զկնի հաւատոյն է դիտողութիւն հոգևոր, որպէս ասէ առաքեալն, ամենայն խրատ առժամայն ոչ՛ ուրախութիւն թուի, այլ տրտմութեան. բայց յետոյ պտուղ խաղաղութեան նոցին կրթելոյն հաւատոյն է արդարութիւն. Եբր. 12. 11: Եւ զմեղօք մեռեալ հոգին մնացական պահէր մինչ զշրջանս և զատն ապաշխարութեամբ յարութեանէ: Վասն որոյ ասէ շրթունք նորա շուշանք բղխեն զմուռս լիութեան: և այլն ասէ՝ շրթունք արանց արդարոց կաթեն շնորհս. Առակ. 10. 32.

Ձեռք նորա ճախարակեալք ոսկեղէնք լցեալ թարշիշաւ. որովայն նորա
տախտակ փղոսկրեայ ականակապ՚ի քարանց շափիղայ:

Ձեռք փեսային ճախարակեալ ասէ, զի ձեռք աստուածայինն է, զորմէ ասէ Դաւիթ, ձեռք քո արարին և ստեղծին զիս. և թէ՝ տեսից զերկինս և զգործս մատանց քոց, զլուսին և զաստեղս զորս դու հաստատեցեր. Սղ. 8. 4: Աստ հարսն ձեռամբ զկատարելութիւն և զզօրութիւն նորին կամի ծանուցանել: Եւ կոյն ոսկեղէն ասէ՝ համանման գլխոյն, անաղարտ ոսկեղէն աստուածային բնութեան սակս: և իբրու ճախարակեալ քերեալ որ զքարս մարդկութեան ոչ ունէր. զի իբրև իշխանութեամբ ուսուցանէր և ոչ որպէս դպիրքն և փարիսեցիքն. Մատթ. 7. 29: Որպէս և ուսուցանէր անկեղծ պահել զպահս. անտես կալ յաղօթս, և ՚ի մարդկանէ ծածուկ առնել ողորմութիւն. Դարձեալ ոսկեղէն ձեռամբք իմանամք զմարմնաւորն տնօրէնութեան գործոյն մաքրութիւն. որ ներգործեաց զկիրս մարմնոյ, սակայն ճախարակեալ, զի անախտ պահեաց զիւրաքանչիւր զանդամս ՚ի թիւնից վիշապին մինչև ցաւելումն ոչ յանդիմանեցէ զիս վասն մեղաց: Լցեալ ոսկով թարշիշաւ. զաստուածապէս ներգործութիւն եղեալ ձեռամբ նորին, զնշանս և զարուեստս, զբազմաձև բժշկութիւնս, և զանազան սքանչելիս, որք իբրև վայելուչ պատուական քարինս փայլեցին ՚ի վերայ երկրի, և փայլեն մինչև ցայսօր և մինչև յաւիտեան, զի էր գործ երկնային և ոչ երկրային: Զի թարշիշ ասեն՝ է յակինթն որ է ծովային կապուտակ և երկնագոյն, ուստի ասէր մարգարէն Ըստամուծոյ Հանեմ զդև. զի բանն միացեալ էր ընդ մարմնոյ, զորմէ ասէ աւետարանիչն բանն մարմին եղև, և այլն: Որովայն նորա տախտակ փղոսկրեայ ականակապ՚ի քարանց շափիղայ: Որովայնիւ իմանամք անսասան խնամքն

նորա

նորա վասն արքայութեան երկնից. և շափիւղայ ակամբ զմտաւ և զանհամեմատ վայելչութիւնս նորին: Մանաւանդ ՚ի մարմնաւորն տնօրէնութեան զեօթն պաշտելի հրաշափառ խորհրդոց կատարումն: Նախ զծնունդն: Երկրորդ՝ զխաչն: Երրորդ՝ զյարութիւնն: Չորրորդ՝ զհամբարձումն: Հինգերորդ՝ զառաքումն հոգւոյն սրբոյ. Վեցերորդ՝ զկոչումն հեթանոսաց ՚ի հաւատս: Եօթներորդ՝ Երկրորդ գալուստն ՚ի դատաստանսն:

Այլև որովայն փեսային տախտակ փղոսկրեայ ասէ, շափիւղայ ակամբ զարդարեալ. Նախ զի վերստին ծնաւ զբոլոր երկրածին զազգս ողջոյն: Երկրորդ՝ ծնաւ հարազատ զորդիս զսրբազան առաքեալսն ճշմարիտ վկայք տնօրէնութեան իւրոյ. Երրորդ՝ ընտրեաց զայնոսիկ որք անքուն և անհանգիստ քարոզեցին աշխարհի զբանն կենաց. Չորրորդ՝ հրաժարեցան յաշխարհէ, և թողին զամենայն զոր ունէին: Հինգերորդ՝ անվեհեր պատասխանեցին բռնաւորաց. Վեցերորդ՝ ետուն զպարանոց իւրեանց ՚ի բերան սրոյ և զմարմինս իւրեանց յայրումն հրոյ. Եօթներորդ՝ եղեն արժանաւոր անթառամ պսակացն: Գարձեալ փղոսկրն է զեղեցիկն Ադին, պայծառ, և իբր թանձրացեալ, և չինուածոյ յարմար, իսկ շափիւղայն է կապուտակ երկնային գունով տեսանելեացն ակն ինչ պատուականս. որով ծանուցանէ զմեծ զբարձրութիւն երկնային փառացն և զհաստատութիւն խոստմանցն: Բայց երկրագծեանն ևս այսինքն փղոսկրն և շափիւղայն, բնութեամբ են ցուցող օրինակ ողջախոհ բարուց փեսային հոգևոր, որ ունի ՚ի բնութեան և ոչ ստացմամբ, և զմաքուրն նորին ամբողջական ունի այսինքն զհաստատութիւն, զգաստութիւն, զժուժկալութիւն, զամօթխածութիւն և զբարեխառնութիւն. զի և զհիմն եկեղեցւոյ հարսին գլխոյն փեսային ըստ ողջախոհութեանն եդաւ, բարութեամբ և գթութեամբ նորին. բայց ձախողակեաց ասէ, որդ միջինի դերասանց ձախողակեաց բանն զհոգին առ որ, որ անարատ կացանել զմարմին էակցին իւրոյ և մերքան ազնիւ տեսէր քան զզօրութիւն բարձրելոյն, որ հաւանի եղև ՚ի վերայ ընտրեալ հարսին երկնաւորի, և միջնորդ զատանաւորն ակունք, քանզի կուտէ ծնանիլ փառաւորին յարթերգ զջուրն ՚ի գինի փոխարկել, զերանութեան պանդխտացն ընդ զի ծնունդ կոյսն լուսաւորել և շնորհքօրեալ. Հաստատեալ

Յաւէտեան յարութեանը

Ասացեալ նորա՝ զի որ յուսան հաւատացեալք ՚ի վերայ ... երկրաւորաց. զմեռեալ
նորա ... ընդ էակ ... գնայց։

Նախ որ ունիք մեծ այլն հոգւոյ՝ ողորմութիւն և գթութիւն նորին
հաստատ և անդրդուելի որ ոչ է երբեք մարդոյ դիւրափոփոխելի.
և կամ ՚ի գիւտական հոգւոյ և ամենայն ձախողակի պատահմանց
դիւրափոփոխ. այլ հանգոյն մշտամնացնորայ սեան հաստատուն։
Ուստի ասէ՝ հաստատեսցի՝ ՚ի վերայ վիմի ոտս իմ, և աղերսաց
զգնացս իմ Սղ. 39. 3. և այն քան հաստատ մինչ զի ինքն ծա-
նուցանէ թէ՝ երկինք և երկիր անցցեն և բանք իմ մի անցանիցեն.
և առաքելոյն վկայէ թէ հաստատուն որ խոստացաւն. և
եկեղեցականն ասէ՝ մինչ ... ՚ի վերայ խաչին ...
Թէ ... և ոսկ հաստատունք ՚ի վերայ Թաթից Ս. 26. 2Յ.
Զի մարմնականի ապականացու բնութիւն ընդ աստուածային
անապականն բնութեան խառնեալ միացեալ և հաստատեալ ան-
բաժանելի եղև. Որպէս ասէ Յովհաննէս Երզնկացին.

Ոչ անմարմին բնութիւնն եղև այլայլական,
և կամ մարմնոյ ինչ թանձրութիւն փոխարկական.
Այլ կատարեալ բնութեանց երկուց նոր խառնմամբ
միաւորեալ անեղապէս անճառական.
Մարդ լինելով բոլորովին աստուածորդին.
և զբնութիւն իւր պահելով անշփոթական։
Ենթակայ բոլոր բնութեան աղամական.
և զգոյութիւն իւր ոչ թողեալ զթանձրական.
Էր Աստուածորդին և բարեխօս ողորմութեան.
՚ի յերկրէն ... հաստատեալ հաստատական։

Երկրորդ՝ ունիմք մեծ այլն հոգւոյ հանգոյն կենաց հաստատուն
սեանց, առաքելոց, մարգարէից, վարդապետաց, և համայն ընդ
հանդերձեալ քրիստոնէից Տիմ. Գլուխ 2. 2. 9. և Եբր.
1. 18. Բայց ... յի ուղղէ, հաստատուն
բարձրութիւն, ամրութիւն, բոլորականութիւն, կենդութիւն ...
և ... այսպէս եղեն ընդունել մէջն ամենեքեան, որք ՚ի ...
... բոլոր մարմնով ծածկեալ երբեք ՚ի խոր-
... և այնպէս միայն անյաղթ և անշարժ, որոց
՚ի հրաշագեղ կանգնեալ երկնչէին ոչ ՚ի յերկնից մէջ

լինելն

վախեցին․ ոչ 'ի խստագոյն Ճանկից օձազային․ ոչ 'ի բռնութեան ուժոյ Հարկանողաց զօր Հուրբէլին․ այլ առաւել ցնծացեալ Հրճուէին, զի մահուներ նոցա խաղալիք․ և յիմարութիւն բանաւորացն ծաղր առնելեք․ որպէս և գերերջանիկ Հայրն մեր սբն Գրիգոր Լուսաւորիչն Հայաստանեայց․ ասէր առ չարային Տրդատայ թէ՝ առաջ Հրաման վասն իմ որպէս և կամիս՝ զինչ մահ և Հրամայես և արդ՝ դիր զիս 'ի փորձ ամենայն տանջանաց զխորդ և որպէս ինչ թելադրեսցեն քեզ դևք․ քանզի որչափ և խիստ և դժնդակք լինին նոքա․ ոչ ինչ կերպիւ կարեն յաՀաբեկ առնել զիս և մեկնել 'ի Հաւատոյ ուխտիս․ զոր պաՀեցի մինչև ցայսօր տեառն իմ Յիսուսի Քրիստոսի․ և այսպիսեացս ասէ՝ որ յաղթեսցէ․ արարից զնա սիւն տաճարի աստուծոյն իմոյ Յայտ. 3. 12. Տես [illegible] տեսակ փեսային Յիսուսի Համգունակ է Լիբանան լերին, սակս բազմազան յատկութեան նորին․ նախ զի Լիբանան լեառն է բարձր և գեղեցիկ 'ի մէջ ամենայն լերանց․ նոյնպէս և փեսայն Հաւատացելոց Հոգւոյ բարձր է աստուածութեամբ․ և գեղեցիկ մարմնութեամբ․ վասնորոյ ասացաւ առ նա՝ Երանի որովայնին որ կրեաց զքեզ, և ստեանցն որք դիեցուցին զքեզ․ Երկրորդ՝ զի է անկասկած տեղի․ նոյնպէս և երկնաւոր փեսայն՝ որոյ աղաղակէ ասէ Դաւիթ, որ յուսայ 'ի տէր որպէս լեառն Սիոն մի սասանեսցի յաւիտեան․ Երրորդ՝ դժուարամատչելի է 'ի թշնամեաց․ և տէրն մեր ասէ՝ որ անկցի 'ի վերայ վիմիս այսորիկ փշրեսցի․ և յոր վերայ անկցի Հոսեսցէ զնա․ Չորրորդ՝ Հաստատուն լեառն է․ նոյնպէս և փրկիչն մեր, զի մարմին նորա ոչ ետես ապականութիւն, և Հոգի նորա ոչ թողաւ 'ի դժոխս․ Հինգերորդ՝ նախ քան զամենայն լերինս ընդունի զանձրևս և զցօղս․ իսկ և երկնաւոր փեսայն ինքն ասէ զինքենէ ասելով․ 'ի սկզբանէ յառաջ քան զերկիր առնելը և նախ քան զանդունդս գործելը և յառաջ քան զելանելը աղբերաց ջուրց․ և նախ քան զլերինս Հաստատելը և յառաջ քան զբլուրս ծնաւ զիս Առակ. 8. 23․ Վեցերորդ՝ և է յոյժ պարարտ տեղի․ և Հանգստարան կենդանեաց․ նոյնպէս և փեսայս ցեալ բանին զՀարանայեալ իւր յորժամ Հրաւիրէ առ ինքն ասելով․ եկայք առ իս ամենայն աշխատեալք և ես Հանգուցից զձեզ․ Եօթներորդ՝ Լիբանան լեառն ունի զամենակերպ ծառա-

պտուղ

պտղաբերս. և փեսայն հոգւոյ ունի զբանական ծառս՝ զդաս առաքելոց, զջինջս մարտիրոսաց, և զբազմութիւնս համաստեղ քրիստոնէից։ Ընտրեալ իբրև զմայրս։ ընտրեալ բառիս մեկնութիւն տես սոյն գլխոյ 10 համարին։ Ընտրելոց ասէ ընտրեալ ՚ի բիւրուց. Եւ աստ ասէ ընտրեալ իբրև զմայրս. որ է ծառ ինչ մշտականաչ. և փայտ նորա է աղնիւ անփուտ և հոտաւէտ, և զորս հատեալ ՚ի գործ ածեն յաղնիւ շինուածս. Նոյնպէս և փեսայն երկնաւոր է մշտականաչ՝ զի ասէ առաքեալն Յիսուս Քրիստոս երէկ և այսօր նոյն և յաւիտեան. և աղնիւ և անփուտ վասնորոյ սպիտակազգեստ արք երկու ասէին առաքելոցն, այդ Յիսուս՝ որ վերացաւ ՚ի ձէնջ յերկինս. սոյնպէս եկեսցէ՝ զոր օրինակ տեսէք զդա երթեալ յերկինս. և է հոտաւէտ, ահաւասիկ հոտ որդւոյ իմոյ իբրև զհոտ անդոյ լիոյ. և ՚ի յաղնիւ շինուածս եկեղեցւոյ եղև գլուխ անկեան, երկուց որմոց միութեան, հրէից, և հեթանոսաց.

Կոկորդ նորա լի քաղցրութեամբ, և ամենայն ցանկալի այնէ. Այս է եղբօրորդին իմ, և այս է մերձաւոր իմ, դստերք Երուսաղէմի.

Կոկորդն է վերի մասն որկորոյն կամ միջի կողմ բերանոյն սկսեալ ՚ի քիմսն մինչև ՚ի փողն, ուր լինի համառօտութիւն, նաև բարբառն զանազան որպիսութեամբ կերպաւորի. Իսկ կոկորդ փեսայն ասէ լի քաղցրութեամբ. զի բան Աստուծոյ է, և յաւիտենական իմաստութիւն Հօր, վասնորոյ ասէ Ճշմարտութիւն խօսի կոկորդ իմ Առակ. 8. 7. և սաղմոսանուագ մարգարէն ասէ [illegible] քաղցր ես դու Տէր. և քաղցրութեամբ քով ուսո ինձ զարդարութիւնս քո. Սաղ. 108. 68. և ՚ի գիրս իմաստութեան ասի. բայց դու Աստուած մեր՝ քաղցր. և ճշմարիտ և երկայնամիտ. ողորմութեամբ դարմանես զամենայն իրս. Իմաստ. 15. 1. և [illegible] արքայն(?) առ նա հրաւիրէ ասելով՝ Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է Տէր. Սաղ. 31. 9. վասնորոյ և ամենայն ժողովուրդն ընդ առաւօտս առ նա ՚ի տաճարն լսել ՚ի նմանէ Ղուկ. 21. 38. և ելանէր ՚ի լեառն ուսուցանէր զժողովուրդն և ասէր երանի աղքատաց. երանի սգաւորաց. երանի հեզոց. երանի ողորմածաց. և զայլսն որ զկնի. վն այն ասէ. Ճարտն(?) կոկորդ նորա լի քաղցրութե. և որքան առայս դպիրքն և

փարի

փառաբանեցին եւ մեծացուցին յորժամ առաքելին առանց պաշտօնէութ- թեանց. որք եկեալ ՚ի Քրիստոնէութիւն բռնադատեալ առաջինս վարդապետս գիտեմք զի Քրիստոսի. եւ զՔահանայապետն Աստուծոյ Քրիստոնէութեամբ ուսուցանես, եւ ոչ է քեզ փոյթ զմեղս. եւ ոչ հոգւոյ սրբոյ մաքրեալ Դնի. 22. 16. Այսու զի ամենայն սրբեք կամեցաւ քաղցր վարդապետութեամբ. Համբակ լսողացն ու- սուցանէր զՔահանայապետս փրկութեան հոգւոյ։ Յայս նախանձա- խնդրեալ Հրեայքն քաղցրութեամբ լսեալ կենարարն այն՝ զմնա- ցեալ զինուոր դառնացուցին ՚ի զազրագոյս։ Զորմէ նուագէ սքն Ներսէս շնորհալին ՚ի յիւրում գրուածին.

Եւ տուն ըմպել՝ զինի զմռսեալ.
Եւ կերակուր՝ լեղեաւ խառնեալ.
Զոր լցաւ մահուն՝ չափ ճաշակեալ.
Ըզ բոլորակն՝ այն ոչ տարեալ.
՚Ի ձեռաց իւր՝ ստեղծուածոյն.
Զառ ՚ի մեղաց՝ ճաշակ պտղոյն.
Փոխարկեալ է՝ ըզ դառնագոյն.
Ըզ մահ կենացն՝ քաղցրագոյն.

Այն եղեռնագործն էր, եւ այն Հրեայ որ յետ զամպէր եղեռնասպանն.
Այլ ինքն այն՝ միայն ունի զանմահութիւնս բնակեալ ՚ի լոյս անմա- տոյց։ Որ է օրհնեալ յաւիտեանս, եւ այն՝ որ համառօտ մեր- ձենամք ՚ի նա, եւ ամենայն բանականք նախանձ ցնծան։ Ուր զատերք Երուսաղէմ առ իս եղեւ խորհուրդ այդորիկ, զոր խմայրս փոքր ՚ի շատէ.

Հարցումն ՚ի դստերք Երուսաղէմ, որք են եղեռնագործք նորա, որք զնոյն եղեռնագործն առ Գեղեցիկն ՚ի կենաց որոց զխաբէութ եղեռնագործն փոխ եւ խնդրեալ ընդ նմա.

Դստերք Երուսաղէմի անուանէ զգօրս հրեշտակաց (զօրս քաղ- միս կոչնեցան) որք ոչ արու են եւ ոչ էգ. բայց դուստր կո- չէ Թերես ընդ մօրն կան, եւ առ մայրն մնան, եւ ՚ի նմանէ ոչ հեռանան որպէս եւ մեք ՚ի դրախտէն. անուանեն համեստու- թիւն եւ պատկառանք առաւել ՚ի կուսան դստերս զասմնմն որք յարս. վասն այնորիկ դուստր անուանէ զհրեշտակս. որք յանմոնս ՚ի Բերոսոնից հարսին զառտութիւն փեսային դարձեալ ըն- կան հարցանել ցնծմամբ թէ՝ ով է նոյն եղեռնագործն Յարոյ զոր մեք

digitised by A.R.A.R.@

մեք անշարժ գիտեմք զնա. և զերեկս սրբենք օրհնեմք զնա. և լիցէ ամենայն երկիր փառօք նորա. և օրհնեալ են փառք նորա ՚ի տեղւոջ սրբութեան իւրում. Զի և մեք զիսկութիւն նորա անգիտելի խոստովանիմք որ զամենայն արարած՚ի ձեռին իւրում ունի. և այս դարձուցեալ զբանս իւրեանց ՚ի դէմս Հարսին, և ասեն ցնա ո՜վ [illegible] ՚ի չնաշխարհ կամին ասել՝ յոր կողմ դիմեսցի, ուր դիմեսցի. զի և Սաղմոսն ամենեւին ոչ գիտել խոստովանի զճանապարհս առն (ասէ) երկրպագութեան իւրում Առակ. 30. 18. Արդեօք լցա՞ն զբան մարգարէութեանն որ ասէ եկայ և չափեցայ զերկիր, և դիտեցայ զհեթանոսս. Զի աչք նորա՚ի տնանկս հային. և նաէ ակնկալու հեթանոսաց. և թագաւորք գնան ՚ի լոյս նորա, և հեթանոսք՚ի ծագումն լուսոյ նորա. Արդեօք Աստուած ՚ի յերկիր երևեցա՞ւ. և ընդ մարդկան շրջեցա՞ւ. Արդեօք բովանդակեցա՞ւ անբովանդակելին, սահմանեցա՞ւ անսահմանելին, տարեալ եղև անտանելին. Արդեօք կատարեցա՞ւ խոստումն աբրահամու, և զաւակն յակոբայ. և զերդումն դաւթի. Պատմեա մեզ զայս ՚ի քեզ եղեալ կոչմանցն եղելոցն, զի և մեք խնդրեսցուք զնա ընդ քեզ. և երկրպագեսցուք ՚ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա. և մեր տեսեալ զնա ՚ի մարմնի հանդուրժեսցուք հայիլ ՚ի նա. զի տնօրէնութեամբ նորին և փրկութեամբ բովանդակեալ՚ի տեղի ՚ի մէջ անկելոյն. Այլ դստերք Երուսաղեմի իւղաբեր սբ կանայքն որք եկին ՚ի գերեզմանն փրկչին առ ՚ի խնկել զանապական մարմին բարձալ փեսային հոգւոյ, որպէս Մարիամ մագդաղենացին ասէր ցաշակերտսն՝ բարձին զտէրն իմ ՚ի գերեզմանէ անտի և ոչ գիտեմ ուր եդին զնա. սոյնպէս և առ հրեշտակսն ասէր. և սոյնպէս կացեալ արտաքոյ գերեզմանին և լայր. Բայց Յիսուս յարուցեալ կայր ՚ի թիկունս կուսէ նորին՝ որում հարցանէր, կին դու զի՞ լաս՝ զո՞ խնդրես, և նա իբրև պարտիզպանի պատասխանէր. Տէր եթէ դու բարձեր զնա ասա ինձ ո՞ւր եդեր զնա զի ես առից զնա. Յովհ. 20. 2. և որքան առաւել ՚ի դէպ զայս մեզ դրել զբան շնորհաւորութեան որ յարմարի սոյն գլխոյ տասն համարէն մինչև յտասնեօթն.

Բանն որ զբանն առեղծանէ.
՚ի բարբառոյ բանից լռէ.

Որ զհրաշն՝ զգայծոյ շնորհէ.
Հաստատելեօքն ո՛չ տարբերի.
Զաչան որ յանդունդս նկատէ.
յոլովս ձեռօք՝ կախուցանէ.
Զունկն որ լսէ՝ շրթանց լալէ.
զխոցուած մանհաւն՝ խոկմունանէ.
Զձեռն որ կերկիւս հաստատէ.
երկրպագողին՝ պարանձանէ.
Զոտն որ յօդս՝ մերձեալ է.
անկար քնութի՝ կոտեսյ կայէ.
Խունկ եւ զմուռ նշան թաղման.
մարմնոյն բերին անապական.
Որոյ եթերնէ օթար ան.
մարմնով եղաւ ՚ի նոր տապան.
Եւ զայլան տես անդ.

Բայց Վեցերորդ՝ զխորշ նախ Հարսն ծանուցանէ՝ դատաստանաց եւ մի իջանել եղբօրորդւոյն ՚ի պարտէզ կենդանեաց, այլ ՚ի Համբուրել զծոցովորդ իւր. նաեւ ՚ի միասին ընդ միասին լինել յայտնէ. Երկրորդ՝ միասին ազդէ Հարսին՝ զգեղեցկութիւն զխմայն, եւ զայլ մասանց նորա. Եւ զորքանութիւն թագուհեացն եւ զթիւ հարճիցն, եւ օրիորդացն, եւ զմիութիւն աղաւնոյն. մինչեւ ցութ տունն. Երրորդ՝ թագուհիքն տեսեալ զգարդ Հարսին, համեմատեն զնա արշալուսոյ, գեղեցիկ լուսնի, եւ ընտիր արեգական, եւ Հիացման արժան կարգեան զնա. Չորրորդ՝ միասին ազդ առնէ Հարսին թէ՝ իջեալ ՚ի պարտէզ ընկուզաց իջի յաշխարհ, հայիլ յարմտիս ուղխից զբերս ստեղծուածոց խմոյ. Հինգերորդ՝ Հարսն խոստանայ տալ միասին զստինս այնուհետեւ զսէրս իւր. Վեցերորդ՝ թագուհիքն ձայնեն Հարսին դառնալ ՚ի Շուլամանկեան տեղ երայ զխոտեսյէն առնա զեղեւ պարգեւեն.

Հարսն աղաչանօք յաւելու ասէ. Երկրորդն ԺԵ էջ՝ պարտէզ իւր. ՚ի
պարտէզ խնկոց հովուել շուշանս անդ եւ ժողովել շուշանս.

Որով հեռացեալ զաւակքն Երեմ Հարցին Հարսին թէ ո՛ւր գնաց եղբօր որդին քո, եւ նա պատասխանէ թէ էջ ՚ի պարտէզ իւր. որպէս ՚ի յամենայն որոյ կուսին առ որդի իւր, թէ զինչ գործէր որդեակ-
դը.

զի հայր քո և ես՝ տառապեալք խնդրէաք զքեզ. և նա պատաս-
խանեաց ասաց. ոչ գիտէք զի ՛ի իրսն հօր իմոյ պարտ է ինձ լինել:
Նոյնպէս և սա հարսն՝ անձկալանձնաբար յուսայր գտանօրէնու
զանձին Աստուծոյ փեսային հօրինց. ասելով՝ երկրորդին իմ
որ ծնեալն պատուէրաց զիս. և զարդարեալ զիս պատկերաւ իւ-
րով, ուրեմն անձնիշխան կամօք իմով. և արդ խնամարհեսցի
զիրկիւն՝ և եջ յերկիր՝ ի պարտէզ իւր և ՛ի դաշտս խնկոց
առ իւր անկեալ՝ և կուսութեան քաղցրահամեալն Մարիամ-
յարմանան աղաղակող. և զգամեալն՝ ի ձեռն գարեհոյ. որ իւր և կինա-
ծին և պալատամբ և հարսն է թագաւոր զհատ իւր Սիր. 24. 20.
Արամն եւս զբոյր՝ բարի, և եղև որպէս զմնեքեր՝ յորմէ արքեն
ամենեքեք և անձնահալան և եղև գանձ բարձօղ մեղաց աշխարհիս
և շրջեցաւ՝ ի փեսայ յերկրի իբրև զմարդ. քարոզեաց իբրև զառ-
աքեալ. պատարագեցաւ իբրև զգառն. սպանաւ՝ յերկիրս իբրև զստա-
ծիւ: եղև հօրն և արամբեաց զհատ իւր ՛ի վայրս դալարուոյ ՛ի ներ-
կապարանս. և ժողովեաց զշուշանս, այսինքն զոյծ և զարդար
հոգիս. և բաշխեաց հօրին իւրոյ կերակուր զգանձն Աստուծոյ
Յհն. 16. 26: և զգանձս որբոց վարդապետաց եկեղեցւոյ. որք
բուսան՝ ի ծնունդ աշխարհիս իբրև շուշան՝ ի ջուրս, և եղեն բժշ-
կութիւն բազմաց ազգաց. որոց բանքն ժողովեալ պահին՝ ի գանձ-
ձարանս եկեղեցւոյ: Քանզի նախ խոստացաւ մարգարէն թէ
ես արածեցից զխաշինս իմ. և ես հանգուցից զնոսա. և ճանիցեն
թէ ես եմ տէր: Որոյ և զինի ասէ, և կացուցից՝ ի վերայ նոցա
հովիւ մի. զծառայ իմ զԴաւիթ. և նա հովուեսցէ զնոսա.
նա եղիցի նոցա հովիւ. և ես տէր եղէց նոցա յԱստուած. և
Դաւիթ ծառայ իմ իշխան՝ ի մէջ նոցա. ես տէր խօսեցայ. և
դուք խաշինք իմ, ոչխարք արօտի իմոյ՝ մարդիկ էք. և ես տէր
Աստուած ձեր ասէ տէր. Եզկ. 34. 15. 23. 31. Այլև
պարտէզ անուանէ զայգն մարգկանն, որ աճեցուցանէ զծաղիկս
և բուսուցանէ զսերմանիս, և երևեցուցանէ զանուշ պէսպէս
ծաղկանց այսինքն առաքինութեանց գործոյ. Եսա. 61. 11.
Աստուծոյ զանգատէ Աստուած ասելով. Հովիւք բազումք ապա-
կանեցին զայգի իմ, եղծին զբաժին իմ. արարին զվիճակն իմ
զանկալի յանապատ անկոխ. Երմ. 12. 10. ՛ի շարան. խնկոյ. հոգևորք
՛ի քարոզութեան և ՛ի ուխտ գիտութեան. դաշտս խնկոյ՝ են հոգիք առ-
դարոց

ցարոյ սրբոյ, առ որս ասէ տէր, երանի աղքատաց հոգւով զի նոցա է արքայութիւնն Աստուծոյ: Ուստի ասէ առաքեալն հաստատունք եմք ի Քրիստոսիւ առ Աստուած: Իսկ պարտեզ և բուրաստան միևնոյն է, զի որ պարտեզն կոչի եւ բուրաստան: Ուստի անուշահոտութիւնք զանազան ծաղկանց բուրեն, որպէս եկեղեցիս հաւատացելոց իբրև գեղեցիկ տուն Աստուծոյ և խորան փեսային հոգւոյ: Իբրև զանտառս հովանաւորս. և իբրև զբուրաստանս առ գետովք. և իբրև զխորանս՝ զորս կանգնեաց տէր. և իբրև զմայրս՝ ի գնացս ջուրց Թւ. 24. 5. Զի ունի զբազմութիւնս առաքելաշաւիղ արանց, հայրապետաց, մարտիրոսաց, խոստովանողաց, որք բուրեն զհոտ քաղցր խնկոյ. Զի արդարն և անարատն հոտ անոյշ է առաջի բարձրելոյն Սիր. 35. 8: Զորս հովուէ՝ ի բուրաստանի յեկեղեցւոջ. ուստի ժողովէ զպայծառ շուշանս անբիծ հաւատոյ, հաստատ յուսոյ. և մաքուր սիրոյ: և պսակաւ ոչխարս՝ ի միասին ժողովէ. և զհեռացեալս առ ինքն բերէ, այսինքն զհերձեալս և զհեթանոսս. ըստ որում ասէ՝ այլ եւս ոչխարքեն իմ՝ որք ոչ են յայսմ գաւթէ, և զայն եւս պարտ է ինձ ածել, այսր զի եղիցին մի հօտ և մի հովիւ Յօհ. 10. 16:

Ես եղբօրորդւոյ իմոյ և եղբօրորդին իմ ինձ, որ հովուէն ի մէջ շուշանաց:

Զայս բնաբան 2 գլխոյ 16 համարին գրեալ՝ զոր անդ մեկնեցաք: Այլ որպէս թռչունք յարին առ նմանիս իւրեանց, նոյնպէս և ճշմարտութիւնն առ գործօղս իւր Սիր. 27. 10: Վասնորոյ և փեսայն հոգւոյ առ հայր ասէր. հա՛յր որպէս դու յիս և ես ՚ի քեզ. զի և նոքա՝ ի մեզ իցեն. զի և աշխարհ հաւատասցէ եթէ դու առաքեցեր զիս: Յօհ. 17. 21: Զի մարդկայինս բնութիւն է անորոշելի միաւորեալ ընդ որդւոյն Աստուծոյ. (ասէ՝ ի գիրս միութեանց 468: և եղեալ տաճար հոգւոյն Սրբոյ և բնակարան ամենասուրբ երրորդութեանն: Քանզի ասէ, եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ, և հայր իմ սիրեսցէ զնա: և առ նա եկեսցուք՝ և օթեվանս առ նմա արասցուք, Յօհ. 14. 23: Վյ ասէ ես եղբօր որդւոյ իմոյ և եղբօր որդին իմ ինձ զի ներ սիրելեաց ամենայն ինչ հասարակ է: ըստ այնմ որպէս ես նոյնպէս և դու. և ո՛ր զօրք իմ զօրք քոյ. և ո՛ր երիվարք իմ երիվարք քո 3 Թագ. 22. 4: Այսպէս կամի և հարսն, զի սիրով

միասցի

digitised by A.R.A.R.@

միաւորեալ ընդ փեսային. և լինիցի հոգւով իբրև զմի հոգի ընդ նմա կատարեալ սիրոյ միութեամբ. և այսու աշխարհ հաստատեսցէ զմիութիւն հարսին ընդ փեսային. Զի առաքինութեան գործով ընկղմի հոգին իբր 'ի խորս աստուածութեան, ոչ ծանրութեամբ մարմնոյ և ոչ ըմբռնմամբ անդամոց, այլ միայն բանիւ թէ՝ մուտ յուրախութիւն տեառն քո Մատթ. 25. 23. Զի Աստուած ընդ մեզ եղև մարդանալով. զի առեալ զբնութիւնս մեր. Եղև որպէս փեսայ անբաժանելի 'ի հարսնացեալ հոգւոյ մերոյ. և ոչ երբեք վասն ումանց տկարութեանց լուծանէ զինքն 'ի մէնջ եթէ ոչ մահացու մեղօք. որպէս մարմնաւոր փեսայն ոչ կարէ բաժանել 'ի հարսնէ իւրմէ, սակս պէսպիսեաց տկարութեանց, եթէ ոչ մահուամբ. Նմանապէս և հոգևոր տկարութիւնք մեր ( եթէ ոչ իցեն մահացուք ) չկարեն բաժանել զերկնաւոր փեսայն 'ի հոգւոյ մերոյ. Վասնայն ասէ եղերուք սբ̃ զի ես սբ̃ եմ ասէ տէր Աստուած մեր. Որ նստի 'ի վերայ աթոռոյն բնակեալ է 'ի նոսա. և փեսայն ասէ՝ որ հաստատեալ է յիս՝ և ես 'ի նմա, նա բերէ պտուղ յոյժ. Յայտ. 7. 15. Յով. 15. 5.

Որ հովուէն 'ի մէջ շուշանոյ. այս 'ի յառաքելական մատենից 'ի յաճեառաբանական սբ̃ գրոց. որովք փայլին իբրև զշուշան գործովք արդարութեան, ուստի բուրեն զհոտ անուշակ քրիստոնէութե՛ յայնժամ լինին ընդ փեսային Քի̃. զի Ած սէր է, և որ կայ 'ի սէրն բնակեալ է յԱծ, և Ած 'ի նմա բնակի. 1 Յով. 4. 16.

Փեսայն ընդ հարսն ասէ. Գեղեցիկ ես մերձաւոր իմ, իբրև զհանոյշահոտութիւն, գեղեցկեցեր իբրև զԵրուսաղէմ, որպէս հրաշալին կարգեալս.

Գեղեցիկ է հարսն սուրբ եկեղեցի. քանզի ասէ առաքեալն. ամենեքին որդիք Այ էք հաւատովք 'ի Քս̃ Յս̃. որք մկրտեցայք 'ի Քս̃ մկրտեցայք, զՔս̃ զգեցեալ էք. քանզի մինչդեռ մեռեալ էաք 'ի մեղս մեր՝ կենդանիս արար զմեզ 'ի Քս̃ ( քանզի շնորհօք ապրեցայք ) ընդ նմին յարոյց և ընդ նմին նստոյց յերկնաւորս՝ 'ի Քս̃ Յս̃. Գաղատ. 3. 26. Եփես. 2. 5. որով հարսն գեղեցկացաւ, և եղև մերձաւոր փեսային. և փեսայն մերձաւոր հարսին. ըստ թարգմանութե՛ Էմմանուէլ բառին, որէ ընդ մեզ Ած. ուստի ասէ գեղեցիկ. զի ծնեալն 'ի հոգւոյն հոգի է. իբրև զհանոյշահոտութի՛նն. Զի 'ի շուշանս արածէ, և ըստ շուշանի զանուշահոտութիւն բուրէ զի որ անուշահոտ իւս մերձենայ

անու-

անուշահոտի, և որ առ Ա՟Ծ մերձենայ Ա՟Ծանայ մանաւանդ հա-
ճոյացեալ հոգին զերիս անոյշ հոտս բուրէ, նախ զերմեռանդ
աղօթից. զորս իբրև անուշահոտ խունկ՝ ոսկի բուրվառաւ մա-
տուցանէն առաջի Աստուծոյ, վասն որոյ մարգարէն դաւիթ պա-
ղատի ասելով, ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի
քո տէր: Երկրորդ՝ առաքինի արանց բարի համբաւն, որ պա-
րարէ զոսկերս: Առակ. 15. 30. Երրորդ՝ երկիւղալի խղճմտանքն
մեր: վորոց ասէ, անկողինք մեր ծաղկաւէտք: զի բարեգոյն է լի
երկիւղած Աստուծոյ քան զհազար ոսկիք ամբարիշտք: Սիրաք.
16. 3. Գեղեցիկ ես իբրև հաճոյ Երուսաղէմ կոչի տեսութիւն խա-
ղաղութեան, կամ տեսութիւն կատարեալ. և գեղեցիկ զի զկաթն և զմեղր
բղխէ, մանաւանդ քաղաքէ մեծի արքայի. յորում հեղանաւորին
ամ մարգարէից: անտանօր ծնաւ փեսայն հոգւոյ, անդ եկաց երե-
սուն երիս ամս, ուրանօր արար անթիւ սքանչելիս, և անհամար
նշանս եցոյց, անդ էհեղ զարիւն և զկրտնաջուր իւր, անտանօր
արար զփրկութիւն մարդկան ազգի, անդ էհար զպատերազմ ʼի ծա-
գաց մինչև ʼի ծագս երկրի զաղեղունս փշրեաց զզէնս խորտա-
կեաց, և զասպարս այրեաց հրով: և անդ յաղթեաց զթշնամին
բնութեան մերոյ. անդ խաչեցաւ և անդ թաղեցաւ և յարեաւ և
համբարձաւ յերկինս. անդ արկեալ են աթոռք դատաստանի,
աթոռք արկեալ են ʼի տան դաւթի: Սաղ. 121. 5: բայց վերինն
Երուսաղէմ որ է ազատ և մայր ամենեցուն, և նաև քաղաք պայ-
ծառ. քանզի հիմունք նորա է շափիւղայ. և քարինք նորա կար-
կեհան. աշտարակքն յասպիս. դրունք նորա պատուականք միակ
միակ մարգարիտ. և ընդարձակութիւն քաղաքին ոսկի պայծառ.
և քաղաքին չէ պէտք լուսոյ արեգական և լուսնի. զի փառքն
Աստուծոյ լուսաւորէ զնա. և ճրագ ʼի նմա գառն: Այսպիսի
յատկութիւք բնակքն գտանին ʼի հարսն, և դու իմաստասիրեա. զի
հարսնացեալ հոգին է խաղաղարար և կատարեալ ամենայն առա-
քինութեամբ. և յարաժամ հեղու զարիւն փեսային ʼի հոգիս իւր,
ճաշակելով և խորհելով հեղմամբ զայն նաև միշտ խոկայ զփառս
վերնոյն Երուսաղէմի, և ասէ երանի որ կերիցէ զճաշարքայութե
երկնից. վասնորոյ համեմատէ զնա գեղեցկութեանն Երուսաղէմի.
և զի նի ասէ ահեղ է իբրև զճակատամարտ. արդարև հիացմանէ արժանի.
եթէ հրեշտակաց և եթէ մարդկան. քանզի բանաւորկուն զօր-
հու.

digitised by A.R.A.R.@

հուրեցոյց. զի հողեղէն մարդ որպէս կարգեցաւ՝ ի դասս հրեշ-
տակաց. կամ զի՞որդ անհամեմատ զինուք սպառազինեալ ընդ-
բռնութեան մարտնչելով յաղթեաց զայն. տեսիլ եղև յաշխար-
հի երկրաւորաց և երկնաւորաց. որպէս սէր հայրն անտոն հեր-
ասուն ամ ընդ դիւաց պատերազմեալ, մինչ զի սատանին պանծա-
վերաւորեալ անկաւ յերկիր. յայնժամ ետես զտէր զկնի իւր, և
երբ լալով աղաղակեաց թէ ուր էիր մինչև յայժմ տէր. և նա
պատասխանեալ ասաց, աստէի ով անտոնիէ, այլ կամէի տեսա-
նել զքաջութիւն քո: նոյնպէս և կոյսն ագաթի, որոյ սիրով
հարեալ դատաւորն, ետ զնա բռնկաւատի ուրումն, զոնէ շողո-
քորթութեամբ թեքիցէ, և մինչ նա տիւ և գիշեր զփափկութի
և զհեշտութիւն յառաջարկէր նմա. և սրբուհին ընդ
միտս իւր բոլորովին ՚ի Քրիստոս սևեռեալ, և երբ տեսա-
նէր թէ նա ոչ առնէր զվախճան հրապուրման և փաղաքշանաց,
ակսաւ ասել առնա, թէ զքո ձայնդ և լեզուդ ոչ որպէս քո, այլ
որպէս կգործի չար դիւին համարիմ որ զայդ քեզ համոզէ. բայց
դու գիտեա զի զուր կորուսանես զժամանակս քո և զջանս, և
խօսիս յականջս խուլ, զի ես այնպէս սևեռեալ և հաստատեալ
եմ ՚ի սէր տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի, և ամրացեալ
ուխտիւ կուսութեան զոր նմա ուխտեցի, և շնորհիւ նորին
այնպէս հաստատեալ կամ, մինչ զի եթէ արեգակն կորուսանէ
զճառագայթ իւր, հուր զջերմութիւն իւր, ձիւնն զսպիտակութի
իւր. քան թէ ես փոխիցեմ զկամս իմ: Պատրաստեսցէ դատա-
ւորն զանիւսն, վառեսցէ զփայտակոյտս. լարեսցէ զեռա-
ցեալ կասկարայս. բացցէ զդրունս դժոխոց. եթէ կարէ զամե-
նայն զօրութիւնս և զտանջանս դիւաց ընդդէմ իմ զրգռեսցէ,
յօժարութեամբ և ցնծութեամբ բնաւից տանիմ զի քրիստոնեայ
և կոյս մնալով յորմէ հրաժարեալ միջնորդն գարշութեան սա-
լով դատաւորին, դիւրինէ զքարինս կակղացուցանել, կամ զեր-
կաթն ՚ի կապար դարձուցանել քան զմիտս ագաթեայ ՚ի սիրոյն
Քի՞ և յողջախոհութենէ շարժել. զի ես և դստերքն իմ 30 տիւ
և 30 գիշեր միտս նորին բաղխեցաք, մերթ համոզելով և մերթ
զանազան պարգևս խոստանալով, իսկ նա անշարժ եկաց իբրև
անդամանդ, զի տէր որ ինչ և կայ ՚ի ներքոյ երկնից նա ըզ Քն
ոչ առաւել համարի քան զհող երկրի զոր ոտիւք կոխոտէ, մա-
նաւանդ

digitised by A.R.A.R.@

նմանեսցի. տիւ և գիշեր ոչ կայր ինչ երազէ, և ոչ զայլ ինչ խոկայր քան մեռանելոյ վն Քի. և դատաւորն կամելով զարհուրեցուցանել զվկայսն պատերազմաւորաց զամ արհեստս, պանհամար հնարս, և զանթիւ տանջանարանս զի զնա թեքեսցէ 'ի կամս իւր. որում տայր կոյսն, ես արտաքոյ ոչ կենայ, և ոչ փրկութեն, և ոչ այլ իրայ ցանկամ, և ոչէ որ յուսաս տալ դատաւոր թէ զիս քոյով խստութեամբ զարհուրեցուցանես. զի ոչէ եղջերու ծարաւեալ որ փափաքէ պարզ ջրոյ. որքան ես ցանկամ և ծարաւեալ քոյոց տանջանաց, որով միաւորեցայց ընդ Քրիստոսի, և զնա գտանիցեմ. եթէ ձահ լցէ պնտեաւ զիս յերկաթն` ահա պատրաստ իմ. եթէ ձաղանք թիկնամեջն իմ. եթէ հուր` ահա բոլոր մարմինն իմ. տանջեա՛ ով կամիս, կիզեա՛ սղոցեա՛ յօշատեա՛ կախեա՛ սևեռեա՛ ողորեա՛ ծոծեալ բևեռեա՛ և զենեա՛, որքան 'ի յիս անողորմաբար խստանաս այնքան մեծապէս ինձ բարերարութի առնես, և այնքան հաճելի և ծիրանաւոր եղանիմ քաղցրիկ փեսայիս իմոյ. ընդէ՞ր դանդաղիս զի՞ յամես, պատրաստեա՛ զբոյ հնոցի, զուր, զխաչ, զմամուլ և զաւելածունս ծարաւելիս արեանս. և զբազումս տես 'ի վերա նորին. և այսպիսիքեւին համայն հարսնացեալքն Քրիստոսի. սուրբ ասէ փեսայն որպէս հիւսեալն կարգեալ. առ որս ասի 'ի յերգս շարականոյ մերում թէ` հրեշտակք փափաքին հանդիսի կատարմանն սոցա. որք 'ի մահուն իւրեանց կենդանեացն ելին 'ի կամարս երկնից խառնեցան 'ի գունդս զուարթոյ. Որպէս ձախորդութեամբ յոյժ, անտանելի չդնութեամբ լուսաւորիչն մեր, երկար յուսով եղիազար քահանայն շամունէ, և եօթն որդիք նորա. Զերմեռանդ աղօթիւք աննա մայրն սամուէլի. Պահոց պնդութե եսթեր թագուհին. արիութեամբ յուդիթ. խոհեմութեամբ ռեբեկայ. շնորհալի դիմօք ռաքէլ. խորին խոնարհութեամբ քանանացին. աներկբայ հաւատով հարիւրապետն. յորդահեղ արտասուօք Պետրոս, հաւատարիմ պաշտօնիւ Պօղոս, համբե[illegible] Ճգամբ [illegible]. և գեր քան զամենեսեան, ամենահամեստ մաքրութեամբ սրբուհի կոյսն Մարիամ, որ ընդ ամենեցուն եղև ամենայն, իմաստնոց և յիմարաց, առաքելոց արար զինքն պարտաւոր. յամենեցուն եբաց զծոց սիրոյ ողորմածութեան, զի 'ի լրութենէ նորա ամենեքեան առնուցուն, գերիք զփրկութիւն, հիւանդք զառողջութիւն, տրտմեալքն զմխի-

թարու

Թագաւորութիւն, մեղաւորք զթողութիւն, արդարք զշնորհս. Հրեշտակք զխոնարհութիւն եւ բոլոր ամենայն Երրորդութիւն զփառս.

Գիսեր՝ նորա թաւագոյն իբր ոստք արմաւենեաց ընդարձակեցին ոստս. սեւ իբրեւ զագռաւ ՚ի Գաղաադէ.

Այսք անուանմամբ կոչին տայ մեզ իմացումն. նախ զգալի այսպէս խօսի: Երկրորդ՝ իմանալի այսպէս: Զգալի այսք մեր է գործարանս տեսութեան, զորմէ ասէ Դաւիթ՝ այսք իմ յամենայն ժամ առ տէր են: եւ թէ դարձո զայս իմ զի մի տեսից զնանրութիւն: եւ իմանալի այսք մերեն զաղտնի իմացումն մտաց մերոց. ուստի ասի յերգս եկեղեցւոյն մերոյ, զիմանալի այս սրտից մերոյ, բացցես ողորմութեամբ հայիլ ՚ի լոյս քո Քրիստոս, այսպէս ասէ տէր, տաց նոցա սիրտ ճանաչել զիս թէ ես եմ տէր. եւ եղիցին ինձ ժողովուրդ. եւ ես եղէց նոցա Աստուած, առ ի յամենայն սրտէ իւրեանց. Երմ. 14. 6. Վասնորոյ ասէ, Գիսեր՝ նորա թաւագոյն իբր ոստք արմաւենեաց ընդարձակեցին ոստս. որով կամի ասել թէ՝ դարձո զսիրտ քո եւ զխիղճ քո առ իս, զի ես եմ տէր Աստուած քո. հաճոյ լեր առաջի աչաց իմոց, եւ լեր անարատ. Ծնն. 17. 1: Զի այնպիսի իղձք խոնարհեցուցին զիս յերկնից. այնինքն իղձք եւ փափագք սրբելոցն իմոց. վասնորոյ ասէ դարձիր առ տէր, եւ ՚ի բացյայտ զմեղս քո, եւ ծանիր զարդարութիւն եւ զիրաւունս Աստուծոյ Սիր. 17. 21: Այլեւ սրբանն ասայս՝ այսք հարսին եկեղեցւոյ մարգարէք եւ նահապետք, որոց վասն ասէ զոքա ընդդիմացուցին զիս: Զի ստացուցանելովն շարժել զոք ՚ի գործ խնդ, որպէս այնք ուր զգայ եւ զպերճ արտաքսօք առաջնորդելով շարժեցին զմեծ այն ՚ի գործ մարմնաւորիկ տնօրէնութեան սորա փրկութեան հարսին եկեղեցւոյ. որպէս Մովսէս եւ Եղիայ եկեալ ՚ի լեառն պայծառակերպութեան խօսէին ընդ նմա զոր կատարելոցէր Երուսաղեմ Ղուկ. 9. 3. Նոյնպէս եւ նախկին սրբոցն ամենեքեան. որոց աղագաւ ասէ զոքա ընդդիմացուցին զիս, զոքա բարձին զգօրութիւն իմ, զոքա զթեւս եդուն ինձ. վասն այսորիկ եկաց երկիր եւ եղանիմ մարդ. զգենում զմարմինն եւ յանեմ ընդդէմ թշնամեաց ազգի մարդկան:

Վարսք նորա իբր ոստք արմաւենեաց ընդարձակեցին ոստս. սեւ իբրեւ զագռաւ ՚ի Գաղաադէ.

Վարսքն եւ հերքն են մտաց զխորհուրդս որպէս եւ կնութիւն են անարգանք գլխոյ. իսկ գլուխ հարսին եկեղեցւոյ է փեսայն

Քրիստոս

digitised by A.R.A.R.@

Քրիստոս (որ բազմիցս կրկնեցաւ) և վարսք այսմիկ գլխոյ հա-
ւատացեալք նորին. որպէս բազմութեան զօրաց Թագաւորի
վառք են նր. Ղուկ. 14.28. և իբրև գեղամն այծից ասէ, զի՛ի
զանազան ազգաց ՚ի հեթանոսական զօրս և աղեղ կռապաշ-
տութեանց եկեալ յարեցան առ գլուխն Քրիստոս, և եղեն
իբրու վարսք նորա։ Ուր երևեցան ՚ի գաղաադ ասէ. այսինքն
՚ի հաւատս անձանց ՚ի յօտար լեռինս, որպէս ձախակողման սևաթոյր
այծիք լռեցեալք ՚ի ջուրս պղծոյ անապատին մաքրեցան, և ընդ
աջակողմեան ամբարոյս օգեայն խառնեցան. և ՚ի միում այլ լերին
կարգեցան. և վայրագ տես ՚ի չորս գլխոյ I համարին.

Աչք նորա իբրև զաղաւնիս ի վերայ լի ջուրց ՚ի լուացեալս. կաթնեղէն
նստեալք ՚ի լիութեան ջուրց ՚ի նոսա.

Զայս բան այնէ որ ՚ի չորս գլխոյ երկու համարին մեկնեցաւ.
բայց արդ հետևաբար կրկնէ, և մեք մի զանց արասցուք, առկաւ
բանիւք անցանել. և արդ եթէ ասասցուք հարսին եկեղեցւոյ
քարոզիչք են յայտէ որք մանրեն զբանն կենաց. համգոյն հայի
նոյն ծանեն և ապա տան մանկանց ՚ի կերակուր. Զի խորհրդա-
կան անդամոյս գլուխ է Քրիստոս. աչք եպիսկոպունք և հովուք
հոգևորք. որք ՚ի բարձր դիտանոցէ հայեն առ ՚ի տեսանել. մի
գուցէ մոլորիլ հօտին յայլ ձանապարհ. և ծանուցանէ զպարզա-
միտութիւն և զխոնարհամտութիւն Թշնամւոյն, յորմէ զգուշա-
ցուցանէ. Լեզուքէն վարդապետք որք ուսուցանեն և վարժեն
զհաւատացեալս։ Ականջքէն խոստովանահարք որք լսեն զպար-
տեաց գործս չարեաց. Ձեռք և ոտքեն ողորմածք, որք ողորմին
կարօտելոյ և տնանկաց, և ամենեքեան երկուորիքեն. այսինքն
անհամական և գործնականաւ զարդարեալ. Այլև ատամունքեն
այն որք զհին մարդն մերկացուցանեն, և զնորն զգեցուցանեն.
և որք ընդ աշխարհի հաստատեալք են, եղանեն ՚ի լռեցեալ
անապատին, և ուտեն ատամամբք զկենաց հացն Ճշմարիտ զմարմին
տեառն, և ըմպեն զարիւն նորա Երկուորիքեն որք զներքին մարդն
և զարտաքինն իբրև զերկուորիս ընծայացուցանեն ՚ի կեանս յաւիտենին
Քրիստոսի ատամունսն մերոյ.

Ծնօտք նորա իբրև սկաւառակք խնկոց բուրեն անուշահոտութիւնս. շրթունք նորա
իբրև շուշանք կաթեն զմուռս լի.

Զայս ամեն և սէ մեկնեցեալ անդ. և ատամիոր բանն կրկնեալ է.


digitised by A.R.A.R.@

քանզի ամենայն որք զսիրելիս իւր ոչ դադարին՝ ի նեղելոյ. ապա
ո՞ առաւել սիրելի երկնաւոր փեսային քան զհարսն իւր մեծ ե-
կեղեցի. զորմէ ինքն փեսայն վկայէ. Թէ մեծ ես քան զայս
սէր ոչ ոք ունի եթէ զանձն իւր դիցէ ՝ի վերայ բարեկամաց
իւրոց. Յոհ. 15. 13. Վասնորոյ ետ զմարմին իւր ՝ի կերակուր.
և զարիւն իւր ըմպելի. զհոգին ՝ի գին. զջուր կողին ՝ի լուացումն.
զհանդերձն խաչողաց. և զմայրն Յոհաննու. Վասնորոյ և
զերդզգօն արքայն Սողոմոն ի գլխոյ փեսային զսիրոյն զերգս
զայս վերաբերէ ասելով. [illegible] և որքան
առաջին լոյն ունի զկարմրութիւն և զերկայնութիւն, և շրթունք
հարսին կարմիր՝ զի ներկեալ է անապական արեամբ որդւոյն
Աստուծոյ: Ունի զերկայնութիւն, զի յարատեւ երկայնօրէն
խօսկայ զչարաչարանս փեսային, որ ՝ի մանկութենէ յանձն եառ
զխաչ որ հանապազ զամօթ. և նմանապէս լարի չունի ծռութիւն
՝ի շրթունս, և ոչ թերութիւն ՝ի հաւատալիս, այլ ունի ուղիղ
և Ճշմարիտ դաւանութիւն մեծ հաւատոյ: Բայց ինչպէս շր-
թունք հարսին են վարդապետք եկեղեցւոյ, որոց բանքն իբրև
լար տարածին ՝ի միրտս լսողաց, և կապեն զխոնարհուրդս նոցին զի
մի թուլացեալք հանիցեն. և մի զինքեանս պատապաղիցեն առ ան-
պատեհս, և մի ընդհանուր կոչս մոլոյ հեղձուսցեն. այլ ծաղ-
կեսցեն՝ ի մի դիտաւորութիւն. և կարմիր ասէ՝ քաղցրութիւնք
նոցին տարածեալ սիրոյն Աստուծոյ բորբոքի. զի է ոսկի և քաղ-
ցրութիւն անդամոց, և անօթ պատուական շրթունք գիտութեան
Առակ. 20. 15. [illegible] խօսինք ծանուցանէ զաղօթս
հարսին որ յոյժ գեղեցիկ և քաղցր է ՝ի յունկս փեսային. որպէս
մաքսաւորին և կոռնելիոսին, որոց աղօթքն և ողորմութիւնքն
ելին յիշատակաւ առաջի Աստուծոյ Գործ. 10. 4. Զի որպէս
՝ի մաքուր չնչերակաց ելանէ ձայն գեղեցիկ, այնպէս և ՝ի մեծ
մտաց ելանէ քաղցր աղօթք, և գեղեցիկ խոստովանութիւն, և
հաճոյական գովութիւն առ Աստուած: Քանզի ՝ի բերան մե-
ղաւորաց ոչ է գեղեցիկ գովութիւն Սիր. 15. 9. Սակայն մեղա-
ւորին ասէ Աստուած, իսկ դու ընդ է՞ր բնաւ պատմես զարդա-
րութիւն իմ. և կամ առնուս զուխտս իմ ՝ի բերան քո Սղ. 49.
16. Եբր. [illegible] որպէս նուռն կարմրութեամբ
կեղևոյն՝ ի ներքոյ համբարեալ ունի գեղեցկազարդ անոյշ հատս ՝ի

յաւուր

յառողջութիւն ախտացելոյ. և փափագողաց հայեցուածոց լը-
ութեամբ. Նոյնպէս և ընտրեալքն Աստուծոյ ունին զբարի
գործս՝ խիստ և ՚ի մէջ բարեաց զանձառ առաքինութեան և
Աստուածասիրութեան համբերութեամբ պահպանեալ։ և
որպէս կեղևն նոցա ունի զսպիտակութիւն և զկարմրութիւն.
և զհամն ՚ի ներքոյ ինքեանց ունի զարմանալի կարգաւորութիւն։
Նոյնպէս և հարսնացեալքն Քրիստոսի ըստ որակութեան նոցա
են սպիտակ և սրբեալ մաքրութեամբ. նաև կարմիր վառեալ
և բորբոքեալ սիրով փեսային։ Այլև ըստ սրբոց և ըստ հրեշ-
տակաց դասակցեալ և ընկերակցեալ հնանալի կարգաւորութբ,
և զուգաւորեալք հանգոյն նոցա. սպիտակ մաքրութեամբ,
ջերմին խոնարհութեամբ. կարմիր սիրով փեսային. կապուտակ
երկնային խոկմամբ. կանաչ մշտատև բարի գործով. և աս-
տուածահաճոյ կենդաղավարութեամբ։ Այլև բանն Աստուծոյ
իբրև զհատ նուռն աստուածային և մարդկային բնութեամբ միա-
ցեալ կեղևով մարմնոյն ծածկեալ երևեցաւ մեզ. որպէս ասէ
առաքեալն քանզի երևեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն
մարդկան Տիտ. 2. 11։ Նոյնպէս հրամանն Աստուծոյ և պա-
տուէր նորին ընդ կեղևով սբ գրոց թագուցեալ կայ. զորս առ-
առաքելաշնորհ անձինք, ըստ աշակերտացն Քրիստոսի, որպէս
զհատս կորզեն, և ընդ աւր շփեն և ուտեն և տան հաւատացելոց
որք ցանկան և փափագին Ղկ. 6. 1։
Բայց ՚ի լաւութենէ տեսլե. օրինակաւ փրկչին զորմէ ասէ մարգարէն.
իբրև զորոջ առաջի կտրչի անմռունչ կայ Եա. 54։ 7։ Զի ոչ
պատասխանեաց առաջի պիղատոսի և հերովդեի. զի մի յապա-
ղեսցի փրկութիւն մարդկան սեռի։ Մէ հայրն աղաթօն զերիս
ամս խիճ էառ ՚ի բերան իւր զի ուսցի զլռութիւն. Մէ հայրն
արսենիոս մինչ եղ ՚ի մենակեցիկ կրօնաւոր. և այնու զխոստովանութ
ելանէր ՚ի կայսերական ապարանիցն. եղև առ նա ձայն որ ասէր.
արսենիոս փախիր լռեա և հանգի՛ր քանզի ընդ սոքա են արմատք
մեղաց։ Այլև պատմեն յաղագս սորա յումեմնէ եթէ ոչ ել բան ստու-
բնաւ ՚ի բերանոյ նորա և ոչ երդուաւ երբեք. և ոչ անէծ զոք
աշխարհի. և ոչ բան ինչ խօսեցաւ ընդ ումեք. բայց միայն ՚ի
կարևոր ինչ բանից։ Իսկ և պատմեն թէ եղբայր ոմն անարգեալ
էրև յումեմնէ. և ասէ ցնա պատուիրանն Քրիստոսի կարկե

զբերան

digitised by A.R.A.R.@

զերկրաւն լի՛ է լուսեղութեամբ, այս թէ ոչ՛ զոր ասես դու և ես տուել կարօղէր. Այս քան առաւել և զայլն տես 'ի չորս գլխոյ երեք համարին.

Վաթսուն են թագուհիք, և ութսուն հարճք, և օրիորդք որոց ոչ գոյ թիւ.

Վաթսուն և ութսուն ասելով զթիւն յարգելի լուսյանէ, և զանձառելութիւն խորհրդոյն ծանուցանէ. զի ամենայն ուրեք զերեքն, զեսթն, զտասն, զքառասունն, զվաթսունն, զեօթանասունն, և զութսունն գեղեցիկ և խորհրդաւոր 'ի սուրբ գիրս. Զի վաթսունն պարունակէ 'ի ներ ինքեան զվեցեակ տասն, և ութսունն ութեակ տասն, որքն նշանակ ընդհանրութ. Վաթսուն թագուհիք. ասէ. վաթսուն թիւն զերկուս միտս ծանուցանէ. Զի վաթսունն 'ի վեց տասն, և 'ի հինգ երկոտասան մասունս բաժանի. զորս հինգ երկոտասան կեղիցն խորոյելը ասէ. յորոց 'ի վեց հազար դարուն հինգ զաշխարհաց եղեն ընտրեալք 'ի նոցանէ. և յաղագս անդրանկութեան կոչեցան Թագուհիք Եբ. 4. 22. Զի յառաջ քան զհեթանոսս հաճոյացան Աստուծոյ որպէս 'ի տեսլեանն Յօհաննու զամենայն կեղծ ազգոյն ուրոյն թուելով երկոտասան հազար կնքեալ ասէ յամենայն ազգէ Յայտ. 7. 4. և ութսուն հարճք և անթիւ օրիորդք՝ որք 'ի հեթանոսաց հաճոյացան Աստուծոյ վասնորոյ անթիւ ցուցանել կամի մաքրեցեալս 'ի հեթանոսաց՝ քան 'ի հրէից զայստեամբն Քրիստոսի. և ութսուն հարճք կրտսերք քան զնոսա վաթսունսն. բայց առաւել քան զօրիորդսն են. որք ութից դարուն են սպասելեաց. և անթիւ օրիորդք որք առաջնորդութ զհաւատութիւն ունել արքայութեան արժանորին.

Դարձեալ վաթսուն թագուհի ասէ. որքն նահապետքն՝ անթեալքն յաղագայ մինչ 'ի Քրիստոս (ըստ մեծին վարդապետաց մեկնութեանն) քառասուն երկու թուէ Մատթէոս, և տասնութն համարէ Ղուկաս. և ութսուն հարճքն 'ի հեթանոսաց ասէ. այսէ վաթսուննն վեցեակ տասամբ բոլորեալ ըստ վեց դարուն յորում փրկիչն երևեցաւ, և ազատեաց զազգս մարդկան 'ի ծառայութենէ թանատրկուէին ըստ կանխածանօթ հրամանի Երրորդ առ Մովսէս թէ՝ ամենայն ծառայ վեց ամ ծառայեսցէ. և ամին եօթներորդի՝ ազատ լինիցի Ել. 21. 2. Զի 6 թիւն խորհրդականէ. վասնորոյ եսայի զսերովբէսն վեցթևեան տեսեալ

որք երգեցին զերեքսրբեանն. 'ի Վեցերորդ' ժամու. նմանա֊
ցեալ ծաղկեալ ի վերայ աղբերն, և խնկեալ պչրուե՛ 'ի սա-
մարմնոյն կնոջեն. և վեցեն գործք ողորմութեան զորս թուէ ան-
դրանիկ միածին Հօր. Մատ. 25. 35. Իսկ և որպէս արեգակն
զետեղեալ կայ 'ի մէջ վեց մոլորական աստեղաց. նոյնպէս և
արեգակն մեր Քրիստոս եկաց ի մէջ վեցից սեռ առաքինեաց.
այսինքն նահապետաց, առաքելոց և մարգարէից. խոստովանողաց,
կուսանաց և մարտիրոսաց. որք սրտի մտօք ծառայեցին մարմնա-
ցեալ բանին. զի նահապետքն իբրու դեղ նորակ փնձաճող
նարդոս՝ խոտաճարակ կենօք շատացան. Առաքեալքն ընդ համ-
րածաւալ կարմրերփեան վարդ զանյշ հոտով յաշխարհ շրջե-
ցան. Մարգարէքն կորապարանոց կապուտակ մանուշակ՝ ձիւ-
նատատ տեղւոյջ յերեսս դաշտաց սփռեցան. Խոստովանող
վկայքն մարգարտակերպ ձևով իբր և խեցեմորթ կնքում կարգա-
ւորեալ 'ի յաղի և 'ի դառն ծովս աշխարհիս վայելչացան. Կու-
սանքն շուշանաձայլ պայծառ գինձք կոյս տերևօք, ոսկենից
համեմք փայլեցան. Մարտիրոսքն որպէս համս նռան բո-
տրային կարմրերանգ գունով, անհամար թուով 'ի կեղևում կեն-
ցաղոյս գեղեցկապէս շարակարգեցան. Զի որպէս զանազան
երանգ երկրի՝ այլ և այլ ժամանակս ծնանին զպէսպէս տեսակս
ծաղկանց. և յօրինեն զսեռս պատուականս ականց. Նոյնպէս և
'ի զանազան դարուս կենցաղոյս իբրու 'ի փշաբեր յարմատոյ բո-
ղբոջեցան գերապանծ թագուհիք փեսային Քրիստոսի, և սպա-
սաւորօղ հարճք, և ծառայօղ անհամար օրիորդք. Այլ և վաթ-
սուն թագուհիք 'ի հրեից որպէս դեբորայ, եսթեր, աննայ յու-
դիթ, եղիսաբեթ, և այլ նմանք. և ութսուն հարճք 'ի հեթանոսաց
որպէս ռախաբ, յայէլ, թամար, հռութ, և նմանք նոցա. որք կու-
սացան հաւատովք և գործովք, որովք պսակին ամենեքեան ութսն
դարուն և լինին թագուհիք. Այլ և ո՞ կարծ եայրմանց վաթսուն
թագուհիք. յորժամ լուան 'ի բերանոյն յեսայեայ թէ. ահա կոյս
յղասցի և ծնցի որդի, յայնմ օրէ ժողովուրդն հրեից պահէին
զկուսանս. և կային 'ի նոյնսոյն Աղջիկ թագուհիք որք սպասէին
փեսային հոգւոյ. և ութսուն հարճք, որք յանուրս առաքելոյն
յայտնեցան, որպէս զքորսն դամարու, և զդստերս փիլիպպոսի
և զեւղաբերս կանայսն. զորս տեսեալ նախանձեցան բազումք 'ի
հեթա

հեթանոսաց, որպէս Թեկղէ, սանդուխտ, և նմանք, զորս հարճ անուանէ, զի կռապաշտեցին նախ, և մերքն մեր. և փեսայն հո-գւոյ քան զհարսն նախատանօք շուն կոչեաց զքանանացին, որոյ 'ի հաւատալն եղան թագուհիք, և ընտրեալն խմբաւս, և եղեն ամենեքեան մի եկեղեցի, և մի աղաւնի փեսային Յիսուսի. Դուս-տերաւք զի որպէս վաթսունն է վեց տասանց, նոյնպէս և 'ի յԱդամայ մինչև ցՔրիստոս վեց դարէ: Նախկին դարն յԱդամայ մինչև ցՆոյ. Երկրորդն 'ի Նոյէ մինչև յԱբրահամ: Երրորդն յԱբրահամու մինչև ցՄովսէս. Չորրորդ 'ի Մովսէսէ մինչև ցԴաւիթ. Հինգերորդ 'ի Դաւթայ մինչև ցգերութիւնն Բաբելացւոց Վեցերորդ 'ի գերութենէ անտի մինչև ցՔրիստոս: և Եօթն-երորդ դարն սկսեալ 'ի Քրիստոսէ մինչև ցկատարած: Որոյ հետևի Ութերորդ դարն անեզերելի և անվախճան. զորս վաթ-սունն և ութսունն նշանակէ: Իսկ և վաթսուն թագուհիք երևեցան 'ի հնումն և 'ի նորումս. 'ի հնումն որպէս երկոտասան նահապետք որդիքն յակոբայ. և քառասունք մարգարէքն. իսկ և 'ի նորումս երկոտասան առաքեալք. և երկոտասան վարդա-պետք. յոլովք եղանին վաթսունն: Իսկ և ութսուն հարճք ընդ հօթանասուն և երկու աշակերտսն Քրիստոսի, եօթն սարկա-ւագունքն որք լինին ութսուն: Օրիորդք զհամայն հաւատացեալս. 'ի մէջ առաքինեն ծնեալք, որք ոչ յարենէ և ոչ 'ի կամաց մարմնոյ, և ոչ 'ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան: Սոքա են զասպետեա-եալեայ որդիք սկնդկից քան զարամբոյն. յորոյ ծնընդենէ պտու-ղիկ կոյսք, և բաբելացիք արդարք, այլև ծուռ և ժողովուրդք հնդկաց սևացեալ մեղօք. մաքրեալք փայլին 'ի լոյս արդարութեան:

Մի է աղաւնի իմ, կատարեալ իմ, մի է նա մօր իւրոյ ընտրեալ ծնողին իւրոյ. Տեսին զնա դստերք և երանեցին զնա. թագուհիք և հարճք գովեցին զնա:

Փեսայն զսիրելի հարսն իւր աղաւնոյ համեմատէ. քանզի եօթն են յատկութիւնք աղաւնոյն. և եօթն պարգևք հոգւոյն սրբոյ. զի ոչ ոք կարէ ասել տէր զՅիսուս, եթէ ոչ հոգւովն սրբով. Որում զարգարի Պաւղոս I Կոր. 12. 3: Նախ որպէս աղաւնին մերձ գնայուն ջրոյ բնակի, զի տեսեալ զստուերս բազէին 'ի ջուրս փախիցէ: և այսէ պարգևն իմաստութեան հոգւոյն սրբոյ, և որ տատանեալ զայս շնորհ, զաշխարհս իբրև զգետ անցաւոր և անկայուն համարի ըստ առաքելոյն, զի աշխարհս անցանէ և ցանկութիւն

նորա

digitised by A.R.A.R.@

նորա. և ատելն ընութեան մարդկան. եբր և զառաւելն գոչէ, և զինի չըշէ, և խնդրէ թէ զո՞ կլանիցէ. 1 Յով. 2. 17. 2 Պետր. 5. 3:

Երկրորդ՝ աղաւնին ի միջոյ կերակրոյն զընտիր ուտել կտանէ ուտէ և զկեղեւն՝ ի բաց ձգէ. այսէ պարգեւն գիտութեան. որով իմանայ հարսն զօգուտ իւր, ՚ի բաց արկանէ զկամս մարմնոյն, և հետևի կամաց հոգւոյն. զի մի՝ լուիցէ՝ ՚ի տեառնէ, ընդե՞ր ոչ ընտրէք անձամբ ձերով զարժանն Ղուկ. 12. 57. և ընտիր առաքեալ նորին պատուիրէ ասելով՝ սիրելիք մի՛ ամենայն ոգւոյ հաւատայք. այլ ընտրեցէք զհոգին եթէ Աստուծոյ իցեն. 1 Յով. 4. 1.

Երրորդ աղաւնին ունէ կերոյն իւր ՚ի ծերպս վիմաց. այսէ պարգեւն զօրութեան, որպէս և հարսն ունէ զմիտս իւր յերկինս՝ ի պաղատանս զվերինն խորհեցարուք ուր նստի Քրիստոս. զի նա է գլուխ անկեան, և որ ՚ի նա հաւատայցէ մի ամաչեսցի. ( Կող. 4. 1. 1. Պետ. 2. 6. ) Ուստի ասէ մարգարէն երթայք մտէք ընդ վիմօք (Ես. 2. 10. Չորրորդ աղաւնին զձագս այլոց սնուցանէ. այսէ պարգեւն խորհրդոյ. որով զարգացեալ հարսն ծանուցանէ թէ զպատուհն իմ միայնակ ոչ կերիցեմ. այլ կարկառեցի որբոց. և լսեմ ՚ի տեառնէ թէ քաղցեալ և ետուք ինձ ուտել. ծարաւեցայ և արբուցէք ինձ. ( Յոբ. 31. 17. Մատ. 25. 35. )

Հինգերորդ՝ աղաւնին ՚ի դարմանել զձագս ոչ վշտացուցանէ. այսէ պարգեւն հանճարոյ. այսու շնորհիւ պերճացեալ հարսն ասէ ոչ ումեք մեղայք. և ոչ զոք եղծաք. և ոչ զոք զրկեցաք 2 Կոր. 7. 2. Վասնորոյ և ամբոխին պատուհէր եա զինուորացն հրամայեցէք թէ՛ մի՛ զոք խռովեցէք, և մի՛ զոք զրպարտեցէք Ղուկ. 3. 14.

Վեցերորդ՝ աղաւնին ոչ ունի լեղի և ոչ մաղձ, այսէ պարգեւն աստուածպաշտութեան. որպէս կեայ և հարսն առանց նենգութեան, և առանց խարդախութեան, պահօք և աղօթիւք զգուշ և զվերակ պաշտէ զԱստուած, առոր ասէ փրկիչն աչա արդար և որ ՚ի կերպակ յորում նենգութիւն ոչ գոյ. Յով. 1. 47.

Եօթներորդ՝ աղաւնին փոխանակ երգելոյ միշտ հեծէ և մնչէ. և այսէ պարգեւն երկիւղի, որով հարսն յաղօթամատոյցս և արտասուօք զանձկութիւն իւր ցուցանէ. Ուստի ասէ՝ եբրև զա-

ծառն

digitised by A.R.A.R.@

ծառն այնպէս ճշելին․ և խորին զաղաւնին այնպէս ճշելին. Եզ.
38. 14. Վասնայնորիկ փեսայն աղաւնոյ համեմատէ զհարսն.
Կոչելով իմ. ասէ, այսինքն կատարեալ բարի գործովք առաքի-
նութեամբ, և աստուածատուր պատուիրանապահութեամբ. որ
ասէ առ եղբարսն կատարեալք. որպէս և հայրն ձեր երկնա-
ւոր կատարեալ է Մատթ. 5. 48. Մի է մօր իւրոյ, ընտրեալ ծնողին իւրոյ.
մի ասելով՝ ծանուցանէ թէ՝ և բազումք մի մարմին եմք ՚ի Քրիս-
տոս, այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք. Հռ. 12. 5.
Վասնորոյ մի ասէ. և մայր հարսին եկեղեցւոյ Աստուած է.
Ըստ այնմ որպէս մայր որ զ՚ի յանուկ իւր զգուշէ, այնպէս զգուշա-
ցի զճիզ ասէ տէր. Երուսաղէմ՝ մայր մեր ամենեցուն է եկեղեցի
սբ. զորմէ ասէ սբն Գրիգոր Նարեկացի. այս մայր հոգևոր,
երկնաւոր, լուսաւոր, քան թէ երկրաւոր, շնչաւոր, մարմնա-
ւոր, զիս գգուեալ սնուցի. կաթն ստեանց սուրբ արեան Քրիս-
տոսի. որդեգիր որովայնի սուրբ աւազանի կենդանարար. Զի
թէպէտ նախապէս կնքագրեալ հոգւով, և օրինօք անուանեալ. և
որք լուսաւորեալ աւազանին ծնեալ են մի աղաւնին կոչեալ. և մի
որդի մօր եկեղեցւոյ. և ծնողի հոգեւոր սրբոյ. քանզի հոգին
սբ ծնանի միութեամբ, և եկեղեցի սբ ծնուցանէ մարմնով և
արեամբ որդւոյն Աստուծոյ. Զի ընտրեալ մօր ընտրեալ Աս-
տուած որդի՝ իսկզբանէ՝ ի փրկութիւն, սրբութեամբ հոգւոյն
և հաւատովքն ճշմարտութեան. 2. Թեսաղ. 2. 12. Տեսին զնա դստերք
և երանեցին զնա, թագուհիք և հարճք գովեցին զնա. Աստանօր դըս-
տերք թագուհիք, և հարճք, զորս հրեշտակաց անուանէ զե-
կեղեցիս անդրանկաց, որ անուանին զմարդկային բնութիւն հաճո-
յացեալ Աստուծոյ երանել ասեն. Քանզի ետես Աստուած
զամենայն արարած յամենայն երկրի, և զխաղաղութիւն ծաղկեցուց
երկրի յամենայն երկրէ Եզ. 27. 8. Վասնորոյ երանեն և
գովեն զի վասն որդւոյ հայրն որ մեռանիցի. այլ վասն բարւոյ
թերեւս համարձակեսցի ոք մեռանել Հռ. 5. 7. և զհարսն ա-
ցեալ պաշտօնէից փեսային հաղորդութեամբ եղեն խորհրդոյն
Աստուծոյ 1 Կոր. 4. 1. Իսկ և ՚ի սկզբանէ զորմէ լուան
զաւամ ակնածեալ իւրս եղեն, և ձեռօք շօշափեցին զբանն կենաց.
1 Յով. 1. 1. Որոց երանեցան՝ իսկ ասացանէ. բայց ձեր երանելի
աչքդ զի տեսանեն. և ականջք ձեր զի լսեն. ամէն ասեմ

ձեզ

digitised by A.R.A.R.@

ձեզ՝ զի բազում մարգարէք, և արդարք ցանկացան տեսանել զոր
տեսանէքդ, և ոչ տեսին. և լսել զոր լսէքդ՝ և ոչ լուան
Մատ. 13. 16. Այլև Եղիսաբեթ լցեալ Հոգւովն սրբով (վասն
մեր տեսոյն) և 'ի ձայն բարձր աղաղակեաց ասելով. օրհնեալ ես
դու 'ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քոյ. և ուստի ինձ
այս զի եկեսցէ մայր տեառն իմոյ առ իս. Այս աւանիս սրբուհի
Հայս աստուածածնին Մարիամ դրախտանոց ներբողեաց թէ՝ ահա
յայսմ հետէ երանեսցեն ինձ ամենայն ազգք.

[illegible] Ո՞վ է սա որ ելանէ
[illegible] իբրեւ զառաւօտ. Գեղեցիկ իբրեւ զլուսին ընտիր իբրեւ զարեգակն.
իբրեւ [illegible]:

Աստանօր ամենայն օրէնք և կարգ զոր ունէր աշխարհս, մերկա-
ցեալ լինի անդրանիկ պատերազմ վերնոյն սիոնի. այսինքն Հրեշ-
տակաց. տեսեալ զխորհրդեան հարսն երանի տան նմա և
ասեն ո՞վ է սա զի անձամբ ծոխացեալ. վարուք պայծառացեալ
զարդուք բարձրացեալ. կենօք կենդանացեալ. յիշատակօք յիշեցեալ
և 'ի յիշատակարանի առաջի Աստուծոյ անջինջ գրեցեալ, սուրբ
փառօք փառաւորեցեալ. Որոյ ողորմած միածին անդրանիկն
Հօր, զանձն անոյշ զի կերպարան ծառայի եառ. մկրտեալ
և օրհնեալ իւրով կերակրեաց. դարձեալ նոր հիւ զարդարեաց.
և զի չնաշխարհ բնութեան նորին սպառեալ ժեաց. լոյս և ճառագայթ
անճառ մակագրեաց. ասելով դուք էք լոյս աշխարհի. Եթէ
ձայն եղիցի ասէ սիրոյ իմաստակրին. երանելի են որք զքեզ
տեսին, և 'ի նեղ բարեկամութեան քում վայելեցին. Եկղ. 48.
11. Այս որչափ առաւել երանութեան արժանի է հարսն
փեսային երկնաւորի. զոր սեսեալ դստերքն և թագուհիքն
երանեցին Ո՞վ է սա որ ելանէ իբրեւ զառաւօտ. զի որպէս առաւօտն է
բաժանող զգիշերն 'ի տուէ. Լուսինն լուսաւորող գիշերի և
արեգակն ջերմացուցիչ առ ընդհանուր. նոյնպէս և հարսն մաքուր
փեսային որպէս ընտրեալ առաքեալքն, և սբ աշակերտքն նորին
բաժանեցին զգիշեր կռապաշտութեան, և զտուընջեր հրեշտակա-
ծնութեան. 'ի լուսոյ առաւօտու 'ի ջնջոյ հաւատոյ քրիստոնէութե
և իբրև զլուսին եղեն լուսաւորող նոյին գիշերոյին մթութեան
որպէս Պետրոս Հրէից, և Պօղոս հեթանոսաց. և այլք ամենեքեն
ողջ եղեն ընտիր քարոզ տիեզերաց. Այս երանի հարսն, զի եղեւ

Զոր ջե

զբարեկամ ճշմարիտ, որ ճառէ զճշմարտութիւն յունկն լսողի. Սեր. 25. 12. Այսոքիկ զմխիթարիչս փեսային Ցուց. որք եղեն՝ ի յունկն հաճոյացեալք բարեկամօրէն ճառօղք ճշմարտութեան և իբրև զոսկեգոյն ջերմեռանդութեան բոլոր աշխարհի առ սէր հաւատոյ Յիսուսի. Այլև եղեն բաղբաջեցուցիչ զունագոյն ճառիւք. Հարք և սուրբք խաղաղացող որբացեալք նմանեալք մարտիրոսաց. Ե հարցն մեծամեծաց ճգնաւորացն սրբոց. և առաքելաշաւիղ հայրապետացն ընտրելոց. որք որպէս մարտուցեալք վասն կենաց զանձամբ իւրեանց բերելով. Վասնզի կուսանք ողջախոհութեամբ նմանեցեալք հրեշտակացն. ամուսնացեալք զհեշտութիւն անկողնոյ առանց արծաթասէրք և աղքատք զմարմնաւոր մեծութիւնս արհամարհեցին. և վայելչութիւնք աշխարհիս առ ոչ ինչ համարեցան. ակամբ կանայք՝ ի սէր փեսային վառեցան. և զկարօտութիւն մարմնոյ մոռացան. ամենայն մանկունք, վասն նորամուտն սրբոց մանկկանն Յիսուսի արտախուղ կատարեցան. աշխարհական թագաւորք. և անհամար բանաւորք բրձանգեալ եղեալ առաւել հայեն ջ...ացան. յաւիտենական աւանդակ իբրև զայլք ընդ պատերն մակաղեցան. և կենաց բանին յանկարծօրէն եղեն. այսու եղանակաւ ընդ առաջ երկնաւոր փեսային ընթացան. և եղեն իբրև զառաւօտ. գեղեցկացան իբրև զլուսինն. ընտրեալք իբրև զարդակն. որպէս լուսաւորիչն մեր սուրբն Գրիգոր ընդ որքային որդւոցն յաղթելով հայոց. և անխափանորս ընդ մեծին կոստանդիանոսի յաղթելին հռոմայեցւոց. Նոյնպէս և Պետրոս հայրապետն յաղթեցանդրոյցւոյ. Եփրեմ խուրին ասորւոց. Բարսեղ և ոսկեբերանն յունաց. Այսպէս և զայլս իմա. Վասնորոյ և օրինակն Սողոմոն՝ ի դիմաց Թագուհւոյ և դստերաց Երուսաղէմի հիանալով նկարագրէ զհարսն թէ ով է՞ սա. Որպէս ասի՝ ի յերգս թէ հիացան ամենայնք տեսանելով զերանելին նկարագրօղս որ ՚ի մարմնի զկարգս ստացեալ անհամեմատ մարմնաւորաց. Վասնզի հաճոյացեալ հոգին յորժամ կանգնի հաւատալ՝ ի խոնարհ ագիտութեան կուրութեան անհաւատութեան. և առ՝ ի լոյս ճշմարտութեան. և՝ ի ճանաչումն Յիսուսի Քրիստոսի, կարէ ասել թէ երևի իբրև զառաւօտ. Մինչ լուսաւորի և կանգնի հաստատութեամբ յայնժամ ասի գեղեցիկ իբրև զլուսինն. և յորժամ միաւորի այսինքն ընդ արդարացոյց. լինի ընտիր իբրև զար-

դակն.

digitised by A.R.A.R.@

զանխն. Իսկ և մինչ խոնարհութեամբ կարգադրէ զամենայն
զործս իւր. զկիրս և զախորժակս կամաց իւրոց, յայնժամ ասի
Արմաւենին ոչ երևի այնքան բարձր. բայց արմատ նորին է 'ի սաստիկ խորութեան երկրի ներսեղմեալ. և է այնքան հաստատ որ մնայ անխախտելի. և ոչ երկնչի 'ի հողմոյ քանցելոյ. և ինքն միշտ կանանչ, և զարդարեալ տերևօք, և երկարատև յոյժ, մշտապէս կայանայ, և ուղղապէս աճի, և պսակեալ արգասեօք պտղոյն համեղի երևի, և պտուղն է քաղցր, և ծաղիկն գեղեցիկ և անուշահոտ: Բայց բնագէտիք ասեն թէ արմաւենին ոչ միայն խոնարհի 'ի ծանրութենէ, այլ որքան առաւել ծանրանայ, այնքան յաւէտ 'ի վեր ցուլանայ: Նոյնպէս և եկեղեցին Քրիստոսի որ է հարսն նորին 'ի սկզբան երևեցաւ փոքր քան զառաջին ժողովրդեանն, այլ զկնի բարձրացաւ յուսով. և այնքան 'ի խոր ձգեաց զարմատս իւր. մինչ զի իջանել անձրևաց ձախորդութեան. և 'ի խաղալ գետոց փորձութեան. 'ի շնչել հողմոց բռնութեան. և 'ի բաղխել թշնամեաց հերետիկոսաց. եկաց մնաց հաստատուն զի հիմնեալ և խախտել ոչ կարացին. զի 'ի վերայ վիմի հաստատեալ է Մատ. 7. 25: Այլև կանաչէ պայծառութեամբ, զարդարեալ է փառօք և պատուօք: Մանաւանդ երկարատև մինչև ցերկրորդ գալուստն Յիսուսի մշտապէս կայ և յաւիտեան թագաւորէ. և դրունք դժոխոց զնա յաղթահարել ոչ կարեն Մատ. 16. 18. Զի ուղղապէս աճի. այսինքն ուղիղ դաւանութեամբ դիմէ առ Աստուած. և բարեգործութեամբ պտղոյն արգասեօք պսակի. զի պտուղ գործոյն քաղցր է առ Աստուած. և ծաղիկ առաքինութեան նորին գեղեցիկ. բայց որում ասէ արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին, և որպէս զմայրսն լիբանանու բազմասցին Սղ. 91. 13: Զի արմաւենին իւրաքանչիւր ծագման լուսնի զերկարանչիւր նոր բարունակս յառաջ բերէ. և այսպէս երկոտասան բարունակս յառաջ ածմամբ լուսնին ամսոյն. վասն այնորիկ եգիպտացիք ցուցանելով զամիս նկարէին զարմաւենի. Վանորոյ ոմն հայրն Ոնոփրիոս յերթալն յանապատ նուազ առ ընթեր արմաւենւոյ ասելով իւրաքանչիւր ամիս առ բերէ իւր

զկե

զմի ողկոյզ արմաւենեաց որ ինձ բաւական է առնուլ երեսուն· ՆՄԱՆԵՑԱՒ ՄԵԾՈՒԹԻՒՆ ՔՈ ԱՐՄԱՒԵՆԵԱՑ. այսինքն մեծարոյութիւն վայելչութեան անուշահոտ վարուցն. կամ արգասաւոր պտղոց խոնարհութեանն. որպէս սրբուհի Մարիամ պտղոց քաղցր խոնարհութեան մայր Աստուծոյ լինել ընտրեցաւ: Դարձեալ խոնարհութ ՝ի գահ աստուածութեան բարձրացաւ: Նոյնպէս և աբրահամ հայր ազգաց բազմաց անուանեցաւ· և մեք ամենեքեան այնպէս հաճոյոյան Աստուծոյ. նմանութեամբ խոնարհութեան արմաւենւոյ· և քաղցրութեամբ բարութեան պտղոյն յինքեանս բերելով· ԵՒ ՍՏԻՆՔ ՔՈ ՈՂԿՈՅԶԱՑ. կամի ասել թէ՝ որպէս զարմաւենի յանկալի եղեր ինձ. և ստինք քո ողկոյզ ախորժելիք· զի քան զքրօբէական յաճախ նստին՝ ախորժելի է նմա համբուրել ՝ի հոգիս մեր· Այլև ստինք հարսին եկեղեցւոյ, երկոքին կտակարանքն նոր և հին. ուստի օրհորդ վարդապետք ջամբեն մանկանց ողկոյզ զկաթն անուշիչ հոգւոյ, և պարարիչ մտաց. որք իբրև զողկոյզ լի արեամբ խաղողոյ. մինչ յկազմիլ ոգեան հօր Աստուծոյ, և ՝ի մատուռակել տեառն: Բայց եթէ ողկոյզն արմաւենւոյ իմասցես յայնժամ այսպէս ընթեռնուլ պարտիս. նմանեցաւ մեծութի քո արմաւենւոյ և ստինք քոյ նորին ողկուզաց· զի ողկոյզն արմաւենեաց առաւել քաղցր է քան զողկոյզն որթոյ. և տեսլեամբ է գեղեցիկ. և պտուղն բազմահատ և ընտիր, քաղցր ՝ի կերակուր և հոլանաւոր ՝ի հանգստեան. և անթարշամ· պատուելի ՝ի յաղթանակի: Այսպէս և հարսն եկեղեցի: Բայց դու որպէս և հանճիս ընկալ. զի անզանազան կերպիւ գրէ աստ. և առաջակայն յառակացուցանէ:

ԱՍԱՑԻ ԵԼԻՑ ՝Ի ՎԵՐԱՅ ԱՐՄԱՒԵՆՒՈՅՆ· ԵՒ ԿԱԼԱՅՑ ԶԲԱՐՁՐՈՒԹԻՒՆՍ ՆՈՐԱ. ԵՒ ԵՂԻՑԻՆ ՍՏԻՆՔ ՔՈ ԻԲՐԵՒ ՈՂԿՈՅԶՔ ՈՐԹՈՅ. ԵՒ ՀՈՏ ՌՆԳԱՑ ՔՈՑ ԻԲՐԵՒ ԶԽՆՁՈՐ:

Արմաւենեաւ իմանամք զփրկագործ խաչն Քրիստոսի. որ ՝ի ջորս սեռ փայտից շարադրեցաւ ասեն վարդապետք ( թէ և պարտէզ հոլովմայ գրքոյն շարադրողն միակ մի սեռ փայտից ասէ· բայց ինձ չէ փոյթ այս. թող իւրեանց աստուածաբան կոչեցելոյն հարցանեն ) այսինքն յարմաւենւոյ ՝ի նոճոյ, ՝ի կիպարէ, և ՝ի ձիթենւոյ· որոյ ՝ի վերայ բարձրացաւ փեսայն Քրիստոս, և արար փրկութիւն ՝ի մէջ երկրի. և կոծանեաց զիշխանութիւն մահու· քանզի ել ՝ի բարձունս և գերեաց զգերութիւն, էառ աւար·

և

digitised by A.R.A.R.@

և բաշխեաց պարգևս Սղ. 67. 19։ և դարձեալ յաղթօղ՝ ի կեանս
Ուստի երևի թէ խաչն եղև նմա արմաւենի. և նշան յաղթութե-
ան որոյ առէ յորժամ բարձրացայց յերկրէ զամենեսեան ձգեցից
առ իս։ Զի իբրև զարմաւենի բարձրացեալ էմ ՚ի խաչէս Յով. 12.
32. տե՛ս. 24. 18. Զի եթէ միայն ոչ էր ան էր ՚ի խաչն արմա-
ւենի, ոչ լինէր սանկք հարսին եկեղեցւոյ իբրև զողկոյզ
որթոյ յորմէ սնանէին մանկունք եկեղեցւոյ մարմնով և արեամբ
տեառն։

Եւ կալայց զբարձրութենէ նորա։ կալնուլն է ըմբռնելն կամ ՚ի ձեռն
առնուլ զոստս նորին. զի կամի առնել կալեալ կթեսցից զպտուղ
նորա։ Ուստի ծանուցանէ մեզ զպտուղ խաչին փրկութիւն ազգի
մարդկան։ Այսօրս առէ ոմն ՚ի վարդապետացն թէ տնկեցէք ՚ի
դրախտի յիշողութեան ձերոյ զարմաւենի ծառ սրբոյ խաչին
ընդդէմ ամենայն թելադրութեանցն սատանայի. առէք զպտուղ
պտղաբեր ծառոյ աստուածային. քանզի խոնարհութիւն և աղքա-
տութիւն է արմատ այսորիկ աստուածաձև ծառոյս։ Կանդի
աղքատութիւն և աշխատութիւն են կեղև սորին, ողորմութիւն
և առաքինութիւն՝ ոստքն։ Համբերութիւն և վարդապետութիւն
է տերևն. պարկեշտութիւն և ողջախոհութիւն՝ ծաղիկն. համ-
բերութիւն և ժուժկալութիւն՝ հոտն. զի և ոչ մի անտառ կարէ
բերել զայսպիսի տերևս, ծաղիկս, կամ շառաւիղս. և ոչ ծառ
ինչ ունի զայս զօրութիւնս բժշկութեան վասն ամենայն հիւան-
դութեանց. այսէ ծառ յոյժ պտղաբեր՝ ի վեր քան զամենայն
օրհնեալ ծառս դրախտին. որ տարածեալ է զամենայն եղեւնի տառս
զարդարեալ կանաչ տերևօք. և ծանուցեալ առատ պտղօք.
ընդ ամենայն աշխարհ. Բարձրութեամբ ջոջանի զերկինս. խո-
րութե՛ թափանցէ ՚ի դժոխս. լայնութեամբ շրջապատէ զերկինս
և զբոլորս. մեծութեամբ լնու զսահմանս երկրի. զօրութեամբ
յաղթահարէ զամպարիշտ թագաւորս. և զհալածողս հաւատոյ.
գթութեամբ քարշէ առ ինքն զնկարս. քաղցրութեամբ ողջա-
գուրանէ զմեղաւորս. Այսէ աստուածատունկ այգի. պտղալից
ձիթենի. քաղցր թզենի. անուշ դուռն. մեղրածորան մառան.
քուրասատան տնկեալ ՚ի մէջն Աստուծոյ. Արմատացեալ խոնար-
հութեամբ. փորձեալ համբերութեամբ. կատարեալ հնազան-
դութեամբ. հաստատեալ յուսով. բորբոքեալ սիրով. ամրա-
ցեալ

digitised by A.R.A.R.@

ցեալ հաճառով. այսէ աստուածատունկ արմաւենի՝ որով առ-
բերեմք զյաղթանակն. յաղթելով զթշնամին հոգւոյ. զմարմին,
զաշխարհ, և սատանայ։ Եւ եղիցին ստինք քո իբրև ողկոյզ որթոյ. Լա-
ստինքն երեւեն թէ՝ և ըմբռնեցից զպտուղս նորա. զի զկնի ելանե-
լոյ խաչին, գերազանց փեսայն հոգւոյ. ժողովեալ զպտուղայր
արմաւենւոյ. այսինքն զյարութիւնն, զհամբարձումն, զգալուստ
հոգւոյն սրբոյ և զփրկութիւն աշխարհի, յայնժամ ստինք եկե-
ղեցւոյ եղեն ամենառատ և յոյժ քաղցր ողկոյզ որթոյ լցեա-
կաթամբ խաղողոյ. զի հաւատացեալքն տակաւին գոլով մանուկ,
զեղեալս ՚ի յօրորոցի. այնու կաթամբ սնեալ՝ հաւատով զօրացան.
սրբութեամբ փայլեցան. իմաստութեամբ լուսաւորեցան. կա-
թամբ կերակրեցան, ողջամիտ վարդապետութեամբ կրթեցան. և
այնու զօրութե հաստատեցան. և այսու ամենայնիւ նախանձե-
ցուցին զհրեշտակս. և ինքեանք եղեն նախանձելի նոցա։ Եւ հոտ
ռնգաց քոց իբրև զխնծոր. քանզի զանուշահոտութիւն խնծորոյն
հոտոտէ Աստուած. զի որպէս գինին ուրախարար է. նոյնպէս
և երգ սրբոյն քան զհրեշտակաց սրբասացութիւնս։ Այլ և ճա-
շակողքն մարմնոյ և յարենէ փեսային բուրեն զհոտ զարմանալի
իբրև խնծորոյ. (որոյ յատկութիւնքն տես Երկրորդ՝ գլխոյ 3
համարին) ուստի ասէ Դաւիթ արբեսցին նոքա ՚ի պարարտութէ
տան քոյ, և զուղխս փափկութեան քոյ տացես ըմպել նոցա Սղ.
35. 9։ Դարձեալ փեսայն հոգւոյ ել ՚ի վերայ արմաւենւոյն։
Որպէս ողոգոմեան տանին. յորում աւուր բազումք հատանէին
ոստս ծառոց արմաւենեաց և տարածանէին ՚ի ճանապարհին. և
կալեալ զբարձրութենէ նորա. այսինքն զօրհնութի երբայեցւոյն.
զի որք առաջի և զկնի երթային, աղաղակէին ասելով օրհնութի
որդւոյ դաւթի օրհնեալ որ գայ յանուն տեառն, օրհնութիւն
՚ի բարձունս։ Այնուհետև եղեն ստինք եկեղեցւոյ իբրև զողկոյզ
որթոյ. և մինչ եմուտ ՚ի տաճարն էհան արտաքս զամենեսին, որք
վաճառէին և գնէին ՚ի տաճարի անդ. ուրանօր բազում կոյրս և
կաղս բժշկեաց։ Բայց որ ասէ և հոտ ռնգաց քոց իբրև
զխնծոր. այն է զաղաղակ մանկտեայն որք օրհնէին զանմահ
թագաւորն Յիսուս.

Եւ կոկորդ քո իբրև զգինի անուշ. Երթիցէ եղբօրորդւոյ իմոյ յուղղու-
թիւն. բաւական լինել շրթանց իմոց և ատամանց։

Կոկորդն

digitised by A.R.A.R.@

կոկորդն է վերին մասն ոսկորոյն · կամ միջին կողմ բերանոյն ակռեալ ՚ի քմացն մինչև ՚ի վիզն · ուր լինի համառասութիւն ձայնով և բարբառս զանազան որպիսութեամբ կերպաւորի · վասնորոյ իբրև զգինի Ազնիւ ասէ · և այս ասկս է օծն պատճառի · նախ զի գինին որքան է պարզ՝ և այնքան պիտանի որ հեշտացուցանէ զուրախութիւն · Երկրորդ՝ զի որ նրբութեամբն ասացն միջնորդի փոխէ զճաշակելն · Երրորդ՝ զի որ վճռութեամբն յետ քաղցրութեան յանդգնութեամբ ներգործէ և նոյն անբաժանելի միանոցն զանուշութիւն · Չորրորդ՝ զի որ կարողութեամբն մխիթարէ զկորուսեալսն · Հինգերորդ՝ զի որ անօսրութեամբն թափանցէ ՚ի բոլոր մարմինն · քանզի լքեալ և քաղցեալն լնլելով զգինի ընկալնէ առնու զզօրութիւն և զկարողութիւն · Վեցերորդ՝ զի որ յագմամբն մեղմէ զծարաւն · և զգօնէ կոկորդական ուռեցոյ · Եօթներորդ զի որով համեղութեամբն դիւրապէս ներգործէ ՚ի ներքին ուտելեացն · Նոյնպէս և խօսք և լուր վարդապետութիւն հարսին եկեղեցւոյ որ կերպաւորի ՚ի կոկորդ նորա · ուստի լսողացն լինի իբրև զԱզնիւ գինի պարզեալ ՚ի մտքոյ որ լուսաւորէ զմիտս և է յստակ որ մաքրէ զսիրտս ՚ի յաղտոյ մեղաց , և որպէս ՚ի պէսպէս մոլութեանց · Մաքուր կենսական ու բան ինչ · կամ բեռնաւորութեան և պատրանք խաբէութեան : Ուսուցանէ զի շնորհէ զանուշահոտութիւն վարուցն առաքինութիւնս կի զմայլեցուցանէ զմիտս սիրոյն Աստուծոյ Զօրութիւնս զի հոգւով պարգևալից զգեղեցկացուցանէ կենդանի ջրով հոգւոյն վտակաց · Սոյնպէս զի շնորհաց հոգւով անուշանէ · Երկրորդ զի հոգւն զմարմինն քաղցրանէ · բանն զհոգին կեցուցանէ · Չորրորդ զի զամենեսեան քաղցրացուցանէ ՚ի մարմնապաշտութեանց ընդդէմ քննողացն բնութեան Սիրելիս զի մխիթարէ զսիրտս հոգևոր զուարճութեամբ · Զօրութիւնս ձգէ զամենեսեան առ փեսայն հոգւոյ · Այսպէս ներգործէ և յամենայն ամենեցուն · Մինչ է յանտ յանք փեսայինն է · և առաքեալ ասացեալ ասաց Հայրն առել երթեալ ընդ եղբարցն իւրոց հոգ յուղարկել զայն բան Հայրենի · որ կամի ասել թէ՝ փութեալ իմ ՚ի նմանութեան կենդանութեան իւրում զհետ փեսայինն · ընդ ուղիղ հաւատոյ , և ընդ պայծառ գործոյ լոյս Պօղոսի որ ասէ յանկամ և չունեմ ՚ի մարմնոյս և լինել ընդ փեսայինն և ըստ եղբարց երթեալ ընդ եղելոյս ՚ի մարգարէութիւնս · Առաքելոցն ընդ

Քրիս

զճշմարտութեան յաշակերտութիւնս. կուսանքն ընդ փեսային ՚ի հա-
րսանութիւն. վասն այն ասէր Պետրոս՝ Տէր առ ո՞վ երթիցուք
զի զբանս կենաց յաւիտենականաց ունիս. Ասաց ասէ բողբոջն
յեսսեայ. եկն զկնի քո անձն իմ, եւ զիս ընկալաւ աջ քո. Սաղմոս
[illegible]. Որպէս Պետրոս՝ ի լերինն Թափօ-
րական տեսեալ զաստուածային փառաց բարձրութիւնն հաճեցաւ, եւ
զայն բաւական համարելով՝ ասաց առ Տէր՝ բարւոք է մեզ աստ
լինել. Նոյնպէս եւ Պաւղոս գոհանայ զԱստուծոյ հօրէ ասելով.
որ փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարի, եւ փոխեաց զմեզ
՚ի թագաւորութիւն որդւոյ սիրելոյ իւրոյ. Կող. 1. 12. Այսպէս
եւ հարսն ասէ, գնայր զհետ եղբօրորդւոյ իմոյ յաղթութիւնս.
այսինքն՝ ուղիղ ճանապարհ. որպէս նա ընթացաւ, եւ ես գնայի
զոր ինձ եցոյց. վասն որոյ եւ պարգեւս ետ ինձ զմարմին եւ զարիւն
իւր ՚ի ճաշակումն, որ ընկալայ շրթամբ, եւ ծածկեցի ստամոքի
որով արժանաւորեցայ յաւիտենական կենացն եւ ժառանգորդ
եղէ երկնից արքայութեան. եւ որդեգրեցայ երկնաւոր հօրն.
եւ այսու բաւականացայց.

Ես եղբօրորդւոյ իմոյ եւ առ իս դարձ նորա.

Ասէ Յովհաննէս Մկրտիչն [illegible]րիստոսի, որ ունի հարսն նա է
փեսայ. քանզի նմա հաւատացեալ եկեղեցի. եւ նա սիրով առայն
դարձաւ, եւ եդ զանձն իւր ՚ի վերայ նորա. որոյ աղագաւ ասաց.
կացէք յիս եւ ես ՚ի ձեզ. Որպէս ուռն ոչ կարէ պտուղ բերել
յանձնէ իւրմէ, եթէ ոչ իցէ հաստատեալ յորթն. նոյնպէս եւ
դուք եթէ ոչ յիս հաստատեալ իցէք. ես եմ որթ եւ դուք ուռ-
ոց. որ հաստատեալ է յիս՝ եւ ես ՚ի նմա. նա բերէ զպտուղ յոյժ, զի
առանց իմ ոչ ինչ կարէք առնել. Յով. 15. 4. եւ որ ասէ ես
եղբօրորդւոյ իմոյ եւ առ իս դարձ նորա. զի առ ինչ է ամուսն եկեղեցւոյ
եթէ նա մարմին կոչի՝ երեւի թէ՝ գլուխ ունի եւ եթէ հարսն՝ նա
փեսայ ունի. Բայց աստանօր զանուն եղբօր ինքն ընկալաւ. որ
յամենայն տեղիս զհարսն քոյր կոչէ. եւ հարսն զնա եղբօրորդի
անուանէ, որպէս թէ սիրելի. Զի նա ՚ի բնական բնութենէս
երեւեցաւ, եւ մարմնեղէն մարմին զգեցաւ, եւ հոգի խառնեալ եառ-
ոտ եղբայր եղաք միմեանց. եւ այսոքիկ ցուցանեն թէ հարսն
չէ միայն, եւ ոչ է օտար ՚ի փեսայէն իւրմէ. Ասաց կամի ասել ես
հօրաքոյր եմ եղբօրորդւոյ իմոյ, որ նա զիւրայն է որդի կոչեաց.

որպէս

digitised by A.R.A.R.@

որդի անդրանիկ իմ զԻսրայէլ. Ել. 4. 22. Որոյ որդին եղև որդի մարդոյ. և ՚ի հեթանոսաց կոչեցեալ եկեղեցին քոյր նորա. ևնա որ ծնեալ որդի և տուեալ մեզ, եղև փեսայ հոգւոց հաւատացելոց. և նա ասաց՝ երթամ առ հայր, և դարձեալ գամ, և առնում զձեզ առ իս. զի ուր եմ ես իցեմ, և դուք ընդ իս իցէք. Յորժամ հարսն ասէ, և առ իս դարձ նորա. և այսու զեկեղեցւոյ՝ պայծառանորին ծանուցանէ. որ անապական լինելոյ, և ոչ ոք կարէ գիտել ժամանակ դարձի նորա. Բայց հարսն եկեղեցի օրըստօրէ հաճախ և նոճիւք նմա. Վասնորոյ ասէ ես եղբօրորդւոյ իմոյ և առ իս դարձ նորա. Բայց գիտելի է զի փեսայն հոգւոց ոչ երբեք հեռանայ յումեքէ. որպէս ՚ի սրբուհի կոյս մօրէ իւրմէ. և յամենայն հեռանայ՝ բայց վերստին դառնայ ՚ի նա. զի ՚ի մեղանչելն հեռանայ, և ՚ի զղջալն դառնայ. որպէս ՚ի սրբազան առաքելոյն Պետրոսէ՝ հեռացեալ մինչ ուրացեալ աշակերտութիւն նորին. և երբ զղջացաւ և ելաց դառնապէս՝ իսկոյն դարձաւ ՚ի կրունկն. Այլև յամենայն հեռանայ՝ ոչ ևս դառնայ. որպէս անզղջ մեղաւորաց, ըստ յուդայ մատնչին՝ հեռացեալ այլ ոչ ևս դարձաւ. Վասնորոյ չոգաւ խեղդեցաւ. Բայց հարսն ասէ կալայց զնա և ոչ թողից. զտիրութիւն արտաքուստ տեառն. ոչ բռնադատելով՝ այլ կալով. ոչ անիրաւութեամբ զրգռելով այլ արտասուօք աղօթելով. ոչ հպարտութեամբ հայհոյելով՝ այլ խոնարհութ՝ կենցաղավարելով. Ո՜վ երանեալ բռնադատութիւն որ ոչ հարկանէ զպայմանս՝ այլ ներէ ողորմութ՝, զի և սրբոյն Աստուծոյ ոչ բնաւ հեռանայ. բայց ՚ի մեղաւորաց հեռանայ. եթէ ապաշխարեն դառնայ. իսկ և ՚ի քարացեալ և ՚ի խստացեալ սրտից հեռանայ՝ այլ ոչ ևս դառնայ. Վասնորոյ գոչէ Մարգարէին ասելով դարձարուք առ իս և ես դարձայց առ ձեզ՝ ասէ տէր զօրութեանց.

Ե՛կ եղբօրորդի իմ ելցուք յագարակ՝ հանգիցուք ՚ի գեօղս.

Անդստին զերկնային փեսայն իմանամք. զի այնպէս ծանոյց բարձրալի փեսայն հոգւոց. ասելով՝ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի. դարձեալ գամ և առնում զձեզ առ իս. զի ուր եմ ես իցեմ և դուք ընդ իս իցէք. Յով. 14. 3. Որոյ ցանկայր Դաւիթ և ասէր երբ եկից երևեցայց յերեսայդ Աստուծոյ. և թէ զմէ խնդրեցի ՚ի տեառնէ, և զնոյն աղաչեմ, բնակել ինձ ՚ի տան տեառն

ընդ

digitised by A.R.A.R.@

ընդ երկայն ամուրս։ Բայց հարսն մաղթելով ասէ եկ. զի կամի ասել եկ Երկրորդի իմ՝ եկ յաշխարհս. զի քեզ ելցուք յանդաստանս երկնից, և հանգիցուք՝ ի գեօղս արքայութեան քում։ և կամ վասն Երկրորդ՝ գալստեան պաղատէ, որոյ ժամն և ժամանակն ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք և ոչ մարդիկ. Մատ. 24. 36. Հանգիցուք՝ ի գեօղս. զի ասացեր՝ ի տան Հօր իմոյ օթևանք բազումք են, անդ հանգիցուք. ուր հրաւիրեցեր զմեզ ասելով եկայք առ իս և ես հանգուցից զձեզ։ Որպէս պատմէ Յովհաննէս, տեսի ասէ, ժողովուրդ բազում որոց ոչ գոյր թիւ, յամենայն հեթանոսաց, և յամենայն ազգաց. և յամենայն լեզուաց, և յամենայն ժողովրդոց, որք կային առաջի աթոռոյն. և առաջի գառինն, արկեալ զիւրեամբք հանդերձս սպիտակս և արմաւենիս ՚ի ձեռս իւրեանց. անդ հանգիցուք ասէ Յայտ. 7. 9. Քանզի ասացեր ուր ես եմ անդ և պաշտօնեայն իմ եղիցի։ Որոյ փափագի հարսն, որպէս ասէ օգոստինոս ՚ի գիրս մենամենից, թէ առ աղբիւրն մշտնջենաւոր կենաց պապակեալ միտքն՝ փափագին փականքն մարմնոյ խափանել բեկանիլ. խնդրէ փակեալ հոգին՝ ուր կենդանի մարգարտոք յառնեն շէնքն պալատին. ձոյլ ոսկեաւ ջողջողան նուենիքն. ձանձանչաւ վերնատունքն փայլին. ոչ սակեաւ՝ իբրու պայծառ ապակեաւ յարդարին ճանապարհք քաղաքին. ոչ գոյ տիղմն. պակաս է չարախոն. ոչ ինչ սուգ տեսանին անդ. զարհուրելի ձմեռն. խաւարչատոտ ամառն. ոչ երբեք անդ երևին. այլ զմշտնջենաւոր ծաղիկս վարդից՝ գարունն միշտ առնէ կարմիրալից. պայծառանան շուշանքն. կարմրին քրքումքն. լինի պալասամն քրտնալից. կանաչանան դաշտքն. գարնանանան սերմնարայքն. բղխին առուքն մեղրալից. խղեղկեցայ բուրէ հոտն. հիւթն և նիւթն խնկալից. կախին խնձորքն ՚ի ծաղկանց ոչ անկանելոց անտառաց. փափագելով միշտ ուտեն. և ուտելով միշտ լինին փափագալից։ Դարձեալ անդաստան եկեղեցւոյ հաւատացելոց. և գեօղ ժողովոյ սրբոյ. և որքան առայս ասէ ուր ժողովեալ են երկու և երեք յանուն իմ, անդ եմ և ես ՚ի մէջ նոցա։

Կանխեսցուք յայգեստանս, տեսցուք եթէ ծաղկեալ իցէ որթն. ծաղկեալ իցէ նռնին. ծաղկեալ իցեն նռնենիք. անդ տաց զստինս իմ քեզ։

Զոր նախ անդաստան ասաց. և այժմ այգի անուանէ. առ որս կանխեսցուք ասէ, յայգիսն՝ ազնուականեցուք կամ փութասցուք.

ելանել

digitised by A.R.A.R.@

ելանել յանցաւորանս երկնից. կամ այգիս երկնային զօրաց վասն
զի ելանել և ընդ Քրիստոսի լինել, առ՟ համարիմ. Փիլ. I.
23. և տեսանել զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ. և ՚ի
սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց
իւրոյ. և տեսցուք թէ ծաղկեալ իցէ որթն. այսինքն այնք որք
ծնեալքն յաւազան հոգւոյն որթոյ. և հեղին պտուղս իւրեանց ՚ի ողկուզս
և ծիրանեբերանք կարմրացեալ. և նման աղաւնեաց թռուցեալք
յերկինս վերացան. տեսցուք թէ նոքա ծաղկեալ իցեն զարդուք
փառաց. և նման փայլուն նռնից համարեալք կուսանք, արդեօք
երգեն զերգս օրհնութեան առաջի սեղանոյն Աստուծոյ և
երթան ընդ ՚ի գառինն. և վասն բանին Աստուծոյ զենեալ մարտիրո-
սացն, որք հանգեան նման արեամբ կարմրացեալ արդեօք կան ՚ի
ներքոյ սեղանոյն Աստուծոյ. և եղանակեն զերգս. ասելով և
ծնծղայիւք. Անդ տաց զստինս իմ քեզ. Այսինքն անտանօր ընդ
նոսա զգործս ընդ հաւատոյս քեզ ընծայեմ և քեզ մատուցանեմ
զօրհնութիւնս և զփառս. և քեզ մատուցանեմ պատարագ օրհ-
նութեան. և զանուն քո կարդամ հանապազ. Այլև այգի անո-
ւանէ զերամս արդարոց, պէսպէս առաքինութեամբ զարդա-
րեալս, ըստ եսայեայ այգի տեառն զօրութեանց տունն իսրայելի է.
և ըստ աւետարանչին. Եսա. 5. 7. Մատ. 21. 33. Յորոց բարե-
պէս խնդամք զատն եկեղեցւոյ նորոյս խոստացեալ հաւատացելոցն
Քրիստոսի. Որթ անուանէ զհաւատացեալս ՚ի Քրիստոս. որք
բերեն զորթ այս արել եղեն հաւատով և զգործս. բաց և նման է
ծառ ինչ գեղեցիկ մշտադալար. և երկայնակեաց. որ բարձրանայ
յերկրէ ուղղորդ բարձրանալ. հերքել և ծռել ոչ գիտէ, ունի
զբուն երկայն և ուղիղ. և զարմատս առաւել մտանէ և թէ և
անթօթափելի. վասն որոյ է գեղեցկագոյն և անուշահոտ յոյժ.
և զհանգերձս պահէ ՚ի ցրտոյ. բայց ծառս այս որ իւր պտուղս բեր-
բերէ զի խնկաւէտութիւն նորին է պարարտ և օծուն ՚ի հիւթն
հիւթ լեղւոյն վասն իւղակնածու. Այսպիսի յատկութիւնք պտղոյն ՚ի
հաւատացեալս. որք հարսնացեալ են ՚ի Քրիստոս. քանզի գեղեցիկ են
առաքինաքն. մշտադալարք են հաւատով երկայնմտեամբ յուսով ան-
ձկելի ամրութեամբ. անուշահոտ բարութեամբ. օծուն քրիստո-
նէութեամբ. անմեղ ձենայի պահեն զհոգիս ՚ի չարէ. զիւրաքան-
չիւր են պատուականագին սիրով և մաքուր առաքինական գործովք
Ղանէնք

Նմանեսցին խաղաղ՝ այգեստ թեթևաթեւսն՝ Հրեշտակք կրօնաւորքն. Անդ տաց առ քեզ զստինս իմ քեզ. այսինքն անդ տանիմ ուր սուրբք ամենայն հաւաքին. անդ ընդ նոսա միաբանս միայնեա և միակամս յորժամ հանդիսադիր լինի ծաղկաւորեալ խոր և բարձր առաջէ զՏէր՝ ի փրկութեան. և այնպէս կերակուր խնդրէ երկնաւոր փեսայն հոգւոյ զոր աշակերտացն ոչ գիտէին. Յով. 4. 32. և առատանօք տարեալ երկրպագին խնամածն ընծայել և նուիրել նմա զպտուղ օրհնութեան և փառաբանութեան աղօթից և պաշտօնից որ ախորժելի խնդրէ առաւելագոյն քան զհաճոյս և զողջակէզս. քանզի առ է մատո Աստուծոյ պատարագ օրհնութեան. փառօքն և հարուստ է զի առաւել կենդանի օրհնեալ և մարգարէից սուրբ. և զոհս քերովբէից երկրպագութեան և փառաբանութեան օրհնութեան կամ.

Մանրագորք ետուն զհոտ իւրեանց. առ դրունս մեր ամենայն մրգաւէտք. նորք ընդ հինս եղբօրորդի իմ պահեցի քեզ.

Ի բազում գիրս մեր գրեալ է՝ մանրագորն եղեալ. ի լինչ խորև զբոյս նմանեալ բուսելոյ. բնութեամբ է յոյժ ընդունելի և թմբեցուցիչ. ուստի ՚ի հնարաւորն զմանրագոր ուրուք առաւ ձայնակել ՚ի նմանն. ուր և թմրի և ոչ զգայ զցաւս արմատ իւր է ընթանաւորս. զի ունի զձև մարդկան ի մարմնոյ կանգնեալ կայեալ. Մանաւանդ պնդեն և ասեն թէ ունի նմանութիւն զարմանալի մարդոյ. ուստի և պէտ-թագորաց կուռք զնոյն մանրագորակերպ. սակս որոյ բոյս նորա անուանի ՚ի մեզ մարդանման. այսինքն ունող զդէմ կամ զպատկեր նման մարդոյ. Արդ ասեմք՝ ՚ի մանրագորոյ բերելն զպտուղ ողջունացուցեն. որոց իւրաքանչիւր տարոյն են երբեմն զգայնական երկայն կաղինս իսկ այլք առ զպտուղս առանձին առանձին. որքան հասանեն և բոլորակաձև դեղնագեղեցիկ նման փոքրիկ խնձորոյ. բայց են անհամ և անախորժ ճաշակելեաց. որք և անուն բուսոյ կոչեցաւ կոչին մանրագորք. Դարձեալ պտուղքս այսպիսի օգտեն բեղմնաւորութեան ամլական. զի լեալ բժշկեալ լուծանեն զկապս ստամոքսի. Սարբեն զհոգիս կղին. և պատրաստեն ՚ի յղութիւն. և այս մանաւանդ ՚ի ժամ զուարթ, որպէս հաստատէ արխտոտէլ ՚ի գիրս կենդանեաց, ուստի և ռաքել փափագմամբ խնդրէր զայն ՚ի լիայե ա ՚ի օգնութիւն ամլութեան իւրոյ. Դարձեալ բոյս այս նմանեալ զպտուղն բերէ զհոտ զեղեցիկ և Աստիճ նման ծաղկանց կիտրոնի

կիպրոսի. Բայց գիտելի է զի բազումք իմանան թէ մանրա-գործէ լուսնակ կոչեցեալ բոյսն. որ ոչ է նման, նաև ոչ ումեքերոյ գրեալ յառակութիւնսն. քանզի լուսնակն ամենայն ուրեք գտանի. որ միշտ տեսանեմք. և համապատ արմատ նորին զոյն ամեմք ՚ի գեղորայս և չոր մասն նորին խառնեալ յանուրս պահոց աղխ-համեմեալ ուտեմք. և այլ անուրս խաղող տապակեալ ախորժելի կերակուր առնեմք, զի է ախորժելի յոյժ, և օգտակէտ Ըզնիւ բանջար. որոյ պտուղն է հանգոյն չնխաղողոյ մանրիկ. Այլ այն է խնկապետ մանրմատակ որ ականատես խնկ եղաք մեք. զի էր պտոյտ նման նորածին մանկանց ամենևին անզանազան ՚ի կերպա-րանաց մարդոյ. բոլոր անդամօքն անթերի և անպակաս, գլուխն հերօք և վարսիւք՝ հանդերձ պարանոցաւն. աչքն արտևանօք յօնօք. բերանն շրթամբք ուռնգամբք. ծնօտն մօրուօք. սիրտն ստեամբք. ձեռքն բազկօք. ոտքն սրունօք թաթիւք զարշապարօք. և մատամբք. և անպակաս բոլոր կերպարանօք. մինչ զի տեսօղքն չկարէին զանազանել ՚ի մերկ մարդոյ կանգուն կայելոյ. Բայց տեսեալն մեր էր զոյգ և կից երկուք առ ընթեր իրերաց. աջ-ձեռն միոյն կցեալ ընդ ձախոյ միւսոյն. որ լինէ ՚ի յունաստանէ ուստի բերեն ՚ի կոստանդնուպօլիս ՚ի պէտս բժշկաց. Բայց զոտն զերեզն զձիւղն զտերևն և զպտուղն ոչեմ տեսեալ այլ միայն զարմատն. զորմէ պատմեն, և առձիկ բժշկաց հարցի թէ՝ զինչ կոչէք անուն սորա. պատասխանեցին թէ՝ [illegible] ասեմք և մեք ՚ի մերայնոց հաւատարիմ բժշկաց պատմեաց մեզ թէ հանդիպելով իմ ՚ի նոյն արմատոյ. ուստի հատեալ կտոր մի ՚ի չափ փոքր բակլայի միոյ. առեալ բերանս սկսայ ծամել և կլա-նել. յայնժամ խնկոյն եղէ որպէս յուսյանդածոր ումն. զի կար-մրեալ դիմօք յոյժ. մեծապէս գլուխս իմ հնգապատիկ քան զա-ռաջինն որպէս թուէր ինձ. նմանապէս և բոլոր անդամք իմ մեծացան. և ես եղէ երեւարբեալ ՚ի գինւոյ և տեսողքն զիս ծիծաղէին զինև, և տևեաց աւելի քան ժամ մի. և իմ ջա-րայեալ մեռան արկի և փոխեցալ զայս դադարեալ

[illegible]

Մանրագորաւ իմանամք ըզկեմարնէս չորրորդ հոգւոյն սրբոյ. զոր թուէ մարգարէն. Հոգի Աստուծոյ, Հոգի երկիւղի. Հոգի իմաստութեան և հանճարոյ. և այլն եսա. II. 2. Նոյնպէս և



digitised by A.R.A.R.@

առաքեալն ասէ՝ ումեմն տուեալ է բան իմաստութեան, այլում
բան գիտութեան, ըստ նմին Հոգւոյ. մի ումեմն հաւատք նովին
Հոգւովն. այլում յաջողութիւն զօրութեանց. այլում մարգա-
րէութիւն. այլում ըմբռնումն Հոգւոյ. այլում ազգ լեզուաց. այ-
լում թարգմանութիւն լեզուաց. այլ զայս ամենայն յաջողէ մի և
նոյն Հոգի. և բաժանէ իւրաքանչիւր զշնորհս որպէս և կամի.
1 Կր. 12. 8. Այսէ որ ասէ մանրագոյք եդուն զհոգս իւ-
րեանց. Զ. Պօղոս քարոզէ. քանզի երևեցաւ շնորհն Աստուծոյ
փրկիչ ամենայն մարդկան. Տտ. 2. 12. Զի որպէս մանրա-
գոյն առաքելեղն բազմածին. նոյնպէս և շնորհք Հոգւոյն
որբոյ ամենայն է և եօթնածին. և սրբուհի կոյսն Մարիամ եղև
աստուածածին. և յարաժամ ծնանի զմանկունս եկեղեցւոյն փ. բխա-
տոյ՝ յուշեցուցին Հօրն երկնաւորի յարգանդէ սրբարար
աւազանին. վասնզի Հոգւոյ իմաստք զոգէ զօրութիւն շնոր-
հաց նորին. որ զուանալ կենաց արար այն այլ զխաւրիթ եօթ
թագաւոր. խոր այելի. զաւորմոն զարդարեալ իմաստութեամբ. ՚ի
Ձկնորսաց ընտրեալ զառաքեալս. ՚ի Հովուաց զմարգարէս. և ՚ի
մաքսաւորաց զաւետարանիչս. ՚ի հալածողաց զքարոզիչս. Ըստ այ-
պէս և զայլս բազումս. Առ զի՞ որ ծեր ահեղն չեփերն. նոր առ հնոցն՝
այս է ՚ի նորումն առաքեալք. և ՚ի Հնումն մարգարէք. Առաջուր
մեր ասէ. զի նախասյեսս առ յաստուածապաշտ յազգս երևեցան
այնք աստուածահաճոյ անձինք. և ոչ առ անԱստուած Հեթա-
նոսս. և մեղաբեր անուանէ զնոսա. զի որպէս մեղաբերքն եկրո-
նին ուրախացուցիչ մանկանց տղայոց. Նոյնպէս եղեն մեզ ուրա-
խութեան աւետաբերք առաքեալքն և մարգարէքն. Զի մար-
գարէքն առաջին՝ ահա կոյս յղասցի և ծնցի որդի. առաքեալքն
տոյցին՝ և ծնաւ զորդին իւր զանդրանիկ և պատեաց ՚ի խանձա-
րուրս եհեղ զնա ՚ի մսուր. Այլև ասէին. ոչ եթէ պաճուճեալ ինչ
առասպելեաց զհետ երթալ ցուցաք ձեզ զօրութիւն մերոյ Յսի
Քրիստոսի զզօրութիւնն և զգալուստն. այլ տեսողք եղեալ
ականատեսք նորա մեծութեանն. 2 Պտ. 1. 16. Զոր եա ինչ հայր
եմ զուգէ և ... այսինքն զշնորհն զայն որ եա ինձ մայր
իմ եկեղեցւոյ ... ՚ի ծննդեանն որբոյ աւազանին
մինչև ... երկնաւոր փեսային յաշխարհ. և
որբազան առաքեալն ասէ. և շնորհք նորա որք յիս՝ ընդունայն
ինչ

ինչ ոչ եղեն այլ առաւել քան զամենեսին վաստակեցայ և ոչ
եթէ ես՝ այլ շնորհքն Աստուծոյ որ ընդ իս. 1 Կր. 15. 10. և
'ի գիրս նմանութեց ասի թէ կեղևն մանրագորին եթէ լուանիցի
ընդ գինւոյ՝ առնէ զմարդն անզգայ օրինակ աստուածային սիրոյն
զորս ընտրեան սբ. մարտիրոսքն, որք 'ի խողխողելն 'ի կիզելն և 'ի
տանջելն զանազան տանջանարանօք, այնպէս անզգայ առնէր զնոսա
մինչ զի իբրու ոչ բնաւ զգային զցաւս, և ոչ զկսկիծս. որպէս և
Պօղոս աստուածային սիրովն արբեալ՝ ասէր եթէ նեղութիւն
եթէ անձկութիւն ոչ կարեն մեկնել զմեզ 'ի սիրոյն Քրիս-
տոսի. Հռմ. 8. 35. Այլ և մանրագորաւ իմանամք զնախնիսն սբ.
հարս, որպէս նահապետքն հնոյ կտակարանին, և այլ համայն
աստուածահաճոյ սբ. անձինք. որոց սակս ասէ երանի է մեզ իս-
րայէլ զի հաճոյքն Աստուծոյ ծանօթք մեր են Բր. 4. 4. և
նորոյս կտակարանի առաքեալքն և առաքելաշաւիղ սբ. անձինք.
համայն խոստովանօղ սբ. վկայքն, որք ետուն զհոտ աստուածահաճոյ
առաքինութե. և եղեն մրգաբերք 'ի դուռս եկեղեցւոյն Քրի.
քաղցր պտուղ աստուածային պատուիրանաց. զնորս ընդ հնոյս
պատուիրանին սբ. ընդ տասնաբանեայ տիրապարգև պատգամացն.
զորս պահէ հարսն եկեղեցի մինչև ցերկրորդ գալուստ փես-
ային Քրի. և ես զոր ետ ինձ մայր իմ պահեցի քեզ եղբօր-
որդի իմ. այսինքն հին ժողովրդանն ընդ նորոյս և եկեղեցւոյ
մայրենին սիրով զոր ինչ պատուիրան ուսանեաց հարսին սրբոյ
զայն ամբողջ պահէ մինչև ցերկրորդ գալուստ փեսային յաշ-
խարհ. որպէս տանուտէր որ հանէ 'ի գանձէ իւրմէ զնոր և
զհին. Այսինքն սբ. վարդապետօք, և ընտրեալ պաշտօնէիւք պահէ
զպատուիրանս տեառն. իբրև զալմանալի և զանուշահոտ մանրա-
գոր դեղ բժշկութեան ամենայն ցաւոց. և պահպանութիւն
կենաց հոգւոյ և մարմնոյ. և ըստ մրգաբերին ասէ զճանապարհս
պատուիրանաց քոց ընթացայ. Այլ և մանրագոր անուանի իմա.
զամենայն աստուածահաճոյ առաքինութիւնս հարսին եկեղեցւոյ
զանուշահոտ զաղօթս և զողորմութիւնս. զսրբութիւնս և զուղղա-
փառութիւնս, մանաւանդ զամենայն հոգևոր զշնորհս զհոգւոյն և
զպաշտամունս.

'ի սոյն Ութերորդ՝ գլխոյ նոյն հարսն հարցանէ ցփեսայն թէ՝
ո՞վ տայր քեզ ծծել զստինս մօր իմոյ. և թէ գտանել զքեզ արտաքոյ
համ

համբուրեսցես մի անգոսնեսցես զիս. Ուստի տարայց զքեզ ի տուն մօր իմոյ, այսինքն յարգանդ կուսին. և խառնեսցես արբու-ցանել ինձ ի գինւոյ խնկաւորութեանց. և խնկելն զանձեալ նորա մտանել ընդ կողմն իւրով. և աջով նորին պատիլ. և երդմնեցուցանէ զդստերս Երուսաղէմի առ ի զարթուցանել զսէրն. մինչև ցչորս համարն. Երկրորդ՝ սկսանին դստերք և թագուհիք հարցանել զմիմեանս վասն փառաւորութեան հարսին. Երրորդ՝ փեսայն խոստանայ հարսին ՚ի ներքոյ խնձորոյ զարթուցանել. և հրամայէ նմա դնել զինքն իբրև զկնիք ՚ի վերայ սրտի իւրոյ, և իբրև զմա-տանի ՚ի վերայ բազկի իւրոյ. և զզօրութիւն սիրոյն ծանուցանէ նմա, մինչև ցեօթն համարն. Չորրորդ՝ որինորդք վասն հարսին ասեն, քոյր մեր փոքր է, զինչ արասցուք նմա. Հինգերորդ՝ հարսն անուանէ զինքն պարիսպ, և զստինս իւր աշտարակս. Վեցերորդ՝ փեսայն զվայելչութիւն այգւոյն պատմէ. Եօթներորդ՝ հարսն պաղատի փեսային՝ լսելի առնել ձայնի իւրոյ. և նման այծեմանց փախչիլ հրաւիրէ կենդանացն. մինչև ցսարն և ջուրս տանին. Ութերորդ՝ սկսանի այնուհետև վերջի փոքր գլուխն. յորում օրինակք զփեսային թագաւոր անուանէ յիշատակէն. և զայլն ևս անուանէր.

Ո՞վ դա է որ ելանէ սպիտակացեալ, գտից զքեզ արտաքոյ՝ [illegible]
համբուրեցից, և ոչ անգոսնեսցեն զիս.

Մայր հարսին եկեղեցւոյ է սրբուհի կոյսն Մարիամ. զի ծնաւ զնա որ է գլուխ եկեղեցւոյ. որոյ զստինսն գիտցուցին պատճառք մարմնաւորին. զորս յայտ խնէ. ազգ մարդկան որք ցանկային մար-մնաւորել անօրէնութեան փեսային վասն որոյ պաղատէին. Իսկ արդ մայր մեր որ եկեղեցի տայ գիտել զկաթն առաքինութեան բարի գործոյ. Վասն որոյ հարսն զփեսայն ասէ ածել տայց քեզ գինել զստինս մօր իմոյ. զի փեսայն հաղորդ որ սնուցանէ զպար-արտ ամենայն, և ըստ զաւթի տայ անսանոց կերակուր ծննդոց ազգուածոց որք կարդան առնա. Իբրև սանդեալ Մանուկ աղայ. որպէս ասէ սբն Գրիգոր Նարեկացին. վասն որոյ կուսին Մարիամու, թէ՝ զկերակրիչն հրեշտակաց կաթնասուն առնեմքն գիտէսցես. և ՚ի յերգս շարականին մերոյ ասի յորում զարհուրեալ գոլան սրովբէագունդ ջոկք աթոռոյն, թևարկօղեալ ծածկեն զերեսս իւրեանց. այսօ ընդդիմաբար ՚ի կուսական ստեանցն կերակ-

րեցաք

րեցար մաքրագործ[illegible]պէս. Բայց առաւել քան զչափն մտածելի է. որ ոչ կամեցաւ միայն լինել եղբայր մեր. այլ յաւել զի այնպէս խոնարհեցաւ. մինչ զանձն ունայնացոյց յաւիտենականն իմաստութիւն և կարողութիւնն Հօր, ըստ Մանուկ Նահատա-

Տուղէս զ[illegible] շնորհալին սուրբն Ներսէս
Աստուածորդի մարդկային մանուկ ցուցաւ
Եւ հին աւուրցն տղայացաւ.
Ի յանբանից մօր եղաւ.
Ի հրեշտակաց փառաւորեցաւ.
Կերպակերպեցաւ կաթն ի մօրէ.
Ի կուսական սուրբ ստենէ.
Որ զարարածս կերակրէ.
Բանիւ զձեռն զի լցուցէ.

Զի այն որ էր բան Հօր կամաւ տկարացաւ. և այն որ էր զօրութի-
ւն Աստուածոյ Հօր՝ չունէր ձայն. Զի մարդացեալ բանն ոչ էր զ[illegible]
կացուցեալ կայ ի ստենէ. դադարեալ է ի յանբանից մօր. պատուեալ է
խանձարուրօք. կայր ի մէջ օրօրոցի. Այլև ստինք եկեղեցւոյ մօրե-
ղէն մայրքն եկեալ յայսկոյս որոյ կաթն էր զլինել նորին. զե-
տակն, կնդրուկն և զմուռ. զոր ընծային փեսային հօրն նորա.

Փառաւոր [illegible] համբառնեսցի. և ոչ անհամբերեսցէ զնա.
Գեղեցկութիւն բաղձալի փեսային ի յանմարմնութեանն էր իմոյ Հօրն.
բայց ի յայտնագոյս մինչ խոնարհեցաւ յերկինից եւ յարգանդ ամե-
նամաքուր սուրբ կուսին և էառ զմերս բնութիւն. ուստի ձեռն
հաշտութեան. և ըստ իւրև զմերս. և զմարդ կայինս բնութ-
եան իւրեան միաւորեալ ըստ Աստուած ընդ մեզ՝ և համբուրեաց
զմեզ. և մեք համբուրեցաք զԱստուած. զի այնպիսի համբոյր
լինէր Հօրն. փառաւոր առէր համբուրեսցէ զնա. Զինի որոյ
ոչ կարէ արհամարհել. ոչ Աստուած՝ զի յոյժ սիրէ. ոչ հրեշ-
տակք՝ զի պատուեն և պաշտեն. ոչ սատանայ՝ զի այլ հեռա-
ցեալ է և փախչի. ի մէնջ. զանել զմեզ արտաքոյ համբոյ-
րեցին. և որպէս ասաց գրէ Պօղոս թէ՝ Յիսուս վասն մերոյ
[illegible] արարեալ զժողովուրդն արտաքոյ դրանն չարչարեցաւ.
[illegible] կայ և լոյսք առանց արտաքոյ բանակին. առաւել յանձն զխաչ
ամօթոյն. Եբր. 13. 12. Զի դժուարին էր գտանել ի ներքս.
բանակի եր թագուցեալ ի մէջ յաւիտենականին Հօր, որ էր բան
նորա

digitised by A.R.A.R.@

Նորա. լոյս անմատչելին 'ի սկզբանն է էր բանն. եւ բանն էր առ Աստուած. Վասնորոյ ոչ ոք կարէր մատչիլ առնա զի 'ի լոյս անմատոյց էր բնակեալ. առ անօթ 'ի մարդկային խնամակալութե. թեւ սոյն ծանուցեալ յերեւոյթս մարմնաւորութեամբ. զի բանն մարմին եղեւ բնակեցաւ 'ի մեզ. եւ այսպէս փառաւոր … եւ ոչ 'ի սինայ բոցոյն … ոչ 'ի յամպս եւ 'ի մէգս. եւ ոչ 'ի կառս քերոբէից. Այլ 'ի յայրին 'ի յանասնոց մսուր. 'ի բեթղեհէմ. 'ի յեգիպտոս. 'ի յերուսաղէմ 'ի տաճարին 'ի լեառն 'ի ներ քաղաքութեան. եւ 'ի յանապատին. 'ի տուն զոքելի եւ սիմոն բորոտի. Վերջապէս 'ի խաչին եւ 'ի գերեզմանի. եւ ոչ անգոսնեսցես զխա. այսպէս կերպ իմն ողջմ… եւ մեղաւորաց. զի հարանց անպատճառ հօրն զինքն վասն մեղաց նախահօրն ուստի պաղատի. եւ որքան առաւել գանեալ զնեղ … եւ կամ արտաքոյ դրախտին. համբերեցից զխաչեալ զի ոչ քամահեաց եւ ոչ արհամարհեաց զխա. որպէս մեղուցեալ. զի եւ ոչ հայր անգոսնէ' զի ետ մեզ զորդի իւր միածին … զմեզ … որդին պատարագէ զմեզ զի եղեւ արենակից եղբայր մեր. եւ ոչ հոգին սբ որ եղեւ հեղինակ այսմ խորհրդոյ. եւ ոչ հրեշտակք զի զբարձրացեալ բնութ[իւն] մեր հաւանելով պաշտեն. ուստի եւ մեք խորհրդական Քրիստոսի գլխոյն մերոյ որ է ն եւ արար խաղաղութիւն յերկինս եւ յերկրի. հեռաւորաց եւ մերձաւորաց Եփ. 2. 17. Կող. 1. 20. Որոյ օրինակաւ եւ մեք 'ի նշան հաշտութեան եւ խաղաղութեան 'ի ժամ սրբոյ պատարագին 'ի յեղանակելն սպասուց. Քրիստոս 'ի մէջ մեր յայտնեցաւ. զհամբոյր ողջունեմք. զոր այլ ազգ քրիստոնեայք խոտեն եւ պախարակեն զմեզ եւ յիմարաբար բաջաղեն 'ի վերայ մերոյս արարմանց. զի աշխարհ զուրկ յտեսանեն զգործած հնագոյն վարդապետաց. մանաւանդ Դիոնիսեայ. որպէս միշտ 'ի նոցունց 'ի պարունակեալ հոլովոյ գրքոյն գրեալ է թէ 'ի հնումն վասն ընդունելի լինելոյ սրբոյ պատարագին. զկնի աւետարանական ընթերցուածոյն զմիմեանս գրկեալ համբուրէաք 'ի նշան հաշտութե. 'ի նշան կատարելու խաղաղութեան 'ի նշան ուրախութեան եւ սիրոյ եւ 'ի նշան կաթողիկէի հաղորդութե. բայց վասն անկարգութե. ամանց որք յըմբոշխնեամբ … 'ի տեղին կանանց. որք բայց որոշեալ կային յարանց. եւ համբուրէին զիրեարս. որոյ աղագաւ բարձաւ գեղեցիկ սովորութիւնս այս, եւ ջնջեցաւ պաշտել եւ

նշան.

Նշան խաղաղութեան. այսպէս և յայլ տեղիս գրեալ գտանեմք.

Լուարուք լսողք.

Ընկերակիցք լսէին 'ի փառս ձայնի քոյ. և 'ի տեսութեան յանդգնելոյն ձայնի. արձակեայ տեղ 'ի գինւոյ խաղաղութեան. յայտնեաց նռնենեաց իմոյ.

Զայսոսիկ հարսն ասէ ցփեսայն, թէ որով հետև զհետ եկիր կուսութեան իմոյ, և հաստատեալ արմատս ուրախացուցեր զիս. զի հարկ եղև քեզ վասն փրկութեան իմոյ մտանել 'ի խնութիւնս մեր, ուր մայր աստուածածնութեան մերոյ. Այլ և 'ի անձնեալ սրբոյ կուսին, ուր դուստր մօր մերոյ եղայր, որ յղացաւ զմեզ յաւօք. և դու անդ յլացիս և ծնցիս առանց ցաւոց և երկանց. այլ և երկիրս այս ուր մայր և դայեակ և գերեզման մեր. և եղաք պատճառ թշնամելոյ տեառն մերոյ. քանզի 'ի հող մահու իջուցաք զփեսայն հոգւոյս, ուստի եղաք մեք. Արբուցիցեմ զքեզ 'ի գինւոյ խաղաղութեան. քանզի զամենայն ինչ որ վասն մեր հանդերձեալ ես յանձն առնուլ, փոխանակ զի արբուցի ինձ օծն ժամու զբաժակ իւրոյ խնդրանացն, զխառնեալ գինին բարւոյ և չարի 'ի հրամայելոց ցեամփայտէն զպատուղ. որոյ աղաղակէ. և դու արբեր զբաժակ փրկու մերոյ կամաւ հօր, ասելով թէ՝ զբաժակն զոր ետ ինձ հայր՝ զի՞արդ ոչ ըմպեմ. և այնէ գինի խաղաղութեան. պատարագեալ 'ի նախատեաց մարգարէից բանից զոր 'ի հոգւոյն կարմիրքն. և կամ զի ոչ էր արժանւոյն թէ՝ որ մեղիցէ 'ի նոյն և մեռցի որպէս չարագործքն մեռանէին փայտիւ. այլ դու իբրև զհարել զեսայի, զմիքիայ, և զմակաբայեցւոն որք 'ի վկայական խաղոյն կարմեցին զզէնս բաղանիս, սիրով Աստուծոյ. Անմահ սիրով վկայեաց առաջի պիղատոսի աստուածութեան իւրոյ և հօր.

Յօ. մրկելէ նռնենեաց իմոյ. Այսինքն 'ի նռան գինւոյ իբր յօշարակ բժշկութեան, զքայլսն և զլեղին ճաշակելով. զի քահանայք էին վարդապետք, և դպիրք. որք զմարգարէից կանխասացութիւն գրեին. զի որպէս գրեալն էր այնպէս արարին. Եւ սուտն կերակուր ըստ լեղւոյ. և 'ի ծարաւ ուրուցին քացախ. Զի խմէին նռնենիքն ասէ. այսինքն յաղթէ խմել որք զքաղցրութիւն պատուին օրինացն, և զդառնութիւն տապոյն իւրեանց թանձրացուցին լեղեաւ. զքացախն զոր ոչ կամէր ուտել քան թէ ըմպել ըստ մարգարէին. այլ այն եղև ինձ նռան օշարակ բժշկութեան. զի զանկարութիւն և զդառնութիւն անձին իմոյ և մարմնոյս արբեաց

յինէն

digitised by A.R.A.R.@

յինէն. վասնորոյ՝ և տամ ասէ. զի կարիք որ յիս տայ քեզ զպինս և յետ այնորիկ զմարտիրոսացն և զխոստովանողացն յօշարակ նուիրեցից քեզ զզատն և զշարաշար տանջանսն որք կրեցին վասն անուան քոյ. և զօշարակ նռնենեաց. և զգինի խաղաղորդայ յօժա–րութեամբ արբին և արբեցան մրկութեան բաժակաւ մահուան քոյ վասն մերոյ ուրախութեան։ Գրաւեալ տուն նորին՝ մեք եմք. զի եմք տաճար Աստուծոյ։ խավանեալ է սիրտ մեր. որով յղանամք՝ ի մեզ զխորհուրդ սէր. և ըստ դաւթի ասեմք զխոր–հուրդ սրտի իմոյ առաջի քոյ. Արբուցից քեզ ՝ի գինւոյ խաղա–ղորդայ. զայս վասն հոգւոյն ասէ՝ ըստ յեսայեայ թէ՝ հոգի տեառն ՝ի վերայ իմ. իսկ խաղաղորդայ ասէ՝ նորին է, այսինքն շնորհքն՝ ի հօրէ և՝ ի հոգւոյն կազմեալ պարգև. որ ուրախ առնէ զարժանաւորս իւր. որպէս գինին զարտմեալսն։ Իսկ նռան օշարակ կոչէ՝ կեղևով ծածկեալ բարին որոյ սակս աշխատողաց հայրն երկնաւոր հատուցանէ յայտնապէս. վասնորոյ և զինն ասէ.

Ահեակ նորա ընդ գլխով իմով և աջ նորա ողորմեսցի զինև։

Ահեակաւ նախապէս իմանամք զարդարութիւնն Աստուծոյ. և աջով զողորմութիւն նորին. զի ամենայն ճանապարհք տեառն արդարութիւն և ողորմութիւն է։ Երկրորդ՝ ահեակաւ իմանամք զխաչին մահն երկնաւոր փեսային. զոր հրեայքն ձախողա–կերպ ահեակ կարծեցին. բայց զօրեղ աջ եղև հարսին եկեղե–ցւոյ. զի ի նա՛ պատեալ և պաշարեալ ամենազօր կարողութեամբ խաչին. որ պահպանէ զնա յերևելի և յաներևոյթ թշնամեացն փորձանաց. և ամօթով խոնարհեցեալ զգլուխ հարսին բարձրա–ցաւ. ուստի ասէ Դաւիթ ընդ հովանեաւ թևոց քոց ծածկեա–ցես զիս. քանզի լուար աղօթից իմոց և ետուր զժառանգութիւն երկիւղածաց քոց. Երրորդ՝ ահեակաւ իմանամք զմարգարէսն և աջով զառաքեալսն. որք պատուարք պարսպեցին զեկեղեցի սէր. և զգլուխն սոսա երկարօրէն ՝ի յերկիր որդ գլխոյ 6 համարին. Զի այսպիսի ահեակաւ ձախողութեան հանձի հարսն. քանզի այնպիսում ժամու մերձ գտանի Աստուած. որպէս Յովհաննէս աւետարանիչն՝ ի պատմուս կոչին սպասեալ արժանացաւ. ծծայրն տեսլեանն և ընկալաւ զյայտնին զարմանալի յայտնութիւնս։ Յակոբ նահապետն մինչ հալածիւր յեսաւայ ետես զԱստուած ՝ի բեթելն. Մովսէս փախչելով ի փարաւոնէ ետես զԱստուած

՝ի

Դիւրաւ խալ մորենւոյն: Եզեկիէլ ըմբռնեալ ՚ի բաբիլոն ետես զնա ՚ի քրովբէական կառս. Ստեփաննոս ՚ի քարկոծման ժամու ետես զՅիսուս կայեալ ընդ աջմէ զօրութեանն Աստուծոյ յերկնա-տափնջական: Յովսէփ բանտարկեալ ՚ի յեգիպտոս ընկալաւ յԱս-տուծոյ զշնորհս յայտնութեան երազոյն Փարաւոնի: և այլ այս-պիսիքս անթիւս կարեմ գտանել ՚ի յաստուածաշունչ սբ գիրս. և յայլ պատմութիւնս հարց սրբոց. վասնորոյ ցանկայ հալած-

ահեալ անուամբ յիշատակելով:

Երդմնեցուցանեմ զձեզ դստերք Երուսաղեմի ՚ի զօրութիւնս և յանդաստանս անդաստանի. եթէ զարթուցանիցէք և յարուցանիցէք զսէր մինչև ինքն կամեսցի:

Դստերք Երուսաղեմի կոչէ զհրեշտակս որք են դստերք և քաղաքակիցք վերնոյն սիոնի. զորս երդմնեցուցանէ հարսն որով սպասաւորել կամի. զի մարգարէք են. և զարթուցանել է այնո զոր լե մարգարէն խօսի թէ՝ զարթո զզօրութիւնս քո և եկ ՚ի կեցուցանել զմեզ: և անդստին վասն որոյն ասէ որ բերէ զպատուէրս այս և կամի: Խակ և ՚ի յանդստանին եկեղեցւոյ է զօ-րութիւն բազմաթև սբ խաչին. վասնորոյ շարիս երդմնեցուցա-նէ. և յուծքինութիւն հարսանոյ: Եթէ յառնիցէք զմեզ ՚ի գերո-զմանէ մերոց հարսանութեանս և զարթուցանէք զմեզ ՚ի քնոյ մե-ղաց. Որք հրաւիրեցէք զմեզ լինել զուարթ խաղաղութեան. բարոյն քաջալերեսցիս զուարթ. հարսանեք քո կեցուցին զքեզ զարթուցիչք դեռ կա. որ նմա ՚ի ձեռ ծածկապէս զի արքայութեան երկնից ընդ ձեզ. զարթուցիչք բարի զոյմ և պայծառ լապ-տերօք իբրև զիմաստուն կուսանս. ՚ի ժամ երկայնմտութեան հարսինս և մինչ յառնէ ասայցեմք և մի մերժեր զմեզ ՚ի ձախա-կողմն. և մեզ անիծիւք ՚ի հուրն. քանզի և նա կամի զի ամենե-քեան կեցցեն և ՚ի գիտութիւն Ճշմարտութեան եկեսցեն: Ու-րեմն աւելթիւք բաղխեսցուք զդուռն կամեցողին կենաց զի այն-պէս երկիցին և կամք նորա կատարեսցին յամենայն մարդիկ. զի լինիցին ամենեքեան բարի յօժարութեամբ բնակեալ յերկինս նորա. և ՚ի խէր նորա. և եղիցին սիրով ՚ի կարգի յորդւոյ:

Դարձեալ նոյն հարսն ասէ. Ո՞վ է սա որ ելանէ սպիտակացեալ յեցեալ յեղ-բօրորդին իւր:

Զի հարսանեացն Քրիստոսի մեծային հոգւոյ ընդ նմա վերանան ՚ի դասս յերկինս. պատուէլի ընկերակցութեամբ

անձա

անձառելի լինելութեամբ, զարմանալի պայծառութեամբ. հիա-
նալի կարողութեամբ. և անասելի բերկրութեամբ. քանզի ճա-
նապարհք արդարոց իբրև զլոյս ծագին, առաջնորդեն և լուսա-
ւորեն Առ. 4. 18: Որոյ ապագայ տեղեկանալ կամին դստերք
և թագուհիք զբանորական օրինին. որպէս, սառայ, յեսթեր,
յուդիթ, եայլք. զի տեսանեն այլ և այլ ազգաց բազմութիւք ժո-
ղովեալք միացեալք և հաւանեալք փեսային եկեալ յանուն
՚ի նա առ՚ի ծառայել նմա. և սիրել զանուն նորա. որոյ վն ասէ՝
ժողովուրդ զոր ոչ գիտէի ծառայեաց ինձ և ՚ի լսելը ականջաց
լուաւ ինձ: զի բազումք յարևելից և յարևմտից եկեսցեն և բազ-
մեսցին ընդ աբրահամու և ընդ իսահակայ և ընդ յակոբայ յար-
քայութե երկնից. և որդիքն արքայութե ելցեն ՚ի խաւարն արտա-
քին. Մատ. 8. 12: և նոքա լինին ծառայք և աղախնայք նմ.
որոյ խոստանայ ասելով ածից զնոսա ՚ի լեառն սրբութե իմոյ,
Եսա. 56. 6: իսկ և հրեշտակաց դասակարգութիւքն զարմանան
թէ որպէս սպիտակեալոյ ՚ի յաղտոյ արժանի Ք̃ի զեկեղեցի
իւր. որպէս պատմէ Յոհաննէս թէ լուայ զոր ասաց, ոյք են
որք եկին ՚ի վշտաց մեծաց, և լուացին զպատմուճանս իւրեանց
արեամբ գառինն: բայց զայս բնաբան յաւէտ յարմարի սրբոյ կա-
սին. զի նա եղև դուստր հօրն երկնաւորի. մայր որդւոյն մի-
ածնի. և հարսն հոգւոյն սրբոյ: վասնորոյ դստերք երուսաղէմի
և թագուհիք փեսային Ք̃ի, ասեն՝ բազում դստերք ստացան
զմեծութիւն բազումք արարին զօրութիւն. բայց դու ա-
ռաւել եղեր և անցուցեր զամենեքումբք. Առակ. 31. 29. այս-
պէս և դու հարսն եթէ ոչ յերկինս ա̃ն յեղուսցես զքեզ հա-
տատաբար փութալ հիմնա տակի տուն քո. Սղ. 27. 4.

Փեսայն ցհարսն ասէ. ՚ի ներքոյ խնձորոյ զարթուցից զքեզ անդ երկնեաց զ-
քեզ մայր քո. անդ երկնեաց որ ծնաւ զքեզ:

Զի որք ՚ի նմա կենդանացուցանիչեալ կան յանկողինս մեղաց. փեսայն
հոգւոյ, փրկիչն Յս̃, յիշատակօք յաւիտենական փառացն զմեզ
զարթուցանէ. որպէս ասէ առաքեալն, յիրաւունս համարիմ մինչ
դեռ եմ ՚ի մարմնի աստ զարթուցանել զձեզ յիշատակօք. 2 Պետ.
1. 13. իսկ և քնոյ մահու ննջեալքն ՚ի հող տապանին, ձայնիւ
փողոյն զարթուցանէ. քանզի փող հարկանի և մեռեալք յառնեն
առանց ապականութե. և մեք նորոգեսցուք. 1 Կոր. 15. 21: և
զինի

digitised by A.R.A.R.@

զկնի 'ի ներքոյ խնծորոյ ասէ փոխանակ 'ի ներքոյ խնձորենւոյ ասելոյ. սակս կարծութե և թեթեւութե բարւոյն կամ համեղութե գրոշմեոյն. և այսպ իմանակ. և այսու իմանամք զպտղոյն ուստի ծաշակեաց ադամ, և արտաքսեցաւ 'ի փափկութեան մայրէն. և այնու յիշատակօք զարթուցից զքեզ ասէ 'ի քնոյ մեղաց և յանցանաց. բայց ինձ թուի թէ ասանք 'ի վարդապետաց այլոց ազգաց, ատառաս առեալ ասեն թէ՝ պաղամոյ ծաշակեալ պտղոյն խնծոր զոլ. զոր սուրբ գիրն ոչ յայտնէ, այլ միայն պտուղ անուանմբ յիշատակելով անյայտ. թէ և ամ մրգեղինաց պտուղ ասէ. որոյ և մեք պհեա երթամք ճարպ յառակայուսման.

Անդ երկնեաց զքեզ մայր քո. անդ երկնեաց որ ծնաւ զքեզ. Այսինքն անդ ուր ստեղծ տէր Ած (որ մայր) զմարդն հող երկրէ. և փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, և եղև մարդն յոգի կենդանի։ և տնկեաց ած դրախտն եդեմ ընդ արեւելս, և եդ անդ զմարդն զոր ստեղծ. Ծն. 2. 7։ այսէ երկնելն ստեղծօղ մօր մերոյ. զի զամ զոր ինչ ստեղծ. ասաց և եղեն, հրամայեաց և հաստատեցան, որպ ասէ գիր. աստ Ած եղկելոյս և եղև. նոյնպէս և զայլ ստեղծուածս։ բայց զսա տես 'ի ստեղծագործութե մարդոյս թէ որքան երկար ձառ է սուրբ գիրն, այնէ երկնելն և աշխատ մտանելն. և անդ զմ 'ի դրախտին յաւիտ, մինչ պատուիրանազանցն զաւ և անցեալ՝ մինչ արտաքսեաց 'ի դրախտէն։ զկնի որոյ և մայր իւրն մարգարէքն որք երկնեցին զփրկութե խորհուրդ հարսին. որով 'ի նոյն ծնաւ շնորհօք մարմնանալոյ բանին. և փրկեցաւ 'ի ձեռն հաւատոյ յուսոյ և սիրոյ և դարձեալ երկնեցին յարաժամ աղօթիւք դիմելով առ ած, վասն զալստեան փեսային և հարսանեացն անօրէնութեանս։ այնպէս իմ և սրբազանից առաքելոյն որք ծնան քարոզութբ որ աւետարանին. որպէս գրէ առաքեալն զի 'ի քս Յս աւետարանաւն ես ծնայ զձեզ. I Կր. 4. 15։ և յարաժամ աղնութբ անդադար խրատելով. քանզի ասէ մեք քարոզեմք և խրատեմք զամ մարդ՝ և ուսուցանեմք զամ մարդ ամ հոգևոր իմաստութբ զի կացուսցուք զամ մարդ կատարեալ 'ի քս Յս. Կղս. 1. 28. և այնչափ մինչ զի հեղին զարիւնս իւրեանց վասն հարսին։

Դիր զիս իբրեւ զկնիք 'ի վերայ սրտի քոյ. իբրեւ զմատանի 'ի վր բազկի քոյ. զի զօ հզօր է իբրեւ զմահ սէր. նախանձ իբրեւ զդժոխս խստացեալ. Բևք



digitised by A.R.A.R.@

Նորա յետեւ ըստ երգոյ և նորայ.

Այս նման է այն որ ասաց դիք դուք ՚ի լսելիս ձեր զբանս զայ-
սոսիկ զի որդի մարդոյ մատնելոց է ՚ի ձեռս մարդկան. Ղուկ.
9. 44. նոյնպէս և ասա զայս պատուէր առանց հարսին ասե-
լով դիր զիս իբրև զկնիք ՚ի վերայ սրտի քոյ. զի սիրտն է շտե-
մարան զգայական կենդանութեան. վասն ՚ի սկզբան հրամայեցաւ թէ՝
սիրեսցես զտէր աստուած քո յամենայն սրտէ քումմէ. և եղիցին պատգամքս
այսոքիկ ՚ի սրտի քում. և յանձին քում. և արկցես զնոսա նշան
՚ի ձեռին քում. և եղիցի անշարժ առաջի աչաց քոց. Օրին. 6.
5. զի որպէս փարաւոն յորժամ կամեցաւ զյովսէփ իշխան ՚ի վե-
րայ երկրին եգիպտացւոց զմատանին իւր եդ ՚ի ձեռին յովսէ-
փայ. և զգեցոյց նմա զպատմուճան բեհեղէոյ. և զմանեակ ոսկի
եարկ ՚ի պարանոց նորա. Ծնն. 32. 42. և եհան զնա յերկ-
րորդ կառս իւր. նոյնպէս և ստեղծ տէր աստուած զմարդն հող յերկ-
րէ, և փչեաց յերեսս նորա շունչ կենդանի. և եղև մարդն ոգի
կենդանի. այլև փառօք և պատուով պսակեաց զնա. և կացոյց
զնա ՚ի վերայ ամ ձեռագործաց իւրոց. և զամենայն հնազանդ արար
՚ի ներքոյ ոտից նորայ լոկ և ՚ի յերկրորդի ստեղծագործութեան
վերստին ծննդեամբ սբ աւազանին ինքն փրկայն զկնիքն զգեցոյց
հարսին. և հրաման ետ կոխել զօձս և զկարիճս, և զամ զօրու-
թիս թշնամւոյն. վասն որոյ ասէ դիր զիս իբրև զկնիք ՚ի վր սրտի
քոյ. որպ արեամբ զատկական գառին դրոշմէին զսեամս և զբա-
ւաւորս տանց եբրայեցւոցն. զի մի հարկանիցեաւ լինէին ՚ի կո-
տորիչ հրեշտակէն ըստ եգիպտացւոցն. Ելից. 12. 7. նոյնպէս
և հրամայէ հարսին զի երկրպագելի և պաշտելի անուն փրկչա-
յին Յիսուսի դնել ՚ի վր սրտի իւրոյ իբրև զկնիք զարդու սրով շնոր-
հեալ ՚ի սէր նորա. և իբրև զմատանի ՚ի վր բազկի զի ստիպե-
ցի առ ՚ի գործել նմա. զի սիրտն է աղբիւր կենաց. յորմէ ծա-
գին զօրութիւն խորհրդոց մտաց մարմնոյ. այլև է աթոռ
սիրոյ յորմէ ելանեն խորհուրդք սիրահարաց. որոյ աղաղակէ ասէ ոմն
՚ի սէր հարց. թէ ոչ այլ ինչ խնդրէ ՚ի քէն աստուած բայց միայն
սիրտ սբ. զի սիրտն ունի զբնօս ամ մասանց մարմնոյ. յորժամ
՚ի նոցին դադարին զգայարանք և զօրութիւնք հոգւոյ. յայն-
ժամ ոչ լսեն ականջք. ոչ տեսանեն աչք. և ոչ իմանայ միտք.
և յայնժամ սիրտն հանգէ, իբրև հոգայով մարմնոյ. և ամ ան-

դամքն

digitised by A.R.A.R.@

դամքն եթէ ոչ օգնիցեն 'ի ջերմութեան սրտին ամենեքեան յա-
մաքին. Հարցեալ եղև առ փիլիսոփայ ոմն, թէ զինչ գերազանց
յայսմ աշխարհի. պատասխանեաց թէ, սիրտ մարդոյ. արդարև
բոլոր աշխարհ փոքրագոյն է քան զսիրտ մարդոյ. զի ամ ստեղ-
ծուածք ոչ կարեն լցուցանել զնա. այլ միայն Աստուած. վանկ ասէ
Դաւիթ Աստուած սրտի իմոյ. բաժին իմ Աստուած յաւիտեան. զի որպէս կը-
նիքն նշանակէ զսէրն, նոյնպէս և մատանին նշանակէ զ յոյսն.
զի մատանեաւ նշանեալ հաւատարմացուցանեն զհարսնացու աղջ-
կունս. և մատանին վասն այս դնեն 'ի չորրորդ մատին, զի բնագն-
նինք ասեն թէ 'ի սրտէ յառաջ գայ երակ մի 'ի չորրորդ մատն,
յորում դնել պարտի միակ մատանի նշանակելով թէ՝ երկրային
սիրով պարտի սիրել հարսն զփեսայն իւր. և որպէս մատանին
զարդարեն գեղեցիկ ակամբ. նոյնպէս սէր հաւատ հարսին եկե-
ղեցւոյ յոյսն և սէրն երկոտասան յօդուածովք հաւատոյ յօ-
րինի և վայելչանայ. իբրու երկոտասան գեղեցիկ քարամբ շա-
րունակեալ 'ի վակասում ծայրագոյն քահանայապետին. իսկ և
ընդ հաւատոյն պարտիմք սիրով ունել զամ գործս առաքինու-
ըստորում քրիստոնեայ անուամբ կոչեցայք. և զանուն փեսային
հոգւոյ ըստ պատուիրանի նորին իբրև զկնիք 'ի վր սրտից մե-
րոց դրոշմեսցուք. զի Քն է կնիք 'ի ճակատս, կնիք 'ի սիրտս, մա-
տանի 'ի բազուկս, 'ի ճակատս՝ զի միշտ խոստովանիցիմք զնա. 'ի
սիրտս զի միշտ սիրեսցուք. 'ի բազուկս զի միշտ գործեսցուք վն
նորա և որպէս ասէ Յոհաննէս 'ի տեսլեան. որ հրամայեցաւ
հրեշտակացն ոչ մնասել յերկրի մինչև կնքեսցեն ասէ զծառայս
Աստուծոյ իմոյ 'ի ճակատս նոցա. Յայտ. 7. 3. Որպէս նաև
պատուիրեաց հրեշտակին անցանել ընդ մէջ քաղաքին Երուսաղէմի
և դնել զնշան 'ի ճակատս արանցն որք հեծեն և հոգւոց հանեն
վասն անօրէնութեանց գործեցելոց 'ի մէջ նոցա. Եզեկ. 9. 4. Նոյն-
պէս և աստ տեսեալ զհարսն որ հանապազ հեծէ և հոգւոց
հանէ վն փեսային որոյ աղաղակէ հրաւիրէ զնա դնել զանուն
փեսային իբրև զկնիք 'ի վերայ սրտի իւրոյ և իբրև զմատանի 'ի
վերայ բազկի իւրոյ. զի ասէ սրբազինէս, խնդալով զայս նշան
խաչին ամբարձցուք 'ի ճակատս զի դևք տեսեալ սարսին և դո-
ղան. զի որք 'ի յասկեղէն թագից ոչ երկնչին, 'ի խաչէն սարսա-
փին. վասն զի նշան նորին է լուսակամ կարգացութեան. նմանապէս
և

digitised by A.R.A.R.@

և դաւանութիւն խաչեցելոյն Քի. աստուած ՚ի մէջ հօրս. զայս
նշան կոչէ փոխելութիւն ձականու. համառօտիւ նշան Քի. երկ-
նային զէն. քրիստոնէական սաղաւարտ. ամրութիւն կենաց. մեծ
բարի՝ զրահ փրկական. անմարտնչելի վահան. սուր երկսայրի.
և արքայական գաւազան. որ զամ ուժգնութիւն սատանայի յետ
ընկերկէ. կենդանաբար նշան. անյաղթելի սպառազինութիւն քրիս-
տոնէից. անմահ դրօշակ. զոր տեսեալ դիւաց սատանին։ և տե-
սեալ հրեշտակաց ոչ հարկանեն և ոչ պատժեն զբարեպաշտս
ընդ ամպարշտաց։ վասն կնքոյ և մատնեաւ նշանակէ. զի ոպ մա-
տանին կապի ՚ի յանկւոյ որ դերագոյն է քան զամ հրահալելիս.
այսպէս և սէր հարսին ընդ փեսային յաղթելոյ է զամ սէր աշ-
խարհիս։ Վասն զի հզօր է իբրև զմահ սէր. և խիստ իբրև զդժոխս նա-
խանձ։ Թէպէտ զօրաւոր է մահն այնքան մինչ զի ոչ ոք կարէ ը-
դիմանալ նմա. ոչ տէրք և ոչ ծառայք. ոչ իշխանք և ոչ իշ-
խեցեալք. ոչ թագաւորք ոչ զինուորք, այլ և ոչ ինքնակալ կայ-
սերք, որք զամ տիեզերս հնազանդեցուցին ինքեանց. բայց ին-
քեանք հնազանդեցան մահու և յաղթեցան ՚ի նմանէ։ այլ և ա-
նասունք սողունք և թռչունք. լողակք և անճռունի գազանք. և
վիթխարի կենդանիք. և համայն ենթալուսնեայքս ոչ գերծանին
՚ի ձեռաց մահուան. բայց ՚ի վեր քան զլուսնական գունդն ոչ
զօրէ ներգործել։ իսկ սէրն զամենեսեան յաղթէ. և ոչ յումե-
քէ զանգիտէ. զի ոչ երկնչի, ոչ սարսի և ոչ դողայ. այլ միշտ
շարժէ. և ստիպէ. ոպ վարօք առագաստանաւ. և դեռ քան զար-
ծուի սլանայ ՚ի բարձունս. և անցանէ զամ դասապետութիւ. ուստի
հաշտեցուցանէ զած ընդ մարդկան. ոպ խոնարհեցոյց զորդին
ԱՅ ՚ի փրկութիւն հարսին եկեղեցւոյ. ըստ վկայութեան աւետա-
րանչին, Թէ՝ յայսմիկ երևեցաւ սէրն ԱՅ ՚ի մեզ. զի զորդին իւր
միածին առաքեաց յաշխարհ. զի եղիցուք նովաւ կենդանիք.
Ա Յոհ. 4. 9։ վն սա է ածաբանն ով սէր որքան մեծ զօրութիւն
ունիս որ զած յերկնից ՚ի յերկիր իջուցեր. և զնա ՚ի խաչ ելա-
նել ստիպեցեր. և արիստոտէլ ասէ սէրն կերպարանէ զսիրե-
ցեալն ՚ի յինքն. և որք ունին զմի կերպարան մի են. վն այն սի-
րողն լինի մի ընդ սիրեցելոյն. որպէս սիրեցեալ փեսայն ընդ
սիրելի հարսին միացեալ եղև մի. վասնորոյ ասէ պօղոս.
գնացէք սիրով որպէս քրիստոս սիրեաց զմեզ. և մատնեաց
զանձն

զանձն իւր վասն մեր. Եփես. Ե. 2. նուէր եւ պատարագ Աստուծոյ ի հոտ անուշութեան.
զի որպէս 'ի պաշտօնս զոհելին ամ տեսակ տանջանաց. սոյնս ծաղրա-
ծոյ նկղութե վշտաց եւ անհանգստութեանց. նոյնպէս եւ զպատուէ
թալանչական գործէ նախանձն. այլեւ ասեն թէ 'ի կողմանս հիւսի-
սային գտանի սեւ իմն օձից սատոկ թիւնաւոր. բայց մինչ տե-
սանեն ծաղկեալ զկաղնական ծառոյն ակոյն փախչէին. զի ոչ կա-
րեն տանել զանոյշ հոտոյ նոյին. նոյնպէս եւ նախանձոտքն ոչ կա-
րեն տանել զյաջողութիւն ընկերաց. զի վասն թշուառութեան նո-
ցին եմուտ այլ եւ նախանձն համեմատեն վիշապի որ ունի կթոյն
իւր 'ի լեզուն եւ 'ի կոկորդն եւ 'ի զօրութէ թունոյն մեռան ուղէղ
կանգնի լեզու նորին. եւ 'ի ջերմութէ շնչոյն այնպէս բորբոքի
օդն մինչ զի վառել տեսանի. այսպէս պատմի եւ 'ի սբ գիրս
թէ ընդ լուսնցուն ծուխ ելանէ հնոցի հրոյ կայծականց. անձն
նորա կայծականք, եւ բոց 'ի բերանոյ նորա ելանէ. Ծն. 41. 11.
այսպէս եւ նախանձն. քանզի ասէ կրկնելս աղէքսանդրացին թէ՝
որ գեղեցիկ է նմա գտանել բամբասող որպէս գեղեցիկ պատարա-
գին աբէլի՝ հեռանեցաւ նախանձն կայենի. գեղեցիկ քահանայ-
ութեան ահարոնի՝ երեւեցաւ նախանձն կորխայ. գեղեցիկ օծութ
մագդաղենացւոյն՝ նախանձն յուդայի. ծաղկեալ պատմուճանին
յովսեփայ՝ նախանձ եղբարցն, գեղեցիկ յաղթութեան դաւթի՝
նախանձն սաւուղայ. անձնման վարուցն ս. ն. նախանձ դպրացն
եւ փարիսեցւոցն. զի ասէին ծանր է մեզ տեսանել զնա. զի ան-
նման են այլոց կեանք նորա. եւ այլազգի շաւիղք նորա. իմաստ.
2. 15. Բնաւ նորա իշխել զոր էգոյց նոցա. այսինքն թէ նախան-
ձուն. զի յաւկութե թեւոյն է արագ շարժել զմարմինս եւ վե-
րացուցանել 'ի բարձունս. որպէս նախանձու թեւօք շարժեալ հը-
րէայքն քահանայք եւ իշխանք տաճարին, սուսերօք եւ բրօք շա-
հիւք եւ լապտերօք յարեան 'ի վերայ փրկչին մերոյ ՅՔ. եւ այն-
չափ գոյն գործեցին մինչ 'ի խաչ վերացուցին. որովք յաւկութիւք
սիրոյ հարսին նմանեցուցանէ թեւոց. որով 'ի բարձունս սանայ
'ի բարձանց խոկոյ. եւ առ այն վերանալ ցանկայ. զի ասէ որբա-
զան առաքեալն զվերինն խորհեցարուք ուր նստի ՔՍ. Կղս.
3. 1. զի որպէս փեսային հոգւոյ վասն հարսին եկեղեցւոյ զթեւս
իւր տարածեաց 'ի խաչին. եւ հզօր արձակմամբ ըմբռնեաց զամ-
ենեսեան. նոյնպէս եւ հարսն սիրով փեսային զաշխարհական կեան
ցաւոյ

ցողս անարգենց և 'ի բարձունս ելայց. որպէս ասէ անապատա-
կանակ ան̄ հայրն նեղոս թէ՝ միայնակեաց անինչ արծիւ է բարձ-
րաթռիչ և արագաթև. զի հեռացեալք են յերկրէ. և բարձ-
րացեալ վերանան և շրջին 'ի բարձունս, զի թևս ունին թեթևս.
և 'ի հոգւոյ ոչ ծանրանան. և ոչ ըմբռնիչ մերկ ոչ ըմբռնին 'ի
մեղս, և որպէս թեթև ընթացօղ արագ հասանէ, 'ի պատիկ վերին
կոչմանն. ուստի դաւիթ զայն խոկալով ասէ ո՞ տայր ինձ զթևս
որպէս աղաւնւոյ զի թռչէի վերանայի. Սաղ. 54. 7: բայց
հանգոյն բոյսոյ և հրոյ ասէ. զի նման բոյսոյ 'ի վեր ցոլանայ խոկ-
մամբ. և օրինակաւ հրոյ՝ զամ̄ երկրաւոր մոլութիւ այրէ և
կիզէ. և 'ի յառաջինութիւ վառի և բորբոքի. վասն որոյ և շնորհալին
մեր ասէ ներսէս խրատէ.

Սիրոյ 'ի բաց լեր աշխարհիս.
և յաստուծոյ սէրն վառիս.
եթէ 'ի յայս սէր բորբոքիս.
անանց կենաց ժառանգ լինիս.

Բայց եղեւկին չորս թև դնէ 'ի կենդանիսն. որով իմանան վերա-
ցուցեալք զ չորս խոկմունս. նախ զարմացումն հանդերձելոց հուժն̄
ածոյ. երկրորդ մտածումն դատաստանի նորին. երրորդ ծանօ-
թումն բարերարութեանն ածոյ: չորրորդ մտածումն խոստմանց նո-
րուն. և ըստ այլոյ չորս թևքն են չորս գերազանց բարիսն. այս̄
հաւատն, յոյսն, սէրն: և երկիւղն ածոյ, որք արագագոյնք են քան
զարծուիս. Եսէն. 4. 13. և 'ի յայլ թարգմանութիւ փոխանակ
թևոց ղամբար գրեն. ղամբարք նորա եբրև զղամբարս բոցոյ
և հրոյ. որ է խորհրդաւոր. զի ղամբարն լինի երբեմն 'ի մա-
քուր յանօթոյ. այս յապակւոյ յորում լինին հեղուկ նիւթ իւ-
ղոյ. և կախեն 'ի բարձունս, որ փայլէ և լուսաւորէ զտունն. նոյն-
պէս և սէրն ածային է մաքուր և անարատ ապակի՝ լցեալ շնոր-
հիւ հոգւոյն սրբոյ, և կախեալ 'ի բարձունս հեռի երկրային
խոկմանց. լուսաւորող հոգւոյ ասէ. զի 'ի ղամբարումն է ջերմու-
թի, լուսաւորութի, և փայլողութի, նմանապէս և 'ի հարսն է ջեր-
մութի սիրոյ. լուսաւորութի հաւատոյ. և փայլողութի գեղե-
ցիկ վարուց և հանդերձից. զի հարսն փեսային քն̄, ունի մա-
